ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

II

ՀԱՏՈՐ

1940

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

9(4/6)
Մ-73

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ ՅԵՐԿՐՈՐԴ
(գիրք I)

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ Ս. Դ. ՍԿԱԶԿԻՆԻ ՅԵՎ. Ո. Լ. ՎԱՅՆՇՏԵՅՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

A II 324119

Ռուսերենից թարգմ. Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

Թույլատրված է ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից՝ Բարձրագույն դպրոցի գործերի Համամիութենական կոմիտեյի կողմից վորպես դասագիրք պետական համալսարանների յեվ մանկավարժական ինստիտուտների պատմության ֆակուլտետների համար

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940 Թ.

«Միջին դարերի պատմությունը», որ ընդգրկում է V—XVIII դարերի Արևմտյան Եվրոպայի, Բյուզանդիայի և արաբական Արևելքի պատմությունը, բարձրագույն դպրոցի գործերի Համամիութենական Կոմիտեի ծրագրի համեմատ՝ կազմված է համալսարանների և մանկավարժական բարձրագույն դպրոցների պատմության ֆակուլտետների համար։ I հատորն ընդգրկում է մինչև XVI դ., II հատորը տալիս է XVI—XVIII դ.դ. պատմությունը։ Գիրքը նախատեսված է ուսանողության համար, բայց կարող է օգտագործվել նաև միջնակարգ դպրոցի դասատուների կողմից, ինչպես և ինքնակրթության համար։

«Միջին դարերի պատմության» II հատորի I, III (*առաջին մաս*), VI, VII, XVI, XVIII գլուխները գրել է Ս. Դ. ՍԿԱԶԿԻՆԸ, II, IX, X գլուխները—Մ. Պ. ԼԵՄՆԻԿՈՎԸ, III (*երկրորդ մաս*) և XXIV գլուխները—Մ. Ա. ԳՈՒԿՈՎՍԿԻՆ, IV և V գլ.—Մ. Մ. ՍՄԻՐԻՆԸ, VIII գլ.—Ա. ՅԵ. ԿՈՒԴՐՅԱՎՑԵՎԸ, XI—XV գլ.—Վ. Մ. ԼԱՎՐՈՎՍԿԻՆ, XVIII—XXI գլ.—ՅԱ. ՅԱ. ՋՈՒՏԻՍԸ, XXII գլ.—ՍՏՈԿԼԻՑԿԱՅԱ-ՏԵՐԵՇԿՈՎԻՉԸ, XXIII գլ.—Ն. Ա. ՍՄԻՐՆՈՎԸ։ Պատմական քարտեզները կազմել է Ի. Ի. ՊՈԴՈԼՍԿԻՆ։

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ XVI, XVII Դ. Դ. ՅԵՎ XVIII Դ. ՍԿԶԲՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԾԱԳՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Մեծ գյուտերի ժամանակը վորպես միջին դարերի պատմության յերրորդ շրջանի սահման

Աշխարհագրական մեծ գյուտերի ժամանակը հանդիսանում է ժամանակագրական այն սահմանը, վորից մենք սկսում ենք յեվրոպական միջնադարի յերրորդ շրջանը։ Ինչպես առաջին յերկու շրջանների, այնպես էլ այդ շրջանի հիմքը կազմում է նրա տնտեսական և սոցիալական բնութագրման յուրահատկությունը։

Առաջին շրջանում, Յեվրոպայում սաղմնավորվել ու զարգացել է ֆեոդալական ֆորմացիան, իբրև սինթեզ հռոմեական ստրկատիրական քայքայվող հասարակության և հին-գերմանական ու հին-սլավոնական քայքայվող նահապետական հասարակության։

Յերկրորդ շրջանը, ինչպես մենք տեսանք, կապված էր վաղ ժամանակվա ֆեոդալական տնտեսության ընդերքում արտադրական ուժերի զարգացման այն ստադիայի հետ, վորի հետևանքը յեղավ արհեստի բաժանումը յերկրագործությունից—համաշխարհային պատմության մասշտաբով աշխատանքի հասարակական յերկրորդ մեծ բաժանումը[1] *և միջնադարյան քաղաքի, վորպես արհեստի ու առևտրի տերիտորիալ միջնակետի ծնունդը։*

[1] Տես *Маркс и Энгельс* Соч. т. XVI, ч. I, էջ 139.

Միջին դարերի պատմության յերրորդ շրջանի յերեք հիմնական փաստերը

Ֆեոդալական ֆորմացիայի յերրորդ, վերջին շրջանը և դրա հետ միասին այդ ֆորմացիայի ավարտման սկիզբը բնորոշվում է նրանով, վոր զարգանում են կապիտալիստական տնտեսությունն ու հասարակությունը և քաղաքացիների դասը բուրժուազիայի ժամանակակից դասակարգի յե վերածվում։ Այս յերկու փաստերը սերտորեն կապված եյին յերրորդ փաստի հետ—ֆեոդալական պետության քաղաքական նոր ձևի յերևան գալը, ֆեոդալական-աբսոլուտիստական միապետությունը XVI—XVIII *դարերում։*

Այս յերեք փաստերն են կազմում յեվրոպական պատմության այդ ամբողջ շրջանի հիմքը։ Դրանց նշանակությունը մեծ է, վորովհետև այդ իսկ ժամանակից այն պատմական պրոցեսները, վորոնք զարգանում են Յեվրոպայի հողի վրա, ամբողջ համաշխարհային պատմության համար առաջատար նշանակություն են ստանում։ Ֆեոդալական ֆորմացիայի ընդերքում նոր, կապիտալիստական ֆորմացիայի տարրերի զարգացում, ֆեոդալական տնտեսության և հասարակության ընդերքում կապիտալիստական տնտեսության և հասարակության սաղմնավորում—ահա այն, ինչ վոր մինչ այդ չեր յեղել մարդկության պատմության մեջ, ահա համաշխարհային-պատմական պրոցեսի այն նոր բովանդակությունը, վորը շուտով պետք է հանգեր հնի հեղափոխական ժխտման, ֆեոդալիզմի կործանման և կապիտալիստական հասարակության հաղթանակին,—հասարակություն, վոր իր հերթին հղի յեր սոցիալիզմի գալիք անխուսափելի հաղթանակով։

Յերեք փաստ—յերեք պրոբլեմ

Այսպիսով մենք կանգնած ենք յերեք պրոբլեմների առաջ, վորոնք պատմական պրոցեսի միասնության մեջ սերտորեն կապված են միմյանց հետ. դրանցից առաջինն *այն է, վոր ֆեոդալական ֆորմացիայի ընդերքում սաղմնավորվում ու զարգանում են կապիտալիստական հարաբերությունները, այսինքն արտադրության նոր յեղանակի և շահագործման նոր ձևի տարրերը։ Այդ պատմական պրոցեսի սոցիալ-տնտեսական կողմն է. այդ «կապիտալիզմի ծագման» պրոբլեմն է, կամ ինչպես արտահայտվում է Մարքսը՝ «այսպես կոչված նախասկզբնական կուտակման» պրոբլեմը։*

Միջնադարյան քաղաքացիների վերածվելը բուրժուազիայի ժամանակակից դասակարգի—այստեղ մեզ զբաղեցնող յերկրորդ

պրոբլեմը—ներկայացնում է միայն վորոշ ստադիա հասարակական նոր դասակարգի ձևավորման մեջ,—դասակարգ, վորի հիմնական հատկանիշն այն է, վոր նա դառնում է արտադրության միջոցների և գործիքների մոնոպոլ սեփականատեր։ Այդ դասակարգի մասնատված տարրերը, ինչպես նաև տնտեսության ու շահագործման նոր ձևի տարրերը, առաջ էլ գոյություն ունեյին. հիմա նրանք միանգամայն շոշափելի ձևեր ընդունեցին և նրանց հետ պատմության թատերաբեմ է դուրս գալիս նաև հասարակական նոր դասակարգը, բուրժուազիայի դասակարգը։ Վորոշել նրա հարաբերությունը նախկին ֆեոդալական հասարակության յերկու դասակարգերի, ֆեոդալների դասակարգի և անմիջական արտադրողների—ճորտերի ու արհեստավորների դասակարգի հետ, դրա հետ միաժամանակ ուսումնասիրել այն փոփոխությունները, վոր արտադրության նոր յեղանակի զարգացման ազդեցության տակ տեղի ունեցան այդ յերկու նախկին դասակարգերի կազմում,—ահա այս յերկրորդ պրոբլեմի բովանդակությունը։

Յերրորդ պրոբլեմը—նախընթաց պրոբլեմին համապատասխան քաղաքական նոր ձևի, ֆեոդալական-աբսոլուտիստական միապետության ստեղծումը—բնականաբար բղխում է առաջին յերկու պրոբլեմներից։ Ֆեոդալների դեռևս տիրող, մի փոքր ձևափոխված դասակարգի համար (այսինքն ազնվականության համար) աբսոլուտ միապետությունը քաղաքական անհրաժեշտություն էր, վորը թելադրվում էր տնտեսական և սոցիալական փոփոխված իրադրությամբ։

Առաջին պրոբլեմի լուծումը Մարքսի կողմից

XVI—XVIII դարերն այն ժամանակաշրջանն էյին, յերբ ֆեոդալական հասարակության տիրող դասակարգի կողմից արտատնտեսական հարկադրանքի հիմունքով շահագործվող, ճորտի և արհեստավորի մանր, տնտեսապես ինքնուրույն տնտեսության վրա հիմնված արտադրության հին, ֆեոդալական յեղանակի տեղը հետզհետե բռնում է արտադրության նոր, կապիտալիստական յեղանակը, վորի ժամանակ բուրժուազիայի հասարակական նոր դասակարգը—արտադրության միջոցների տերը—շահագործում է անմիջական արտադրողին, վորը վերածվել է պրոլետարի, այսինքն այն մարդկանց դասակարգի, վորոնք զուրկ են արտադրության միջոցներից և այս պատճառով հարկադրված են իրենց աշխատանքային ուժը ծախել արտադրության միջոցների տիրոջը—կապիտալիստին։

Կապիտալիզմի ծագումը կամ «կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակումը»

Ըստ Մարքսի, արտադրական նոր հարաբերությունների գոյացումը «կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակման» պրոցեսն է։ Մարքսն այդ պրոբլեմին նվիրել է «Կապիտալի» I հատորի 24-րդ գլուխը, ուր նա հարց է դնում այն մասին, թե ինչպես են ծագել կապիտալիստական հարաբերությունները և ինքը կապիտալը՝ որպես առանձին սոցիալ-տնտեսական կատեգորիա։

«Դրամն ու ապրանքները,—ասում է այնտեղ Մարքսը,—ճիշտ այնպես, ինչպես կենսական միջոցներն ու արտադրության միջոցները, ըստ ինքյան բնավ կապիտալ չեն հանդիսանում։ Նրանք պետք է դեռ կապիտալի վերածվեն»[1]։ Նրանք կապիտալ են դառնում միայն այն ժամանակ, յերբ դառնում են բանվորների չվճարված աշխատանքից յեկամուտ ստանալու միջոց, իսկ այդ չվճարված աշխատանքը հնարավոր է դառնում միայն այն բանի հետևանքով, որ անմիջական արտադրողը նախապես զրկված է լինում արտադրության միջոցներից, արտաքսվում արտադրության ֆեոդալական յեղանակով ապահովված իր մանր, անկախ տնտեսությունից, ստիպված է լինում ապրել իր աշխատանքային ուժը ծախելով և իբրև աշխատավարձ ստանալ միայն մի մասն իր արտադրած արժեքից, որի մյուս մասը, մնալով չվճարված, դառնում է կապիտալիստական յեկամուտի աղբյուր (հավելյալ արժեք)։ Հասարակության մեջ այդպիսի հարաբերությունների գոյությունն է միայն, որ դրամը և արտադրության այլ միջոցները դարձնում է կապիտալ, այսինքն մի արժեք, որը հավելյալ արժեք է առաջացնում։ Ուստի հասկանալի յե, որ «այսպես կոչված նախասկզբնական կուտակման» պրոցեսը ըստ Մարքսի հանգում է այնպիսի հասարակական հարաբերությունների ծագման ու զարգացման, որոնց դեպքում հնարավոր են կապիտալիստական շահագործումը, հավելյալ արժեքի անընդհատ ստեղծումը, դրամի, ապրանքների և արտադրության միջոցների կապիտալ դառնալը. «...այն պրոցեսը, որից առաջ է գալիս կապիտալային հարաբերությունը, ուրիշ բան չի կարող լինել, բայց յեթե բանվորի՝ յուր աշխատապայմանների վրա ունեցած սեփականությունից անջատվելու պրո-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVII, եջ 782.

ցես, մի պրոցես, վոր մի կողմից՝ հասարակական կենսամիջոցներն ու արտադրամիջոցները դարձնում է կապիտալ, մյուս կողմից՝ անմիջական արտադրողներին դարձնում է վարձու բանվորներ։ Հետևաբար այսպես կոչված նախասկզբնական կուտակումը վոչ այլ ինչ է, բայց յեթե արտադրողի ու արտադրամիջոցների անջատման պատմական պրոցես։ Նա ներկայանում է իբրև «նախասկզբնական» պրոցես, վորովհետև կազմում է կապիտալի ու նրան համապատասխանող՝ արտադրության յեղանակի նախապատմությունը»[1]։

Մարքսն ընդգծում է, վոր կապիտալիստական հասարակությունը զարգացել է անմիջականորեն ֆեոդալականից և մի կողմից անձնական ազատություն է բերել բանվորին, ճորտային կամ կախյալ դրության փոխարեն, իսկ մյուս կողմից նրան զրկել է արտադրության միջոցներից և տնտեսական կախման մեջ դրել կապիտալիստից. «...այն պատմական շարժումը,—ասում է նա,—վոր արտադրողին դարձնում է վարձու բանվոր, մի կողմից ներկայանում է իբրև նրա ազատագրում պարտույթավոր լինելուց ու համքարական ճնշումից. և մեր բուրժուական պատմագրների համար միմիայն այս կողմը գոյություն ունի։ Բայց մյուս կողմից՝ այս նոր ազատագրվածները հենց իրենց ծախողներ են դառնում այն բանից հետո միայն, յերբ նրանցից խլվել են նրանց բոլոր արտադրամիջոցներն ու նրանց գոյության այն բոլոր յերաշխիքները, վոր ընձեռում եյին հին ֆեոդալական հաստատությունները։ Յեվ սրանց այս ունեզրկման պատմությունը մարդկության տարեգրությունների մեջ գրված է արյան ու կրակի գծերով»[2]։

«Կապիտալիստական հասարակության տնտեսական կառուցվածքն առաջ է յեկել ֆեոդալական հասարակության տնտեսական կառուցվածքից։ Սրա քայքայումն ազատել է նրա տարրերը»[3]։

Արտադրության նոր յեղանակի ծագման ժամանակն ըստ Մարքսի

Այն ժամանակը, յերբ սկսվում է այդ պրոցեսը,—XVI դարն է։ «Թեև կապիտալիստական արտադրության անդրանիկ սկզբնավորությունները մեր հանդեպ սպորադիկ կերպով յերևում են արդեն XIV ու XV դարերում Միջերկրական ծովի առափնյա մի քանի քաղաքների մեջ (Մարքսը

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, եջ 686, Կուս. հրատարակչ., Յերևան

[2] Նույն տեղ, եջ 687։

[3] Նույն տեղ, եջ 686.

նկատի ունի իտալական քաղաքները—խմբ.), բայց և այնպես կապիտալիստական դարաշրջանն սկսվում է XVI դարից միայն։ Այնտեղ, վորտեղ հանդես է գալիս նա, վաղուց արդեն ավարտվել է ճորտության վերացումը, և միջնադարի ճաճանչակետը, ինքնիշխան քաղաքների կացությունը, բավական ժամանակից ի վեր աղոտացել է»[1]։

Այսպես ուրեմն, կապիտալիզմի ծագումը կամ, ըստ Մարքսի, «այսպես կոչված նախասկզբնական կուտակումը» շահագործման նոր ձևի, տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների, ուրիշ խոսքով՝ արտադրության նոր յեղանակի ստեղծման պրոցեսն է, իսկ այդպիսի յեղանակն առաջացնում է կապիտալ, վորպես արժեք, վորը հավելյալ արժեք է բերում։ Այս պրոցեսն անմիջական արտադրողին ունեզրկեց արտադրության միջոցներից, վորոնք նրա համար ապահովված եյին ֆեոդալիզմի օրոք։ Մարքսն այդ ունեզրկման պատմությունը պատկերում է Անգլիայի օրինակով, այն յերկրի, վորտեղ կապիտալիստական զարգացումը տեղի յեր ունենում այսպես ասած՝ կլասիկ ձևով և վորտեղ անմիջական արտադրողներին բռնի կերպով արտադրության միջոցներից կտրելն արդեն XVI դարից մասսայական չափեր ընդունեց։

«Այսպես կոչված նախասկզբնական կուտակման» պատմական օրինակներ։ Անգլիա

Անգլիայում այդ պրոցեսը կապված է համայնական դաշտերի այսպես կոչված «ցանկապատումների» հետ։ Սկզբից, XIII—XIV դ. դ. վոչխարաբուծական խոշոր տնտեսության զարգացումը, վորի նպատակն էր բուրդ արտադրել ֆլանդրական մահուդի արդյունաբերության համար և ապա XV դարից—սեփական անգլիական արդյունաբերության համար, XVI դ. անգլիական լորդերին ստիպեց ձգտել բոլոր լեգալ և ավելի շատ անլեգալ միջոցներով ընդարձակել իրենց հողն ի հաշիվ գյուղացիական հողի, մանավանդ յերբ սկսեց զարգանալ մանուֆակտուրան։ Մեծ թվով աշխատող ձեռներ չպահանջող խոշոր տնտեսության շահավետությունը—իսկ վոչխարաբուծությունը հենց այդպիսի տնտեսություն էր,—այն հետևանքն ունեցավ, վոր գյուղացիները մասսայականորեն արտաքսվեցին իրենց վաղեմի հայրական ոջախներից։ Լորդերը ցանկապատում եյին այդ կերպ բռնագրաված հո-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, եջ 687—688. Կուս. հրատարակչ., Յերևան

գերը, նպատակ ունենալով թույլ չտալ գյուղացիական անասունների արածումն այդ հողերում և վոչնչացնել գյուղացիական մյուս իրավունքներն ու սերվիտուտները, վոր առաջ կապված եյին ֆեոդալական հին համայնքի գոյության հետ։ Իր հողից արտաքսված գյուղացիությունը մասամբ կլանվում եր զարգացող արդյունաբերության մեջ, բայց վորովհետև վերջինս դեռ նոր եր զարգանում, չեր կարող զբաղմունք տալ բոլոր ունեզրկվածներին։

Յեվրոպայի մյուս յերկրները

Նույնանման պրոցեսներ, թեև վոչ այդպիսի մասսայական ձևով, տեղի եյին ունենում նաև մյուս յեվրոպական յերկրներում, առաջանալով վոչ միայն սենյորների կատարած բռնագրավումներից, այլև իր, գյուղացիության միջավայրում յեղած շերտավորումից։ Այստեղից առաջ յեկան մուրացիկների և թափառաշրջիկների հսկայական բազմությունները—XVI դ. յեվրոպական իրականության տիպիկ յերևույթը։ Վերածնության և հումանիզմի դարը, արվեստի և գիտությունների դարը միաժամանակ ժողովրդական մասսաների չլսված աղքատության դարն եր, վորոնք կորցրել եյին կապն իրենց մանր տնտեսությունների հետ, յերբ նրանցից խլվել եյին «արտադրության նրանց բոլոր միջոցները և գոյության բոլոր յերաշխիքները, վորոնք ապահովված եյին ֆեոդալական հին հաստատությունների կողմից»[1]։ Մարքսն այդ առթիվ ասում ե. «. . . XV դ. վերջում և ամբողջ XVI դարի ընթացքում Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրներում հրատարակվում են արյունոտ օրենքներ թափառաշրջիկության դեմ։ Այժմյան բանվոր դասակարգի հայրերն ամենից առաջ պատժի յենթարկվեցին այն բանի համար, վոր նրանց բռնի կերպով դարձրել եյին թափառաշրջիկներ և պաուպերներ։ Օրենսդրությունը նրանց դիտում եր իբրև «հոժարակամ» հանցագործներ, յելնելով այն յենթադրությունից, վոր նրանք ցանկության դեպքում կարող եյին շարունակել աշխատել հին, արդեն գոյություն չունեցող պայմաններում»[2]։

Մանուֆակտուրա

Նոր, կապիտալիստական տնտեսության կազմակերպչական ձևը դարձավ մանուֆակտուրան։ «Վորպես արտադրության կապիտալիստական պրոցեսի բնորոշ ձև, այն տիրում ե մանուֆակտուրային

---

[1] *Маркс и Энгельс* Соч. т. XVII, եջ 783.

[2]) *Նույն տեղ*, եջ 803.

ժամանակաշրջանի ընթացքում, այս բառի իսկական իմաստով, այսինքն մոտավորապես XVI դարի կեսից մինչև XVIII-ի վերջին յերրորդամասը»[1]:

Ի՞նչ է մանուֆակտուրան:

Մարքսն ասում է, վոր կապիտալիստական արտադրությունը պատմականորեն սկսվել է այն մոմենտից, յերբ միևնույն անհատական կապիտալը սկսել է միաժամանակ մեծ թվով բանվորներ զբաղեցնել: «Մեծ թվով բանվորների գործողությունը միևնույն ժամանակ, միևնույն տեղում (կամ, յեթե ուզում եք, աշխատանքի միևնույն ասպարեզում) ապրանքների միևնույն տեսակն արտադրելու համար, միևնույն կապիտալիստի հրամանատարության տակ պատմականորեն ու տրամաբանորեն կազմում է կապիտալիստական արտադրության յելակետը»[2]: Հենց այդ է մանուֆակտուրան: «Արտադրության յեղանակի նկատմամբ մանուֆակտուրան, օրինակ, իր սաղմնային վիճակով արհեստային արտադրությունից տարբերվում է հազիվ թե այլ բանով, քան միևնույն կապիտալի կողմից միաժամանակ զբաղեցրած բանվորների մեծ թվով: Համքարային վարպետի արհեստանոցը միայն ընդլայնված է»[3]: Բայց միևնույն ժամանակում, միևնույն տեղում, միևնույն կապիտալիստի հրամանատարության տակ, ապրանքների միևնույն տեսակն արտադրելու համար մարդկանց այդ աշխատակցությունը կամ կոոպերացիան, մի խոսքով՝ մանուֆակտուրան անգամ իր ամենապարզ ձևով շուտով այն հետևանքն է առաջացնում, վոր հենց արտադրության պրոցեսում տեղի յեն ունենում խիստ եյական փոփոխություններ, վորոնք առաջ են գալիս կապիտալիստի ձգտումից՝ ավելացնել իր շահույթը: Կապիտալիստն ամենից առաջ դրան հասնում է աշխատանքային օրը սոսկ յերկարացնելու միջոցով, պահպանելով աշխատանքի նախկին վճարը (աբսոլուտ հավելյալ արժեք): Բայց աշխատանքային պրոցեսները մի տեղում և մի ղեկավարության տակ կենտրոնանալու դեպքում կապիտալիստի ձեռքում լինում է իր յեկամուտն ավելացնելու մի միջոց ևս, վորը պատմականորեն հսկայական նշանակություն ունեցավ, քանի վոր այդ միջոցի շնորհիվ տեղի յեր

---

[2]) *Маркс и Энгельс Соч.* т. XVII, եջ 370:

[1]) Նույն տեղ, եջ 354

[2]) Նույն տեղ, եջ 354.

ունենում տեխնիկական հեղափոխություն հենց կապիտալիստական արտադրության մեջ։ Կուտակման անհագ ծարավով վառված կապիտալիստը ձգտում ե արտադրության պրոցեսում ամեն տեսակ նորմուծություններ մտցնելու միջոցով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Մանուֆակտուրայում այդ կատարվում ե այսպես,—տեղի յե ունենում աշխատանքի մանրամասն բաժանում, արտադրական պրոցեսը բաժանվում ե առանձին գործառնությունների, որոնցից յուրաքանչյուրը կատարում ե մի առանձին բանվոր։ Աշխատանքի արտադրողականությունն ավելացնելու ձգտումն այնուհետև կապիտալիստին դրդում ե հնարել և աշխատեցնել մեքենաներ, գործադիր մեխանիզմներ, որոնք բռնում են բանվորի տեղը։ Այդ ժամանակ մանուֆակտուրան վերածվում ե գործարանի և ստեղծվում խոշոր արտադրության այն ձևը, որը կազմում ե զարգացած կապիտալիստական տնտեսության հիմքը։ Հետևաբար կապիտալիստի ձգտումը—աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոցով ավելացնել իր շահույթները—նրան անընդհատ մղում ե դեպի հետագա նորմուծություններն ու կատարելագործությունները, «հեղափոխականացնում» աշխատանքի յեղանակը[1]։

XVI—XVIII դ. դ. գյուղական արդյունաբերությունը

Պատմականորեն մանուֆակտուրան իր ավարտված ձևով կամ այսպես կոչված՝ կենտրոնացված մանուֆակտուրան տիրապետող դարձավ ոչ միանգամից և ամենևին ոչ ամենուրեք։ Նրանից առաջ և ապա նրա հետ միասին մենք Արևմտյան Յեվրոպայում հանդիպում ենք այսպես կոչված՝ գյուղական արդյունաբերության լայն տարածման,—որն այդպես ե կոչվում, որովհետև նրա տարածման բնագավառը դարձավ գյուղը, ուր չեյին հասնում համքարային քաղաքային ադմինիստրացիայի բծախնդիր հսկողությունը և աներես ռեգլամենտացիան։ Հետևաբար այստեղ կապիտալիստն արհեստավորին, գյուղական տնայնագործին շահագործելու նոր ձևի համար խոչընդոտ չեր հանդիպում։ Գյուղական արդյունաբերության մեջ, որ կապված ե տնայնագործների շահագործման հետ, հենց արտադրության պրոցեսը մեծ մասամբ քիչ ե տարբերվում քաղաքային արհեստավորի արհեստանոցից։ Կապիտալիստը որպես կազմակերպիչ, հազվագյուտ դեպքերում ե միջամտում արտադրու-

[1] Տես „Архив Маркса и Энгельса“, II/VII, եջ 93.

թյան պրոցեսին, մանավանդ այդ արդյունաբերության գոյության վաղ ժամանակներում։ Կապիտալիստը սկզբում հանդես է գալիս իբրև մեծագնորդ, այսինքն իբրև առևտրական կապիտալի ներկայացուցիչ, վորպես միջնորդ, վորը պատվերներ է տալիս, արտադրանքներ է հավաքում և վաճառում, «... ընդվորում նա կարող է և ավանսավորել հումքը կամ դրամական ավանսներ տալ և այլն։ Այդ իսկ ձևից էլ,—ասում է Մարքսը,—մասամբ զարգացավ ժամանակակից կապիտալիստական հարաբերությունը...»[1]։ Սակայն շուտով փոխվում է մեծագնորդի վերաբերմունքը դեպի տնայնագործները։ Արտադրության համար կողմնակի առևտրականից նա շուտով դառնում է արտադրության ազդեցիկ գործակալ։ Այդ ազդեցությունն ամենից առաջ արտահայտվում է նրանով, վոր նա բանվորների հոծ մասսաներ է ներգրավում արտադրության մեջ, մեծացնում է արտադրության մասշտաբը և ապա այդ բանվորներին իրենից կախման մեջ է դնում և դրանից օգտվում է աշխատավարձն իջեցնելու համար, այլ կերպ ասած՝ աշխատանքային օրը յերկարացնելու համար,—վորի մի մասը մնում է չվճարված (աբսոլյուտ հավելյալ արժեք)։

Գյուղական արդյունաբերությունը, վոր իր գործառնությունների մի մասով կապված էր մանուֆակտուրայի հետ, պատմականորեն ամենակարևոր և ամենատարածված ձևն էր արտադրության կապիտալիստական յեղանակին անցնելու, վոր տեղի յեր ունենում ուշ միջնադարի համքարային հին արդյունաբերությունը դուրս մղելու միջոցով,—այնտեղ, ուր համքարային արդյունաբերությունն իր իսկ քայքայման պրոցեսում չէր անցել համքարային արհեստավորների մասսայի շահագործմանը առանձին վարպետների կողմից, վորոնք դրա հետևանքով կապիտալիստներ եյին դարձել։ Գյուղական արդյունաբերությունը տնայնագործության ձևով, վորը կախում ուներ մեծագնորդից, կամ ապակենտրոնացված մանուֆակտուրայի ձևով, այն օրրանն էր, վորի մեջ աճեց կապիտալիստական խոշոր ինդուստրիան։ XVI դարում Նիդերլանդներում Անտվերպեն քաղաքի նշանակությունը, վոր հիմնված էր գյուղական ինդուստրիայի հետ նրա կապի վրա, ժամանակակից անգլիական քաղաքները, օրինակ՝ Մանչեստրը և Լիդսը, վորոնք աճել են գյուղերից,—դրանք բոլորն ամենացայտուն օրինակներն են այն նշանակության, վոր

---

[1] „Архив Маркса и Энгельса", II/VII, էջ 97.

գյուղական ինդուստրիան ստացավ Նոր Յեվրոպայի կապիտալիստական զարգացման մեջ։

Բուրժուազիայի դասակարգի կազմվելը

*Ինչպես արդեն նշվեց, յերկրորդ պրոբլեմի եյությունն այն է, վոր արտադրության կապիտալիստական յեղանակի առաջացման ու զարգացման հետ միաժամանակ և զուգահեռ կազմվում է բուրժուազիայի նոր դասակարգը, կամ ավելի ճիշտ ասած՝ բուրժուազիան դասակարգ է դառնում։ Այս յերկրորդ պրոբլեմի հետ անխզելիորեն կապված է յերրորդը—ֆեոդալական պետության քաղաքական նոր ձևի յերևան գալը, մի ձև, վորը համապատասխանում է «այսպես կոչված նախասկզբնական կուտակման» ժամանակաշրջանին,—*XVI—XVIII *դ. դ. ֆեոդալական-աբսոլուտիստական միապետությունը։*

«Բուրժուազիան,—գրում են Մարքսն ու Ենգելսը,—հանդիսանում է զարգացման յերկար ընթացքի, արտադրության և փոխանակման յեղանակներում մի ամբողջ շարք հեղաշրջումների արգասիք։

*Բուրժուազիայի զարգացման այդ աստիճաններից յուրաքանչյուրն ուղեկցվել է նրան համապատասխանող քաղաքական նվաճումներով։ Մերթ ֆեոդալների լծի տակ ճնշվող դաս, մերթ զինված և ինքնավար ասոցիացիա քաղաքային կոմունայում—այստեղ քաղաքային անկախ հանրապետություն, այնտեղ միապետական պետության յերրորդ հարկատու դաս, այնուհետև մա*նուֆակտուրայի եպոխայում աբսոլյուտ կամ դասային միապետության մեջ, ազնվականության հակակշիռ հանդիսացող բուրժուազիան, վոր առհասարակ ծառայել է իբր մեծ միապետությունների հիմք *(ընդգծումը մերն է—*խմբ.*), խոշոր արդյունաբերության և համաշխարհային շուկայի յերևան գալով իր համար, վերջապես, քաղաքական բացառիկ իշխանություն նվաճեց նորագույն սահմանադրական պետության մեջ։ Ժամանակակից պետական իշխանությունը վոչ այլ ինչ է, բայց յեթե մի կոմիտե, վորը վարում է բուրժուազիայի հասարակական գործերը»*[1]։

Մեր առաջ է բուրժուազիայի սեղմ պատմությունը ֆեոդալական քաղաքի բնակիչների համեստ կացությունից—վորոնք ֆեոդալներից ազատություններ և ինքնավարության առաջին սաղմերն են ձեռք բերում—մինչև բուրժուազիայի վորպես դա-

---

[1] *Маркс и Энгельс* Соч. т. V, եջ 485.

սակարգի քաղաքական տիրապետությունը XIX դարի բուրժուական սահմանադրական պետության մեջ։ Նրա միջակա կացությունները յեղել են քաղաքային անկախ հանրապետությունները մի տեղում, միապետական պետության մեջ յերրորդ հարկատու դասը — մի այլ տեղում։ Բուրժուազիան — տվյալ դեպքում այս կարևոր ե նշել — առանձնահատուկ դիրք ե գրավում մանուֆակտուրային ժամանակաշրջանում, բուրժուազիան՝ վորպես «ազնվականության հակակշիռ՝ աբսոլուտ կամ դասային միապետությունում»։ Ինչպես մենք հիմա կտեսնենք, նա դառնում ե այդպիսին, վերածվելով դասակարգի, և այդ վերածումը ստիպում ե ազնվականությանը քաղաքականապես տիրապետող իր դիրքը պահպանելու համար բնազդաբար ձեռք բերել ինքնապաշտպանության նոր ձև — ֆեոդալական-աբսոլուտական պետության ձևը։

Պատմության նախընթաց բաժնից հայտնի յե, թե ինչպիսի դեր խաղացին քաղաքները, աջակցելով թագավորական իշխանությանը՝ առանձին անհնազանդ ֆեոդալների դեմ նրա մղած պայքարում։ Բայց քաղաքները թագավորական իշխանության այդ աջակցությունը ցույց եյին տալիս վոչ անշահախնդիր կերպով։ Այդ աջակցությունն սկզբում ապահովեց քաղաքների ազատություններն ու արտոնությունները, նրանց կոմունաների քաղաքական ավտոնոմիան։ Ֆեոդալների միջև մղված անվերջ պայքարում, ֆեոդալական այդ խառնաշփոթության մեջ «թագավորական իշխանությունն առաջադիմական տարր եր... անկարգության մեջ կարգ ու կանոնի ներկայացուցիչ, կազմվող ազգի ներկայացուցիչ՝ իբրև հակադրություն խռովահույզ, վասալ պետությունների բաժանվելուն»[1]։ Բուրժուազիային հարկավոր եր յերկրի միասնությունը և առևտրական ճանապարհների անվտանգությունը, քանի վոր թե մեկը և թե մյուսը նրա սեփական գործունեյության և զարգացման հիմքն եյին։ Այս իսկ պատճառով եվ Մարքսն ասում ե, վոր բուրժուազիան առհասարակ ծառայել ե իբրև մեծ միապետությունների հիմք։ Թագավորական իշխանության և քաղաքների այդ միությունը «հաճախ ...խախտվում եր կոնֆլիկտների հետևանքով. բոլոր միջին դարերի ընթացքում միշտ չե, վոր գործը գնում եր միավորման այդ ուղիով, այնուամենայնիվ այդ միությունը վերսկսվում եր եվ ավելի

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. I, եջ 445.

հաստատապես, ել ավելի ուժգին, մինչև որ, վերջապես, այն ոգնեց թագավորական իշխանությանը վերջնական հաղթանակ տանել, և թագավորական իշխանությունը, իբր շնորհակալություն դրա համար, ստրկացրեց և կողոպտեց իր դաշնակցին»[1]։

Թագավորի իշխանության ուժեղացման և խոշոր միապետությունների կազմվելու հետևանքով քաղաքները կորցրին իրենց ազատությունները և իրենց յերբեմնի ինքնուրույնությունը, բայց այդ բնավ չի նշանակում, որ բուրժուազիան դրանից միայն վնասվում եր և ոչինչ չեր շահում։ Ընդհակառակը, միայն խոշոր պետության մեջ նա կարող եր հույս դնել «ընդհանուր տիրապետության» վրա, միայն այնտեղ նա դարձավ «կազմվող ազգի ներկայացուցիչ» և միայն այս հանգամանքը նրան թույլ տվեց հետագայում զարգանալ և ուժեր կուտակել, հենց ֆեոդալական-աբսոլուտիստական պետության դեմ քաղաքական իշխանության համար ապագայում պայքարելու։

XV դարի վերջը և ամբողջ XVI դարը հենց այն ժամանակն եյին, յերբ կազմվեցին մեծ միապետությունները, «որոնք ամենուրեք հաստատվեցին իրար մեջ թշնամություն անող ֆեոդալական դասակարգերի—արիստոկրատիայի և քաղաքների ավերակների վրա... Յեվրոպայի մյուս խոշոր պետություններում աբսոլուտ միապետությունը հանդես է գալիս որպես քաղաքակրթող կենտրոն, որպես ազգային միասնության հիմնադիր։ Այնտեղ նա լաբորատորիա յեր, որի մեջ հասարակության զանազան տարրերն այնպիսի խառնման ու մշակման եյին յենթարկվում, որ քաղաքները հնարավոր եյին գտնում իրենց միջնադարյան տեղական անկախությունը և իրենց սուվերենությունը փոխարինել բուրժուազիայի ընդհանուր տիրապետությամբ և քաղաքացիական հասարակության հանրային իշխանությամբ (common sway)»[2]։

Այսպես ուրեմն, քաղաքացիների և նրանց քաղաքականորեն արտոնյալ կազմակերպությունների—ազատությամբ և ինքնավարությամբ ոգտվող քաղաքների տեղը բռնում է բուրժուազիան որպես դասակարգ կենտրոնացված պետությունում, բուրժուազիան, որն այդ ազատությունը փոխարինում եր ընդհանուր տիրապետությամբ։ Տվյալ դեպքում խնդիրն իհարկե չի վերաբերում քաղաքական տիրապետության, որովհետև, ինչպես

---

1) *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. 1, եջ 445.

2) *Маркс и Энгельс*, Соч. т. X, եջ 721

մենք տեսանք, բուրժուազիայի քաղաքական տիրապետությունն առաջին անգամ իրականացվում է միայն XIX դարի սահմանադրական պետության մեջ. խնդիրը վերաբերում է միայն արտադրության կապիտալիստական յեղանակի ամենուրեք տարածվելուն և բուրժուազիայի վորպես դասակարգի այն առաջատար դերին, վորի հետևանքով ծագում է քաղաքացիական հասարակության հանրային իշխանության հասկացողությունը։ Այդ նոր՝ «բուրժուազիայի տիրապետությունը»— բուրժուազիա, վորը կազմավորվում է վորպես դասակարգ—առանձնապես բարենպաստ պայմաններ է գտնում խոշոր տերիտորիալ պետությունների գոյության մեջ։ Ու թեև աբսոլուտ միապետությունը մնում է իբրև ֆեոդալական հասարակության տիրող դասակարգի քաղաքական որգան, այնուամենայնիվ իր գոյության սկզբնական ժամանակաշրջանում աբսոլուտ միապետությունը վորպես մի ձև քաղաքական կենտրոնացման, վորը յեկել եր փոխարինելու «կլասիկ» միջնադարի ֆեոդալական մասնատվածությանը, ոժանդակություն է գտնում բուրժուազիայի կողմից, չնայելով, վոր վերջինս կորցրել եր իր քաղաքային ազատությունները։ Վորոշ դեպքերում, որինակ, Ֆրանսիայում, բուրժուազիան նկատելի մասնակցություն է ունենում կենտրոնացվող պետության բյուրոկրատական հիմնարկություններում։

Ֆեոդալական-աբսոլուտիստական պետության կենտրոնական իշխանության և բուրժուազիայի կազմվող դասակարգի դաշինքը բազմաթիվ որինակներ է գտնում յեվրոպական պատմության մեջ։ Այն ոժանդակության հետ մեկտեղ, վոր Հաբսբուրգները, մանավանդ Կարլոս V-ը Նիդերլանդներում ցույց եյին տալիս գյուղական արդյունաբերությանը և սրա հետ կապված տնտեսական կենտրոնին—Անտվերպենին, ընդդեմ համքարային հին քաղաքների—Գենտի, Իպրի և Բրյուգգեյի, վորոնք պայքարում եյին տնտեսության կապիտալիստական ձևերի դեմ,—առաջին անգամ տեղի յե ունենում հենց Նիդերլանդների վերածումը համախմբված պետության և բուրժուազիայի վերածումը դասակարգի, վորը հետևյալ սերնդի որոք արդեն կարողացավ իրականացնել Յեվրոպայում առաջին բուրժուական հեղափոխությունը։ Ֆրանսիայում բուրժուազիայի աճն ընթանում է թագավորական իշխանության աճին և ֆրանսիական թագավորների իշխանության տակ յերկիրը համախմբելուն զուգընթաց։ Թագավորների դաշինքը սկզբում քաղաքների և ապա բուրժուազիայի հետ,—

ճնշելով, վոր դրանք կորցրել էին իրենց ազատությունները ու քաղաքական արտոնությունները,—հանրահայտնի փաստ է, վորը դեռ կլինի հատուկ քննարկման առարկա: Ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XI-ի պատմագիր, ազնվական դե Կոմմին նրան կշտամբում էր այն բանի համար, վոր նա, դե Կոմմինի կարծիքով, յեղել է «հասարակ ժողովրդի թագավոր...»: Նույնպիսի իմաստ ունի նաև այն վերջին պայքարը, վոր յեռում էր XVI դարի յերկրորդ կեսում Ֆրանսիայում, թեր և ընդդեմ աբսոլուտիզմի, և վորը կապված էր բուրժուազիայի պառակտման հետ յերկու մասի,—քաղաքացիների, վորոնք պաշտպանում էին իրենց ազատությունները և բուրժուազիայի, վորը գերադասում էր ընթանալ թագավորական աբսոլուտիզմի դրոշի տակ:

Ֆեոդալական-աբսոլուտիստական միապետությունը

Այնուամենայնիվ սխալ կլիներ թագավորական իշխանության և բուրժուազիայի միջև յեղած այդ դաշինքում տեսնել բուրժուազիայի վորևէ մասնակցությունը քաղաքական տիրապետության: Այստեղ մենք մոտենում ենք յերրորդ պրոբլեմի էության, ֆեոդալական-աբսոլուտիստական պետության սոցիալական արմատները, այսինքն քաղաքական այն ձևը պարզելուն, վորը Յեվրոպայի համար բնորոշ էր նրա տնտեսության կապիտալիստական զարգացման հենց մանուֆակտուրային ժամանակաշրջանում: Այդ պրոբլեմի լուծումը միաժամանակ մեզ հնարավորություն կտա հասկանալու ուժերի այն փոխ-հարաբերությունը, վոր գոյություն ուներ այդ ժամանակվա հասարակության տարբեր դասակարգերի միջև:

XVI—XVIII դարերի ֆեոդալական-աբսոլուտիստական միապետությունը վորպես ազնվականության, այսինքն նախկին ֆեոդալական հասարակության տիրող դասակարգի քաղաքական տիրապետության ձև, յեղել է, ինչպես մենք հիմա կտեսնենք, մի պատասխան այն վտանգին, վոր սկսել էր այդ տիրապետությանը սպառնալ հենց այն դիրքի հետևանքով, վոր գրավեց այդ ժամանակաշրջանում բուրժուազիայի կազմվող դասակարգը:

«Աբսոլյուտ միապետությունը,—ասում է Մարքսը,—ծագում է անցման եպոխաներում, յերբ ֆեոդալական հին դասերը քայքայվում են, իսկ քաղաքացիների միջնադարյան դասը վերածվում

15.646 A 32419

և բուրժուազիայի ժամանակակից դասակարգի, և վիճող կողմերից վոչ մեկը չի գերակշռել մյուսին»[1]:

Այդ պնդման իսկական նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է պարզ պատկերացնել այն դերը, վոր մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների պատմական կոնցեպցիայի տեսակետից խաղում է պետությունը պատմական զարգացման մեջ:

«Վորովհետև պետությունը ծագել է դասակարգերի ներհակությունը սանձահարելու պահանջից, վորովհետև նա միևնույն ժամանակ ծագել է այդ դասակարգերի հենց ընդհարումներում, ուստի նա, ըստ ընդհանուր կանոնի, հանդիսանում է պետություն ամենահզոր, տնտեսապես իշխող դասակարգի, վորը պետության ոգնությամբ դառնում է նաև քաղաքականապես իշխող դասակարգ և այդպիսով նոր միջոցներ է ձեռք բերում կեղեքվող դասակարգը ճնշելու և շահագործելու համար: Այսպես, անտիկ պետությունը յեղել է առավելապես ստրկատերերի պետություն՝ ստրուկներին ճնշելու և սանձահարելու համար, ֆեոդալական պետությունը — ազնվականության որգան՝ ճորտ գյուղացիներին հպատակեցնելու և սանձահարելու համար, իսկ ժամանակակից ներկայացուցչական պետությունը վարձու աշխատանքը կապիտալի կողմից շահագործելու գործիք է»[2]:

Այս է Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» յերկի հայտնի տեղը: Յեվ նա հենց այստեղ ավելացնում է մի ֆրազ, վորը մի շարք սխալ մեկնաբանությունների առիթ է տվել: «Սակայն իբրև բացառություն,— ասում է Ենգելսը այդ ֆրազում,— լինում են ժամանակաշրջաններ, յերբ պայքարող դասակարգերը հասնում են ուժերի այնպիսի հավասարակշռության, վոր պետական իշխանությունն առժամապես վորոշ ինքնուրույնություն է ստանում յերկու դասակարգերի նկատմամբ, վորպես կարծեցյալ միջնորդ նրանց միջև: Այսպիսին է XVII և XVIII դարերի աբսոլյուտ միապետությունը, վորն ազնվականությանն ու բուրժուազիային միմյանց դեմ հավասարակշիռ է դարձնում. այսպիսին է Ֆրանսիական առաջին և մանավանդ յերկրորդ կայսրության բոնապարտիզմը, վորը պրոլետարիատին գրգռում էր բուրժուազիայի դեմ և բուրժուազիա-

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. V, էջ 212.

[2] Маркс и Энгельс, Соч т. XVI, ч. I, էջ 147.

յին—պրոլետարիատի դեմ»[1]։ Էնգելսը մի այլ տեղում էլ ավելի վորոշակի յե արտահայտում հավասարակշռության վերաբերյալ այդ միտքը։ Խոսելով բիսմարկյան շրջանի պրուսական կարծեցյալ սահմանադրական միապետության մասին, նա ասում է. «Այսպիսով հին աբսոլյուտ միապետության հիմնական պայմանի,—հողատեր ազնվականության և բուրժուազիայի միջև յեղած հավասարակշռության կողքին մենք այստեղ գտնում ենք ժամանակակից բոնապարտիզմի հիմնական պայմանը,—հավասարակշռության բուրժուազիայի և պրոլետարիատի միջև»[2]։ Սակայն այստեղից բնավ չի հետևում, վոր պետությունը յերբեմն կարող է լինել վերդասակարգային կազմակերպություն։ Էնգելսի մոտ խնդիրը վերաբերում է վոչ թե պետության վերդասակարգայնության, այլ միայն կառավարական իշխանության վորոշ ինքնուրույնության, այն էլ միայն կարծեցյալ ինքնուրույնության, —այն ժամանակաշրջաններում, յերբ հասարակական զարգացման դինամիկայում վոտքի յելնող հասարակական նոր դասակարգը կարող է ծառայել իբրև հակակշիռ նախկին տիրող դասակարգին, վորը, սակայն, շարունակում է իշխանությունը պահել իր ձեռքում։ Այսպիսի դեպքերում կառավարական իշխանությունը, խատորնակի գործելով այդ յերկու դասակարգերի նկատմամբ, գործողությունների ազատության վորոշ բաժին է ստանում, այնուամենայնիվ շարունակելով մնալ խստորեն դասակարգային։ Էնգելսն ինքն է պարզաբանում իր միտքը, որինակ բերելով նույն պրուսական պետությունը. «... ինչպես հին աբսոլյուտ, այնպես էլ ժամանակակից բոնապարտիստական միապետությունում իսկական կառավարական իշխանությունը գտնվում է սպայական և չինովնիկական այն առանձին կաստայի ձեռքում, վորը Պրուսիայում համալրվում է մասամբ իր սեփական միջավայրից, մասամբ մայորատային մանր ազնվականությունից, ավելի սակավ—բարձրագույն ազնվականությունից և ամենաչնչին մասը—բուրժուազիայից։ Այդ կաստայի ինքնակայությունը, վորը թվում է, թե դուրս է կանգնած և այսպես ասած վեր է հասարակությունից, պետությանը տալիս է ինքնակայության յերեվութականություն հասարակության նկատմամբ» (ընդգծումը մերն է—խմբ.)[3]։ Մի այլ տեղում խոսելով Գերմանիայի տնտե-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, էջ 147

[2] *Маркс и Энгельс*, Соч. т. XV, էջ 52

[3] Նույն տեղ, էջ 52—53

սական զարգացման թուլության և նրա հասարակական կառուցվածքի դասակարգային պարզորոշության բացակայության մասին, Մարքսը նշում է. «Անխուսափելի հետևանքն այն չեղավ, որ աբսոլյուտ միապետության երկրում, միապետություն, որն այստեղ արտահայտվեց ամենաայլանդակ, կիսանահապետական ձևով, այն առանձնահատուկ բնագավառը, որին, աշխատանքի բաժանման հետևանքով, բաժին ընկավ հանրային շահերի կառավարումը, ձեռք բերեց չափից ավելի անկախություն, որն էլ ավելի ուժեղացավ ժամանակակից բյուրոկրատիայում: Այսպիսով պետությունը կազմվում էր իբրև կարծեցյալ ինքնակա ում (ընդգծումը մերն է—խմբ.), և այդ դրությունը, որը մյուս երկրներում անցումային էր (անցման աստիճան), նա մինչև այժմ պահպանեց Գերմանիայում»[1]: Այսպես ուրեմն, դասակարգերի յուրահատուկ հավասարակշռության այդ ժամանակաշրջաններում անգամ կառավարական իշխանությունը ձեռք է բերում անկախության միայն որոշ աստիճան, միայն կարծեցյալ ինքնակայունություն: Պետությունն առաջվա պես մնում է իբրև հասարակական որոշ դասակարգի տիրապետություն և կառավարական իշխանությունը — այդ դասակարգային տիրապետության գործիք: Այս սկզբունքային դրությունը կիրարկելով աբսոլյուտ միապետության նկատմամբ, մենք կասենք, որ այդ միապետությունը չեղել է ազնվական պետություն և նրա կառավարական իշխանությունը չեղել է ազնվականության դասակարգային տիրապետության գործիք այն ժամանակաշրջանում, երբ պատմականորեն ֆեոդալիզմին հաջորդող կապիտալիզմն արդեն հասել էր իր զարգացման այն աստիճանին (մանուֆակտուրային շրջան), երբ բուրժուազիան կազմավորված է որպես դասակարգ և դառնում ազնվականությանը հակակշիռ: Հասարակական այդ երկու դասակարգերի հակամարտությունը ջլատում է այն հիմնարկությունների գործունեությունը, որոնց միջոցով տիրապետող դասակարգը անմիջականորեն միջամտում էր կառավարմանը: Այսպես կոչված դասային-ներկայացուցչական հիմնարկությունները, օրինակ, գլխավոր շտատները Ֆրանսիայում, պարլամենտը Անգլիայում կամ երկրային ժողովը Մոսկովյան պետությունում, կամ բոլորովին չքանում են, կամ, ինչպես թյուդորյան Անգլիայում, կորցնում են իրենց նշանակությունը: Այս պատճա-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. IV, էջ 175.

ռով կառավարական իշխանությունը վորոշ չափով ինքնակայություն ե ձեռք բերում, բայց նա առաջվա պես մնում ե իբրև տիրող դասակարգի գործիք, և այն հանգամանքը, վոր ինքը, ազնվականությունը հաշտվում ե աբսոլուտիզմի, վորպես իր դասակարգային տիրապետության յուրահատուկ ձևի հետ, այսինքն հաշտվում ե՝ հրաժարվելով իր անդամներից յուրաքանչյուրի քաղաքական ինքնակայությունից,—հրաժարվում ե այն ինքնակայությունից, վորը հատուկ ե ֆեոդալական մասնատման եպոխային,—բացատրվում ե այն կարևոր ֆունկցիայով, վոր աբսոլուտ միապետությունը կատարում ե նոր կազմավորվող հասարակության մեջ, ուր անընդհատ աճում ե բուրժուազիայի տնտեսական նշանակությունը։ Աբսոլուտ միապետությունը բուրժուազիայի ուժեղացող ճնշումից ազնվականությանը պաշտպանելու ֆունկցիայե կատարում և մի քանի դեպքերում, օրինակ, XVII—XVIII *դարերի Ֆրանսիայում,* XVIII *դարի և* XIX *դարի առաջին կեսի Պրուսիայում կամ* XVIII—XIX *դարերի Ռուսաստանում իսկական ազնվականական դիկտատուրայի բնույթ ե ստանում։ Վոր այդ անցումը ֆեոդալական հասարակության տիրող դասակարգի քաղաքական կազմակերպության նոր ձևին, այսինքն ֆեոդալական-աբսոլուտիստական պետության, կապված ե հենց բուրժուազիայի վորպես դասակարգի յերևան գալու և ուժեղանալու հետ, այդ հեշտությամբ բացատրվում ե հետևյալ նկատառումով։ Թագավորական իշխանության դաշինքն սկզբում քաղաքների և ապա բուրժուազիայի հետ, վորը վորպես դասակարգ հաստատուն ե դառնում աբսոլուտ միապետության հովանու տակ, սկզբում թեև չի առաջացնում ազնվականության համար նրա քաղաքական տիրապետության կորուստ այնուամենայնիվ նրան դնում ե խոշոր տերիտորիալ պետության համախմբման փաստի առաջ և այդ պետության սահմաններում—հենց բուրժուազիայի վորպես դասակարգի համախմբման փաստի առաջ, դասակարգ, վորը պատմականորեն կատարում ե հեղափոխական այն ուժերի կազմակերպչի դերը, վորոնք ուղղված են ամբողջ ֆեոդալիզմի դեմ։ Ազնվականությունը, վոր առաջ բավականաչափ ուժեղ եր, վորպեսզի հնազանդեցներ անմիջական արտադրողների հիմնական մասսային, գյուղացիությանը, նույնիսկ չզիջելով իր շարքերի քաղաքական համախմբման, հիմա, կանգնած լինելով տերիտորիալ խոշոր պետության կազմվելու փաստի առաջ, վոր կատարվել եր թեպետև նրա մասնակցությամբ, բայց համենայն դեպս վոչ*

նրա շահերի համար,—մշակում է քաղաքական մի ձև, վորը համապատասխանում է իրերի այդ նոր դրության,—իր տիրապետության կենտրոնացված ձևը, վորի մեջ մարմնացվում է այդ ամբողջ դասակարգի շահը, նրա պաշտպանությունը բուրժուազիայի ճնշումից։ Վերջինս, վորպես արտադրության նոր, հեղափոխական յեղանակը կիրարկող, իրեն է յենթարկում այն բոլոր շահերը, վորոնք կապված են կապիտալիզմի և շահագործման կապիտալիստական ձևի հետ, և դրանով մինչև վորոշ աստիճան քայքայում է հենց տիրող դասակարգի շարքերի միասնությունն ու համախմբվածությունը, վորովհետև, այդ դասակարգն էլ կարող է վարակված լինել կապիտալիստական շահերով։ Այնքան, վորքան գյուղացիությունը, այդ ժամանակ ազատված լինելով անձնական կախումից, ձգտում է դառնալ իր հողի լիակատար սեփականատերը և հողի նկատմամբ իր ֆեոդալական սեփականությունը դարձնել «ազատ մասնավոր սեփականություն»,—նա ուժեղացնում է բուրժուազիայի հեղափոխական ուժը։ Ինքն ի վիճակի չլինելով կատարել այդ հեղաշրջումը, գյուղացիությունը բուրժուազիայի մեջ գտնում է այն ուժը, վորը իրեն կազմակերպում է ֆեոդալիզմի դեմ պայքարելու համար։ Լենինը շատ լավ է նշել բուրժուազիայի այդ նշանակությունն իր այն դիտողության մեջ, վոր վերաբերում է Ենգելսի «Գերմանիայի գյուղացիական պատերազմի պատմության»։ «Ֆր. Ենգելսը,— ասում է նա,— առանձնապես ընդգծում էր փորձի դասը, վորը մինչև վորոշ աստիճան միավորում է XVI դարի գյուղացիական ապստամբությունը և 1848 թվի հեղափոխությունը Գերմանիայում, այն է՝ յելույթների մասնատվածություն, ճնշված մասսաների մոտ կենտրոնացման բացակայություն, վորը կապված է նրանց մանրբուրժուական կենսական դրության հետ։ Յեվ, այս կողմից մոտենալով գործին, մենք հանգում ենք նույն հետևության. մանրբուրժուական մասսաների սոսկ մեծամասնությունը դեռևս վոչինչ չի վճռում և չի կարող վճռել, վորովհետև կազմակերպվածությունը, յելույթների քաղաքական գիտակցությունը, դրանց կենտրոնացումը (վոր անհրաժեշտ է հաղթանակի համար), այս բոլորը գյուղական մանր տնտեսատերերի ցրիվ միլիոններին ի վիճակի յե տալ միայն նրանց ղեկավարումը կամ բուրժուազիայի կողմից, կամ պրոլետարիատի կողմից»[1]։

---

[1] *Ленин*, Соч. т. XXI, եջ 54.

Յեվ աբսոլյուտ միապետությունը, վորպես ազնվականության, հասարակության մեջ նրա տիրապետող դիրքի դասակարգային պաշտպանության համակենտրոնացված ձև, դուրս ե գալիս բուրժուազիայի ու ֆեոդալական հին հասարակության անմիջական արտադրողների, վորոնք նույնպես բուրժուական վերասերում եյին ապրում, իրերի ուժով և հարաբերությունների ստեղծվող դաշինքի դեմ։ Ժամանակակիցները կարող եյին և չգիտակցել աբսոլյուտ միապետության այդ նշանակությունը, քանի վոր սկզբում վոչ ազնվականությունը, վոչ ել բուրժուազիան չեն կռահում այն դերը, վոր վերջինը վաղ թե ուշ պետք ե խաղա առաջինի կործանման մեջ։ Ընդհակառակը, այնքան, վորքան ֆեոդալական-աբսոլյուտիստական պետության տիրող դասակարգը օգտվում ե պետական հարկադրանքի միջոցներով իր յեկամուտներն ավելացնելու համար և պետական հարկի անվան տակ այսպես ասած համակենտրոնացված ձեվով ֆեոդալական ռենտա յե գանձում վոչ միայն գյուղացիներից, այլև բուրժուազիայից, դեռ ավելին—կարելի յե ասել՝ հենց առաջադիմող կապիտալիստական զարգացումից (լրացուցիչ միջոցներ առևտրի և արդյունաբերության հարկումից),—աբսոլյուտ միապետությունը շահագրգռված ե լինում ոժանդակել կապիտալիստական զարգացմանը և բուրժուազիային, վորպես այդ զարգացումը կրողին։ Աբսոլյուտ միապետությունն իրականացնում ե հովանավորի իր դերը թե՛ ներքին քաղաքականության մեջ, աջակցելով մանուֆակտուրային և արդյունաբերությանը, և թե՛ արտաքին քաղաքականության մեջ, XVII և XVIII դարերի մերկանտիլիզմի և առևտրական պատերազմների քաղաքականությամբ պաշտպանելով ազգային բուրժուազիայի շահերը։ Յեվրոպայի պատմական զարգացման մեջ աբսոլյուտ միապետության այդ կարևոր դերը դադարում ե այն չափով, ինչ չափով զարգանում ե բուրժուազիան, վորի համար ազնվական պետությունը հետզհետե դառնում ե չափազանց թանկ նստող և վատ տնտեսավարող մի հաստատություն։ Ուղղակի ասած՝ վորոշ ժամանակից հետո բուրժուազիան սկսում ե նեղվել ազնվականական թալանից և իրեն բավականաչափ ուժեղ ե զգում, վորպեսզի ազատվի դրանից, իր ձեռքը վերցնելով իշխանությունը։ Աբսոլյուտ միապետությունը այդ ժամանակ դառնում ե իր դարն ապրած, պարզապես ռեակցիոն մի հաստատություն, վորն իզուր կառչում ե հին հաստատություններից, հույս ունենալով կանխել իր վախճանը։ «Յերբ հա-

սարակութեյան գոյութեյան նյութեական պայմանները այնքան զարգացան, որ նրա պաշտոնական քաղաքական ձևերի վերակազմումը նրա համար կենսական անհրաժեշտություն դարձավ, այդ ժամանակ փոխվում է քաղաքական հին իշխանութեյան ամբողջ կերպարանքը։ Այսպես, աբսոլյուտ միապետությունը, փոխանակ կենտրոնացնելու, *—ինչ որ հենց դրանում էր կայանում նրա ամբողջ ցիվիլիզատորական գործունեյութեյունը,—* ապակենտրոնացման *փորձեր է անում։ Ընկելով ֆեոդալական դասերի ավերակների վրա և ամենագործունյա մասնակցութեյուն ցույց տալով նրանց քայքայման, նա հիմա ձգտում է պահպանել ֆեոդալական ստորաբաժանումների գեթե* յուրահատկությունը։ *Այն ժամանակ, երբ նա առաջ հովանավորում էր առևտուրն ու արդյունաբերութեյունը և հետևաբար բուրժուազիայի դասակարգի ծագումը, նրանց մեջ տեսնելով թեե ազգային հզորութեյան և թեե իր սեփական փայլի անհրաժեշտ նախադրյալները,—հիմա այդ աբսոլյուտ միապետութեյունը ամենուրեք խոչընդոտ է հանդիսանում առևտրի և արդյունաբերութեյան հետագա զարգացման ճանապարհին, զարգացում, որ դարձել էր չափազանց վտանգավոր մի գործիք հզոր բուրժուազիայի ձեռքում։* Քաղաքից, *իր մեծութեյան ոլորանից արտաքսված միապետութեյունն իր ընկճված ու բթեացած հայացքը դարձնում է դեպի* գյուղական օկրուգները, *որոնք պարարտացվել էին* ընկած հսկաների, *նրա հին թեշնամիների դիակներով»*[1]։

Ցերեք հիմնական փաստերը, որոնք կազմում են միջնադարի երրորդ ժամանակաշրջանի հիմքը, այսինքն կապիտալիստական զարգացման սկիզբը, բուրժուազիայի կոնսոլիդացիան և ֆեոդալական-աբսոլյուտիստական միապետութեյունը, իրենց զարգացման մեջ ստանում են մի խթեան, որն արագացնում է նրանց հասունացումը ժամանակի ընթեացքում, աշխարհագրական այն մեծ գյուտերի հետևանքով, որոնք և կլինեն սույն տրված շարադրման առարկա։

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. V, *էջ 214.*

ԳԼՈՒԽ II

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ԳՅՈՒՏԵՐԸ

Մարքսը աշխարհագրական մեծ գյուտերի նշանակության մասին

Նոր յերկրների գյուտը հսկայական նշանակություն ունեցավ Յեվրոպայի համար։

«Ամերիկայի և Աֆրիկայի շուրջը յեղած ծովային ճանապարհի գյուտը նոր ասպարեզ ստեղծեց աճող բուրժուազիայի համար։ Արևելա-հնդկական և չինական շուկաները, Ամերիկայի գաղութացումը, փոխանակությունը գաղութների հետ, շրջանառության գործիքների և առհասարակ ապրանքների քանակի ավելացումը մինչ այդ չլսված զարկ տվին առևտրին, ծովագնացությանը, արդյունաբերությանը և դրանով զգալիորեն արագացրին հեղափոխական տարրի զարգացումը քայքայված ֆեոդալական հասարակության մեջ»[1],—ասում են Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական մանիֆեստում»։

Աշխարհագրական մեծ գյուտերի պատճառները

Աշխարհագրական մեծ գյուտերին նախորդեցին Յեվրոպայից դեպի Հարավային և Արևելյան Ասիա տանող ծովային ճանապարհի վորոնումները։ XV դարի յերկրորդ կեսում դրանք առանձնապես համառ բնույթ են ստանում։ Այդ ժամանակ խախտվում են առևտրական այն կապերը, վորոնք գոյություն ունեյին Յեվրոպայի և Արևելյան ու Հարավային Ասիայի միջև, Միջերկրական ծովի արևելյան մասի վրայով և վորոնք սահմանվել եյին հին դարերում։

XIV դարի կեսում կազմալուծվում է մոնղոլական մեծ պետությունը, վորը հսկայական տերիտորիա յեր ընդգրկել Խաղաղ ովկիանոսի ափից մինչև հարավ-ռուսական տափաստանները։ Չինաստանը վերականգնում է իր անկախությունը և նորից իր

[1] Маркс и Энгельс Соч. т. V, էջ 484.

ղները փակում ոտարերկրացիների առաջ։ Այսպիսով վերանում և Տանայից[1] Չինաստան տանող ցամաքային մեծ ճանապարհի վերջնական նպատակակետը։ Հենց այդ ճանապարհն էլ, որով առաջ կարելի էր «յերթևեկել լիովին անվտանգ, ինչպես սեփական տանը», հիմա անցնելով քոչվորների առանձնացած, միմյանց դեմ շարունակ թշնամություն անող հորդաների տերիտորիայով, խիստ վտանգավոր էր դառնում։ Սև ծովի վրայով դեպի Արևելք տանող առևտրական ուղին վերջնականապես կորցրեց իր նշանակությունը 1453 թվից, յերբ թուրքերը գրավեցին Կոնստանտինոպոլիսը, այդ կերպ արևմտայեվրոպական վաճառականների առաջ փակելով թե Տանայի վրայով տանող հյուսիսային ճանապարհները և թե Տրապիզոն—Հայաստանի վրայով տանող ճանապարհները դեպի Ասիա։ Դրա հետ միաժամանակ Միջերկրական ծովում յերևան են գալիս թուրքական ծովահենները. Թուրքերը սկսում են առաջանալ նաև դեպի հարավ, սիրիական ափի յերկարությամբ։ Այսպիսով հարվածի տակ էր ընկնում նաև հարավային ճանապարհները, որոնք Սիրիայի և Միջագետքի վրայով տանում են դեպի Հնդկաստան։

Ազատ մնացած հարավային ճանապարհը, որ Յեգիպտոսի ու Կարմիր ծովի վրայով տանում էր դեպի Հնդկաստան, գտնվում էր արաբների ձեռքում։ Արաբները յեվրոպացիներին զգալ եյին տալիս Յեվրոպայի և ասիական յերկրների միջև միակ և մոնոպոլ միջնորդների իրենց դիրքը։ Յեվրոպացիներն արաբական միջնորդներին 8—10 անգամ ավելի եյին վճարում, քան տեղում յեղել է ապրանքների առքի գինը։ Արևելքի յերկրներում համեմունքի և այլ ապրանքների անմիջական գնումն անասելի օգուտներ էր խոստանում։ Այստեղից առաջ էր գալիս դեպի այդ յերկրները տանող ճանապարհները գտնելու և արաբական միջնորդությունից խուսափելու ձգտումը։ Այդ անմիջական հարաբերությունների հաստատումը ամենից քիչ էր շահագրգռված Վենետիկի հանրապետությունը։ Վենետիկի վաճառականները, որոնք Յեվրոպայում գրեթե լիակատար մոնոպոլիստներ եյին նրան արևելյան ապրանքներ մատակարարելու գործում, յեվրոպացի սպառողների հաշվին վերադրով վերադարձնում եյին իրենց այն փողերը, որ իրենք ավելորդ տեղը վճարում եյին արաբներին։

[1] Դոնի գետաբերանում, այժմյան Ազովի մոտ։

Բայց այն դժվարությունները, վորոնց յեվրոպացիները հանդիպում եյին Միջերկրական ծովի արևելյան մասի վրայով Արևելյան և Հարավային Ասիայի հետ հարաբերություններ պահպանելիս, միակ հանգամանքը չեյին, վոր նրանց դրդեց փնտրել նոր ուղիներ դեպի այդ յերկրները։

Արդեն XII դարից Յեվրոպայում առևտրական հարաբերությունների վորոշ աշխուժացման հետ մեկտեղ սկսեց զգացվել վոսկե դրամի պակասություն։ XV դարում Յեվրոպան վոսկու սուր պակասություն է զգում։ Փողը թանկանում է. XV դարի վերջը ապրանքների եժան գների ժամանակն է։ Յեվրոպան վոսկու մեծ մասը ստանում եր դրսից, այն է՝ Աֆրիկայից։ Յեվրոպացիները,—առաջին հերթին իհարկե Միջերկրական ծովի ավազանում ապրող ժողովրդները Աֆրիկան պատկերացնում եյին իբրև վոսկով առատ յերկիր։ Այդ պատկերացումները յերբեմն ֆանտաստիկ բնույթ եյին կրում։ Բայց հենց Հյուսիսային Աֆրիկայում, ուր այցելում եյին վաճառականները, վոսկի չեր հանվում։ Վոսկին այստեղ, մավրիտանական տիրույթները—Ֆես, Մարոկկո, Թունիս եր բերվում կամ Սենեգալի մարզից, կամ քարավանային յերկար ճանապարհով, Սահարա անապատի վրայով—Նիգերի ավազանից, ուր առևտրական կարևոր կենտրոն եր Տիմբուկտու քաղաքը, վորի հետ հյուսիս-աֆրիկական քաղաքները աշխույժ առևտուր եյին անում։ Յեվրոպացիք ճիշտ տեղեկություններ չունեյին վոսկեբեր յերկրների մասին, բայց, ըստ լուրերի, վոսկու հանույթի վայրերը գտնվում եյին Ատլանտյան ովկիանոսը թափվող մեծ գետերի մոտ, վորոնց հեղեղվող ավազուտներում վոսկու մանրուք է նստում։ Գոյություն չունեցող այդ գետերը—սրանցից մեկի («Վոսկե գետի») գետաբերանը իբր թե գտնվում եր Բոյադոր հրվանդանի մերձակայքում—պատկերացվում եյին իբրև Նեղոս գետի (Նիգեր գետ—սև Նեղոս) վտակներ, վորոնք հեռացել են դեպի արևմուտք։

Ազատվել մավրերի միջնորդությունից, գտնել վոսկեբեր յերկրներ, ծովի վրայով հասնել վոսկու հեքիաթային հարստություններին,—սա չափազանց հրապուրիչ մի խնդիր եր Միջերկրականի քաղաքների առևտրական շրջանների համար. և այդ խնդիրը վճռելու փորձեր եյին արվում արդեն VIII դ. վերջից։ Վոսկու այդ յերկրների ճանապարհն ակներևաբար գնում է Ջիբրալտարի վրայով, Աֆրիկայի արևմտյան ափերի յերկարությամբ, մի կողմ թողնելով մավրիտանական տիրույթները։ Ընթա-

նալով ափի յերկարությամբ, կարելի յեր հույս ունենալ հասնել նաև վոսկեբեր գետերի գետաբերանները: Սա հենց այն ուղին էր, վորը վերջին հաշվով յեվրոպացիներին հասցրեց Հնդկաստան: «Թե XV դարի վերջում,—ասում է Էնգելսը,—փողը վորչափ թուլացրեց և ներքուստ քայքայեց ֆեոդալիզմը, պարզ յերևում է վոսկու այն ծարավից, վոր այդ էպոխայում համակել էր Արևմտյան Յեվրոպան. վոսկի էյին փնտրում փորթուգալացիները աֆրիկական ափում, Հնդկաստանում, ամբողջ հեռավոր Արևելքում. վոսկի—դա այն մոգական բառն էր, վոր իսպանացիներին մղում էր Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմը. վոսկի—ահա թե առաջին հերթին ինչ էր պահանջում սպիտակամորթը, հենց վոր նա վոտ էր դնում հայտնաբերված ափը»[1]:

Փորթուգալացիների էքսպեդիցիաները

Հնդկաստան տանող ծովային ճանապարհը հայտնագործվեց գրեթե հարյուրամյա այն ջանքերի հետևանքով, վոր թափեցին փորթուգալական ծովագնացները, վորոնք սկզբում գնում էյին աֆրիկական վոսկեբեր յերկրները վորոնելու:

Փորթուգալիան, Էնգելսի արտահայտությամբ այդ «Իբերիական Հոլանդիան»[2] արդեն XIV դարում բավական նկատելի դեր է խաղում արևմտայեվրոպական ծովային առևտրում: Փորթուգալական ծովափնյա քաղաքներում աճում է ձեռներեց բուրժուազիան, վորն ագահաբար յուրացնում է իտալական ու արաբական ծովային և առևտրական տեխնիկան: Փորթուգալական ծովագնացները ձկնորսական նավակից մշակեցին ծովագնաց նավի մի նոր տիպ—«Կարավելլա» (կարա—նավակ, վելլա—առագաստ, առագաստավոր նավակ»), վոր ճկուն էր, ջրի վրա թեթև, շատ ավելի արագընթաց, քան Միջերկրական ծովի իտալական ծանր նեֆերը:

Փորթուգալական առևտրին մեծ վնաս էյին հասցնում մավրիտանական ծովահենները: XV դարի սկզբում Փորթուգալիան արդեն այնքան ուժեղ էր ծովում, վոր հաջող փորձ ձեռնարկեց գրավելու ծովահենների այդպիսի վորջերից մեկը—հյուսիս-աֆրիկական ափում գտնվող Սեուտան (1415 թ.):

Գրավելով Սեուտան, փորթուգալացիները մոտիկից շփվեցին առևտրական հարաբերությունների այն սիստեմի հետ, վոր ընդ-

1) *Маркс и Энгельс.* Соч. т. XVI, ч. I, էջ 442

2) Նույն տեղը, էջ 449

գրկել էր ամբողջ հյուսիսային Աֆրիկան, գրեթե մինչև Հասարակածը։ Սովորաբար այս դեպքը համարվում է փորթուգալական գաղութային էքսպանսիայի սկիզբը։ Դրա առաջին հերոսը դարձավ արքայազն Հենրիխ Ծովագնացը։ Նա պատմության մեջ մտավ իբրև անշահախնդիր մի գիտնական, աստղաբաշխության և աշխարհագրության սիրող, քարտեզների, գլոբուսների, գրքերի նշանավոր կոլեկցիաների տեր, որ իր շուրջն էր հավաքում ամենաականավոր տիեզերագետներին, ծովագնացներին և ճանապարհորդներին, օգտագործում էր թագավորի յեղբոր իր դիրքը և հսկայական միջոցներ էր ծախսում ծովային հետազոտական էքսպեդիցիաներ կազմակերպելու համար։ Բայց իրականում Հենրիխը ամենից առաջ յեղել է լայն թափի վաճառական և ձեռնարկու։ Իր համար խիստ ձեռնտու պայմաններով նա կարողացավ փորթուգալական-մավրիտանական-հրեական վաճառականությանը, ինչպես նաև ուրիշ յերկրներից ներգաղթած, բավական մեծաթիվ վաճառականներին, գլխավորապես իտալացիներին և մասնավորապես ջենովացիներին կազմակերպել մի ամբողջ շարք առևտրական փայատիրական ընկերություններում։ Ընկերությունները առևտրի մոնոպոլիա ունեին նոր հայտնագործվող մարզերում, բայց նրանց էքսպեդիցիաներն ու հայտնագործությունները առաջին իսկ քայլերից ոչ միայն առևտրական, այլև ավազակային ու թալանչիական նպատակներ եյին հետապնդում։ Ամենաձեռնտու «առևտուրը» նեգրերին վաճառելն էր։ 1441 թվին Լագոս բերվեց նրանց առաջին խումբը և բաժանվեց փայատերերի միջև։ Հենրիխը առարկում էր առևտրի այդ մեթոդների դեմ, բայց չհրաժարվեց իրեն հասանելիք բաժնից։ Այն ծովագնացների մեծ մասը, վորոնք գյուտեր եյին արել աֆրիկական ծովափի յերկայնքով, նրա ընկերությունների փայատերեր եյին։

Աֆրիկայի ափի յերկարությամբ դեպի հարավ ընթանալու դեմ մեծ և կարծես անհաղթահարելի խոչընդոտ էր հանդիսանում Նուն հրվանդանի մոտ գտնվող լայնատարած ծանծաղուտը։ Միայն 1434 թվին Ժիլ Եաննեսին հաջողվեց անցնել այդ հրվանդանը։ 1435 թվին նույն Եաննեսը և Ալֆոնսո Բալդայան 120 մղոնով ավելի անցան դեպի հարավ և հասան այսպես կոչված՝ Վոսկյա գետը։ Հետևյալ խոշոր քայլը դեպի առաջ Կանաչ Հրվանդանի գյուտն էր 1445 թվին։ Ծովագնացները, Աֆրիկայի արևմտյան ափերի յերկարությամբ, Սահարայից յեկող բարկ, ավազախառն մշուշում յերկար ճանապարհ անցնելուց հետո, ապշեցին

հրվանդանի տրոպիկական բուսականության ճոխություններից։ Վորքան ընթանում էին դեպի հարավ, այնքան ավելի հաճախ էր միտք ծագում Հնդկաստան տանող ծովային ճանապարհի մասին։ Շատ հավանական է, վոր այդ նպատակը նկատի ուներ նաև Հենրիխ Ծովագնացը, վորը մեռավ 1460 թվին։ Բայց այդ ճանապարհի հնարավորությունն ընդունելու համար հարկավոր էր հրաժարվել մի շարք տրադիցիոն աշխարհագրական պատկերացումներից։

Ըստ Պտղոմեոսի, Աֆրիկան հարավում միանում է Ասիային, այնպես վոր Հնդկական ովկիանոսը իրենից ներկայացնում է ներքին ծով։ Սակայն անտիկ աշխարհից մնացել էր նաև մի այլ թեորիա — Հերատոսթենի այն թեորիան, վոր Աֆրիկան հարավից յեզրված է ովկիանոսով, և այս պատկերացումը գերակշռում էր Միջերկրական ծովի ավազանի առևտրական քաղաքներում։ Դեռ XV դարի սկզբի մի շարք քարտեզներ, վորոնք պատրաստված էին Միջերկրական ծովի առափնյա քաղաքներում, Աֆրիկան պատկերում են իբրև մի ցամաք, վորը նեղանում է հարավում։ Այս պատկերացումները հավանորեն հենվում էին արաբական աշխարհագիրների և ճանապարհորդների տված ընդարձակ տեղեկությունների վրա, տեղեկություններ, վորոնք առանձնապես լավ էին յուրացվել Մայորկա կղզում XIV—XV դարերի հրեական քարտեզագիրների նշանավոր դպրոցի կողմից։ Ըստ հնադարյան ուսմունքի, յերկրագունդն իր կլիմայով բաժանվում է հինգ գոտու, ընդ վորում հասարակածի ուղղությամբ ձգվում է հրեղեն ոդի մի լայն շերտ։ Այստեղ չկան վո՛չ բույսեր, վո՛չ կենդանիներ. միայն առասպելական վոգիներն ու կրակից չվախեցող սալամանդրներն են ապրում այրող ավազուտներում։ Բոլորովին անկարելի յե կտրել այդ շիկացած գոտին և մեկ բարեխառն կլիմայից անցնել մյուսը։

Կանաչ Հրվանդանի արշավանքները այդ պատկերացումների ամենաակնառու հերքումն էին։

Աֆրիկայի յերկարությամբ փորթուգալացիների նավագնացությունները շարունակվեցին նաև Հենրիխ Ծովագնացի մահից հետո, թեև ընդմիջումներով։

1486 թվին Բարթուղոմեոս Դիասը, մի ընտանիքի պատկանող, վորը XV դարի մի շարք ականավոր ծովագնացներ էր տվել, հասնելով մինչև Այծեղջյուրի արևադարձը, ափից հեռացավ դեպի ծով, ուղիղ դեպի հարավ, վորովհետև հանդիպական հոսանքների պատճառով անկարելի յեր ընթանալ ափի յերկայնքով։ Հե-

տո նա դարձավ ուղիղ դեպի արևելք ու երկար ժամանակ ցամաքի չհանդիպելով, մի անգամից դարձավ դեպի հյուսիս ու դուրս եկավ Աֆրիկայի հարավային ծայրը, այն էլ Բարեհուսո հրվանդանից զգալիորեն դեպի արևելք։ Ափի երկայնքով նա էլի անցավ փոքր տարածություն դեպի արևելք, մինչև որ համոզվեց, թե իսկապես պտույտ է գործել մայր-ցամաքի շուրջը և այնուհետև ափը ձգվում է հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Վերադառնալիս նա ափի մոտ պտտեց Բարեհուսո հրվանդանի շուրջը, որին տալով հենց այդ անունը (և ոչ թե փոթորիկների հրվանդան, ինչպես հաղորդում են մի քանի պատմագիրներ), 1487 թվի դեկտեմբերին, տասնվեց ամսվա նավագնացությունից հետո, վերադարձավ Լիսաբոն։

Աֆրիկայի շուրջը ճանապարհը գտնված էր։

Թագավորը Դիասի էքսպեդիցիայի հետ միաժամանակ դեպի արևելք ուղարկեց Պերո դե Կովիլյանին, որին հաջողվեց Հնդկաստան հասնել սովորական ճանապարհով, Եգիպտոսի և Կարմիր ծովի վրայով։ Վերադառնալիս Կովիլյան լսեց մեծ «Լուսնյակ կղզու» մասին, որ գտնվում է հեռավոր հարավում (Մադագասկար)։ Նա թագավորին հաղորդում էր, որ եթե հաջողվի Աֆրիկայի կողքից անցնելով հասնել այդ կղզին, ապա դեպի հյուսիս և Հնդկաստան տանող հետագա ճանապարհը լավ ծանոթ է արաբական լոցմաններին։ Այս պատճառով նա առանձնապես պնդում էր, որ պետք է շարունակել ճանապարհորդությունները Աֆրիկայի շուրջը։ Հիմա մնում էր վճռել մի խնդիր,— անցնել Բարեհուսո հրվանդանից մինչև Մադագասկար ընկած տարածությունը։ Հնդկաստան տանող ճանապարհի այս վերջին էտապը կատարվեց միայն 10 տարուց հետո։ Մինչդեռ այդ ժամանակվա ընթացքում փորձ արվեց գտնել Հնդկաստան տանող մի այլ ճանապարհ, որի ուղղությունը հակադիր էր փորթուգալացիների անցած ճանապարհին։

Ամերիկայի գյուտը

Կարիք չկա այստեղ մանրամասն պատմել Կոլումբոսի և նրա կողմից Ամերիկան գտնելու քաջածանոթ պատմությունը, մանավանդ որ լիովին հաստատված չեն Կոլումբոսի կենսագրության շատ հիմնական փաստերը, որոնք տեղի յեն ունեցել մինչև նրա ճանապարհորդությունը դեպի Ամերիկա։ Մեր աղբյուրները աղքատիկ են, իսկ Կոլումբոսի ժամանակակից կենսագիրները կեղծել են նրա կյանքի պատմությունը։ Մնում է լայն ասպարեզ ամեն տե-

սակ կռահումների և հորինվածքների համար, և այս պատճառով գրականության մեջ ժամանակ առ ժամանակ յերևան են գալիս ամենաբազմազան, յերբեմն ֆանտաստիկ յենթադրություններ Կոլումբոսի «խսկական» ծագման մասին (մերթ նա հրեա յե, մերթ իսպանացի, մերթ փորթուգալացի), նրա յերիտասարդության, նրա պլանների և դիտավորությունների մասին։

Հիմա գրեթե հանրահայտնի յե, վոր Կոլումբոսը իտալացի յե, վոր նա ծնվել է 1451 թվին, Ջենովայի մոտ յեղած ավաններից մեկում, ջուլհակի ընտանիքում, վոր Կոլումբոսը 14 տարեկան հասակում կատարել է իր առաջին ծովային ճանապարհորդությունը և այդ ժամանակներից դարձել պրոֆեսիոնալ ծովագնաց և քարտեզագիր։ Մոտ 1476 թվին նա գնաց Փորթուգալիա, այնտեղ ամուսնացավ ծովագնաց Պերեստրելլոյի դստեր հետ, իսկ Պերեստրելլոյից մնացել են ծովային շատ քարտեզներ, օրագրեր, դիտողություններ։ Կոլումբոսը խիստ հետաքրքրվում եր ծովագնացության հարցերով, ուսումնասիրում եր նյութերը, զրուցում ծովագնացների հետ։

Մենք երբեք չգիտենք, թե Կոլումբոսի մեջ ինչպես է հղացել Ատլանտյան ովկիանոսով դեպի Հնդկաստան ճանապարհորդելու պլանը, վորը սովորաբար նրան են վերագրում։ Անկարելի յե ճիշտ վորոշել, թե ինչ նպատակ է ունեցել ճանապարհորդությունը։ Ընդհանուրի կողմից ընդունված տեսակետի համաձայն, նա ուզում եր հասնել Ասիայի արևելյան ափերը կամ այն կղզիները, վորոնք գտնվում են Ասիայի մոտ։ Իսկ ամերիկական գիտնական Վինյոյի կարծիքով Կոլումբոսը ձգտում եր հայտնագործել հեռավոր Ատլանտիկայում գտնվող յերեվակայական կղզիներից մեկը,—«Անտիլիան», «Բրազիլիան» և այլն։ XV դարի վերջում և XVI-ի սկզբում հաճախ եքսպեդիցիաներ եյին ձեռնարկվում այդ առասպելական կղզիները վորոնելու համար։

Խիստ տարածված է այն կարծիքը, թե դեպի Հնդկաստան տանող արևմտյան ճանապարհի մասին միտք է հղացել վոչ թե ինքը Կոլումբոսը, այլ այն արտահայտել է Ֆլորենցիայի գիտնական Տոսկանելլին, փորթուգալական արքունիքի հետ ունեցած իր նամակագրության մեջ։ Արքունիքի այն հարցումին, թե ինչպես կարելի յե ամենակարճ ճանապարհով հասնել Ասիա, Տոսկանելլուն վերագրվող նամակում ասված է. «Լիսաբոն քաղաքից ուղիղ դեպի արևմուտք հաշվեցեք յերկարության 26 տարածություններ, յուրաքանչյուրում 250 մղոն, մինչև պանծալի քաղաք

Կվինսայը (այսինքն Պեկինը)... Այդ տարածությունը կազմում է յերկրագնդի շրջագծի մոտ $^1/_3$ մասը...» Մի քանի տարուց հետո Կոլումբոսն իրր թե նամակագրություն է սկսել Տոսկանելլու հետ և վերջինս վկայակոչել է վերևում բերված նամակն ու սրան կից քարտեզը։

Վինյոն ժխտում է այդ նամակի իսկությունը, մատնանշելով, վոր այն վոչ իր բովանդակությամբ և վոչ էլ վոճով չի կարող պատկանել Տոսկանելլուն։ Ըստ յերեվույթին այն մի կեղծիք է, վոր թխված է Մարկո Պոլոյի գրվածքներից, վորոնք տվյալ ժամանակում արդեն խիստ հնացել եյին, և այն պատկերացումների անճիշտ վերապատմումից, վոր հնադարյան մարդիկ ունեյին յերկրի ձևի ու ծավալի, նրա բնակելի մակերևույթի մասին։ Ընդհանրապես նամակը խիստ է տարբական իր բովանդակությամբ և թե հազիվ նրանում արտահայտված լինի այնպիսի մի խոշոր գիտնական-տիեզերագրի կարծիքը, ինչպիսին Տոսկանելլին եր։

1492 թ. օգոստոսի 3-ին յերեք նավերից բաղկացած մի փոքրիկ նավախումբ դուրս յեկավ իսպանական նավահանգիստ Պալոսից, ուղեվորվելով դեպի Կանարյան կղզիները, վորտեղից սեպտեմբերի 10-ին շարունակեց ճանապարհը։ 33 որ ամենաբարենպաստ յեղանակին նավարկելուց հետո, հոկտեմբերի 11-ին ցամաք նկատվեց։ Հոկտեմբերի 12-ին Կոլումբոսը խարիսխ ձգեց մի փոքրիկ կղզու մոտ (ճիշտ պարզված չե, թե այդ վոր կղզին ե. յենթադրում են, վոր այդ յեղել ե Վաթլինգը), վոր պատկանում է Բահամյան կղզիների խմբին։ Տեղացիներն այդ կղզին անվանում եյին Գվանագանի. Կոլումբոսն այն անվանեց Սան-Սալվադոր։ Ամենամոտ որերում ճանապարհորդությունը վերսկըսվեց, հայտնագործվեցին մի շարք կղզիներ և Կուբայի հյուսիսային ափը։ Կոլումբոսը Կուբան ընդունեց Սիպանգո կղզու տեղը (Ճապոնիա), յեզրակացնելով, թե մոտ է ասիական մայր ցամաքը, թեպետ վոչինչ չեր հիշեցնում վոսկով առատ այդ առասպելական կղզու մասին։

1492 թվի հոկտեմբերին ընկնելով Կուբա, Կոլումբոսն ամենուրեք տեղացիներին հարցնում եր վոսկու մասին։ Նրանց ցուցմունքների հիման վրա,—վորոնք ինարկե յուրովի հասկացվեցին,— Կոլումբոսը ճանապարհվեց Կուբայից դեպի հարավ-արևելք և այդ կերպ նա հայտնագործեց Հայիթի կղզու հյուսիսային ափը, այդ կղզին անվանելով Եսպանյոլա (փոքրիկ Իսպանիա)։ Բնիկները Կոլումբոսին ասում եյին, թե այնտեղ գտնվում է վոսկով հարուստ

Սիբաո յերկիրը։ Կոլումբոսի յերեվակայության մեջ Սիբաոն իսկույն դարձավ Սիպանգո և նա մի փոքր տատանվելուց հետո վորոշեց, վոր Կուբան Ասիայի ցամաքն է։

1493 թվի հունվարի 4-ին Կոլումբոսը ճանապարհվեց Յեվրոպա։ Իսպանիայում նա ընդունվեց մեծ հարգանքով։ Բաց թողնըվեցին խոշոր միջոցներ՝ կազմակերպելու յերկրորդ եքսպեդիցիան, վոր նա ձեռնարկեց 1493 թվի սեպտեմբերին։ Այդ եքսպեդիցիայի ժամանակ գտնվեց Անտիլյան կղզիների խումբը և Եսպանյոլայում գաղութ ստեղծվեց։ Բայց գաղութարարների հսկայական մեծամասնությունն այնպիսի մարդիկ եյին, վորոնք բոլորովին հարմար չեյին գաղութացման համար։ Մավրերի դեմ մղված պատերազմները վերջանալուց հետո անգործ մնացած իսպանական հիդալգոն եր այդ—ծույլ և վայրագ ազնվական յերիտասարդությունը, վոր հույս ուներ վոսկու լեռներ գտնել նոր հայտնաբերված յերկրներում, ապրել հետաքրքիր արկածներ,—մի յերիտասարդություն, վոր լավ եր բանեցնում սուրը, բայց չեր ընտելացել վոչ մի աշխատանքի։ Կոլումբոսի յերկրորդ նավագնացության արդյունքները հիասթափեցրին իսպանական կառավարությանը։ Նրա հիմնած գաղութը յեղավ թանկ նստող մի ձեռնարկություն. վոսկեբեր յերկրներ չեյին գտնվել. Կոլումբոսին չհաջողվեց վորևե մեկին համոզել, վոր Կուբա կղզին, ուր բնակվում են աղքատ տեղացիները, հեքիաթային հարստություններ ունեցող Հնդկաստանի մի մասն է։

Ինչպես հայտնի յե, գտնվեցին Կոլումբոսին նախանձող մարդիկ, վորոնք նրան զրպարտեցին կառավարության առաջ և նա յերրորդ ճանապարհորդությունից հետո Յեվրոպա վերադարձավ շղթայակապ։ Նրան հաջողվեց արդարանալ, սակայն չորրորդ ճանապարհորդությունը նույնպես անհաջող չտվեց սպասված արդյունքները։ Յերրորդ և չորրորդ ճանապարհորդության ժամանակ Կոլումբոսը հասավ ամերիկական ցամաքի ափերը։ Կոլումբոսին մեծ վնաս տվեց Հնդկաստան տանող ճանապարհի գյուտը Վասկո դա Գամայի կողմից։ Հիրավի, փորթուգալացիք այնտեղից թե համեմունք և թե գործվածքներ բերին և ամեն տեսակ հրաշքներ տեսան։ Կոլումբոսի թանկ նստող և առայժմ քիչ օգուտ բերող ձեռնարկումների համեմատությունը փորթուգալացիների եքսպեդիցիաների հետ՝ իհարկե Կոլումբոսի օգտին չեր։

Կոլումբոսի չորրորդ նավագնացությունը պատասխան յեղավ Վասկո դա Գամայի եքսպեդիցիային։ Կոլումբոսի կողմից այդ մի

փորձ էր՝ Ատլանտյան օվկիանոսից հասնել Հնդկական օվկիանոս։ Հիմա նա ել ավելի համառորեն էր փնտրում կղզիների միջև յեղած ծովային ճանապարհը,—որոնք, նրա կարծիքով, փակում էին իր ուղին դեպի Ասիայի ափերը։ Այս էր նրա նպատակը, երբ նա Կուբա կղզուց ճանապարհվեց դեպի հարավ-արևմուտք։ Նա իհարկե ամենուրեք համատարած ցամաքի էր հանդիպում։ Նավարկելով Պանամայի պարանոցի երկարությամբ, նա անշուշտ մտքովն էլ չէր անցկացնում, որ դա ցամաքի մի նեղ շերտ է և որ դրանից դեպի հարավ տարածված է հսկայական օվկիանոսը, բայց նա իմացավ, որ այստեղ կա մի հարուստ, ոսկեբեր մարզ։

Վերջին տարիներում Կոլումբոսն ապարդյուն փորձ էր անում վերականգնելու իր իրավունքները և իրեն շնորհված արտոնությունները։ Նա մեռավ 1506 թվին, աղքատության մեջ, գրեթե բոլորի կողմից մոռացված։

Հնդկաստան տանող ծովային ճանապարհի գյուտը

Երբ Կոլումբոսն արդեն հայտաբերել էր նոր երկրները, փորթուգալացիները հանձին իսպանացիների խիստ վտանգավոր մրցակիցներ ունեին։ Ընդհարման հնարավորությունը կանխելու համար երկու պետությունները, երկար բանակցություններից հետո, պապի միջնորդությամբ 1494 թվին Տորդեսիլյասում համաձայնություն կնքեցին։ Բևեռից բևեռ նշվեց մի գիծ (մոտավորապես 30-րդ միջօրեականի վրայով, Ֆերրոյից դեպի արևմուտք) և այդ գծից դեպի արևմուտք նոր հայտաբերված բոլոր մարզերը պետք է պատկանեին իսպանացիներին, դեպի արևելք—փորթուգալացիներին։ Սահմանագծումը եղավ ոչ ամբողջ միջօրեականի վրայով, այլ միայն Ատլանտյան օվկիանոսով և այս ընդհարում առաջացրեց, երբ իսպանացիները, մտնելով արևելքից, իսկ փորթուգալացիներն արևմուտքից, հանդիպեցին Մոլուկյան կղզիներում։ Միայն փորթուգալական և իսպանական ծովագնացները չէին, որ ձգտում էին որոնել հեքիաթային կղզիները և համեմունքների երկրների ծովային ճանապարհը։ «Բրազիլիա կղզին» գտնելու համար XV դարի 90-ական թվականներին ամեն տարի արշավախմբեր էին ուղարկվում անգլիական նավահանգիստ Բրիստոլից։ Այստեղ բնակություն հաստատած Ջովաննի Կաբոտոն (անգլերեն՝ Ջոն Կաբոտ)—վենետիկցի ծովագնացը—նպատակ ունենալով արևմտյան ճանապարհով հասնել համեմունքների երկրները, 1497 թվին անցավ Ատլանտյան օվ-

կիանոսի հյուսիսային մասը և հայտնագործեց մի ցամաք (հյուսիսային Ամերիկա), հավանորեն Լաբրադորի հարավային մասը։ Նրա վորդի Սեբաստյան Կաբոտը նոր գտնված ցամաքի հյուսիսային կողմից անցք եր փնտռում դեպի արևմուտք։

Իսպանացիների շարժումը դեպի արևմուտք՝ փորթուգալացիներին դրդեց վերսկսել Հնդկաստանի ճանապարհի վորոնումները։

1497 թվին այդ նպատակով կազմակերպված եքսպեդիցիայի գլուխ նշանակվեց փորթուգալական յերիտասարդ ազնվական Վասկո դա Գաման (ծնվել և մոտ 1469 թ.), վորը մասնակցել եր Դիասի եքսպեդիցիաներին։ Չորս նավերը, վորոնցով նա 1497 թվի հուլիսի 8-ին Լիսաբոնից դուրս յեկավ նավարկության, փոքր ծավալ ունեյին (յերկու նավը 120-ական տ., յերկուսն ել 50-ական տ.)։ Յերկու նավը կառուցված եյին հատկապես այդ նավարկության համար։ Ծովագնացներն ապահովվել եյին լավագույն քարտեզներով և նավարկության լավագույն գործիքներով։

Հասնելով մինչև Կանաչ Հրվանդանի կղզիները, Վասկոն, առափնյա հանդիպական հոսանքներից խուսափելու համար, ուղղությունը վերցրեց դեպի հարավ, դեպի արևմուտք մեծ թեքումով, այնպես, վոր նա բավական մոտեցավ Բրազիլիային։

Հետևյալ եքսպեդիցիան Կաբրալի ղեկավարությամբ 1500 թվին ել ավելի թեքվեց դեպի արևմուտք և հասավ Բրազիլիայի ափը։ Այնուհետև նավերն այդ ուղղությամբ Հնդկաստան եյին գնում ընդհուպ մինչև XIX դարը։ Բրազիլիայի արևմտյան ծայրը դարձավ այդ ճանապարհի միջակա կարևոր մի կայան։

Լիսաբոնից դուրս գալուց միայն հինգ ամիս հետո Վասկոյի կարավելլաները հասան (1497 թ. դեկտեմբերի 16-ին) մինչև այն վերջին նշանը, վոր Դիասը դրել եր Աֆրիկայի ափում։ Այնուհետև ձգվում եր դեռևս բոլորովին անծանոթ ճանապարհը՝ Հնդկական Ովկիանոսում։

1498 թ. մարտի 1-ին փորթուգալացիները մոտեցան Մոզամբիկին։ Այստեղ սկսվում եր արաբական բնակավայրերի մարզը,— վորոնք գտնվում եյին միմյանց թշնամի առանձին շեյխերի իշխանության տակ։ Ճանապարհին տեղի եյին ունենում ընդհարումներ արաբների հետ, բայց փորթուգալացիները, օգտագործելով շեյխերի մրցակցությունը, կարողացան վերցնել արաբական լոցմաններ, վորոնք մեկ և կես ամսից հետո նրանց նավերը հասցրին հնդկական ափը, Մալաբարյան յեզերքում գտնվող Կալիկուտ քաղաքը (1498 թ. մայիսի 20-ին)։

Այստեղ փորթուգալացիների յերևան գալը, ինչպես և պետք եր սպասել, անբարյացակամ ընդունելություն գտավ տեղական արաբների կողմից: Սրանցից վոմանք Հյուսիսային Աֆրիկայից յեկածներ եյին: Չնայելով նրանց մեքենայություններին, Վասկո դա Գամային հաջողվեց համաձայնություն կնքել տեղական ռաջայի հետ: «Մեր յերկրում,—գրում եր ռաջան արմավենու տերևի վրա, փորթուգալական թագավորին,—կա շատ դարչին և մեխակ և իմբիր, պղպեղ և թանկագին քարեր, իսկ ձեզանից յես ուզում եմ վոսկի և արծաթ, կորալներ և ծիրանագույն մահուդ»:

Համեմունքով բեռնված նավախմբի վերադարձը տևեց գրեթե մի տարի: Կորցնելով յերկու նավ և անձնակազմի կեսից ավելին, նավախումբը միայն 1499 թվի հուլիսի 10-ին հասավ Լիսաբոն:

Փորթուգալացիների առևտուրը յեվ գաղութները Հնդկաստանում

Վասկո դա Գամայի ճանապարհորդությունը հսկայական տպավորություն թողեց: Վերջապես, գտնվել եր ճանապարհը դեպի հսկայական հարստությունների յերկրները: Չնայելով մարդկային մեծ կորուստներին և ճանապարհին յեղած դժվարություններին, այնուամենայնիվ այդ ճանապարհորդությունը հնարավոր դարձավ: Փորթուգալացիները յեռանդով ձեռնամուխ յեղան նոր հայտնագործված յերկրների շահագործմանը: Ամեն տարի ուղարկվում եյին մեծ նավախմբեր, յերբեմն մինչև 20 նավ, վորոնք լավ զինված եյին լինում հրետանիով, ունենալով մեծաթիվ անձնակազմ և զինվորների ջոկատներ: Առաջին խնդիրը, վոր իրենց առաջ դնում եյին փորթուգալացիները, դա արաբներին Հնդկական ովկիանոսից վտարելն եր, մյուս խնդիրը — տեղական բնակչությանն իրենց յենթարկելը: Իրենց զինման և ծովային տեխնիկայի գերազանցության շնորհիվ փորթուգալացիներին հաջողվեց իրագործել այդ խնդիրները և, բռնելով արաբների տեղը, ել ավելի դաժանորեն շահագործել Հնդկաստանի և դեպի արևելք գտնվող տերիտորիաների բնակչությանը:

Հնդկական ովկիանոսում հենց առաջին անգամ յերևալուն պես փորթուգալացիներն անձնատուր յեղան ամենասանձարձակ ծովահենության, սկսեցին վորսալ թե արաբական և թե տեղական բոլոր հանդիպող նավերը: Նավերի բեռները թալանվում եյին, անձնակազմը գազանաբար կոտորվում եր: Փորթուգալացիները հնդկական մանր իշխաններից պահանջում եյին դադարեցնել

ամեն տեսակ առևտրական հարաբերությունները արաբների հետ և սրանց արտաքսել իրենց տերիտորիայից։

Արաբների դեմ առանձնապես յեռանդուն պայքար եր մղում Ալբուկերկեն, վոր ուղարկված եր իբրև մի փոքրիկ նավախմբի ղեկավար, սկզբում վորպես փոխարքային յենթարկվող նավախմբի պետ, իսկ հետո վորպես փոխարքա։ Ալբուկերկեն գտնում եր, վոր փորթուգալացիները պետք ե հաստատապես ձեռք գործեն վոչ միայն Հնդկաստանի արևելյան ափի բոլոր կարևորագույն կետերը, այլև Հնդկական ովկիանոսի ամբողջ ափը։ 1506 թվին Ալբուկերկեն բռնագրավում ե Սոքոտորա կղզին, վոր գտնըվում ե Կարմիր ծովի մուտքում, ու յերկու տարվա ընթացքում նավարկում ե Արաբիայի հարավային ափի յերկարությամբ, քարուքանդ ե անում արաբական անպաշտպան քաղաքները, ամենուրեք սարսափ տարածում իր գազանություններով։ 1508 թվին նա բռնագրավում ե առևտրական և ստրատեգիական կարևոր մի կետ, Որմուզը, վորը գտնվում ե Պարսկական ծոցի մուտքում։ Որմուզի իշխանը ստիպված եր ճանաչել փորթուգալական թագավորի իշխանությունը, հարկ վճարել և թույլ տալ, վոր փորթուգալացիները միջնաբերդ կառուցեն։

Մինչ այս, մինչ այն, փորթուգալական փոխարքա դ՛ Ալմեյդան 1509 թվին Դիույի մոտ (Հնդկաստանի հյուսիս-արևմտյան ափի մոտ) վճռական պարտություն հասցրեց Յեգիպտոսի սուլթանի ուղարկած նավատորմին։ Դրանից քիչ ժամանակ անց Ալբուկերկեն, դառնալով դ՛Ալմեյդայի հաջորդը, փորձեց գրավել Կարմիր ծովի յելքը, հարձակվեց Ադենի վրա, բայց հետ մղվեց։ Փորթուգալացիները համեմատաբար թույլ դիմադրության հանդիպեցին Հնդկաստանի տեղական բնակչության կողմից, շնորհիվ յերկրի քաղաքական մասնատվածության։ Տեղական ռաջաների մի մասը, չունենալով դիմադրելու ուժ, մասամբ ել հույս ունենալով, վոր փորթուգալացիներից ոգնություն կստանա մրցակից-հարևանների դեմ, հնազանդություն հայտնեց և նրանց հետ «դաշինք» կնքեց։ Այդ բարեկամական տերիտորիաներում փորթուգալացիները միջնաբերդներ են կառուցում, այնտեղ թնդանոթներ են դնում և կայազորներ տեղավորում։ Բայց «դաշնակիցները» հաճախ թշնամիներ եյին դառնում և միջնաբերդը պաշարվում եր։ Ալբուկերկեն անհրաժեշտ եր համարում ունենալ մի հենակետ, վորը լիներ փորթուգալացիների լիակատար տիրապետության տակ։ Նա գրավեց Մալաբարյան ափում գտնվող Գոա քաղաքը, կոտորեց

ու այրեց այնտեղի ամբողջ մահմեդական բնակչությանը և այն դարձրեց Հնդկաստանում փորթուգալական տիրապետության գըլխավոր հենարան։ Գոայի գրավումն ուժեղ տպավորություն թողեց։ Ռաջաններից շատերը, վորոնք առաջ դիմադրում եյին փորթուգալացիներին, հնազանդություն հայտնեցին։

Մալաբարյան ափի քաղաքներն եյապես համեմունքի առևտրի տրանզիտային կետեր եյին միայն։ Այդ համեմունքի միայն մի աննշան մասն եր աճում այնտեղ։ Այն վայրերը, վորտեղից դրանք բերվում եյին, գտնվում եյին հեռու արևելքում, Զոնդյան և Մոլուկկյան արշիպելագի կղզիներում, և նրանց գլխավոր շուկան Մալակկան եր։

Վտարվելով Մալաբարյան ափից, արաբական վաճառականները, մի կողմ թողնելով Հնդկաստանը, անմիջականորեն աշխուժ հարաբերություններ սկսեցին Մալակկայի հետ։ Բայց 1511 թվին Ալբուկերկեն գրավեց Մալակկան։ Տասը տարուց հետո (1521 թ.) Մոլուկկյան կղզիներում արդեն փորթուգալական ֆակտորիաներ կային։

Փորթուգալացիները Հնդկաստանում չեյին ձգտում խոշոր տերիտորիաներ գրավել։ Սովորաբար տեղական իշխանները մնում եյին իրենց տեղերում, և, գործելով նրանց միջոցով, փորթուգալացիներն առևտրական արտոնությունների կամ ամեն տեսակ հարկերի ու տուրքերի ուղղակի գանձման անվան տակ սիստեմատիկորեն կողոպտում եյին տեղական բնակչությանը։ Հնդկաստանի հետ կատարվող առևտուրը հայտարարվեց թագավորական մոնոպոլիա։ Մոնոպոլ ապրանքներն եյին պըղպեղը, մեխակը, դարչինը, իմբիրը, մշկընկույզը, մետաքսը, խեժը և մի շարք ուրիշ ապրանքներ։ Այդ ապրանքների մեծ մասը պետք ե հայթայթեյին տեղական իշխանները, պայմանագրում նախատեսված գնով, յերբեմն ել ձրի, վորպես հարկ։ Նրանք չեյին կարող այդ ապրանքները ծախել վոչ վոքի, բացի փորթուգալական կառավարությունից։ Թե այդ ինչ կայուն գներ եյին, յերևում ե թեկուզ նրանից, վոր XVI դարի կեսին, որինակ, Ցեյլոնի ռաջան պետք ե ձրի հայթայթեր 300 բահար (52800 կիլոգրամ) դարչին, իսկ մնացած ամբողջ քանակը նրանից գնվում եր չտեսնված եժան գնով, մոտավորապես 100 կիլոգրամը 3 ռ. 10 կ. վոսկով, իսկ Լիսաբոնում մեկ կվինտալ դարչինի գինը կազմում եր 70 միլրեյս (այսինքն 100 կիլոգրամը 750 ռուբ.)։ Բայց

«ազատ» շուկայում գնված ապրանքներն էլ ահռելի օգուտ էին տալիս, օրինակ պղպեղը—700—800%։

Հնդկաստանի հետ առևտուրը բավական սահմանափակ էր իր ծավալով։ Հսկայական գաղութային մարզից ամեն տարի արտահանում էին ոչ ավելի, քան 5—6 նավ համեմունք, ճիշտ է, այդ 2—3 անգամ ավելի էր այն ամենից, ինչ որ առաջ Վենետիկը հայթայթում էր Յեվրոպային։ Փորթուգալական կառավարությունը վախենում էր ապրանքների ավելցուկ առաջանալուց և գների անկումից։ Յեթե համեմունքն ավելի շատ էր լինում, քան հարկավոր էր Լիսաբոնի շուկային, ապա այն ոչընչացնում էին։

Փորթուգալացիք իրենց ձեռքը վերցրին Հնդկական օվկիանոսի ափերում գտնվող առանձին մարզերի միջև առևտրական բոլոր հարաբերությունները։ Այս առևտուրը ևս հսկայական օգուտ էր տալիս։ Ով իրավունք էր ստանում որևէ յերկու կետերի միջև միայն մի անգամ ճանապարհորդել, ուրիշի ապրանքները լոկ մի անգամ փոխադրելով ահագին փող էր վաստակում։

Փորթուգալական ազնվականությունը, Հնդկաստանում գրավելով վարչական բոլոր պաշտոնները, այդ յերկրից հսկայական յեկամուտներ էր ստանում,—բարձր ռոճիկ, կաշառք, յերբեմն էլ ուղղակի զավթում տեղական որևէ իշխանի գանձարանի։ Ազնվականները Հնդկաստանում շռայլ կյանք էին վարում։

1500 թվականին դեպի Հնդկաստան ձեռնարկված յերկրորդ էքսպեդիցիայի ժամանակ Կաբրալը պատահմամբ հայտնագործեց բրազիլիական ափը (ընդ որում Կաբրալը այն կղզու տեղ ընդունեց), և այս գրավեց Լիսաբոնի կառավարության ուշադրությունը։ «Կղզին» կարող էր հարմար կայան դառնալ Յեվրոպայի և Հնդկաստանի միջև յերթևեկող նավերի համար։

1501 թվի մայիսին յերեք նավ ուղարկվեց այդ «կղզին» հետազոտելու համար։ Իբրև աստղաբաշխ, նավախմբի հետ մեկնեց ֆլորենտացի Ամերիգո Վեսպուչչին, որը նոր էր վերադարձել Բրազիլիայի հյուսիսային ափերի յերկարությամբ իսպանական կառավարության կազմակերպած ճանապարհորդությունից (1499—1500 թ. թ.։ Հնարավոր է, որ Վեսպուչչին առաջինն էր հայտնագործել Բրազիլիան) և հայտնի էր լայնությունները ճիշտ որոշելու իր հմտությամբ։

Նավախումբը սպասվելիք կղզու փոխարեն հանդիպեց ափի յերկար գծին, որ ձգվում էր դեպի հարավ։ Նավախումբն ափի

յերկարությամբ գնում էր մի քանի ամիս և հասավ հարավային լայնության 32-րդ աստիճանին։ Այնուհետև նավերը բաց ծովում ընթացան դեպի հարավ, մինչև լայնության 52°։ Ամերիգո Վեսպուչչին իր բարեկամ Լորենցո Պյետրո Ֆրանչեսկո Մեդիչիին ուղղած նամակում վոգևորությամբ նկարագրեց այդ ճանապարհորդությունը և առաջարկեց իր հայտնագործած այդ նոր ցամաքը, վորը «բոլորովին անհայտ է յեղել հնագարյան մարդկանց», անվանել Նոր Աշխարհ։ Իր ճանապարհորդությունների մասին լայն չափով ռեկլամ արած Ամերիգոյի նամակը տպվեց լատիներեն ու գերմաներեն լեզուներով և մեծ չափով տարածվեց։ Գերմանացի տիեզերագիր Վալդզեմյուլլերը, իր «Տիեզերագրության ներածականում» հրատարակելով Վեսպուչչիի նամակը, առաջարկեց այդ նոր ցամաքն անվանել Ամերիգոյի անունով,— «Ամերիկա», ինչպես մինչև այժմ հայտնի աշխարհամասերը կոչված են կանացի անուններով (Ասիա, Աֆրիկա, Յեվրոպա)։

Առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը

Վեսպուչչին առաջինն արտահայտեց այն միտքը, թե հնարավոր է նոր հայտնագործված այդ ցամաքի հարավային կողմից անցնելով, հասնել մինչև Մոլուկկյան կղզիները։ Իսպանական կառավարությունը խիստ հետաքրքրվեց այդ նախագծով, մանավանդ յերբ Բալբոան, 1513 թվին անցնելով Պանամայի պարանոցը, առաջին անգամ տեսել էր «Հարավային Մեծ ծովը», այսինքն Խաղաղ ովկիանոսը։ Խաղաղ ովկիանոսի վրայով առաջին ճանապարհորդությունը, վորն առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունն էր, կատարեց Ֆերնանդ (Ֆերդինանդ) Մագալյանսը (Մագելլանը),— բոլոր ժամանակների մեծագույն ծովագնացներից մեկը։ .

Ֆերդինանդ Մագելլանը պատկանում էր փորթուգալական ազնվականությանը (ծնվել է մոտ 1470 թ.)։ Նա ըստ յերևույթին լավ գիտեր Հնդկական ովկիանոսը. Մագելլանն այնտեղի փորթուգալական գաղութներում անցկացրեց մի քանի տարի, ի միջի այլոց մասնակցեց դեպի Մալակկա ձեռնարկված էքսպեդիցիային, բայց ընդհարվեց Ալբուկերկեյի հետ։ Դեպի Մոլուկկյան կղզիները տանող արևմտյան ճանապարհը նրան իրագործելի յեր թվում, վորովհետև նա սխալ հաշիվների հիման վրա դրանք դետեղում էր մի փոքր դեպի արևելք, այսինքն նոր հայտնագործված ցամաքին ավելի մոտիկ, քան իրականում էր։

Փորթուգալացիներն իհարկե չեյին կարող համակրանքով վերաբերվել Մագելլանի պլանին, իսկ իսպանական կառավարու-

թյունը, վորի մոտ ծառայության անցավ Մագելլանը, խիստ հետաքրքրվեց այդ պլանով։ Փորթուգալացիները գործադրեցին բոլոր ջանքերը, վորպեսզի վիժեցնեն եքսպեդիցիան և Մագելլանին դարձյալ իրենց կողմը գրավեն, բայց այդ բոլորն ապարդյուն եր։

1519 թվի սեպտեմբերի 20-ին հինգ փոքր և հին նավերից և 253 հոգի անձնակազմից բաղկացած եսկադրան դուրս յեկավ Սան-Լուկարից։ Եսկադրան դանդաղ, տեղ-տեղ յերկար կանգ առնելով, ընթանում եր Հարավային Ամերիկայի ափերի յերկարությամբ։ Նեղուցից մի փոքր հեռավորության վրա նա կանգ առավ ձմեռելու։

1520 թվի հոկտեմբերի 21-ին եսկադրան մոտեցավ Նեղուցին, վորը հիմա կոչվում ե Մագելլանի անունով։ Նավերը յերեք շաբաթ լողում եյին մռայլ, բարձրաբերձ լեռների կողքից, վորոնք ծածկված եյին գահավիժող սառցադաշտերով, նեղ ֆիորդների ստորջրյա ժայռերի կողքից, կուպրի նման սև ջրի վրայով, մութ-կապարագույն,ամպամած յերկնքի տակ։

1520 թվի նոյեմբերի 28-ին Մագելլանը յերեք նավերով (մեկն ինքնագլուխ վերադարձել եր Իսպանիա, մյուսը խորտակվել) դուրս յեկավ ովկիանոս։ Այդ «Խաղաղ» (շարունակ հիանալի յեղանակ եր) կամ Մեծ ովկիանոսում նավագնացությունը շարունակվեց յերեք ամիս. քիչ մնաց, վոր անձնակազմը կոտորվեր սովից։

Մարտի կեսին նավերը մոտեցան Ֆիլիպպյան արշիպելագի կղզիներից մեկին։ 1521 թվի ապրիլի 27-ին Մագելլանն այստեղ սպանվեց բնիկների հետ ունեցած ընդհարման ժամանակ։ Նավախումբը, վոր հիմա բաղկացած եր ընդամենը յերկու նավից, դ՚Ելկանոյի ղեկավարությամբ հասավ Մոլուկկյան կղզիները և համեմունքների մեծ բեռ վերցրեց։ Ինն ամսվա խիստ ծանր ճանապարհորդությունից հետո դ՚Ելկանոյի նավերից միայն մեկը 1522 թ. սեպտեմբերի 6-ին հասավ Սան-Լուկար նավահանգիստը։ Անձնակազմի մեծ մասը կոտորվել եր—253 հոգուց միայն 18-ը հանդիսավոր յերդման գնացին Սեվիլիայի տաճարը՝ գոհաբանական մաղթանքի։

Ինչպես և պետք եր սպասել, փորթուգալացիները չափազանց թշնամաբար ընդունեցին իսպանական ծովագնացներին, վորոնք հասել եյին այն վայրերը, վոր անվիճելիորեն իրենցն եյին համարում։ Իսպանացիների փորձերը—փորթուգալացիների հետ համաձայնության գալ, թե ում պետք ե պատկանեն Մոլուկկյան կղզիները—վոչ մի արդյունք չտվին։ Եքսպերտների հանձնաժո-

գումը չէր կարող ճիշտ վորոշել կղզիների դիրքը. յերկարության նկատմամբ փորթուգալական և իսպանական հաշիվների տարբերությունը կազմում եր մոտ 46° (մոտ 4700 կիլոմետր), այսինքն ավելի, քան ամբողջ Միջերկրական ծովի յերկարությունը։

Առաջին շուրջերկրյա նավագնացությունը, վորը հաջողությամբ ավարտվեց, իրենից ներկայացնում եր ծովային բոլոր ձեռնարկումներից ամենադժվարը։ Այն կրկնվեց միայն կես դարից հետո։ Դեպի Մոլուկկի տանող «հարավ-արևմտյան» ճանապարհը գործնական նշանակություն չստացավ։

Մեքսիկայի յեվ Պերուի նվաճումը

Հիմնվելով Կարաիբյան ծովի կղզիներում, իսպանացիները վոսկի փնտռելու, յերբեմն էլ ստրուկներ վորսալու համար եքսպեդիցիաներ եյին ուղարկում Մեքսիկական ծոցը շրջապատող ցամաքային մարզերը և այստեղ առաջին անգամ ընդհարվեցին ամերիկական ցամաքի բնակչության հետ։

Մինչև յեվրոպացիների Ամերիկա գալը այնտեղի բնակչությունը բաղկացած եր թափառաշրջիկ, սակավ կուլտուրական ցեղերից, վորոնք ապրում եյին յերկու բևեռների միջև ձգված մայր ցամաքի հյուսիսում և հարավում, ու ավելի կուլտուրական ցեղերից, վորոնք գրավում եյին մայր ցամաքի կենտրոնական մասը—Մեքսիկան և Պերուն։

Այդ յերկու մարզերի գլխավոր ցեղերը—ացտեկները Մեքսիկայում և ինկերը Պերույում—պետություններ չեյին ներկայացնում այդ բառի յեվրոպական իմաստով։ Սակայն նրանց քաղաքական կազմակերպությունն արդեն ուներ պետականության վորոշ տարրեր, քանի վոր առկա եյին շահագործման և դասակարգային շերտավորման տարրերը։ Դրանք յեկվոր, ռազմասեր ցեղեր եյին, վորոնք գրավել եյին ամբողջ մարզեր և տեղական բնակչությանը ստիպում եյին իրենց հարկ վճարել։ Բայց իրենք նվաճողները դեռ շարունակում եյին ապրել հնամյա, տոհմականին մոտ կենցաղով և նոր եյին սկսում անցնել ստրկատիրական հասարակության աստիճանին։

Ացտեկների գլխավոր բնակավայրը գտնվում եր լճի մեջտեղի անառիկ կղզում։ Այստեղից նրանք վորոշ ժամկետներում փոքըր ջոկատներ եյին ուղարկում իրենց յենթակա ընդարձակ մարզի զանազան կողմերը՝ հարկ հավաքելու։ Վորպես հարկ, վերցնում եյին յեգիպտացորեն, թանկարժեք իրեր և, վերջապես, մարդիկ։ Գերիների մի մասը զոհաբերվում եր աստվածներին։ Աստ-

վածների խնամույքին մասնակցում եյին նաև ռազմիկ-ացտեկնե-րը։ Մարդակերությունը պահպանվում եր իբրև սրբազան ծես, վորը տիրողների համար պետք ե ապահովեր ուժն աշխարհում ու յերանությունը՝ հանդերձյալ կյանքում։ Յեթե ացտեկներին հարկ վճարող, կախում ունեցող ցեղերը դիմադրում եյին, ացտեկները հարձակվում եյին նրանց բնակավայրերի վրա, թալանում եյին նրանց, կոտորում բնակչությանն ու գերիներ վերցնում։ Հարկի շնորհիվ ացտեկների ձեռքում կուտակվում եյին զգալի հարստություններ, վորոնք բավական բարձր նյութական կուլտուրա եյին առաջացնում։ Ացտեկների տներում կային շատըրվաններ, վաննաներ, մարմարե մոզաիկա, արծաթե ու վոսկե գեղարվեստական ամաններ, կարված գորգեր։ Նրանք հագնում եյին բամբակե գույնզգույն գործվածքներ։ Մայրաքաղաքում հանդես եյին գալիս յերգիչները և թատերական տեսարաններ եյին կազմակերպվում։

Ինկերն էլ ավելի կուլտուրական ցեղ եյին։ Նրանց գլխավորում եյին թագավորն ու գերագույն քուրմը, վորին իսպանացիները համեմատում եյին պապի հետ։ Նվաճված ցեղերից ինկերը մշակելի հողի մի մասը գրավում եյին հոգուտ թագավորի, ինկերի կաստայի և քրմերի։ Կախում ունեցող բնակչությունը կատարում եր բոլոր աշխատանքները տերերի և սեփական հողում։ Փոխանակությունը կատարվում եր նատուրայով,—պարհակներով, ծառայություններով, արտադրանքներով։ Թանկագին մետաղները, վորպես փոխանակության միջոց, ինկերը չեյին գործածում։

Յենթակա գյուղերում շարունակում եր պահպանվել հին համայնական կառուցվածքը։ Հողը համարվում եր յուրաքանչյուր շրջանի գյուղացիական ամբողջ հասարակության սեփականություն։ Ամեն տարի վարելահողերը բաշխվում եյին տնտեսատերերի միջև։ Այն բաժինը, վոր ստանում եր յուրաքանչյուրը, չեր կարելի վոչ նվիրել, վոչ էլ կապալով տալ։ Ով խուսափում եր աշխատանքից և հեռանում, կորցնում եր հողաբաժին ունենալու իրավունքը։ Հողը մշակվում եր բրիչներով։ Ամերիկայի կենդանական աշխարհը մինչև յեվրոպացիների գալն ավելի աղքատ եր, քան Հին Աշխարհում։ Այնտեղ ձիեր չկային և այս պատճառով ընիկները չեյին գործածում վոչ լծասարք, վոչ սայլ, վոչ գութան։ Յեգիպտացորենի դաշտերը վոռոգվում եյին լեռներից բերված ջրով։ Լեռնային մարգագետիններում աճեցվում եր ուղտայծը, միակ ընտանի կենդանին, վոր ոգտագործվում եր ծանրու-

թյունները փոխադրելու համար և տալիս էր բուրդ ու միս, որով կերակրվում էր ինկերի մայրաքաղաքը, Կուսկոն։

Նվաճված բնակչությունն ուներ իր ավագները, հարյուրապետները, ցեղային առաջնորդները։ Սրանց վրա իշխում էին ինկերից նշանակված պետերը։ Նոր նվաճված յերկրներում ինկերը տեղավորում էին իրենց կայազորները և բերդեր էին կառուցում, հաղթվածներին ստիպում էին աշխատել։ Մայրաքաղաք Կուսկոյի և ինկերի իշխանության տակ գտնվող յերկրների միջև հաղորդակցությունը պահպանվում էր սուրհանդակների միջոցով և բեռնատար ուղտայծերի փոքրիկ քարավաններով։ Ինկերը չէին աշխատում։ Նրանք ծառայում էին զորքում և վարչությունում։ Ինկերին ծանոթ էին օրացույցի հաշվարկումների արվեստը, բժշկական մի քանի գիտելիքներ։ Յերիտասարդ ինկերը սովորում էին հատուկ դպրոցներում, ուր նրանք ուսումնասիրում էին յերկրի օրենքներն ու սովորությունները, նախնադարյան աստղաբաշխությունը և բժշկությունը։

Իսպանացիների նվաճողական էքսպեդիցիաներն ուղևորվեցին հենց այստեղ, դեպի այս մարզերը։

Այդ էքսպեդիցիաներին, որոնք ուղարկվեցին 1516—1518 թ. թ. Կուբայի նահանգապետի մասնակցությամբ, արևմտյան ուղղությամբ, հաջողվեց նավարկել Յուկատանի և Մեքսիկական ծոցի հարավային ու արևմտյան ափի կողքից և հարաբերությունների մեջ մտնել տեղական իշխանների հետ։ Այստեղ յեվրոպացիք հանդիպեցին մայա կոչված ցեղերի յուրահատուկ բարձր կուլտուրային։ Էքսպեդիցիան զանազան իրեր,—հուլունքներ, մկրատներ,—փոխանակեց ոսկու և մի քանի հազար ոսկու թանկագին քարերի հետ։ Բնիկներին հարց ու փորձ անելուց պարզվեց, որ արևմտյան կողմում գտնվում է ամենահարուստ մի յերկիր, որն առատ է թանկարժեք իրերով։ Այդ յերկիրը գրավելու համար կազմակերպվեց մի արշավախումբ, որի գլուխ նշանակվեց յերիտասարդ հիդալգո Ֆերնանդ (Ֆերդինանդ) Կորտեսը (ծնվել է 1485 թվին, Էստրամադուրում), Սալամանկայի համալսարանի նախկին ուսանողը, որ գրավվել էր Նոր Աշխարհի արկածների և ոսկու լեռների վերաբերյալ պատմվածքներով և ուսանողի գրիչն ու գիրքը փոխարինել կոնկիստադորի (նվաճողի) սրով ու թամբով։ Կորտեսը 1504 թվին ծառայում էր Հնդկաս-

տանի փոխարքա Ովանդոյի մոտ, իսկ 1511 թվին մասնակցել Կուբայի բռնագրավմանը և այնտեղ հող էր ստացել։

Եքսպեդիցիայի համար ուղարկված էր 11 նավ։ Կորտեսը ծախսերի մի մասը կատարեց իր միջոցներից։ Նավախումբը Կուբայի ափերից մեկնեց 1519 թվի փետրվարի 18-ին։ Կուբայի նահանգապետ Վելասկեսը վերջին րոպեյին վորոշեց Կորտեսին զրկել եքսպեդիցիայի հրամանատարությունից, բայց Կորտեսը չհնազանդվեց և ինքնակամ կերպով ճանապարհ ընկավ։ Յերկու ամսից հետո իսպանացիներն ափ դուրս յեկան այժմյան Վերա Կրուս քաղաքի տեղում։

Զինված ուժը, վորի հետ Կորտեսը մեկնեց Մեքսիկան նվաճելու, բաղկացած էր ընդամենը 400 իսպանական զինվորներից, —վորոնցից 13-ը հրացանաձիգներ, 32-ը աղեղնաձիգներ, 16-ը ձիավորներ,—և 200 հնդիկներից։ Ջոկատն ուներ 10 ծանր և 3 թեթև դաշտային թնդանոթ։ Նրանք հույս ունեյին այդպիսի չնչին ուժերով իրենց յենթարկել մի մեծ յերկիր։ Բայց ացտեկների ընդարձակ տերությունը շատ թույլ էր. սակավաթիվ կառավարող խմբակը հազիվ-հազ զսպում էր նվաճված ցեղերին, վորոնք պատրաստ եյին ապստամբելու և անջատվելու, ուստի Կորտեսի ձեռնարկումը լիակատար հաջողությամբ պսակվեց։ Մեքսիկան արդարացրեց իսպանացիների հույսերը, իսպանացիներ, վորոնք ագահությամբ ազնիվ մետաղներ եյին վորոնում։ Բացի կուտակված հսկայական պաշարներից, Մեքսիկան հարուստ էր վոսկու, գլխավորապես արծաթի հանքերով, վորոնք հայտնագործվել եյին արդեն 20-ական թվականներին։

Պերուն նվաճվեց ավանտյուրիստների նույնպիսի մի բանդայի կողմից, ինչպես և Մեքսիկան։ Հարավում գտնվող վոսկով առատ յերկրի մասին առաջին տեղեկություններն իսպանացիք ստացան այն ժամանակ, յերբ բռնագրավում եյին Պանամայի պարանոցի մարզերը։ Այդ յերկիրը հասնելու առաջին փորձերն արավ Բալբոան, վորը հայտնագործել էր Մեծ ովկիանոսը (1513 թ.)։ Ձեռնարկումը գլուխ բերեց նրա ուղեկիցներից մեկը, Ֆրանցիսկո Պիզարրոն (1531—1535 թ. թ.)։ Այստեղ, Պոտոզիում (Բոլիվիա) 1545 թվին արծաթի ամենահարուստ հանքեր հայտաբերվեցին։

Գաղութային շահագործման ձևերը

«Վոսկու և արծաթի հանքերի հայտնագործումն Ամերիկայում, տեղական բնակչության վոչնչացումը, ստրկացումն ու կենդանի թաղումը հանքարաններում, Արևելյան Հնդկաստանի նվաճման և կողոպտման առաջին քայլերը, Աֆրիկայի վերածումը սևամորթներ վորսալու արգելադաշտի—այսպես էր արտադրության կապիտալիստական ժամանակաշրջանի արշալույսը: Այդ իդիլլիական պրոցեսները կազմում են նախասկզբնական կուտակման գլխավոր մոմենտները»[1]:

Մարքսի այս կարճ և գայրացկոտ բնութագիրը ցայտուն կերպով պատկերավորում է իսպանական կոնկիստադորների գործունեությունը:

Իսպանական նվաճողներն իրենց հետ Ամերիկա տարան շահագործման ֆեոդալական ձևերը: Առաջին իսկ տարիներում, բռնագրավելով Եսպանյոլան, իսպանացիք ծանր պարհակներ դրին կղզու՝ 14 տարեկանից վեր ամբողջ բնակչության վրա: Յուրաքանչյուր հնդիկ տարեկան չորս անգամ պետք է հանձներ կամ վոսկու մի փոքրիկ ձուլվածք,* կամ բամբակե գործվածքի մի կտոր: Այդ հարկը վճարելուց հետո հնդիկի պարանոցից կախում էյին պղնձե մի թիթեղիկ, վորպես անդորրագիր: Ով չէր կարող հարկ վճարել, պետք է աշխատեր դրա փոխարեն, մշակեր իսպանացիների դաշտերը և խնամեր անասուններին: Բայց շատ շուտով իսպանացիք՝ անկախ հարկ վճարելուց, անձնական ծառայություն պահանջեցին ամբողջ գյուղերից: 1499 թվին կղզին բաժանվեց հողամասերի և բաժինների (ռեպարտիմիենտո): Մեկ կամ մի քանի գյուղեր կազմում էյին վորևե իսպանացու կամ իսպանացիների ընկերության այդպիսի «բաժինը», վորի բնակչությունը պետք է հողը մշակեր նոր տիրոջ համար: Կացիկի—տեղացի ավագի վրա պարտավորություն էր դրվում մարդկանց կանոնավոր կերպով հանել աշխատանքի: Հողերի նույնպիսի բաժանումներ, նրանցում ապրող տեղական բնակչության ստրկացումով հանդերձ, կատարվում էյին նաև մյուս կղզիներում: Դրանք առանձնապես լայն չափերով տեղի էյին ունենում Մեքսիկայում և Պերույում: Առյուծի բաժինը վերցրին իհարկե էքսպեդիցիաների առաջին մասնակիցները — կոնկիստադորները: Այսպես, Կորտեսի ընտանիքն իբրև մարկիզատ ստացավ մի ամբողջ հովիտ, 17 հազար բնակչությամբ, վորը պետք է 60 հազար

[1]) Маркс и Энгельс, Соч. т. XVII, էջ 821.

դուկատ հարկ վճարեր Կորտեսին։ Ասում են, որ Պերուն նվաճողի յեղբայր Գոնզալո Պիզարրոյի կալվածքներն ավելի շատ յեկամուտ եյին բերում, քան իսպանական ամենահարուստ յեպիսկոպոսությունը—Տոլեդոն։ Վատթարագույն եր այն ընիկների դրությունը, վորոնք ստիպված եյին աշխատել վոսկու և արծաթի հանքերում։ Այդ աշխատանքը կառուցված եր կոռի (միտա) պլանով և արագությամբ հյուծում եր նրանց։ Յուրաքանչյուր հանքարանի մուտքում ընկած եյին լինում հարյուրավոր դիակներ և վարակում եյին օդը։ Բազեների յերամներն իջնում եյին այդ դիակների վրա, այնպես վոր, ինչպես ասում են՝ «կարծես յերկիրը ծածկված եր լինում սև քողով»։

Հաճախ տեղական բնակչությունը ճորտացվում եր քրիստոնյաներ դարձնելու պատրվակով։ Այդ այսպես կոչված ենկոմիենդան եր։ Կրոնական ասպետական որդենների պրակտիկայում կար մի սովորություն, վորի համաձայն վանական-մոնթերի մի խումբ ուսուցման և դաստիարակության համար հանձնվում եր հատուկ դաստիարակի ղեկավարության և տնօրինության (ենկոմիենդա)։ Այդ նույն կարգերը կիրառեցին նաև քրիստոնյաներ դարձվող հնդիկների նկատմամբ։ Սրանց տասնյակներով ու հարյուրներով հանձնում եյին իսպանական գաղութարարների «տնօրինության», վորոնց օգտին նրանք պետք ե մի շարք պարտավորություններ կատարեյին։

Անտիլյան կղզիներում իսպանացիների յերևան գալու առաջին իսկ տարիներից փորձեր արվեցին Նոր Աշխարհը դարձնել ստրուկների շուկա, ինչպես աֆրիկականն եր. և վոչ այլ վոք, քան Կոլումբոսն եր, վոր իսպանական կառավարության աչքում Նոր հայտնագործված յերկրների արժեքավորությունը մի կերպ բարձրացնելու համար առաջարկել եր ընիկների ստրկացման պլանը։

Բայց Ֆերդինանդը և Իզաբելլան հրաժարվեցին այդ պլանից և արգելեցին իրենց նոր, կարմրամորթ հպատակներին ստրուկներ դարձնելը, վորը, սակայն, չեր խանգարում իսպանացիներին գրավել հնդիկներ վորսալով և սրանց ստրուկներ դարձնելով, պատրվակ բռնելով այն, թե նրանք մարդակերներ են։

Բնակչությունը մասսաներով կոտորվում եր ուժից վեր աշխատանքից և դաժան վարմունքից (առհասարակ, հնդիկներն ավելի քիչ դիմացկուն եյին, քան աֆրիկական նեգրերը)։ Ի պա-

տաժան հարկադրական աշխատանքի՝ բնակչությունն ապըստամբություններ էր բարձրացնում, վորոնք սովորաբար վերջանում եյին բնիկների ընդհանուր կոտորածով։ Ականատեսներից մեկը, Լաս-Կազաս յեպիսկոպոսը մասսայական ինքնասպանությունների ցնցող տեսարաններ է նկարագրել։ Բնիկների մահացումը կեղեքումից և ուժից վեր աշխատանքից՝ ընթանում էր չափազանց արագ։ 1558 թվին Յամայկայում չքացան բոլոր հնդիկները։ Եսպանյոլայում 1508 թվին կային 60 հազար բնիկներ, իսկ 1548 թվին նրանցից մնացել էր ընդամենը 500 հոգի։ Այդ ժամանակ Կուբայում չքացել էր տեղական ամբողջ բնակչությունը։

Վոչ իսպանական կառավարությունը, վոչ կաթոլիկ յեկեղեցին շահագրգռված չէյին բնիկների այդ մասսայական կոտորածով։ Յեկեղեցին հույս ուներ զգալիորեն ավելացնել իր հոտը, հետևաբար ուժեղացնել իր ազդեցությունը գաղութներում և ավելացնել յեկամուտները։ Իսկ կառավարությունը բնիկների մեջ տեսնում էր վորոշ հակակշիռ իսպանական գաղութարարների, վորոնք ավելորդ անկախություն եյին ցուցաբերում մետրոպոլիայի նկատմամբ։ 1537 թվին պապը հրատարակեց մի կոնդակ, վորն արգելում էր հնդիկների հետագա ստրկացումը, իսկ 1542 թվին հրատարակվեց Կարլոս V-ի հրամանագիրը ստրուկների ազատագրման մասին։ Քիչ մնաց, վոր այս հրամանագիրը բնիկների ապստամբություններ և գաղութների անջատում առաջացներ։

Աշխատող ձեռների պակասությունը լրացնելու համար սկսեցին Աֆրիկայից նեգրեր բերել։ Սևամորթ ստրուկներից, վորոնք կտրվում եյին հայրենի հողից, կարելի յեր շահագործմանն ավելի քիչ դիմադրություն սպասել, քան տեղացիներից, վորոնք կապված եյին միմյանց հետ։

Նեգր-ստրուկներին բերել սկսեցին 1501 թվից։ 1520 թվին Սան-Դոմինգո կղզում և Պորտորիկոյում նեգրերն այնքան բազմաթիվ եյին, վոր յեվրոպական գաղութարարները վախենում եյին նրանց ապստամբությունից։ 1518 թվին կնքվեց առաջին պայմանագիրը (ասիենտո) նեգրերի ներմուծման մասին։

Աշխարհագրական մեծ գյուտերի հետևանքները

Աշխարհագրական մեծ գյուտերը խոր փոփոխություններ առաջացրին Արևմտյան Յեվրոպայի տնտեսական կյանքում։ Չափազանց ընդլայնվեցին Յեվրոպայի հարաբերությունները արտայեվրոպական աշխարհի հետ,—XVI դարում առկա եյին

այդ զարգացման միայն սկզբնական ստադիաները։ Այդ հարաբերությունները ընթացան նոր ուղիներով։ Միջերկրական ծովը կորցրեց իր նշանակությունը, իսկ դրա հետ միասին անկման հասան նրան կից՝ հարավային Եվրոպայի մարզերը։

Միջերկրական ծովի առևտրի անկումը

Այս հանգամանքը ծանր հարված հասցրեց Միջերկրական ծովին կից յերկրների տնտեսության, իտալական քաղաքներին և առաջին հերթին Վենետիկին։

Իհարկե չի կարելի ասել, վոր Վենետիկը մի անգամից բոլորովին կորցրեց իր առևտրական նշանակությունը։ Գրեթե ամբողջ XVI դարի ընթացքում նա շարունակում է Արևմտյան Յեվրոպային մատակարարել թե իր արդյունաբերության արտադրանքը և թե անդրծովյան ապրանքներ, բայց սրանք արդեն Հարավային և Արևելյան Ասիայի արտադրությունը չեյին, այլ գլխավորապես Մերձավոր Արևելքի ապրանքներն եյին։

Առևտրական ուղիների անցումը դեպի Արևմուտք։ Նիդերլանդների տնտեսական վերելքը

Այն պայմանները, վորոնք մեցրին յեվրոպական առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը,—Վենետիկը,—աշխուժացրին յեվրոպական փոխանակության հյուսիս-արևմտյան հանգույցը—Նիդերլանդները։ Նիդերլանդյան առյունի համար նպաստավոր բոլոր այլ հանգամանքներին հիմա ավելացավ նաև նրա բացառիկ շահավետ դիրքը անդրծովյան արտայեվրոպական առևտրի նկատմամբ։ Այնտեղ, Նիդերլանդներում սկսեցին իրար հանդիպել համաշխարհային առևտրի բոլոր ուղիները, և այդ չնայելով այն հանգամանքին, վոր նոր ուղիների հայտնագործումը պետք է առևտրական խոշոր կենտրոններ ստեղծեր այնտեղ, ուր սկըսվում եյին այդ ուղիները, այսինքն Լիսաբոնում և Սեվիլիայում։ Այս քաղաքների նշանակությունն իսկապես վոր աճեց։ Լիսաբոնում եքսպեդիցիաներ եյին կազմակերպվում դեպի Հնդկաստան։ Այստեղ եյին գալիս ասիական և աֆրիկական ապրանքների բեռները, այստեղ կենտրոնացված եր փորթուգալական գաղութների վարչությունը։ Սեվիլիա յեր գալիս ամերիկական վոսկին ու արծաթը, նրա միջոցով եյին տեղի ունենում հարաբերությունները իսպանական գաղութների հետ, այնտեղ եր գտնվում հռչակավոր «առևտրական պալատը»։

Անտվերպեն

Բայց համաշխարհային առևտրի կենտրոնն այնուամենայնիվ յեղավ վոչ թե Պիրենեյան թերակղզում, այլ Նիդերլանդներում։ Ճիշտ է, այդպիսի կենտրոն

դարձավ վոչ թե հնամյա Բրյուգգեն, այլ ավելի նոր Անտվերպենը, բայց առևտրական հանգույցի այդ տեղափոխությունը Բրյուգգեյից Անտվերպեն՝ առաջացել եր զուտ տեղական պայմաններից և հանգամանքներից, վորոնց հետ մենք կծանոթանանք, ուսումնասիրելով Նիդերլանդների պատմությունը։ Բրյուգգեյի անկումն ու Անտվերպենի վերելքը սկսվել եյին դեռ մինչև ծովային նոր ուղիների հայտնագործումը։

Անդրծովյան համեմունքների հոսանքն Անտվերպենը դարձրեց համաշխարհային առևտրական և դրամական կենտրոն։ Զարմանալու վոչինչ չկար, վոր փորթուգալացիները համեմունքների բեռներն ուղարկում եյին Անտվերպեն։ Փորթուգալիայի և Ֆլանդրիայի միջև դեռ XIV դարից գոյություն ունեյին առևտրական աշխույժ կապեր և փորթուգալական առևտրական ընկերությունները իրենց անդրծովյան ապրանքների մեծ մասը սովորաբար վաճառում եյին Նիդերլանդներում։ Համեմունքների առաջին բեռը Փորթուգալիայից Անտվերպեն հասավ 1501 թվին և մեծ ցնծությամբ ընդունվեց Անտվերպենի բնակչության կողմից։ Փորթուգալական թագավորը համեմունքների առևտուրը հայտարարեց իր մոնոպոլիան, բայց նա առաջին իսկ տարիներից սկսեց այդ իրավունքը ծախել վաճառականների ընկերություններին։ Սկզբում համեմունքների մոնոպոլիան պատկանում եր իտալական մի ընկերության, վորը գտնվում եր Անտվերպենում, մի փոքր ավելի ուշ գործին միջամտեցին հարավ-գերմանական վաճառականներ Ֆուգգերներն ու Վելզերները. նրանք գաղութային ապրանքները փոխանակում եյին պղնձի և պղնձե ապրանքների հետ։ 1525 թվից համեմունքների մոնոպոլիան պատկանում եր մարաններին (մկրտված հրեաներին)։ Ընկերության անդամների մի մասը գտնվում եր Լիսաբոնում, մի մասն ել Անտվերպենում։ Բայց ժամանակի ընթացքում համեմունքների առևտուրը դադարեց լինել Անտվերպենի առևտրական գործարքների կարևորագույն ճյուղը։ Իտալացի Գվիչչարդինին, վոր XVI դարի կեսին կազմել եր Անտվերպենի առևտրի մանրամասն և ճիշտ նկարագիրը, գտնում եր, վոր XVI դարի 60-ական թվականներին Փորթուգալիայից Անտվերպեն եր ներմուծվել ընդամենը 1 միլիոն դուկատի [1] համեմունքներ, մինչդեռ անգլիական մահուդ և այլ բրդյա գործվածքներ ներմուծվել են 5 միլիոն և իտալական մետաքսյա գործվածքներ և վոսկե ու արծաթե դիպակ—3 միլիոն դուկատի։ Անտվերպեն ներմուծված

[1] Դուկատը—մոտ 5 ռուբ. վոսկով։

բոլոր ապրանքները Գվիչչարդինին գնահատում էր 16 միլիոն դուկատ, մինչդեռ Վենետիկի ամբողջ արտահանությունը նրա բարձրագույն բարգավաճման ժամանակներում գնահատվում է 10 միլիոն դուկատ։ Անտվերպենը գլխավոր պահեստավայր էր անգլիական մահուդի համար, Անտվերպեն էին ներմուծվում գերմանական ապրանքներ, ի միջի այլոց շատ մետաղ,— անագ, պղինձ, յերկաթ։ Անտվերպենը դեպի իրեն էր քաշում Բրաբանտի և Ֆլանդրիայի արդյունաբերական ընդարձակ ռայոնի արտադրությունը, իսկ այդ ռայոնը պատրաստում էր բրդյա թեթև գործվածքներ և կտավ։ Անտվերպենի վաճառականները և Շեց բանկիրները հանդիսանում էին մեծագնորդներ, վորոնց համար Հռենոսի ստորին հոսանքի ռայոնում աշխատում էին հարյուրավոր տնայնագործներ, վորոնք արույրից ամեն տեսակ ապրանքներ էին պատրաստում։ Հետաքրքիր է, վոր մեծ քանակությամբ այդպիսի ապրանքներ, ի միջի այլոց հարյուրավոր ցենտներներով մատանիներ նեգրերի ձեռքերն ու վոտները զարդարելու համար, Անտվերպենի վրայով ուղարկվում էին Աֆրիկայում գտնվող փորթուգալական գաղութները։

Քաղաքն ինտերնացիոնալ բնույթ էր կրում։ Այնտեղ ապրում էին բազմաթիվ իսպանացիներ, փորթուգալացիներ, իտալացիներ, գերմանացիներ։ Նրանք բաժանվում էին առանձին «ազգերի», ունեյին իրենց կազմակերպությունները՝ հյուպատոսների գլխավորությամբ։ Անտվերպենի մեծածախս խոշոր առևտուրը գտնվում էր ոտարերկրացիների ձեռքում։ Տեղական բնակչությունը մեծ յեկամուտներ էր ստանում շենքերը, պահեստներն ու խանութները վարձով տալով։ Նա զբաղվում էր գլխավորապես միջնորդությամբ և կոմիսիոն գործարքներով։ Ոտարերկրյա կառավարությունները այստեղ պահում էին իրենց ֆակտորներին—ֆինանսական ներկայացուցիչներին։ Անտվերպենը դարձավ վոչ միայն ապրանքների խոշորագույն շուկան աշխարհում, այլև միջազգային խոշորագույն դրամական կենտրոնը։ Դրա հետ միասին այնտեղ ստեղծվեցին առևտրի ու ֆինանսական գործարքների նոր կազմակերպությունները,—ապրանքային և ֆոնդային բորսաները։

Բորսան Անտվերպենում

Արդեն Բրյուգգեյում իտալական վաճառականները գործարքներ կնքելու համար ամեն որ հավաքվում էին այն հրապարակում, վորի շուրջը գտնվում էին նրանց առևտրական տները (ժողովարան-

ները) և «Վան-դեր-Բուրսեյի տոհմի մեծ և հնամյա տունը», վորի վրա փայլում եր զինանշանը, իսկ դրա վրա նկարված եր յերեք պարկ («բուրս»)։ Այստեղից էլ ժողովի տեղը սկսեց կոչվել բուրսա (բորսա)։ Բայց այնտեղ կնքվում եյին միայն դրամական գործարքներ, մուրհակային գործառնություններ եյին կատարվում։ Նույնպիսի կարգ սահմանվել եր նաև Անտվերպենում։ 1460 թվին վաճառականների ժողովարանի համար քաղաքը տեղ է հատկացնում առևտրական թաղի հենց կենտրոնում և հիմա այստեղ են գալիս վոչ միայն իտալացիները, այլ Անտվերպենում ապրող բոլոր ոտարերկրյա վաճառականները։ Միայն անգլիացիներն առանձին եյին հավաքվում։ 1531 թվին կառուցվում է հոյակապ մի շենք, ներքին մեծ բակով։ Մուտքի դարպասի վերևվում կար հետևյալ մակագրությունը. «Հոգուտ բոլոր լեզուների ու յերկրների վաճառականների»։

Անտվերպենի բորսայի գլխավոր նորությունն այն եր, վոր այնտեղ գործարքներ եյին կատարվում վոչ միայն մուրհակներով, այլև ապրանքներով և վերջապես՝ թագավորների, իշխանների ու քաղաքների այն նամակներով, վորոնք վերաբերում եյին փոխառություններին։ Անտվերպեն յեկած ապրանքները հիմա այլ կերպ եյին վաճառվում, քան առաջվա տոնավաճառներում։ Բանի վոր ապրանքը միատեսակ է, գնորդը դիտում է վոչ թե ամբողջ ապրանքը, այլ միայն դրա նմուշները։ Գործարքները կատարվում են բորսայում (ապրանքային բորսա)։ Անտվերպենում ծագում է նաև առաջին ֆոնդային բորսան, այսինքն այնպիսին, ուր գործարքներ են կատարվում պետական արժեթղթերով։ Անտվերպենի առևտրական խոշոր շրջանառություններն այնտեղ մեծ կապիտալներ եյին գրավում։ Այնտեղ ավելի հեշտ եր փոխառինաբար ստանալ մեծ գումար, ու յեվրոպական թագավորների, պրովինցիաների ու քաղաքների մեծ մասը սկսում է փոխառություններ կնքել Անտվերպենում։ Բաց են թողնվում այդ փոխառությունների տոմսեր, վորոնք ազատ կերպով ձեռքից ձեռք են անցնում։ Ամենից շատ ձեռքից ձեռք եյին անցնում Նիդերլանդական կառավարության, այսինքն վերջին հաշվով իսպանական թագավորի զանազան փոխառությունների տոմսերը։ Իսպանական փոխառություններն ամենավատ համբավ ունեյին, վորովհետև իսպանական թագավորն անկանոն վճարող եր։ Նա տարեկան 15—20 %-ից պակաս փող ստանալ չեր կարող։ Անգլիական և փորթուգալական թագավորները հաճախ զիջում եյին Անտվերպենին։

Փոխանակության տեխնիկայի նոր ձևերը ստեղծում են նաև հարստացման նոր հնարավորություններ—սպեկուլյացիա։ Հաճախ լինում էին դեպքեր, երբ փողատեր մարդիկ գրազ էին գալիս այս կամ այն թագավորների կյանքի և մահվան, ուխտագնացությունների արդյունքների, վորևէ քաղաքի կամ մարզի գրավման, թագավորին տղա կամ աղջիկ ծնվելու, պապի ընտրության վրա և այլն։ Հիմա գրազի առարկա չի դառնում ապրանքի, փոխառության տոմսերի գինը, մուրհակային կուրսի տարբերությունը։ Գործարքը, զուտ ֆիկտիվ բնույթ էր կրում։ Այն կնքվում էր վոչ թե ապրանք կամ փոխառության տոմսեր ձեռք բերելու կամ վաճառելու համար, այլ բացառապես գների այս կամ այն կողմը տատանվելուց շահելու նպատակով։ Առանձնապես շատ և ռիսկով գաղութային ապրանքների, գլխավորապես պղպեղի սպեկուլյացիա էին անում։

Բայց գների կամ կուրսի տատանումները կախված էին ամենատարբեր հանգամանքներից։ Ազդում էին նաև քաղաքական կյանքի դեպքերը,—միջազգային հարաբերությունները, ռազմական կամպանիաների հետևանքը, դիվանագիտական բանակցությունների արդյունքները, պետական գործիչների ելույթները, իշխանների վեճերն ու հաշտությունները, ժողովրդական հուզումները, նաև հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը և տարերային աղետները։ Հարկավոր էր իրազեկ լինել այդ բոլոր դեպքերին, այն էլ այն դեպքերին, վորոնք կատարվում էին վոչ թե մի վորևէ անկյունում, այլ ամբողջ Եվրոպայում։ Առևտրական ֆիրմաների գործակալներն ամբողջ օրերով ագահությամբ ականջ էին դնում բոլոր լուրերին ու նորություններին և ամենամանրամասն զեկուցագրեր էին գրում իրենց տերերին։ Հաճախ վաճառականն ավելի իրազեկ էր լինում քաղաքական և այլ նորություններին, քան կառավարության պաշտոնական ներկայացուցիչները։ Այդ զեկուցագրերը ժամանակակից լրագրերի սաղմերն էին։

«Գների հեղափոխություն»

Աշխարհագրական հայտնագործությունների խոշորագույն հետևանքն և նաև այսպես կոչված «գների հեղափոխությունը», այսինքն բոլոր ապրանքների գների նշանակալից բարձրացումը XVI դարի ընթացքում։ Այդ երևույթի պատճառը թանկագին մետաղների հսկայական հոսանքն էր դեպի Եվրոպա, մետաղներ, վորոնք Ամերիկայում ձեռք էին բերվում ճորտերի և ստրուկ-

ների եժան աշխատանքով։ Գերմանացի տնտեսագետ Զետբերը դեռ անցյալ դարի 70-ական թվականների վերջին փորձում եր հաշվել ազնիվ մետաղների պաշարները Յեվրոպայում, XV դ. վերջում և նրանց աճը XVI դ. ընթացքում։ Ահա նրա թվերը.

Տարի-ներ	Վոսկի կգ.	Արծաթ կգ.	Վոսկի միլն. մարկա	Արծաթ միլն. մարկա	Ընդամենը միլն. մարկա
1493	550.000	7.000.000	1.064	1.260	2.324
1544	815,000	9.190.000	1.650	1.654	3.304
1600	1.192.000	21.400.000	2.631	3.852	6.483

Այսպիսով XVI դարի ընթացքում մետաղյա պաշարն աճել եր հետևյալ քանակով. արծաթը—206 %, վոսկին—117, իսկ ըստ արժեքի ընդամենը 180 %։ Զետբերի այս թվերն ընդունված են ընդհանուրի կողմից։ Սակայն դրանք հիմնված են վոչ թե ճիշտ հաշիվների, այլ մի շարք յենթադրական տվյալների վրա և գլխավորեն չափազանցված են։ Այսպես, Զետբերը գտնում եր, վոր XVI դ. ընթացքում Ամերիկայում հանված ե 14 հազար տոնն արծաթ, իսկ ամերիկական գիտնական Գամիլտոնը, կատարելով ամենամանրակրկիտ հաշվարկումներ՝ հիմնված գերազանց աղբյուրների՝ Սեվիլիայի առևտրական պալատի տարեկան հաշվետվությունների վրա,—իսկ Սեվիլիայում ստացվում եր Ամերիկայից բերվող ամբողջ մետաղը,—գտնում ե, վոր XVI դարում Յեվրոպա յե ներմուծվել 7439 տոնն արծաթ։ Բայց և այնպես, այն փաստը, վոր ազնիվ մետաղների հսկայական հոսանք ե յեղել դեպի Յեվրոպա,—հաստատվում ե վերստին ու ճշտորեն։

Ամերիկայից ստացվող վոչ ամբողջ վոսկին ու արծաթն եր մնում Յեվրոպայում։ Դրանցից քիչ չեր գնում Ասիա, արևելյան ապրանքներ գնելու համար, վորոնց հոսանքն ավելացել եր և վորոնց վճարը տալու համար յեվրոպական եքսպորտը չեր բավականանում։ Ըստ յերևույթին մեծ քանակով մետաղներ դուրս եյին մնում առևտրական շրջանառությունից, իբրև գանձեր—արծաթե և վոսկե կահույք—կուտակվելով իսպանական բարձր դասի, ազնվականության, խոշոր բանկիրների և վաճառականների, այլև կաթոլիկ յեկեղեցու ձեռքում։

Տնտեսության աճը, առևտրի և արտադրության ընդլայնումը, դրամական հարաբերությունների թափանցումը տնտեսա-

կան կյանքի նոր վոլորտները—նույնպես ուժեղացնում եյին ազնիվ մետաղների պահանջը, քանի վոր պահանջում եյին ավելացնել փոխանակության միջոցները—հնչուն դրամի քանակը։

XV դ. վերջը թանկ փողի, այսինքն ցածր գների ժամանակն եր, բայց արդեն XVI դարի 30-ական թվականներից սկսվում են բողոքներ թանկության դեմ և յուրաքանչյուր տասնամյակում այդ բողոքները հնչում են ավելի բարձր և ավելի համառ։ Ահա գների աճման մի քանի որինակներ։ Ֆրանսիայում, Փարիզի ռայոնում 60 տարվա ընթացքում հացի գինը բարձրացավ $2\,^1/_2$ անգամ։ 1520—1529 թ. թ. մեկ հեկտոլիտր հացը կարելի յեր ստանալ 50 գրամ արծաթով, իսկ 1580—1585 թ. թ.—125 գրամ արծաթով։

Բարձրացան հողի գները։ Փարիզի շրջակայքում 1523 թվին մեկ արպան (1/3—1/2 հեկտար) խաղողի այգու համար վճարում եյին 48 լիվր, իսկ 1556 թվին—120 լիվր։ Բարձրանում եյին բոլոր ապրանքների—գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերության արտադրանքի, հումքի և ֆաբրիկատների գները։ Գների այս աճն ամենից վաղ սկսվեց և ամենամեծ չափերի հասավ այն յերկրում, ուր ամենից առաջ հոսում եր Ամերիկայի ազնիվ մետաղը,—Իսպանիայում։ Գամիլտոնն արխիվային հսկայական նյութերի—մի քանի տասնյակ իսպանական վանքերի, հիվանդանոցների, համալսարանական ուսանողական հանրակացարանների հաշվետարության հիման վրա, կիրառելով գների շարժումը հաշվի առնելու ժամանակակից մեթոդները, փորձեց վորոշել գների միջին ինդեքսի տատանումները գրեթե 150 տարվա ընթացքում—1500 թ. մինչև 1640 թ.,—մի ամբողջ շարք ապրանքների գների բարձրացման հիման վրա։ Պարզվեց, վոր Իսպանիայում, XVI դ. առաջին կեսում միջին գինը կրկնապատկվել եր, իսկ դարի վերջում ելի յերկու անգամ բարձրացել։ Այսպիսով 1601 թվին գները 4,32 անգամ աճել եյին։ Գներն ամենից արագ աճում եյին Անդալուզիայում, ուր առաջին հերթին ստացվում եյին ամերիկական վոսկին ու արծաթը։ Իսպանիայի մյուս մարզերում, վորոնք վորոշ չափով կտրված եյին միմյանցից, գներն ավելի սակավ եյին աճում։ Յեվրոպայի մյուս յերկրներում նույնպես նկատվում է գների աճ, բայց վոչ այդչափ զգալի. Անգլիայում XVI դ. վերջում գները $2^1/_2$ անգամ բարձր եյին, քան XIV—XV դ. դ., Ֆրանսիայում XVI դ. վերջին քառորդում—$2\,^1/_4$ անգամ ավելի բարձր եյին, քան այդ դարի

սկզբում, բայց որոշ մարզերում այդ տարբերությունը շատ ավելի էր, օրինակ, Պուատույում փողի գնողական ուժը մի հարյուրամյակի ընթացքում ընկավ 3 $^{1}/_{2}$ անգամ. Գերմանիայի որոշ մարզերում, օրինակ, Էլզասում, գները կրկնապատկվեցին։

Գների աճն անհավասարաչափ էր տեղի ունենում ոչ միայն ըստ երկրների և առանձին մարզերի, այլև ժամանակի ընթացքում։ Նույնպես անհավասարաչափ էին փոխվում նաև առանձին ապրանքների գները, բայց, որպես ընդհանուր կանոն, կարելի է մատնանշել, որ գյուղատնտեսական մթերքների գները շատ ավելի բարձրացան, քան արդյունաբերական ապրանքների գները, իսկ առաջին անհրաժեշտության առարկաներն ավելի ուժեղ թափով թանկացան, քան պերճանքի առարկաները։

Ժամանակակիցները երկար ժամանակ չէին կարողանում ըմբռնել այդ երևույթի պատճառները։ Մատնանշում էին, թե թանկությունն առաջ է գալիս մոնոպոլիաներից, մեծագնորդների միավորություններից, մեծագնորդներ, որոնք չարաշահում էին ապրանքների թանկությունը. պարսավում էին հենց XVI դարում առաջացած առևտրական խոշոր ձեռնարկությունները։ Օրինակ, 1548 թվին կորտեսներում թանկության համար մեղադրում էին իտալական վաճառականներին, որոնք Իսպանիայում գնել էին ամբողջ բուրդը, մետաքսը, երկաթը, պողպատը և այլ ապրանքներ։ Իսպանիայում թանկության պատճառ էին համարում նաև ապրանքների ուժեղ արտահանությունը դեպի գաղութները, որոնք իբր թե իրենք ոչինչ չեն արտադրում, այլ ամեն ինչ կլանում են մետրոպոլիայից։ Արմադաներն ու եսկադրաները, որոնք գնում են ովկիանոսի այն կողմ, բեռնված են ամեն տեսակ ապրանքներով, իսկ Սևիլիայում գները ֆանտաստիկորեն բարձրացվում են։

Առաջինը ֆրանսիական պետական իրավունքի մասնագետ Ժան Բոդենն էր, որը բռնեց գների աճման պատճառներն ըմբռնելու իսկական ուղին և ներդաշնակորեն շարադրեց իր հայացքները։ 1568 թվին լույս տեսած իր բրոշյուրում,— «Ժան Բոդենի պատասխանը Մալեստրուայի պարադոքսներին՝ բոլոր առարկաների թանկացման և այդ ուղղելու միջոցների մասին»,—նա գրում էր. «Գլխավոր և համարյա միակ պատճառը, որը, սակայն, մինչև այժմ ոչ ոք չի շոշափել, հանդիսանում է ոսկու և արծաթի առատությունը...»։

«Գների հեղափոխության» պատճառի նկատմամբ Ժ. Բոդե-

նի արտահայտած հայացքն ընդհուպ մինչև վերջին ժամանակները այս կամ այն ձևով տիրապետող է յեղել բուրժուական տնտեսագետների և պատմաբանների մոտ, իբր այսպես կոչված «քանակային» կամ «քվանտիտատիվ» թեորիա: Դրա էությունն այն էր, որ թանկագին մետաղների զանգվածի՝ որպես շրջանառության միջոցի ավելացումը, փոխանակության պրոցեսում այդ զանգվածի հանդեպ յեղած ապրանքների քանակի պահպանմամբ հանդերձ՝ այն ժամանակ հանգեց թանկագին մետաղի ռեալ արժեքի իջեցման և ապրանքների արժեքի համապատասխան բարձրացման: Սակայն այդ բացատրությունն այդպիսի ձևով մենք չենք կարող ընդունել: Մարքսը վաղուց էր ուշադրություն դարձրել, որ ճիշտ չէ այդ տեսակետը, որը հաշվի չի առնում այն հանգամանքը, թե հենց թանկագին մետաղը ոչ միայն փոխանակության միջոց է, այլև ապրանք, որ ունի սեփական արժեք: «Այն փաստերի («գների հեղափոխության»—խմբ.) միակողմանի դիտումը, որոնք հետևեցին ոսկու և արծաթի նոր հանքերի հայտնագործման,—ասում է նա «Կապիտալում»,—XVII և մանավանդ XVIII դարում հանգեց այն անճիշտ հետևության, որ իբր թե ապրանքային գներն աճել են այն պատճառով, որ ոսկու և արծաթի ավելի շատ քանակություն է սկսել գործել որպես շրջանառության միջոց»[1]: Մարքսի բացատրության էությունն այն է, որ ճորտերի և ստրուկների էժան աշխատանքով չափազանց առատ աղբյուրներից ձեռք բերված թանկագին մետաղը, որ Ամերիկայից թափվում էր Յեվրոպա, ինքն ավելի էժան էր, այսինքն ավելի քիչ արժեք ուներ, քան այն թանկագին մետաղը, որ մինչ այդ գործում էր Յեվրոպայում որպես շրջանառության միջոց: Դրա հետևանքով, թեպետ և դանդաղ, բայց և այնպես տեղի ունեցավ բոլոր ապրանքների աստիճանական վերագնահատում և գների հավասարեցում թանկագին մետաղների այդ նոր, իջեցրած արժեքին համապատասխան, այսինքն ապրանքների գների բարձրացում: Թանկագին մետաղի ընդհանուր զանգվածը, որ մինչև ամերիկական արծաթի և ոսկու հոսանքը գործածության մեջ էր իբրև շրջանառության միջոց, էժանանում էր այն չափով, ինչ չափով թափանցում էր ամերիկական ոսկին ու արծաթը, և ամերիկական թանկագին մետաղի արժեքի իջեցման շնորհիվ բա-

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. XVII, էջ 132.

վական չէր հետզհետե աճող և ընդլայնվող փոխանակության համար։ Այստեղից ծագեց մի անհրաժեշտություն,— ավելացնել վոսկու և արծաթի ընդհանուր զանգվածը վորպես փոխանակության միջոց, հետևաբար նաև ուժեղ թափով վորոնել ու մշակել նոր հանքարաններ։

«Գների հեղափոխության» հետևանքները

«Ապրանքների գներն այնպես են բարձրացել,— կարդում ենք մենք այն զեկուցագրերից մեկում, վոր 1581 թվին ներկայացվել էյին իսպանական թագավորին,— վոր սենյորները, ազնվականները, քաղաքացիներն ու հոգևորականությունը չեն կարող ապրել իրենց յեկամուտներով»։ «Արտասովոր բարձր գների հետևանքով,— ասված է մի այլ փաստաթղթում, վոր 1600 թվին ներկայացվել էր կորտեսներին,— մերկությունն ու հիվանդությունները տարածվել են ամբողջ յերկրում. ավելացել է մուրացիկների, գողերի, պոռնիկ կանանց թիվը։ Հարուստները կարող են իրենց գոյությունը պահել միայն իրենց գույքը գրավ դնելով, իսկ աղքատները մեռնում են քաղցից»։

Ժամանակակիցները, վորոնք այդպիսի բողոքներ էյին հայտարարում, անկասկած սխալվում էյին։ Նրանց հիշատակած չարիքների պատճառները բղխում էյին վոչ միայն «գների հեղափոխությունից», այլև ամենից առաջ սոցիալական այն ցնցումներից, վորոնք XVI դարում կապված էյին «այսպես կոչված նախասկզբնական կուտակման» պրոցեսի հետ։ Վերջին հանգամանքը չպետք է մոռանալ, յերբ հարկավոր է լինում հաշվի առնել «գների հեղափոխության» սոցիալական հետևանքները, այսինքն՝, յերբ խոսքը վերաբերում է այն խնդրին, թե վո՞ր հասարակական դասակարգերը կամ նույնիսկ առանձին միջնախավերը շահեցին և վորո՞նք տուժեցին այդ հեղափոխությունից։

Անկասկած, վատացավ բոլոր նրանց դրությունը, ովքեր ապրում էյին աշխատավարձով։ Իսպանիայում ռեալ աշխատավարձը միջին հաշվով ընկավ 30 %-ով։ Բայց Յեվրոպայի մյուս յերկրներում այդ անկումն ավելի զգալի յեր։ Այսպես օրինակ, Էլզասի բանվորները—տաղձագործները, քարտաշները, խաղողաբույծները կամ սոսկ օրավարձով աշխատողները XV դարի վերջում ինչ-վոր 5—10 % ավելի էյին ստանում, քան հարյուրամյակի սկզբում, իսկ հացի համար պետք է ավելի վճարեյին 330 %-ով, մսի համար—85 %-ով, տնական կոշիկների համար—

50 %-ով։ Անգլիայում աշխատավարձը բարձրացել եր 30 %-ով, իսկ ապրանքների գինը — 155 %-ով։ Ֆրանսիայում աշխատավարձն աճել եր 24 %-ով, իսկ ապրանքների գները — 120 %-ով և այլն։ Յերբ տեղի յե ունենում առաջին անհրաժեշտության մթերքների և առարկաների գների բարձրացում, ռեալ աշխատավարձը սովորաբար ունենում ե ընկնելու տենդենցը, չնայելով նրա նոմինալ բարձրացմանը։ Ֆրանսիական պատմագիր տնտեսագետ Լևասսերը ցույց տվեց, վոր մթերքներով արտահայտված աշխատավարձն անշեղորեն իջնում եր յերկու հարյուրամյակների ընթացքում։ Բայց հենց այս վերջին հանգամանքը ցույց ե տալիս, վոր ռեալ աշխատավարձի այդ իջեցման բնագավառում ամեն ինչ չե, վոր կարելի յե բացատրել «գների հեղափոխության» ազդեցությամբ։ Ապրանքների գները կայունանում եյին արդեն XVII դարի սկզբին։ Հետևաբար ռեալ աշխատավարձի հետագա իջեցումը բացատրվում ե վոչ թե «գների հեղափոխությամբ», այլ աշխատավարձի վրա այնպիսի փաստերի ճնշումով, ինչպես՝ անմիջական արտադրողների զրկվելը արտադրության միջոցներից և կապիտալիզմի զարգացման կապակցությամբ աշխատավոր մասսաների շարունակվող պրոլետարիզացիան՝ այս յերևույթի բոլոր հետևանքներով հանդերձ — գործազրկություն, թափառաշրջիկություն, մուրացիկություն զարգացումով և այլն։

Կարելի յե վստահորեն պնդել, վոր իբրև հակադրություն այն խավերի դրության, վորոնք ապրում են իրենց աշխատանքային ուժը ծախելով, այդ աշխատանքային ուժը շահագործող դասակարգը շահեց «գների հեղափոխությունից», քանի վոր իջավ աշխատավարձը, վորը վորոշում ե արտադրանքի գնի բարձրությունը։

Ագրարային հարաբերությունների շրջանում շահեցին բոլոր նրանք, ովքեր գյուղատնտեսական մթերքներ եյին վաճառում, վորովհետև վերջինները, ինչպես մենք տեսանք, մյուս բոլոր ապրանքներից ավելի վաղ և ավելի շատ եյին թանկանում։ Հետևաբար, խոսելով անմիջական արտադրողների մասին, կարելի յե պնդել, վոր շահել եյին այն գյուղացիները, վորոնց տնտեսությունն արդեն ապրանքային բնույթ եր կրում, և շահեցին այն չափով ավելի, վոր չափով նրանց տնտեսությանը հատուկ եր այդ ապրանքային բնույթը։ Ընդհակառակը, գյուղացիական մանր տնտեսությունը, վորի տերը մասամբ ստիպված եր ծախել իր աշխատանքային ուժը, — տուժում եր, և այնքան շատ, վորքան

մանր եր նա և որքան նրա տերը հարկադրված եր լրացուցիչ աշխատելով, ծախել իր աշխատանքային ուժը։

Գյուղատնտեսության մթերքների գների աճումը բարձրացնում եր հողի գինը և դրա հետ միասին վարձակալության վճարը։ Վերջին հանգամանքն առանձնապես կարևոր ե ընդգծել։ XVI դարը կարճատև վարձակալության յերևան գալու և զարգանալու ժամանակն եր, ուստի և բոլոր նրանք, ովքեր վարձավճար եյին ստանում, այսինքն հողը վարձակալության եյին տալիս, անկասկած շահում եյին։ Հարցի ամբողջ դժվարությունն ել հենց նրանումն ե կայանում, թե ով իրավունք ուներ հողը վարձակալության տալ։ XVI դարի համար այդ հարցն այնքան ել պարզ չե, ինչպես կարող ե թվալ առաջին հայացքից։ Բոլոր ժամանակակիցների համար, որինակ, պարզ ե, որ ամեն մի սենյոր անպայման կարող եր տնորինել, ուրեմն նաև վարձակալության տալ դոմենիալ հողը, բայց շատ և շատ դեպքերում այդ իրավունքից զրկված եր տնտեսատերերի հողի նկատմամբ, մանավանդ յեթե տնտեսությունը ժառանգական եր։ Վերջին դեպքում հողը վարձակալության տալու իրավունքը պատկանում եր տնտեսատերգյուղացուն և ոչ թե սենյորին։ Իր տնտեսատերերի նկատմամբ սենյորը (կամ լորդն Անգլիայում) հանդես եր գալիս իբրև ֆեոդալական ռենտա ստացող, և որովհետև այդ ռենտան մեծ մասամբ հաստատված եր սովորությամբ և վաղուց վերածվել եր դրամական ձևի, ուստի փողի արժեքի իջեցումը ձեռնտու յեր գյուղացի-տնտեսատիրոջը և ձեռնտու չեր սենյորին։ Ընդհանրապես կարելի յե ասել, որ «գների հեղափոխությունը» օգտավետ յեղավ բուրժուական սեփականատիրոջը կամ այնպիսի հողատիրոջը, որի իրավունքները հողի նկատմամբ՝ մոտենում եյին բուրժուական սեփականատիրության, բայց «գների հեղափոխությունը» ձեռնտու չեր ֆեոդալական սեփականատիրոջը, որպես սոսկ ֆեոդալական ռենտա ստացողի, յեթե այդ ռենտան գոյություն ուներ դրամական ձևով։ Յեվ այնուամենայնիվ այդ բոլորը ճիշտ ե միայն ընդհանուր առմամբ։ Ինչպես մենք կտեսնենք, յուրաքանչյուր առանձին յերկրի կոնկրետ պայմաններն այստեղ եյական ուղղումներ եյին մտցնում։ Բայց «գների հեղափոխության» մեջ կարևոր հետևանքը բոլորովին անվիճելի յե. աշխատավարձի իջեցումը և կապիտալիստական յեկամուտի բարձրացումը, վարձակալության վճարի և ֆեոդալական ռենտայի միջև յեղած ճեղքվածքն անհրաժեշտաբար ուժեղացնում եյին հակա-

մարտությունը կապիտալիստի և բանվորի միջև, գյուղացի-տնտեսատիրոջ և սենյորի—հողի ֆեոդալական սեփականատիրոջ միջև։ Աշխատանքի և կապիտալի միջև սկսվում է պայքար աշխատավարձի համար, սենյորի՝ ֆեոդալական սեփականատիրոջ և գյուղացի-տնտեսատիրոջ միջև,—որը հասկացել էր հողի բուրժուական սեփականատիրության ամբողջ շահավետությունը,—սկսվում է պայքար այդ հողի համար, պայքար՝ ֆեոդալական սեփականությունն ազատ մասնավոր սեփականություն դարձնելու համար։ Այդ պայքարի ելքը կախված էր դասակարգային ուժերի կոնկրետ փոխհարաբերությունից և յուրաքանչյուր առանձին երկրում վճռվում էր տարբեր կերպով գրեթե երեք հարյուրամյակների ընթացքում, որոնք Եվրոպայի կապիտալիստական զարգացման սկզբնական ժամանակաշրջանը բաժանում են կապիտալիզմի ծագման և կապիտալիստական ֆորմացիայի հաղթանակի դարաշրջանից։

ԳԼՈՒԽ III

ԻՏԱԼԻԱՆ XVI — XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Իտալիայի տնտեսական անկման սկիզբը

Արդեն XV դարի վերջում սկսեց դրսևորվել իտալական արդյունաբերության անկումը։ Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում զարգանում ե սեփական արտադրությունը, և այդ յերկրների արտադրանքը սկսում ե մրցել իտալական արտադրանքի հետ։ Անգլիական մահուդը դուրս ե մղում — նույնիսկ Նեապոլում — Ֆլորենցիայի մահուդը, վոր առաջ հռչակավոր եր։ Իտալիայի եկոնոմիկան ել ավելի մեծ վնաս ե կրում այն բանի հետևանքով, վոր հայտնագործվում են Ամերիկան և Հնդկաստանի ծովային ճանապարհը և այդ կապակցությամբ առևտրական ուղիները փոխադրվում են Ատլանտյան օվկիանոս։ Վասկո դա Գամայի բարեհաջող վերադարձի առաջին լուրերը իսկական խուճապ առաջացրին Վենետիկում։ Վենետիկի վաճառական և բանկիր Պրիուլին, վորն այդ տարիներում գրված մի հետաքրքիր օրագիր ե թողել մեզ, Վենետիկի համար սարսափելի այդ նորության առթիվ գրում եր. «Յերբ այդ լուրը հասավ Վենետիկ, նա ամբողջ քաղաքում մեծ վրդովմունք առաջացրեց. բոլորն ապշեցին, վոր մեր ժամանակներում գտնված ե մի ճանապարհ, վորի մասին յերբեք, վոչ հնադարյան ժամանակներում, վոչ ել մեր նախնիների օրոք վոչ վոք չգիտեր ու չեր լսել։ Սենատորներն ել խոստովանեցին, վոր այդ լուրը վատթարագույնն ե այն ամենից, ինչ վոր յերբևե կարող եր ապրել Վենետիկյան հանրապետությունը, բացի ազատությունը կորցնելուց...»։

Պրիուլիի նախազգացումները չխաբեցին նրան։ Միայն իտալական քաղաքային հանրապետությունների առևտրական ու ֆինանսական հզորությունը չեր, վորին վերջ դրին աշխարհագրական մեծ գյուտերը։ Կարելի յե ասել, վոր այդ ժամանակից սկսվում ե վոչ միայն Իտալիայի, այլև Գերմանիայի անկումը։

Թե մեկ և թե մյուս երկրում վաղ զարգացած միջնադարյան առևտրի տրանզիտային սպեցիֆիկ բնույթը,—առևտրի, որ թույլ էր կապված կամ բոլորովին կապված չէր սեփական երկրների արտադրության և սպառման հետ,—չառաջացրեց ներքին շուկայի զարգացման նախադրյալներ, իսկ այս հանգամանքը իր հերթին չնպաստեց ազգային խոշոր պետությունների առաջանալուն։ Թե Գերմանիան և թե Իտալիան XV դարի վերջում շարունակում էին մնալ իբրև աշխարհագրական անուններ, մանր և մանրագույն պետությունների, իշխանությունների և քաղաք-հանրապետությունների միակցություն։ Այդ երկրների հետագա տնտեսական անկումը միայն երկար ժամանակով ամրապնդեց նրանց քաղաքական մասնատվածությունը, որ հսկայական բացասական ազդեցություն թողեց նրանց էկոնոմիկայի վրա։ Եվրոպայում խոշոր աբսոլյուտ միապետությունների ծագման զուգընթաց՝ բուրժուազիայի դասակարգը կոնսոլիդացիայի էր ենթարկվում նրանցից յուրաքանչյուրի սահմաններում և կազմավորվող այդ նոր հասարակական դասակարգը, որը բարձր եկամուտներ էր տալիս պետության, օտարերկրյա կոնկուրենցիայի դեմ մղված պայքարում իր շահերի էական պաշտպանություն էր գտնում պետական ուժեղ, կենտրոնացված ապարատի կողմից։ Այդ չէր կարող լինել ոչ Իտալիայում, ոչ Գերմանիայում։ Ընդհակառակը, հենց Իտալիայի կողքին այնպիսի ֆեոդալական-աբսոլյուտիստական խոշոր պետությունների ծագումը, ինչպիսին էին Իսպանիան և Ֆրանսիան,—Իտալիան դարձրին հարուստ ավար, որ գայթակղիչ էր հենց նրանով, որ նա ոչ մի պաշտպան չուներ։ Նրա փըրկությունը կայանում էր միայն նրանում, որ խոշոր գիշատիչները, հարձակվելով հեշտ վաստակի վրա, չէին ցանկանում այն զիջել միմյանց և փոխադարձ պայքարով թուլացնում էին իրենց։ Բայց այդ միայն ժամանակավորապես էր թեթևացնում դրությունը։

Այս երկու փաստերի—մի կողմից առևտրի ու արդյունաբերության անկման և մյուս կողմից ուժեղ հարևանների մշտական հարձակումների հետևանքով կարևոր փոփոխություններ են տեղի ունենում իտալական պետությունների սոցիալական ու քաղաքական կառուցվածքում։

Վտարվելով առևտրից և արդյունաբերությունից, իտալական բուրժուազիան սկսում է ավելի շատ զբաղվել ֆինանսական-վաշխառուական գործարքներով կամ հող է ձեռք բերում ու շահագործում այդ հողի վրա նստած մանր տնտեսատեր գյուղացուն։

Այսպես, Իտալիայի տնտեսական անկումն իտալական բուրժուազիայի համար արտահայտվեց յուրահատուկ վերադարձով դեպի գոյության ֆեոդալական ձևերը—դեպի վաշխառությունը և կիսաֆեոդալական վարձակալությունը՝ կիսարարությունը (mezzadria—կիսարարություն, վարձակալություն արտադրանքի մի մասի բնավճարով)։

Դեպի հետ, դեպի գոյության ավելի հետամնաց ձևերը նույնպիսի վերադարձ պետք է նշել նաև քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների դրության մեջ—Իտալիայի հյուսիսի և կենտրոնի առևտրական ու արդյունաբերական քաղաք-հանրապետությունների ռայոնում (Ջենովա, Միլան, Վենետիկ, Ֆլորենցիա)։ «Իտալիայում,—ասում է Մարքսը,—որտեղ ամենից առաջ զարգացավ կապիտալիստական արտադրությունը, ամենից առաջ էլ տարրալուծվեցին նաև ճորտատիրական հարաբերությունները։ Ճորտն ազատագրվում էր այստեղ, նախքան կկարողանար իր համար ապահովել հողի վաղեմության որևէ իրավունք։ Այս պատճառով ազատագրումը նրան անհապաղ դարձնում է օրենքից դուրս գտնվող պրոլետար, որը, բացի այդ, խկույն նոր տերեր է գտնում այն քաղաքներում, որոնք մնացել էին մեծ մասամբ դեռ հռոմեական էպոխայից։ Այն բանից հետո, երբ XV դարի վերջից համաշխարհային շուկայի հեղափոխությունը ոչնչացրեց Հյուսիսային Իտալիայի առևտրական գերակշռությունը, սկսվեց մի շարժում հակադարձ ուղղությամբ։ Բանվորները մասսաներով դուրս էին մղվում քաղաքներից դեպի գյուղ և այնտեղ սկիզբ դրին այգեգործության տիպարով կազմակերպված երկրագործական մանր կուլտուրայի չլսված բարգավաճման»[1]։ Հյուսիսային և միջին Իտալիայում, երբ արդեն աշխատավոր բնակչությունը քաղաքներից փախել էր գյուղ, ստեղծվում է գյուղացիական մանր վարձակալության զարհուրեցուցիչ սիստեմը՝ կիսարարությունը, որը Մարքսը համեմատում է իռլանդականի հետ, մի սիստեմ, որով պայմանավորվեց իտալական գյուղացիության բացառիկ աղքատությունը։ Այստեղից էլ առաջացավ ոչ միայն նախկին բանվորների, այլև ամբողջ գյուղացիության դրության ընդհանուր վատթարացումը։

Իտալիայի քաղաքական իրակարգը XVI դարում

Իտալիան XVI դարում, ինչպես և առաջ, միասնական պետություն չի յեղել։ Հյուսիսում և Ֆրանսիային սահմանակից մարզերում գտնվում էր Սավոյան մեծ հերցոգությունը, Միջերկրական ծովի

[1] Маркс и Энгельс, Соч. т. XVII, էջ 784, ծան. 189.

ափերում ամենախոշոր պետությունները վաճառականական յերկու հանրապետություններն եյին,—Ջենովան հյուսիս-արևմուտքում և Վենետիկը հյուսիս-արևելքում։ Լոմբարդական հարթավայրի կենտրոնում, Կենտրոնական Յեվրոպայից Իտալիա տանող առևտրական մեծ ճանապարհի վրա գտնվում եր առևտրական և արդյունաբերական հարուստ քաղաք Միլանը։ XV դարում Միլանն ուժեղ պետություն եր և ժամանակ առ ժամանակ նրան եր յենթարկվում նույնիսկ Ջենովան։

Կենտրոնական Իտալիայում ամենախոշոր պետություններն եյին Ֆլորենցիա հանրապետությունը և Պապական պետությունը։ Իտալիայի ամբողջ հարավը, նաև Սիցիլիա կղզին, գրավում եր Նեապոլի մեծ թագավորությունը, վորը 1435 թվից կառավարում եր արագոնյան դինաստիան։

Ինչպես ասացինք, Իտալիայի հյուսիսի և կենտրոնի առևտրական հարուստ հանրապետությունները զբաղվում եյին գլխավորապես տրանզիտային առևտրով կամ արտաքին շուկայի համար ապրանքներ արտադրելով։ Իտալական ժողովրդի մասսաները, չափազանց աղքատ լինելով, չեյին կարող գնել այդ հանրապետությունների վաճառած ապրանքները։ Այս պատճառով իտալական վաճառականներին քիչ եր հետաքրքրում ներքին շուկան և դրա հետ միասին նրանք քիչ եյին հետաքրքրվում նաև յերկրի քաղաքական միասնությամբ։ Առևտրական հանրապետությունները հանդես եյին գալիս վորպես մրցակիցներ օտար յերկրներում, ուր նրանք ապրանքների գնումներ ու վաճառք եյին կատարում, և այս պատճառով իրենց հայրենիքում միմյանց վրա նայում եյին ինչպես թշնամիների։ Նրանք ամեն կերպ աշխատում եյին թուլացնել մեկ մեկու և ամենից շատ վախենում եյին, թե չլինի՞ իրենցից մեկը մնացածներին յենթարկի իրեն։

Ահա թե ինչու Իտալիան մնում եր քաղաքականապես մասնատված։ Իտալիայի մանր պետություններում տարբեր եր նաև քաղաքական իրակարգը։ Վաճառականական հանրապետություններում (Վենետիկ, Ջենովա) իշխանությունը գտնվում եր սակավաթիվ, հարուստ ընտանիքների ձեռքում։

Մյուս քաղաք-հանրապետությունների մեծ մասում իշխանության տիրացան այսպես կոչված «տիրանները», վորոնք դուրս եյին գալիս տեղական հարուստ ընտանիքների կամ կոնդոտյերների միջավայրից (տես հատ. I, XXVI գլ.)։ Այսպես, Միլանում,

Վիսկոնտիի տիրող ընտանիքի անկումից հետո իշխանությունը տիրացան Սֆորցա կոնդոտյերները։ 1492 թվին Միլանի հերցոգ դարձավ փոքրահասակ Ջան Գելեացցո Սֆորցան, բայց փաստական իշխողը նրա քեռի Լոդովիկո Մորոն էր, որը վերջիվերջո կերավ իր քրոջորդու գլուխը, որպեսզի հաստատապես տիրանա իշխանությանը։ Ֆլորենցիայում իշխանությունը գտնվում էր հարուստ բանկիրներ Մեդիչիների ձեռքում։ Իտալիայի հենց կենտրոնում գտնվում էր Պապական պետությունը։ Պապերը միաժամանակ նաև աշխարհիկ իշխողներ էին, սովորական թագավորներից տարբերվում էին նրանով, որ չէին կարող ժառանգաբար հանձնել գահը։ Քանի որ պապական գահի համար սովորաբար ընտրվում էին ծերերը, սրանք արագ հաջորդում էին միմյանց և իրենց կառավարման կարճ ժամանակվա ընթացքում նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր ծուռումուռ ճանապարհներով հարստացնել իր ազգականներին (նեպոտիզմ)։ Այստեղ նրանք ոչնչից չէին քաշվում։ Իր անամոթությամբ և հանցագործություններով առանձնապես հռչակվեց Ալեքսանդր VI Բորջիա պապը, որը գահ էր նստել 1492 թվին։ Նրա որդի Կեսար Բորջիան ուզում էր օգտվել հոր իշխանությունից, որպեսզի դառնա ամբողջ Իտալիայի թագավոր։ Դրա համար նա ոչնչի առաջ կանգ չէր առնում. նրա գործադրած միջոցներն էին՝ խաբեբայությունը, ուխտազանցությունը, դաշույնը և թույնը։ Ալեքսանդր VI-ի հաջորդը յեղավ Հուլիոս II պապը (1503—1513 թ. թ.), որն իր կառավարման ժամանակն անցկացրեց պատերազմներում։ Յերբ նա մեռավ, մի պամֆլետում ծաղրանքով գրված էր, թե Պետրոս առաքյալը, որի մոտ ըստ կաթոլիկների հավատալիքների գտնըվում են դրախտի դռների բանալիները, չճանաչեց պապին, յերբ վերջինս դրախտի դռներին մոտեցել էր զենք ու զրահով, և չուզեց նրան թողնել դրախտ. զայրացած պապը պատրաստ էր թուր քաշել, որպեսզի իր համար ճանապարհ բանա դեպի հավիտենական յերանություն։ Հետեյալ պապը, Լեվոն X (1513—1521 թ. թ.) աշխարհիկ մարդ էր, սիրում էր պերճանք և ուրախ կյանք, զվարճանում էր խնջույքներով, դիմակահանդեսներով և թատրոնական ներկայացումներով։

Անընդհատ պայքար էր մղվում Իտալիայի մանր պետությունների, յուրաքանչյուր պետությունում յեղած առանձին խմբակների ու փառասերների միջև։ Կաշառքներն ու դավաճանությունը, բանդիտների օգնությամբ ծածուկ սպանությունները ու

թունավորումները դաժան թշնամիների դատաստանն անելու իտալական տիպիկ մեթոդներ։

Իտալական պատերազմները

Իտալական բուրժուազիայի հարստությունները արդեն վաղուց դեպի իրենց էին գրավում հարևանների ագահ հայացքները։ XV դարի վերջում այդ հարևանները, Ֆրանսիան և Իսպանիան դարձել էին ազնվականական մեծ և ուժեղ միապետություններ։ Այդ միապետությունների ներսում ֆեոդալական պատերազմներն ու կողոպուտները այլևս անհնար էին։ Հիմա ազնվականությունը ծառայում էր թագավորական մեծ բանակներում և իրեն գլխավորողից, թագավորից, պանծալի ու շահաբեր արշավանքներ էր պահանջում։

Իտալիայի վրա առաջինը հարձակվեցին ֆրանսիացիները։ Ֆրանսիան միավորող Լյուդովիկոս XI-ի որդի Կարլոս VIII-ը 1494 թվի աշնանը մեծ զորքով անցավ Ալպյան լեռները և գրավեց հյուսիսային ու միջին Իտալիան, անցավ Ֆլորենցիա և Հռոմ քաղաքների միջով ու նվաճեց Նեապոլը։ Իտալիայում ֆրանսիացիներին շատերը սկզբում գրկաբաց ընդունեցին։ Միլանի հերցոգ Լոդովիկո Մորոն հույս ուներ նրանց օգնությամբ ամրապնդել իր իշխանությունը և գրավել ամբողջ Իտալիան։ Պապը և Ֆլորենցիայի բանկիրները, որոնց անհանգստացնում էր Ֆերդինանդի չափից դուրս հաստատուն քաղաքականությունը Նեապոլում, նույնպես դեմ չէին նրան հակակշիռ ստեղծել հանձին ֆրանսիական թագավորի։ Բայց ֆրանսիացիք չարդարացրին այդ բոլոր սպասելիքները։

Սավոնարոլա

Կարլոս VIII-ի արշավանքի լուրը Ֆլորենցիայում առաջացրեց ժողովրդական ապստամբություն Մեդիչիների բռնակալության դեմ,—որոնք փախան քաղաքից։ Հանրապետությունը վերականգնվեց և այնտեղ հռչակ ստացավ հարստությունը և դատարկապորտությունն անխնայորեն մերկացնող, բոցաշունչ քարոզիչ, դոմինիկյան Սավոնարոլան, որի մեջ ժողովուրդը պատրաստ էր տեսնել իր մարգարեյին։ Սավոնարոլան Քրիստոսին անվանում էր հանրապետության գլուխ և ֆրանսիացիների յերևան գալը համարում էր «աստծո ցասման» վրա հասնելը, որն Իտալիան պետք է մաքրեր ապականությունից։ Հանրապետության մեծ խորհրդից նա պահանջում էր մտցնել պրոգրեսիվ հարկ, չգանձել աղքատների պարտքը, արտաքսել վաշխառուներին և կառուցել լոմբարդներ, որտեղ ամենաչքավոր բնակչությունը կարողանա չնչին տոկոսով փոխա-

ավություններ ստանալ։ Նա խստորեն հանդես էր գալիս հարուստների դեմ, թեպետ իր քարոզներում նա վորեվե կերպ չէր պաշտպանում սեփականությունը։ Հարուստները,—ասում էր նա,—յուրացնում են հասարակ ժողովրդի վաստակը, իսկ բռնակալներն ու նրանց պաշտոնատար անձինք իրենց ոգտին են ծառայեցնում բոլոր յեկամուտներն ու հարկերը և ուզում են, վոր աղքատներն ու գյուղացիները նրանց համար ձրի աշխատեն։ Իր կապը չխզելով կաթոլիկությունից, Սավոնարոլան գալիք ռեֆորմացիայի վոգով քննադատում էր Հռոմը և պապի իշխանությունը։ Իր քարոզներում նա անիծում էր անբարոյական Հռոմը և կասկած էր հայտնում, թե արդյոք քրիստոնյա յե պապը և արդյոք նա հավատում է աստծուն։ Մեծ ապաշխարանքի ժամանակ, վոր հայտարարել էր Սավոնարոլան, վոչնչացվեցին գեղարվեստական յերկերը, զարդարանքներն ու գրքերը, վորոնցից այն ժամանակ աշխատավոր մասսաներն ոգտվել չեյին կարող և հույս էլ չունեյին ոգտվելու և գրեթե պատրաստ եյին նրանց մեջ տեսնել իրենց աղքատության պատճառը։

Ֆրանսիացիք շուտով ցույց տվին, թե ինչի համար են յեկել Իտալիա։ Հաստատվելով Նեապոլում, նրանք սկսեցին անխըտիր կերպով զավթել ամեն ինչ,—իշխանությունը, տիտղոսները, պալատական պաշտոնները և ֆեոդալական տիրույթները։ Նրանք շուտով ամբողջ բնակչությանը գրգռեցին իրենց դեմ։ Իտալական իշխանները, վորոնց աջակցում էր Մաքսիմիլիան կայսրը, ֆրանսիացիների դեմ դաշինք կնքեցին և Կարլոսը, վախենալով թակարդ ընկնելուց, ստիպված էր հեռանալ Իտալիայից։ Ֆրանսիացիների պարտության անմիջական հետեվանքներից մեկը յեղավ նրանց դաշնակից Սավոնարոլայի անկումը։ Ոգտվելով Սավոնարոլայի ժողովրդականության անկումից և այն թշնամությունից, վոր դեպի նա տածում եյին մյուս որդենների կուսակրոնները, պապը հրամայեց բռնել և դատի տալ նրան։ Սավոնարոլային մեղադրեցին հերետիկոսության մեջ և այրեցին խարույկի վրա (1498 թ.)։ 1512 թվին Մեդիչիներն իսպանական զորքերի ոգնությամբ նորից հաստատվեցին Ֆլորենցիայում։

Կայսերական զորքերը կողոպտում են Հռոմը

Դրանից հետո ֆրանսիացիք մի քանի անգամ անցնում եյին Իտալիա, քայքայում ու ավերում այդ յերկիրը (տես հետագա XV գլուխը)։ Շուտով նրանք այնտեղ հանդիպեցին վտանգավոր հակառակորդի՝ հանձին իսպանական թագավոր Կարլոս I-ի,

որը 1519 թվից դարձել էր Գերմանիայի կայսր (Կարլոս V) և նույնպես աչք էր դրել Իտալական հարստությունների վրա։ Իտալիայի մանր տիրակալներին ուրիշ բան չէր մնում անել, բայց եթե խուսանավելու և մեկ հակառակորդին մյուսին հակադրելու քաղաքականություն վարել։ Սակայն միշտ չէր, որ այդ բարեհաջող ելք էր ունենում անգամ այնպիսի վարպետ դիվանագետների համար, ինչպես իտալացիները։ 1525 թվին, Պավիայի մոտ կայսերական զորքերի կողմից ֆրանսիացիների ջարդվելուց հետո, երբ Կլիմենտ VII պապը, վախենալով հաղթողից, նրա դեմ դաշինք կնքեց Ֆրանսիայի, Անգլիայի և իտալական մի քանի թագավորների հետ, կայսերական զորքը, որի մեջ բազմաթիվ գերմանացի-լութերականներ կային, հարձակվեց Հռոմի վրա և այն չլսված կողոպուտի ենթարկեց։ Կարլոս V-ի զինվորներն առանց որևէ գթության կոտորում էին հռոմայեցիներին։ Նրանք սրնգահարների նվագի տակ պաշարում էին տները և սպանում այնտեղ թաքնվողներին։ Գերմանական լանդսկնեխտները դրանից բացի սրբապղծություն էին անում։ Նրանք քաղաքում շրջում էին պապական ջորիներ նստած, եպիսկոպոսական խույրերը գլուխներին, տերտերների պատմուճաններով, հավաքվում էին Վատիկանում ծաղրական կոնկլավների, որոնց ժամանակ նրանք գահընկեց արին Կլիմենտ VII պապին և պղծեցին Յուլիոս II պապի դամբարանը։ Բավարարելով ցասման առաջին բռնկումները, սանձարձակ զինվորականությունը զբաղվեց կողոպուտով։ Բնակչությունից փող պոկելու համար գերմանացիք ջարդում էին իրենց զոհերի ոտները, թափում ատամները, կտրում ականջները, որոնք հետո տապակում էին և դժբախտներին ստիպում ուտել։

Մաքիավելլի

Իտալական բուրժուազիայի ամենահեռատես ներկայացուցիչների համար պարզ էր, որ տարերկրյա հարձակումների և Իտալիայի դժբախտությունների գլխավոր պատճառը նրա քաղաքական մասնատվածությունն էր։ Ֆլորենցիայի հռչակավոր քաղաքագետ և պատմագիր Մաքիավելլին (1469—1527 թ. թ.) պերճախոս կերպով ապացուցում էր իր համաքաղաքացիներին, որ Իտալիան կողոպուտների կենթարկվի այնքան ժամանակ, մինչև որ չդառնա միասնական պետություն։ 1494 թվին Մեդիչիներին Ֆլորենցիայից արտաքսելուց հետո նա երկար ժամանակ եղավ Ֆլորենցիայի հանրապետության արտաքին ու զինվորական գործերի խորհրդական և դարձավ այդ ժամանակ իշխանության գլուխ կանգնած առևտրա-արդյունաբե-

րական բուրժուազիայի շահերի մունետիկը: 1512 թվին Մեդիչիները վերադարձան և Մաքիավելլին, վորպես հանրապետական, ստիպված յեղավ հեռանալ գործերից, մեղադրվեց նոր կառավարության դեմ դավադրության մեջ, բանտարկվեց, ապա աքսորվեց Ֆլորենցիայից և իր մնացած կյանքն անցկացրեց ծանր աղքատության մեջ: Այդ հարկադրական պարապության ժամանակներում են գրված նրա գլխավոր աշխատությունները, վորոնց մեջ նա զարգացրել է իտալական միասնության գաղափարը: Գտնելով, վոր իտալական մանր պետություններում տեղի ունեցող յերկպառակությունների պատճառը հանդիսանում են՝ կուսակցությունների մշտական պայքարը և այդ պետությունների հանրապետական կառուցվածքը, Մաքիավելլին պատրաստ եր հրաժարվել հանրապետությունից և հաշտվել միապետական կարգի հետ, միայն թե Իտալիան դառնար այնպիսի ուժեղ պետություն, ինչպես Ֆրանսիան և Իսպանիան: Իր հերոսին, Իտալիայի ապագա համախմբողին, նա խորհուրդ եր տալիս խտրություն չդնել միջոցների մեջ, քանի վոր խնդիրը վերաբերում է այդպիսի կարևոր և փրկարար նպատակի իրագործման: Կառավարողը կարող է ոգտվել խաբեբայությամբ և ուխտադանցությամբ, իր հակառակորդներին մեջտեղից վերացնել թույնի, դաշույնի ոգնությամբ և իր անհնազանդ հպատակների խիստ դատաստան տեսնել: «Թագավորը գործում է կոպիտ ուժով, ինչպես գազանը,—գրում եր նա իր «Թագավորի մասին» գրքում:—Նա իր մեջ պետք է զուգակցի առյուծի և աղվեսի հատկությունները: Ունենալով միայն առյուծի հատկություններ, նա չի կարողանա պաշտպանվել թակարդից: Լինելով միայն աղվես, նա չի կարողանա պաշտպանվել թշնամիներից... Թագավորը չպետք է կատարի իր խոստումներն ու պարտավորությունները, յեթե այդ վնասում է նրա պլաններին: Նա պետք է տիրապետի ստի ու կեղծավորության մեծ արվեստը»: Մաքիավելլին պատրաստ եր կառավարողի իր իդեալը համարել Ալեքսանդր VI պապի զարհուրելի վորդի Կեսար Բորջիային, վորը փորձում եր իր համար պետություն ստեղծել կաշառքների, ծածուկ սպանությունների, թունավորման և այլ հանցագործությունների միջոցով: Այսպիսով բուրժուական պետության զարգացման դեռ առաջին շրջանում վոչ այլ վոք, քան բուրժուական տիրապետության մոլի ջատագովը քաղաքական կեղծավորության բացահայտ դասերով դրսեվորեց բուրժուական տիրապետության եյությունը: «Սկսած

Մաքիավելլուց, Հոբբսից, Սպինոզայից, Բոդենից և այլն և այլն, — ասում է Մարքսը, — նորագույն ժամանակում, էլ չխոսելով ավելի վաղ ժամանակի հեղինակների մասին, ուժը պատկերվում էր որպես իրավունքի հիմք. դրա շնորհիվ քաղաքականության թեորետիկական քննարկումն ազատվեց մորալից...»[1]: Վերևում հիշված մտածողներից թերևս ոչ մեկը այդ չի արել այնպիսի անողոք պարզությամբ, ինչպես Մաքիավելլին, և այս պատճառով Մաքիավելլու անունը դարձել է անսկզբունք քաղաքագետի սինոնիմ, քաղաքագետ, որը խորամանկությամբ, կեղծավորությամբ, խաբեբայությամբ և ամեն տեսակ բարոյականությունն ու ազնվությունը ոտնահարելով է հասնում նպատակին (մաքիավելլիզմ):

Վերածնության վերջին ժամանակաշրջանն Իտալիայում

XVI դարի առաջին կեսը Իտալիայում յեղավ իտալական վերածնության վերջին ժամանակաշրջանը (տես հատ. I, XXXIV գլ.): Իտալիայի տնտեսական անկումը, որ սկսվեց այդ ժամանակ, նրա քայքայումը, որ հետևանք էր ոտարերկրյա հարձակումների, — հետզհետե խարխլում էին բուրժուազիայի բարեկեցության հիմքերը, բուրժուազիա, որին ծառայում էին Իտալիայի բանաստեղծները, գրականագետներն ու նկարիչները: Վերածնության այդ վերջին ժամանակաշրջանը, նրա թառամելու ժամանակաշրջանը նշանավոր է դարձել նրա պտուղների թերևս ամենաբարի, աշնանային բուրմունքով: Դա այն ժամանակն էր, յերբ գործում էին արվեստի ու գիտության այնպիսի հանճարներ, ինչպես Լեոնարդո դա Վինչին (1452—1519 թ. թ.), Միքել Անջելո Բուոնարոտին (1475—1564 թ. թ.), Ռաֆայելը (1483—1520 թ. թ.) և Տիցիանը (1477—1576 թ. թ.): Նրանք բոլորը ռեալիստներ էին, այսինքն մանրակրկիտորեն ուսումնասիրում էին բնությունը և մարդուն, որպեսզի նրանց ճշտությամբ պատկերեին: Ստեղծելով իր գլուխ-գործոցը, «Խորհրդավոր ընթրիքը», Լեոնարդո դա Վինչին տալիս է իր հայրենակիցների բազմաթիվ ուրվագծերը, որոնք նրան թվում են ամենից արտահայտիչ և ամենից հարմար իր նկարի համար: Բայց Լեոնարդոն միայն մեծ նկարիչ չէր: Այդ մարդու խորագույն միտքը թափանցում էր ամենուրեք: Նա ճարտարապետ էր, ինժեներ, գիտնական, որը թողել է հանճարեղ մտքեր ու ձեռնարկումներ գիտության համարյա բոլոր ճյուղերում, — ֆիզիկա, մաթեմատիկա, աստղաբաշխություն, յերկրաբանություն և քիմիա: Նա յեղել է նաև յերաժիշտ և բանաստեղծ: Նա մանրակրկիտո-

[1] Маркс и Энгельс, Соч. т. IV, էջ 303:

րեն ուսումնասիրում է մարդակազմությունը, մարդու մարմնի շարժումների մեխանիկան։ Դիտելով թռչունների թռիչքը, նա համառորեն աշխատում է թռչող ապարատ կառուցելու խնդրի լուծման համար։ Նա այդ միանգամայն հնարավոր էր համարում, քանի որ նրա կարծիքով «թռչունը մի ապարատ է, որն աշխատում է մաթեմատիկական օրենքների հիման վրա»։

Մեծ քանդակագործ, նկարիչ և ճարտարապետ, ֆլորենտացի Միքել Անջելո Բուոնարոտին ապրեց մռայլ մանկություն ու երիտասարդություն, որ լի յեր տագնապներով ու քաղաքական ցնցումներով։ Նա տեսավ Մեդիչիների բռնապետության տապալումը, Սավոնարոլայի ժառայլ հանրապետությունը, Մեդիչիների վերստին յերևան գալը Ֆլորենցիայում, 1530 թ. ղեկավարեց քաղաքի պաշտպանությունն ընդդեմ Կարլոս V-ի բանդաների։ Մարդկային հուժկու ֆիգուրներ պատկերող, հզորությամբ ներթափանցված իր կերպարանավորումների մեջ (Մովսես, Դավիթ, Բրուտոս, շղթայված ստրուկ, Հին Կտակարանի դեմքեր) նա արտացոլել է իր ժամանակի ահեղ ու խռովահույզ ոգին, պայքարում կռփված խարակտերները, իր հայրենիքի վողբերգական բախտը։ Նշանավոր նկարիչներ Ռաֆայելին և Տիցիանին հատուկ եյին այլ զգացումներ և ապրումներ։ Ռաֆայելը, գույների ներդաշնակության վարպետը, մադոննայի իր բազմաթիվ պատկերներում տվել է մայրական քնքշության զուտ յերկրային գեղեցկությունը։ Տիցիանը, որ աճել եր կիսաարևելյան Վենետիկի խայտաբղետ ու կոլորիտային միջավայրում, մեծ ուժով և արտահայտչությամբ պատկերել է մարդկային առողջ և գեղեցիկ մարմնի զգայական փարթամությունը, տվել է իր ժամանակվա մեծ մարդկանց բազմաթիվ պորտրեններ։

Այդ ժամանակվա իտալական արվեստը ճանաչված եր ընդհանուրի կողմից։ Ֆրանսիական թագավոր Ֆրանցիսկ I-ը իր մոտ եր հրավիրում Լեոնարդո դա Վինչիին, Բենվենուտո Չելլինիին և այլ իտալական վարպետներին։ Տիցիանը մի քանի անգամ նկարեց Կարլոս V-ին։ Պապերը, որ լավ եյին գնահատում և գիտեյին արվեստը, հռչակավոր նկարիչներին և ճարտարապետներին հրավիրում եյին տաճարներ կառուցելու և զարդարելու իրենց պալատները։

Իտալական պատերազմների հետևանքները Իտալիայի համար

Կարլոս V կայսեր լանդսկնեխտների կողմից Հռոմի առումն ու ավերումը (1527 թ). հանդիսացան մի տեսակ յեզրափակիչ ակկորդ իտալական պատերազմների արյունոտ եպոպեյայում։ Թեև այդ դեպքից հետո էլ Իտալիայում չեն դադարում պատերազմները, սակայն դրանք արդեն ավելի նվազ նշանակություն ունեն։ Իտալական պետությունների ազատությունը, նրանց բարգավաճումը, վորն այնքան փայլուն արդյունքներ տվեց Վերածնության եկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում,—վերջնական և անուղղելի հարված եր հասել։

Նեապոլն արդեն XVI դարի առաջին տարիներից (1504 թ.) հաստատապես անցավ Իսպանիայի տիրապետության տակ և կառավարվելով զինվորական փոխարքաների կողմից, ծառայում եր իբրև հենարան այն ուժեղացող իշխանության, վոր «կաթոլիկական» թագավոր Ֆերդինանդն ու իր հաջորդներն ունեյին թուլացած Իտալիայի վրա։

Պապական Հռոմը, վոր հյուծվել եր վերջին պապերի թալանչիական և յուրաշահ քաղաքականությունից, սարսափահար եր յեղել կողոպուտից, ստիպված եր հրաժարվել ամեն մի ինքնակայությունից և Բոլոնյեյում խայտառակ համաձայնություն կնքել Կարլոս V-ի հետ (1528 թ. մայիսի 24-ին)։

Միլանը, վորը ձևականորեն դեռ կառավարում եր Սֆորցա ընտանիքի վերջին ժառանգ, Լոդովիկո Մորոյի վորդի Ֆրանչեսկո II-ը, փաստորեն գտնվում ե իսպան-ավստրիական զինվորայնության իշխանության տակ, իսկ Ֆրանչեսկոյի մահից հետո (1535 թ.) վերջնականապես անցնում ե Կարլոս V-ին, վորը նրան միացրեց իր վորդի Ֆիլիպպ II-ի իսպանական տիրույթներին։

Ջենովան, վոր մինչ այդ պաշտպանում եր ֆրանսիական պահանջները Իտալիայում, Անդրեա Դորիայի կառավարման որոք հանկարծակի փոխում ե իր կողմնորոշումը և անցնում կայսրությանը ծառայություն մատուցելու։

Ֆրանսիայի և կայսրության միջև յեղած պատերազմից մի փոքր ավելի քիչ տուժեց Սավոյան հերցոգությունը, վորը Վերածնության ժամանակաշրջանում համարյա դեր չեր խաղում իտալական քաղաքականության մեջ, իսկ հիմա, շնորհիվ իր սահմանային դիրքի, չափազանց կարևոր եր պատերազմող կողմերից թե մեկի և թե մյուսի համար։

Մանր իշխանները (Եստեն Ֆերրարում ու Մոդենում, Գոն-

գային Մանտուայում) և Լուկկի հանրապետությունն աշխատում են ոգտվել ընդհանուր խառնաշփոթությունից, վորպեսզի ամենազոր կայսեր առաջ քծնելով կամ ուղղակի ուժով իրենց համար թեկուզ մի փոքրիկ պատառ պոկեն հարևանի տերիտորիայից։

Միայն Ֆլորենցիան ու Վենետիկը դեռ չեյին միացվել ավստրո-իսպանական տիրույթներին։ Վենետիկը, վոր վաղուց ի վեր ավելի շատ հետաքրքրվում եր Արևելքի հետ ունեցած առևտրական կապերով, քան Իտալիայում քաղաքական հաջողություններով, զբաղված եր իր արևելյան տիրույթները թուրքերից պաշտպանելով։ Հնարավորություն չունենալով զենքով ուժով դիմադրել ամենազոր կայսեր ճնշման, Վենետիկը 1529 թվին նրան դրամական խոշոր փրկանք վճարեց և տվեց իր իտալական տիրույթների մի մասը, սակայն պահպանեց իր անկախությունը։

Ֆլորենցիան կայսերական զորքերի կողմից Հռոմը գրավելուն պատասխանեց ազգային և դեմոկրատական վերելքի վերջին բռնկումով, վորոնցով այնքան լեցուն եյին նրա պատմության նախընթաց դարերը։ Տապալվեց Մեդիչիների բռնապետությունը, վոր 1512 թվին հաստատել եյին իսպանացիները, և Ֆլորենցիան նորից հայտարարվեց հանրապետություն, վորն ազատ եր բռնակալներից և օտարերկրացիներից։ Սակայն ֆլորենտացիների հերոսական փորձն անհաջողության եր դատապարտված։ Ծվատվելով քաղաքացիական պատերազմից, բոլոր կողմերից ուժեղ թշնամիներով շրջապատված, Ֆլորենցիան դիմացավ մինչև 1530 թիվը, բայց այդ թվի ոգոստոսին, չնայելով հերոսական պաշտպանությանը, վորը գլխավորում եյին ժողովրդական առաջնորդներ Ֆրանչեսկո Կարդուչչին և Ֆրանչեսկո Ֆերրուչչին և վորին աջակցում եր ծերունի Միքել Անջելոն իր հանճարեղ տեխնիկական ընդունակություններով,— ստիպված եր անձնատուր լինել։ Քաղաքի և գրեթե ամբողջ Տոսկանայի տեր դարձավ ավստրո-իսպանացիների հավատարիմ ծառա, Կլիմենտ VII պապի վորդի, դաժան դեգեներատ Ալեսսանդրո Մեդիչին, հերցոգի տիտղոսով։ Իտալիայի ազատությանն անդառնալիորեն վերջ եր տրված։

Քաղաքական յեվ սոցիալական պայքարը XVI դարի առաջին կեսին Իտալիայում

Ավերված լինելով անհամար ռազմական արշավանքներից, յենթարկվելով Կարլոս V կայսեր բռնակալական իշխանության, Իտալիան նույնիսկ այդ հուսահատական վիճակում չդադարեցրեց իր յերկպառակությունները։ Նրա այն մասերի իշխողները, վորոնք անմիջակա-

նորեն յենթարկված չեյին կայսրության (օրինակ՝ Նեապոլը և Միլանը), հնազանդությամբ գլուխ խոնարհելով ամենազոր Հաբսբուրգի առաջ, կողոպտում եյին իրենց հպատակներին, բացառիկ դաժանությամբ ճնշում նրանց հուզումները։ Պողոս III Ֆարնեզե պապը (1534—1549 թ. թ.) մտածում եր միայն հռոմեական յեկեղեցու անհաստատ հեղինակությունը փրկելու և իր ընտանիքը հարստացնելու մասին։ Առաջին նպատակը իրականացնելու համար նա 1540 թվին հաստատում ե ճիզվիտական օրդենի կազմակերպումը, 1542 թվին վերականգնում ե ինկվիզիցիան, վորի գլուխ ե նշանակում ֆանատիկոս և ճիվաղ կարդինալ Կարաֆֆույին, 1545 թվին հրավիրում ե Տրիդենտյան յեկեղեցաժողովը, վորը վերջնականապես մշակում ե պապի աբսոլյուտ իշխանության և անսխալականության ճիզվիտական դոգմաները։ 1559 թվին սահմանվում ե արգելված գրքերի «Ինդեկսը»։ Բայց, հոգալով հոգևոր գործերի մասին, Պողոս III-ը չի մոռանում աշխարհիկ գործերը,—իր վորդիների ու քրոջորդիների համար ձեռնտու պաշտոններ ու տիրույթյուններ ե գտնում։ 1545 թ. պապի սիրելի Պյետրո Լուիջի Ֆարնեզեն ստանում ե Պարմայի և Պյաչենցայի նորակազմ հերցոգությունը, վորը նրա ընտանիքի իշխանության տակ ե մնում մինչև XVIII դարի կեսը։

Իտալիան շնչասպառ ե լինում օտարերկրյա և յեկեղեցական ճնշման լծի տակ, բայց դեռ փորձում ե պայքարել։ Այդպիսի, թեև բոլորովին անիմաստ, մի փորձ եր Ֆլորենցիայի հերցոգ Ալեքսանդրո Մեդիչու սպանությունը, վոր կատարեց (1537 թվի հունվարի 6-ին) նրա ազգական Լորենցինո (Լորենզաչչյո) Մեդիչին։ Սպանվածին փոխարինեց նրա ազգական Կոզիմոն, վորն ել ավելի ամուր բռնեց Ֆլորենցիայի բռնակալական կառավարման սանձը։ Շատ ավելի լուրջ եր հենց իր, Պողոս III պապի փորձը, վոր նա կատարեց իր կառավարման վերջում,—փոխել քաղաքական կողմնորոշումը և Ֆրանսիայի հետ դաշինք կնքելով, թուլացնել կայսրության լուծը։ Պապին հաջողվեց դաշինք կնքել Սիենայի և Լուկկայի հետ, վորոնք շարունակում եյին յերեսութական անկախություն պահպանել, Ջենովայում ապստամբություն բարձրացնել Ջովաննի Լուիջի Ֆիեսկիի ղեկավարությամբ և պատերազմական գործողություններ սկսել, վորոնք տխուր հետևանքներ տվին, չնայելով ֆրանսիական զորքերի ոգնությանը։ Պողոս III-ի մահը (1549 թ.) չդադարեցրեց Ֆրանսիայի և կայսրության միջև մղվող պայքարը, վոր նորից սկսվել եր Իտալիայի տերի-

տարիայում։ Թերակղզու յերբեմնի ծաղկող հովիտները և նրա հարուստ քաղաքները նորից զոհ դարձան ոտարերկրյա զինվորականության։

Իտալիայի դրությունը XVI դարի յերկրորդ կեսում

1555 թվի շեմքին Իտալիայում ֆրանսիացիների դրությունը բոլորովին անհուսալի յեր։ Ֆրանսիան արդեն պատրաստ եր վերջնականապես դադարեցնել պատերազմը, յերբ Կարլոս V կայսեր հրաժարականը և նախկին ինկվիզիտոր, յեռանդուն ու հաստատակամ կարդինալ Կարաֆֆայի պապական գահ նստելը նրան նոր ուժեր տվին։ Կարաֆֆան ընդունեց Պողոս IV անունը։

Պողոս IV-ը յեռանդուն կերպով հանդես յեկավ Իտալիայում յեղած կայսերական տիրությունների մի խոշոր մասի ժառանգ, իսպանական թագավոր Ֆիլիպպ II-ի դեմ. ֆրանսիական զորքերը հերցոգ Գիզի գլխավորությամբ և պապական ջոկատների աջակցությամբ վերսկսեցին ռազմական գործողությունները։ Բայց այս անգամ ես ձեռնարկումն ավարտվեց լիակատար անհաջողությամբ։ Սան-Կանտենի մոտ Ֆրանսիայի կրած պարտությունից հետո ֆրանսիական զորքերը Իտալիայից կանչվեցին հայրենիք. նրանց իտալացի դաշնակիցներն իրենք չեյին կարող վորևե լուրջ դիմադրություն ցույց տալ իսպանացիներին։ Կատո-Կամբրեզիում կնքված հաշտությունը (1559 թ.) վերջնականապես ամրապնդեց Իտալիայի ստրկացումը և իտալական մանր իշխաններին, վորոնք դավաճանել եյին իրենց հայրենիքի շահերին, վարձատրեց նրանց գաճաճային տիրությունների ընդարձակմամբ։ Ֆարնեզեները վերադարձրին Պյաչենցան, վոր գրեթե կորցրել եյին, Մեդիչիները Սիենան միացրին իրենց տիրություններին, իսկ սավոյան հերցոգը, իսպանացիների հաղթության գլխավոր հանցավորը, ստացավ Պյեմոնտի մի զգալի մասը և իր տիրություններին կից մի շարք տերիտորիաներ, հայրենիքին դավաճանելու գնով առաջնակարգ դիրք գնելով Թերակղզու մանր տիրակալների մեջ։

Կատո-Կամբրեզիում կնքված հաշտությունից հետո Իտալիան դադարեցնում ե դիմադրությունը և դառնում ոտարերկրյա զինվորականության ստրուկ։ Գրեթե յերեք քառորդ դար տևած պատերազմի, եկոնոմիկայի անկման, ֆեոդալական ռեակցիայի, ազգային անկախությունը կորցնելու հետևանքներն զգալ են տալիս իրենց։ Բնակչության թիվը խիստ պակասեց, մի քանի վայրերում ավելի քան յերկու անգամ, որինակ, Տոսկանայի մի մասում

և Նեապոլի նախկին թագավորությունում։ Գյուղացիությունը, վոր իր ուսերի վրա կրում եր պատերազմի բոլոր ծանրությունները, գտնվում եր ծայրահեղ աղքատության վիճակում, վորը հարավում ավելի վատթարանում եր ֆեոդալական ճնշման, իսկ հյուսիսում—ծանր հարկերի և քաղաքական կամայականության հետևանքով։

Արդյունաբերության յեվ առևտրի անկումը

Արդյունաբերությունն ու առևտուրը, վորոնք մի ժամանակ կենտրոնական և հյուսիսային Իտալիայի քաղաքներն առաջնակարգ դրության հասցրին Յեվրոպայում, հիմա, առևտրական ուղիների փոփոխությունից և Արևելքը թուրքերի կողմից գրավվելուց թուլացած, վերջնականապես մեռնում են։ Մանածագործական այնպիսի մի կենտրոն, ինչպիսին Ֆլորենցիան եր, հազիվ և բավարարում իր իսկ, բավական ցածր պահանջը մահուդի նկատմամբ։ Միայն Վենետիկը և մասամբ Ջենովան, վորոնք թեև թուլանում են իրենց առևտրական գործունեությամբ, այնուամենայնիվ դեռ ինչ-վոր դիրքեր են պահպանում համաշխարհային առևտրում։ Ճիշտ է, սակավաթիվ հարուստ ազնվականությունը, վոր համախմբված շարքերով շրջապատել եր գահերը, և խիստ բազմաթիվ ու հարուստ հոգևորականությունն իրենց լավ են զգում ստրկացված Իտալիայի խեղճուկ ու մռայլ մթնոլորտում, բայց այդ բարորություննել անհաստատ է։ Բռնակալի քմահաճույքը կամ յերկրում անպատիժ կերպով գործող բանդիտական շայկաներից վորևե մեկի հարձակումը կարող է կյանքից ու գույքից հեշտությամբ զրկել իտալական գոռոզ սենյորներից ամեն մեկին։ Բանդիտիզմը, կողոպուտի նպատակով դղյակների և նույնիսկ փոքր քաղաքների վրա հարձակվելը, գաղտնի սպանությունները ամենորյա յերևույթ դարձան Իտալիայի համարյա բոլոր մասերում, իսկ բանդիտները («բռավոներ»—համարձակներ) դարձան ամենապոպուլյար անձնավորությունները։

Կուլտուրայի անկումը։ Ռեակցիայի դարաշրջանի հերոսներն ու նահատակները։

Ստրկացված յերկիրը միաժամանակ գտնվում է ինկվիզիցիայի ծանր ճնշման տակ։ Վերածնության փայլուն, կենսուրախ, ռեալիստական կուլտուրան այլասերվում է այդ ճնշումից և մի անգամից չկորցնելով իր հզորությունն ու թափը, տալիս է մռայլ, միստիկ, թեև յերբեմն յուրովի նշանավոր յերկեր։ Ասպետական վերջին պոեմը, «Ազատագրված Յերուսաղեմը» ստեղծող

բանաստեղծ Տորկվատո Տասսոյի (1544—1595 թ. թ.) ստեղծագործությունն ամենացայտուն կերպով արտացոլում է այդ փոփոխությունը։

Միայն սակավաթիվ համարձակ մարդիկ էին սիրտ անում բողոքի ձայն բարձրացնել, համարձակվում էին դուրս գալ ֆեոդալական ռեակցիայի ու եկեղեցական խավարամոլության միացյալ ուժերի դեմ, բայց այդ մարդիկ տխուր բախտի էին արժանանում։ Այսպես, հանճարեղ գիտնական և գրող Գալիլեո Գալիլեյը (1564—1642 թ. թ.), ժամանակակից գիտության հիմնադիրներից մեկը, ընկնում է ինկվիզիցիայի ճանկը և իր կյանքի վերջին տարիներն անցկացնում բանտարկության և հարկադրական անգործունեության մեջ։ Խիզախ ազատատոր, ականավոր փիլիսոփա և բանաստեղծ Ջորդանո Բրունոն (1550—1600 թ. թ.) ստիպված է ճշմարտության և հանդուգն վարմունքի համար թափառել ամբողջ աշխարհում և իր կյանքը վերջացնում է ինկվիզիցիայի խարույկի վրա, Հռոմում, Ծաղիկների հրապարակում։

Այն օրերում, երբ Բրունոն պատրաստվում էր նահատակի մահվան, նրա ծննդավայրում, Նեապոլի փոխարքայությունում, Կալաբրիայի դաժան լեռներում դոմինիկյան միաբան Տոմմազո Կամպանելլան (1568—1639 թ. թ.), մի շարք աստվածաբանական ռադիկալ երկերի հեղինակը, ժողովրդական ապստամբություն էր նախապատրաստում։ Գործին ներգրավվեցին գյուղացիները, գյուղական հոգևորականությունը, կուսակրոնները, «բանվորները», Թուրքերն էլ օգնություն խոստացան։ 1600 թվի սեպտեմբերի 10-ին պետք է լիներ ելույթը, որը պետք է տապալեր Հաբսբուրգների ատելի լուծը և Իտալիայում սահմաներ նոր, իմաստուն ու արդարացի կարգեր, որոնց մասին երազում էր ազատասեր միաբանը։ Բայց դավադիրների մեջ դավաճաններ գտնվեցին. իսպանացիք կանխիչ միջոցներ ձեռք առան, դավադրության մասնակիցները բռնվեցին և նրանց մեծ մասը գլխատվեց։ Կամպանելլան մի կերպ ազատվեց, երբ հերետիկոս անցնելով եկեղեցական դատարանի իրավասության տակ։ Նա քսանհինգ տարի անցկացրեց զանազան բանտերում, յոթն անգամ ենթարկվեց խոշտանգումների, բայց չվհատվեց և շարունակում էր աշխատել։ Բանտարկության մեջ նրա աշխատանքի արդյունքը հանդիսացավ ի միջի այլոց հռչակավոր «Արևի թագավորությունը», ուտոպիական սոցիալիզմի խոշորագույն հուշարձանը, դժբախտ կալանա-

որի յերազանքը լավագույն, արդարացի կյանքի մասին, վորին հասնել նրան չեր վիճակված։

Իտալիան XVII դարում

Ֆրանսիայի ուժեղացումը Հենրիխ IV-ի գահնստելուց հետո, Իսպանիայի թուլացումը հյուսիսային Նիդերլանդների անջատման հետևանքով և Ֆիլիպպ II-ի մահը, մշտական 'յերկպառակությունները ավստրիական Հաբսբուրգների տիրություններում թվում ե, վոր պետք ե Իտալիային հնարավորություն տային թուլացնելու օտարերկրյա լուծը։ Սակայն մասնատված, աղքատացած յերկիրն անընդունակ յեղավ վճռական գործողությունների համար։ Սավոյան հերցոգ Կարլոս Եմմանուել I-ի փորձը,—իսկ նա իր տոհմի տրադիցիաների համաձայն դավաճանեց Իսպանիային և աշխատեց Ֆրանսիայի օգնությամբ վորոշ ինքնակայություն ձեռք բերել և գրավել հարևան Մոնֆերրատը,—օժանդակություն չգտավ մնացած Իտալիայի կողմից և հաջողությամբ չպսակվեց։ Իտալիան առաջվա պես մնաց Հաբսբուրգների խոնարհ ստրուկ, Հաբսբուրգներ, վորոնք բավականաչափ ռազմական ուժեր չունենալով թերակղզում, իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար օգտագործում են կաշառքների և ինտրիգների մեթոդը։ Այսպես, 1618 թվականին Նեապոլի փոխարքա հերցոգ դ'Օսսունան փորձում ե մի քանի ծախվող ավանտյուրիստների օգնությամբ պետական հեղաշրջում կատարել Վենետիկում, վոր Իսպանիայի վաղեմի թշնամին եր, բայց անհաջողության ե հանդիպում։

Նույն դ'Օսսունան, անհանգիստ ու փառասեր մի մարդ, վենետիկյան ավանտյուրայի անհաջողությունից հետո իր ուժերը փորձում ե բոլորովին անսպասելի ասպարեզում։ Հակառակ իսպանական այն փոխարքաների բոլոր սովորությունների, վորոնք կառավարում եյին դոռոզ ֆեոդալների մի փոքրիկ խըմբակի օժանդակությամբ, անխիղճ կերպով կողոպտում ու ճնշում ժողովրդին,—նա դիմում ե պրոգրեսիվ կերպով տրամադրված ռազնոչինեց Ջուլիո Ջենոինոյի խորհուրդներին և սկսում դեմագոգիկ քաղաքականություն վարել՝ իբր թե ժողովրդական մասսաների շահերի համար և ազնվականության դեմ։ Ֆեոդալական արիստոկրատիան, վորը սովոր եր լիովին անպատիժ մնալ, հալածանքների ե յենթարկվում. վոչնչացվեց հացի հարկը, վոր առանձնապես ծանր եր չքավորների համար, և հրատարակվեցին մի շարք կարգադրություններ, վորոնք նախատեսում եյին բնակչության ստորին խավերի բարեկեցության զարգացում։ Դ'Օսսու-

նան միաժամանակ բանակցություններ սկսեց Իսպանիայի թըշնամիների—Ֆրանսիայի և Վենետիկի հետ։ Բայց ձեռներեց փոխարքայի փորձն անհիմն եր, նա շուտով վտարվեց և բանտ նստեց, վորտեղ և մեռավ (1620 թ.)։ Նեապոլի ժողովուրդը նորից յենթակա յեր ֆեոդալական և օտարերկրյա կրկնակի ճնշման, վոր հեղաշրջման շատ ավելի լուրջ փորձեր առաջացրեց։

1647 թ. ապստամբությունը Սիցիլիայում

1647 թվականի գարնանը Սիցիլիայում բռնկվում ե ժողովրդական ապստամբություն։ Կղզու նախկին մայրաքաղաքում, Պալերմոյում, վոտքի յելան արհեստավորական ու պլեբեյական ստորին խավերը, վորոնք վոսկերիչ Ջուզեպպե դ'Ալեզիոյի առաջնորդությամբ գրավեցին մի շարք կառավարական հիմնարկներ և ձեռնամուխ յեղան դեմոկրատական հանրապետության կազմակերպման։ Ապստամբությունն աջակցություն գտավ կղզու շատ քաղաքների կողմից, բայց Մեսսինան, կղզու նոր կենտրոնը, չապստամբվեց և դա իսպանացիներին հնարավորություն տվեց հավաքել իրենց ուժերը։ Օգտվելով ապստամբների շարքերում յեղած ներքին գժտություններից,—ապստամբներ, վորոնք վատ եյին կազմակերպված և սովոր չեյին կարգապահության,—իսպանական իշխանությունները ճնշեցին ապստամբությունը։

Մազանիելլոյի ապստամբությունը Նեապոլում

Գրեթե միաժամանակ Նեապոլում ապստամբություն սկսվեց, վորն ավելի ահեղ չափեր ընդունեց։ Նոր փոխարքան, հերցոգ դ'Արկոսը, զգալիորեն ուժեղացրել եր հարկային ճնշումը, հարկ դնելով նույնիսկ մրգերի ու կանաչեղենի—չքավորների հիմնական սննդի վրա։ Այդ առաջ բերեց պայթյուն, վոր, ինչպես յերևում ե, արդեն վաղուց եր նախապատրաստվել։ Այդ նախապատրաստմանը մասնակցել եյին թե բուրժուազիայի ներկայացուցիչները,—առաջին հերթին նույն Ջենոինոն, վորը հերցոգ դ'Օսսունայի ռեֆորմների վոգեշնչողն եր,—և թե արհեստավորներն ու ժողովրդի ստորին խավերն իրենց առաջնորդ, Ամալֆիի ձկնորս Տոմմազո Անյելլոյի գլխավորությամբ, վորը հայտնի յեր Մազանիելլո մականունով։ 1647 թվի հուլիսի 7-ին ապստամբությունը սկսվեց փողոցի մի առևտրականի և հարկահավաքի միջև յեղած չնչին ընդհարումից և տարածվեց ամբողջ քաղաքում։ Փոխարքան ապարդյուն փորձեր եր անում խաղաղացնելու ժողովրդական մասսաներին և ստիպված եր պատըսպարվել բերդում։ Քաղաքն անցավ ապստամբների ձեռքը։ Ժողո-

վըրդական մասսաները ձեռնամուխ յեղան դեմոկրատական վարչության կազմակերպման, պաշտոնապես ազդարարելով իրենց հավատարմությունն իսպանական թագավորին։ Հուլիսի 13-ին փոխարքան ստիպված եր կապիտուլյացիա անել և ընդունել ապըստամբների մի շարք պահանջները, բայց շարունակում եր կաշառքի ու պրովոկացիայի միջոցով քայքայիչ աշխատանք կատարել ժողովրդի շարքերում, վորի հետևանքով Մազանյելլոն սպանվեց անհայտ չարագործների ձեռքով։

Կորցնելով իրենց առաջնորդին, ժողովրդական մասսաներն իրենց հաղթված չհամարեցին, նրանք առաջ քաշեցին նոր առաջնորդներ, վորոնցից ամենանշանավորն եր զինագործ Ջեննարո Աննեզեն, հետ մղեցին իսպանական նավատորմի մի քանի գրոհները և ոգնություն խնդրեցին Ֆրանսիայից, վորն այդ ժամանակ պատերազմի մեջ եր Իսպանիայի հետ։ Բայց Ֆրանսիան կառավարող Մազարինին փաստորեն ցուցաբերեց անբացատրելի դանդաղկոտություն։ Իր ռիսկով և նախաձեռնությամբ Նեապոլ անցավ ֆրանսիական ավանտյուրիստ հերցոգ Հենրիխ Գիզը, վոր հռչակված եր Նեապոլի թագավոր, իսկ ֆրանսիական նավատորմը յերևան յեկավ միայն այն ժամանակ, յերբ ապստամբների դրությունն արդեն անհուսալի յեր։ 1648 թվի ապրիլի 5-ին իսպանական իշխանությունները զորքերի ուղեկցությամբ մտան Նեապոլ ու սկսվեցին արյունոտ ռեպրեսիաները։

Այն ժամանակ, յերբ հարավային Իտալիան ապրում եր այդ ապստամբությունները, Թերակղզու հյուսիսային մասը վերստին դարձավ Ֆրանսիայի և կայսրության միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների ասպարեզ։ Յերեսնամյա պատերազմը, վորը վոչ մի ոգուտ չավեց Իտալիային, իր ավերածություններով, կողոպուտներով ել ավելի ծանրացրեց այդ յերկրի առանց այն ել ծանր դրությունը։

Վենետիկը XVII դարում

Միայն Վենետիկն եր, վոր XVII դարի յերկրորդ կեսում դեռ ցուցաբերում եր յերբեմնի հզորության մնացորդները։ 1645 թվականին թուրքական ուժեղ նավատորմիղը մոտեցավ Վենետիկի արևելյան կայքերի հենակետին, Կրետե կղզուն, գրավեց կղզու մի մասը և պաշարեց նրա մայրաքաղաքը։ Վենետիկը հավաքեց վերջին ուժերը և մոբիլիզացիայի յենթարկեց այն բոլորը, ինչ վոր հնարավոր եր, վորպեսզի պաշտպանի քաղաքը։ Քսանչորս տարի շարունակվում եր պաշտպանությունը, վորը ղեկավարում եր Վենե-

տիկի պատրիկ Ֆրանչեսկո Մորոզինին։ Մի շարք յերկրների, մանավանդ Ֆրանսիայի կամավորներն օժանդակում եյին հերոսական կայազորին, բայց 1669 թվի սեպտեմբերի 5-ին քաղաքը ստիպված յեղավ անձնատուր լինել պատվավոր պայմաններով։

Բայց Վենետիկը ծարավի յեր ռեվանշի և հաջողեցրեց այն։ Օգտվելով Թյուրքիայի ու կայսրության միջև 80-ական թվականներին բռնկված պատերազմից, նա նույն Ֆրանչեսկո Մորոզինիի առաջնորդությամբ ուղարկեց իր զորքերն ու նավատորմը և գրավեց ամբողջ Մորեա թերակղզին, վորը Կարլովիցի հաշտության դաշնագրով (1699 թ.) վերջնականապես հանձնվեց նրան։

Իտալիան XVIII դարի առաջին կեսում։ Յերկրի քաղաքական քարտեզը 1748 թ.

XVII դարի վերջին տարիներում Իտալիան իր հողում նորից տեսավ օտարերկրյա զորքերը, վորոնք կռվում եյին միմյանց դեմ և ավերում առանց այն ել ավերված յերկիրը, աչքի առաջ չունենալով վոչ նրա օգուտը, վոչ ել նրա ազատագրումը։ Դրանք Լյուդովիկոս XIV-ի պատերազմներն եյին յեվրոպական պետությունների կոալիցիայի, առաջին հերթին Ֆրանսիայի վաղեմի թշնամու—Հաբսբուրգների դեմ։ Այդ պատերազմները կարճատև ընդմիջումներով տևեցին գրեթե քսանհինգ տարի և անհամար դժբախտություններ պատճառեցին Իտալիային, զգալիորեն փոխելով նրա քաղաքական քարտեզը։ Իսպանական ժառանգության համար մղած պատերազմը, Լյուդովիկոս XIV-ի պատերազմների այդ վերջին և ամենակարևոր ետապը, Իսպանիան հանձնեց ֆրանսիական թագավորի թոռ Ֆիլիպ V Բուրբոնին, բայց դրա փոխարեն Իտալիայում յեղած իսպանական տիրույթներն անցան կայսրության, վորն իսպանական լուծը փոխարինելով ավստրո-գերմանականով, շարունակում եր ել ավելի անխիղճ կերպով կողոպտել և բռնությունների յենթարկել մասնատված ու անզոր յերկիրը։ Միայն Սավոյան, վորը բոլոր ընդհարումների ժամանակ վարում եր դավաճանությունների, ուխտազանցությունների, վճռական մոմենտին ավելի ուժեղ հակառակորդի կողմն անցնելու իր տրադիցիոն քաղաքականությունը,—շահեց պատերազմից։ Նրա հերցոգները ստացան Սիցիլիան և արքայական տիտղոս, վորին վաղուց եյին ձգտում։

Բայց Ուտրեխտի հաշտությունից հետո ստեղծված դրությունը չափազանց անկայուն եր։ Իսպանական Բուրբոնները

մտադիր չեյին հաշտվել Իտալիայում յեղած իսպանական տիրությունների կորստի հետ, և աջակցություն ստանալով իրենց ֆրանսիական ազգակիցներից, օգտվելով ամեն մի պատրվակից, ներխուժում եյին Թերակղզի, որն ընդհուպ մինչև 1748 թվականը գրեթե անընդհատ շարունակում եր մնալ իբրև Բուրբոնների ու Հաբսբուրգների միջև մղված կռվի դաշտ։ Այդ թվականին տվյալ պայքարի վերջին, ամենադաժան ետապը, այսպես կոչված հանուն ավստրիական ժառանգության մղված պատերազմը վերջացավ Աախենի հաշտությամբ, որը դարձյալ զգալի փոփոխությունների յենթարկեց Իտալիայի քաղաքական քարտեզը։ Բուրբոններին հաջողվեց կազմել յերկու անկախ, բայց Իսպանիայի ու Ֆրանսիայի հետ կապված պետություն։ Նեապոլում և Սիցիլիայում (որը հետ եր գրավված Սավոյայի «թագավորից») գահ նստեց դոն Կարլոսը, իսպանական թագավոր Ֆիլիպ V-ի որդին։ Պարման և Պյաչենցան հանձնվեցին դոն Ֆիլիպին, նույն թագավորի կրտսեր որդուն։ Դրա փոխարեն Հաբսբուրգներին հաջողվեց իրենց անմիջական իշխանության տակ պահել Լոմբարդիան ու Միլանը և իրենց ձեռքը վերցնել Տոսկանիան ու Ֆլորենցիան։ Այստեղ Մեդիչիների վերջին, բոլորովին այլասերված ներկայացուցչի մահից հետո գահ բարձրացվեց Մարիա Թերեզայի—Հաբսբուրգների գահաժառանգուհու ամուսինը, Լոթարինգիայի հերցոգ Ֆրանց-Ստեֆանը, որն այնուհետև շուտով կայսր դարձավ։

Սավոյան հերցոգությունն Աախենի հաշտությամբ Սիցիլիայի փոխարեն ստացավ Սարդինիան։ Պապական գահը, որ հետըզհետե կորցնում եր իր վարկը հոգևոր բնագավառում, անընդհատ պատերազմների հետևանքով այն կորցրեց նաև որպես իտալական պետության գլուխ։ Մյուս մանր պետությունները,—Մոդենի հերցոգությունը, Ջենովայի, Լուկկայի և Սան-Մարինոյի հանրապետությունները շարունակում եյին խղճուկ գոյություն պահպանել, սեղմված լինելով իրենց ավելի ուժեղ, ոտարերկրյա տիրապետության տակ գտնվող հարևանների միջև։ Նույնիսկ Վենետիկը, որ նախընթաց դարում Թյուրքիայի դեմ մղած հերոսական պայքարում վատնել եր վերջին ուժերը և XVIII դարի սկզբից հետզհետե կորցնում ե իր տերիտորիայից մաս առ մաս,—ստիպված եր զենքը վար դնել և Պասսարովիցի հաշտության դաշնագրով (1718 թ.) Թյուրքիային տալ Արևելքում ունեցած իր բոլոր տիրությունները։

Նոր յերևույթներ Իտալիայի XVIII դարի կուլտուրայում

Միայն կուլտուրայի ասպարեզում Իտալիան դեռ շարունակում է ինչ-որ ինքնուրույնություն պահպանել և XVIII դարի սկզբին նույնիսկ վորոշ վերելք է ապրում։ XVI—XVII դարերում առաջ քաշելով սեթևեթ և անկումային բարոկկո արվեստի մոդան, արվեստ, վորը պոեզիայի բնագավառում տվեց Ջանբատտիստա Մարինիի աֆեկտացված ստեղծագործությունը, նկարչության բնագավառում—Կարաչչիի հսկայական կտավները, թատրոնի բնագավառում—օպերան, Իտալիան XVIII դարում էլ առաջ է քաշում արդեն ավելի հանգիստ, բայց և քնքշացած ու անկումային արվեստի այնպիսի վարպետներ, ինչպես ամբողջ աշխարհին հայտնի բանաստեղծ-դրամատուրգներ Մաֆֆեին և Մետաստազիոն, ինչպես օպերային կոմպոզիտորներ Մոնտեվերդեն և Պերգոլեզին, ինչպես Իտալիայի վերջին հանճարեղ նկարիչ Տյեպոլոն։ Բայց ազնվականական անկումային արվեստի այդ վարպետների կողքին հնչում են նաև այլ ձայներ։ Ֆիզիկոսներն ու քիմիկոսները շարունակում են իրենց փորձերը, վորոնք հետագայում կհանգեն Գալվանիի և Վոլտի վճռական հայտնագործություններին։ Պատմագիրները, իրավաբաններն ու տնտեսագետները, յուրացնելով ֆրանսիական լուսավորական փիլիսոփայության ազդեցությունը, սկսում են խորամուխ լինել իրենց յերկրի վողբերգական դրության պատճառներին, ուսումնասիրել նրա պատմությունը, անալիզի յենթարկել նրա սոցիալական կարգը և տնտեսական դրությունը։ Ջանբատտիստա Վիկոն 1725—1730 թ. թ. լույս է ընծայում իր «Նոր գիտություն» շարադրությունը, վոր պատմությունը հասցնում է գիտության մակարդակին, Լոդովիկո-Անտոնիո Մուրատորին լույս է ընծայում միջնադարյան Իտալիայի պատմության բոլոր հիմնական սկզբնաղբյուրները, ապա նաև գրում է իր հայրենիքի առաջին մանրամասն պատմությունը, վերջապես, Պյետրո Ջաննոնեն գրում է Նեապոլի պատմությունը, վորն այնքան ներթափանցված է ատելությամբ դեպի կաթոլիկ յեկեղեցին և ոտարերկրյա ճնշումը, վոր հեղինակն ընկնում է հոգևոր իշխանության ճանկն ու տասներկու տարվա բանտարկությունից հետո մեռնում Սարդինիայի թագավորի բանտում (1748 թ.)։

ԳԼՈՒԽ IV

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՆԱԽՈՐԵՅԻՆ

XV դարի վերջի յեվ XVI դարի սկզբի տնտեսական վերելքը

XV դարի վերջի և XVI դարի սկզբի Գերմանիայի տնտեսական դրության համար բնորոշ է վերելքի ու հետամնացության մոմենտների զուգակցումը։

Այդ ժամանակ Գերմանիայում առանձնապես զգալի հաջողություններ ունեցավ լեռնային արդյունաբերությունը։ Նոր հանքարաններ հայտնագործվեցին Տիրոլում, Էլզասում, Գարցում, Սաքսոնիայում և Վեստֆալիայում և նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին լեռնարդյունաբերության տեխնիկայի և կազմակերպման բնագավառում։ XV դարում արդեն չեն սահմանափակվում հողի վերին շերտերից հանքաքար ստանալով, այլ սկսում են խորացնել շախտերը։ Այդ պահանջում էր հանքահորերը սարքավորել ջրհան կառուցվածքներով, ամբարձիչ անիվներով և այլ տեխնիկական հարմարանքներով, որոնց շնորհիվ հանքագործությունն արդեն սկսեց կորցնել իր արհեստավորական բնույթը։ Լեռնային արդյունաբերության մեջ, մանավանդ Սաքսոնիայում և Թյուրինգիայում, թափանցում է տեխնիկական սարքավորումը խոշոր գումարներով ավանսավորելու (Verlagssystem) *սիստեմը, ըստ որում ավանսավորողը դառնում էր ձեռնարկու, որն իրեն էր յենթարկում անմիջական արտադրողներին։ Այդ սիստեմը տանում էր դեպի հանքագործության համակենտրոնացումը և նրա մեջ կապիտալիստական հարաբերությունների տարրերի թափանցումը։ Կարելի յե զգալի հաջողություններ մատնանշել նաև մետաղների մշակման բնագավառում։ Հռենոսյան մարզում մշակում եյին ցինկի հանքաքարը,— արճիճ ու յերկաթ։ Քյոլնի վաճառականները ցինկի հանքաքարը բերում եյին Անգլիայից, ուր նրանք կապալով վերցրած հանքահորեր ունեյին։ Պղինձն ու արծաթը բերվում եյին Վեստֆալիայից, Գարցից և Չեխիայից։ Այդ մարզի արևմտյան մասում*

(Ախեն) մշակվում էր նաև արույր և բրոնզ։ Հռենոսի մարզը հռչակված էր ներկերի արդյունաբերությամբ և մահուդով, վորոնք Ախենից և Քյոլնից ուղարկվում եյին դեպի արևելք և հարավ-արևելք։ Մետաքսի մշակման գործում Ախենը համարվում էր հարավ-յեվրոպական արվեստի ֆորպոստ։ Քաղաքային արհեստն աշխատում էր սպառողների լայն շրջանների և հեռավոր շուկաների համար։ Առաջ յեկան արտադրության մի շարք նոր, ավելի բարդ ճյուղեր (նուրբ գործվածքներ, նուրբ կերտվածքներ թանկագին մետաղներից, զենքի պատրաստում և այլն)։ Քաղաքային արհեստի զարգացման զուգընթաց կատարելագործվում եյին աշխատանքի գործիքները, ճարտարությամբ աշխատում եյին գերմանական վարպետները, վորոնք հռչակված եյին ամբողջ աշխարհում։

Արդյունաբերության բնագավառում յեղած հաջողությունների հետ կապված եյին նաև առևտրի հաջողությունները։ Չնայելով XV դարի վերջի աշխարհագրական մեծ գյուտերին, Վասկո դա Գամայի հայտնագործություններին, հարավ-արևմտյան Գերմանիան XVI դարի առաջին կեսում դեռ շարունակում էր մնալ իբրև առևտրական ճանապարհ, վորը հյուսիսային Իտալիան և նրա արևելյան առևտուրը կապում էր Արևմտյան Յեվրոպայի շուկաների հետ, իսկ գերմանական քաղաքներն առաջվա պես մնում եյին իբրև յեվրոպական առևտրի խոշոր կենտրոններ։ Գերմանական վաճառականները կարողացան ասիական ապրանքներ ստանալու նպատակով սկզբնական ժամանակներում իրենց շահերի համար օգտագործել նաև նոր հայտնագործված ուղին, քանի դեռ առևտուրը գտնվում էր Փորթուգալիայի ձեռքում։

Գերմանիայի միջազգային տնտեսական դերի մասին վկայում է նաև այն, վոր նա աշխարհում առաջին տեղն էր բռնում արծաթի հանույթի բնագավառում, իսկ այդ արծաթն այն ժամանակ փոխանակման գլխավոր միջոցն էր, քանի վոր ամերիկական վոսկու և արծաթի հոսանքը նկատելի դարձավ միայն XVI դարի կեսից։ Գերմանական պատմագիր Կեչկեն բերում է հետևյալ տվյալները. 1493—1520 թ. թ. Գերմանիայում արծաթի արտադրությունը կազմում էր 35 հազար կիլոգրամ, մինչդեռ մնացած Յեվրոպայում այն կազմում էր միայն 10 հազար կիլոգրամ։

XV դարի վերջում և XVI դարի սկզբում Գերմանիայի տնտեսական զարգացման համար ել ավելի բնորոշ է հարավ-արևմտյան Գերմանիայի առևտրա-վաշխառուական և արդյունա-

բերական ֆիրմաների գործունեությունը։ Ֆուգգերների, Վելզերների, Հոխշտետտերների, Իմհոֆների և գերմանական այլ վաճառականների անուններն այն ժամանակ հայտնի եյին ամբողջ Յեվրոպային։ Նրանք առևտրական և վաշխառուական խոշոր գործարքներ եյին կատարում, իրենց ձեռքն եյին վերցնում արտադրության կարևորագույն ճյուղերը, որինակ, արծաթի, պղնձի, սնդիկի հանույթը, բամբակյա գործվածքների արտադրությունը, չարաշահում եյին հումքը (նույնիսկ հացը) և ստեղծում եյին իսկական մոնոպոլ կազմակերպություններ, այդ կերպ առաջացնելով միջին և մանր վաճառականության մշտական բողոքներ։

Այդ ֆիրմաների գործունեությունը հետաքրքիր է այն տեսակետից, վոր նրանց մոտ այն միջոցները, վորոնք կուտակվել եյին առևտրից և համքարային արտադրությունից, սկսեցին վորոշակիորեն աճել և դառնալ «կապիտալ», այսինքն վարձու աշխատանքի կապիտալիստական շահագործման հիմքի եյին վերածվում։ Վորպես որինակ, կարելի յե հիշատակել այդ ֆիրմաներից ամենախոշորի—XVI դարի իսկական դրամական տիրության, Ֆուգգերների առևտրական տան գործունեությունը։

Ֆուգգերները դուրս եյին յեկել գյուղական ջուլհակների միջավայրից։ Ընտանիքի նախահայր Հանս Ֆուգգերը դեռ 1367 թվին գաղթեց Աուգսբուրգ և ընդունվեց ջուլհակների համքարությունը, բայց արհեստի հետ միասին նա սկսեց զբաղվել մանվածքի և գործվածքների առևտրով։ Նրանից հետո Ֆուգգերների հետևյալ սերունդը զբաղվում է գլխավորապես Աուգսբուրգի ջուլհակների արտադրանքի առևտրով և նրանց հումք է մատակարարում, վորը ստացվում է գլխավորապես Վենետիկից,—այսինքն հանդիսանում է տիպիկ մեծագնորդ։ Հանսի թոռը, Լուկա Ֆուգգերը (մեռավ 1512 թ.), իր առևտրական գործարքների շնորհիվ հայտնի յեր ամբողջ Կենտրոնական Յեվրոպային։ XVI դարի սկզբում Ֆուգգերները վաշխառուական խոշոր գործարքներ են կատարում և փող են հայթայթում պապին, Հաբսբուրգներին և այլ իշխողներին։ Կարլոս V-ի որոք նրանց ձեռքն են ընկնում արծաթի, պղնձի և սնդիկի հանքերի կապալները, պետական հարկերի կապալներն Իսպանիայում։ Այս պատճառով Ֆուգգերները պաշտպանում են Հաբսբուրգների պահանջները և հավատարիմ են մնում կաթոլիկության, հույս ունենալով նրանց օգնությամբ Իսպանիայի միջով յելք ստանալ դեպի անդրծովյան առևտուրը և շահագործել Արևելյան ու Արև-

մայան Հնդկաստանի գաղութների հարստությունները։ Ֆուգգերների փոխատվությունների շնորհիվ Կարլոս Հաբսբուրգը կարողացավ կաշառել կուրֆյուրստներին և կայսերական թագ ստանալ Գերմանիայում։ «Ցերեկվա պես պարզ է,— գրում էր Հակոբ Ֆուգգերը Կարլոս V-ին 1523 թվին,— որ առանց իմ օգնության դուք, ձերդ մեծություն, չէիք կարողանա ստանալ կայսերական հռոմեական թագը»։

Ֆուգգերների կապիտալը 1511 թ. 200 հազար գուլդենից 1546 թվին հասավ 5.111 հազար գուլդենի (մոտ 60 միլիոն վոսկի ռուբլի)։ Ֆուգգերների փողով պատերազմներ էին մղվում և միջազգային ակցիաներ կատարվում։ Բայց հենց այդ վերջին հանգամանքն էլ Ֆուգգերների տապալման պատճառ դարձավ։ Իրենց բախտը կապելով Հաբսբուրգների հետ, նրանք իսպանական գանձարանի հաճախակի սնանկության հետևանքով հսկայական վնասներ կրեցին և XVII դարի սկզբում հեռացան ասպարեզից։

Գերմանիայի տնտեսական զարգացման անհամաչափությունը

Չնայելով այդ բոլոր հաջողություններին, Գերմանիան մյուս երկրներից հետ էր մնում առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության առանձին բնագավառներում։ Գերմանիայի տնտեսական զարգացման թույլ կողմը կայանում էր նրանում, որ նրա առանձին մասերն անհավասարաչափ էին զարգանում և որ գլխավորն է, թույլ էր կապը նրանց միջև, բացակայում էր տնտեսական կենտրոնն ամբողջ երկրում։

«Հարավը բոլորովին այլ առևտրական կապեր և սպառման շուկաներ ուներ, քան հյուսիսը»[1]։ Հարավային Գերմանիայի ծաղկող քաղաքներն աշխուժ առևտուր էին անում իտալական քաղաքների հետ և իրենց բարգավաճման ժամանակաշրջանում սեփական գրասենյակներ ունեին Վենետիկում և Միլանում։ Իսկ հյուսիս-հանզայան քաղաքներն իրենց գրասենյակներն ունեին Նովգորոդում, Բերգենում, Լոնդոնում և Բրյուգգեյում, ամբողջ հյուսիսային գերմանիային հայթայթում էին մանածագործական ապրանքներ, պերճանքի առարկաներ, սննդամթերքներ և համեմ, բայց գլխավորապես զբաղվում էին տրանզիտային առևտրով։ Այսպես, իր մեծությամբ առաջին ներմուծման նավա-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 116։

հանգիստ Լյուբեկը միաժամանակ տրանզիտային խոշոր կետ էր այն ապրանքների համար, որոնք Նիդերլանդներ էին գնում Ռուսաստանից, Լիֆլյանդիայից, Լիտվայից, Շվեդիայից ու Ֆինլանդիայից։ Այսպիսով Գերմանիայի յուրաքանչյուր ռայոնն ուներ իր առևտրական կապերը և սպառման իր շուկաները, առավելապես Գերմանիայից դուրս։ Գերմանական առևտրական խոշոր քաղաքների հարաբերություններում ներքին առևտուրն ավելի քիչ տեղ էր բռնում։ Գերմանիայում չստեղծվեց ներքին շուկա, որը տնտեսապես միացներ նրան իբրև միասնական մի ամբողջություն։

Եթե Գերմանիայի հյուսիսի և հարավի միջև չկար տնտեսական միասնություն, ապա «արևելքի և արևմուտքի միջև փոխանակություն գրեթե բոլորովին չկար»[1]։ Եթե Հանզան միավորում էր արևելքի և արևմուտքի բազմաթիվ քաղաքները, ապա այդ կապը սահմանափակվում էր նրանով, որ նրա կազմի մեջ մտնող քաղաքների համար արտասահմանում ապահովվում էին այս կամ այն իրավունքներն ու արտոնությունները։ Իսկ արևմուտքի և արևելքի առանձին քաղաքների միջև ներքին տնտեսական կապերը շատ թույլ էին։ Դրա հետևանքով թույլ էր նաև քաղաքական կապը Հանզայի քաղաքների միջև։ Հաճախ տեղի էին ունենում քաղաքների ներկայացուցիչների—Հանզայի անդամների ժողովներ, բայց այդ ժողովներում դրսևորվում էր առանձին քաղաքների մասնավոր շահերի գերակշռությունն ընդհանուր շահերի հանդեպ և քաղաքները միայն մեծ վերապահումներով էին ենթարկվում ընդհանուր որոշումներին։

Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը

Գերմանիայի տնտեսական այդ դրությամբ էր որոշվում նաև նրա քաղաքական ու սոցիալական կառուցվածքը։ «Այն ժամանակ, երբ Անգլիայում ու Ֆրանսիայում առևտրի և արդյունաբերության զարգացումը հանգեց ամբողջ երկրի շահերի հարակցության և հենց դրանով՝ քաղաքական կենտրոնացման, Գերմանիայում այդ պրոցեսը հանգեց միայն շահերի խմբավորմանն ըստ պրովինցիաների, տեղական կենտրոնների շուրջը, և այս պատճառով՝ քաղաքական մասնատվածության...» [1]

---

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. VIII, էջ 116։

[2] Նույն տեղ, էջ 117։

Իշխանները և քաղաքների պատրիկյան տոհմերը

Տերիտորիալ իշխանների տիրապետությունն ուժեղանում եր ի հաշիվ կայսեր իշխանության։ Թե ֆինանսական և թե ռազմական ընագավառում կայսրը կախում ուներ իշխաններից և ամենից առաջ այն յոթը կուրֆյուրստներից, վորոնք նրան ընտրում եյին։ Յուրաքանչյուր իշխան իր դրամն եր կտրում, հարկեր հավաքում, դատում և այլն։ Տեղական կենտրոնների գերակշռությունն ուժեղացնում եր իշխանների իշխանությունը, այսինքն այն իշխանների, վորոնք, Ենգելսի արտահայտությամբ, կենտրոնացման ներկայացուցիչներ եյին հենց մասնատվածության մեջ, տեղական և պրովինցիալ կենտրոնացման իրագործողներ[1]։ Այդպիսի պայմաններում իշխանները կարողացան կենտրոնական իշխանության թուլությունն օգտագործել՝ ստորին ազնվականության և քաղաքների մի զգալի մասն իրենց յենթարկելու համար։ Կենտրոնացման ընդհանուր տենդենցը նրանք օգտագործեցին իրենց մասնավոր շահերի համար։ Նույն կերպ եյին վարվում նաև քաղաքների պատրիկյան տոհմերը, իրենց ոտքին բանի տիրանալով համայնքների բոլոր միջոցներին և իրավունքներին՝ նրանց կառավարելու պատրվակով։

Հոգևորականությունը

Հոգևորականությունը, վոր ֆեոդալական եպոխայում իր ձեռքում եր պահում մտավոր գործունեյության բոլոր բնագավառների մոնոպոլիան, սկսեց այդ դերը հետզհետե կորցնել նյութական և հոգևոր կյանքի ընդհանուր բարդացման, տպագրության գյուտի, առևտրի լայնացման կապակցությամբ և, իբր դրա հետևանք, իրավաբանների դասի ուժեղացման առնչությամբ, վոր կապված եր հռոմեական իրավունքի նկատմամբ հետաքրքրության ուժեղացման հետ։ Հոգևորականության բարձրագույն ներկայացուցիչները կոմպենսացիա վորոնելու համար դիմեցին իրենց իշխանական գերարտոնություններին։ Դրա հետ մեկտեղ նրանք օգտվում եյին հռոմեական կուրիայի ներկայացուցիչների իրենց «իրավունքներով» և մասնակցում եյին հռոմեական-կաթոլիկական յեկեղեցու կողմից գերմանական ժողովրդին թալանելուն, վոր իր հերթին հեշտանում եր Գերմանիայի քաղաքական թուլությամբ։ Հոգևորականության միայն պլեբեյական մասը, գյուղերի

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, եջ 117։

ու քաղաքների քահանաները, վորոնցից շատերը մոտիկ եյին ժողովրդական ստորին խավերին, իրենք ել յենթարկվում եյին բարձրագույն հոգևորականության ճնշման։

Ստորին ազնվականությունը (ասպետությունը) և բյուրգերությունը

Իշխանների, քաղաքային պատրիկության և բարձր հոգևորականության կողմից յեղած ճընշման ուժեղացումն ուղղված եր գլխավորապես գյուղացիության և քաղաքային ստորին խավերի դեմ, բայց այդ ծանրությունը զգում եյին նաև ստորին հոգևորականությունը, ստորին ազնվականությունը և բյուրգերությունը։

Այն ժամանակվա միջին դասակարգերից ասպետությունն առանձնապես կրիտիկական դրության մեջ եր գտնվում։ Նա, ինչպես ասում ե Էնգելսը, «արագ քայլերով գնում եր դեպի իր կործանումը»[1]։ Իշխանների մոտ ծառայելը նրա համար դարձել եր գոյության գլխավոր աղբյուր։ Բայց վառոդի գյուտի և հետևագորի նշանակության աճման կապակցությամբ ռազմական գործի տեխնիկայի զարգացումն ասպետությանը դուրս մղեց նաև այդ դիրքերից, ավելորդ դարձնելով նրա զինվորական ծառայությունը ծանր հեծելազորում։ Ասպետությունը գտնում եր, վոր իր այդ դրությունից դուրս գալու համար պետք ե ուժեղացնել իրենից կախված գյուղացիության շահագործումը։ Սակայն այդ ել անկարելի յեր, վորովհետև ասպետությունը կախում ուներ թե աշխարհիկ և թե հոգևոր իշխաններից։ Այս պատճառով ասպետությունը ձգտում եր վերականգնել գերմանական կայսրությունը, թուլացնել իշխաններին և բարձրագույն հոգևորականությանը։ Կայսերական իշխանության վերականգնման մեջ տեսնելով իր փրկության միակ պայմանը, ասպետությունը դարձավ «ավելի քան ազգայնական դաս»[2]։ Այս պատճառով ասպետները կատաղի թշնամիներ եյին հռոմեական կուրիայի,—վորը կողոպտում եր Գերմանիան,—և պահանջում եյին բռնագրավել յեկեղեցական հողերը։ Իշխանների և հոգևորականության դեմ մղած իր պայքարում ասպետությունն ուզում եր իր կողմը գրավել բյուրգերությանը և հույս ուներ իր շահերի համար ոգտագործել գյուղացիների թըշնամանքը դեպի հոգևոր և աշխարհիկ իշխանները։ Բայց և այն-

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. VIII, եջ 119։

[2] Նույն տեղ, եջ 158։

պես, ապստամբությունը չէր կարող վոչ ժողովրդական շարժում կազմակերպել, վոչ էլ գլխավորել այն, վորովհետև կայսրության ռեֆորմի իդեալը նրան պատկերանում էր վորպես լեհական-շլյախտական տիպի «ազնվականական դեմոկրատիա», ճորտատիրական կարգով։

Բյուրգերություն

Քաղաքային բնակչության միջին դասակարգը (բյուրգերությունը), վորը չէր պատկանում վոչ պատրիկյան հին տոհմերին, վոչ էլ պլեբեյական մասսային, բաղկացած էր հարուստ և միջին սեփականատերերից և ավելի մանր սեփականատերերի մի մասից, վարպետներից, արհեստավորներից, առևտրականներից և այլն։ Ուշ միջնադարի եպոխայում քաղաքների զարգացումն առաջ էր քաշում բյուրգերությանն իբրև ամենից կազմակերպված ուժ, վորը ոպպոզիցիա յէր հանդիսանում ֆեոդալիզմի դեմ։

Թվում էր, թե այդպիսի պայմաններում բյուրգերությունը կարող էր հավակնություն ունենալ ղեկավարելու ամբողջ պայքարը ֆեոդալիզմի դեմ։ Սակայն, արդեն քաղաքային սկզբնական շարժումներում նկատելի յե ֆեոդալիզմի դեմ պայքարելու այն ճանապարհի սահմանափակվածությունը, վոր բռնել էր բյուրգերությունը, նկատելի յե միասնության պակասություն և քաղաքային հեղափոխական պլեբսի ու գյուղացիության հետ բավարար կապի բացակայություն։ Բյուրգերությունը, վոր պայքարում էր իր քաղաքների ազատության և արտոնությունների համար, դեռ չէր դարձել «բուրժուազիա», վորը Գերմանիայից դուրս առաջանում էր խոշոր աբսոլուտ միապետությունների ստեղծման ժամանակաշրջանում։ Այս հանգամանքն իր արտահայտությունը գտավ իդեոլոգիական մարզում։ Յեթե ֆեոդալիզմի դարաշրջանում ոպոզիցիոն յելույթների ընդհանուր ձև էր հանդիսանում յեկեղեցու դեմ ուղղված հերետիկոսությունը, ապա բյուրգերական հերետիկոսությունը չէր կարող լոզունգ դառնալ գյուղացիների և պլեբեյների այն մասսաների համար, վորոնք ներգրավվում եյին շարժման մեջ։ Բյուրգերական հերետիկոսությունն ուղղված էր գլխավորապես տերտերների դեմ և առաջին հերթին ձգտում էր դեպի հասարակ, եժան յեկեղեցի, վորտեղ չլինեյին կաթոլիկական շքեղ պաշտամունքը, միանձները, պրելատները և հենց հռոմեական կուրիան։ Բյուրգերության քաղաքական իդեալներն էլ չափազանց սահմանափակ եյին,—նրանք պահանջում եյին իրենց մասնակից դարձ-

նել քաղաքի օրենսդրության և սահմանափակել պատրիկյան օլիգարխիաների իշխանությունը։ Էնգելսն այդ բացատրում է նրանով, որ բյուրգերության տեղական սահմանափակվածությունը և յերկրի տնտեսական միասնության բացակայությունը խանգարում եյին նրան «բուրժուազիա» դառնալ այդ բառի խական իմաստով։

Քաղաքային պլեբեյությունը

Այսպես ուրեմն, Գերմանիայում չկար մի այնպիսի հասարակական դասակարգ, վորը կարողանար գլխավորել ամբողջ ֆեոդալական կարգի դեմ ուղղված շարժումը։ Գոյություն ունեցող ֆեոդալական հասարակության մեջ չունենալով վոչ մի արտոնություն և ֆեոդալական հասարակության ամբողջ յերարխիայի կողմից յենթարկվելով շահագործման ու ճնշման, քաղաքի և գյուղի ստորին դասակարգերը հանդիսանում եյին ամենահեղափոխական դասակարգեր և իրենց պահանջներով «բյուրգերական օպոզիցիայից» շատ ավելի հեռու եյին գնում։ Յերկու ստորին դասակարգերի միևնույն իրավազուրկ դրությունը նպաստում եր նրանց միասին յելույթներին, բայց այս դասակարգերին ևս պակասում եր միասնությունը։

Քաղաքային պլեբեյությունը խիստ բարդ կազմ ուներ։ Նա իր մեջ միացնում եր հին ֆեոդալական-համքարային հասարակության քայքայման տարրերը նոր, հազիվ սաղմնավորվող բուրժուական հասարակության ստորին խավերի հետ։ Այդ առնչությամբ Էնգելսը պլեբեյության մեջ տարբերում է յերեք տարր. 1) սնանկացած և աղքատացած քաղաքացիներ, վորոնք հասարակության մեջ կորցրել եյին իրենց տեղը, 2) յենթավարպետներ, վորոնք դուրս եյին պաշտոնական հասարակությունից, բայց յերազում եյին ապագայում իրենց համար համքարային արտոնություններ ձեռք բերել, և 3) գյուղերից վտարված գյուղացիներ և արձակված սպասավորներ, վորոնք քաղաքային ընդհանուր, ստորին մասսայի մեջ կազմում եյին պրոլետարիատի սաղմը։ Այս խավը վոչ միայն յեղավ գյուղացիների ամենահուսալի դաշնակիցը հակաֆեոդալական պայքարում, այլև իր միջավայրից տաղանդավոր ու համարձակ կազմակերպիչներ տվեց գյուղացիությանը։ Սակայն պետք է նկատի ունենալ, վոր քաղաքի պլեբեյությունը չափազանց թույլ եր, իսկ նախապրոլետարիատի տարրնել կազմում եր այն ժամանակվա հասարակության չնչին փոքրամասնությունը։ Այս պատճառով նրա ուժը կայանում եր

գլխավորապես գյուղացիական մասսաների հետ ունեցած կապի մեջ։

Գյուղացիությունը յեվ նրա դրությունը ռեֆորմացիայի նախօրյակին

XV դարի վերջում և XVI դարի սկզբում Գերմանիայում դասակարգային պայքարի սըրման հետ կապված եր գյուղացիության նկատմամբ ընդհանուր ճնշման ուժեղացումը բոլոր ունևոր դասակարգերի կողմից։ «Իր ծանրությամբ,—գրում է Էնգելսը,—գյուղացիության վրա յեր ընկնում հասարակական շենքի ամբողջ յերարխիան,—իշխանները, ազնվականությունը, տերտերները, պատրիկները, քաղաքային բյուրգերները»[1]։ Գյուղացիությունը շահագործման օբյեկտ եր բոլորի համար։ Անգամ բյուրգերության միջավայրից շատերը միջամըտում եյին հողային հարաբերություններին, նպատակ ունենալով իրենց շահերի համար օգտագործել ֆեոդալական շահագործման աղբյուրները։ Նրանք այդ հաջողեցնում եյին նրանով, վոր ազնվականությունից գնում եյին մի շարք ֆեոդալական սենյորությունները և դրանց հետ կապված իրավունքները։ Այդ հիման վրա օգտվելով գյուղացիական պարհակներից, վաշխառուական տոկոսներով փոխատվություններ տալով գյուղացիներին, նրանք հաճախ գյուղացուց խլում եյին բերքի յերրորդ մասը։ Գյուղացիների դեմ ուղղված ընդհանուր հարձակումը XVI դարի սկզբից լայն չափեր ընդունեց, բայց այն տեղի յեր ունենում արդեն XV դարում, սկսվելով XIV դարի յերկրորդ կեսից։ Էնգելսն իր «Մարկա» աշխատության մեջ հետևյալ կերպ է բացատրում ագրարային հարաբերություններում յեղած այդպիսի շըրջադարձի պատճառները Գերմանիայում, XIII դարում և XIV դարի առաջին կեսում, գյուղացիների դրությունը համեմատաբար բարելավվելուց հետո. առևտրի աճը, հռենոսյան քաղաքների բարգավաճումը և բյուրգերության միջավայրում ունևորության ու պերճանքի զարգացումն ազնվականության մեջ փողի այնպիսի ծարավ առաջացրին, վոր նա արդեն չի սահմանափակվում ազատ գյուղացիների դրամական մուծումներով, այլ աշխատում է նրանց դարձնել կախում ունեցողներ և ճորտեր, նպատակ ունենալով ուժեղացնել ճնշումը նրանց վրա։

Վորոշ իմաստով կարելի յե խոսել նաև կալվածատիրոջ տնտեսության մեծացման մասին, թեև այդ վերաբերում եր տըն-

[1] *Маркс и Энгельс*. Соч. т. VIII, էջ 125։

տեսության միայն առանձին ճյուղերին և արտահայտվում էր այսպես կոչված առևտրական կուլտուրաների, գլխավորապես վուշի ցանքերի ընդարձակմամբ և անասնաբուծության լայնացմամբ։ Այդ կապակցությամբ ազնվականները գյուղացիական ձրի աշխատանքի և սայլապարհակի մեծ պահանջներ եյին ներկայացնում։ Սակայն ազնվականների գլխավոր ուշադրությունը դարձված էր այն բանի վրա, վորպեսզի ավելացնեյին գյուղացիներից ստացվող մուտքերի չափը,—թե կանոնավոր մուտքերի, վորոնք բաղկացած եյին գլխավորապես գյուղացու հողամասի համար գանձվող չինշից (ցենզից), և թե «պատահական» մուտքերի, վորոնք կապված եյին գյուղացիական հողաբաժնի կամ շարժական կայքի տիրոջ փոխվելու հետ (վաճառքի կամ ժառանգաբար անցնելու հետևանքով), գյուղացիների նկատմամբ սենյորների դատական իրավունքների, գյուղացիների յերեխաների ամուսնության և մի քանի այլ դեպքերի հետ։ Հողի համար գյուղացիներից գանձվող վճարներն ավելացվում եյին համայնքի իրավունքներին բանի տիրանալու և գյուղացու կողմից հողը պահելու պայմանների վատթարացման միջոցով։ XV դարի վերջում և XVI-ի սկզբում հողի համար մղված պայքարի մասին են խոսում 1525 թ. տրված մի շարք գյուղացիական գանգատները։ Հայտնի յե նաև, վոր մինչև գյուղացիական պատերազմը յեղած տեղական մի շարք ապստամբությունների (օրինակ, Ռոտտ և Օքսենհաուզեն վանքերի գյուղացիների ապստամբությունները 1456 և 1502 թ. թ.) պատճառը յեղել է գյուղացիների ձգտումը՝ պաշտպանել իրենց տիրությունների ժառանգական բնույթը, վորը տերերն ուզում եյին վերացնել այն նպատակով, վորպեսզի ժառանգների համար վատացնեն հողից օգտվելու պայմանները և բարձրացնեն վճարները։ Տերերը գյուղացիներից յերբեմն գնում եյին նրանց «իրավունքները», վերացնում եյին գյուղացիների տիրության վոչ միայն ժառանգական, այլև ցմահ իրավունքները և մտցնում հողը գյուղացիներին միայն կարճ ժամկետներով հանձնելու վարձակալության վատագույն ձևեր, գյուղացուն սովի մատնող բոլոր նշաններով հանդերձ։ Գյուղացիական պատերազմի ժամանակ շատ գյուղացիներ գանգատվում եյին, վոր ստիպված են բերքի մի յերրորդը և նույնիսկ կեսը տալ կալվածատերերին։

Ամենաատելի և ծանր պարտավորություններից մեկը յեկեղեցու օգտին տրվող «տասանորդն» եր։ Այս պարտավորությունը, չնայած այդ անվան, ամենուրեք միատեսակ չեր։ մի շարք

վայրերում այն վերցվում եր միայն հացահատիկից (այսպես կոչված «մեծ տասանորդ»), ուրիշ վայրերում— նաև բանջարանոցային կուլտուրաներից («փոքր տասանորդ») և անասուններից («արյան տասանորդ»)։ Յեթե դրան ավելացնենք ամեն տեսակ իշխանական հարկերը, ապա կարելի յե լիակատար հիմունքով պնդել, որ տերերն աշխատում եյին գյուղացիական յեկամտից վերցնել այն բոլորը, ինչ որ կարող եյին, գյուղացուն թողնելով գոյության միայն ամենամինիմալ միջոցները։ Այդ ամենից հեշտ եր անել ճորտերի նկատմամբ, որոնց գույքային իրավունքներն առհասարակ յենթակա եյին նրանց «անձնական տերերի» (Leibherren) վերահսկողության։ Այս պատճառով մենք այդ ժամանակ տեսնում ենք տերերի ընդհանուր ձգտումը— ազատ գյուղացիներին դարձնել կախում ունեցողներ, իսկ կախում ունեցողներին— ճորտեր։

Գյուղացիների դրության վատթարացման այն բոլոր կողմերին, վորոնց մասին մենք խոսեցինք, պետք ե ավելացնել մարկի իրավունքների դեմ յեղած հարձակումը, համայնական հողերի հափշտակումը, գյուղացիների դեմ հարուցված արգելքները՝ օգտվել անտառից, անասուններ արածացնելու և փայտ հավաքելու համար, լճակներից՝ ձուկ վորսալու համար և այլն։ Այս առնչությամբ պետք ե մատնանշել, վոր բուրժուական պատմագիրները, օրինակ, Ֆոն Բելովը, պաշտպանում են Լասսալի հայացքները, Լասսալի, վորը մարկի իրավունքների դեմ ուղղված նման գործողությունների մեջ տեսնում ե անտառները գյուղացիների կողմից հափշտակվելու դեմ պետական հսկողության սկզբունք։ Բայց իրականում, գյուղացիներին թույլ չտալով օգտվել հողից, անտառներից և ջրերից, տերերն այնուհանդերձ բնավ չեյին հոգում «պետական շահերի» մասին։ Օրինակ, գյուղացիական մի շարք բողոքներում մատնանշվում ե, վոր գյուղացիներին թույլ չեն տալիս փայտ հավաքել իրենց կարիքների համար, մինչդեռ իրենք, սենյորներն ու իշխանները կտրատում են անտառը, ծախելու համար, և այն հանձնում են զանազան ձեռնարկումներին։

XV դարի վերջի յեվ XVI դ. սկզբի գյուղացիական ապստամբությունները

Մինչև 1525 թ. գյուղացիական պատերազմը գյուղացիների ապստամբությունները տեղական բնույթ եյին կրում։ Սակայն տեղական ամբողջ սահմանափակվածությամբ հանդերձ դրանք

կարևոր տեղ են բռնում այն դեպքերի շարքում, որոնք նախապատրաստեցին գյուղացիական պատերազմը: Արդեն այն փաստը, որ գյուղացիությունը զանազան վայրերում հանդես էր գալիս միևնույն լոզունգներով, որոնք արտացոլում էին բոլոր ճնշվածների ընդհանուր դրությունը,— մեծ նշանակություն ուներ գյուղացիների և պլեբեյների ընդհանուր ելույթների համար հող պատրաստելու գործում:

Գյուղացիական տեղական ամենախոշոր ելույթներից առաջինը տեղի յէ ունենում 1476 թվին, արևելյան Ֆրանկոնիայում, այն մարզում, որը պատկանում էր Վյուրցբուրգի եպիսկոպոսին: Դավադրության գլուխ էր կանգնած երիտասարդ հովիվ Հանս Բեհայմը՝ Նիկլասհաուզեն գյուղից: Սկզբում Հանսի գործունեությունն արտահայտվում էր նրանով, որ նա քարոզում էր հսկայական, բազմահազար մասսաների առաջ, որոնք կիրակի օրերը հավաքվում էին նրա մոտ: Նրա ապստամբության կոչով ներկայացան ավելի քան 30 հազար գյուղացիներ: Սակայն Վյուրցբուրգի եպիսկոպոսի հեծելազորը ճնշեց այդ շարժումը:

Հանս Բեհայմի հեղափոխական փորձը միաժամանակ հանդիսանում էր հիսուն տարի առաջ ճնշված հուսյան շարժման արձագանքը և գյուղացիական մեծ պատերազմի առաջին նախակարապետը: Այդ փորձը դեռ պրիմիտիվ բնույթ է կրում: Գյուղացիների կոնկրետ պահանջները Հանս Բեհայմի լոզունգներում դեռ չէին գտել իրենց արտահայտությունը: Նա կոչ էր անում ապաշխարել մեղքերը և ձեռնպահ մնալ աշխարհային հաճույքներից. բոլոր մարդիկ պետք է լինեն միմյանց եղբայրներ, ամեն մեկը պետք է մի պատառ հաց աշխատի իր ձեռների աշխատանքով և ոչ ոք ուրիշներից ավելի չպետք է ունենա: Բեհայմի լոզունգներում բնորոշ է նաև բոլոր հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ժխտումը. գյուղացիներն ու պլեբեյներն ամեն իշխանություն համարում էին մի ուժ, որն ուղղված էր իրենց դեմ և թշնամի էր իրենց:

«Բոշի» պատմությունը ներկայացնում է գյուղացիների և պլեբեյների միասնական ելույթների նախապատրաստման հետեվյալ ետապը: «Բոշն» ավելի քան քսան տարվա ընթացքում ծառայել է որպես անուն և սիմվոլ՝ գյուղացիական մի շարք դավադրական միությունների համար: Առաջին անգամ այն ծա-

գեց Եղզասում, 1493 թվին։ Այնտեղ ջարդվելով, նա տարածվում էր Հռենոսի աջ ափում, ժամանակակից Բադենի տերիտորիայում։ 1502 թվին հայտնաբերվեց մի նոր ապստամբության պլանը, իսկ այդ ապստամբության գլուխ էր կանգնած խիզախ կազմակերպիչ, գյուղացի Իոսս Ֆրիցը, բայց նաև այդ տապալումը և կազմակերպության անդամների ու կողմնակիցների դեմ սկսված հետապնդումները չվոչնչացրին նրան։ «Բոշը» վերականգնվեց Շվարցվալդում, նույն Իոսս Ֆրիցի ղեկավարությամբ, վոր ազատվել էր 1502 թվականին։ 1513 թ. նախապատրաստվում էր մի նոր ապստամբություն, վորը պետք է սկսվեր Ֆրեյբուրգ քաղաքի գրավումով։ Դավաճանությունը դարձյալ հայտաբերվեց։ Նորից սկսվեցին հետապնդումներն ու գլխատումները, բայց միությունն այս անգամ ևս վերջնականապես լիկվիդացիայի չենթարկվեց։

Ամենից առաջ ապշեցուցիչ է այդ միության համառությունն ու տոկունությունը, վորոնք ցույց են տալիս, վոր նրա կազմում անձնազոհ հեղափոխականներ են յեղել։ Նրա կազմը բավական խայտաբղետ էր։ Անդամների ցուցակները, վորոնք կցված են հետաքննական ակտերին, ցույց են տալիս, վոր մեծամասնությունը յեղել են արհեստավորական յենթավարպետներ և գյուղացիներ։

Գյուղացիական ապստամբությունների կապը պլեբեյական ոպոզիցիայի հետ

Գյուղացիների և պլեբեյների սերտ համագործակցությունը արտացոլվել էր նաև ապստամբների պահանջներում, վորոնց մեջ, մարկի իրավունքները վերականգնելու, վաշխառությունը վոչնչացնելու և ֆեոդալական վճարներն ու պարհակները պակասեցնելու պահանջների հետ մեկտեղ, պարունակվում են ավելի ընդհանուր բնույթի կետեր, վորոնց առթիվ Էնգելսը գրում է. «Այստեղ մենք առաջին անգամ գյուղացիների մոտ հանդիպում ենք հօգուտ ժողովրդի յեկեղեցական կալվածները գրավելու պահանջին և միասնական ու անբաժանելի գերմանական կայսրություն ունենալու պահանջին։ Այդ ժամանակներից այս յերկու պահանջները կրկին և կրկին կանոնավորապես առաջ են քաշվում գյուղացիների և պլեբեյների ավելի զարգացած ֆրակցիայի կողմից, մինչև վոր, վերջապես, Թոմաս Մյունցերը յեկեղեցական կալվածքների բաժանումը վերածում է դրանց կոնֆիսկացիայի, ունեցվածքի ընդհանրություն

սահմանելու համար, իսկ միասնական գերմանական կայսրություն— միասնական և անբաժանելի հանրապետության»[1]։

Գյուղացիական մյուս միությունը, «Զքավոր Կոնրադը» ծագեց Վյուրտեմբերգի տերիտորիայում, «Բոշի» 1502 թվի պարտությունից հետո։ Հիմք կա յենթադրելու, վոր նրա կազմակերպմանը մասնակցել են «Բոշի» միության ցրված անդամները։ «Զքավոր Կոնրադ» միությունը 1514 թվին դուրս յեկավ Վյուրտեմբերգի հերցոգ Ուլրիխի դեմ։ Այս ապստամբությունը բնորոշ է նրանով, վոր այստեղ գյուղացիները գործում եյին քաղաքացիների հետ մեկտեղ, վորովհետև ուղղակի և անուղղակի հարկերի խոշոր հավելումն ընդհանուր դայրույթ եր առաջացրել Վյուրտեմբերգում։ Ապստամբները հաջողեցրին լանդտագի հրավիրումը՝ մեծ թվով գյուղացիական ներկայացուցիչների մասնակցությամբ, բայց առանց արդյունքի։ Լանդտագը վորոշեց իշխանական գանձարանի դեֆիցիտը ծածկելու համար հարկեր ավելացնելու փոխարեն կոնֆիսկացիայի յենթարկել վանքերի և հոգևորականության գույքը։ Սակայն հերցոգին հաջողվեց համաձայնության գալ քաղաքացիների հետ, վորոնք դավաճանեցին գյուղացիներին։ Դրանով վճռվեց ապստամբության բախտը։

Գերմանական կայսրության դրությունը յեվ կայսրության ռեֆորմի փորձերի ձախողումը

Մերթ այստեղ ու մերթ այնտեղ բռնկվող գյուղացիական ապստամբությունների հետ մեկտեղ յերկրի լարված դրությունը քիչ չնպաստեց կայսրության ռեֆորմի փորձերի ձախողմանը, իսկ այդ ռեֆորմը ձեռնարկել եր կայսր Մաքսիմիլիան I-ը (1493—1519 թ. թ.)։ Այդ կայսեր վրա մեծ հույսեր եյին դնում հասարակության այն բոլոր տարրերը, վորոնք դժգոհ եյին յերկրի քաղաքական մասնատվածությունից և տերիտորիալ իշխանների իշխանության ուժեղացումից։ Այդ հույսերի հիմք եր ծառայում այն հանգամանքը, վոր Մաքսիմիլիանին «Հռոմեական թագավոր» ընտրելու մոմենտին (1486 թ.) նա արդեն կարողացել եր մի կարևոր քայլ անել Հաբսբուրգյան տան հզորությունն ուժեղացնելու համար, ամուսնության միջոցով իր տիրույթներին միացնելով բուրգունդական յերկրները,

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, եջ 148։

այդ թվում նաև Նիդերլանդները: Մաքսիմիլյանը կենտրոնացման իր փորձերը սկսել էր դեռ բուրգունդական յերկրներում, մանավանդ Ֆլանդրիայում, ուր նա պայքարում էր թե՛ տեղական ազատությունների և թե՛ ֆրանսիական ազդեցության դեմ: XV դ. 80-ական թվականների վերջից Մաքսիմիլիանը յեռանդուն գործունեություն է ծավալում Գերմանիայի կենտրոնական և հարավային մարզերում, վորտեղ կայսրության մանր դասերը— քաղաքները, կոմսերն ու ասպետները հույս էյին դրել նրա օգնության վրա, ընդդեմ այն ժամանակ ուժեղացած Վիտելսբախների բավարական տոհմի,— վորոնք իրենց իշխանությանն էյին յենթարկել Տիրոլը և առաջավոր Ավստրիան ու յերազում էյին հպատակեցնել ամբողջ Շվաբիան: Շվաբիայում կայսրության դասերից կազմված «Շվաբական միությունը», վոր վերջնական ձևավորում ստացավ 1488 թվականին և ուներ զինվորական խոշոր ուժեր, գտնվում էր Հաբսբուրգյան տան պաշտպանության տակ և իր հերթին Հաբսբուրգների համար ծառայում էր իբրև հարավային Գերմանիայում նրանց իշխանությունն ամրապնդելու կարևոր գործոն և կապ՝ առաջավոր Ավստրիայի և նրանց դանուբյան տիրույթների միջև: Հետագայում այդ գործոնի նշանակությունը բարձրացավ, վորովհետև Շվաբական միությունը չսահմանափակվեց միայն Շվաբիայով, այլ ընդգրկեց նաև վերին Ֆրանկոնիան, Հեսսենը և Տրիրի կուրֆյուրստությունը: Մաքսիմիլիանին միաժամանակ հաջողվեց հունգարական թագավոր Մատվեյ Կորվինից հետ գրավել ավստրիական մի շարք մարզեր:

Մաքսիմիլիանն ուզում էր օգտվել իր աճած հզորությունից, Գերմանիայում կենտրոնական կայսերական իշխանությունն ուժեղացնելու և իշխանների իշխանությունը սահմանափակելու համար: Նա հույս ուներ կայսրութենական ռեֆորմի շահերի համար օգտագործել իշխանների և քաղաքների հակամարտությունը: Իշխանները վորոշեցին դիմադրություն ցույց տալ Մաքսիմիլիանի կենտրոնացման փորձերին և կազմեցին կայսրության ռեֆորմի իրենց նախագիծը, վորի համաձայն կայսրը պետք է կախում ունենար դասային հաստատություններից, այսինքն փաստորեն իշխաններից: Իշխաններն իրենց նախագծի կենտրոնը դարձրին համակայսրութենական դատարանի ստեղծումը, վորով պետք է սահմանափակվեր կայսեր անձնա-

կան դատական իշխանությունը: Վորմսի ռայխստագում 1495 թվին իշխաններն իրենց ծրագիրը էրացրին հետևյալ պահանջով,— կազմել համակայսրութենական կառավարություն 17 անդամներից, վորոնք, բացի նախագահներից, պետք է նշանակվեն վոչ թե թագավորի, այլ դասերի կողմից: Այդ նախագծի համաձայն, կայսրութենական կառավարությանը, այսինքն փաստորեն իշխանների օրգանին պետք է տրամադրվեր ամբողջ գործադիր և զինվորական իշխանությունը, ինչպես նաև ֆինանսների կառավարումը:

Մաքսիմիլիանի դժբախտությունն այն էր, վոր գերմանական մասնատվածության պայմաններում նրա «կայսրությունը» չուներ ֆինանսական կայուն բազա: Իտալիայի համար Ֆրանսիայի դեմ պատերազմ մղելու գործում Մաքսիմիլիանը դրամական միջոցների կարիք էր զգում և այդ նրան ստիպեց համաձայնվել իշխանների նախագծի հետ, հույս ունենալով, վոր միջդասային գժտությունները վերջիվերջո կհասցնեն այնտեղ, վոր կայսրութենական կառավարությունը կյենթարկվի կայսրին: Կոստանցայի ռայխստագում 1507 թվին Մաքսիմիլիանին խոստացան մարդիկ և դրամական նպաստներ տրամադրել, դեպի Իտալիա արշավելու համար: Սակայն շուտով պարզվեց, վոր կայսրութենական ռեֆորմի այդ բոլոր նախագծերը մնում են լոկ վորպես խոսակցություններ: Կայսրը չստացավ վոչ խոստացված դրամական նպաստները, վոչ մարդիկ: Հետևանքն այն յեղավ, վոր նա Իտալիայում անհաջողությունների հանդիպեց Ֆրանսիայի դեմ մղած պայքարում:

Մաքսիմիլիանի կայսրութենական ռեֆորմի նախագծի հետ կապված էյին գերմանական հասարակության տարբեր խավերի առանձին հույսերը: Վոչ միայն կայսրութենական ասպետությունն ու քաղաքները, այլև գյուղացիության վորոշ տարրերը սպասում էյին, վոր ռեֆորմների շնորհիվ կսահմանվի պետական հաստատուն կարգ ու կանոն և կբարելավվի իրենց դրությունը: Կայսրութենական ռեֆորմների ձախողումը և միաժամանակ պետության դրսևորվող թուլությունը Գերմանիան անպաշտպան էյին դարձնում պապական կուրիայի նյութական անվերջ պահանջների դեմ:

Կաթոլիկ յեկեղե-ցին Գերմանիա-յում և պապու-թյունը

Կաթոլիկ յեկեղեցին ռեֆորմացիայի նախօր-յակին իրենից ներկայացնում եր բարդ և լայն ճյուղավորված մի օրգանիզմ: Հռոմը «տիեզե-րական» կաթոլիկ յեկեղեցու գլուխն եր և միաժամանակ մայ-րաքաղաքը յեկեղեցական պետության, վորն ուներ իր զորքը և իր դատական-վարչական ու ֆինանսական ապարատը: Հռոմի կենտրոնական հիմնարկությունների մեջ կարևոր տեղ եր բռ-նում ֆինանսական գերատեսչությունը,— «Հաշվային կամե-րան», վորը հավաքում եր յեկամուտները կաթոլիկ աշխարհի զանազան յերկրներից, բայց դրա հետ միասին վարում եր նաև յեկեղեցական պետության ֆինանսները: Կուրիայի յեկամուտ-ները շատ մեծ եյին, բայց և այնպես, պապերի լայն քաղաքա-կանությունը և փարթամ կենցաղը ստիպում եյին նորանոր մի-ջոցներ գտնել: Դրա համար աղբյուրներ եյին հանդիսանում պաշտոնների վաճառքը և մեղքերի թողությունը:

Յեթե կաթոլիկական աշխարհի կենտրոնում պապերն աշխա-տում եյին օգտագործել հոգևոր իշխանությունն իրենց արտա-քին հզորությունն ուժեղացնելու համար, ապա կաթոլիկական յերարխիան, վորը զանազան յերկրներում աչքի ընկնող տեղ եր գրավում ֆեոդալական հասարակության շահագործող տարրերի մեջ, ցույց եր տալիս, վոր ինքն ել պակաս գիշատիչ չե, աշ-խատելով իր կողմից շահագործվող գյուղացիական մասսաների և բյուրգերության նկատմամբ օգտագործել յեկեղեցական ազ-դեցության բոլոր միջոցները: Խոսելով այն մասին, թե ինչպես հոգևորականությունը շահագործում եր գյուղացիությանը, Են-գելսը գրում ե. «Նրանք իրենց հպատակներին շահագործում ե-յին վոչ միայն նույնպես անխնայորեն, ինչպես ազնվականու-թյունն ու իշխանները, այլև իրենց ավելի անամոթաբար եյին պահում: Հպատակներից վերջին պֆեննիգը պոկելու և յեկեղե-ցու տիրությունները բազմապատկելու համար կոպիտ բռնու-թյան հետ մեկտեղ գործի եյին դրվում կրոնի բոլոր հնարքնե-րը, խոշտանգման սարսափների հետ մեկտեղ— յեկեղեցական նզովքի և մեղքերի թողությունը մերժելու բոլոր սարսափները, խոստովանարանի բոլոր ինտրիգները... Ժողովրդից ե՛լ ավելի մեծ քանակությամբ փող կորզելու համար դիմում եյին հրաշա-գործ սրբապատկերների և մասունքների պատրաստման, բարե-

պաշտական ուխտագնացությունների կազմակերպման, ինդուլգենցիաների վաճառքին, յերկար ժամանակ հաջողություն ունենալով դրանում»[1]:

Կաթոլիկ յեկեղեցու կողմից ժողովրդի այդ գիշատիչ շահագործումը վաղուց արդեն հասարակական մեծ դժգոհություն եր առաջացնում:

Ոպոզիցիա կաթոլիկության դեմ

Սակայն պապության դեմ մղված պայքարի հաջողությունները չեյին կարող տարբեր յերկրներում միատեսակ լինել և ամենից առաջ կախված եյին կենտրոնական իշխանության ուժից: Այսպես, Ֆրանսիայում դեռ XV դարում Բազելի ժողովի վորոշումները պետական ակտի նշանակություն ստացան (Կարլոս VII-ի 1438 թվի պրագմատիկ սանկցիան): Պապերը ստիպված եյին զիջումներ անել նաև Իսպանիայում ու Անգլիայում: Իսկ Գերմանիայում, վորը մնում եր մասնատված և դրսեվորել եր իր թուլությունը մանավանդ Մաքսիմիլիանի որոք կայսրութենական ռեֆորմի փորձերի ձախողումից հետո,— պապը զիջումների վոչ մի կարիք չեր զգում: Հաշվի չառնելով Մաքսիմիլիանի առարկությունները, Լեվոն X պապն իր գործակալներին ուղարկում եր Գերմանիա, դրամական գանձումներ կազմակերպելու և ամենաբացահայտ ձևով ինդուլգենցիաներ վաճառելու համար: Դժվար չե պատկերացնել, թե վորչափ այդ հանգամանքը նպաստում եր Գերմանիայի ներքին դրության հետագա սրման: Յեկեղեցական ռեֆորմի ձգտումին միանում եր կայսրութենական ռեֆորմի անհրաժեշտությունը: Սակայն դժգոհ դասակարգերից յուրաքանչյուրը յուրովի եր հասկանում ռեֆորմը, վորի հետ կապում եր իր դասակարգային շահերը: XVI դարում Գերմանիայի դասակարգային կառուցվածքի բարդությունը թույլ չեր տալիս, վոր դեպի ռեֆորմ ձգտող բոլոր տարրերը համախմբվեյին և կազմեյին միասնական հեղափոխական մի բանակ:

Այս հանգամանքն անդրադարձավ նաև Գերմանիայի հումանիստական շարժման բնույթի վրա:

Հումանիստական շարժումը Գերմանիայում

Գերմանիայում, ինչպես և մյուս յերկրներում, հումանիստական շարժումն առաջացել եր նրանից, վոր ֆեոդալական հասարակության

---

[1] *Маркс и Энгельс.* Соч. т. VIII, եջ 120.

ընդերքում ստեղծագործվել էին բուրժուական հարաբերությունների տարրերը, իսկ այդ ստեղծագործմանը զուգընթաց զարգանում էր գիտական աշխարհայեցողությունը, ծաղկում գրականությունը և արվեստի մյուս տեսակները[1]: Հումանիզմը Գերմանիա թափանցեց Իտալիայից: XV դարի մոտավորապես կեսին գերմանական ազնվականության վորոշ շրջաններում, գլխավորապես համալսարանների շուրջը ծաղում են գրականագետների խմբակներ, վորոնք իտալական հումանիստների որինակով ուսումնասիրում են կլասիկ հեղինակների յերկերը և սկսում են պայքարել յեկեղեցական-աստվածաբանական և սխոլաստիկ ուղղության դեմ, վորը տիրում էր համալսարանական դասավանդման մեջ: Այդ պայքարը մի առանձին յեռանդով ու համառությամբ էին մղում յերիտասարդ բանաստեղծները— հումանիստները, վորոնք ճանապարհորդում էին Գերմանիայում, անցնելով մի համալսարանից մյուսը: Սկզբում հումանիստներին չէյին ճանաչում և նրանց մեղադրում էին քրիստոնեության հիմքերը խարխլելու համար: Սակայն յերկարատև ու համառ պայքարի հետևանքով հումանիստները հաղթանակ տարան մի շարք համալսարաններում: Արդեն 70-ական թվականներին հումանիստները հաջողեցրին պոեզիայի ամբիոնի հիմնումը Ֆրեյբուրգի և Բազելի համալսարաններում: 1492 թվին ականավոր հումանիստ Կոնրադ Ցելտիսը Ինգոլշտադտի համալսարանում ընտրվեց պոեզիայի և պերճախոսության պրոֆեսոր:

XV դարի 90-ական թվականների վերջում Վիեննայի համալսարանում հումանիստական գիտելիքները պարտադիր ճանաչվեցին գիտական աստիճաններ ստանալու համար: Իսկ XVI դարի սկզբում վոչ միայն Վիտտենբերգում ու Ֆրանկֆուրտում նոր հիմնված համալսարանները հենց սկզբից գտնվում էին հումանիզմի ազդեցության տակ, այլև հին, հումանիստական գաղափարների թշնամի համալսարաններում, որինակ՝ Լայպցիգի ու Քյոլնի համալսարաններում հումանիստներին հաջողվեց մի շարք դիրքեր նվաճել:

Էրֆուրտի համալսարանում, վոր հնագույններից մեկն էր Գերմանիայում, հումանիստների խմբակը XVI դարի սկզբում ուներ գերմանական հումանիստական մտքի այնպիսի փայլուն

---

[1] Տես «Միջին դարերի պատմություն», հ. I. գլ. XXXIV:

ներկայացուցիչներ, ինչպես Կրոտ Ռուբիանը, Եոբան Հեսսը և Ուլրիխ ֆոն Հուտտենը: Էրֆուրտի խմբակի ղեկավարն էր ականավոր հումանիստ Մուցիան Ռուֆը:

Էրազմ Ռոտտերդամցի

Բայց գերմանական հումանիզմի ամենահայտնի ներկայացուցիչն էր Էրազմ Ռոտտերդամցին (1467—1536 թ. թ): Իր յերիտասարդական տարիները նա անցկացրեց վանքում և միայն 1491 թվից նրան հաջողվեց թողնել վանքը ու ապրելով Ֆրանսիայում և Անգլիայում՝ զբաղվել գիտությամբ և գրականությամբ: Շուտով նա դարձավ հումանիստական գաղափարների պրոպագանդիստ: 1513 թվականից նրա մշտական բնակավայրը դարձավ Բազել քաղաքը, բայց նա հաճախ մեկնում էր ուրիշ յերկրներ և ամբողջ արևմտյան Յեվրոպայում հայտնի յեր վորպես հումանիզմի փայլուն գործիչ: Կարևոր նշանակություն ունեյին աստվածաշնչի ու յեկեղեցու հայրերի յերկերի նրա թարգմանությունները լատիներեն լեզվով: Թե՛ թարգմանության մեջ, թե՛ մանավանդ կոմենտարիաներում Էրազմը տալիս է տեքստերի իր հումանիստական մեկնաբանությունը: Նրան են պատկանում նաև լեզվագիտական զանազան հետազոտություններ: Բայց ամենամեծ հռչակ էր վայելում նրա «Հիմարության գովասանական խոսքը» յերգիծական յերկը, վոր հրապարակվեց 1509 թվականին:

«Հիմարության գովասանական խոսքը»

Այս նուրբ և սրամիտ սատիրայում Էրազմը խարազանում էր իրեն ժամանակակից Գերմանիայի և առհասարակ արևմտա-յեվրոպական հասարակության կրոնական, բարոյական և քաղաքական կարգերը: Հիմարությունը, հանդես գալով ամբիոնից, հայտարարում է, թե հասարակության բոլոր խավերը և հասարակական բոլոր բարքերն ու կարգերն իրեն են յենթարկվում: Այդ սատիրայում ամենից շատ ուշադրություն է դարձվում աստվածաբանների և հոգևորականության վրա, ընդհուպ մինչև պապը: Էրազմը դատապարտում էր սխոլաստիկան, սնոտիապաշտությունը, ձևական և սոսկ արտաքին վերաբերմունքը դեպի կրոնական պաշտամունքը և ծեսերը: Բայց իր սատիրայի ամբողջ սրությամբ հանդերձ՝ Էրազմը չէր պահանջում խզել կապը կաթոլիկ յեկեղեցուց: Նախաբանում, վոր ուղղված էր Թոմաս Մորին, նա չեշտում էր, վոր ուզում է վոչ միայն խարազանել, այլև սովորեցնել, ցույց տալ, թե ինչպես պետք է գնալ թե-

րություններն ուղղելու ճանապարհով: Հիրավի, քննադատության հետ միասին նա «Հիմարության» բերանով արտահայտում եր նաև իր դրական հայացքները կրոնի մասին, որոնք հետո նա արտացոլեց աստվածաշնչի և յեկեղեցու հայրերի յերկերի թարգմանության իր կոմենտարիաներում:

Երազմի իդեալը մաքրված և սկզբնական քրիստոնեությունը վերադարձած յեկեղեցին եր: Բայց նա սկզբնական քրիստոնեությունը հասկանում եր հումանիստական մեկնաբանությամբ և ժխտում եր մարդու ստորացումը, որը հատուկ եր միջնադարյան ասկետիզմին: Կաթոլիկ յեկեղեցին հարկավոր ե պահպանել նրա յերարխիայի և պաշտամունքի հետ միասին, բայց յեկեղեցին այնու հանդերձ պետք ե արմատապես փոխվի և ծեսերն ու արտաքին պաշտամունքը դիտի ոչ թե իբրև ինքնանպատակ, այլ իբրև ուղի դեպի մարդու հոգին, որպես նրա բարելավման և կատարելագործման միջոց: Նույն նպատակը պետք ե հետապնդեն՝ պապը, կարդինալները և ամբողջ յերարխիան: Այսպես եր նա մոտենում սոցիալական և քաղաքական հարցերին: Նա ծաղրում եր ազնվականությանն այն բանի համար, որ վերջինը դատարկ պարծենկոտություն եր ցուցաբերում իր նախնիների նկատմամբ, նա այդ ազնվականությունից հոգու ազնվություն եր պահանջում: Թագավորներից և պալատականներից նա պահանջում եր գիտակցել իրենց հասարակական պարտականությունները, բայց նա հանդես չեր գալիս գոյություն ունեցող իշխանությունների դեմ: Ընդհանրապես Երազմի՝ հումանիստորեն լուսավորված իդեալը տարբերվում եր միջնադարյան հայացքներից և կապված եր բուրժուական ծագող հարաբերությունների ու հայացքների հետ:

Երազմը բուրժուական ինտելիգենցիայի այն խավի տիպիկ ներկայացուցիչն ե, որը տալիս եր այդ ժամանակ ստեղծված արտոնյալ միապետությունների բյուրոկրատիայի հիմնական կադրերը, ժխտում հին ֆեոդալական ազատությունը և կաթոլիկ կղերի սանձարձակությունն ու ռեֆորմ քարոզում, սակայն առանց գոյություն ունեցող կարգերի հիմքերը ցնցելու: Նա խռովության ընդունակ եր միայն վերացական մտքի լեռնային բարձունքներում, ուր ոդը հստակ ե և ուր գրեթե չի հասնում կյանքի աղմուկը,— գերմանական բուրժուական գիտակցության այս գիծը յեղել ե ու յերկար ժամանակով մնացել իբրև գեր-

մանական բուրժուազիայի հեղափոխական անկարողության նշան: Երազմը գործնական կյանքում բարձր մարդկանց առաջ հաճոյակատար մի մարդ էր և դեպի իշխանավորները վերաբերվում էր մի այնպիսի բացահայտ շողոքորթությամբ, որը պատիվ չի բերում XVI դարի այդ «մտքերի իշխանավորին»: Էնգելսը Երազմին անվանում է խելոք քաղքենի, որը չէր ցանկանում իրեն գլխացավանք պատճառել:

Որևէ ձևի հեղաշրջման հանդեպ խիստ վախը, այստեղից բխող ձգտումը— պահպանել հեղինակությունը և պրակտիկ անսկզբունքայնությունը— չի կարելի բացատրել Երազմի անձնական բնավորությամբ միայն: Գերմանիայի դասակարգային բարդ կառուցվածքի և առանձին դասակարգերի ու միջնախավերի շահերի խճողվածության պայմաններում «կաբինետային գիտնական» Երազմ Ռոտտերդամցին ունևոր դասակարգերի մեջ չէր տեսնում մի որևէ ուժ, որը կարողանար ապահովել ռեֆորմի շարժման հաջողությունը: Իսկ դեպի ժողովուրդը նա վերաբերվում էր խիստ բացասաբար և նրան անվանում էր «բազմագլուխ գազան», որն անընդունակ է ընկալելու հումանիստական գաղափարներով:

Բայց հումանիստների մեջ բացառություն էին կազմում այնպիսի չափավոր մարդիկ, ինչպես Երազմը: Մնացածները մտածում ու գործում էին ավելի վճռականորեն, թեպետ նրանց վրա էլ ազդում էին գերմանական պայմանների առանձնահատկությունները: Այս տեսակետից ցուցանշական է այն պայքարը, որ սկսվել էր XVI դարի առաջին տասնամյակի վերջում ու յերկրորդ տասնամյակի սկզբում հրեական գրքերի վերաբերյալ ազմուկ հանած «ռեյխլինյան վեճի» շուրջը:

Ռեյխլին Իոհանն Ռեյխլինը (1455—1522 թ. թ.) Երազմի հետ միասին համարվում էր գերմանական հումանիզմի սյունը: Սկզբում նա ծառայում էր իբրև իրավաբան Վյուրտեմբերգի պալատում, այնուհետև Հեյդելբերգի, Ինգոլշտադտի և Տյուբինգենի համալսարաններում վարում էր հունական և հրեական լեզուների ամբիոնը: Ծառայությունը Ռեյխլինի համար ավելի անկախ դրություն էր ստեղծում, քան Երազմի դրությունը,— Երազմի գոյության աղբյուրը կենսաթոշակն էր: Ռեյխլինն առանձնապես շատ էր զբաղվում հունական, լատինական և հին հրեական լեզուների հետախուզություններով: Այդ

դրադմունքների նպատակն էր ուսումնասիրել քրիստոնեության ամենահին աղբյուրները, վորպեսզի այն մաքրել ամենաուշ շըրջանի աղճատումներից և ծուռ մեկնաբանություններից։ Նա մի առանձին նշանակություն էր տալիս հրեական միստիկայի ուսումնասիրության («Կաբբալա»)։ Ռեյխլինը, ինչպես և Էրազմը, ձգտում էր վոչ թե քրիստոնեական կրոնի հիմքերի տապալման, այլ դրանց վերածնության և մաքրման։ Այնուամենայնիվ նրա նախաձեռնությունները տվյալ բնագավառում այն ժամանակ ներկայացնում էին համարձակ մի փորձ— կրոնի հարցերին մոտենալ գիտական, լեզվաբանական և պատմական անալիզի ճանապարհով։ 1509—1510 թվականներին, յերբ ռեակցիոն շրջանների գործակալ վոմն Պֆեֆֆերկորնի բանսարկությունների կապակցությամբ հրապարակվեցին կայսեր հրամանագրերը հրեական գրքերը վոչնչացնելու մասին, Ռեյխլինը յեռանդուն կերպով դուրս յեկավ դրա դեմ։ Շուտով այդ գործի շուրջը սկսվեց մի վեճ, վորը դարձավ Ռեյխլինին հարող հումանիստների և Քյոլնի աստվածաբանների ու դոմինիկյանների ռեակցիոն շրջանների միջև մղվող պայքարի կենտրոն։ Ըստ էության դա հումանիստների պայքարն էր մտքի ազատության համար, կրոնական հարցերի գիտական (նրանց հասկացողությամբ) մեկնաբանության համար։ Այսպիսով «ռեյխլինյան վեճը» դուրս յեկավ հրեական գրքերի հարցի շրջանակներից։ Այն պամֆլետներում, վոր Ռեյխլինը հրապարակեց 1511 թ. («Աչքի հայելի») և 1513 թ. («Պաշտպանություն Քյոլնի զրպարտիչների դեմ»), առաջադրվում էին կրոնի, փիլիսոփայության և կրթության սիստեմի ամենաընդհանուր հարցերը, վորոնք այն ժամանակ բաժանում էին հումանիստներին և սխոլաստիկայի կողմնակիցներին։ Ռեյխլինի դեմ դուրս յեկան հին ֆեոդալական աշխարհի բոլոր ուժերը, իսկ նրան պաշտպանելու համար— վոչ միայն Գերմանիայի, այլև ուրիշ յերկրների առաջավոր տարրերը։ 1514 թ. Ռեյխլինը «Հռչակավոր մարդկանց նամակները» վերնագրով լույս ընծայեց իր ստացած բոլոր համակրական նամակների մի ժողովածու։ 1515 թ. հումանիստների Էրֆուրտյան խմբակը, վորը «ռեյխլինյան վեճի» ընթացքում ամենաակտիվ դիրք էր գրավում, լույս ընծայեց «Մութ մարդկանց նամակները» սատիրան, վոր ուղղված էր Քյոլնի աստվածաբանների դեմ և մերկացնում էր նրանց տգիտությունն

ու բարոյականը: Այս երգիծաբանական ժողովածուն կազմըված էր այնպիսի նրբամտությամբ ու տաղանդավորությամբ, որ սխոլաստիկներն ու աստվածաբանները սկզբում այն ընդունեցին իրենց կողմնակիցների իսկական նամակների տեղ և ողջունեցին ժողովածուի երևան գալը: Միայն հետագայում նրանք իմացան, որ դա մի սուր երգիծաբանություն է իրենց հասցեին:

«Մութ մարդկանց նամակներ»

«Մութ մարդկանց նամակները» հասցեագրված են հականեյխլինականների ղեկավարներից մեկին— Քյոլնի աստվածաբան Որտուին Գրացիուսին: Յուրաքանչյուր նամակ վերագրվում է մի որևէ աստվածաբանի կամ տիտղոսավոր ու անտիտղոս միանձնի, որը գրում է Որտուին Գրացիուսին ռեյխլինյան գործի առթիվ: Նամակներում տրված է աստվածաբանների և սխոլաստիկների տգիտության, անառակության, կեղծավորության և կատաղի անհամբերատարության պատկերը: Ծաղրվում են նրանց անվերջ վեճերը դատարկ բաների շուրջը, աստվածաբանական երկերի աղավաղված լատիներեն լեզուն, «խոհանոցային լատիներենը», որով օգտվում են տգետ կուսակրոնները:

Պամֆլետը կազմելու գլխավոր մասնակիցներն ամենայն հավանականությամբ եղել են Կրոտ Ռուբիանը և Հուտտենը:

Ուլրիխ ֆոն Հուտտեն

Ուլրիխ ֆոն Հուտտենը (1488—1523 թ. թ.) ծնվել է մի մանր ասպետի ընտանիքում,—որն իր որդուն տվեց վանք, բայց Հուտտենը տասնվեց տարեկան հասակում փախավ այնտեղից և չընդունվելով հոր կողմից, դարձավ թափառական ասպետ և բանաստեղծ, հումանիստական լուսավորության ջերմ երկրպագու, ասպետ-ավազակ, հանճարեղ զվարճասեր և ձախողակ քաղաքական մտածող, որը զգալի հետք է թողել այդ փոթորկալից եպոխայի գրականության ու դեպքերի վրա: Սկզբում լինելով աղքատ, թափառական ուսանող, ապա նույնպես թափառական, գրեթե անոթևան բանաստեղծ ու երգիծաբան, նա հենց սկզբից հարեց ասպետության այն գործիչներին, որոնք երազում էին իշխանական տիրապետության ավերակների վրա բարձրացնել միասնական Գերմանիայի դրոշակը: Նրա քաղաքական երազները վաղօրոք մատնըված էին անհաջողության: Հուտտենի ազնվականական դեմոկրատիան ուներ ճորտատիրական հիմք, իսկ նրա «միասնական

Գերմանիան» պետք է քողարկեր այն շլյախտական հրոսակի սանձարձակությունը, որ միայն նոմինալ կերպով էր կրելու կայսրության ամպագոռգոռ անունը: Նման իդեալները հավասարապես անընդունելի էին թե՛ գյուղացիական մասսաների և թե՛ բուրժուազիայի համար: Բայց Հուտտենը, բացի դրանից, պաշտպանում էր Գերմանիայի ազգային ազատությունն ընդդեմ Հռոմի և կաթոլիկ տերտերների, մտքի ազատությունն ընդդեմ սխոլաստիկների և օբսկուրանտների խավարապաշտության, և միայն այդքանը բավական է, որպեսզի նրա հիշատակը պահպանվի Գերմանիայի պատմության մեջ նշանավոր այդ դարաշրջանի մեծ անունների շարքում: Նա վաղ կապվեց հումանիստական շրջաններին և ծանոթացավ Կրոտ Ռուբիանի հետ ու հետևելով վերջինիս, գնաց Էրֆուրտ, ուր շուտով դարձավ Մուցիան Ռուֆի գլխավորած՝ հումանիստների խմբակի ակտիվ անդամ: Այնուհետև նա յերկար թափառում էր Գերմանիայում և 1512 թվին մեկնեց Իտալիա: Հռոմի հետ ծանոթանալը նրա մեջ զայրույթ ու ցասում առաջացրեց: Նա իսկույն հասկացավ, թե Գերմանիայի համար ինչպիսի թշնամի էր հանդիսանում պապական Հռոմը: Նա ծաղրում էր ինդուլգենցիաները, որպես պարզամիտներին հիմարացնող յերևույթ: «Արդյոք անամոթություն չէ՞, Հուլիոս,— դիմում էր նա մի էպիգրամում Հուլիոս II պապին,— ծախել այն, որի կարիքը դու ամենից շատ ես զգում»: Ի՞նչպես մարդիկ կարող են հավատալ,— զայրացած հարցնում էր Հուտտենը,— որ այնպիսի մի պապ, ինչպես Հուլիոս II-ն է, «այդ բանդիտը, որ վարակված է արատներով, կարող է իր կամայականությամբ մեկի առաջ փակել և մյուսի առաջ բանալ յերկնքի դռները»:

Հուտտենի փառքն իր հայրենիքում սկսվեց այն ժամանակից, յերբ լույս տեսավ նրա պամֆլետը Վյուրտեմբերգի հերցոգ Ուլրիխի դեմ, որը դավաճանաբար սպանեց Հուտտենի ազգականին, իսկ վերջինս ծառայում էր արքունիքում: Այնուհետև Հուտտենը մասնակցեց հռչակավոր «Մութ մարդկանց նամակների» ստեղծման, թեև դրանց մեջ Հուտտենի ազդեցությունն ավելի քիչ է զգացվում, քան ավելի հանդիստ ու մեղմ Կրոտ Ռուբիանի ազդեցությունը: 1515 թ. նա նորից Իտալիայում էր, որտեղից վերադարձավ 1517 թ.: Հայրենիք վերադառնալիս Աուգսբուրգում նա Մաքսիմիլիան կայսրից բանաստեղծի դափ-

նյա պսակ ստացավ: Դրանից քիչ հետո Աուգսբուրգի կայսերական սեյմում նա հանդես է գալիս մի ճառով, որով պաշտպանում է Լևոն X պապի նախագիծը Թուրքերի դեմ արշավանք կազմակերպելու մասին: Նա այդ նախագիծը հարմար առիթ էր համարում ոչ միայն կայսեր շուրջն ամբողջ ազնվականությանը համախմբելու, այլև իշխաններին ու ավագանիներին քննադատելու համար,— որոնք մտածում էին միայն իրենց շահերի մասին: «Արդյոք դուք գիտե՞ք,— հարցնում է նա,— թե ժողովուրդն ինչ է մտածում այդ մասին (այսինքն իշխանների կառավարման մասին): Ճիշտ է, նա ուզում է, որ իրեն կառավարեն, բայց նա բնավ չի ցանկանում, որ իրեն կործանեն, և նրա միջավայրում շատերն արդեն մտածում են, թե ինչպես բռնի կերպով ամոքել վիճակը»: Այսպիսով Հուտտենը նախազգում էր ապստամբության հնարավորությունը: Հայրենիք վերադառնալուց հետո Հուտտենը ստիպված էր ծառայության մտնել Մայնցի արքեպիսկոպոսի մոտ: Այդ պաշտոնը ճնշում էր նրան և նա դժվարությամբ էր հանդուրժում ստորադաս լինելը: Բայց նա դարձյալ նոր աշխարհի ջերմ քարոզիչն էր: «Կգա ժամանակ,— գրում է նա Պիրկհեյմերին,— երբ հարություն կառնեն գիտությունները, երկու լեզուները (այսինքն լատիներենն ու հունարենը) գիտենալը մեզ կմիացնի հույների և իտալիկների հետ, լուսավորությունը բույն կհյուսի Գերմանիայում, իսկ տգիտությունը կարտաքսվի Հիպերբորեյան լեռներից այն կողմ, բալթյան ծովափը»: «Ո՛, դար, ո՛, գիտություննե՛ր: Որքա՛ն ուրախալի է ապրելը, և հիմա ժամանակը չէ անձնատուր լինել հանգստին...»

Հռոմի դեմ ուղղված նրա սատիրաները դառնում են ավելի ու ավելի կծու, իրենց գագաթնակետին հասնելով «Վադիսկ կամ հռոմեական յերրորդություն» պամֆլետում (1520 թ.): Բայց նա դեռևս հեռու է ռեֆորմացիոն գաղափարներից: Նա կարծում է, թե չպետք է յեկեղեցու «գլուխը կտրել» և որ խոչընդոտներ դնելով Հռոմի կորզումների առաջ, կարելի է ուղղել հռոմեական կուրիան: Բայց նա հետզհետե մոտենում է Լութերին և շուտով դառնում նրա հետևորդը: Նա հեռանում է իր արքեպիսկոպոսից և անցնում հռչակավոր ասպետ Ֆրանց ֆոն Զիկկինգենի մոտ, որի դղյակը դարձավ իշխանների բռնացման դեմ գործող օպոզիցիայի բույն և «արդարության

ապստամբած ընդդեմ իշխանական կամայականության: Այնտեղից Հուտտենը պայքար է մղում Լյութերի համար, կայսերին կոչ է անում Գերմանիան ազատել Հռոմի լծից, պաշտպանում է Երազմին ռեֆորմի գործում նրա ցուցաբերած անվճռականության համար: Մի գրությունում, որ լույս էր տեսել նրա գործունեության այդ ժամանակաշրջանում, նա ասում է, թե քանի որ հոգևորականությունը փախչում է ռեֆորմից, ուրեմն այդ գործին կձեռնարկեն ասպետները, օրինակ, Զիկկինգենը— այդ գրագետի հերոսը: Հուտտենը փառաբանում է հուսյան Յան Ժիժկային այն բանի համար, որ վերջինը դուրս էր յեկել պաշտպանելու Հուսին, իր հայրենիքը փրկելու ծույլ միանձներից ու Հռոմից և վրեժ առնելու սուրբի կործանման համար: 1521 թվին Լյութերին Վորմսի սեյմ կանչելը Հուտտենին դրդեց իր հրեղեն նետերն ուղղել պրելատների դեմ, որոնք ցանկանում էին կործանել ռեֆորմատորին: «Ժամն անցել է,— բացականչում է նա,— մի՞թե դուք չեք զգում, որ սավառնում է ազատության ոգին, որ այն մարդիկ, որոնք զզվում են ներկայից, ձգտում են նոր կարգեր սահմանել»: Հուտտենը նույնիսկ փորձում էր մերձեցում ստեղծել Լյութերի և իր բարեկամ Զիկկինգենի միջև, բայց Լյութերը հրաժարվեց: Զիկկինգենն այն ծրագրի ներկայացուցիչն էր, որի հետ Լյութերը չէր կարող համաձայնվել:

Հենց այդ ժամանակ Հուտտենը հաճախ արտահայտում է ասպետների և քաղաքների դաշինքի գաղափարը, որպեսզի պաշտպանի ազատության և ռեֆորմացիայի գործը: Հենց այն շրջանում, երբ նա յեռանդուն պրոպագանդ էր մղում այդ գաղափարների շուրջը, տեղի ունեցավ 1522—1523 թվականների ասպետական ապստամբությունը: Ապստամբության անհաջողությունը ցույց տվեց, որ այդպիսի դաշինքն անհնարին էր և որ ասպետությունն անկման դատապարտված մի դասակարգ է: Ոչ քաղաքացիները, ոչ էլ գյուղացիները չէին ցանկանում պաշտպանել այն դասակարգին, որի հաղթությունը վերջ էր տալու ազատության և ստրկացում էր բերելու: Զիկկինգենի անկումից հետո Հուտտենը փախավ Շվեյցարիա, ապաստարան փնտրեց Բազելում, Երազմի մոտ, բայց այդ վախկոտ հումանիստը չընդունեց նրան: Հուտտենը մեկնեց Ցյուրիխ, ուր նրան ընդունեց Ցվինգլին: Այստեղ, Ցյուրիխի լճի Ուֆենաու փոքրիկ կղզում Հուտտենը վախճանվեց:

ԴԼՈՒԽ V

ՌԵՖՈՐՄԱՑԻԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ռեֆորմացիոն շարժման հիմնական ուղղությունները Յեվրոպայում

Գերմանիայում ծագած ռեֆորմացիոն շարժման պատճառները, վորոնց մասին խոսվեց վերևում, միմիայն գերմանական յերևույթ չեյին: Գերմանիայում միայն դրանք ամենացայտուն արտահայտություն գտան և այս պատճառով ռեֆորմացիան այստեղ ընդունեց հասարակական լայն շարժման բնույթ, իսկ այդ շարժումը 1522—1525 թ. թ. դասակարգային մարտերի խթան հանդիսացավ: Ուստի ռեֆորմացիայի— կաթոլիկ յեկեղեցու դեմ ուղղված այդ շարժման սկզբնավորման մոմենտները հասկանալու համար անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել Յեվրոպայում ռեֆորմացիոն շարժման ընդհանուր պատճառների վրա, ինչպես նաև այդ շարժման հիմնական ուղղությունների և այն դասակարգերի վրա, վորոնք ստեղծեցին այդ ուղղությունները:

Վաղ միջնադարում կաթոլիկ յեկեղեցին հանդես եր գալիս յերկու ուղղությամբ,— վորպես հաստատություն և վորպես իդեոլոգիա: Թե մեկ և թե մյուս դեպքում նա ֆեոդալական հասարակության մի մասն եր: Իր կառուցվածքում նա վերարտադրում եր ֆեոդալական յերարխիան և տալով այդ յերարխիայի իդեոլոգիական հիմնավորումը, հաստատում եր նրա աստվածայնությունը, վոմանց տիրապետությունը և վոմանց ստորադասությունը, վոմանց պարտականությունը՝ մյուսների օգտին ֆեոդալական վճարներ տալ և պարհակներ կատարել: Վորպես ֆեոդալական ֆորմացիայի հիմքը կազմող արտադրական հարկադրման իդեոլոգիական գործիք, նա մշակեց այնպիսի հասկացողությունների և գործողությունների մի սիստեմ, վո-

րանց ողնությամբ նա պաշտպանում էր գոյություն ունեցող կարգը: Եկեղեցու պրելատները, լինելով խոշոր ֆեոդալներ, իրենց հպատակներին հնազանդ էին պահում ֆեոդալական սովորական միջոցներով, այսինքն զանազան տեսակի բռնություններով, բայց յեկեղեցին հենց այն պատճառով էր խոշոր դեր խաղում միջին դարերում, վոր նրա տրամադրության տակ կային հարկադրման ավելի նուրբ և վոր գլխավորն է՝ ունիվերսալ միջոցներ, վորոնք իրենց ուժը տարածում էին քրիստոնեական ամբողջ աշխարհում,— իդեոլոգիական ներգործման միջոցներ, վորոնք հենվում էին մասսաների սնոտիապաշտության վրա, յեկեղեցական յերարխիայի ձեռքում գտնվող միակ փրկիչ շնորհի նկատմամբ նրանց հավատի վրա: Համառոտակի ասած՝ յեկեղեցու ուսմունքը հանգում էր այն բանին, վոր մարդը բնությունից հակամետ է մեղքին և առանց կողմնակի ողնության չի կարող հասնել սրբության այն վիճակին, վորի առկայության դեպքում նա կարող էր փրկություն հուսալ, այսինքն մահից հետո անդրշիրիմյան աշխարհում յերանություն հասնել: Մեղքից ազատվելու համար պակասող ուժը յեկեղեցին մարդուն տալիս էր առանձին մոգական գործողությունների միջոցով, վորոնք կոչվում էին խորհուրդներ. կաթոլիկ յեկեղեցում դրանց թիվը յոթն էր, վորոնցից չորսը— գլխավոր (մկրտություն, ապաշխարություն, հաղորդություն և օծում): Այդ խորհուրդների սոցիալական իմաստը դուրս է ամեն մի կասկածից. մարդկային փրկության հնարավորությունը, դրա համար անհրաժեշտ ուժը— «շնորհը» գտնվում էր տիրապետող դասակարգի և սրան պաշտպանող հաստատության— կաթոլիկ յեկեղեցու տրամադրության տակ: Հենց շնորհը համարվում էր իբրև յուրահատուկ դեղ, վորն ընդունելը, անկախ ընդունողի դիտավորությունից և հոգեկան վիճակից, առաջացնում էր համապատասխան եֆեկտ: Խորհուրդը, վորի միջոցով հավատացյալին հրամցվում էր այդ շնորհը, ներգործում էր հենց ներգործման ակտի միջոցով (ex opere operato), իսկ շնորհ տալու իրավունքը գտնվում էր միայն հատկապես ձեռնադրված մարդկանց— քահանայի և նրանից բարձր հոգևորականների ձեռքում: Մարդուն այդ շնորհից զրկելը հավասարազոր էր փրկության հույսերից նրան զրկելուն, և վաղ միջնադարում այդ զրկումը,— լիներ դա անհատական, թե տարածվեր մի ամբողջ տե-

պլատֆորմայի վրա (բանադրանք և ինտերդիկտ),— ներգործման մի սոսկալի միջոց էր եկեղեցու ձեռքում: Դասընթացիս նախորդ մասից հայտնի է, օրինակ, որ բանադրանքը և ինտերդիկտը միանգամայն իրական միջոցներ էին եկեղեցու ձեռքում, իր գույքը պաշտպանելու համար, և վանքերին ու կալվածներին տրված պարգևների բազմաթիվ հրովարտակները վերջանում էին ա՛յն մարդկանց բանադրանքի ենթարկելու սպառնալիքով, որոնք կխիզախեին ոտնձգություն անել վանքական կամ եկեղեցական հողի նկատմամբ:

Եկեղեցին, որպես ֆեոդալական հարկադրման իդեոլոգիական գործիք, առանձնապես հարկավոր էր ֆեոդալական աշխարհի քաղաքական մասնատվածության ժամանակաշրջանում: Նրա ունիվերսալությունը և նրա միջոցների զորեղությունը լրացնում էին ամբողջ ֆեոդալական դասակարգի միասնության պակասությունը: Միասնական ազգային միապետությունների կազմվելը, թագավորների կենտրոնական իշխանության ուժեղացումը,— թագավորներ, որոնք կառավարման կենտրոնացված ապարատի միջոցներով և մեծ բանակներով պաշտպանում էին ազնվականության դասակարգային տիրապետությունը,— նվազեցնում էր եկեղեցու իդեոլոգիական ֆունկցիայի անհրաժեշտությունը: Եկեղեցին, որպես սոցիալական կարգի կայունության երաշխիք, սկսում է հենց տիրող դասակարգի կողմից դիտվել իբրև չափազանց թանկ մի հաստատություն, նրա միապետական կազմակերպությունը պապի գլխավորությամբ դեմ է գնում ուժեղացող թագավորական իշխանության շահերին: Նոր, մեծ միապետությունների սահմաններում քաղաքների և ապա բուրժուազիայի զարգացման հետևանքը լինում է ընդհանրապես ֆեոդալական կարգի և ամենից առաջ դրա իդեոլոգիական արտահայտության— կաթոլիկ եկեղեցու քննադատումը: Դրա հետ միաժամանակ ուժեղանում է հերետիկոսությունը, այսինքն եկեղեցու քննադատումը ճնշվող դասակարգերի կողմից, որոնք, ժխտելով եկեղեցական ճշմարտությունները, ավելի են խորացնում իրենց քննադատությունը, շոշափելով հենց ֆեոդալական կարգի էությունը:

Այս կերպ ստեղծվում են նախադրյալներ ռեֆորմացիայի երեք հիմնական հոսանքների համար,— 1) տիրող դասակարգի կողմից եկեղեցու ռեֆորմը, որ Եվրոպայում XV դարում

կապված էր այսպես կոչված՝ յեկեղեցաժողովային շարժման հետ. 2) յեկեղեցու ռեֆորմ, վոր պահանջում էր բուրժուազիան, կամ ռեֆորմացիայի ավետարանական ուղղություն և 3) ռեֆորմացիայի հերետիկոսական-աղանդավորական ուղղություն, վոր բռնել էյին հասարակության չահագործվող դասակարգերը:

1) Յեկեղեցու այն ռեֆորմը, վորին ձգտում էր տիրող դասակարգը, կայանում էր նրանում, վոր վերջինս, խոշոր միապետության մեջ ստանալով քաղաքական մի նոր կազմակերպություն, գտնում էր, վոր թեև յեկեղեցին հարկավոր է իբրև հարկադրման իդեոլոգիական գործիք, բայց՝ նրա հարստությունները չափազանց մեծ են և դրանք կարող են օգտագործվել տիրող դասակարգի հարստացման համար, նրա օրգանի— կենտրոնացած պետության միջոցով: Այս ուղղությունը պատմականորեն հանդես է գալիս ամենից առաջ XV դարի «յեկեղեցաժողովային» շարժման մեջ: Նա առաջադրեց այն դրույթը, թե յեկեղեցու գլուխը վոչ թե պապն է, այլ յեկեղեցաժողովը (собор), վորը բարձր է պապից: Գործնական քաղաքականության լեզվով այդ նշանակում էր ուժեղացնել ազգային յեկեղեցիների դերը և ամեն կերպ սահմանափակել պապական կուրիայի գույքային պահանջները: Յեկեղեցաժողովային շարժման կապակցությամբ առաջ յեկան այնպիսի թեորիաներ, ինչպես ֆրանսիական «գալլիկանիզմը», վորը պաշտպանում էր ֆրանսիական յեկեղեցու «ազատությունները», այսինքն ֆրանսիական ազգային կղերի կողմից յեկեղեցական հարստությունների օգտագործելու իրավունքը և հռոմեական կուրիային զանազան վճարներ տալուց հրաժարվելը: Այնքան, վորքան կղերն այնպիսի կենտրոնացված պետություններում, ինչպես Ֆրանսիան կամ Անգլիան, իր վերնախավերը լցնում էր նաև տիրող դասակարգից, միանգամայն հասկանալի յե, վոր յեկեղեցու այդպիսի ռեֆորմը կարող էր բավարարել տիրող դասակարգին, ազնվականությանը, և դրանով իսկ կանխել ռեֆորմացիոն շարժման հետագա խորացումը:

2) Այլ էյին այն պահանջները, վոր ներկայացնում էր բուրժուազիան: Խնդիրն արդեն վերաբերում էր վոչ թե յեկեղեցու ռեֆորմին, վոչ թե «գլխի և անդամների փչացումից» նրա ազատվելուն,— ինչպես ասում էյին այն ժամանակ,— այլ նոր յեկեղեցի ստեղծելուն: Այդ ուղղության հիմքը կազմում էր

հետևյալ պահանջը. վոչնչացնել յեկեղեցին վորպես ֆեոդալական հաստատություն, լիկվիդացիայի յենթարկել յեկեղեցական յերարխիան և յեկեղեցական գույքերը և վերացնել յեկեղեցու մոգական-հարկադրական ներգործման ամբողջ ապարատը, ներգործում, վոր կապված եր արտատնտեսական հարկադրանքի հետ, վորպիսին իր հիմունքով հանդիսանում եր յեկեղեցու «շնորհի» կարգերի ամբողջ սիստեմը: Մի խոսքով՝ ֆեոդալական յեկեղեցու տեղը պետք է բռներ բուրժուազիայի յեկեղեցին: Ռեֆորմացիայի այս ուղղությունը կոչվում եր ավետարանական, քանի վոր նրա դոգմատիկ հիմքը կազմում եր հետևյալ սկզբունքը. ավետարանը կամ սուրբ գիրքը կրոնական ճշմարտության միակ աղբյուրն են: Այս ուղղությունն իր արտահայտությունը գտավ XVI դարի յերեք խոշորագույն ռեֆորմատորների— Լութերի, Ցվինգլիի և Կալվինի ուսմունքներում:

3) Բուրժուազիայի կողմից գոյություն ունեցող կարգի քննադատությունը և կաթոլիկ յեկեղեցու դեմ ուղղված բողոքը վոչ մի կերպ չեյին կարող բավարարել քաղաքի և գյուղի շահագործվող մասսաներին: Բայց վերջիններս XVI դարում գույքային տեսակետից խիստ տարբեր դրության մեջ եյին գտնվում: Շահագործվողների հիմնական մասսան կազմում եյին դարձյալ գյուղացիներն ու արհեստավորները, վորոնք իրենց իսկ տնտեսության բնույթի շնորհիվ անընդունակ եյին կազմակերպված դիմադրություն ցույց տալու: Այդ անդրադարձավ բնակչության տվյալ խավերում յեղած թե՛ կրոնական գիտակցության և թե՛ մանավորապես ռեֆորմացիոն շարժման վրա: Այն ժամանակ, յերբ բուրժուազիան ձգտում եր ֆեոդալական կաթոլիկ յեկեղեցու փոխարեն ունենալ իր սեփական— ավետարանական յեկեղեցին, պլեբեյական-գյուղացիական մասսաներում ռեֆորմացիոն շարժումը վերածվեց բազմաթիվ հոսանքների, վորոնց ընդհանուր նշանն եր մի ձգտում,— վերացնել ամեն մի յեկեղեցի, սոցիալ-կրոնական բողոքը վերածել աղանդավորական մանր համայնքների կազմակերպման, վորոնք մնացած մեղսոտ աշխարհից իրենց առանձնացնում են իբրև ճշմարիտ հավատացյալներ և արդարակյացներ: Հասարակական մեծ շարժումների ժամանակաշրջաններում մերթ միստիկ ու մերթ ռացիոնալիստական բնույթ ունեցած այդ աղանդները դուրս եյին գալիս իրենց աղանդավորական կեղևից և սոցիալական ճշմարտության ու արդարության

ամենայեռանդուն քարոզիչներ էյին տալիս։ Աղանդավորական համայնքներից շատերը կրում էյին պրիմիտիվ կոմունիստական կազմակերպությունների բնույթ, դավանելով հավասարար կոմունիզմ, վորը բնորոշ է XVI—XVII դ. դ. պլեբեյական բոլոր շարժումների համար։ Այնքան, վորքան ռեֆորմացիոն շարժումը չհաղորդակցվողների միջավայրում չհասավ և չեր կարող հասնել սեփական յեկեղեցու կազմակերպման և կազմակերպչական տեսակետից մնաց նույն մակարդակի վրա, վորով սոցիալական բողոքն արտահայտվում եր դեռ վաղ միջնադարում, այսինքն հերետիկոսական աղանդների մակարդակի վրա,— ավելի հարմար է այն անվանել հերետիկոսական-աղանդավորական շարժում։

Ռեֆորմացիայի առաջին, յեկեղեցադավանային հոսանքի հետ մենք ծանոթացել ենք կաթոլիկ յեկեղեցու պատմության և XV դարի քաղաքական պատմության շարադրման կապակցությամբ (տես՝ հ. I, գլ. XXIV)։ Ինչ վերաբերում է ռեֆորմացիայի յերկրորդ ու յերրորդ ուղղության, Գերմանիայի պատմությունը հենց XVI դարում տալիս է այդ տեսակետից ամենալրիվ և ուսանելի նյութեր։

Ռեֆորմացիան Գերմանիայում

Գերմանիայում ռեֆորմացիայի պատմությունը կարևոր է այն տեսակետից, վոր այտեղ ռեֆորմացիոն շարժման ամենաարմատական ուղղությունը Լութերի ուսմունքում մի անգամից ավարտված ձև ստացավ, այնքան, վորքան խնդիրը վերաբերում եր կաթոլիկ յեկեղեցին կործանելուն։ Լութերը, վորպես գերմանական բյուրգերության տիպական ներկայացուցիչ, նոր յեկեղեցու կառուցման հետ կապված իր աշխատանքում ստիպված եր մի կողմից հաշվի առնել կոնկրետ դրությունը, իշխանական ուժեղ իշխանությունը և մյուս կողմից— Գերմանիայի բյուրգերության ցրվածությունն ու սկսվող անկումը։ Այս պատճառով նրա ռեֆորմը թե կազմակերպչական և թե իդեոլոգիական-դոգմայական տեսակետից յեղավ մի կոմպրոմիս և շատ հեռու յեր զուտ բուրժուական այն մեկնաբանությունից, վոր ստացավ Ցվինգլիի և մանավանդ Կալվինի մոտ։ Բայց սկզբում, շնորհիվ այն խորը ճգնաժամի, վոր ապրում եր գերմանական հասարակությունը XVI դարում, Լութերի կոչը դեպի ռեֆորմ ցնցեց բոլորին և միավորեց մասնատված ոպոզիցիայի բոլոր բաղկացուցիչ տարրերը։ «Լութերը

Վիտտենբերգում ազդանշան տվեց շարժման, որը պետք է բոլոր դասերը նետեր իրադարձությունների ջրապտույտը և ցնցեր կայսրության ամբողջ շենքը: Թյուրինգիացի ավգուստյանի թեզերը նույն ներգործությունն ունեցան, ինչ որ կայծակի հարվածը վառոդի տակառին: Բազմազան, փոխադարձաբար խաչաձևվող ձգտումները ասպետների ու քաղաքացիների, գյուղացիների ու պլեբեյների, որոնք ձգտում էին իրենց համար ձեռք բերել իշխանների, ստորին հոգևորականության, միստիկական գաղտնի աղանդների և ուսյալ ու սատիրիկ գրական ոպոզիցիայի սուվերենությունը, սկզբնական ժամանակ նրանց մեջ ընդհանուր արտահայտություն գտան և ապշեցուցիչ արագությամբ խմբվեցին նրանց շուրջը»[1]:

Լութեր Խոսելով Լութերի մասին, պետք է հիշել, որ նրա վերաբերյալ պատմական տրադիցիան առաջանում էր այն դերի ազդեցության տակ, որ նրա ռեֆորմը խաղաց Գերմանիայում պաշտոնական իշխանական յեկեղեցու հաստատման համար: Յեկեղեցու բողոքական պատմության համար Լութերը հերոս է, մարդկային ցեղի մեծագույն բարերարներից մեկը, որ մարդու կրոնական գիտակցությանն ազատագրել է միջնադարյան կաթոլիկական բռնապաշտության և կաթոլիկական սնոտիապաշտությունների կապանքներից: Այս բնութագրում ճիշտ է միայն այն, որ Լութերը լավ է արտահայտել կրոնական պահանջները իր ժամանակի և իր դասակարգի, գերմանական մեշչանականության, որը հակամետ էր հանգիստ պրովինցիալ գոյության, փախչում էր ամեն մի հեղափոխությունից, քծնում աշխարհի հզորների առաջ, բայց այնուհանդերձ ձգտում դեպի կայուն, հաստատուն կենցաղ, ընտանեկանություն և տարրական ազնվություն,— այս բոլորը միասին վերցրած՝ Լութերի մեջ գտավ իր հիանալի արտահայտությունը: Լութերը «փոքր միջնադարյան հերոս» է, որը դարձավ սիմվոլ ամբողջ այն շարժման, որին նա ինքն այնքան էլ չէր համակրում և որի դեմ ապստամբեց, նկատելով, որ այդ շարժման հետևանքները սկսում են դավաճանել այն մեշչանականության շահերին, որի մարգարեն էր նա:

Լութերը ծնվել է 1483 թվին, Թյուրինգիայի մի հանքագոր-

1 *Маркс и Энгельс,* Соч. т. VIII, էջ 156—157:

ծի ընտանիքում: Նրա հայրը շուտով տեղափոխվեց Մանսֆելդ քաղաքը և դարձավ ունևոր բյուրգեր: Լութերը տասնութը տարեկան հասակում մտավ Էրֆուրտի համալսարանը, մի ժամանակ մոտիկ էր հումանիստների խմբակին, բայց ինքը հումանիստ չդարձավ: Ավարտելով համալսարանը, նա մտավ ավգուստյան վանք, փորձելով իրեն տանջող կասկածների լուծումը: Անձնական փրկության միտքը, դժոխքի տանջանքների հանդեպ ունեցած յերկյուղը նրան հանգիստ չէին տալիս: Այդ անձնական ապրումների հետևանքով նա ընդունեց մի վճիռ, որը դարձավ կրոնական նոր աշխարհայեցողության ֆորմուլան: Լութերի նշանակությունն էլ հենց այն է, որ նա առաջինը ձևակերպեց ամբողջ ավետարանական, այսինքն բյուրգերական ռեֆորմացիայի յերկու հիմնական դրույթները: Այդ յերկու դըրույթները կայանում են հետևյալում. 1) մարդը մեղքերից ազատվում, այսինքն՝ արդարացվում է սոսկում միայն հավատով և ոչ թե «բարի գործերով» (sola fide rectificari). 2) կրոնական ճշմարտության աղբյուր է հանդիսանում «սուրբ գիրքը» և ոչ թե «սուրբ ավանդությունը»: Այս դրույթներից յուրաքանչյուրը բացատրություն է պահանջում: «Միայն հավատով արդարանալու» սկզբունքն ուղղված էր շնորհի և խորհուրդների վերաբերյալ կաթոլիկական ուսմունքի դեմ: Մարդը թույլ է— սրա հետ համաձայն էր նաև Լութերը— և իր սեփական ուժերով նա չի կարող հասնել սրբության այնպիսի վիճակի, որով նա կարողանա մեղքերից արդարանալ և անդրշիրիմյան աշխարհում հավիտենական երանություն գտնելու հույս ունենալ: Բայց «շնորհը», որպես լրացուցիչ ուժ, որը նրան օգնում է տվյալ դեպքում, ոչ թե այն «դեղն» է, որ տացվում է խորհուրդներ կատարելով, այլ մարդու հոգեվիճակը, հավատը Քրիստոսի փրկարար զոհաբերության նկատմամբ, Քրիստոսի, որը տանջվեց ամբողջ աշխարհի համար: Այս դըրույթը, չնայելով իր ձևակերպման նեղ դոգմատիկ բնույթին, չափազանց մեծ նշանակություն ունեցավ: Մարդու փրկությունն այս դեպքում արդեն կախված չէր խորհուրդից, այսինքն տիրող դասակարգի ձեռքում գտնվող մոգական-խորհրդագործական միջոցից, այլ միայն մարդու ներքին վիճակից: Տվյալ դեպքում այլևս հարկավոր չէր ամբողջ յեկեղեցական, այսինքն ֆեոդալական իերարխիան, իսկ դրա հետ միասին ընկնում էր նաև ամ-

բողջ կաթոլիկ յեկեղեցին: Լութերը վո՛չ մինչև վերջ հրաժարվեց խորհուրդներից. թողնելով դրանցից յերկուսը— մկրտությունն ու հաղորդությունը և հետագայում ինքը թույլ տվեց խորհրդի այնպիսի մեկնաբանություն, վորը մոտիկ եր կաթոլիկական մեկնաբանության, այսինքն սկսեց հակամետ լինել այն ընդունելու վորպես «դեղ», վորը ներգործում ե անկախ խորհուրդն ընդունողի հոգեվիճակից. բայց այդ պատահեց այն ժամանակ, յերբ Լութերը և նրա հետ միասին գերմանական ամբողջ բյուրգերությունը գյուղացիական պատերազմի իրադարձությունների ազդեցության տակ մի անգամից դարձան դեպի աջ և սարսափահար փախան ապավինելու իշխանների իշխանության պաշտպանության: Համենայն դեպս, միայն հավատով արդարանալու վերաբերյալ Լութերի ուսմունքը քայքայում եր յեկեղեցին վորպես մի հաստատություն, վորը մարդուն «շնորհ» ե տալիս:

Վոչ պակաս նշանակություն ուներ ռեֆորմացիայի յերկրորդ դրույթը,— կրոնական ճշմարտության աղբյուր ե հանդիսանում վոչ թե «սուրբ ավանդությունը», այլ «սուրբ գիրքը»: Այս ուսմունքը վիժեցնում եր յեկեղեցու «դավանաբանական» հեղինակությունը:

Պատմականորեն կազմակերպված հաստատությունը, կաթոլիկ յեկեղեցին ստիպված եր իր կարգերի ու ճշմարտությունների աստվածայնությունը հիմնավորել հենց յեկեղեցու, վորպես հավիտյան գոյություն ունեցող ու յերբեք չմեռնող որգանիզմի (corpus christianum) հեղինակությամբ: Իր ծագումը նա կապում եր իր առասպելական հիմնադիր Հիսուս Քրիստոսի և նրա առաքյալների, մանավանդ Պետրոս առաքյալի հետ, վորն իբր թե հիմնել եր հռոմեական յեկեղեցին: Հսկայական քանակությամբ ամեն տեսակ կանոնները, յեկեղեցական խրատները և, վոր գլխավորն ե, բարդ, խճողված և տրամաբանության ու բանականության տեսակետից անհեթեթ քրիստոնեական դոգման— այս բոլորը միասին աստիճանաբար աճեց և կազմում եր այն, ինչ վոր այն ժամանակ կոչվում եր «յեկեղեցու սուրբ ավանդություն», վորպես տարբերություն «սուրբ գրքից», այսինքն հին և նոր կտակարանի կանոնական գրքերից: Յեկեղեցու հեղինակությունը, վորի հիմքը կազմում եր «սուրբ ավանդությունը», հավատո ուսմունքի գործերում սկսեց հետզհետե վերածվել

նրան գլխավորողի— Հռոմի պապի անվերապահ հեղինակության: Հավատո ուսմունքի գործերում պապի անսխալականության սկզբունքն առաջին անգամ ձևակերպվեց Տրիդենտի յեկեղեցաժողովում (1545—1563 թ. թ.) և վերջնականապես ճանաչվեց միայն Վատիկանի յեկեղեցաժողովում (1869—1870 թ. թ.), բայց գործնականում այն առաջ էլ գոյություն ուներ:

Ճշմարտության աղբյուր հայտարարելով միայն «սուրբ գիրքը», Լութերը կանչում էր դեպի հետ, դեպի քրիստոնեական հավատի սկունքները (ad fontes), բայց նա այնու հանդերձ ամբողջովին ժխտում էր պապի հեղինակությունը, հետևաբար կաթոլիկ յեկեղեցու ամբողջ ուսմունքը: Հենց «սուրբ գիրքը», այսինքն հին կտակարանի գրքերը, չորս ավետարանները, «գործք առաքելոցը և թուղթք առաքելոցը»,— չափազանց բարդ և մութ այդ աղբյուրը,— թույլ էր տալիս ամենատարբեր մեկնաբանություններ և. անգամ սոցիալ-ռեֆորմատորական հետևություններ, ընդհուպ մինչև պլեբեյա-կոմունիստական գաղափարների հիմնավորումը: «Սուրբ գիրքը» միջնադարի նախորդ հարյուրամյակներում ևս մեծ չափով տարածվում էր հերետիկոսների մեջ,— այնտեղ վերջիններս գտնում էին քրիստոնեական վաղ համայնքների «քրիստոնեական կոմունիզմի» հաստատումը և կրոնական հիմնավորումը, «քրիստոնեական կոմունիզմ», որը նրանց համար իդեալ էր ու ուղղություն էր տալիս նրանց սեփական գործունեությանը:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, որ բյուրգերական ռեֆորմատոր Լութերը հեռու յեր այդպիսի հետևություններից: Մինչդեռ նրա յերկու սկզբունքները թույլ էին տալիս նման հետևություններ անել: Այս պատճառով Լութերի ուսմունքում կարևոր են ոչ միայն այն սկզբունքները, որոնք քայքայում էին կաթոլիկությունը, այլև այն սկզբունքները, որոնք կանխում էին չափից դուրս հեղափոխական հետևությունների հնարավորությունը: Նրա մոտ այդպիսի սկզբունքները միքանիսն են: Դրանցից գլխավորներն են՝ 1) հավատացյալների համայնքի յեկեղեցական կազմակերպությունը, այսինքն միատեսակ հավատո ուսմունքի և պաշտամունքի պարտադրականությունը կրոնական համայնքի բոլոր անդամների համար (regula fidei), 2) ամեն մի քրիստոնյայի ու յեկեղեցական ամբողջ համայնքի աշխարհիկ իշխանությանը յենթարկվելու սկզբունքը: Մարդը

ներքուստ, հոգեպես բոլորովին ազատ է, բայց արտաքուստ նա պետք է ենթարկվի գոյություն ունեցող իշխանություններին (de libertate christiana, 1521 թ.)։ Այսպես է Լութերի ամբողջ ռեֆորմի կիսատկատար բնույթը, որ մերկացնում է գերմանական բյուրգերության ստորաքարշությունը Գերմանիայում յեղած իշխանական իշխանության առաջ։

1517 թվականին Լեվոն X պապը Մայնցի արքեպիսկոպոս Ալբրեխտին իրավունք տրամադրեց ինդուլգենցիաներ վաճառելու, փոխարենը նրան հնարավորություն տա վճարելու Ֆուգգերներին տրվելիք պարտքը, որ յեպիսկոպոսը վերցրել էր պապին աննատները վճարելու համար։ Այդ վաճառքի յեկամուտների կեսը պետք է գնար Հռոմ։ Մայնցի արքեպիսկոպոսի գործակալը, միանձն Իոհանն Տեցելը Ֆուգգերների գործակատարի ուղեկցությամբ շրջագայում էր ամբողջ յերկրում և ամենաանամոթաբար մեծաքանակ և հատով մեղքերի թողություն էր ծախում։ Զայրացած Լութերը 1517 թվականի հոկտեմբերի 31-ին ինդուլգենցիաների վաճառքի դեմ ուղղված իր առարկությունները փակցրեց Վիտտենբերգի մայր-յեկեղեցու դռան։ Լութերի այդ «95 թեզերը» Գերմանիայում ռեֆորմացիոն շարժման սկիզբ դըրին։ Արդեն այդ թեզերում մենք գտնում ենք միայն համառոտ արդարանալու նրա ուսմունքի առաջին ուրվագիծը։ Բայց Լութերը հեռու չէր պապի դեմ վճռականապես հանդես գալուց։ 50-րդ թեզում նա հայտարարում էր, որ «յեթե պապն իմանար այն գեղծումների մասին, վորոնք կատարվում են ինդուլգենցիաները վաճառելու ժամանակ, նա կգերադասեր, վոր սուրբ Պետրոսի տաճարը հիմնովին այրվեր, քան այն կառուցվեր քրիստոնյաների վոսկորներից և արյունից»։ Սակայն Լութերի ցանկությունը— կապ պահպանել կաթոլիկ յեկեղեցու և պապության հետ— չէր կարող կասեցնել այն իրադարձությունները, վորոնք զարգանում էին նրա կամքից անկախ։ Ամբողջ ազգը շարժման անցավ։ Յուրաքանչյուրը թեզերում տեսնում էր իր ձգտումների ձևակերպումը և առանձին բովանդակություն էր տալիս նրանց։ Աշխարհիկ իշխանները կառչեցին այդ թեզերից, դրանք համարելով յեկեղեցական հողերը իրենց ոգտին գրավելու հիմք։ Ասպետությունը դրանց մեջ տեսնում էր կայսերական ուժեղ իշխանությունը և այսպես կոչված՝ «ազնվականական դեմոկրատիան» վերականգնելու գործիք, իհարկե չհրաժարվե-

յով յեկեղեցական հարստությունների հաշվին օգուտ քաղելուց: Ժողովրդական մասսաները թեզերը հասկացան վորպես պայքարի կոչ ընդդեմ ֆեոդալական ամբողջ կարգի, ընդդեմ բոլոր իշխանությունների և ամբողջ յերարխիայի: Թեզերն իրենց խոսկական բովանդակությամբ ինքնին դուրս չեյին գալիս բյուրգերական ոպոզիցիայի շրջանակներից, ուղղված լինելով միայն յեկեղեցական ֆեոդալիզմի դեմ: Բայց առաջին ետապում Լութերի ոպոզիցիան, վորը նպատակ ուներ վերացնել յեկեղեցու հեղինակությունը, «չեր բացառում ավելի ռադիկալ վոչ մի ուղղությյուն»[1]:

Հռոմեական կուրիայի վերաբերմունքը դեպի Լութերի յելույթը

Հռոմեական կուրիան սկզբում ուզում եր արագությամբ մեջտեղից վերացնել Լութերին: Բայց Լութերը, գտնվելով ամբողջ բազմազան ոպոզիցիայի կենտրոնում, զգաց, վոր հզոր հենարան ունի և հաստատուն դիրք գրավեց: 1519 թ. հունիսին վերսկսվեց պայքարը Լութերի ու պապի միջև, Լութերի այն յելույթի կապակցությամբ, վոր նա ունեցավ իր կողմնակից Կարլշտադտի և աստվածաբան Իոհանն Եկկի— բանավեճի մեծ վարպետի միջև յեղած դիսպուտում: Եկկի պլանն այն եր, վոր բռնի Լութերին և մերկացնի նրան հուսյան հերետիկոսության մեջ: Բայց Լութերը, վոր Եկկի կարծիքով, վերջապես, բռնվել եր իբրև Հուսի կողմնակից, կտրուկ հայտարարեց, վոր Հուսի ուսմունքում յեղել են իսկական քրիստոնեական և ավետարանական դրույթներ, վոր Կոստանցայի յեկեղեցաժողովը, դատապարտած լինելով Հուսին, չի կարող անսխալական համարվել: Լութերի այդ հայտարարությունը նշանակում եր պարզապես խզել կապը հռոմեական կուրիայից: Լութերի 1519—1520 թ. թ. յերկերում այդ խզումն ավելի խորացավ:

Հումանիստական շրջանների վերաբերմունքը դեպի Լութերը

Լութերի այդ ժամանակվա յերկերը նրա համար ժողովրդականություն ստեղծեցին հումանիստական շրջաններում: Նույնիսկ Երազմ Ռոտերդամցին, վոր ընդհանրապես դատապարտում եր Լութերին, կաթոլիկ յեկեղեցու հետ իր կապը խզելու համար,— այժմ նրա մասին համակրանքով եր արտահայտվում, թեպետ

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, եջ 132:

իրեն հատուկ զգույշ ձևով: Լութերի նկատմամբ մի առանձին էնտուզիազմ ցուցաբերեց Գերմանիայի ամենառադիկալ հումանիստներից մեկը— Ուլրիխ ֆոն Հուտտենը, որը գնահատեց ռեֆորմացիայի քաղաքական նշանակությունը և հույս ուներ այդ ռեֆորմացիան գործիք դարձնել՝ իրականացնելու իր մարտական ծրագիրը— կայսրության վերակազմումը հոգևոր ապետության շահերի: Հետագայում Լութերը մերժեց Հուտտենի առաջարկը՝ ժամանել Զիկկինգենի դղյակը՝ մասնակցելու ապստամբության նախապատրաստման: Նա էլ ավելի քիչ էր հակամետ ուժեղացող գյուղացիական շարժմանը համակրելու: Սակայն սկզբնական ժամանակ, քանի դեռ նրա շուրջը համախմբված բազմազան ոպոզիցիան դեռ չէր դրսևորել իր հեղափոխական ձգտումը, Լութերը մարտական տրամադրություն ուներ: Այդ ժամանակ «Լութերի գյուղացիական ուժեղ բնավորությունը իրեն ցուցաբերում էր ամենաբուռն կերպով»[1]:

Լութերի պայքարը հռոմեական կուրիայի դեմ

«Հռոմանիստների մոլեգին կատաղության» դեմ Լութերը միակ միջոցը համարում էր այն, որ թագավորներն ու իշխանները նրանց դեմ ուժ գործադրեն և «զենքով, այլ ոչ թե խոսքերով» վերջ տան նրանց խաղին:

«Եթե մենք կախում ենք գողերին,— շարունակում է նա,— գլխատում ավազակներին, այրում հերետիկոսներին, ապա ինչո՞ւ զենք վերցրած չհարձակվել անառակության այդ պարագլուխների, այդ կարդինալների, պապերի և հռոմեական Սոդոմի ամբողջ վոհմակի վրա... ինչո՞ւ ձեռներս չներկենք նրանց արյունով, որպեսզի ազատվենք նրանցից, ինչպես ամենավտանգավոր հրդեհից»:

Սակայն Լութերի ծայրահեղ ռադիկալիզմի այդ ժամանակաշրջանը երկար չտևեց: Հենց որ պարզվեց, որ յուրաքանչյուր դասակարգային խմբավորում իր ուզած բովանդակությունն է տալիս ռեֆորմացիայի թեզերին, Լութերը սկսեց բյուրգերական չափավոր ռեֆորմի վոգով ճշտել իր ուսմունքը: Նա «սկսեց... քարոզել խաղաղ զարգացում և պասիվ դիմադրություն»[2]: Ամեն մի բանի զիջում կարող էր «շարժումից հե-

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 132:

2 *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 133:

ացնել իշխաններին, ազնվականությանը և շատ քաղաքներ ու կարող էր հասցնել յերկու հնարավոր հետևանքներից միայն մեկին,— կամ գյուղացիների և պլեբեյների բյուրգերական կուսակցության դեմ տարվելիք հաղթանակին, կամ կաթոլիկական ռեստավրացիայի կողմից բոլոր առաջադեմ կուսակցությունների ճնշման»[1]: 1520 թ. սեպտեմբերի 21-ին հրապարակվեց պապի հունիսի 15-ի կոնդակը Լութերին բանադրանքի յենթարկելու մասին: Լութերը դրան պատասխանեց մի շարք խիստ հոդվածներով, իսկ 1520 թ. դեկտեմբերի 10-ին կոնդակն այրվեց Վիտտենբերգի համալսարանի բակում, ուսանողների ներկայությամբ:

Կարլոս V-ի վերաբերմունքը դեպի ռեֆորմացիան

Մաքսիմիլիանից հետո 1519 թվից Գերմանիայի կայսր դարձավ նրա թոռ Կարլոս V-ը, վորը բացի Մաքսիմիլիանի առաջվա տիրություններից, իր տիրապետության տակ համախմբեց նաև Իսպանիան և հարավային Իտալիան, Սիցիլիայի և Սարդինիայի հետ միասին, ու նոր հայտնագործված Ամերիկայում գտնվող տիրությունները: Կարլոս V-ի տերությունն այնքան մեծ էր, վոր նրա համար գերմանական շահերը հետին տեղ եյին բռնում: Գերմանական գործերից նրա ուշադրությունն առանձնապես շեղում եյին Իտալիայում Ֆրանսիայի դեմ մղած պատերազմները: Այդ «համաշխարհային քաղաքականության» տեսակետից Կարլոս V-ը ռեֆորմացիայի մեջ տեսնում էր մի խոչընդոտ, վորը խանգարում էր կաթոլիկ աշխարհում նրա ունեցած հզորության, և մի գործոն, վորն ուժեղացնում էր նրա ֆրանսիական հակառակորդին: Մյուս կողմից Կարլոս V-ի համար պարզ էր, վոր աշխարհիկ իշխանների մի մասը, հարելով ռեֆորմացիային, ձգտում է յեկեղեցական հողերը գրավելու միջոցով ուժեղացնել իր տերիտորիալ իշխանությունն ի հաշիվ կայսերական իշխանության: Այս պատճառով Կարլոս V-ն անցավ կաթոլիկ յեկեղեցու կողմը:

Վորմսի եդիկտը

1521 թվի գարնանը Լութերը կայսեր կողմից կանչվեց Վորմսի սեյմը, բայց սեյմում էլ նա մնաց իր դիրքերում և չուզեց հրաժարվել դրանցից: 1521 թվի մայիսի 8-ին

1 *Маркс и Энгельс* Соч. т. VIII, էջ 134:

Նրա դեմ հրատարակվեց կայսերական էդիկտը (Վորմսի էդիկտը), որը դատապարտում էր Լութերին ինչպես հերետիկոսի: Սակայն Լութերին հաջողվեց ազատվել, որովհետև սաքսոնյան կուրֆյուրստը նրան թաքցրեց իր ամրոցում, Վարտբուրգում: Այստեղ Լութերն աստվածաշունչը թարգմանեց գերմաներեն. «Աստվածաշնչի իր թարգմանությամբ,— գրում է Էնգելսը,— Լութերը պլեբեյական շարժմանը տվեց մի հզոր գործիք... Գյուղացիներն այդ գործիքը բազմակողմանիորեն օգտագործեցին ընդդեմ իշխանների, ազնվականության և տերտերների»[1]: Իհարկե այդ չէր, որ նկատի ուներ Լութերը: Այնուամենայնիվ աստվածաշնչի թարգմանությունը և վերևում հիշված փաստերը (կոնդակն այրելը, կայսրին դիմադրելը) ցույց են տալիս, որ դեռ 1521 թվին Լութերն աշխատում էր դեռ խաղաղ ռեֆորմացիայի շրջանակներում օգտագործել ազգի բոլոր ուժերը, իշխաններից սկսած մինչև ժողովուրդը:

Ռեֆորմատորի գործունեության մեջ նշանակալից բեկում կատարվեց 1522 թվին, երբ նա, վերադառնալով Վիտենբերգ, սկսեց առանձնապես յեռանդուն կերպով հանդես գալ ապստամբության դեմ: Այս կտրուկ շրջադարձի պատճառն այն էր, որ Գերմանիայում սկսվել էր բացահայտ հեղափոխական շարժումը:

Գյուղացիական-պլեբեյական բանակը

Ամենից առաջ մասնանշենք ռեֆորմացիայի այն առանձին ըմբռնումը, որը դրսևորվեց գյուղացիական-պլեբեյական բանակում և իր արտահայտությունը գտավ Թոմաս Մյունցերի ուսմունքի և գործունեության մեջ: Թոմաս Մյունցերն այն ժամանակվա ժողովրդական ստորին խավերի շարժմանը հեղափոխական պարզ ծրագիր տվեց: Մյունցերն ամենից առաջ մեծ ազդեցություն ունեցավ անաբապտիստների աղանդավորական շարժման իդեոլոգիայի և տակտիկայի վրա:

Անաբապտիստները

Անաբապտիստների (այսինքն կրկնակնունքների, որոնք պահանջում էին քրիստոնյաներին մկրտել հասուն տարիքում) աղանդները, որ կազմված էին գլխավորապես արհեստավորներից ու յենթավարպետներից, գոյություն ունեին կայսրության զանազան մարզերում, ամենից առաջ Սաքսո-

[1] Маркс и Энгельс. Соч. т. VIII, էջ 135.

նիայում, Ֆրանկոնիայում, Շվեյցարիայում և Վերին Շվաբիայում: Անաբապտիստների զանազան հոսանքների մեջ կային և այնպիսի հոսանքներ, վորոնք քարոզում եյին գույքի ընդհանրություն, բայց սրանք էլ սկզբում դուրս չեյին գալիս միջնադարյան աղանդավորության իդեոլոգիայի շրջանակից, քանի վոր գույքի ընդհանրության քարոզը նրանք հասկանում եյին վաղ քրիստոնեության իմաստով, այսինքն աշխարհից փախչելու իմաստով և վոչ թե իբրև նոր հասարակարգի հիմք: Մի այդպիսի ռադիկալ անաբապտիստական աղանդ գոյություն ուներ Ցվիկկաույում (Սաքսոնիայում, Չեխիային մոտիկ), մանածագործական յենթավարպետ Նիկլաս Շտորխի ղեկավարության տակ: Ռեֆորմացիայի և հասարակական շարժման վերելքի ազդեցության տակ Ցվիկկաույի անաբապտիստները «հեզության և սանձության» տակտիկայից,— վոր մինչ այդ բնորոշ եր նրանց համար,— անցնում եյին բացահայտ ոպոզիցիայի տակտիկային, բայց մինչև Մյունցերը նրանք շարունակում եյին մնալ իդեոլոգիական հին դիրքում: Նրանք քարոզում եյին ահեղ դատաստանի և հազարամյա արքայության մոտենալը. նրանց մոտ ընդունված եյին տեսիլները, երազները և մարգարեական վոգին: Միայն Մյունցերի հետ հանդիպելուց հետո նրանց խիլիաստական[1] քարոզը նոր բովանդակություն ստացավ: Հանձին Մյունցերի վորոշ ժամանակով պլեբեյական շարժման ղեկավարությունը ստանձնում է նախապրոլետարիատի ամենառաջավոր, թեև ամենասակավաթիվ մասը:

Թոմաս Մյունցեր Թոմաս Մյունցերի ծագման մասին շատ քիչ տվյալներ կան: Դժվար է մատնանշել նույնիսկ նրա ծննդյան ճիշտ թվականը (1490 և 1493 թ. թ. միջև): Կաթոլիկ յեկեղեցու դեմ նա պայքարի դուրս յեկավ Լութերից առաջ: Գալլում լինելով լատինական դպրոցի դասատու, Մյունցերն այնտեղ կազմակերպեց գաղտնի միություն Մագդեբուրգի արքեպիսկոպոսի և

---

1 Խիլիաստները (հունարեն χίλιοι—հազար) կամ միլլենարիաները (լատիներեն mille—հազար) դեռ մեր թարեհաշվի I դարում առաջացրած մի ուսմունքի կողմնակիցներն եյին: Այդ ուսմունքի համաձայն, աշխարհի վախճանից առաջ յերկրում կհաստատվի աստծո հազարամյա արքայություն, վորտեղ ընտրյալները կապրեն ինչպես դրախտում:

առհասարակ յեկեղեցական կարգերի դեմ։ Մյունցերի քարոզը սուր բնույթ էր կրում և հենց սկզբից կապված էր մասսաների պայքարի հետ ընդդեմ հարուստների։ 1515 և 1520 թվականների միջև Մյունցերը ռեֆորմիստներից ազատվելու համար հաճախ փոխում էր իր բնակավայրը։ 1520 թվին նա տեղափոխվեց Ցվիկկաու քաղաքը և իր քարոզների համար ընտրեց այն յեկեղեցին, վորտեղ հավաքվում եյին Շտորխի ղեկավարած անաբապտիստական աղանդին պատկանող յենթավարպետները։ Մյունցերն այդ անաբապտիստներին յենթարկեց իր ազդեցության։ Ցվիկկաույի անաբապտիստներն այստեղ մասնակցում են քաղաքի խորհրդի դեմ ուղղված ապստամբության, վոր նախապատրաստված էր Մյունցերի ագիտացիայով։ Ռեֆորմիստների հետևանքով Մյունցերը ստիպված էր հեռանալ Ցվիկկաույից, իսկ նրա ամենայեռանդուն հետևորդները ցրվեցին ամբողջ Գերմանիայում։ 1522 թվից Մյունցերն ապրում է Ալշտեդտում (Թյուրինգիա), Մանսֆելդի հանքարանների մոտ և մեծ հարգանք է վայելում հանքագործների կողմից։ 1524 թվին սրբապատկերների դեմ Մյունցերի քարոզների ազդեցության տակ ամբոխն ավերեց Ալշտեդտի մոտ գտնվող մի մատուռ։ Կուրֆյուրստը Մյունցերին ձերբակալելու հրաման տվեց, բայց հրամանը չեր կարող կատարվել, վորովհետև հանքագործ բանվորներն ամբողջ ռայոնից գլուխները ձեռներին հավաքվեցին ստուգելու, թե «արդյոք վորևէ վտանգ չի՞ սպառնում մագիստրոսին»։ Իսկ յերբ սաքսոնյան իշխանները հրամայեցին Մյունցերին տանել իրենց մոտ, նա հանքագործների առաջ արտասանեց մի ճառ, վորը լեցուն էր իշխանների ու տերերի դեմ ուղղված խիստ հարձակումներով․ «Ախ, պարոններ, ա՛յ թե ինչպես տերն ինքը գավազանով ուզում է խփել հին պուտուկներին…»

Վերջում Մյունցերը կոչ էր անում վոչնչացնել «անաստված կառավարիչներին», նկատի ունենալով իշխաններին, վորոնք պաշտպանում են չարագործողներին։ Այնուհետև Մյունցերը հրապարակեց «Կեղծ հավատի մերկացումը» իր յերկը, վորը կոչ էր անում տապալել իշխաններին, դատարանի իրավունքը հանձնել «խեղճ ու հասարակ մարդկանց»։ Իշխանների դեմ ուղղված իր ցասումը Մյունցերն այստեղ պատճառաբանում է նրանով, վոր նրանք աջակցում են ժողովրդի ճնշման։ Հարուստներին, «չարագործներին, վորոնք ծառայի յեն վաշխառությանը», նա

բացահայտ կերպով սպառնում է ժողովրդի ապստամբությամբ:

Դժվար չէ տեսնել, վոր Մյունցերի համար կրոնական քարոզը և աստվածաշնչից վերցված ցիտատները լոկ արտաքին ձևն էին այն պրոպագանդայի, վոր նա մղում էր հարուստների դեմ աղքատների ապստամբության միջոցով սոցիալական հեղաշրջում առաջացնելու համար: Մյունցերը հարձակվում է «քավոր համբույրի» և «Վիտտենբերգի կուշտ ապրող արարածի», այսինքն Լյութերի վրա, այն պատճառով, վոր վերջինի մոտ հավատը զուգակցվում է հարստությունը պահպանելու հետ: «Նա յերևակայում է, թե կարող է անցկացնել իր խորամանկությունները, պահպանել իր պերճանքն ու հարստությունը և այնուամենայնիվ ճշմարիտ հավատ ունենալ»:

Այսպիսով հանձին Լյութերի և Մյունցերի մեր առաջ հանդես են գալիս յերկու հակադիր դասակարգերի իդեոլոգները: «Լյութերը և Մյունցերը,— գրում է Էնգելսը,— իրենց դոկտրինաներով, բնավորություններով ու յելույթներով հանդիսանում են իրենց կուսակցությունների լիակատար մարմնացումները»[1]: Մենք տեսնում ենք, վոր կրոնի ու աշխարհիկ իշխանության վերաբերյալ նրանց հասկացողությունները տրամագծորեն հակառակ են: Լյութերը, բյուրգերական ռեֆորմի իդեոլոգը, իր նոր հավատը և յեկեղեցին յենթարկում է աշխարհիկ իշխանության հեղինակության և հետզհետե դառնում «իշխանական ծառա», ինչպես արտահայտվել է Մարքսը: Դա այն ձևն է, վորով բյուրգերությունը համաձայնության է գալիս գոյություն ունեցող կարգի հետ, հանդես գալով միայն յեկեղեցական ֆեոդալիզմի դեմ: Իսկ Մյունցերի համար կրոնական գաղափարը կայանում է լիակատար ազատության, գոյություն ունեցող բոլոր իշխանությունները ժխտելու, ֆեոդալական հասարակության ամբողջ կարգի դեմ վճռականորեն պայքարելու մեջ: Այս պատճառով նա վոչ միայն մերժում է ֆեոդալիզմի հետ համաձայնության գալը, այլև բացասում ամեն մի դասակարգային հասարակություն և ամեն մի շահագործում, և այսպիսով «յերազների մեջ» կռահում գալիք անդասակարգ հասարակությունը: Նրա «աստծո արքայությունը»— այդ կոմունիզմ է, վոր կանխագուշակված է յերևակայությամբ, քանի վոր դեռ չկային նա-

---

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. VIII, էջ 132:

խադրյալներ կոմունիստական հասարակության համար: Այս պատճառով Էնգելսն այնքա՛ն բարձր եր գնահատում պրոլետարական իդեոլոգիայի այդ սաղմերը և գտնում եր, վոր Մյունցերն իր թեորետիկական բագաժով չի զիջում 1848 թվի կոմունիստական աղանդներից շատերին:

Այսպես ուրեմն, Մյունցերի կրոնական պրոպագանդան միայն մի միջոց եր սոցիալական հեղաշրջման, շահագործումը լիովին վերացնելու և շահագործողներին վոչնչացնելու պրոպագանդայի համար: Մյունցերն այնու հանդերձ, վորպես պլեբեյական հեղափոխական, մինչև վերջ հետևողական է: Նա մերժում է աստվածաշնչի «արտաքին» խոսքի դրվատումը Լութերի կողմից (Schrift) և դրա փոխարեն առաջադրում է «ներքին խոսքի» գաղափարը, այսինքն յուրաքանչյուր մարդու աստծու հայտնության գաղափարը, հայտնություն, վորը արտահայտվում է նրա բանականության մեջ: «Հավատը (Մյունցերի համար— խմբ.),— ասում է Էնգելսը,— վոչ այլ ինչ է, բայց յեթե բանականության արթնացումը մարդու մեջ, ուստի հավատ կարող եյին ունենալ նաև հեթանոսները»[1]: Այս պատճառով Էնգելսը յեզրակացնում է, վոր «Մյունցերի կրոնական փիլիսոփայությունը մոտենում եր աթեիզմին»[2]:

Գյուղացիական–պլեբեյական բանակը ստացավ իր առաջնորդը և իր ծրագիրը: Վրա յեր հասնում գործողությունների ժամանակը: Առաջինը վոտքի յելան ասպետները:

Ասպետական ապստամբությունը

1522 թվի ոգոստոսին ասպետության առաջնորդ Ֆրանց ֆոն Զիկկինգենը Լանդաույում կազմակերպեց Հռենոսյան մարզի և մերձակա վայրերի ազնվականության համագումարը: Այդ համագումարում ստորագրվեց «Յեղբայրական համաձայնության» խարտիան, վորը հանդիսանում եր ասպետական ուժերի համախմբման մի փորձ: Զիկկինգենը հարձակման օբյեկտ ընտրեց Տրիրի արքեպիսկոպոս Ռիխարդին, գլխավորապես այն պատճառով, վոր նա այդ արքեպիսկոպոսին համարում եր հարևան իշխաններից և կայսրից առանձնացած: Ստանալով ոգնություն Հռենոսյան մի քանի ասպետներից, այդ թվում նաև հենց Տրիրի արքեպիսկոպոսի վա-

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, եջ 138.

[2] Նույն տեղը.

ամներից, Զիկկինգենը սեպտեմբերի սկզբին ժամով արքեպիսկոպոսի տիրությունները: Այդ առթիվ հրապարակած մանիֆեստում Զիկկինգենն ընդգծում էր այդ պատերազմի տարբերությունը սովորական ֆեոդալական պատերազմներից և մատնանշում էր նրա ազգային բնույթը: Վորպեսզի աշխարհիկ իշխանները ձեռնպահ մնային Ռիխարդին օգնելուց, մանիֆեստը հայտարարում էր, թե ապստամբությունն ուղղված է տերտերների դեմ: Սեպտեմբերի 8-ին Զիկկինգենը սկսեց պաշարել Տրիր քաղաքը, հույս դնելով քաղաքացիների համակրանքի վրա: Ռմբակոծելով քաղաքը, նա միևնույն ժամանակ նամակներ էր ուղարկում այնտեղ: Սակայն ամեն ինչ ապարդյուն էր: Տրիրցիները Ռիխարդի կողմն էին: Բրաունշվեյգից օգնության յեկող ուժերի ճանապարհը կտրեց լանդգրաֆ Ֆիլիպպ Հեսսենցին, վոր յեկել էր փրկելու Տրիրի արքեպիսկոպոսին: Հինգ անգամ գրոհ տալուց հետո Զիկկինգենը ստիպված էր հրաժարվել պաշարումից և նահանջել: Հարձակման անցած իշխաններն ավերեցին Զիկկինգենի ամրոցը— Լանդշտուլը, իսկ նրան մահացու վիրավորեցին: Հուտտենը փախավ:

Այդ ապստամբության վիժումը նշանակում էր, վոր վիժում էն ազնվականության փորձերը՝ իշխանների նկատմամբ ինքնուրույն դիրք գրավելու: Գյուղացիական պատերազմը, վոր տեղի ունեցավ ասպետական ապստամբությունից հետո և սպառնալիքի տակ դրեց ազնվականության կյանքի ճորտատիրական ամբողջ բազան,— ազնվականներին վերջնականապես յենթարկեց իշխաններին և վերջ տվեց նրանց յերևակայական հեղափոխականության: «Գերմանական ազնվականությունը,— գրում է Էնգելսը,— իշխանների գերագույն իշխանության յենթակա գյուղացիների շահագործումը գերադասեց ազատագրված գյուղացիության հետ բացահայտ դաշինքի օգնությամբ իշխաններին և տերտերներին տապալելուն»[1]:

1525 թ. գյուղացիական պատերազմը

Գերմանիայում XVI դարում հասարակական շարժման գագաթնակետը յեղավ 1524—1525 թ. թ. գյուղացիական պատերազմը: 20-ական թվականների սկզբից պլեբեյական շարժումը Մյունցերի և նրա եմխարների ազդեցու-

---

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. VIII, էջ 161:

թյան տակ ավելի և ավելի ահարկու չի դառնում։ Մասսայական ապստամբության պրոպագանդն այն հետևանքն ունեցավ, որ հարավ-արևմտյան Գերմանիայի մի շարք վայրերում միաժամանակ ապստամբություններ սկսվեցին, որ ցույց եր տալիս կազմակերպիչների ազդեցությունը։

Վերջիններս փորձում եյին միասնություն ստեղծել առանձին ջոկատների ու ռայոնների գործողությունների միջև։ Սակայն 1524—1525 թ. թ. գյուղացիական պատերազմի ժամանակ յերեք հիմնական ռայոններում—1) շվաբական-շվարցվալդյան, 2) Ֆրանկոնյան և 3) Թյուրինգյան-սաքսոնյան ռայոններում ապստամբությունները այնուամենայնիվ մնում եյին միմյանցից կտրված։ Այդ ավելի ևս վերաբերում ե Ելզասին, Տիրոլին և մերձալպյան մյուս ռայոններին։

Շվաբյան-շվարցվալդյան ռայոնը։ Մյունցերի դերը

Շվաբյան—շվարցվալդյան ռայոնում, շվեյցարական սահմանի մոտ առանձնապես շատ եյին թե շվեյցարական և թե սաքսոնական անաբապտիստները, որոնք հանձին Մյունցերի գտան իրենց առաջնորդին և կազմակերպչին։ 1522 թվից Մյունցերը, ապրելով Թյուրինգիայում, փորձում եր այստեղ ևս կազմակերպել «գաղտնի միություն», ապստամբություն նախապատրաստելու համար։ Լութերը, որ հետևում եր Մյունցերի գործունեյության, աշխատում եր նրան մատնել սաքսոնական իշխանություններին։ 1524 թվի օգոստոսին գտան Մյունցերի կազմակերպության հետքը և նա ստիպված եր փախչել Թյուրինգիայից։ Նյուրնբերգում, ուր դրանից հետո ժամանել եր նա, Լութերի դեմ կազմեց մի խիստ պամֆլետ և այս պատճառով իշխանություններն ուշադրություն դարձրին նրա վրա։ Ուստի նա ստիպված յեղավ այնտեղից ել փախչել։ Նա Շվաբիայի վրայով մեկնեց Ելզաս և Շվեյցարիա և ապա Շվարցվալդի վրայով—նորից Թյուրինգիա։ Անցնելով այս ռայոնից, Մյունցերը որոշ ժամանակ մնաց Գեգաուում և Կլետհաուում և, շրջագայելով մերձակա ռայոններում, նշանակում և հրահանգում եր իր եմիսարներին։ «Մյունցերի այդ պրոպագանդիստական շրջագայությունն, անկասկած, եյական ազդեցություն գործեց ժողովրդական կուսակցության կազմակերպման, նրա պահանջների պարզ սահման-

ման և, վերջապես, 1525 թվի ապրիլին ապստամբության ընդհանուր պոռթկման վրա»[1]:

«Նամակ-թերթեր»

Այդ շրջագայության ժամանակ (1524 թվի վերջին կամ 1525 թ. հունվարին) Մյունցերի կողմնակիցների շրջանում կազմվեց մի փաստաթուղթ, որը հետո դարձավ ապստամբած գյուղացիների ամենահեղափոխական տակտիկական ծրագիրը: Դա — «Նամակ-թերթերն» են («Artikelbrief»): Նամակում մատնանշվում էր, որ անհրաժեշտ է կազմակերպել քրիստոնեական միություն, որպեսզի ձեռք բերել «աստվածային իրավունք» (մենք արդեն վերևում տեսանք, թե Մյունցերն ինչ իմաստ էր տալիս այդ հասկացողությանը): Բոլոր նրանց, ովքեր քրիստոնեական միությունից հեռու էին մնում, այդ փաստաթուղթը համարում էր թշնամիներ, որոնք յենթակա յեն «աշխարհիկ բանադրանքի», այսինքն բոյկոտի: «Նամակ-թերթերում» կենտրոնական տեղ էր բռնում «Ամրոցների, վանքերի և քահանայական ծխերի մասին» հոդվածը: «Դավաճանության, բռնության և անարդարության այդ որջերը հայտարարվում էին աշխարհիկ բանադրանքի յենթակա: Ազնվականների և տերտերների հետ հաշտությունը հնարավոր է միայն այն դեպքում, յեթե նրանք հրաժարվեն ամրոցներից և վանքերից, փոխադրվեն սովորական տները և ապրեն ինչպես բոլորը: Այդ հավասարազոր էր տերերի հետ համաձայնության գալուց հրաժարվելուն: Փաստաթուղթը չէր պարունակում ոչ մի կոնկրետ առաջարկ տերերի հետ վիճելի հարցերը լուծելու շուրջը, և այդ նշանակում էր վճռական պայքար բոլոր տերերի դեմ:

Գյուղացիական ջոկատները յեվ նրանց տակտիկան մինչև 1525 թ. ապրիլը

«Նամակ-թերթերի» ծագման մոմենտին Հարավային Շվարցվալդն արդեն ընդգրկված էր ապստամբությամբ: Դեռ 1524 թ. օգոստոսին ապստամբության բոցը բռնկվեց Շտյուլինգեն լանդգրաֆությունում: Շտյուլինգենի գյուղացիների կարուկ բողոքը ցույց է տալիս, որ այդ ռայոնում շարժումից անմիջապես առաջ չափազանց ուժեղացել էր ֆեոդալական ճնշումը: Միաժամանակ Վալդսհուտ կոչված փոքր քաղաքում սկսվեցին հուզումներ այն պատճառով, որ ավստրիական իշխանություն-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 142:

ները կարգադրել էին աքսորել անաբապտիստական քարոզիչ Գուբմայերին, որը մի ժամանակ նույնպես գտնվում էր Մյունցերի ազդեցության տակ: Ապստամբած գյուղացիների և Վալդսհուտի բնակչության միջև կոնտակտ հաստատվեց: Շտյուլինգենի լանդգրաֆները և ավստրիական էրցհերցոգ Ֆերդինանդը զգացին, որ աճում է արտասովոր մի շարժում: Նրանք բանակցություններ սկսեցին ռայոնի ազնվականության և շվեյցարական քաղաքների հետ, որոնք մտադիր էին հովանավորել Վալդսհուտին: Այս լարված պայմաններում հարավային Շվարցվալդում սկսեցին ստեղծվել գյուղացիների խոշոր ջոկատներ: Այդ ռայոնի գյուղացիության ղեկավարների մեջ ամենաականավորն էր Բուլգենբախցի Հանս Մյուլլերը, եռանդուն մի մարդ, որն իբրև նախկին զինվոր, գիտեր ռազմական գործը և աչքի էր ընկնում բնական պերճախոսությամբ, բայց հետագայում դավաճան դարձավ: 1525 թվի փետրվարից գյուղացիական ջոկատներն արտասովոր արագությամբ սկսեցին կազմվել և աճել ամբողջ վերին Շվաբիայում: Այդ կերպ սկսված գյուղացիական պատերազմի հանդեպ տեղական ազնվականությունը, որի գլխավոր ուժերն այն ժամանակ զբաղված էին իտալական պատերազմով, և ավստրիական իշխանությունները անզոր եղան և դիմեցին Շվաբական միության, բայց վերջինս էլ նույն պատճառներով այստեղ չուներ բավականաչափ ուժեր: Ժամանակ շահելու համար Շվաբական միությունը գյուղացիների հետ բանակցություններ սկսեց, որոնք ձգձգվեցին մինչև 1525 թվի փետրվար—մարտ ամիսները, և Շվաբական միությունն այդ ամիսներն օգտագործեց, որպեսզի իր ուժերը նախապատրաստի գյուղացիներին ջարդելու համար: Հայտնի է, որ «Նամակթեզերը», այսինքն գյուղացիների տակտիկական ծրագիրը, որ կազմված էր մյունցերյան շրջաններում, թույլ չէր տալիս բանակցություններ վարել ամրոցների տերերի հետ: Երկարատև բանակցությունները, որ սկսվել էին գյուղացիների մարտական գործողությունների համար ձեռնտու տվյալ մոմենտում, խախտում էին այդ ծրագիրը: Ջոկատներում գերակշռում էին չափավոր տարրերը:

Սոցիալական շերտավորումը գյուղացիական ջոկատներում

Գյուղացիների մեջ սոցիալական շերտավորումը պարզ զգալ էր տալիս իրեն: Գյուղացիական պատերազմից հետո գլխավոր, ռեա-

քեսխանների ու պատիժների յենթարկված նրա մասնակիցների գույքի ցուցակները տալիս են գյուղացիների խիստ խայտաբղետ գույքային վիճակի պատկերը: Ունևոր տարրերը չէին կարող ընդունել ռազմական-հեղափոխական ծրագիրը, որ կազմված էր մյունցերյան ոգով, և ավելի չափավոր ծրագիր ու տակտիկա ընդունեցին: Չափավորների այդ գերակշռությամբ էլ բացատրվում է բանակցությունների տակտիկան:

Տերերի հետ յեղած բանակցությունների ընթացքը: «12 հոդված»

Շվաբական միությունը գյուղացիներին առաջարկեց ներկայացնել առանձին գյուղերի բողոքներն իրենց տերերի դեմ, բայց նրանցից նույնիսկ ամենաչափավորները հրաժարվեցին բանակցություններ մղել ըստ առանձին հոդվածների և պնդում էին, որ պետք է ընդհանրապես վերանայել բոլոր հարաբերությունները «աստվածային իրավունքի» ոգով, այսինքն նոր կարգի հիման վրա, ուր չլինի ճորտատիրական իրավունք: Ապա գյուղացիներին առաջարկվեց ապրիլի 2-ին ներկայացնել ընդհանուր պահանջները: Այսպես ծագեցին «12 հոդվածները»: Դրանք իրենցից ներկայացնում էին գյուղացիական հիմնական պահանջների մի ամփոփագիր, որ կազմված էր չափավոր առաջնորդների շրջաններում և ընդունվել էր Մեմմինգենում, գյուղացիական ջոկատների ներկայացուցիչների ժողովում: Մի գլխնական-աստվածաբան (որն ամենայն հավանականությամբ Մեմմինգենի քարոզիչ Շապլերն էր) գրեց այդ հոդվածների ներածականը, յուրաքանչյուր կետ հիմնավորելով «սուրբ գրքով»: Ներածականը պնդում է աստվածային իրավունքի վրա, բայց ընդգծում է, թե գյուղացիությունը ցանկանում է իր իրավունքը ձեռք բերել բացառապես խաղաղ միջոցներով: Չափավորության այդ խակ ոգով են համակված նաև հոդվածները: Պահանջելով վերացնել փոքր տասանորդը, նրանք ընդունում են մեծ տասանորդի հիմնավորվածությունը՝ այն արդարացիորեն օգտագործելու դեպքում (հոդվ. 2): 4-րդ հոդվածում վստահություն է հայտնվում ֆեոդալական ակտա փաստաթղթերին: 6-րդ և 7-րդ հոդվածներում նրանք խնդրում են միայն թեթևացնել բազմաթիվ տուրքերն ու կոռը: Սակայն, չափավորությամբ հանդերձ, «12 հոդվածներն այնուամենայնիվ պնդում են ճորտային կացությունը վերացնելու վրա (թեև չեն հրաժարվում աստծուց սահմանված տերերից) և այս պատճառով հա-

կաֆեոդալական փաստաթղթի նշանակություն ունեն։ Բնորոշ է, վոր 11-րդ հոդվածը խնդրում է առանց առարկության վերացնել հետ մահվան տուրքը (Todfall), վորի ծագումը կապված է ճորտային վիճակի հետ։

Տրուխզեսի տակտիկան

Այսպիսով դեռ մինչև 1525 թվի մարտի կեսը գյուղացիական ջոկատներում չափավոր ուղղությունը հաղթող հանդիսացավ, Մյունցերի «Artikelbrief»-ին հակադրելով իր ծրագիրը, վոր արտահայտված էր «12 հոդվածներում», և գյուղացիները համաձայնվեցին բանակցություններ վարել, չնայելով, վոր ժամանակը չափազանց նպաստավոր էր տերերին վճռական հարված հասցնելու համար։ Մինչդեռ տեղի էին ունենում բանակցությունները, Շվաբական միությունը կարողացավ ռազմական ուժեր հավաքել և դրանք կենտրոնացնել Ուլմից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող ռայոնում։ Ապրիլի 2-ին, այսինքն այն որը, վոր նշանակված էր գյուղացիական «12 հոդվածները» քննարկելու համար, Շվաբական միության զորավար Գեորգ Տրուխզեսը թշնամական գործողություններ սկսեց գյուղացիների դեմ։ Սիրտ չանելով մի անգամից հարձակվել բալտրինգենյան ջոկատի վրա, վորը Քրիստոնեական միությամբ կապված էր Ալգաույի և լճամերձ ջոկատների հետ, Տրուխզեսը հանկարծակի հարձակվեց Լեյպհեյմի ջոկատի վրա։ Հարձակման անակնկալության շնորհիվ ջախջախելով այդ ջոկատը, Տրուխզեսը գտնում էր, վոր նա արդեն քայքայման է մատնել ապստամբների շարքերը, և շարժվեց դեպի Բոդենի լիճը։ Սակայն շուտով նա առիթ ունեցավ համոզվելու, վոր ինքը մի փոքր շտապել է դրության գնահատականը տալու համար։ Բանակցությունների դավաճանական խզումը գայրացրեց գյուղացիներին և բարձրացրեց նրանց հեղափոխական վոգին։

Գյուղացիների պայքարի հեղափոխական թափն ապրիլին

Գյուղացիներն սկսեցին հարձակվել ամրոցների և վանքերի վրա։ Էնգելսն այս առթիվ ասում է, վոր այն ժամանակ, երբ «12 հոդվածները» մնում էին իբրև գյուղացիների պաշտոնական ծրագիր, Լեյպհեյմի դավաճանությունից հետո ապստամբածները սկսեցին գործել ըստ «Նամակ-թերթերի», վոր առաջ մերժվել էին չափավոր մեծամասնության կողմից։ Մյունցերի էմիսարների ագիտացիան նորից աշխուժանում է և ապստամբների մեջ լսվում են ձայներ, վորոնք պահանջում են վերացնել ամեն տեսակ կա-

խումբ տերերից։ Միևնույն ժամանակ լուր տարածվեց, թե Բալթրինգենի ջոկատին օգնելու համար գյուղացիների մի ջոկատ է գալիս Վերին Ալգաույից, որտեղ կային մյունցերյան տակտիկայի կողմնակիցներ։ Այս բոլոր մոմենտներն անբարենպաստ էին Տրուխզեսի համար։ Բացի այդ, լճամերձ ջոկատի գյուղացիների հետ ընդհարվելիս Տրուխզեսը կարողացավ համոզվել, որ գյուղացիները տվյալ տեղում ունեն լավագույն դիրքեր և ուժերի վճռողական գերազանցություն։ Այդ ընդհարումից հետո Տրուխզեսն իր նամակներում իր դրությունը դժվարին է ճանաչում, բայց և այնպես, նրան դարձյալ հաջողվում է գյուղացիների հետ բանակցություններ սկսել, հիմարացնել լճամերձ և բալթրինգենյան ջոկատների առաջնորդներին, որոնք սահմանափակ պատրաստություն ունեին և որոնց մեծ մասը կաշառվել էր,— և նրանց հետ Վեյնգարտեն քաղաքում կնքել մի պայմանագիր, որի համաձայն գյուղացիները պետք է ծնկաչոք ներողություն խնդրեն ապստամբության համար, հանձնեն իրենց զենքերի մի մասը և իրենց դրոշակները և մնացած գյուղացիներին ուժով ստիպեն հետևվելու իրենց օրինակին։ Այդ բոլորի համար գյուղացիներին խոսք էին տալիս ընտրել միջնորդ դատարան 6 քաղաքներից, նրանց բողոքները քննելու համար։ «Տրուխզեսի խորամանկությունն այստեղ նրան փրկեց անխուսափելի կործանումից,— ասում է Էնգելսը,— ... Գյուղացիական մասսաների, նրա թշնամիների անխուսափելի սահմանափակվածությունը նրան թույլ տվեց ազատվել նրանցից հենց այն մոմենտին, երբ նրանք կարող էին մի հարվածով ավարտել ամբողջ պատերազմը, գոնե Շվաբիայում և Ֆրանկոնիայում»[1]։ Գյուղացիները բաբոյալբեվեցին այդ ակտի շնորհիվ և նրանց մեջ սկսվեց Վեյնգարտենի պայմանագրի կողմնակիցների ու հակառակորդների պայքարը, որը դարձյալ արտացոլում է մյունցերյան տակտիկայի թեև ագդեցությունը՝ չափավոր տարրերի ընդհանուր դերակշռման հանդերձ։

Վեյնգարտենի պայմանագիրն էլ ավելի բարոյալքեց գյուղացիական ջոկատները և վիժեցրեց հեղափոխական տարրերի փորձը՝ վորոշ միասնություն մտցնել զանազան ջոկատների գոր-

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 174.

ծողությունների մեջ։ Տրուխզեսը գործողությունների ազատություն ստացավ։ Վերակազմելով իր ուժերը, նա սկսեց քարուքանդ անել Ֆրանկոնիան, Վերին Շվաբիայում թողնելով միայն աննշան ուժեր Ալգաույի գյուղացիների վճռական խմբերի դեմ, վորոնք շարունակում էին դիմադրել և վորոնց մեջ ամենից տոկունը եղավ լյուբասցի Յորգ Կնոպֆի ջոկատը, վորը շարունակեց հուսահատական դիմադրությունը մինչև 1525 թվի հուլիսը։

Վերին Շվաբիայի քաղաքների տակտիկան

Վերին Շվաբիայի քաղաքները համարյա չըմասնակցեցին շարժմանը, թեպետ իրենց այնքան էլ անտարբեր չէին համարում գյուղացիական պատերազմի իրադարձությունների նկատմամբ։ Մանր քաղաքների խորհուրդները, որինակ, Վիլլինգաու քաղաքի խորհուրդը, սկզբից ևեթ չէին թաքցնում իրենց թշնամանքը դեպի գյուղացիները և երկյուղ ու հուսահատություն էին ցուցաբերում այն հանգամանքի նկատմամբ, վոր հեղափոխական վոգին կարող է մուտք գործել քաղաքի պլեբեյական մասի միջավայրը։ Նույնպիսի անհանդուրժություն նկատվում էր նաև խոշոր քաղաքներում, որինակ, Մեմմինգենում։ Բայց խոշոր քաղաքներն այնու հանդերձ ձգտում էին գյուղացիների ապստամբությունն ոգտագործել իրենց քաղաքական նշանակությունը բարձրացնելու համար։ Վերին Գերմանիայի քաղաքների համագումարը, վոր հրավիրվել էր Մեմմինգենի նախաձեռնությամբ, իր բանաձևում ընդգծեց իր հավատարմությունը Շվաբական միությանը, բայց դրա հետ միասին հայտարարեց, վոր ցանկանում է ոգտվել իր նկատմամբ գյուղացիների ունեցած դյուրահավատ վերաբերմունքից, վորպեսզի պատերազմող կողմերի միջև հանդես գա միջնորդների և իրավարարների դերում։ Բանաձևը ոչ մի կասկած չի թողնում այն մասին, վոր նրանք մտադիր էին վիճելի հարցերը լուծել միայն տերերի ոգտին։

Դեպքերի ընթացքը Ֆրանկոնիայում

Ինչպես վերևում արդեն ասված է, Տրուխզեսը Շվաբիայում և Ֆրանկոնիայում գյուղացիական ապստամբությունը ճնշելիս ուներ գործողությունների մի ընդհանուր պլան։ Ինչ վերաբերում է գյուղացիներին, այդ երկու ռայոններում նրանց ջոկատների գործողությունների միջև ուղղակի կապ չկար, չնայելով, վոր Շվա-

րիայում և Ֆրանկոնիայում դեպքերը գրեթե միաժամանակ եյին զարգանում:

Ֆրանկոնիայի ջոկատները յեվ դրանց ղեկավարները

Ֆրանկոնիայում դեպքերը սկսվեցին այնպես, ինչպես Շվաբիայում: Առանձին կենտրոնում կազմվում եյին գյուղացիական ջոկատներ, վորոնց մեջ, ինչպես և առանձին գյուղերում, յերևան եյին գալիս սոցիալական տարբեր խմբեր, վորոնք տարբեր տակտիկա եյին կիրառում: Օյսպես, Վյուրցբուրգի յեպիսկոպոսի ստացած մի զեկուցագրում ասված է. «Ավագների և ավելի հարուստների հետ գործը կարգի յե բերված. իսկ մեծամասնությունը հարձակվում է վանքերի ու ամրոցների վրա»: Ավելի ճշգրիտ է ասված Կոբուրգ ռայոնից ստացված զեկուցագրում. «Անհատապես այստեղ կարելի յե հեշտությամբ հանդարտացնել ժողովրդին, բայց այն բնակիչները, վորոնք կորցնելու վոչինչ չունեն, շարունակում են ապստամբության կոչ անել»: Սակայն Ֆրանկոնյան ռայոնը Շվաբականից տարբերվում եր ամենից առաջ քաղաքների մեծ քանակությամբ և այդ քաղաքներում դասակարգային պայքարի ավելի զարգացած ձևերով: Առանձին քաղաքներ, վորտեղ առանձնապես սրվեց դասակարգային պայքարը, միանում եյին գյուղացիներին, որինակ, Նյորդլինգեն քաղաքը, վորտեղ Անտոն Ֆորների հեղափոխական կուսակցությունը հաղթանակ տարավ: Կայսերական քաղաք Հեյլբրոննի հեղափոխական ապոզիցիան գործում եր գյուղացիների հետ գաղտնի կոնտակտ պահելով և ապրիլի 17-ին նրանց առաջ բացեց քաղաքի դռները: Ֆրանկոնիայի մյուս քաղաքները կամ պետք է կապիտուլյացիա անեյին, կամ ծգձգեյին բանակցությունները և գյուղացիների բարեկամներ ձևանային: Այս հանգամանքը նպաստեց Ֆրանկոնիայում գյուղացիական ուժերի համակենտրոնացման: 1525 թվի ապրիլին Հեյլբրոննի շուրջը, դեռ նախ քան գյուղացիների կողմից նրա գրավելը, իրար միացան գյուղացիական ջոկատները,— «լուսավոր ջոկատը», վոր կազմվել եր Վենդել Հիպլերի ղեկավարած ոդենվալդցիների և Յաշկա Ռորբախի ղեկավարած՝ նեկկարցիների գյուղացիական միացյալ զորամասերից, և Ֆրանկոնիայի ասպետ Ֆլորիան Գեյերի ղեկավարության տակ գտնվող «սև ջոկատը», վոր կազմված եր ռոտենբուրգյան ու երինգենյան ռայոնների գյուղացիներից: Կայսերական քաղաք Հեյլբրոն-

նը, ուր ուժեղ էր հեղափոխական ոպոզիցիան, դարձավ գյուղացիների գլխավոր ուժերի կենտրոնը Ֆրանկոնիայում: Հեյլբրոննի շուրջը գործող առաջնորդներից Ռորբախը և Գեյերը հեղափոխական տակտիկայի վճռական կողմնակիցներ էին: Գրոհելով ու գրավելով Վեյնսբերգը և բռնելով այնտեղ թաքնված կոմս Լյուդվիգ ֆոն Հելֆենշտեյնին, որն արատավորվել էր գյուղացիների նկատմամբ իր գործադրած դաժանություններով, Ռորբախը նրան և նրան շրջապատողներին — ընդամենը 14 հոգու — դատապարտեց ամենախայտառակ մահվան՝ նիզակների միջով քշելուն, և այդ ինչպես հարկն է ազդեց տվյալ ռայոնի մյուս սենյորների վրա: Ֆրանկոնիայում շարժումը մի անգամից թափ առավ և ավելի լայն չափեր ընդունեց, քան Շվաբիայում:

Սակայն գյուղացու մտահորիզոնի սահմանափակվածությունն այստեղ ևս այն հետևանքն ունեցավ, որ բյուրգերական և ազնվական ոպոզիցիան, փորձելով շարժումը յենթարկել իր քաղաքական ու տնտեսական պլաններին ու շահերին, կարողացավ ջլատել գյուղացիական ջոկատների գործողությունները, պառակտել շարժումը և այն պարտության մատնել: Գյուղացիական շարժումն ոտար շահերին յենթարկելու այդ քաղաքականության կիրառողը հանդիսանում էր վերևում արդեն հիշված Հիպլերը, աղքատացած մի ազնվական, որն առաջ կառավարիչ էր յեղել Հոգենլոե կոմսերի մոտ: Ինչպես ասում է Էնգելսը, Հիպլերի մոտ Գերմանիայի պետական վերակազմության քաղաքական ծրագիրը XVI դարի բյուրգերության իդեալներից ավելի հեռու չեր գնում և իրենից ներկայացնում էր բուրժուական հասարակության կռահում, այնպես, ինչպես Մյունցերի իդեալն իրենից ներկայացնում էր կոմունիստական, այսինքն այն ժամանակվա համար ավելի հեռավոր հասարակության կռահումը: Յերազելով Գերմանիան բուրժուական ուղով վերակառուցելու մասին, ոդենվալդցիների առաջնորդն անհրաժեշտ էր համարում գյուղացիական շարժմանը մասնակից դարձնել մյուս դասակարգերին և գյուղացիական պահանջները հարմարեցնել նրանց:

«12 հոդվածների» բացատրությունը

Հիպլերի այս տակտիկան համաձայնական նկատառումներով պաշտպանում էին ոպոզիցիայի նաև մի քանի առաջնորդները: Ջոկատների այդ առաջնորդները կարողացան գլխավոր հրամանատարի

դասի համար հրավիրել ազնվական Գեց ֆոն Բեռլիխինգենին, «ողորմելի սուբյեկտին», որը ընդունակ էր միայն «պոչը խաղացնել և դավաճանել»։ Գեցն իսկույն ևեթ սկսեց դավաճանական տակտիկայից, չնայելով, որ «առաջնորդների խորհուրդը» հսկում էր նրա վրա։ Հեղափոխական տարրերը, օրինակ, Ֆլորիան Գեյերը և Յաչկա Ռորբախը, փորձեցին բաժանվել և ինքնուրույն կերպով գործել ամրոցների և վանքերի դեմ։ Այսպիսով Հեյլբրոննի կենտրոնը մնաց Հիպլերի և գյուղացիության առավել չափավոր առաջնորդների ձեռքում, որոնք փորձեցին «12 հոդվածներին» տալ այնպիսի բնույթ, որն ընդունելի լեր մյուս դասակարգերի համար։ Այսպես ծագեց «12 հոդվածների» բացատրությունը» կոչված փաստաթուղթը, որն առաջին տեղը տալիս էր կայսրության ռեֆորմին, իսկ գյուղացիության կարևորագույն, կոնկրետ պահանջները հետաձգում է մինչև այսպես կոչված «ընդհանուր ռեֆորմացիան»։ Ճիշտ է, գյուղացիները մերժեցին այդ վարիանտը, որն աղճատում էր նրանց ծրագիրը, բայց արդեն չէին կարող պաշտպանել իրենց դիրքերը։ Հեյլբրոննում նշանակվեց գյուղացիական ջոկատների համագումար, այդ բոլոր պահանջները քննարկելու համար։ Գեց ֆոն Բեռլիխինգենի նշանակումից և Ռորբախի ու Գեյերի բաժանվելուց հետո «գյուղացիական պարլամենտի» կենտրոնական դեմքը դարձավ Հիպլերը։

«Հեյլբրոննյան ծրագիրը»

Մայիսի 9-ին սկսվեց «պետական ընդհանուր ռեֆորմի» հարցերի քննարկումը՝ Հիպլերի առաջարկած «Հեյլբրոննյան ծրագրի» կետերի համաձայն։ Ծրագրի պահանջներն ավելի շատ համապատասխանում էին քաղաքացիների, քան գյուղացիների շահերին։ Հեյլբրոննյան ծրագիրը նախատեսում էր, որ բոլոր իշխանությունները պետք է յենթարկվեն կայսրին և իշխաններն ու ազնվականները դառնան կայսրության չինովնիկներ։ Ծրագրի հինգերորդ կետը պահանջում էր հոգևորականությանն ամբողջովին զրկել աշխարհիկ իշխանությունից։ Ծրագրում նախատեսվում էր համակայսերական օրենսդրություն և ընտրովի դատարան՝ դասային ներկայացուցչության հիմունքով։ Մի շարք կետեր պահանջում էին, որ դրամը, չափերն ու կշիռներն ընդհանուր լինեն և վերացվեն բոլոր ներքին մաքսային տուրքերը։ Այնուհետև պահանջ էր առաջադրվում արգելել վաշխառուական և վաճառակա-

նական խոշոր ընկերությունները, ինչպես նաև արտաքսել հռոմեական իրավունքի դոկտորներին, այսինքն այն իրավաբաններին, վորոնց աջակցությամբ ֆեոդալները կողոպտում եյին գյուղացիներին: Ծրագիրն ազնվականների համար պահպանում եր դատային իրավակարգը, վարչական պաշտոնները, ազատում եր վանքերի նկատմամբ յեղած բոլոր պարտավորություններից և թույլ եր տալիս մասնակցել յեկեղեցական կալվածքների բռնագրավման: Ֆեոդալական պարհակների հետ գնումը 5% կապիտալացման սկզբունքով, վոր նախատեսված եր «Հեյլբրոննի ծրագրում» և վերջին հաշվով հանգում եր ֆեոդալական հողային սեփականությունը բուրժուական հողային սեփականության վերածելուն, նույնպես իրենից ներկայացնում եր զիջում ազնվականությանը և շատ քիչ չափով եր բավարարում գյուղացիությանը, բացառությամբ նրա ամենաունևոր վերնախավի:

Ֆրանկոնիայում յեղած ապստամբության պարտության պատճառները

Այն ժամանակ, յերբ աշխույժ կերպով քննարկում եյին այդ հարցերը, լուր տարածվեց Տրուխզեսի մոտենալու մասին: Վեյնգարտենի պայմանագրից հետո գտնելով, վոր Վերին Շվաբիայում իր դրությունը հաստատուն է, Տրուխզեսը մայիսին շարժվեց դեպի Ֆրանկոնիա: Տրուխզեսն ամենից առաջ ջարդեց գյուղացիական այն ջոկատը, վոր գործում եր անկայուն առաջնորդ Ֆեյերբախերի ղեկավարությամբ, Ֆեյերբախեր, վորն անգործունեյության եր մատնվել և աշխատում եր բանակցությունների մեջ մտնել նրա հետ: Յերբ լուր տարածվեց Ֆրանկոնիայում Տրուխզեսի այդ առաջին հաղթության մասին, բոլոր քաղաքներում բյուրգերությունը յերես դարձրեց գյուղացիներից և սկսեց պատգամավորություններ ուղարկել Տրուխզեսի մոտ, հայտնելով, վոր քաղաքները նրան են հանձնվում: «12 հոդվածներն» ընդունելու վերաբերյալ քաղաքների բոլոր վորոշումները մոռացվեցին, գյուղացիները մատնվեցին: Դրա հետևանքով գյուղացիական ջոկատներն արագությամբ բարոյալքվեցին և Տրուխզեսը կարող եր տանել հետագա հաղթանակները: Ֆրանկոնյան վերջին ջոկատը, վոր բաղկացած եր 5 հազար հոգուց, տեղավորվեց Վյուրցբուրգում, բայց քաղաքային խորհուրդը Տրուխզեսի զորքերի առաջ բացեց դարպասները և ջոկատը ջախջախվեց: Հեղափոխական առաջնորդները հերոսաբար եյին կռվում: Թորբախը գերի ընկավ և ամենադաժա-

նային տանջանքների յենթարկվեց. նրան կենդանի այրեցին թույլ կրակի վրա: Ֆլորիան Գեյերը քաջաբար դիմադրում եր իր հերոսական «սև ջոկատով», բայց հունիսի 9-ին նա էլ ընկավ կռվում:

Ֆրանկոնիայում գյուղացիների պարտության պատճառներն ընդհանուր առմամբ նույնն են, ինչ վոր Վերին Շվաբիայում,— կազմակերպվածության բացակայություն, ուժերի ցրվածություն, պասսիվություն և դյուրահավատ հակում դեպի բանակցությունները: Այստեղ այդ բոլորին միանում եր բյուրգերության ազդեցությունը, վորը թուլացնում եր հեղափոխական յեռանդը,— և այդ բյուրգերության բացահայտ դավաճանությունը:

Սաքսոնյան-թյուրինգյան ռայոն

Գյուղացիական պատերազմի ռայոնների մեջ քաղաքային պլեբսի ակտիվ դերով առաջին տեղը բռնում է Թյուրինգիան:

Մյունցերը Թյուրինգիա ժամանեց դեռ 1525 թվի փետրվարին, ամբողջ Վերին Գերմանիայում իր ագիտացիոն շրջագայությունը կատարելուց հետո: Վերադառնալով Թյուրինգիա, նա բնակվեց Մյուլհաուզեն քաղաքում, վորտեղ շատ շուտով տապալվեց հին խորհուրդը, իսկ մանր բյուրգերներն ընտրեցին «մշտնջենական խորհուրդ», վորը փաստորեն գտնվում եր Մյունցերի և Պֆեյֆֆերի ազդեցության տակ:

Այսպիսով յերկրամասի խոշորագույն քաղաքներից մեկը գտնվում եր Մյունցերի կողմնակիցների ձեռքում: Այս հանգամանքը հեղափոխական ազդեցություն թողեց Թյուրինգիայի և հարևան հերցոգությունների ու կոմսությունների (Եյխֆելդ, Գարց, Հեսսեն և այլն) գյուղացիության վրա: Այստեղ ևս քաղաքները դավաճանաբար եյին գործում: Ֆուլդ քաղաքի խորհուրդը համաձայնվեց ընդունել գյուղացիների «12 հոդվածները»: Այնուհանդերձ բուրգոմիստրը խորհրդակցության ժամանակ արտահայտվեց այսպես. «Մենք պետք է ընդունենք «12 հոդվածները», քանի վոր հետագայում մենք կկարողանանք դրանցից հրաժարվել»: Գյուղացիներն էլ դյուրահավատ եյին, իսկ Մյունցերի կուսակցությունն այստեղ քիչ կողմնակիցներ ուներ:

Մյունցերն ուզում եր Թյուրինգիայում ստեղծել ամբողջ հյուսիսային Գերմանիայի հեղափոխական կենտրոն, վոտքի

հանել Մանսֆելդի և այլ հանքարանների բանվորներին և այդ-տայնը կապել հարավային Գերմանիայի հետ: Նա նամակներ եր ուղարկում լեռնային շրջանները, հանքագործ բանվորներին կոչ անելով ապստամբել և նրանց նախազգուշացնելով «այն հիմար մարդկանցից», վորոնք թույլ են տալիս իրենց հուսադրել, թե հնարավոր ե համաձայնության գալ իրենց թշնամիների հետ:

«Գրգռեցեք գյուղերն ու քաղաքները,— գրում եր նա իր կողմնակիցներին,— մանավանդ հանքագործ բանվորներին և մյուս բարի ընկերներին»:

Մյունցերի ագիտացիան ընդհանրապես մեծ ազդեցություն ունեցավ գյուղացիների և մի քանի լեռնարդյունաբերական շըր-ջանների վրա (Ցվիկկաու), ուր հուզումներ սկսվեցին: Իզուր եր հակաագիտացիա մղում Լութերը, վորն անհաջող շրջագայում եր Թյուրինգիայում, նպատակ ունենալով հանդստացնել ժողո-վրդին: Հակառակ նրա քարոզների, գյուղացիները շարունա-կում եյին ավերել ամրոցներն ու վանքերը:

Բայց Մյունցերի ձգտումները— կենտրոնացնել շարժումը, վոտքի հանել հանքագործ բանվորներին և ամրապնդել պաշտ-պանությունը— հասարակական միջավայրում բազա չունեյին: Ինչպես արդեն ասացինք, այստեղ ել կային Մյունցերի փոքրա-թիվ կողմնակիցներ, վորոնք հասկանում եյին նրա նպատակնե-րը: Այստեղ ել վերջիվերջո արտահայտվեց գյուղա-ցիական սահմանափակվածությունը, այստեղ ել յուրաքանչյուր ջոկատ յուրովի յեր գործում: Ինչ վերաբերում ե Մանսֆելդի հանքարանների բանվորներին, Մյունցերի ագիտացիան չկարո-ղացավ նրանց ապստամբեցնել, վորովհետև Մանսֆելդի կոմսերը իր ժամանակին նրանց վորոշ շնորհներ արին և խոստումներ շռայլեցին:

Գյուղացիական այն ջոկատը, վոր գտնվում եր Մյունցերի հրամանատարության տակ, զինվորական գործին վարժված չեր և կարգապահությանը չեր ընտելացել: Գյուղացիները հակամետ եյին դեպի բանակցությունները: Տեղական կոմսերը, վորոնք սպասում եյին իշխանական զորքերի գալուն (Մյունցերի դեմ եյին գնում սաքսոնական իշխանները և Հեսսենի լանդգրաֆը), նրա հետ բանակցությունների մեջ եյին մտնում: Մայիսի 12-ին Մյունցերը փորձում եր վճռական տակտիկայով դադարեցնել այդ բանակցությունները և Մանսֆելդի կոմսերին մի նամակ

ուղարկեց, վորով պայքարի յեր հրավիրում: Ցուրաքանչյուր կոմսից նա պահանջում եր հենց նույն օրը ժամանել բանակատեղի, զղջալ իր ագահության և բռնակալության համար, յենթարկվել համայնքին և հրաժարվել իշխանությունից: Կոմսերը չընդունեցին հրավերը և շարունակում եյին սպասել իշխաններին, վորոնք, վերջապես, ժամանեցին մի քանի օրից հետո:

Մյունցերի հուսահատական ջանքերը՝ բարձրացնել Ֆրանկենհաուզեն քաղաքի մոտ տեղավորված ջոկատի մարտական վոգին՝ չեյին կարող հաջողություն ունենալ, վորովհետև թե մարդկային և թե զենքի ուժերի առավելությունն իշխանների կողմն եր: Իր ամբողջ եներգիայով հանդերձ Մյունցերը չեր կարող իր ժամանակին ստիպել մյուլհաուզենցիներին, վոր բավականաչափ քանակությամբ թնդանոթներ պատրաստեն: Բարեկամների կողմից նա աջակցություն չգտավ: Առհասարակ պետք է ասել, վոր մարտի 17-ին, յերբ Մյուլհաուզենում իշխանությունը Մյունցերի ձեռքում եր, նա փորձում եր այնտեղ գույքերի ընդհանրություն սահմանել, հիմնվելով իր կոմունիստական հայացքների վրա: Բայց, ինչպես մատնանշում է Ենգելսը, «հասարակական հեղաշրջումը, վոր նրան պատկերանում եր ֆանտազիայում, դեռևս այնքա՛ն քիչ հիմքեր ուներ նյութական առկա հարաբերություններում»[1]: Գույքի ընդհանրություն մտցնելու կոնկրետ ձեռնարկումները դարձան բուրժուական տիպի բարեգործություն: Մյունցերի իսկական նպատակները շատ քչերն եյին հասկանում, այս պատճառով նա բավականաչափ ժողովրդականություն չգտավ պաշտպանությունը կազմակերպելու հարցում: Ֆրանկենհաուզենի մոտ տեղի ունեցած անհավասար կռվում Մյունցերի ջոկատը ջարդվեց: Ինքը, Մյունցերը բռնվեց, իշխանների— Լութերի կողմնակիցների ներկայությամբ յենթարկվեց խոշտանգման, բայց գաղտնի ընկերության կենդանի մնացած անդամներից վոչ մեկի անունը չտվեց: Խոշտանգումներից հետո նա մահապատժի յենթարկվեց: Մայիսի 25-ին Մյուլհաուզենն անձնատուր յեղավ և Թյուրինգիայում շարժումը լիկվիդացիայի յենթարկվեց մասսայական մահապատիժներով ու տեռորով, ինչպես ամենուրեք:

Էլզասում յեղած շարժման ժամանակ յերկրամասի գրեթե

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. VIII, էջ 186:

բոլոր քաղաքները նույնպես ձեռնտու յենթարկվում եյին գյուղացիությանը: Այստեղ շարժումը ճնշելուն գլխավոր մասնակցություն ունեցան ֆրանսիացիները՝ Լոթարինգիայի հերցոգ Անտոնի հրամանատարությամբ:

Ամենայերկար դիմադրությունը ցույց տվին Ավստրիայի ալպյան յերկրների— Շտիրիայի, Կարինտիայի և Կրայնայի գյուղացիները: Գյուղացիների պայքարը սկզբում ամենից հաջող եր Տիրոլում, վորտեղ ավստրիական երցհերցոգը ստիպված եր մի շարք զիջումներ անել նրանց և հրավիրել Լանդտագը: Սակայն 1526 թվի ամառը Տիրոլի գյուղացիների ղեկավար Գայսմայերը ստիպված եր գերազանց ուժերի առաջ նահանջել Վենետիկի մարզը: Շարժումն այստեղ ևս ճզմվեց: Հաղթողներին շարունակ ուղեկցում եյին դահիճները: Մահապատիժները և մարմնական պատիժները տեղի եյին ունենում մասսայական չափերով: Կենդանի մնացած գյուղացիները յենթարկվում եյին ահագին ռազմատուգանքների, վորոնք նրանց բոլորովին սնանկացնում եյին: Մահապատիժների և տեռորի կոչ եր անում Լութերը: Նա գրում եր. «Գյուղացիները անձնատուր յեղան սատանային... Թող ամեն մեկը գաղտնի թե բացահայտ կերպով խոցի, սպանի ու խեղդի նրանց, ինչպես սպանում են կատաղած շներին, թող ամեն մեկը հիշի, վոր չկա մի այլ բան ավելի թունավոր, վնասակար և դիվային, քան խռովարարը... Իշխանն արյուն թափելով ավելի շուտ կարժանանա յերկնային արքայության, քան աղոթքներով...»

Լութերն ազնվականներին խորհուրդ եր տալիս ավելացնել կոռը, գյուղացիներին դարձնել ճորտեր, իսկ յեթե ազնվականները խղճի խայթ զգան, ապա «պետք ե սփոփանք փնտռել սաղմոսներում»:

Այսպես Լութերն ու բյուրգերությունը դավաճանեցին գյուղացիներին, իսկ վերջիններիս պարտությունը լայն ճանապարհ բացեց դեռ ավելի առաջ սկսած ֆեոդալական ռեակցիային:

Գյուղացիական պատերազմի պատմական դասերը

Ինչպես արդեն վերևում մատնանշվեց, Գերմանիայում մղված գյուղացիական պատերազմի պատմությունը ցույց ե տալիս, վոր ֆեոդալիզմի դեմ ուղղված պայքարում գլխավոր ուժը գյուղացիական—պլեբեյական դաշինքն եր, վոր առհասարակ

բուրժուական հեղափոխություններում հենց այդ դաշինքն է հանդիսանում գլխավոր շարժիչ ուժը: Գյուղացիական պատերազմի պատմության գիտական անալիզը մերկացնում է մենշևիկների և հակահեղափոխական տրոցկիզմի գրպարտությունը գյուղացիական շարժումների ռեակցիոն լինելու մասին, մի զրպարտություն, որ միանգամայն զուգադիպում է ֆաշիստական «պատմաբանների» այն «կոնցեպցիաների», որ 1525 թվի գյուղացիական պատերազմի հիմնական ուժը և նախաձեռնողը յեղել է իբր թե գյուղացիների կուլակային վերնախավը և ոչ թե գյուղացիական մասսան:

Պատմության տրոցկիստական–ֆաշիստական ֆելդֆեբելները, խեղաթյուրելով պատմական փաստերը, իմպերիալիստական բուրժուազիայի պատվերով փորձում են ժխտել գյուղացիական-պլեբեյական լագերի հեղափոխական նշանակությունը և թաքցնել գյուղացիական մասսայի և քաղաքային պլեբսի հեղափոխական միասնական գործողությունների բոլոր փաստերը: Գյուղացիության և քաղաքային պլեբսի հեղափոխական դերն անտեսելու փորձերին յեռանդուն հակահարված են տվել դեռ Մարքսն ու Էնգելսը՝ Լասսալի դեմ մղած պայքարում: Լասսալը, լինելով Գերմանիան «վերևից», պրուսական յունկերության կողմից վերամիացնելու ռեակցիոն ուղիի կողմնակից, 1859 թվին լույս ընծայեց «Ֆրանց ֆոն Զիկկինգեն» դրաման, որի մեջ նա գովաբանում էր 1522 թվի ասպետական ապստամբությունը և այդ պատկերում էր որպես ազնվականության հեղափոխական պայքար պետական միասնության համար: Իսկ 1525 թվի գյուղացիական ապստամբությունը նա ռեակցիոն էր համարում: Մարքսը 1859 թվի ապրիլի 19-ին Լասսալին ինչպես մեծ սխալ մատնացույց էր անում այն, որ Լասսալը «լութերական–ասպետական ոպոզիցիային պլեբեյական–մյունցերականից ավելի բարձր»[1] է դասում: Այդ նույն նամակում Մարքսը պատռում է գերմանական ազնվականության հեղափոխականության դիմակը: Նա մատնանշում է, որ գերմանական ասպետության համար ամենատիպիկը հանդիսանում է «վողորմելի սուբյեկտ» Գեց ֆոն Բեռլիխինգենը: Ինչ վերաբերում է Զիկկինգենին, ապա «յեթե Զիկկինգենից վերցնել այն, ինչ որ հատուկ է նրան

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. XXV, էջ 252:

իբրև անձնավորություն՝ իր առանձնահատուկ բնական հակումներով, կրթությամբ և այլն, ապա կմնա Գեց ֆոն-Բեռլիխինգենը»[1]: Մարքսն այնուհետև մատնանշեց, որ Զիկկինգենը և Հուտտենն իրենց հեղափոխականներ եյին յերևակայում միայն, որ իրականում նրանք դատապարտված եյին կործանման, որպես կործանվող ռեակցիոն դասակարգի ներկայացուցիչներ:

«Հեղափոխության ազնվականական ներկայացուցիչները, որոնց՝ միասնության ու ազատության լոզունգների տակ դեռևս թաքնված է հին կայսրության և բռունցքային իրավունքի ցնորքը,— չպետք է, հետևաբար, այդ չափով իրենց վրա կենտրոնացնեյին ամբողջ հետաքրքրությունը, ինչպես այդ կատարված է քո դրամայում,— գրում էր Մարքսը Լասսալին:— Յեվ ընդհակառակը, գյուղացիների (մանավանդ նրանց) և քաղաքների հեղափոխական տարրերի ներկայացուցիչները պետք է վոր կազմեյին խիստ եյական ակտիվ ֆոն»[2]:

Լութերը գյուղացիական պատերազմից հետո

Գյուղացիական պատերազմի հեղափոխական թափը ասպետությանն ստիպեց հրաժարվել իր յերևակայական հեղափոխականությունից: Այդ նույն տպավորության տակ Լութերը վերջնականապես թողեց յերբեմնի իր ռադիկալիզմը: Գյուղացիական պատերազմի սկզբում Լութերը «12 հոդվածների» դեմ հրապարակել էր մի պամֆլետ, վորի մեջ նա գյուղացիական պահանջները սատանայի ներշնչում էր հայտարարում: Այնուհետև, դեն շպրտելով ամեն մի դիպլոմատիա, նա մի ուրիշ պամֆլետում արտահայտվում էր «ընդդեմ գյուղացիների արյունածարավ և ավազակային շայկաների», հանուն ապստամբների արյունոտ և անողոք ջախջախման և պահանջում էր ամբողջովին վերականգնել ճորտատիրությունը Լութերի վերաբերմունքը դեպի աշխարհիկ իշխանությունը նույնպես վերջնականորեն վորոշվեց. նրա մոտ չքացան ռադիկալիզմի և ընդդիմադրության բոլոր մնացորդները: Դեռ առաջ Լութերը գտնում էր, վոր աշխարհիկ իշխանության հեղինակությունն աստծուց է ծագում: Այժմ նա այդպիսի իշխանություն ասելով անվերապահ հասկանում է տերիտորիալ իշխանների իշխանությունը:

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. XXV, էջ 251:

2 Նույն տեղ, էջ 251—252:

Գերմանական բյուրգերության ռեակցիոն էվոլյուցիան

Դեպի իշխանների իշխանության ճանաչումն իր կատարած էվոլյուցիայում Լութերը դարձյալ ընթանում էր գերմանական բյուրգերության հետ, որը, վախենալով գյուղացիական–պլեբեյական հեղափոխությունից, անցել էր իշխանական աբսոլուտիզմի պաշտպանության տակ։ Գերմանիայի հետագա տնտեսական զարգացման դանդաղությունը երկար ժամանակով ամրապնդեց գերմանական բյուրգերության այդ դիրքը։

Իշխանական ռեֆորմացիա

Լութերի ռեֆորմացիան հիմա դարձավ իշխանական աբսոլուտիզմի և աշխարհիկ իշխանների օգտին յեկեղեցական հողերի սեկուլյարիզացիայի գործիք։ Վախենալով, որ կաթոլիկ իշխաններն էլ մեծապես կհրապուրվեն դրանով, պապը նրանց ևս թույլ տվեց իրենց մոտ յեկեղեցական հողերի մասնակի աշխարհականացում (секуляризация) կատարել։

Օգտվելով նպաստավոր դրությունից, լութերական իշխանները 1526 թվի ամառը Շպեյերում գումարված առաջին ռայխստագում անցկացրին մի որոշում, որով յուրաքանչյուր իշխանի իրավունք էր վերապահվում վճռել իր տերիտորիայի բոլոր հպատակների կրոնի հարցը։ Շպեյերի առաջին ռայխստագի այդ որոշումը, որը պետք է հանդիսանար իշխանական իշխանության նոր ուժեղացման գործոն, իհարկե չէր կարող դուր գալ Կարլոս V-ին, որն օգտվեց ֆրանսիացիների հետ յեղած պատերազմի դադարից և իր ուժերը հանեց Գերմանիայում տեղի ունեցող ռեֆորմացիայի դեմ։

Նրա պահանջով Շպեյերի յերկրորդ ռայխստագը 1529 թվի գարնանը դադարեցրեց յեկեղեցական հողերի սեկուլյարիզացիան, վերացրեց 1526 թվի ռայխստագի որոշումները և հաստատեց Վորմսի էդիկտի անդրդվելիությունը։ Լութերական իշխանները և մի քանի քաղաքներ դրա դեմ բողոք հայտարարեցին (այստեղից ծագել է «բողոքականներ» նրանց անունը), կաթոլիկներից պաշտպանվելու համար իրար միջև դաշինք կնքեցին և որոշեցին իրենց կողմը քաշել իշխանների մի մասին, նրանց օժանդակություն ցույց տալով կայսեր դեմ։ Այսպիսով Լութերի անցնելն իշխանական ռեակցիայի կողմը՝ միաժամանակ մի փորձ էր կաթոլիկների հետ համաձայնության գա-

լու։ Այդ փորձը հեշտացավ նրանով, վոր Լութերի վերջին եվոլյուցիան ուղեկցվում եր լութերականության մեջ կրոնի ծիսական կողմի ուժեղացումով, յեկեղեցական խորհուրդների նոր մեկնաբանությամբ, վոր մոտենում եր կաթոլիկականին, և առհասարակ արտաքին պաշտամունքի մոմենտների նոր մեկնաբանությամբ, վորոնք առաջ մերժվում եյին։

«Աուգսբուրգյան դավանանքը»

Աուգսբուրգի սեյմում 1530 թվին Լութերի ամենամոտ աշխատակից Ֆիլիպպ Մելանխտոնը կայսրին ներկայացրեց լութերականության հիմունքների սիստեմատիկ շարադրությունը, վոր հայտնի յե «Աուգսբուրգյան դավանանք» անունով։ Շարադրության մեջ, բացի այն դրույթից, վոր յեկեղեցու գլուխն իշխանն ե և վոչ պապը, սահմանված եր լութերական պաշտամունքի ծիսական և արտաքին կողմը։ Այդ ծիսականությունը ստեղծվեց եժան յեկեղեցու վերաբերյալ բուրժուական պահանջի հողով, վերացվեց կաթոլիկական կուլտի արտաքին շքեղությունը, սրբապատկերների և մասունքների պաշտամունքը. պատարագի փոխարեն սահմանվում եր քարոզը, իսկ յեկեղեցական յոթը խորհուրդներից թողնվում եյին յերկուսը— մկրտության և հաղորդության խորհուրդը։ Այնուամենայնիվ հենց այն փաստը, վոր ստեղծվում ե յեկեղեցի ու հավատացյալների յեկեղեցական կազմակերպություն, ցույց եր տալիս, վոր Լութերը շեղվել ե «միայն հավատով արդարանալու» սկզբնական պրինցիպից։

Շմալկալդենյան միությունը

Բողոքական իշխանները գտնում եյին, վոր լութերականության այդ կերպ շարադրված հիմունքները միանգամայն համապատասխան են իրենց իշխանական իշխանության շահերին, և 1531 թվի սկզբին, յերբ արդեն Կարլոս V-ը հրաժարվել եր «Աուգսբուրգյան դավանանքի» հիմունքով բանակցություններ վարելուց, իրար մեջ և մի շարք կայսրութենական քաղաքների հետ կնքեցին այսպես կոչված Շմալկալդենյան միությունը, ռեֆորմացիայի գործը կայսրից պաշտպանելու համար։ Այդ միությունը կայուն չեր, նրան քայքայում եյին ներքին տարաձայնությունները։ XVI դարի 40-ական թվականների կեսին յոթը կուրֆյուրստներից յերեքը (Բրանդենբուրգի կուրֆյուրստը, Սաքսոնիայի կուրֆյուրստը և Հռենոսյան պֆալցգրաֆը) արդեն բողոքականների կողմն եյին։ Սպասվում եր, վոր Քյոլնի արքեպիսկոպոսը նույնպես կանցնի

թագավորականների կողմը։ Հիմա Կարլոսին վտանգ էր սպառնում, որ նա կկորցնի գահը և չի կարողանա այն թողնել իր սերունդներին։ Սակայն դրությունը խիստ փոխվեց, յերբ սաքսոնյան հերցոգ Մորիցը, որ ստացել է Հուդա մականունը,— դավաճանեց իշխաններին և անցավ կայսեր կողմը։ Օգտվելով դրանից, Կարլոս V-ը շտապեց իր զորքերն Իտալիայից և Նիդերլանդներից փոխադրել Գերմանիա։

Շմալկալդենյան պատերազմը

Կայսեր և Շմալկալդենի միության միջև պատերազմ սկսվեց, որը տևեց յերկու տարի (1546—1548 թ.թ.) և վերջացավ կայսեր հաղթանակով։ Աուգսբուրգում կնքված համաձայնության հիման վրա («1548 թ. Աուգսբուրգյան ինտերիմը») կաթոլիկությունը, մի փոքր բարեփոխված, պետք է վերականգնվեր ամբողջ Գերմանիայում։ Սակայն կայսրը յերկար չօգտվեց այդ հաղթանակի հետևանքից, չնայելով Շմալկալդենի միության քայքայման։ Ոչ միայն բողոքական իշխանները, այլև կաթոլիկ իշխանների մի մասը, վախենալով, որ կայսրը կարող է ուժեղանալ, Ֆրանսիական թագավոր Հենրիխ II-ի հետ դաշինք կնքեցին և 1552 թվին Կարլոս V-ի դեմ պատերազմ սկսեցին, որը վերջացավ իշխանների հաղթությամբ։ Մորից Սաքսոնցին, որ նորից անցել էր իշխանների կողմը, քիչ մնաց որ գերի վերցներ Կարլոս V-ին։ Կարլոսը մեկնեց Գերմանիայից, իր յեղբայր Ֆերդինանդ I-ին հանձնարարելով բանակցություններ վարել իշխանների հետ։

Աուգսբուրգի կրոնական հաշտությունը

Վերջապես, 1555 թվին կնքված Աուգսբուրգյան կրոնական հաշտությունը հաստատեց բողոքականների նվաճումները Գերմանիայում և մասնավորապես Ծպեյերի առաջին ռայխստագի դրույթն իշխանների կրոնական լիակատար անկախության մասին, ինչպես և այն մասին, որ յուրաքանչյուր իշխան որոշում է իր հպատակների կրոնը (cujus regio ejus religio — «ում յերկիրը, նրա հավատը)։

Կարլոս V-ի հրաժարումը

Նույն 1555 թվին Կարլոս V-ը հրաժարվեց գահից, յերբ արդեն Աուգսբուրգի հաշտությամբ հաստատվել էր նրա կայսրության փաստական անկումը։ Կարլոս V-ի կայսրության հաբսբուրգյան հողերը,— ավստրիական տիրույթները, Չեխիան և Հունգարիայի մի մասը— անցան նրա յեղբայր Ֆերդինանդ I-ին. Իսպանիան, Նիդերլանդները և իտալական տիրույթներն անցան նրա որդի Ֆիլիպպ II-ին։

Իշխանական ռեակցիան մասնատված Գերմանիայում

Այսպես ուրեմն, 1525 թվի Գյուղացիական մեծ պատերազմում գյուղացիության և պլեբեյության պարտությունը, հետագա ռեակցիան և իշխանների իշխանության ուժեղացումն ավարտեցին Գերմանական կայսրության քայքայման պրոցեսը և նրան մատնեցին մասնատված վիճակի, որը երկար տարիներ գոյություն ունեցավ Միջին Եվրոպայի տնտեսական ընդհանուր անկման հետևանքով: Ռեֆորմացիայից և գյուղացիական պատերազմից շահեցին միայն իշխանները: Ազնվականական և բյուրգերական ոպոզիցիան երկար ժամանակով բռնված էր գյուղացիական-պլեբեյական նոր հեղափոխության երկյուղով:

Որ 1525 թվի հեղափոխական գաղափարները չմոռացվեցին և որ ժողովրդական նոր ապստամբության հնարավորությունը մնում էր ռեալ, այդ մասին վկայում էր հասարակության տարբեր խավերում եղած խմորումը, որը չընդհատվում էր գյուղացիական պատերազմից հետո:

Անաբապտիստները գյուղացիական պատերազմից հետո

Գյուղացիական ապստամբության ջախջախումից և ռեակցիայի վրա հասնելուց հետո անաբապտիստների մի մասը, հիասթափվելով հեղափոխական հեղաշրջման հնարավորության նկատմամբ, վերադարձավ խաղաղ աղանդավորության և խաղաղ հեղաշրջման գաղափարի պրոպագանդային: Բայց անաբապտիստների նույնիսկ այդ մասում բոլորը չէին, որ միատեսակ էին պատկերացնում աստծո արքայության սպասած գալստյան խաղաղ բնույթը: Այն անաբապտիստների մեջ, որոնք գործում էին գյուղացիական պատերազմից հետո, ամենամեծ հռչակ ուներ մուշտակագործ Մելխիոր Հոֆմանը, որը քարոզում էր Քրիստոսի երկրորդ գալստյան մոտիկության մասին: Մելխիոր Հոֆմանը գտնում էր, որ այդ հեղաշրջումը տեղի կունենա 1533 թվին և որ Ստրասբուրգ քաղաքը, ուր նա քարոզում էր վերջին ժամանակներում, կդառնա «նոր Երուսաղեմ», այսինքն «աստծո արքայության» կենտրոնը երկրում: Թեպետ Մելխիոր Հոֆմանը սոցիալական հեղաշրջումը սպասում էր գերբնական ուժերից, այնուամենայնիվ նա պնդում էր, որ Քրիստոսի հաղթանակից հետո կգա այն ժամը, երբ հարկավոր կլինի աշ-

խարհը սրով մաքրել բոլոր ճնշողներից։ Սակայն բոլոր անաբապտիստները չէին, որ հաշտվում էին այն մտքի հետ, թե անհրաժեշտ է սպասել ճշմարտության հազարամյա թագավորության գալուն։ Նրանցից շատերը զանազան ռայոններում շարունակում էին Թոմաս Մյունցերի ոգով հեղափոխական պրոպագանդ մղել։ Հեղափոխական պրոպագանդն առանձին հաջողություն ուներ Նիդերլանդներում և հյուսիս-արևմտյան Գերմանիայի քաղաքներում։ Նիդերլանդներում անաբապտիստական շարժման ամենաականավոր գործիչն էր Հաարլեմ քաղաքի հացագործ Յան Մատիսը, որը քարոզում էր, թե Քրիստոսի երկրորդ գալուստը և սոցիալական հեղաշրջումը պետք է նախապատրաստվեն հենց անաբապտիստների հեղափոխական ելույթով։ XVI դարի 30-ական թվականների սկզբում հյուսիս-արևմտյան Գերմանիայի քաղաքներում Յան Մատիսի և նրա կողմնակիցների հեղափոխական պրոպագանդայի տարածման համար նպաստավոր դրություն ստեղծվեց, որովհետև այդ ժամանակ այստեղ ռեֆորմացիայի համար սկսվեց մի պայքար, որը, ինչպես և առաջ հարավային Գերմանիայում, ուղեկցվում էր պլեբեյական ստորին խավերի հեղափոխական շարժման վերելքով։

Մյունստերի կոմունան

1533 թվի սկզբին ռեֆորմացիան հաղթանակեց Նիդերլանդների մոտ գտնվող Մյունստեր քաղաքում։ Իշխան-եպիսկոպոսին քաղաքից արտաքսելուց հետո Գերմանիայի մյուս քաղաքներից անաբապտիստները սկսեցին հավաքվել Մյունստերում։ Քաղաքի ներսում սրված դասակարգային պայքարի պայմաններում անաբապտիստների ազդեցությունն այնքան ուժեղացավ, որ 1534 թվի փետրվարին, երբ Մյունստեր ժամանեցին Յան Մատիսը և նրա ամենամոտ աշակերտ, դերձակ Իոանն Բոկելսոնը, որ ավելի շատ հայտնի յեր Իոանն Լեյդենցի անունով,— անաբապտիստները, որոնք արտաքսված եպիսկոպոսի զինված ուժերի դեմ հրաշալի կազմակերպել էին քաղաքի պաշտպանությունը, քաղաքային խորհրդում մեծամասնություն ստացան և այդպիսով քաղաքում իշխանությունն իրենց ձեռքը վերցրին։

Մյունստերում անաբապտիստների տիրապետությունը շարունակվեց 14 ամիս (մինչև 1535 թվի հունիսը)։ Անաբապտիստները քաղաքն անվանեցին «Նոր Յերուսաղեմ», և թշնամու ուժերով շարունակ պաշարված, նրանք այնտեղ մի շարք բարեփո-

խություններ կատարեցին: Քաղաքում իշխանությունը կազմակերպվեց Յան Մատխի այն քարոզի համապատասխան, թե յերկրում աստծո արքայություն հաստատելու համար անհրաժեշտ է գործադրել սրի ուժը: Իշխանության և պաշտպանության ղեկավարությունը հանձնվեց Իոանն Լեյդենցուն:

Մյունստերի անաբապտիստները մի վորևե վորոշակի ծրագիր չունեյին: Գույքերի ընդհանրության հարցի շուրջը նրանց մոտ չկար նույնիսկ հայացքների միասնություն: Արհեստավորական և ցեխային տարրերը, վորոնց ազդեցությունը Մյունստերում գերակշռում եր բոլոր 14 ամիսների ընթացքում, այնպիսի կարգ սահմանեցին, վոր արտադրության գործիքները մնացին վարպետների ձեռքում, իսկ յենթավարպետները յենթարկվում եյին նրանց: Վարպետների իրավունքները միայն մասամբ սահմանափակվեցին նրանով, վոր համայնքը կարիքի դեպքում կարող եր առանձին վարպետներին պարտադիր հանձնարարություններ տալ: Մի փոքր ավելի լայն եյին համայնքի իրավունքները քաղաքի գյուղատնտեսական հողամասերի նկատմամբ, վորոնք մշակման համար բաժանվում եյին առանձին անձանց վրա: Մասնավոր գույքերի կոնֆիսկացիա կատարվում եր միայն վոսկու, արծաթի և առհասարակ դրամական հարստությունների նկատմամբ: Փողը վերացվեց և փոխանակությունը կարող եր կատարվել միայն նատուրայով: Այս բոլոր միջոցները դուրս չեն գալիս հավասարության շրջանակներից, վորը, բացի այդ, կատարվում եր խիստ անհետևողականորեն: Սպառման բնագավառում Մյունստերի կոմունայի հավասարիչ քաղաքականությունն ավելի հեռու յեր գնում և սպառողական կոմունիզմի վորոշ տարրեր եր պարունակում: Հատուկ պաշտոնատար անձինք («սարկավագները») հաշվի եյին առնում սպառման առարկաները: Նրանք նաև իրավունք ունեյին գրավել ավելցուկները՝ չքավորներին բաժանելու համար: Փորձեր արվեցին սպառողական կոմունիզմ մտցնել ընդհանուր սեղանատներ կազմակերպելու միջոցով: Բուրժուական պատմագիրները, վորոնք աշխատում են զրպարտել Մյունստերի կոմունան, առանձնապես շատ են կանգ առնում Մյունստերում բազմակնություն մտցնելու վրա: Անաբապտիստները դրա վրա նայում եյին ինչպես ժամանակավոր միջոցի վրա, նպատակ ունենալով թշնամու պաշարման

պայմաններում պայքարել պոռնկության և կանանց գործազրկության դեմ:

Կաուցկին սխալ է գործում, յերբ Մյունստերի անաբապտիստներին անվանում է «հեղափոխական կոմունիստներ»: Իրականում Մյունստերի կոմունայի գլխավոր նշանակությունը կայանում է վոչ թե նրա սոցիալական բարեփոխություններում, այլ նրանում, վոր գյուղացիական պատերազմի ջախջախումից հետո ժողովրդական ստորին խավերը նորից ցուցաբերեցին իրենց պատրաստակամությունը՝ հեղափոխականորեն պայքարելու ֆեոդալական ռեակցիայի դեմ և այնու հանդերձ ցույց տվին, թե վորքան մեծ է նրանց ատելությունը դեպի բոլոր շահագործող դասակարգերը:

Գյուղացիական պատերազմի ճնշումից հետո վրա հասած ռեակցիայի պայմաններում Մյունստերի կոմունան մնաց առանձնացած: Ճիշտ է, հյուսիս-արևմտյան Գերմանիայի ուրիշ մի քանի քաղաքներում փորձեր յեղան նրան օգնության հասնելու, բայց այդ փորձերը սկզբից ևեթ ջախջախվեցին: Յերկարատև, հերոսական պաշտպանությունից հետո Մյունստերն ընկավ: Մյունստերի կոմունայի այն գործիչները, վորոնք կենդանի եյին մնացել, նրանց թվում նաև Իոանն Լեյդենցին, դաժան խոշտանգումներից ու տանջանքներից հետո մահապատժի յենթարկվեցին:

ԳԼՈՒԽ VI

ՌԵՖՈՐՄԱՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈՆՏՐՌԵՖՈՐՄԱՑԻԱ

Ռեֆորմացիան Շվեյցարիայում Ռեֆորմացիոն շարժումն առաջացել էր Յեվրոպայի պատմական զարգացման ընդհանուր պայմաններից — քաղաքների աճից, այսպես կոչված նախակզբնական կուտակման պրոցեսից։ Ուստի և այդ շարժումը, վոր ուղղված էր կաթոլիկ յեկեղեցու վորպես ֆեոդալական հաստատության դեմ, պետք է տեղի ունենար վոչ միայն Գերմանիայում, այլև ուրիշ յերկրներում։ Այն յերկիրը, վորտեղ առաջացան ռեֆորմացիայի մյուս յերկու ուղղությունները և ապա լյութերականության հետ մեկտեղ տարածվեցին ամբողջ Յեվրոպայում, — Շվեյցարիան էր։ Նրա յերկու հակադիր ծայրերը, հյուսիս-արևելքը և հարավ-արևմուտքը, Ցյուրիխը և Ժնևը, տվին յերկու ռեֆորմատոր, — Ցվինգլին և Կալվինը, վորոնք անհամեմատ ավելի կատարյալ էյին, քան Լյութերը, վորը վերջին հաշվով իր ռեֆորմը ծառայեցրեց իշխաններին։ Ցվինգլին և Կալվինն արտահայտեցին ամբողջ ռեֆորմացիոն շարժման բուրժուական էությունը։ Ճիշտ է, ցվինգլիականությունը գրեթե չհաջողվեց դուրս գալ Շվեյցարիայի սահմաններից, դրա փոխարեն կալվինիզմը դարձավ «այն ժամանակվա բուրժուազիայի ամենահամարձակ մասի»[1] մարտական իդեոլոգիան։ Նրա նշանակությունը շատ մեծ է։ Յեթե գերմանական ռեֆորմացիան յեվրոպական բուրժուազիայի առաջին մեծ ճակատամարտն էր ֆեոդալիզմի դեմ, ապա «կալվինիզմի մեջ, — ասում է Էնգելսը, — իր համար պատրաստի մարտական թեորիա գտավ բուրժուազիայի յերկրորդ խոշոր ապստամբությունը»[2] — XVII դարի

---

1 *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. II, էջ 297։

2 Նույն տեղը։

անգլիական հեղափոխությունը: Կալվինիզմը կարևոր դեր խաղաց նիդերլանդական հեղափոխության մեջ: Ցվինգլիականությունը և կալվինիզմը մեզ համար հասկանալի կլինեն միայն այն միջավայրի առնչությամբ, վորտեղ տեղի յեն ունենում յեվրոպական ռեֆորմացիոն շարժման այդ յերկու ուղղությունների սաղմնավորումը և սկզբնական ետապները:

Շվեյցարական միությունը XVI դ.

XVI դարի սկզբում շվեյցարական կոնֆեդերացիան կազմված եր 13 իրավազոր կանտոններից, 10 յերկրներից, վորոնք միութենական հարաբերությունների մեջ եյին գտնվում այդ 13 կանտոններից միայն մի քանիսի հետ («միութենական յերկրները», օրինակ, Սեն-Գալլենը, Մյուլհաուզենը, Ժնևը և այլն), և վորոշ քանակությամբ այսպես կոչված՝ ստորակա տերիտորիաներից՝ ուր կոնֆեդերացիան կամ նրա առանձին անդամներն ուղարկում եյին իրենց փոխանորդներին— ֆոգտերին: Ստորակա տերիտորիաները XIV—XV դարերում շվեյցարացիները գրավել եյին Ավստրիայից, Սավոյայից և Միլանից, և այս պատճառով դրանք մեծ մասամբ պատկանում եյին վոչ թե ամբողջ կոնֆեդերացիային, այլ առանձին կանտոններին: Այդ տերիտորիաները ներկայացուցչություններ չունեյին կոնֆեդերացիայի սեյմում: Այսպիսով իրենց համար ազատություն նվաճելով, շվեյցարացիները բնավ հակամետ չեյին ազատություն տալ ուրիշներին: Բայց նույնիսկ իրենց միջավայրում նրանք հազիվ թե կարողանային պարծենալ իրավահավասարությամբ: Կոնֆեդերացիան բնա՛վ ամբողջական չեր: Նրա հիմնական միջուկը կազմում եյին այսպես կոչված անտառային կանտոնները (Շվից, Ուրի, Ունտերվալդեն), վորոնք միմյանց հետ դաշինք եյին կնքել դեռ XIII դարի վերջում, և սրանց վրա միացած Լյուցերնը և Ցուգը: Դրանք տնտեսական տեսակետից հետամնաց հովվական-յերկրագործական դեմոկրատիաներ եյին նախաֆեոդալական հասարակությունների խիստ զգալի մնացուկներով, վորտեղ «... հնադարյան քրիստոնեական-գերմանական բարբարոսությունը պահպանվել եր իր նախնադարյան ձևով, գրեթե ընդհուպ մինչև կաղիններով սնվելը»[1] և վորտեղ «... չնայելով դեմոկրատական սահմանադրության, տգետ հո-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. V, եջ 227:

հովիվներից բաղկացած բնակչությունը նահապետական հիմունքներով կառավարում են մի քանի հարուստ հողատերերը»[1]: Իսկ այնպիսի քաղաքային կանտոններ, ինչպես Բազելը, Ցյուրիխը, Բեռնը, այնպիսի քաղաքներ, ինչպես Ժնևը և այլն,— առևտրական և արդյունաբերական խոշոր քաղաքներ էին և գտնվում էին այն ճանապարհների վրա, վորոնք Գերմանիան և Ֆրանսիան կապում էին Իտալիայի հետ: Սակայն հին կանտոնները սեյմերում ավելի մեծ արտոնություններ ունեին, քան այն քաղաքներից շատերը, վորոնք ավելի ուշ էին հարել միությանը, չնայելով սրանց տնտեսական ամբողջ կշռին և նշանակությանը: Այդպիսի քաղաքներից էր նաև Ցյուրիխը, վոր առևտրական ու արդյունաբերական հարուստ քաղաք էր: Այնտեղ էին գումարվում սեյմերը: Նրա կապիտալիստները մասնակցում էին հարավ-արևմտյան Գերմանիայի խոշորագույն ֆիրմաների, օրինակ, Վելզերների ձեռնարկումներին:

Առանձին կանտոններում իշխանությունը պատկանում էր արտոնյալ վերնախավին: Անտառային կանտոններում դրանք խոշոր հողատերեր էին, քաղաքային կանտոններում— պատրիկյան տոհմեր, վորոնց դեմ պայքար էին մղում արհեստավորական համքարությունները և վոչ տոհմիկ վաճառականությունը: Կանտոններում քաղաքները հետզհետե գրավում էին իշխանությունն ի վնաս գյուղական բնակչության և աշխատում էին, իրենց շահերից ելնելով, փոխել կարգերը: Գյուղացիները հաճախ դուրս էին գալիս իրենց իսկ քաղաքների ու նրանց առաջնորդների դեմ: Քաղաքներում նույնպես բազմիցս տեղի էին ունենում վաճառականության և համքարությունների ապըստամբություններ արիստոկրատիայի դեմ: Դրա հետևանքով յուրաքանչյուր կանտոնի ներքին կարգը տարբերվում էր մյուս կանտոնների կարգից: Օրինակ, Բեռնում, Ցվինգլիի ժամանակներում վարչությունն արիստոկրատական էր, Ցյուրիխում գոյություն ուներ ավելի դեմոկրատական կարգ:

Այն կարևորագույն հարցերը, վորոնք այն ժամանակ հուզում էին Շվեյցարիան, դրանք արտաքին գործերն էին: Դեռ XIII դարում պայքար սկսելով իրենց անկախության համար, շվեյցարացիները XIV և XV դարերում, շնորհիվ իրենց ռազմա-

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. V, էջ 228:

կան հաջողությունների, անպարտելիության փառք ձեռք բերին: Շվեյցարական կանտոնները ոչ միայն փաստական ինքնուրույնություն նվաճեցին, այլև XV դարի մեծ պատերազմներում, որոնք տեղի էին ունենում ազգային խոշոր պետություններ կազմվելու պրոցեսում,— նրանք դարձան մի ուժ, որոնց՝ այս կամ այն կողմին մասնակցելուց կախված էին լինում պատերազմների հետևանքները, երբեմն և նույնիսկ պետությունների բախտը: Նանսիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1477 թ.) շվեյցարացիները վերջ տվին բուրգունդական պետության գոյությանը: 1499 թվին ջախջախելով Մաքսիմիլիան կայսրին, նրանք կարողացան կոնֆեդերացիան դարձնել միանգամայն անկախ այսպես կոչված Սրբազան Հռոմեական կայսրությունից (այդ պայմանագիրը վերջնականապես հաստատվեց 1511 թվին, Բազելում):

Քաղաքական անկախությունը, շրջապատող պետությունների համեմատությամբ որոշ ազատությունը և ներքին կառավարման դեմոկրատիզմը Շվեյցարիան դարձնում էին գայթակղիչ օրինակ և ձգողության կենտրոն՝ հարևան քաղաքների և տերիտորիաների համար: Գերմանիայում XV և XVI դարերի հեղափոխական շարժումների ժամանակ շվեյցարական կարգերը հաճախ հանդես են գալիս որպես մի նպատակ, որին ձգտում են քաղաքները, իսկ շվեյցարական ազատությունը (սակայն ոչ այնքան հիմնովին) գրեթե գյուղացիական դեմոկրատիա յե համարվում: Հարավ-արևմտյան Գերմանիայում, «Բոշի» մի շարք ապստամբություններում շվեյցարական միությանը հարելու ձգտումը և «գեղջկական թագավորություն» (burische Regierung) հիմնելը գրեթե որպես սինոնիմներ էին հնչում:

Վարձկանություն Բայց շվեյցարական անհաղթ հետևակորի փառքը Շվեյցարիայի ներքին կյանքում առաջացրեց չափազանց բացասական մի երևույթ— վարձկանությունը: Շվեյցարական զորքերը վարձվում էին ծառայելու ֆրանսիական թագավորին և կայսրին, փող ստանալով մասնակցում էին իտալական պետությունների պատերազմներին, ծառայում պապի զորքերում: Զորական վարձկանների հավաքագրումը յեկամտի շահավետ աղբյուր դարձավ կանտոնալ կառավարությունների համար, և կառավարող վերնախավից ոլիգարխիական առանձին խմբակներ, այս կամ այն թագավորից ստանալով կենսաթոշակներ ու կա—

չարքներ, նրա ոգտին ծախում եյին իրենց համաքաղաքացիների արյունն ու կյանքը։ Կանտոնի յուրաքանչյուր գլխավոր քաղաքում գոյություն ունեյին՝ և՛ պապական կուսակցությունը, և՛ ֆրանսիական թագավորի կուսակցությունը, և՛ կայսեր կուսակցությունը, ընդ վորում նրանցից յուրաքանչյուրի ջանքն ու ճիգը խրախուսվում եր համապատասխան պետության փողերամով։ Մարինյանոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո (1515 թ.) շվեյցարացիներին դրդելու համար, վորպեսզի նրանք ստորագրեն այն պայմանագիրը, վորի հիման վրա ֆրանսիական թագավորը մշտական իրավունք եր ստանում Շվեյցարիայում զինվորներ հավաքագրելու, Ֆրանցիսկ I-ի պատվիրակը կանտոնների դեսպանների ներկայությամբ վոսկի փռեց հատակի վրա և թխկով հավաքելով այդ փողը, ասաց. «սա կայսեր խոստումներից ավելի լավ ե»։

Վարձկանության պրակտիկան առանձնապես ուժեղ եր անտառային ու լեռնային կանտոններում, ուր առավելապես գյուղացիություն եր բնակվում։ «Ազնիվ, համառ ալպյան հովիվները...— ասում ե Էնգելսը,— ազատվեցին ավստրիական արծվի տիրապետությունից, վորպեսզի ընկնեն Ցյուրիխի, Լյուցեռնի, Բեռնի և Բազելի բուրժուաների լծի տակ։ Այդ քաղաքացիները նկատեցին, վոր բնիկ շվեյցարացիները նույնպես ուժեղ են և նույնպես հիմար, ինչպես և նրանց յեզները։ Նրանք մտան շվեյցարական միության մեջ և այդ ժամանակներից հանգիստ նստած եյին տանը, վաճառասեղանի առաջ, այն ժամանակ, յերբ ալպյան պնդագլուխ հովիվները նրանց համար կռվում եյին ազնվականության և իշխանների դեմ... Այնու հանդերձ՝ նրանց իրավունք վերապահեցին սեփական հայեցողությամբ տընորինել իրենց ներքին գործերը, և նրանք ամենայերջանիկ անգիտության մեջ եյին մնում այն մասին, թե իրենց ինչպես են շահագործում միութենական սիրված յեղբայրները։

... Աստվածավախությամբ և լիակատար պարկեշտությամբ,— շարունակում ե Էնգելսը,— նրանք նվիրվում եյին կովեր կթելուն, պանիր պատրաստելուն, վողջախոհության և իրենց ալպյան յերգերը յերգելուն... Նրանք աղքատ եյին, բայց աչքի եյին ընկնում բարքերի մաքրությամբ. հիմար եյին, սակայն բարեպաշտ և աստվածահաճո. կոպիտ եյին, բայց լայ-

նաթիկունք. ունեյին քիչ ուղեղ, բայց ամուր սրնքամիս: Ժամանակ առ ժամանակ նրանք խիստ շատանում եյին և այդ դեպքում յերիտասարդները հեռանում եյին, այսինքն զինվորական ծառայության եյին վարձվում օտարերկրացիների մոտ և անհողդողդ հավատարմությամբ մինչև վերջ պաշտպանում եյին օտար դրոշակը, վորքան էլ վոր այդ թանկ նստեր իրենց վրա: Շվեյցարացիների մասին միայն կարելի յե ասել, վոր նրանք մեծագույն բարեխղճությամբ թույլ եյին տալիս իրենց սպանել իրենց ռոճիկի համար»[1]:

Վարձկանությունը վաղուց բողոքներ եր առաջացնում ամենաառաջավոր բյուրգերական տարրերի միջավայրում, վորոնք յերազում եյին այն մասին, վոր Շվեյցարիան համախմբվի ու կազմի միասնական պետություն, այդ ժամանակ Յեվրոպայում կազմավորվող պետությունների օրինակով, և շվեյցարական ռազմական ուժն ու փառքը յենթարկվի այդ միասնական պետության շահերին: Այդպիսի ռեֆորմը հավասարազոր կլիներ բուրժուական ֆեդերատիվ պետության ստեղծման և իբրև դրա հետևանք, անտառային գյուղացիական կանտոնները քաղաքային, բուրժուական կանտոններին յենթարկելուն: Քանի վոր անտառային գյուղացիական կանտոնները ծառայում եյին գլխավորապես պապին և կաթոլիկ թագավորներին, ուստի, ինչպես ասում է Էնգելսը, բարեպաշտ եյին և աստվածահաճո. մյուս կողմից, քանի վոր բուրժուազիան, ինչպես Յեվրոպայում ամենուրեք, հակվում եր ռեֆորմացիայի կողմը, ուստի միության քաղաքական բարեփոխության գաղափարները և ռեֆորմացիայի գաղափարները դարձան միևնույն կրոնական-քաղաքական ծրագրի անքակտելի մասերը:

Ցվինգլի Այդ ծրագրի ամենապայծառ ներկայացուցիչն Ուլրիխ Ցվինգլին եր:

Ուլրիխ Ցվինգլին (1484—1531 թ. թ.) ծնվել է գյուղացու ընտանիքում, Վիլդհաուզ կոչված ալպյան գյուղում, ուր նրա հայրն ամման եր (գյուղապետ): Ցվինգլուն ուզում եյին քահանա դարձնել, և նա յեռանդով անձնատուր յեղավ պարապմունքներին, յուրացնելով հումանիստական գերիմաստությունը: Ցելտեսի, այն ժամանակ հայտնի հումանիստի որոք նա սովորում

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. V, եջ 229.

էր Վիեննայի համալսարանում, վորն ավարտելուց հետո Բազե-լում լատիներեն լեզու էր դասավանդում: Նախ քան ռեֆորմատոր դառնալը նա հայտնի եղավ իբրև հումանիստ և հնագետ:

Գլարուսում դառնալով քահանա (1506 թ.), Ցվինգլին այդ կոչումով ծառայում էր մի գնդում, ականատես եղավ Մարինյանոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտին (1515 թ.) և կարող էր համոզվել, թե ինչպիսի անբարոյականացուցիչ ազդեցություն է գործում օտարերկրյա վոսկին, վորով գնվում էին շվեյցարական վարձկանները: Նա շուտով դարձավ ֆրանսիական կուսակցության մոլի հակառակորդ և 1516 թվին ստիպված էր հեռանալ-գնալ Եյնզիդելն,— պապական ինդուլգենցիաների վաճառքի շվեյցարական կենտրոնը: Այստեղ նա սկսում է առաջին անգամ ռեֆորմացիոն իդեաներ արտահայտել: «Ավետարանը... յես սկսեցի քարոզել 1516 թվին, յերբ մեր կողմերում դեռ վոչ մի մարդ նույնիսկ չէր ե՛լ լսել Լութերի անունը»,— գրում էր նա հետագայում: Իրականում Լութերի յեթե վոչ գաղափարները, գոնե վճռականությունը մեծ ազդեցություն է թողել Ցվինգլիի վրա: Յերկար ժամանակվա ընթացքում Ցվինգլին չէր խըզում իր կապը կաթոլիկ յեկեղեցուց, թեպետև հետզհետե ավելի ազատորեն էր մեկնաբանում «սուրբ գիրքը»: Նույնիսկ տեղափոխվելով Ցյուրիխ, ուր նա կանոնիկոսի պաշտոն ստացավ (1518 թ.), նա դեռևս հեռու չէր այն համարձակությունից, վորով այդ ժամանակ հանդես էր գալիս Լութերը: Ցյուրիխում գտնվելը,— մի այնպիսի քաղաքում, վորը խիստ ոպոզիցիոն գիծ էր կիրառում Ֆրանսիայի դեմ,— վերջնականապես վորոշեց Ցվինգլիի ռեֆորմացիայի քաղաքական ուղղությունը: Ցյուրիխի իշխանությունները նրա պահանջով արգելեցին ինդուլգենցիաների վաճառքը: 1522 թվին Ցվինգլին հանդես յեկավ պասերի և հոգևորականության ամուրիության դեմ և լիակատար պաշտպանություն գտավ քաղաքային խորհրդում, վորը վորոշեց Ցյուրիխը հայտարարել Կոստանցայի յեպիսկոպոսից անկախ: 1523 թվից սկսվում է վանքական գույքերի գրավումը, իսկ 1524 թվին վերացվում է պատարագը, սրբապատկերների ու սրբերի պաշտամունքը, մտցվում է յերկու ձևի հաղորդություն և ընդունվում է ուսմունք հաղորդության, վորպես մի ակտի մասին, վորը կատարվում է միայն իբրև հիշատակ խորհրդավոր ընթրիքի

մասին և չի պարունակում մոգական ուժ (շնորհ), վոր նրան վերագրում է կաթոլիկ յեկեղեցին։

Ցվինգլիի ռեֆորմացիայի առանձնահատկությունն այն էր, վոր ամբողջ ռեֆորմն անցնում էր քաղաքային իշխանությունների հսկողության տակ և նրանց գործունյա մասնակցությամբ։ Այստեղից բխում էր պաշտամունքի «միակերպությունը» և նրա հարկադրականությունը բոլոր քաղաքացիների համար։ Յեկեղեցին և քաղաք—պետությունն այստեղ միաձուլվում էյին։ Քաղաքային իշխանությունների վարչական կարգադրությունները կրոնական յերանգավորում ունեյին, իսկ կրոնական պատվիրանները քիչ էյին տարբերվում վոստիկանական կարգադրություններից։ «Սեփական տանը սրբապատկերներ ունենալը կամ պաս օրերին ձուկ և վոչ թե միս ուտելը դարձավ վոչ անվտանգ»,— ասում է Ցվինգլիի ռեֆորմացիայի մի պատմաբան։ Յեվ այդ միանգամայն հասկանալի յե։ Շվեյցարական փոքրիկ կանտոնի սահմանափակ կյանքում յեկեղեցական համայնքը, վոր կազմըվում է յեկեղեցու վերաբերյալ նոր հասկացողությունների համաձայն, անմիջապես զուգադիպում է համայնքի, վորպես քաղաքական հասարակության հետ։ Ամբողջ ռեֆորմի բուրժուական բնույթն առանձնապես ցայտուն կերպով դրսևորվեց Գերմանիայում 1525 թվին տեղի ունեցած գյուղացիական պատերազմից հետո, յերբ Ցվինգլին իր կապը խզեց անաբապտիստներից և սկսեց հետապնդել նրանց։ Այս կերպ սահմանազատվելով ծայրահեղ տարրերից, Ցվինգլին է՛լ ավելի մեծ թափով զգաց, վոր անհրաժեշտ է իր ռեֆորմացիան դնել քաղաքային իշխանությունների հովանավորության տակ և մագիստրատը ճանաչել իբրև յեկեղեցական բարձրագույն որգան, իր հետագա յերկերում ընդգծելով իշխանության աստվածային կոչումը և թուլացնելով նրան դիմադրելու իրավունքի վերաբերյալ ուսմունքը։ Բայց նա այնուամենայնիվ մինչև վերջ մնաց հանրապետական, վորը բոլոր իշխաններին ու թագավորներին վերաբերվում էր վորպես բռնակալների, և Ցվինգլիի այդ հանրապետականությունն արտացոլվեց նաև նրա դոգմատիկ դրույթներում։ Յերբ 1529 թվին լութերական մի քանի իշխաններ հարց բարձրացրին ցվինգլիականությունը և լութերականությունը հաշտեցնելու մասին, նպատակ ունենալով դաշինք կնքել բողոքականության սպառնացող Կարլոս V կայսեր դեմ, այդ փորձն անհաջող վեր-

ջացավ: Դուրս յեկավ, վոր Լութերի իշխանական ռեֆորմացիան դժվար եր միացնել Ցվինգլիի բուրժուական-հանրապետական ռեֆորմացիայի հետ, այնպես, ինչպես դժվար եր քաղաքային հանրապետությունը հաշտեցնել զարգացող իշխանական աբսոլյուտիզմի հետ: Լութերը Ցվինգլիի հետ բանակցություններ վարելու ժամանակ ուղղակի հայտարարեց. «Ձեր վոգին և մեր վոգին իրար հետ համաձայն չեն»: Իսկ յերբ Ցվինգլին արցունքներն աչքերում աղերսում եր Լութերին, վոր գոնե յեղբայրական սեր տածեն մեկ-մեկու, Լութերը պատասխանեց, վոր աստված պատվիրել ե այդպիսի սիրով թշնամիներին ել սիրել: Հարցը վերաբերում եր վոչ միայն դոգմաների հաշտեցման, այլև քաղաքական դաշինքին, վորն այնպես ել չկայացավ:

Ցվինգլիի ռեֆորմացիայի բուրժուական բնույթը վոչ մի բնագավառում չարտահայտվեց այնպիսի թափով, ինչպես պաշտամունքը պարզացնելու, «եժան յեկեղեցու» իդեալին մոտենալու ձգտման մեջ: Պաշտամունքի պարզություն և խստություն, յեկեղեցու «մաքրում» այն ամենից, ինչ վոր «կռապաշտական» ե, այն ամենից, ինչ վոր հիշեցնում ե կաթոլիկական յեկեղեցական արարողության շքեղությունը,— ահա այդ նոր յեկեղեցու արտաքինը: Հին կտակարանային անհանդուրժելիությամբ, բայց այնու հանդերձ հին կտակարանային ուժով եր ներթափանցված այդ փոքրիկ «աստծո արքայությունը», վորի մարգարեն եր մայր յեկեղեցու հասարակ քահանան:

Ցվինգլիի ռեֆորմացիան սկսեց հետզհետե տարածվել Շվեյցարիայի նաև մյուս կանտոններում: Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ հարուստ Բեռնի միացումը, վորտեղ ռեֆորմացիա մտցնելուն զուգընթաց՝ խորհրդից արտաքսվեց արիստոկրատիան և քաղաքական կարգը մոտեցվեց Ցյուրիխի ավելի դեմոկրատական կարգերին (1528 թիվ): Այդ յերկու քաղաքների դաշինքը մինչ այդ տատանվող մի չորս կանտոններին ստիպեց վերջնականապես հարել ռեֆորմացիային (Սեն-Գալլեն, Գլարուս, Շաֆհաուզեն, Բազել): Նրանց հետևեցին նաև մերձակա գերմանական քաղաքները (Մյուլհաուզենն Ելզասում, Ռոտվեյլը, Ստրասբուրգը), վորտեղ շվեյցարական ռեֆորմացիոն գաղափարների տարածման հետ մեկտեղ առաջանում եր համակրանք դեպի շվեյցարական քաղաքական կարգերը: Այդ հաջողություններով քաջալերված, Ցվինգլին պատրաստ

էր ձեռնամուխ լինել մի համարձակ պլանի իրագործման— համախմբել Շվեյցարիան իբրև բուրժուական հանրապետությունների ֆեդերացիա, Ցյուրիխի և Բեռնի հեգեմոնիայի տակ: Բայց այստեղ նա հանդիպեց վճռական դիմադրության,— թե կաթոլիկական հին կանտոնների, վորոնք մի ժամանակ կազմում եյին շվեյցարական միության միջուկը (Շվից, Ուրի, Ունդերվալդեն, Լյուցերն և Ցուգ) և վորոնք մարդկային մատերիալի գլխավոր մատակարարներն եյին Արևմտյան Յեվրոպայի վարձու բանակների համար,— և թե Ցյուրիխի ու Բեռնի արիստոկրատական-պատրիկյան շրջանների կողմից: Սկսեցին լուրեր տարածվել Ցվինգլու, վորպես այնպիսի մարդու մասին, վորն ուզում է գրավել իշխանությունը և կառավարել անսահմանափակ կերպով: Դժգոհ եյին նույնիսկ Ցյուրիխի դաշնակիցները— բեռնցիները, վորոնց չափազանց էր թվում Ցվինգլու պլանը՝ ֆեդերացիայում ստեղծել կենտրոնական կառավարություն և կանտոնների ներկայացուցչություն՝ բնակիչների թվին համապատասխան: Այդ նշանակում էր, վոր Շվեյցարիայի հին գյուղացիական նահապետական կանտոնները պետք է յենթարկվեյին քաղաքային հանրապետություններին: Բանի գնում, այնքան վատանում եյին հարաբերությունները: Արդեն 1525 թվին Ցվինգլին ստեղծեց «հնգաքաղաքի» դեմ պայքարելու խորհուրդ» (այսինքն հինգ անտառային կանտոնների դեմ): 1531 թվին բանն այնտեղ հասավ, վոր բացահայտ պատերազմ ծագեց Ցյուրիխի և անտառային հինգ կանտոնների միջև: Ցյուրիխը պատրաստված չեր այդ պատերազմին: Կապպելի մոտ տեղի ունեցած ճակատամարտում 1531 թվի հոկտեմբերի 11-ին Ցյուրիխի բանակը ջարդվեց և ինքը, Ցվինգլին ընկավ կռվում: Դրա հետևանքը յեղավ ավետարանական կանտոնների դաշինքի լուծումը, հին միության և կրոնի իրավահավասարության վերականգնումը:

Ժնև Շվեյցարական ռեֆորմացիայի մի այլ ուղղության, կալվինիզմի (դրա հիմնադրի, ֆրանսիացի Ժան Կալվինի անունով, 1509—1564 թ. թ.) կենտրոնը Ժնևն էր: Այս քաղաքը, վոր մի փոքրիկ տերիտորիա յեր գրավում Լեման լճի մոտ, Ռոնա գետի ափին և գտնվում էր Ֆրանսիայից, Նիդերլանդներից և Գերմանիայից դեպի Իտալիա տանող ուղիների խաչաձևման կետում, XV դարում տոնավաճառների կարևոր

մի վայր եր և XVI դարում շարունակում եր մնալ իբրև խոշոր բորսա։ Ժնևը մտնում եր Հռոմեական կայսրության կազմի մեջ, բայց հետո անջատվեց նրանից, ազատվեց իր իշխան-յեպիսկոպոսի իշխանությունից և դեռ XV դարի 70-ական թվականներին միութենական յերկրի իրավունքներով հարեց շվեյցարական միության։ Այդ միությունը Ֆրեյբուրգի հետ վերջնականապես ձևավորվեց 1519 թվին և Բեռնի հետ— 1526 թվին։ Հարևան լինելով սավոյան հերցոգներին, վորոնք ցանկանում եյին իրենց ձեռքն առնել առևտրական և դրամական այդ խոշոր հանգույցը, Ժնևը ստիպված եր ոգնություն խնդրել շվեյցարացիներից։ Առանձնապես կարևոր եյին նրա կապերը Բեռնի հարուստ և ուժեղ կանտոնի հետ, վորն այդ ժամանակ նույնպես ընդարձակվել եր Լեման լճի ուղղությամբ։ Այդ քաղաքական դաշինքին նախորդեց քաղաքի ներքին պայքարը, գլխավորապես ազնվականական տարրերի արտաքսումը,— վորոնք ձգտում եյին դեպի ազնվականական սավոյան պետությունը,— և Ժնևի վերածումը տիպիկ բյուրգերական քաղաքի («խանութպանների քաղաք», ինչպես նրան արհամարհանքով անվանում եյին արտաքսված ազնվականները), վորն այնուհետև հարելով ցվինգլիականությանը, ամրապնդեց իր դաշինքը Շվեյցարիայի հետ։ Վերջին քայլը բնական եր մի այնպիսի քաղաքի համար, վորին վիճակվեց իր ձեռքը վերցնել վոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր իշխանությունն իր համաքաղաքացիների վրա, նպատակ ունենալով կանխել իր նախկին տիրոջի, իշխան-յեպիսկոպոսի ամեն մի պահանջախնդրությունը։

Կալվինը յեվ նրա ուսմունքը 1536 թվին Կալվինը յեկավ Ժնև։ Նա ծնվել է Նուայոնում, Պիկարդիայում (Հյուսիսային Ֆրանսիա), 1509 թվին, մի յեպիսկոպոսի քարտուղարի ընտանիքում։ Հայրը, վոր ուզում եր իր վորդուն իրավաբան դարձնել, նրան ուղարկեց սովորելու Բուրժի և Որլեանի համալսարաններում, վորոնք այն ժամանակ հռչակված եյին իրենց իրավաբանական ֆակուլտետներով։ Այնուհետև Կալվինը գրավվում եր բանասիրությամբ ու գտնվում եր հումանիստական գաղափարների ազդեցության տակ։ Նա յերկար ժամանակ ապրում եր Փարիզում, վորտեղ, ըստ յերևույթին 1534 թվին, դարձավ բողոքական։ Բողոքականների դեմ յեղած հալածանքների կապակցությամբ նա ստիպված յեղավ այնտեղից մեկնել Գերմանիա,

խել 1536 թվին տեղափոխվեց Ժնև, որն այդ ժամանակ ապաստարան եր դարձել բոլոր նրանց համար, ովքեր հալածվում եյին հավատի պատճառով,— մանավանդ ֆրանսիացիների համար: Այդ նույն թվականին լույս տեսավ նրա հիմնական աշխատությունը, որն այնուհետև նա լրացումներով ու ճշտումներով հրապարակեց մի քանի անգամ և որը դարձավ կալվինյան դավանության անկյունաքարը, «Քրիստոնեական հավատի հրահանգը» («Institutio religionis christianae»): Ժնևում կուսակցությունների պայքարը ստիպեց Կալվինին,— որը յեռանդուն կերպով միջամտում եր յեկեղեցու գործերին և կառավարման,— ժամանակավորապես հեռանալ այդ քաղաքից (1538 թ.), բայց 1541 թվին նա կրկին կանչվեց այնտեղ և մնաց մինչև մահը, ավելի և ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելով ոչ միայն Ժնևի քաղաքականության, այլև մնացած ամբողջ Յեվրոպայի բողոքական շարժման վրա («Ժնևի պապ»):

Արդեն «Հրահանգի» առաջին հրատարակության մեջ Կալվինը խոսում ե «աստծո կանխատեսության» մասին, այսինքն տալիս ե մի դրույթ, որը հետագայում նա վերջնականապես ձևակերպեց «բացարձակ նախասահմանման» իր ուսմունքում: Այդ ուսմունքը կազմում ե նրա ամբողջ աստվածաբանության արմատը և դրա հետ միասին «այն ժամանակվա բուրժուազիայի ամենահամարձակ մասի»[1] կրոնա-քաղաքական կարևորագույն դոկտրինան:

Կալվինը սովորեցնում եր, թե աստված դեռ աշխարհի ստեղծումից առաջ ապագայի իր բացարձակ կանխատեսությամբ ոմանց նախորոշել ե փրկություն, ոմանց ել կործանում: Աստծո այդ դատավճիռը բացարձակապես անփոփոխ և անխուսափելի յե մարդու համար: Հավատն առ աստված, մարդու բարեպաշտությունը, նրա վարմունքների բարոյական ճշտությունը— այդ բոլորը կախված չե մարդու կամքից, այլ միայն աստվածության գործողությունն ե նրա մեջ, աստվածությունը, որը նրան նախընտրել ե փրկության համար: Այդ գործողությունը յուրաքանչյուր առանձին դեպքում, յուրաքանչյուր վարմունքում աստվածային միջամտության իրականացվող ակտ չե, այլ մի ուժ, որը գործում ե բնական օրենքի նման, որի իմաստը

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. II, եջ 297:

և նպատակն անմատչելի չեն մարդուն: Մարդը չի կարող գիտենալ, թե ինչու աստված ոմանց համար փրկություն է նախասահմանել, ոմանց համար— կործանում, որովհետև աստվածային իմաստությունը վորակապես տարբեր է մարդկային իմաստությունից և աստվածությունն ամբողջովին տրանսցենդենտ է աշխարհի նկատմամբ: Այս պատճառով աստվածային նախասահմանումը մարդու կողմից ընդունվում է և չի կարող ընդունվել այլ կերպ, քան աստծո կամայականություն, աստծո, վոր առհավետ ոմանց ընտրել է և ոմանց մերժել: Բայց աստծո կամայականությունը վորոշել է նաև աշխարհի օրինաչափությունը և աստծո չկամենալը՝ իր անմիջական միջամտության ակտերով խզել այդ օրինաչափությունը: Ուստի աշխարհում հրաշք չկա և չի կարող լինել (անձնական և մարդակերպ աստվածության կաթոլիկական գաղափարի դեմ), բայց ինքն աշխարհն իր օրինաչափությամբ հրաշք է, որովհետև աստծո կամայականությունը թույլ է տալիս նաև մի այլ, ոչ օրինաչափ աշխարհի հնարավորությունը: Այստեղից էլ բղխում է նախասահմանման գաղափարը, վորպես մի ուժի, վորն այնպես ասած օրինաչափությամբ և միշտապես գործում է յուրաքանչյուր առանձին մարդու մեջ, մի ուժ, վորը մարդուն մղում է վորոշ ուղղությամբ և կամ նրան ստիպում է բարիք գործել, կամ նրանից հեռանում է այն մոմենտին, յերբ նա չարագործություն է կատարում:

Յեթե Կալվինի առաջին հիմնական դրույթը բացարձակ նախասահմանման գաղափարն էր, ապա յերկրորդ կարևոր դրույթը յեղավ աշխարհի օրինաչափությանը աստվածության չմիջամտելու այդ գաղափարը, աշխարհի նկատմամբ աստվածության ոտարվածության, տրանսցենդենտության յուրահատուկ կերպով արտահայտված գաղափարը: Այս յերկրորդ դրույթը Կալվինին մոտեցնում է ավելի ուշ ժամանակների դեիստների հետ, վորոնք ժխտում էյին աստվածության անմիջական միջամտությունն օրինաչափորեն գոյություն ունեցող աշխարհին, և իրենից ներկայացնում է առաջին քայլը դեպի XVIII դարի բուրժուական-ռացիոնալիստական աշխարհայեցողությունը:

Թվում է, թե նախասահմանման ուսմունքը պետք է մարդուն զրկեր գործունեյության ձգտումից, նրան դատապարտեր ֆատալիստական հնազանդության՝ իր բախտի հանդեպ: Իրակա-

նում հենց կալվինիզմն էր, որ դարձավ բողոքականության մարտական կազմակերպությունն այն պայքարում, որ մղվում էր վերահաս կոնտրռեֆորմացիայի դեմ: Կալվինիզմը հենց սկզբից իրեն ցույց տվեց չափազանց յեռանդոտ, ինչպես այդ մասին վկայում է Կալվինի և նրա զինակիցների գործունեությունը Ժնևում: Այդ կապակցությամբ յեղել է Կալվինի յուրահատուկ լրացումը բացարձակ նախասահմանման ուսմունքին: Կալվինը սովորեցնում էր, որ վոչ վոք չգիտե, թե արդյոք աստված իրեն համար փրկությո՞ւն է նախասահմանել, թե՞ կործանում: Ընդհակառակը, ամեն մեկը պետք է մտածի, որ ինքը հանդիսանում է աստծո ընտրյալ, և լարի իր ամբողջ եներգիան, որպեսզի իր գործունեությամբ ու կյանքով ցույց տա, որ իր համար փրկություն է նախասահմանված: Այսպիսով Կալվինի դոկտրինան դառնում էր գործողությունների դրդիչ և ամենից քիչ կարող էր ֆատալիստական պասսիվություն առաջացնել:

Նախասահմանման վերաբերյալ ուսմունքը Կալվինի ամբողջ աստվածաբանության հիմքն էր: «Նախասահմանման վերաբերյալ նրա ուսմունքը,— ասում է Ենգելսը,— կրոնական արտահայտությունն էր այն փաստի, որ առևտրի ու կոնկուրենցիայի աշխարհում հաջողությունը կամ սնանկությունը կախված են վոչ թե առանձին անձանց գործունեությունից կամ հմտությունից, այլ նրանցից անկախ հանգամանքներից: «Վորոշում է վոչ թե վորևէ առանձին մարդու կամքը կամ գործողությունները, այլ վողորմածությունը»․ հզոր, բայց անհայտ տնտեսական ուժերի: Յեվ այդ առանձնապես ճիշտ էր տնտեսական հեղաշրջման եպոխայում, յերբ բոլոր հին առևտրական ուղիներն ու առևտրական կենտրոնները դուրս մղվեցին նորերի միջոցով, յերբ հայտնագործվեցին Ամերիկան և Հնդկաստանը, յերբ նույնիսկ հնուց մեծարվող տնտեսական հավատո հանգանակը— վոսկու և արծաթի արժեքը տատանվեց և խորտակման յենթարկվեց»[1]:

Ենգելսի այս հանճարեղ դիտողության արդարացիությունը հասկանալի կլինի, յեթե մենք համառոտակի կանգ առնենք այդ ուսմունքի հետագա բախտի և մանավանդ այն բարոյական-գործնական հետևությունների վրա, որ արին Կալվինի հետևորդնե-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. II, էջ 297:

մը, վորոնք Կալվինի դոգմատիկան դարձրին նախասկզբնական կուտակման յուրահատուկ կրոն:

Արդեն հենց իր, Կալվինի մոտ, վորը խիստ բացասական վերաբերմունք ուներ մի կողմից դեպի ազնվականությունը և մյուս կողմից դեպի միստիկ-աղանդավորական մանր-բուրժուական հոսանքները և գույքի ընդհանրության վերաբերյալ ուսմունքները, մենք գտնում ենք այն ժամանակվա համար համարձակ գործնական հայացքներ, վորոնք ուղղակիորեն ցույց են տալիս նրա ուսմունքի բուրժուական էությունը: Նա արդարացնում է տոկոսը, գտնում է, վոր կրոնական տեսակետից ստրկությունը միանգամայն թույլատրելի է (առաքյալները,— ասում է նա,— խստորեն դեմ կլինեյին այդ սովորության, յեթե այն աստծուն հակառակ լիներ): Թե մեկը և թե մյուսը միանգամայն հարմար եր նախասկզբնական կուտակման ժամանակվա բուրժուազիայի պահանջներին, պաշտպանելով նրան տոկոսներ վերցնելու դեմ յեղած կաթոլիկական-յեկեղեցական արգելքից, մի արգելք, վորին կողմնակից եյին նաև ռեֆորմատորներից մի քանիսը, խղճի խայթ զգալով այն առնչությամբ, վոր ստրկավաճառությունը և գաղութներում ստրուկների աշխատանքի շահագործումը սկսել եյին հսկայական չափեր ընդունել:

Կալվինական մի շարք քարոզիչների մոտ բացարձակ նախասահմանման և աշխարհի նկատմամբ աստվածության տրանսցենդենտության վերաբերյալ Կալվինի աստվածաբանական հիմնական գաղափարները գործնական մշակման յենթարկվեցին «աշխարհիկ կոչման» ուսմունքում և «աշխարհիկ ճգնավորության» էտիկայում, վորոնք և իրենցից ներկայացնում են կրոնապես ձևավորված և աստվածային մորալի աստիճանին հասցրած՝ կապիտալիստական կուտակման գործունեյությունը:

Բացարձակ նախասահմանման տեսակետից դիտելով յուրաքանչյուր մարդու գործունեյությունը և պրոֆեսիան իբրև պարտականություն, բայց աշխարհից աստվածության վորակապես տարբերվելու հետևանքով բացառելով աստծո կամքի անմիջական միջամտությունը և աշխարհային որինաչափության խախտումը, կալվինիստները պնդում եյին, վոր յուրաքանչյուր պրոֆեսիա, վորպես աստծո նախորոշում, մի կոչում է, վորն ամեն վոք պետք է կատարի ամբողջ խնամքով: Այս դեպքում փրկության համար նախընտրված լինելը պետք է արտահայտվի պրո-

ֆեսիոնալ գործունեության առաջադիմության մեջ: Որինակ, ձեռնարկուն կամ վաճառականը, չխնայելով իրենց ուժերը, հրաժարվելով կենսական հարմարություններից և վայելքներից (աշխարհիկ ճգնավորություն), պետք է զբաղվեն իրենց գործով, քանի որ այդ է մարդու պարտականությունը. իսկ առաջադիմությունը, որ ուղեկցում է հանուն կոչման կամ պարտականության կատարվող այդ թափված աշխատանքին, ցույց է տալիս առաջադիմողի նախընտրված լինելը: Հենց կուտակումը և ձեռնարկության ընդլայնումը դիտվում են որպես գործունեություն հանուն պարտականության, որպես կոչում: Իբրև լուսաբանություն, կարելի յե բերել պուրիտանական քարոզիչ Բակստերի (1615—1691 թ. թ.) խոսքերը. «Յեթե աստված ձեզ ցույց է տալիս մի ուղի, որով դուք առանց ձեր հոգուն կամ ուրիշներին վնաս հասցնելու կարող եք օրինական ճանապարհով ավելի շատ վաստակել, քան մի այլ ուղիով, և դուք այդ կմերժեք ու կընտրեք ավելի սակավ յեկամտաբեր ուղի, այդ դեպքում դուք կջնջեք ձեր կոչման նպատակներից մեկը, դուք կհրաժարվեք լինել աստծուց կառավարվողը և ընդունել նրա շնորհները, որպեսզի հնարավորություն ունենաք դրանք գործածել նրա համար, յեթե նա այդ ցանկանա: Իհարկե ոչ թե մարմնական հաճույքի կամ մեղքի համար, այլ աստծո համար դուք պետք է աշխատեք, որպեսզի հարստանաք»:

Այդ շրջաններում ասում եյին, թե ուզենալ աղքատ լինել, այդ միևնույնն է, թե ուզենալ հիվանդ լինել: Առաջ եր գալիս այն հայեցողությունը, թե աստված որհնում է առևտուրն ու կուտակումը: Կոչման վերաբերյալ ուսմունքը ծառայում եր ոչ միայն կուտակման, այլև դրա աղբյուրի— կապիտալիստական շահագործման կրոնական լուսաբանության: XVI—XVII դարերի ժամանակաշրջանն իր ժառանգին— XVIII դարի ռացիոնալիստորեն մատերիալիստական բուրժուազիային կտակեց փող վաստակելու և վարձու բանվորական ուժը դաժանորեն շահագործելու ժամանակ փարիսեցիորեն հանգիստ խիղճ ունենալ:

Աշխարհիկ ճգնավորությունը, «որի գաղտնիքը բուրժուական խնայողության մեջ է կայանում»[1], փոխադրվելով գործնական կյանքի ասպարեզը, արտահայտվում եր նրանով, որ

[1] Маркс и Энгельс, Соч. т. VIII, էջ 144.

վոչնչացվում էին կաթոլիկական բազմաթիվ տոները և ավելացվում էր աշխատանքային օրերի թիվը։ Կալվինիստական քարոզիչները բանվորին ներշնչում էին, թե կապիտալիստին հնազանդվելը, տիրոջ համար կատարվող «բարեխիղճ» աշխատանքը բանվորի պարտականությունն է, կենսական կոչումը, որն աստված ինքն է որոշել։ Այդ պարտականությունն ազնվությամբ կատարելը հասցնում է առաջադիմության, այսինքն բանվորն ինքը կարող է կուտակում անել և դառնալ կապիտալիստ և հենց դրան պետք է նա ձգտի։

Խորամուխ լինելով «աշխարհիկ կոչման» կալվինիստական էտիկայի պատմական նշանակության, մենք կասենք, որ կուտակման ծարավը վերածվեց կուտակման առաքինության, հենց որ այն դարձավ մի ամբողջ դասակարգի և ոչ թե անհատ մարդկանց ֆունկցիա, ինչպես այդ լինում էր վաղ միջնադարում, վաշխառուների միջավայրում։ Դառնալով կապիտալիզմի կարևորագույն ֆունկցիան նրա զարգացման առաջին էտապում, այդ «առաքինությունը» կալվինիզմում ստացավ իր կրոնական արդարացումը։

Կալվինական եկեղեցու կազմակերպումը

Կալվինիզմում պատմականորեն կարևոր էր ոչ միայն նրա թեորիան, այլև նրա կազմակերպությունը— կալվինական եկեղեցին։ Ըստ Կալվինի, իսկական եկեղեցին, այդ միայն փրկության համար ընտրվածների աներևույթ եկեղեցին է, և եկեղեցական խորհուրդները միայն նրանց են շնորհ հաղորդում, բայց ոչ թե իբրև դրսից ստացվող պարգև, այլ միայն իբրև այն ուժի դըրդիչ, որը փրկության համար նախանշված մարդու մեջ գործում է աստծո կողմից նրա ընտրված լինելու հետևանքով։ Այսպիսի պայմաններում արտաքուստ տեսանելի եկեղեցին, որպես հիմնարկություն գոյություն ունեցող եկեղեցին էապես հարկավոր չէ։ Սակայն պրակտիկ պահանջները, նոր դավանաբանության պաշտպանությունը, կաթոլիկության դեմ մղվող պայքարը Կալվինին ստիպեցին ընդունել տեսանելի եկեղեցին որպես մարդկանց միավորություն, որտեղ քարոզվում է աստծո խոսքը և կատարվում են մկրտության և հաղորդության խորհրդի ծեսերը, և նա այդ եկեղեցին դարձրեց այնպիսի ուժեղ կազմակերպություն, որ այն շուտով հանդիսացավ հակառեֆորմացիայի դեմ ուղղված ամենակարևոր մարտական ուժը

և «պայքարելու պատրաստ թեորիա» տվեց բուրժուազիային, վորն ապստամբել էր ֆեոդալիզմի դեմ: «Կալվինի յեկեղեցական կարգը,— ասում է Էնգելսը,— ամբողջովին դեմոկրատիկ էր և հանրապետական. իսկ վորտեղ արդեն աստծո արքայությունն էլ է հանրապետականացված, այնտեղ յերկրային արքայությունները կարո՞ղ էյին արդյոք թագավորների, յեպիսկոպոսների և ֆեոդալ-կալվածատերերի հավատարիմ հպատակներ մնալ: Յեթե Գերմանիայում լութերականությունը մի հարմար գործիք էր գերմանական մանր իշխանների ձեռքում, ապա կալվինիզմը հանրապետություն ստեղծեց Հոլանդիայում և հանրապետական ուժեղ կուսակցություններ՝ Անգլիայում և մանավանդ Շոտլանդիայում»[1]:

Կալվինականների մոտ յեկեղեցական համայնքը գլխավորում էյին պրեսբիտեր-ավագները, վորոնք ընտրվում էյին համայնքի աշխարհիկ անդամներից, և քարոզիչները, վորոնք քարոզչության և հոգեոր-բարոյական խրատի սպասարկություն էյին կատարում: Վերջինների պաշտոնությունը կապված չեր քահանայական աստիճանի հետ, այլ միայն սպասարկություն էր (ministerium), վորտեղից էլ ծագել է նրանց «մինիստրներ» անունը, վորն ընդունված է ռոմանական յերկրներում: Պրեսբիտեր-ավագները և մինիստրները կազմում են կոնսիստորիա, վորը կառավարում է յեկեղեցու գործերը: Կալվինական յեկեղեցում հետագա, ավելի բարդ կազմակերպությունը ստեղծվեց արդեն այն ժամանակ, յերբ նա տարածվում էր մյուս յերկրներում: Պաշտամունքի և հավատո ուսմունքի միասնության տեսակետից այդ յեկեղեցում կարևոր նշանակություն ստացան համայնքների ներկայացուցիչների տեղական և համազգային համագումարները, այսպես կոչված սինոդները:

Կալվինական յեկեղեցու այդպիսի կազմակերպությունն ապահովում էր տվյալ համայնքի ամենաուժեղ մարդկանց ազդեցություն և չափազանց նպատակավոր էր բուրժուազիայի՝ տնտեսապես հզոր խավի համար: Բուրժուազիայի համար այն խիստ հարմար էր նաև մի այլ կողմից: Արտաքինի նկատմամբ յեղած արհամարհանքը, վոր հատուկ էր Կալվինի ամբողջ աստվածաբանության, բուրժուազիային թույլ տվեց կալվինիզմում ամբող-

1 Маркс и Энгельс, Соч. XVI, ч. II, էջ 297:

ջովին իրականացնել «եժան յեկեղեցու» իր իդեալը: «Աշխարհիկ ճգնավորությունը», այսինքն պարտականությունը (նաև կուտակման պարտականությունը) կատարելու համար հաճույքներից ամեն կերպ ձեռնպահ մնալն արտաքինի և կենցաղի չչափված համեստություն էր տարածում կալվինականների առօրյա կյանքում: Հոգևոր ու աշխարհիկ իշխանության գրեթե լիակատար միաձուլումը յեկեղեցական դիսցիպլինան դարձրեց վոստիկանական-վարչական հսկողություն յուրաքանչյուր կալվինականի կյանքի վրա: Այդ առանձնապես ուժեղ արտահայտվեց Ժնևում Կալվինի ապրելու ժամանակ, յերբ հոգևոր ղեկավարությունը պարզապես իշխում էր աշխարհիկ իշխանության վրա:

Կալվինը վանքական անդորրություն և բարքերի խստություն էր պահանջում: Ժնևի քաղաքային խորհուրդը պաստորների առաջարկով 1541 թվից գծուծ ու բծախնդիր հսկողություն սահմանեց քաղաքացիների վրա: Բոլորը պետք է հաճախեյին յեկեղեցական սպասարկության, հատուկ անձինք շրջում եյին տնե-տուն ու յեկեղեցի եյին քշում ուշացածներին և ծույլերին: Արգելված եյին զվարճությունները, պարերն ու յերգերը, սովորություն էր դարձվում սև կոստյումներ հագնելը: «Ուզում եյին վերածնել մի այլ, դայթակղությունից զերծ, առասպելական Իսրայելի աստծո ժողովուրդը», քանի վոր աստված, ի փառս վորի գործում էր Կալվինը, վոչնչացնում է հազարավոր անհավատ ուրացողներին, ինչպես ասված է աստվածաշնչում: Աստծո անվանն ուղղված ամեն մի վիրավորանք հետապնդվում էր ու համարվում քրեական հանցագործություն:

Կազմակերպվելով այն ժամանակաշրջանում, յերբ բողոքականությունը դաժան պայքար էր մղում կաթոլիկական հակառեֆորմացիայի դեմ, կալվինական յեկեղեցին վոչ պակաս անհանդուրժողություն էր ցուցաբերում կաթոլիկների և աղանդավորների նկատմամբ, քան ինքը, կաթոլիկությունն իր ուրացողների նկատմամբ: Ժնևում մահապատիժները հաճախակի յերևույթ դարձան: 1553 թվին Կալվինը հրամայեց ձերբակալել իսպանացի գիտնական Սերվետին այն պատճառով, վոր վերջինս իր «Քրիստոնեության վերականգնումը» գրվածքում ժխտում էր քրիստոնեական ուսմունքն աստծու յերրորդության մասին (անտիտրինիտարիզմ): Ժնևի խորհուրդը Սերվետին դատապարտեց այրման և դատավճիռն ի կատար ածվեց: Վորովհետև այդ մա-

հապատիժը բողոքներ առաջացրեց, Կալվինը հանդես եկավ պաշտպանելու Ժնևի խորհրդի գործելակերպը, իսկ դրա հետ մեկտեղ նաև իր սեփական գործելակերպը: «Ուղղահավատ ուսմունքի պաշտպանություն» վերնագիրը կրող երկում, որում ապացուցվում է, թե հերետիկոսներին պետք է սրով պատժել, Կալվինն ասում է. «Աստված չի խնայում ամբողջ ժողովուրդներին. նա հրամայում է հիմնովին ավերել քաղաքները և ոչնչացնել դրանց հետքերը. ավելին,— նա հրամայում է հաղթանակի ավարն անեծքի նշան դարձնել, որպեսզի վարակը չտարածվի մնացած երկրում»:

Կալվինիզմի հետագա պատմության մեջ պետք է նշվի հետևյալ փաստը: Կալվինիզմը, որպես նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի բուրժուազիայի իդեոլոգիա, իր մեջ միացրեց աստվածաբանությունն ու եկեղեցական կազմակերպությունը: Բայց միայն բուրժուազիան չէր, որ յուրացրեց նրա եկեղեցական կազմակերպությունը: Այդ կազմակերպության հանրապետական ձևը և ուժեղ մարդկանց կողմից այն գլխավորելու հնարավորությունը կալվինիստական եկեղեցին դարձրին հարմար զործիք՝ թագավորական աբսոլյուտիզմի դեմ ազնվականության արիստոկրատական խավերի պայքարի համար: Այդ շրջաններում Կալվինի թեորիան և աստվածաբանությունը հետին տեղ բռնեցին: Դրա փոխարեն ամուր կարգապահությունը և հանրապետական կազմակերպությունը դարձան խիստ կարևոր միջոց աբսոլյուտիզմի դեմ ֆեոդալական օպոզիցիայի շարքերը համախմբելու գործում: Այդ կապացվի XVI դարի Ֆրանսիայի պատմությունից, Ֆրանսիա, որտեղ ֆեոդալական օպոզիցիան, որն ընթանում էր կալվինիզմի դրոշակի տակ, հենց ժամանակակիցների կարծիքով տարբերվում էր իսկական կալվինիստներից կամ, ինչպես դրանց անվանում էին, «կրոնական հուգենոտներից», և կրում էր «քաղաքական հուգենոտներ» անունը: Նույն պատճառով կալվինիզմը տարածվեց զուտ ազնվականական-ճորտատիրական այնպիսի մի երկրում, ինչպես Հունգարիան, և Շոտլանդիայի ցեղային արիստոկրատիայի մեջ:

Ռեֆորմացիան սկանդինավյան երկրներում

XVI դարի 20-ական և 30-ական թվականներին ռեֆորմացիան սկսեց արագությամբ տարածվել ամբողջ Եվրոպայում: Գերմանիան և Նիդերլանդները,

Անգլիան և սկանդինավյան յերկրները, Լեհաստանը և Հունգարիան շատ թե քիչ չափով մասնակից յեղան այդ շարժման: Ռեֆորմացիոն շարժումն ավելի քիչ շոշափեց Ֆրանսիան և բոլորովին քիչ՝ Իսպանիան և Իտալիան: Թե ինչո՞ւ այս կամ այն յերկիրը շատ թե քիչ չափով յենթարկվեց ռեֆորմացիոն գաղափարների ազդեցության, դրա պատճառները պետք է փնտռել յուրաքանչյուր առանձին յերկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնկրետ պայմաններում: Կարելի յե պնդել, վոր ռեֆորմացիոն աշխարհայեցողության հակաֆեոդալական էյությունն ամենից հեշտ արտահայտվում եր քաղաքային զարգացած կյանք և բուրժուազիա ունեցող յերկրներում, և տվյալ յերկիրն այնքա՛ն հեշտ եր անցնում բողոքականության, վորքան հաջող եր գնում նրա կապիտալիստական զարգացումը: Սակայն այդ չի նշանակում, վոր ռեֆորմացիան չշոշափեց աղնվականությանը: Անկասկած է, վոր բողոքականության կողմից կաթոլիկական ուսմունքի— գոյություն ունեցող ֆեոդալական կարգի այդ բարձրագույն ընդհանրացման և սանկցիայի[1] վիժեցումն ամբողջ ֆեոդալական կարգի գալիք խորտակման առաջին հայտանիշն եր, բայց սկզբնական ժամանակներում հաճախ հանդես եր գալիս ռեֆորմացիայի այն կողմը, վորը կապված եր միայն յեկեղեցու վորպես ֆեոդալական խոշոր սեփականատիրոջ լիկվիդացիայի հետ: Յեկեղեցական գույքի գրավումը և վանքերի վերացումը ռեֆորմացիայի կողմն եյին գրավում նաև ֆեոդալական դասակարգերին: Նրանց մասնակցությունը հետագայում տանում եր դեպի ռեֆորմացիոն ուսմունքի խիստ եյական փոփոխություններ, ինչպես այդ մենք տեսանք Լութերի և լութերականության օրինակից կամ շուտով կտեսնենք Անգլիայում, Դանիայում ու Շվեդիայում «թագավորական ռեֆորմացիաների» օրինակից: Այդպիսի դեպքերում ռեֆորմացիային միանում եյին հասարակության բարձրագույն խավերը, մինչդեռ բուրժուազիան և պլեբեյական մասսաները կա՛մ հարում եյին ավելի ռադիկալ ռեֆորմացիոն հոսանքներին, կա՛մ նույնիսկ փորձում եյին վերադառնալ դեպի կաթոլիկությունը:

Առաջին դեպքը յեղել է Անգլիայում և դրա վրա մենք մանրամասն կանգ կառնենք այն գլուխներում, վորոնք նվիրված են

[1] Маркс и Энгельс, Соч. т. VIII, էջ 128.

XVI—XVII դարերի անգլիական պատմության: Երկրորդ դեպքի օրինակը տալիս է Շվեդիան, որի համար ռեֆորմացիան նրա ուժեղացման և հյուսիսի ամենաուժեղ տերություն դառնալու սկզբնական մոմենտն էր:

Շվեդիայում չափազանց բարդ է ռեֆորմացիայի մոմենտը: Այստեղ այդ շարժումն իր առաջ դնում էր ոչ միայն եկեղեցական հսկայական հողերի լուծարքի խնդիրը (ամբողջ հողի կեսը պատկանում էր հոգևորականության), այլև Շվեդիայի տնտեսական և քաղաքական ինքնակայության պրոբլեմը, Շվեդիա, որը Կալմարի ունիայի հետևանքով մտել էր Դանիայի գլխավորած սկանդինավյան պետությունների սիստեմի մեջ: Շվեդիայում ռեֆորմացիայի կողմն անցավ ոչ միայն միջին, այլև իր զգալի մասով բարձր ազնվականությունը, որը ցանկանում էր հարստանալ եկեղեցական գույքի գրավման միջոցով: Մեծ դեր խաղաց բուրժուազիան, որը բողոքում էր Դանիայի հետ կնքված միության դեմ, իսկ Դանիան միության մեջ ունեցած իր հեգեմոնիան օգտագործում էր իր վաճառականության միակողմանի հարստացման համար, վաճառականություն, որը յեռանդուն աջակցություն էր գտնում Դանիայի թագավոր Քրիստիան II-ի (1513—1523 թ. թ.) կողմից: Վերջինս 1517 թվին, նպատակ ունենալով իր բուրժուազիայի համար տիրապետող դիրք ստեղծել սկանդինավյան հյուսիսում, խզեց իր կապը ազնվականության և ռեյխսրատի հետ և կառավարություն կազմեց միայն քաղաքացիներից, հույս ունենալով, որ նրանց օգնությամբ ինքը կկարողանա կառավարել յերկիրը որպես աբսոլյուտ միապետ: 1521 թվին նրա ամենամոտ խորհրդականներից մեկի, Միկկելսենի օգնությամբ ընդունվեց մի օրենք, որի համաձայն միայն դանիական վաճառականները և քաղաքացիները կարող էին նույնիսկ գյուղատնտեսության մթերքների առևտուր անել արտասահմանի հետ: Աշխարհիկ և հոգևոր սենյորները կորցրին անգամ իրենց բերքահարկատու գյուղացիներից վաճառքի համար հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ գնելու իրավունքը, ինչպես նաև կորցրին արտասահմանից բերված այս կամ այն ապրանքները նրանց վաճառելու իրավունքը: Քրիստիան II-ն ամուսնացած էր Կարլոս V կայսեր քրոջ հետ, և Կարլոսին մոտիկ, հռչակավոր բանկիր Ֆուգերները պաշտպանում էին Քրիստիանի դիտավորությունները, հույս ունենալով

Դանիայի օգնությամբ բռնել գերմանական թուլացող Հանզայի կնքելով Նիդեռլանդների և Ֆուգգերների հետ, նա յերազում էր Հանզայի քաղաքները բոլորովին վտարել Բալտիկայում յեղած առևտրից: 1515 թվին նա վերստին դաշինք կնքեց Մոսկվայի հետ և կարողացավ դանիական վաճառականների համար ձեռք բերել այնպիսի արտոնություններ, վորոնք նման եյին հանզայան արտոնություններին (1517 թ.): 1520 թվին նա պայքար սկսեց Ստյուրե տոհմին պատկանող շվեդական «ռեգենտների» հետ, գրավեց Ստոկհոլմը և կոտորեց շվեդական ազնվականության մի զգալի մասը, Դանիայի ուժեղացման հակառակորդներին և Շվեդիայի ինքնակայության կողմնակիցներին («Ստոկհոլմի արյան բաղնիք»): Այսպիսով յերբ Շվեդիան, ինչպես նա կարծում էր, հնազանդվեց, նա Միկկելսենի հետ կազմեց դանիական-շվեդական առևտրական ընկերության մի վիթխարի պլան: Կոպենհագենը, Ստոկհոլմը, Նիդեռլանդներից և Ֆինլանդիայից մեկական քաղաքներ պետք է դառնային պահեստային կետեր մի կողմից Մոսկվայի և հյուսիսային յերկրների միջև և մյուս կողմից Արևմտյան Յեվրոպայի հետ կատարվող առևտրի համար: Այս ձեռնարկումը պետք է ֆինանսավորեյին Ֆուգգերները: Դրա հետ միաժամանակ Քրիստիանն ուզում էր իր ծովակալ Սերեն Նորբիին ուղարկել հետազոտելու Գրենլանդիան և վորոնելու Հնդկաստան տանող հյուսիսային ճանապարհը: Այս ամբողջ ֆանտաստիկ պլանը վիժեց, հանդիպելով այն ոպոզիցիայի դիմադրության, վորը գործում էր Լյուբեկի ղեկավարության տակ գտնվող հանզայան քաղաքների և հենց Քրիստիանի ազնվականության կողմից, վորն արտաքսեց նրան, վերացրեց 1521 թվի օրենքները, վորոնցից նեղվում էր ինքը, և գահ նստեցրեց իր մարդուն, Քրիստիանի քեռի, հերցոգ Ֆրիդրիխ Գոլշտեյն-Գոտտորպցուն: Քրիստիանի անհաջողությունների համար քիչ նշանակություն չունեցավ նաև Շվեդիայում Գուստավ Վազայի առաջնորդությամբ հենց այդ ժամանակ բռնկված ապստամբությունը, վոր ուղղված էր դանիական բռնակալության դեմ:

Շվեդական բուրժուազիան ազգային ուժեղ իշխանության կարիք էր զգում և այս պատճառով ոժանդակեց շվեդական ազնվականությանը, վորը բռնեց շվեդական գահի հավակնորդ

Գուստավ Վազայի կողմը: Վորովհետև Դանիան, շահագրգռված լինելով Շվեդիայի քաղաքական թուլությամբ, հենվում եր գլխավորապես հողատեր-ֆեոդալների վրա, վորոնց նա թույլ եր տալիս իշխել յերկրում և դրանով իսկ թուլացնել նրան,— ուստի լութերական գաղափարները դարձան շվեդական ոպոզիցիայի յուրատեսակ դրոշակը, վորն ասում եր, թե պետք է լուծարքի յենթարկել կաթոլիկ յեկեղեցին, գրավել յեկեղեցական գույքերը հօգուտ ազնվականության ու գահի և ստեղծել թագավորական ազգային ուժեղ իշխանություն, վորը կախում չունենա Դանիայից: Շվեդական գյուղացիությունը, մանավանդ հյուսիսում, Դալեկարլիայում, սաստիկ գրգռված եր հողատեր ֆեոդալների և դանիական հարկատուների դեմ:

Այսպիսով Շվեդիայում Դանիայի և կաթոլիկ յեկեղեցու դեմ եյին բոլոր դասերը, բացի հողատիրականությունից և բարձրագույն ազնվականության մի մասից: Գուստավ Վազան ոգտագործեց գյուղացիական ապստամբությունը, վոր 1521 թվին սկսվել եր դանիացիների դեմ, և հենվելով միջին ազնվականության ու քաղաքների վրա, գրավեց իշխանությունը: 1523 թվին նա մտավ Ստոկհոլմ, չեղյալ հայտարարելով Կալմարի ունիան: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր Վազան վորոշեց իր դաշնակիցներին բավարարել կաթոլիկ յեկեղեցու հաշվին: Շվեդիայում սկսեց հետզհետե իրագործվել «թագավորական ռեֆորմացիան»: Թագավորը հայտարարվեց յեկեղեցու գլուխ, յեկեղեցական գույքը բաժանվեց թագավորի և ազնվականների միջև: Գյուղացիները մոռացվեցին, իսկ յեկեղեցական հողերի հաշվին ուժեղացած ազնվականները (XVI դարի կեսի և XVII դարի կեսի միջև ազնվականական հողերն ամբողջ մշակելի հողի 22%-ից հասան 60%-ի) ոգտագործեցին իրենց իշխանությունը՝ գյուղացիների շահագործումն ուժեղացնելու համար: Գյուղացիները քանիցս ապստամբում եյին, ընդ վորում այստեղ քիչ դեր չեր խաղում լիկվիդացիայի յենթարկվող կաթոլիկ յեկեղեցին: Գյուղացիների մեծ մասը ռեֆորմացիայից հետո կախում ունեցավ ազնվականներից, մինչդեռ ռեֆորմացիայից առաջ համեմատաբար քիչ գյուղացիներ կախում ունեյին ազնվականներից. նրանց մի զգալի մասն ապրում եր գահական հողերում (Kroneböndar) կամ համայնքների բոլորովին ազատ հողե-

րում (Skatteböndar)։ Թագավորական իշխանության ուժեղացումն արտահայտվեց նաև նրանով, որ Գուստավ Վազան հայտարարեց, թե բոլոր թափուր հողերը (ալմենդները) պատկանում են թագին։ Այսպիսով ռեֆորմացիան ոգուտ բերեց ամենից առաջ ազնվականության, և ռեֆորմացիայի ազնվականական բնույթն արտահայտվեց նրա խիստ չափավորությամբ։ Ռեֆորմացիան վերջնականապես ընդունվեց Վեստերոսի սեյմում, 1527 թվին։ Տվյալ սեյմում ընդունված այսպես կոչված «ռեցեսսի» 2-րդ հոդվածն ասում էր, թե այսուհետև եպիսկոպոսները պարտավոր են թագավորին ոգնել փողով և հանձնել նրան իրենց ամրոցներն ու բերդերը, ինչպես նաև եկեղեցական ամբողջ գույքը, բացի այն գույքից, որը պետք է ծառայի իբրև վարձատրություն հոգևոր անձանց։ Վանքերը և նրանց գույքը դրվում էին թագավորի պաշտոնյաների հսկողության տակ,— որոնք պետք է եկամուտների ավելցուկները վերցնեյին հօգուտ գանձարանի և վորոշեյին միանձների թիվը։ Ռեցեսսի 3-րդ հոդվածի համաձայն, ազնվականները ռազմական ծախսեր կատարելու համար վարձատրվում էին եկեղեցական և վանքական հողերով։ 1539 թվին եկեղեցական նոր կառուցվածք սահմանվեց։ Եկեղեցական կառավարման գլուխ նշանակվեց թագավորի օրդինատորը և սուպերինտենդանտ, որն իրավունք ուներ նշանակելու և փոխելու հոգևոր անձանց, վերաքննության ենթարկելու եկեղեցական հիմնարկությունները, ներառյալ նաև եպիսկոպոսությունները։ Եպիսկոպոսները մնացին, բայց նրանց իշխանությունը սահմանափակվեց կոնսիստորիաներով։ Արգելվեցին ամեն տեսակ կրոնական յերկպառակությունները։ Ռեֆորմացիան նույնպիսի բնույթ էր կրում Դանիայում, Քրիստիան II-ի տապալումից հետո։ Նրա հաջորդը, Ֆրիդրիխ I-ը, հետզհետե կիրառում էր մի շարք միջոցներ, որոնց հետևանքով Դանիայում եկեղեցին անցավ թագավորի իշխանության տակ։ Հետևյալ թագավորի, Քրիստիան III-ի օրոք (1534—1559 թ. թ.) Դանիայում տեղի ունեցավ եկեղեցական գույքերի սեկուլյարիզացիան,— որոնք բաժանվեցին գահի և ֆեոդալական արիստոկրատիայի միջև։

Շվեդիայի համար նրա անկախության հաստատմանը զուգադիպող ռեֆորմացիայի ժամանակը յեղավ նրա, որպես հյուսիսի մեծ տերության գոյության սկիզբը։ Գուստավ Վազան կա-

րողացավ ամրապնդել իր իշխանությունը, վորով շահագրգռված եր վոչ միայն ազնվականությունը, այլև վոտքի յելած շվեդական բուրժուազիան: 1528 թվին Գուստավը թագադրվեց, իսկ 1544—1545 թ. թ. սեյմերը Շվեդիայի թագի իրավունքը հաստատեցին նրա սերնդի վրա: Գուստավի վորդու, Կարլոս IX-ի որոք (1599—1611 թ. թ.) սկսվում ե Շվեդիայի տնտեսական վերելքը: Հայտնագործվում են նոր, հարուստ յերկաթահանքեր, զարգանում են՝ մետալուրգիական արդյունաբերությունը և անտառագործությունը, աճում ե առևտուրը: Շվեդական ազնվականությունը սպաների պաշտոններով ծառայում ե զորքերում, վորոնք բաղկացած եյին գյուղացիներից: Շվեդական բանակը դառնում ե Յեվրոպայում ամենակարգապահ ու ուժեղ բանակներից մեկը: Թագավորները հովանավորում են արտաքին առևտուրը և սկսում են բալթյան ծովափը նվաճելու պլանաչափ քաղաքականություն վարել, նպատակ ունենալով գրավել այն գետաբերանները, վորոնք թափվում են Բալթյան ծովը: Շվեդիայի կառավարող դասակարգերի համար յեկամտի կարևոր աղբյուրներից մեկն ե դառնում մաքսային տուրքերի գանձումը հացի բալթյան մեծ առևտրից, վորը զարգանում եր հենց XVI դարի յերկրորդ կեսից: Այս պատճառով շվեդական ազնվականության համար պատերազմները շահավետ գործ եյին, և Շվեդիայի պետական գործիչներից մեկը լավ եր ընդգծել այդ,— մի անգամ նա հայտարարել եր, վոր յեթե մյուս պետությունները պատերազմ են սկսում, յերբ փող ունեն, ապա Շվեդիան պատերազմ ե սկսում փող չունեցած ժամանակ, վորպեսզի այն ձեռք բերի: Շվեդիայի այդ քաղաքականության հետևանքով եր, վոր նա XVII դարի առաջին կեսում, 1618 թվին բռնկված Յերեսնամյա պատերազմի կապակցությամբ միջամտեց գերմանական գործերին:

Կաթոլիկական ռեակցիան յեվ նրա դասակարգային արմատները

Բողոքականության հաղթանակներն անհետք չանցան կաթոլիկ յեկեղեցու համար: Յեթե ընդհանրապես բողոքականությունը քաղաքի և ծագող բուրժուազիայի իդեոլոգիան եր, յեթե իր հետագա զարգացմամբ, մանավանդ հանձին կալվինիզմի նա դարձավ նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի կապիտալիստական բուրժուազիայի իդեոլոգիա,— ապա այդ ամենը դեռ չեր նշանակում, վոր բուրժուազիան XVI

պարում մոտ էր ֆեոդալիզմի դեմ տարվելիք հաղթանակին: Չպետք է մոռանալ, վոր XVI դարը, այդ աբսոլուտ միապետությունների առաջացման դարն է, միջնադարի ֆեոդալական-աբսոլուտիստական ժամանակաշրջանը, և այդ հանգամանքն ունեցավ այն հետևանքը, վոր ինքը, բողոքականությունն առանձին դեպքերում ոգտակար յեղավ ֆեոդալական դասակարգին, ճիշտ այնպես, ինչպես բուրժուական անտեսության հաջողությունները սկզբում ստեղծեցին վոչ թե բուրժուական պետություն, այլ աբսոլյուտ միապետություն, ստեղծեցին քաղաքական մի ձև, վորն արտահայտում էր ազնվականության, այսինքն նույն ֆեոդալական դասակարգի դիկտատուրան: Որինակ, այդպես յեղավ լութերականության հետ, վորը վերջին հաշվով դարձավ գերմանական մանր իշխանների և պրուսական յունկերների կրոնը:

Ֆեոդալական հասարակությունը, ամբողջովին վերցրած, դեռևս հեռու յեր իր կործանումից: Բայց այն հարվածը, վոր տրվեց կաթոլիկ յեկեղեցուն, թե վորպես ֆեոդալական հաստատության և թե վորպես ֆեոդալական իդեոլոգիայի, առաջին նախազգուշացումն էր ֆեոդալական հասարակության գոյությանը: Վերջինս այն ներքին փոփոխություններին համապատասխան, վոր կատարվել էին հենց իր մեջ, աշխատեց այնպե՛ս վերակառուցել իր հին յեկեղեցին, վոր սա սկսեց լրիվին համապատասխանել տիրող դասակարգի գոյության կազմակերպչական ձևին: Դրա հետ կապված շարժումը կոչվեց հակառեֆորմացիա կամ կաթոլիկական ռեակցիա. իսկ իրենք, կաթոլիկներն այդ շարժումը կաթոլիկական վերածնություն էին անվանում:

Ճիզվիտների օրդենը

Կաթոլիկական յեկեղեցու վերակազմության մեջ և կաթոլիկական ամբողջ ռեակցիայում կարևորագույն դեր խաղաց ճիզվիտների օրդենը: Նրա ծագումը, ապա նաև նրա գործունեյությունն ամենացայտուն արտահայտությունն էին այն փաստի, վոր կաթոլիկ յեկեղեցին բողոքականների քննադատության ազդեցության տակ, մանավանդ իր ունեցած կորուստների անմիջական ներգործությամբ, աշխատեց առաջ գնալ և հիմա լարում էր բոլոր ուժերը՝ իր գոյության համար մղած կռվում: Ճիզվիտների օրդենը կաթոլիկ յեկեղեցին փրկեց վերջնական խորտակումից, Տրիդենտի ժողովում ամրապնդեց պապի հեղինակությունը և յերկու հարյուրամյակների ընթացքում հետ նվաճեց շատ մարդկանց, վորոնք անցել

ծյին բողոքականության կողմը։ Նա հսկայական ազդեցություն ուներ կաթոլիկ յեկեղեցու վրա, նրա նշանակությունը խիստ աչքի էր ընկնում XVI և XVII դարերի քաղաքականության մեջ, կենցաղում և կյանքում։ Ճիզվիտների օրդենը դեռ մինչև այսօր էլ ուժեղ թշնամի յե, վորը հավատացյալներին կազմակերպում է պրոլետարական հասարակության և կոմունիզմի դեմ։ Նա ամենամեծ հաջողություն ունեցավ այն յերկրներում, վորտեղ ազնվականությունը կարողացավ հասարակության ժամանակավորապես պահպանել բուրժուական վերասերումից և վորտեղ նա իր դասակարգային ինքնապահպանության համար մղած պայքարում կարողացավ ստեղծել իր դասակարգային դիկտատուրայի առանձնապես պարզորոշ ձևերը։ Ճիզվիտների օրդենը հիմնեց իսպանական հիդալգո Իգնատիոս Լոյոլան (1491—1556 թ. թ.)։Լոյոլան պատկանում եր իսպանական մի ազնվատոհմիկ ընտանիքի։ Իր յերիտասարդությունը նա անցկացրեց Ֆերդինանդ Կաթոլիկի արքունիքում և ապա ծառայում եր բանակում։ Մի քաղաքի պաշարման ժամանակ նա յերկու վոտից վիրավորվեց և ամբողջ կյանքում մնաց կաղ, անընդունակ լինելով ասպետական սխրագործությունների, վորոնց մասին յերազում եր մանկությունից։ Վիրավորման հետևանքով ստիպված լինելով յերկար ժամանակ պառկել անկողնում, նա սկսեց կարդալ կրոնական գրքեր, սրբերի կյանքի վերաբերյալ վարք սրբոց գրականությունը և աստիճանաբար գրավվեց «Հիսուսի զինվոր» դառնալու գաղափարով։ 1523 թվին նա մեկնեց Պաղեստին, մտադիր լինելով այնտեղ մուսուլմաններին քրիստոնյաներ դարձնել։ Տեղական հոգևորականությունն այնտեղ նրան թշնամաբար ընդունեց։ Վերադառնալով Յեվրոպա, Լոյոլան Ալկալայում և Սալամանկայում զբաղվեց աստվածաբանության և փիլիսոփայության ուսումնասիրությամբ, այնուհետև մեկնեց այն ժամանակվա կաթոլիկական-աստվածաբանական գիտության կենտրոնը— Փարիզ։ Սորբոննայում նա ստեղծեց առաջին խմբակն իր համախոհներից (Ֆաբեր, Ֆրանցիսկ Կսավյե, Լայնես, Սալմերոն, Բոբադիլյա, Ռոդրիգես), վորոնք հպատակվում եյին կասկածների չենթարկվող նրա տիրական բնավորության։ 1534 թվին նրա բարեկամները հիմնեցին «Հիսուսի ընկերությունը» («Societas Iesu»), տալով վողջախոհության և աղքատության խոստում։ Նրանք յերդվեցին մեկնել Յերուսաղեմ իբրև միսիոներ-

ներ, իսկ մինչ այդ իրենց դրին պապի տրամադրության տակ: 1537 թվից նրանք իրենց քարոզը սկսեցին Վենետիկում, ուր ժամանել էին Պաղեստին մեկնելու համար: Թուրքերի հետ յեղած պատերազմի հետևանքով նրանք այստեղ կանգ առան: Վենետիկից ուղևորվեցին Հռոմ և այստեղ միտք հղացան իրենց ջանքերը գործադրել բողոքականության դեմ պայքարելու համար: Այսպես ստեղծվեց «Հիսուսի գունդը» (phalanx Iesu): 1540 թվին Պողոս III պապը «Regimini militantis» կոնդակով հաստատեց այդ օրդենի— մարտնչող կաթոլիկության իսկական բանակի կանոնադրությունը: Լոյոլան դարձավ օրդենի գլխավորը կամ, ինչպես հետագայում սկսեցին անվանել, նրա առաջին գեներալը: Նա ստեղծեց մի կանոնադրություն (Constitutiones), որն ամիշտ դարձավ օրդենի կազմակերպության անկյունաքարը, և գրեց կրոնական դաստիարակության մի ձեռնարկ,— (Exercitia spiritualia» (1522—1548 թ. թ.), որը դարձավ յուրաքանչյուր ճիզվիտի սեղանի գիրք— ինչպես այնուհետև անվանվում էին նոր օրդենի անդամները:

Օրդենի կառուցվածքը

Օրդենը հենց սկզբից ստեղծվեց որպես ուժեղ և կարգապահ կազմակերպություն: Օրդենը գլխավորում էր praepositus generalis—օրդենի գեներալն իր յոթ խորհրդականներով: Բայց գեներալը պարտավոր չէր հետևել նրանց խորհուրդներին: Բարձրագույն օրգան է հանդիսանում congregatia generalis-ը, որն իրավունք ունի պաշտոնանկ անել գեներալին, բայց օրդենի պատմության մեջ այդպիսի դեպք չի հիշատակվում: Գեներալի բացարձակ իշխանությունը մի փաստ էր, որի վրա ճիզվիտներից շատերը նայում էին իբրև կազմակերպության հիմնական չարիքի վրա: Իսպանացի հռչակավոր գիտնական, ճիզվիտ Մարիաննան «Ճիզվիտների ընկերության ախտերի մասին» գրքում ասում էր. «Միապետությունը մեզ կործանում է ոչ թե այն պատճառով, որ նա միապետություն է, այլ այն պատճառով, որ նա բավականչափ սահմանափակված չէ: Նա մի կատաղի վարազ է, որն ավերում է այն ամենը, ինչի վրայով որ անցնում է»: Ճիզվիտների գործունեությունը տարածվում էր բոլոր երկրներում, որոնց նրանք «պրովինցիաներ» էին անվանում: Յուրաքանչյուր պրովինցիայի գլուխ էր կանգնած գեներալի նշանակած պրովինցիալը, որն ուներ իր կոլեգիան, բաղկացած ադմոնի-

տորից և ասիստենտներից: Որդենի շարքային անդամները բաժանված էին չորս աստիճանի,— նովիցիաներ, սխոլաստիկներ, կոադյուտորներ և պրոֆեսներ: Որդենում ընդունվող յերիտասարդներն սկզբում մտնում էին նովիցիաների (նորեկների) շարքը: Նրանց տեղավորում էին առանձին ապարանում, ուր նրանք բաժանված էին մնացած աշխարհից: Նրանք ծնողների մասին պետք է խոսեյին իբրև մեռածների մասին, և դաստիարակները կարդում էին նրանց բոլոր նամակները: Նրանք պետք է անվերապահորեն հնազանդվեյին ավագներին, կատարեյին ամեն տեսակ, նույնիսկ ամենասև և ստորացուցիչ աշխատանք և միշտ իրենց բոլոր մտքերը հայտնեյին խոստովանողին, զղջալով ամենաչնչին զանցառությունների ու դիտավորությունների համար: Այնուհետև նրանցից ամենաընդունակներին փոխադրում էին սխոլաստիկների (սովորողների, ուսանողների) շարքը: Բավականաչափ կրթություն ստացած սխոլաստիկներին տալիս էին հոգևոր կոադյուտորների աստիճան,— վորոնք ուսուցիչներ էին դառնում, կամ աշխարհիկ կոադյուտորների աստիճան, վորոնք ամեն տեսակ վարչական պաշտոններ էին գրավում: Միայն քչերն էին, վոր յերկարատև ծառայությունից, կարևոր հանձնարարություններ կատարելուց և մանրակրկիտ ստուգումից հետո դառնում էին որդենի իրավազոր անդամներ (պրոֆեսներ):

Որդենում բոլոր նշանակումները կատարում էր գեներալը, վորն ապրում էր Հռոմում և կարող էր գրչի մի շարժումով որդենի անդամների շարքերից արտաքսել նրա ամեն մի, թեկուզ ամենաազդեցիկ անդամին: Որդենում կիրառվում էր հսկողության, փոխադարձ անվստահության, լրտեսության և մատնության ամենախիստ մի սիստեմ: Դրանով ուզում էին հասնել մի նպատակի, վորն արտահայտված է հետևյալ կանոնում. «Բոլորս հավատանք միևնույն բանին, ասենք միևնույն բանը»: Վոչ մի գրվածք չէր կարող լույս տեսնել առանց գեներալի թույլտվության: Բոլոր վեճերի ու յեկեղեցական դիսկուսիաների ժամանակ ճիզվիտները յելույթ էին ունենում այն դեպքում, յերբ ընդհանուր վորոշում էր ընդունվել, թե ինչ կարծիք պետք է արտահայտել տվյալ հարցի շուրջը:

Ճիզվիտների որդենն զգալիորեն տարբերվում էր միանձնական սովորական որդեններից: Նրա անդամները չպետք է հայե-

ցողական կյանք վարեյին և փախչեյին աշխարհից: Ընդհակառակը, նրանք պետք ե միշտ գտնվեյին հասարակության մեջ, ազդեյին նրա վրա, տիրապետեյին նրան հօգուտ յեկեղեցու շահերի: Ճիզվիտները հազվագյուտ դեպքերում եյին յեպիսկոպոսներ և կարդինալներ լինում. նրանց միջավայրից վոչ մի պապ չի դուրս յեկել, բայց դրա փոխարեն կյանքում նրանց ազդեցությունը հսկայական եր: Որդենն իր շատ հաղթանակներով պարտական եր իր կիսաշխարհիկ բնույթին:

Որդենը սկսեց առանձնապես մեծ ազդեցությամբ ոգտվել 1591 թվից, այն դեպքից հետո, յերբ Գրիգորիոս XIV պապը նրան զանազան արտոնություններ տվեց և նրա համար առանձնահատուկ դրություն ստեղծեց: Որդենը վերացվեց 1773 թվին և կրկին վերականգնվեց 1816 թվին:

Ճիզվիտների ուսմունքը յեվ բարոյախոսությունը

Ճիզվիտների ուսմունքը վոչնչով չի տարբերվում կաթոլիկ յեկեղեցու ուսմունքից: Որդենը կիսամիանձնական կազմակերպություն եր, վորը յերբեք չի խզել իր կապը կաթոլիկության հետ: Բայց լինելով յեկեղեցու և յեկեղեցական ուսմունքի սահմաններում գտնվող մի կազմակերպություն, որդենը նրա ֆորպոստի դեր եր խաղում այն աշխարհում, վորը պատրաստ եր դառնալու կա՛մ հերետիկոսական, կա՛մ ուղղակի աթեիստական: Այս պատճառով որդենն իր մեջ կենտրոնացրեց XVI—XVIII դարերի կաթոլիկության դիմադրության ամբողջ ուժը: Յեվ դուրս գալով հերետիկոսության դեմ պայքարելու, որդենն իսկույն ստեղծեց իր դոկտրինան և վորոշեց իր վարքագիծը: Նրա ուսմունքն ու բարոյախոսությունն ամբողջովին տրված են նրա հիմնադրի «Constitutiones» և «Exercitia spiritualia» յերկերում: Կուսակրոնական յերեք սովորական ուխտերին— հնազանդությանը, վողջախոհությանն ու անշահասիրությանը Լոյոլան ավելացրեց նաև մի ուխտ, վորը հանդիսանում ե ճիզվիտական ամբողջ կազմակերպության անկյունաքարը,— անվերապահ հնազանդություն ավագին: Ստեղծելով «Հիսուսի բանակը», կաթոլիկությունն այն կառուցում եր այնպիսի զինվորական կարգապահության հիմունքով, ինչպիսին այն պետք ե լինի, յերբ զորքը պատրաստ ե կռվի գնալ: «Ստորադրյալը,— գրում ե Լոյոլան,— պետք ե ավագի վրա նայի ինչպես Քրիստոսի վրա. նա պետք ե հնազանդվի ավագին ինչպես մի դիակ, վորը կարե-

լի յե ամեն կողմ չուռ տալ, ինչպես ձեռնափայտ, վորը յենթարկվում ե ամեն մի շարժման, ինչպես մեղրամոմի գունդ, վորը կարելի յե ձևափոխել և ձգել բոլոր ուղղություններով, ինչպես փոքրիկ խաչելություն, վորը կարելի յե բարձրացնել և վորը կարելի յե շարժել ըստ ցանկության»: Հնազանդության այդ տարբերությունը միանձնական կարգապահության մեջ միայն արտացոլումն եր այն համախմբվածության, վոր տիրող դասակարգը պետք ե ցուցաբերեր իրեն սպառնացող պատմական վտանգի հանդեպ: Բայց այդ նույն տարբերությունը, փոխադրվելով անձնական փրկության բնագավառը, ազնվականական պատվի տիպի կառուցվածք ունեցավ: Բողոքականների և ճիզվիտների մոտ անձնական փրկության պրոբլեմի միջև կա ամենախորն անդունդ, չնայելով, վոր թե մեկ և թե մյուս ուղղության կրոնական գիտակցությունն այդ պրոբլեմին առաջին տեղն ե տալիս: Բայց բողոքականի անհատապաշտական գիտակցության համար անձնական փրկության պրոբլեմը կրոնական կյանքի նպատակ ե, ճիզվիտի համար միայն մի միջոց ե՝ ավելի բարձր նպատակի— կաթոլիկ յեկեղեցու ամրապնդման համար, յեկեղեցի, վորը հնարավոր ե ինչպես corpus christianum (մարմին, որգանական միասնություն), ինչպես ընդհանուր փրկության գրավական: Անհատական բարձրագույն սխրագործությունը— այդ մի պատրաստակամություն ե այդ ամբողջի շահերի համար հրաժարվելու նույնիսկ անձնական փրկությունից: Այստեղից ե բղխում անսահման հնազանդության պահանջը՝ ընդհուպ մինչև մահվան մեղք գործելը, յեթե ավագը պահանջում ե կատարել այդ: Այս հողի վրա յել աճեց ճիզվիտների հրեշավոր պրակտիկան, նրանց արարքների՝ գործնականորեն թույլատրվող անբարոյությունը, վորը հիմք ե տալիս նրանց մեղադրելու, վոր նրանք կարծես թե ընդունում են «նպատակն արդարացնում ե միջոցը» սկզբունքը, չնայելով, վոր նրանց վոչ մի յերկում չի կարելի այդպիսի սկզբունք գտնել:

Ֆանատիկոսի մոլեռանդությամբ նետվելով մեղսոտ աշխարհը փրկելու, ճիզվիտներն ամենից առաջ գրավեցին տիրող դասակարգի իդեոլոգիական մշակմամբ: Նրանք մուտք եյին գործում արիստոկրատական սալոնները, միշտ հաճախում թագավորների պալատները, կարողանում եյին նվաճել թագավորների բարեհաճությունը և նրանց միջոցով, առհասարակ ա-

դեցիկ մարդկանց միջոցով, նրանք աշխատում էին գործել կաթոլիկության, պապի և իրենց օրդենի շահերի համար: Նրանք իրենց գլխավոր խորհուրդը դարձրին ապաշխարանքը, որպես ամենաեյական միջոց՝ իրենց հոգևոր զավակներին իրենց կամքին յենթարկելու համար և ամենաիրական միջոց՝ հետախուզության և լրտեսության համար: Նրանք մեծ հաջողություններ ձեռք բերին, բայց այն չափով, ինչ չափով աճում էին այդ հաջողությունները, առաջվա նպատակը, որը ոգևորում էր Լոյոլային և նրա աշակերտներին, անցնում էր հետին տեղը և առաջ էր գալիս հենց օրդենի նյութական առաջադիմության խնդիրը: Այդ բոլորի հետևանքով էլ առաջացավ ճիզվիտի տիպը,— խարդախ գործարարի, սրիկայության ու խաբեբայության մեծ վարպետի, այն մարդու տիպը, որը պատրաստ է նուրբ դիալեկտիկայի և կասկածելի տրամաբանական հետևությունների միջոցով արդարացնել ամեն մի հանցագործություն, յեթե դա փրկարար, վերջնական նպատակ ունի:

Ճիզվիտների խնդիրը— կաթոլիկ յեկեղեցու որպես ֆեոդալիզմի իդեոլոգիական զենքի փրկությունը և պաշտպանությունը— նրանց հասցնում էր նաև ուրիշ կարևոր դրույթների, որոնք տեսական ու գործնական բնույթ էին կրում: Փաստորեն նրանց խնդիրը տիրող դասակարգի սոցիալական դիրքերը պահպանելու խնդիրն էր: Բայց դրա համար շահագործվողին պետք էր համոզել, որ նրան վիճակված է լինել այդպիսին, պետք էր նրա՛ն հաշտեցնել գոյություն ունեցող ստորադասության հետ: Այստեղից էլ բղխում էր նրանց ուսմունքը յեկեղեցու անվերապահ հեղինակության մասին, այն գաղտնիքի մասին, որ պարունակվում է աստվածային կարգում, այն մասին, որ յերարխիական ստորադասությունը հաստատուն է, սահմանված է աստծո կողմից և հատուկ է գոյություն ունեցող հասարակարգին: Միջնադարյան դասային կարգին այդ կերպ կողմնակից լինելը նրանց հասցրեց Հնդկաստանի կաստայական կարգը ճանաչելուն, պարիաների նվաստացած դրությունն արդարացնելուն, պարիաներ, որոնց նրանք հաղորդությունը տալիս էին փայտիկի ծայրով, որպեսզի չպղծվեյին նրանց դիպչելուց:

Ճիզվիտների մանկավարժությունը

Հավատացյալներին իրենց յենթարկելու, դրեթե ստրկացնելու մի միջոց էր ճիզվիտական

հռչակավոր մանկավարժությունը, կաթոլիկության ապագա ռազմիկների դաստիարակության արվեստը: Այդ արվեստը—հենց Լոյոլայի ստեղծած արդյունքը— շարադրված է նրա «Հոգևոր վարժություններում», վորոնք գրված են այն ժամանակ, յերբ օրդենը նոր էր սկսում կազմավորվել: Լոյոլան յենթադրում էր, վոր մարդուն վորոշ իդեալի համապատասխան դաստիարակելու և նրան ընդմիշտ վորոշ ուսմունքի հավատարիմ հետևորդ դարձնելու լավագույն յեղանակը նրա յերևակայությանը տիրանալն է: Լոյոլան ուզում էր դաստիարակել մարտիկներ, մարդիկ, վորոնք նախորոշված են գործողության համար և վոչ թե խորհրդածության, առավել ևս հայեցողության համար: Լոյոլան ուզում էր այդ նպատակի համար օգտվել մարդու թուլություններից, և այս տեսակետից նա իրեն ցույց տվեց իբրև մարդկային հոգուն մեծապես գիտակ մի մարդ:

Ապագա ճիզվիտի դաստիարակը պետք է նովիցիայի մեջ առաջացնի կրոնական բոցավառ զգացում, տիրանա նրա հոգուն, նրա մեջ զարգացնի կրոնական յուրահատուկ զգայականություն, նրա յերևակայությունը բորբոքելով կենդանի պատկերացումներով, վորոնք վերաբերում են Քրիստոսի չարչարանքներին ու տանջանքներին, նրա հագուստին շփվելու քաղցրություն, վորը վայելում է եքստազի և զառանցանքի մեջ ընկած հավատացյալը: Լոյոլայի մոտ կրոնական ապրումների աղբյուր է դառնում վոչ թե սառը խոսքը, ինչպես այդ լինում է բողոքականների մոտ, այլ աստվածային մարմինը, այսինքն վոչ թե տրամաբանական խորհրդածությունը, այլ մութ զգացումն առանց խորհրդածության,— այս է հավատացյալ ճիզվիտի կրոնական կյանքի աղբյուրը: Ճիզվիտ դաստիարակն այս բոլոր միջոցներով վանում է դաստիարակվողի հակումը՝ խորհրդածելու կրոնական ճշմարտությունների մասին, վորոնք իրենց անբնականության հետևանքով ընդունակ են միայն կասկած առաջացնել, իրեն է յենթարկում նրա կամքը և կոփում այդ կամքը՝ ավագի հրամանով գործելու: Վոչ մի կրոնական հոսանքում կրոնական հաշիշը չի հասել այնպիսի արբեցուցիչ և բթացուցիչ ուժի, ինչպես ճիզվիտական դաստիարակության մեջ:

Օրդենի արտաքին պատմությունը, սկսած նրա հիմնադրման մոմենտից, 1534 թվից, կարելի յե համառոտակի ներկայացնել հետևյալ ձևով: Սկզբում այդ մի բարեպաշտ ընկերություն է,

ուսանողների ասոցիացիա, ապա քահանաների միաբանություն արտաքին և ներքին միսիայի համար և, վերջապես, 1544 թվից սկսած հակաբողոքական մարտնչող օրդեն: Այդ ժամանակ օրդենը, հասկանալով, թե բողոքականության դեմ պայքարելու գործում ինչպիսի հսկայական նշանակություն կարող է ունենալ յերիտասարդ սերունդների դաստիարակությունը, Հռոմում հիմնեց կաթոլիկական յերկու համալսարան,—Collegium Romanum և Collegium Germanicum: Վերջինը պետք է տար միսիոներներ, Գերմանիայում բողոքականության դեմ պայքարելու համար: Ճիզվիտները մեծ նշանակություն եյին տալիս նաև միջնակարգ դպրոցին: Նրանք բազմաթիվ դպրոցներ ստեղծեցին, աշակերտներին ծանոթացնում եյին բնագիտության բնագավառում յեղած նոր հայտնագործությունների հետ, առաջին անգամ մտցրին փորձնական դասավանդման, օրինակ, ֆիզիկայի այդպիսի դասավանդման սիստեմը: Նրանք աշակերտների մասսան բաժանում եյին դասարանների վրա, նայած նրանց հասակին և գիտելիքներին, հետևում եյին յուրաքանչյուր աշակերտի, աշխատելով հայտաբերել տաղանդներն ու հակումները: Սակայն այս բոլորն ուներ մի վերջնական նպատակ,— հոգիները ստրկացնելով, յենթարկել կաթոլիկ յեկեղեցու հեղինակության:

Կաթոլիկական ռեֆորմացիան յեվ պապությունը

Անկարգությունները և ինչպես այն ժամանակ ասում եյին՝ «գլխից ու անդամներից յեկեղեցու փչանալը» վերացնելու անհրաժեշտությունը, այսինքն՝ յեկեղեցական կարգերը և հոգևորականության ու պապական կուրիայի բարքերը ռեֆորմի յենթարկելու անհրաժեշտությունը գիտակցում եր և ինքը, պապությունը: Բայց նա վախենում եր, վոր յեկեղեցու ներքին ռեֆորմը կարող է թուլացնել պապի հեղինակությունն այն հայացքների վոգով, վորոնք կիրառվում եյին XV դարի յեկեղեցական ժողովներում, ուր քանիցս առաջադրվում եր այն դրույթը, թե ժողովը պապից բարձր է: Այս պատճառով պապությունն իրեն հարկադրված զգաց ռեֆորմը վերցնել իր ձեռքը և այն կատարել այնպես, վոր իր հեղինակությունը վորքան կարելի յե քիչ վնասվի: Վերականգնվեց ինկվիզիցիան, վորն անկման եր հասել: Պողոս III պապը (1534—1519 թ. թ.) Հռոմում հիմնեց ինկվիզիցիայի կենտրոնական տրիբունալ (1542 թ.) և նրա գլուխ նշանակեց կարդինալ Կարաֆֆային (ապագա պապ Պողոս IV-ին), վորը հարցաքննության գոր-

ծը կազմակերպեց խոշտանգումների և այլ դաժան միջոցների գործադրությամբ, վորոնցով կարելի յեր խոստովանություններ կորզել: Այնուհետև կազմվեց այսպես կոչված՝ «արգելված գըրքերի ցուցակը» («Index librorum prohibitorum»), այսինքն այն գրքերի ցանկը, վորոնք չպետք է կարդային հավատացյալները (1559 թ.): Վերջապես, պապերը կարողացան յեկեղեցական ժողովն օգտագործել իրենց շահերի համար:

Տրիդենտի ժողովը

Պողոս III պապը, զիջելով կայսեր պահանջներին, 1545 թվի մարտի 15-ին հարավային Տիրոլում, Տրիենտ (կամ Տրիդենտ) քաղաքում հրավիրեց «տիեզերական ժողով»: Այս ժողովն ընդհատումներով նիստեր ունեցավ մինչև 1565 թիվը:

Կայսեր ցանկությամբ ժողովը սկզբում պետք է զբաղվեր յեկեղեցու ռեֆորմի գործով և ապա սահմաներ նրա հիմնական դոգմաները, վորոնք բողոքականների կողմից քննադատության յեյին յենթարկվում: Իսկ պապի համար առաջին տեղը բռնում եր հերետիկոսության, այսինքն բողոքականության դատապարտումը, և ժողովն ընդառաջեց պապի ցանկության: Ժողովում պարզվեց, վոր կաթոլիկներից շատերը համաձայն յեյին կարևոր դոգմատիկ դրույթները բողոքական վոգով մեկնաբանելու, որինակ, սուրբ գրքի վորպես ճշմարտության աղբյուրի, նախնական մեղքի, հավատով արդարանալու հարցերում: Այստեղ պապին օգնության հասան ճիզվիտները: Նրանք ծայրահեղ տեսակետ եյին պաշտպանում (ուլտրամոնտանիզմ), այսինքն չեյին ցանկանում վորևէ զիջում անել բողոքականության: Ճիզվիտների, մասնավորապես Լոյոլայի հաջորդ Լայնեսի ազդեցությունն առանձնապես ուժեղ եր ժողովի յերկրորդ և յերրորդ նստաշրրջաններում (1551 թ. մայիսից մինչև 1552 թ. ապրիլը. 1562 թ. հունվարից մինչև 1563 թ. դեկտեմբերը): Մինչև յերրորդ նըստաշրջանի սկիզբը Յեվրոպայում դեռ կային շատ կաթոլիկներ, վորոնք հավատում եյին, թե հնարավոր է հաշտվել բողոքականների հետ, և ժողովում այդ հաշտարար տեսակետը պաշտպանում եյին Ֆրանսիայի և Գերմանիայի ներկայացուցիչները: Կայսր Ֆերդինանդ I-ը, որինակ, այսպիսի զիջումներ եր պահանջում՝ թույլ տալ քահանաների ամուսնություն, աշխարհականների հաղորդություն յերկու ձևերով, պատարագ գերմաներեն լեզվով, վանքերի ռեֆորմ և ամենից առաջ հենց պապու-

թյան ռեֆորմ: Պիոս IV-ը վճռականապես դուրս եկավ դրա դեմ, հայտարարելով, որ այդ բոլոր առաջարկները չափից դուրս ուժեղ դեղ են լինելու թուլացած մարմնի համար: Լայնեսին և մյուս պրելատներին հաջողվեց համոզել ժողովի ամենաակտիվ անդամներին և կայսրին, որ ընդունեն «անհաշտների տեսակետը»: Նրանք պնդում էին, որ պետք է պաշտպանվի հավատը քավարանի գոյության մասին և սրբերին ու աստվածամորը երկրպագելը: Լայնեսն արտասովոր համառությամբ պաշտպանում էր պապի սուպրեմատիան եպիսկոպոսների, ժողովի և աշխարհիկ իշխանության նկատմամբ և առաջ էր քաշում մի դրույթ, որի համաձայն հավատի գործերում պապի որոշումն օժտված է անվերապահ հեղինակությամբ: Այդ դրույթը— պապի անսխալականության դոգման— երբ պապը շոշափում է դավանաբանության հարցերը և ասում ex cathedra— վերջնականապես և դարձյալ ճիզվիտների պնդումով ընդունվեց 1869—1870 թ. թ., Վատիկանի ժողովում:

Ուլտրամոնտանների (այսինքն անդրլեռնականների— Յեվրոպայում այսպես էին անվանում Հռոմի տեսակետի ներկայացուցիչներին) տեսակետը ժողովի կողմից ընդունվելը նշանակում էր վերջնականապես խզել կապը բողոքականների հետ: Բայց ժողովի արտահայտած այն դրույթը, թե հոգևոր իշխանությունը, պապի իշխանությունը բարձր է աշխարհիկ իշխանությունից,— չընդունվեց կաթոլիկական շատ թագավորների կողմից, որոնք հրաժարվում էին երբեմն ամբողջովին, երբեմն էլ մասամբ ընդունել Տրիդենտի ժողովի որոշումները:

Ռեֆորմացիայի յեվ հակառեֆորմացիայի հանրագումարը Յեվրոպայում

Կաթոլիկական ռեակցիան և մանավանդ ճիզվիտների որդենի գործունեությունն էական փոփոխությունների ենթարկեցին Յեվրոպայում ռեֆորմացիայի տարածման ընդհանուր պատկերը: Մի շարք երկրներ կրկին վերադարձան դեպի կաթոլիկություն: Իսկ այն երկրներում,— օրինակ, Իսպանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում,— որտեղ ռեֆորմացիոն շարժումն ընդհանրապես թույլ էր, հետզհետե խեղդվեցին կրոնական հերետիկոսության վերջին մնացորդները: Կաթոլիկական ռեակցիան մեծ հաջողություններ ունեցավ Լեհաստանում և Հարավ-արևմտյան Գերմանիայում: Լեհաստանն ամբողջովին մնաց կաթոլիկ, Հարավ-արևմտյան Գերմանիայի մի քանի տերիտո-

րիաներում, օրինակ, Բավարիայում, մասամբ Վյուրտեմբերգում և Բադենում վերականգնվեց կաթոլիկությունը, էլ չխոսենք Հաբսբուրգների ավստրիական յերկրների մասին, վորոնք հիմնականում հավատարիմ մնացին հին կրոնին:

Ընդհանրապես հետաքրքիր է նշել, վոր կաթոլիկ մնացին գլխավորապես գյուղացիական թվաչափ բնակչություն ունեցող յերկրները, այն յերկրները, վորտեղ տիրող դասակարգն ապրում եր գյուղացիությունից ստացվող ֆեոդալական ռենտայով: Կաթոլիկական կրոնը լավագույն միջոցն եր գյուղացիությանը ստիպելու, վոր հլու-հնազանդ լինի և անտրտունջ կերպով պարհակներ կատարի ազնվականության օգտին: Ընդհակառակը, ռեֆորմացիայի զանազան հոսանքներն ամրապնդվեցին գլխավորապես այն յերկրներում, վորտեղ ինքը, տիրող դասակարգն այս կամ այն չափով մասնակից եր զարգացող կապիտալիստական տնտեսության: Այդ յերևույթի պատճառները մենք աշխատեցինք բացատրել այն բաժնում, վոր նվիրված է XVI դարի ռեֆորմացիոն հոսանքներին:

Գ Լ Ո Ւ Խ

ԻՍՊԱՆԻԱՆ XVI ԴԱՐՈՒՄ

Իսպանական աբսոլյուտիզմի հաղթանակը

Չնայելով XV դարի վերջում Իսպանիայի քաղաքական միավորմանը (տես՝ հատ. I, գլ. XXVII), որը կատարվեց նույն պատճառների ազդեցությամբ, ինչ որ Յեվրոպայի մնացած պետություններում, իսպանական հասարակության կենտրոնախույս ուժերը դեռևս չափազանց զգալի եյին: Իսպանիայի միասնությունն այնպես չէր ամրապնդվել ներքին շուկայի զարգացմամբ, ինչպես Անգլիայի և Ֆրանսիայի միասնությունը: Ինչպես մենք կտեսնենք XVI—XVIII դարերի Իսպանիայում, ֆեոդալական տնտեսության և հասարակության ընդերքում կապիտալիստական տնտեսության և բուրժուազիայի զարգացման պրոցեսը կանգ առավ և նույնիսկ հետ գնաց: Իսպանիան յերկար ժամանակով մնաց ֆեոդալական յերկիր, ծայրահեղորեն թույլ առևտրով և արդյունաբերությամբ և բուրժուազիայի չափազանց փոքր տեսակարար կշռով: Այս բոլոր փաստերը կանխորոշեցին XVI դարի իսպանական մեծ տերության անկումը և XVII դարում Իսպանիայի վերածումը յեվրոպական յերկրորդական պետության:

Մարքսը չափազանց փայլուն կերպով է նշել XVI դարի իսպանական պատմության այդ առանձնահատկությունը: «XVI դարը,— ասում է նա,— մեծ միապետությունների կազմվելու եպոխան էր,— որոնք ամենուրեք հաստատվեցին իրար հետ թշնամություն անող ֆեոդալական դասակարգերի,— արիստոկրատիայի և քաղաքների ավերակների վրա: Բայց միաժամանակ Յեվրոպայի մյուս խոշոր պետություններում աբսոլյուտ միապետությունը հանդես է գալիս որպես քաղաքակրթող կենտրոն, որպես ազգային միասնության հիմնադիր: Այնտեղ նա մի լաբորատորիա յեր, որի մեջ հասարակության զանազան տարրերը յենթարկվում եյին այնպիսի խառնման և մշակման,

վոր քաղաքները հնարավոր եյին գտնում իրենց միջնադարյան տեղական անկախությունը և իրենց սուվերենությունը փոխարինել բուրժուազիայի ընդհանուր տիրապետությամբ և քաղաքացիական հասարակության հանրային իշխանությամբ (common sway)։ Ընդհակառակը, Իսպանիայում արիստոկրատիան անկման եր հասնում, չկորցնելով իր ամենավնասակար արտոնությունները, իսկ քաղաքները կորցրին իրենց միջնադարյան հզորությունը, չստանալով ժամանակակից նշանակություն»[1]։

Քաղաքային կոմունաների ազատությունը Կաստիլիայում և աբսոլուտիզմի հաղթանակը

Իսպանական արիստոկրատիայի քաղաքական անկախությունից զրկվելը, ինչպես մենք տեսանք, հիմնականում կատարվեց արդեն Ֆերդինանդի և Իզաբելլայի օրոք։ Ինչպես Եվրոպայում ամենուրեք, այդ տեղի ունեցավ քաղաքների օգնությամբ։

Սեգովիայի և Տորոյի մոտ 1475 թվին կոմունաների տարած հաղթանակը տապալեց գրանդների իշխանությունը։ Կոմունաները դուրս յեկան ֆեոդալներից պաշտպանելու թագավորի իշխանությունը, միանգամայն գիտակցելով իրենց քաղաքական քայլի հետևանքները։ Դրանով հող պատրաստվեց աբսոլուտիզմի հաղթանակի համար։ Այնուհետև հերթը քաղաքներինն եր։ Կարլոս I-ի թագավորության ժամանակ անհապաղ հետևեց պատմության վերջին ակտը, վորն ավարտեց աբսոլուտիզմի վերջնական հաղթանակը,— քաղաքային ազատությունների և արտոնությունների ջախջախումը։

Կարլոս I-ն իսպանական գահ նստեց Ֆերդինանդ Արագոնցու մահից հետո, 1516 թվին։

Իր մոր, Խուանա Խելահեղի— Ֆերդինանդի և Իզաբելլայի դստեր— կողմից նա «կաթոլիկ թագավորների» թոռն եր, հոր— ավստրիական երցհերցոգ Ֆիլիպպի կողմից— Մաքսիմիլիան I կայսեր թոռ։ Նա ծնվել է (1500 թ.) Նիդերլանդներում, ուր և ստացել է իր կրթությունը։ Նրա մայրենի լեզուն ֆլամանդական լեզուն եր, նրան շրջապատող խորհրդականները ֆլամանդացիներ եյին։ Այսպիսով Կարլոսը բոլորովին օտար եր այն յերկրին, վորի թագավորը դարձավ, յերբ տասնվեց տարեկան պա-

---

1 Маркс и Энгельс, Соч. т. X, եջ 721։

նումը։ Դրանք դժգոհության առաջին արտահայտություններն էին։ Կարլոսին դժվարությամբ հաջողվեց զիջումներ խոստանալով և կաշառքներով նպաստներ ստանալ կորտեսներից։

Թագավորի ֆլամանդացի խորհրդականներն Իսպանիայի վրա նայում էին վորպես վոսկու հանքի վրա, և ի չարը գործադրելով իրենց դիրքը, կողոպտում էին գանձարանը։ Ֆլամանդացիներին ամենից շատ ատում էին այն պատճառով, վոր նրանք ստանում էին ամերիկական հարստությունների առյուծի բաժինը և Իսպանիան իրենց հարստացման աղբյուր էին համարում։ Այդ ուժեղացնում էր իսպանացիների վրդովմունքը Կարլոսի դեմ։ Աշխատելով ցույց տալ, վոր ինքը հաշվի յե առնում այդ յերկրի սովորությունները, նոր Թագավորը շրջագայում էր առանձին պրովինցիաներում և ներկա յեր լինում տեղական կորտեսներում, աշխատելով սուբսիդիաներ ստանալ։ Նրան հաջողվեց փող ստանալ Արագոնի կորտեսներից։ Կատալոնացիները կտրականապես մերժեցին տալ պահանջված գումարը։ Այդ ժամանակ Կարլոսը Գերմանիայում կայսր էր ընտրվել։ Նա սկսեց պատրաստվել մեկնելու և նույնիսկ չգնաց ներկա գտնվելու Վալենսիայի կորտեսներում, այլ իր փոխարեն ուղարկեց իր Փավորիտ Ադրիան Ուտրեխտցուն, Տորտոսայի յեպիսկոպոսին— ապագա կարդինալին և պապին։ Վիրավորված վալենսիացիները նույնպես հրաժարվեցին փող տալուց։ Կարլոսի այն միջոցները, վոր կորտեսները բաց էին թողել Վալյադոլիդում, վերջանալու վրա էին, լինելու էին մեծ ծախսեր Գերմանիա մեկնելու և թագադրվելու համար և Կարլոսը ստիպված յեղավ Սանտ-Յագոյում (Գալիսիայում) նորից հրավիրել կորտեսները։ Բայց Կաստիլիայի քաղաքների միջև Տոլեդոյի գլխավորությամբ բանակցություններ սկսվեցին, վորոնց նպատակն էր թույլ չտալ, վոր Կարլոսը մեկնի Գերմանիա։ Կարլոսի մեծ մտադրությունները պահանջում էին մեծ ծախսեր և զոհեր, իսկ իսպանացիները բոլորովին չէին ուզում կրել այդ ծախսերն ու զոհերը։

1520 թվի սկզբին Սանտ-Յագոյում բացվեցին կորտեսները։ Ոպոզիցիան կտրուկ կերպով դուրս յեկավ Թագավորի դեմ։ Կարլոսը կորտեսների նիստը փոխադրեց Կորունյա և իրեն հարկավոր սուբսիդիան ստացավ միայն այն ժամանակ, յերբ ընդունեց կորտեսների պահանջները և խոստացավ յերկրից չարտահա-

նել վոչ փող, վոչ ձիեր, պաշտոններ չտալ օտարերկրացիներին և պետության գլուխ նշանակել մի այնպիսի մարդու, վորն ընդհանուր վստահություն է վայելում: Միայն ինը քաղաքներ ընդդեմ յոթի քվեարկեցին սուբսիդիա տալու ոգտին: Այնուամենայնիվ Կարլոսը, հակառակ իր խոստումների, փոխարքա նշանակեց ժողովրդականություն չվայելող կարդինալ Ադրիանին և մայիսի 20-ին մեկնեց Իսպանիայից:

Կաստիլիայի քաղաք—կոմունաների ապստամբությունը («կոմունեռոս»)

Կաստիլիայի քաղաքների ապստամբությունը, վոր հայտնի յե «կոմունեռոս» ապստամբություն անունով, սկսվեց Կարլոսի մեկնումից անմիջապես հետո: Դեպուտատները, վորոնք Կորունյայում կորտեսների արձակումից հետո գնացել եյին իրենց տները, իրենց ցուցաբերած զիջողականության համար տեղերում ընդհանուր զայրույթով եյին դիմավորվում: Սեգովիայում արհեստավոր-մահուդագործները նույնիսկ կախեցին յերկու դեպուտատներին: Կարլոսի փոխանորդ կարդինալ Ադրիանն ասում եր, թե Կարլոսը կորցրել է իր ժողովրդի սերը և գրանդներն ու կավալերները նրա դեմ միացել են քաղաքային կոմունաների հետ:

Ապստամբների գլուխն անցավ Տոլեդո քաղաքը: Այստեղից դուրս յեկան շարժման գլխավոր առաջնորդները— Խուան դը Պադիլյան և Պեդրո Լասո դե լա Վեգան: Լասոն, վոր մոտիկ եր Գուզմաններին, Իսպանիայի խոշորագույն ֆեոդալներին, Կաստիլիայի նշանավոր մարդկանցից մեկն եր: Դրանք բոլորն ազնվականներ եյին, վորոնք դաշն եյին կնքել քաղաքային կոմունաների հետ: Վերջիններս ուժեղ եյին իրենց միջնադարյան ուժեղ կազմակերպությամբ, բայց սոցիալապես թույլ եյին, վորովհետև թույլ եր նրանց բուրժուազիան, վորովհետև անկայուն եր արիստոկրատիայի և քաղաքների դաշինքը, քանի վոր միջնադարի այդ յերկու ուժերի շահերը շատ բաներով ուղղակի հակադիր եյին:

Կար մի կարևոր կետ, վորը միշտ իրարից անջատում եր քաղաքներն ու ազնվականությանը: Քաղաքները պնդում եյին, վոր գրանդների կողմից հափշտակված թագավորական հողերը վերադարձվեն թագին: Նրանք ճիշտ եյին մտածում, վոր գահի յեկամուտների ավելացման հետևանքով գանձարանն ավելի քիչ չափով կարիք կզգա սուբսիդիաների և կպակասի առելի ակա-

քալան— հարկը, որը կասեցնում էր առևտրի և արդյունաբերության զարգացման հնարավորությունը:

Սակայն սկզբնական ժամանակներում գրանդները, որոնք նեղվում էին նախորդ թագավորության օրոք և հիմա էլ նեղվում էին ֆլամանդացիների,— թագավորի խորհրդականների կողմից,— ձեռք մեկնեցին Կաստիլիայի քաղաքային կոմունաներին: Շարժումն ընդգրկեց Կաստիլիայի քաղաքների մի զգալի մասը: Ոտքի ելան Սեգովիան, Զամորան, Գվադալախարան, Մուրսիան, Սալամանկան, Մադրիդը, Կուենկան, Ալիկանտեն: Կարդինալ-խնամակալի փորձերը՝ ճնշել ապստամբությունը՝ միայն այն հետևանքն ունեցան, որ ապստամբած քաղաքներին նոր քաղաքներ էին միանում: Սեգովիան և Տոլեդոն հիմա իրենց գործակալներին ուղարկում էին ուրիշ քաղաքներ, առաջարկելով կոնֆեդերացիա կազմել և իրենց ներկայացուցիչներին ուղարկել Ավիլա քաղաքը: 1520 թ. հուլիսի 29-ին «սուրբ խունտան», այսինքն քաղաքների միության ներկայացուցիչները հավաքվեցին Ավիլայում: Խունտայի անդամները երդվեցին իրենց կյանքը չխնայել «թագավորի և կոմունաների համար», և այս խոսքը ցույց էր տալիս դեպի լեգալությունը յուրահատուկ մի ձգտում, որը հատուկ էր միջնադարյան շարժումներին: Նրանք տապալեցին կոռեխիդորներին և միության բոլոր զինված ուժերի հրամանատար հռչակեցին Խուան դե Պադիլյային: Կարդինալ-փոխարքա Ադրիանը հայտարարվեց տապալված և խունտան հանդես եկավ որպես երկրի բարձրագույն իշխանություն:

Դժվար է բոլոր մանրամասնություններով և պարզ պատկերացնել ապստամբածների սոցիալական կազմը: Բացի արիստոկրատիայից և քաղաքային վերնախավից, որը շահագրգռված էր միջնադարյան քաղաքային անկախության անձեռնմխելիությունը պահպանել և իսպանական քաղաքներում նույնպես խոշոր չափով բաղկացած էր ազնվականներից, շարժմանն անկասկած մասնակցում էին բնակչության նաև ավելի լայն խավերը, վաճառականությունն ու արհեստավորները, մանավանդ արդյունաբերական քաղաքներում, օրինակ, Տոլեդոյում, Սեգովիայում, Կուենկայում և այլն: Պատահական չէր այն հանգամանքը, որ կարդինալ-խնամակալն իր առաջին հարվածն ուղղեց այնպիսի մի քաղաքի դեմ, ինչպես Մեդինա դել Կամպոն: Այս-

տեղ տարեկան յերկու անգամ տեղի եյին ունենում հռչակավոր տոնավաճառները, վորտեղ Նոր Աշխարհի հետ ունեցած առևտրի հաշվային գործարքներ եյին կատարվում, այստեղ եյին գտնվում նաև մահուդի, մետաքսի և հացի պահեստարանը, յերկրի գլխավոր գինապահեստներից մեկը: Անկասկած է նաև, վոր այդ առևտրական և արդյունաբերական տարրերի ազդեցության տակ կազմվեց ապստամբների խնդրագիրը, վորն ուղարկվեց Կարլոսին: Բացի կորտեսների առաջվա պահանջներից, խնդրագրում մենք հանդիպում ենք մի շարք նոր պահանջների, վորոնք ուղղված եյին գրանդների և ազնվականության դեմ: Խնդրագրում շարադրված կարևորագույն պահանջները հետևյալներն եյին. թագավորը պետք է ապրի Կաստիլիայում (ուղղված էր Կարլոսի Գերմանիա մեկնելու դեմ). պաշտոններ կարող են գրավել միայն իսպանացիները (ուղղված էր Կարլոսի ֆլամանդացի խորհրդականների դեմ). կորտեսների դեպուտատները, այսպես կոչված պրոկուրադորները պետք է ռոճիկը ստանան ընտրողներից (ուղղված էր կառավարության կողմից կաշառվելու հնարավորության դեմ). կորտեսները պետք է հավաքվեն յուրաքանչյուր յերեք տարում. դրամը չպետք է արտասահման տարվի: Հետևյալ պահանջներն անընդունելի եյին թե՛ արիստոկրատիայի և թե՛ ամբողջ ազնվականության համար,— թագավորական դոմենները պետք է վերադարձվեն թագին. նոր պաշտոնները պետք է վերացվեն. ազնվականների «վնասակար արտոնությունները» պետք է լիկվիդացիայի յենթարկվեն. քաղաքային վարչությունների պաշտոնները չպետք է մատչելի լինեն ազնվականների. ազնվականական հողերը պետք է յենթակա լինեն հարկման: Վերջապես, կային մի շարք պահանջներ, վորոնք ուղղակի խոսում եյին այն մասին, վոր դրանք կարող եյին առաջադրվել միայն բնակչության հարկատու խմբերի կողմից,— գինվորներն օթևան են ստանում միայն վեց օրվա ընթացքում և միայն այն դեպքում, յեթե նրանք գտնվում են արշավանքում. ալկաբալան պետք է իջեցվի մինչև այն մակարդակը, վորի վրա այն գտնըվում եր Իզաբելլայի և Ֆերդինանդի օրոք:

Այդ խնդրագիրը վոչ մի հետևանք չունեցավ, բայց ցույց եր տալիս, վոր ապստամբների ուժերի մեջ կար խորը պառակտում և արիստոկրատիան ու ազնվականությունը հեռանում եյին շարժումից: Դեռ հուլիսի կեսին Տոլեդոյից Կարլոսին գրում

եյին, որ յեթե Լասոյին ներեյին և թագավորի կողմը քաշե-յին,— իսկ դա Կարլոսի թղթակցի կարծիքով միանգամայն հնա-րավոր եր,— ապա կհաջողվեր արագությամբ ճնշել շարժումը։

Բայց յեթե արիստոկրատիան և ազնվականությունը շարժու-մից հետ եյին քաշվում, ապա քաղաքացիների մեջ ե՛լ միաբա-նություն չկար։ Քաղաքները հոգում եյին ոչ այնքան իրենց ու-ժերը կառավարության դեմ մղած պայքարում համախմբելու մասին, որքան այն մասին, որ նրանցից յուրաքանչյուրը պաշտպաներ իր ազատություններն ու արտոնությունները։ Այն քաղաքներում, որոնք հասկանում եյին միասնության անհրա-ժեշտությունը,— իսկ դրանք այնպիսի քաղաքներ եյին, որոնք առևտրական ու արդյունաբերական տեսակետից ամենից շատ ե-յին զարգացած և անցել եյին ապստամբության գլուխը,— սկսվեց ստորին խավերի շարժումը քաղաքային պատրիկության և հարուստ վաճառականների դեմ։ Այնպիսի քաղաքներում, ինչ-պես Բուրգոսը, Զամորան, Սալամանկան, Ավիլան, Մեդինա դել Կամպոն, խորհուրդներում իշխանությունը գրավեցին ար-հեստավորները։ Թերևս դրանով է բացատրվում նաև այն հան-գամանքը, որ Անդալուզիայի քաղաքները ձեռնպահ եյին մնում շարժմանը մասնակցելուց։ Գրանադայում բուրժուազիան ուղղա-կի մատնացույց եր անում այն, թե որքան ել արդարացի յեն ապստամբների պահանջները, այնուամենայնիվ շարժման հետե-վանքներն իրենց մեջ թաքցնում են առևտրի խախտման և «ցածր դիրքի, ոչ փորձ, ոչ ել խոհեմություն ունեցող» մարդկանց իշխանության հաստատման վտանգը, մարդկանց, որոնք դար-ձել են կառավարողներ, մինչդեռ «բարի քաղաքացիներն անե-րևակայելի վիրավորանքների յեն յենթարկվում»։ Այն չափով, ինչ չափով ծավալվում եր շարժումը, նրա հակաազնվական բը-նույթն ավելի սուր կերպով եր արտահայտվում։ 1521 թվի ապ-րիլի 10-ին խունտան իր մանիֆեստում հայտարարեց, որ նա այսուհետև «գրանդների և ազնվականների (կաբալերոս) և թա-գավորության մյուս թշնամիների դեմ, նրանց գույքի և բնա-կարանների դեմ պատերազմ է մղելու հրով, սրով և ավերու-մով»։ Դրա հետ միաժամանակ շարժմանը սկսում է հարել գյու-ղացիությունը։ Կառավարությունը հաշվի առավ այդ հանգա-մանքը։ Նրան հաջողվեց իր կողմը քաշել ազնվականությանը և քաղաքային անվանիների խավը, իսկ 1521 թվի ապրիլի 23-ին

կարդինալ-փոխարքայի զորքերը Վիլյալարի մոտ վճռական պարտության մատնեցին խունտայի զորքերին: Պադիլյան և խունտայի մյուս հրամանատարները գերի ընկան: Գերի ընկավ նաև նրանց բանակի զգալի մասը (մոտ 10 հազար մարդ): Առաջնորդներին գլխատեցին: Որոշ ժամանակ դեռ անձնատուր չէր լինում Տոլեդո քաղաքը, ուր գործում էր Խուան դե Պադիլյայի կին Մարիա Պաչեկոն: Չնայելով սովին ու հիվանդություններին, նա տոկունությամբ դիմադրում էր, գլխավորելով քաղաքային ստորին խավերը, և հույս ուներ, որ օգնության կհասնի ֆրանսիական թագավոր Ֆրանցիսկ I-ը, որն այդ ժամանակ ձգտում էր գրավել Նավարրան: Բայց նա էլ վերջիվերջո իրեն հարկադրված զգաց համաձայնության գալ կառավարության հետ (1521 թվի հոկտեմբերի 25-ին): Որոշ ժամանակ նա մնում էր Տոլեդոյում, բայց որովհետև շարունակում էր լինել կենտրոնական դեմքը բոլոր դժգոհների համար, որոշեցին նրան բռնել և նա հազիվ կարողացավ փրկվել գյուղացու հագուստ հագնելու և փախչելու միջոցով: Նրա հետագա բախտն անհայտ է: 1522 թվի հուլիսին Կարլոսը վարձկանների չորս հազարանոց մի ջոկատի ուղեկցությամբ վերադարձավ Իսպանիա, բայց այդ զորքերն այլևս հարկավոր չէին: 1522 թվի նոյեմբերին նա ամնիստիա շնորհեց ապստամբության մասնակիցներին, բացառությամբ ապստամբության 270 ամենաականավոր ներկայացուցիչների: Սակայն դրանցից մի քանիսը հետո ներում ստացան: Շարժման անհաջողության պատճառները բոլորովին պարզ են: «Բազմազան հանգամանքները,— ասում է Մարքսը,— իրար միացան ի շահ աբսոլյուտիզմի աճող հզորության: Պրովինցիաների միջև միասնության պակասությունը կասեցնում էր նրանց առանձին ճիգերը. սակայն Կարլոսին գլխավոր ծառայությունը մատուցեց դասակարգերի— ազնվականության և քաղաքացիների խիստ անտագոնիզմը, որը նրան օգնեց ստորացնելու թե՛ մեկին և թե՛ մյուսներին»[1]:

Ապստամբություն Վալենսիայում և Մայորկա կղզում

Կատալոնիայի քաղաքների ապստամբության հետ միաժամանակ քաղաքների ապստամբություններ էին տեղի ունենում Վալենսիայում և Մայորկա կղզում, ընդ որում վերջին դեպ-

[1] *Маркс и Энгельс.* Соч. т. X, էջ 720.

քում ապստամբությանը մեծ մասնակցություն ունեցավ գյուղացիությունը, դաշինք կնքելով քաղաքային բնակչության ստորին խավերի հետ: Ապստամբների լոզունգն էր՝ վոչնչացնել ազնվականությանը և կոնֆիսկացիայի յենթարկել բոլոր հարուստ մարդկանց գույքը: Այս յերկու ապստամբությունները նույնպես ճնշվեցին:

Քաղաքների ջախջախմանը հետևեց նաև կորտեսների անկումը: Այն դեպքից հետո, յերբ կաստիլյան կորտեսները 1539 թըվին մերժեցին հարկերի վավերացումը, Կարլոսը նրանց կազմից վտարեց ընդդիմադիր գրանդներին: «Կորտեսների համար այդ մահացու հարված էր,— ասում է Մարքսը,— այնուհետև նրանց ժողովը հանգեց սոսկ պալատական ցերեմոնիաների կատարման»[1]:

Գրանդներն այլևս չէյին հաճախում այդ ժողովը: Քաղաքների դեպուտատները կառավարությունից «նվերներ» էյին ստանում և հնազանդ էյին թագավորի ցանկություններին: Վորպես քաղաքների դեպուտատներ, սկսեցին խցկվել տեղական ազնվականները, վորոնք անտարբեր էյին քաղաքացիների և բուրժուազիայի շահերին: Վերջապես, թագավորն սկսեց թագավորական խորհրդի անդամներից մեկին նշանակել կորտեսների նախագահ: Այդ ժամանակներից դեպուտատները, վորոնք հրավիրվում էյին յուրաքանչյուր 3–4 տարում, ամեն ինչին հավանություն էյին տալիս:

Անցնելով կոմունաների ապստամբության ընդհանուր գնահատականին, մենք հազիվ թե կարող ենք համաձայնվել մի քանի պատմագիրների հետ, վորոնք պատրաստ էյին նրանց պարտությունը համարել Իսպանիայի հետագա տնտեսական և քաղաքական անկման համարյա թե գլխավոր պատճառը: Չպետք է մոռանալ, վոր դա քաղաքների միության ապստամբություն էր,— վորոնք իրենց արտոնություններն ու իրենց միջնադարյան «սուվերենությունը» պաշտպանում էյին զարգացող աբսոլուտիզմից,— և վոչ թե բուրժուական հեղափոխություն, վորի նպատակն էր տապալել ֆեոդալիզմը ամբողջությամբ վերցրած: Յեվրոպայի մյուս մեծ մասի յերկրների պատմությունից մեզ ծանոթ է նույնպիսի մի յերևույթ, ինչպիսին տեղի ուներ Իսպա-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. X, էջ 720:

նիայում և այնտեղ կատարվեց այնքա՛ն դրամատիկ ձևով։ Ինչպես ասում է Մարքսը, աբսոլյուտիզմն ամենուրեք առաջանում էր «իրար մեջ թշնամություն անող ֆեոդալական դասակարգերի — արիստոկրատիայի և քաղաքների ավերակների վրա»[1]։ Աբսոլյուտիզմի կողմից նրանց քաղաքների ազատությունները և միջնադարյան սուվերենությունը վոչնչացնելը բնա՛վ չխանգարեց, վոր կապիտալիստական տնտեսությունը և բուրժուազիան վորպես դասակարգ զարգանան նշանակալից չափով հենց աբսոլյուտ միապետության հովանու տակ։ Ընդհակառակը, բուրժուազիայի պատմության մեջ այդ մոմենտը, քաղաքային ազատություններից նրա հրաժարվելու մոմենտը և դրա փոխարեն «ընդհանուր տիրապետություն» ձեռք բերելը, ցրված վիճակից — քաղաքային ազատ և սուվերեն կոմունաներից նրա, վորպես դասակարգի, հաստատուն դրության անցնելը նոր պետության տերիտորիայի սահմաններում, — մի կարևոր և պրոգրեսիվ մոմենտ է պատմական պրոցեսի «ամբողջում», և հենց այս իմաստով էլ Մարքսը մատնանշում էր աբսոլյուտ միապետության առաջադիմական նշանակությունը XVI դարի Յեվրոպայում, վորը, ինչպես ասում է նա, «հանդես է գալիս վորպես քաղաքակրթող կենտրոն, վորպես միասնության հիմնադիր»[2]։

XVI դ. յերկրորդ կեսում Իսպանիայի տնտեսական անկման պատճառները

Իսպանիայում գործն այլ ընթացք ստացավ։ Այստեղ սկզբում արիստոկրատիայի և ապա կոմունաների ջախջախմանը չհետևեց բուրժուազիայի վորպես դասակարգի հաստատվելը զարգացող կապիտալիստական տնտեսության հիման վրա։ Աբսոլյուտիզմի դեմ ապստամբած քաղաքային կոմունաներն իրենց վարքով ցույց էյին տալիս, վոր նրանց մեջ բուրժուազիան դեռ չի հասունացել զարգացման այն աստիճանին, յերբ նա իր քաղաքային ազատությունները հաճույքով կփոխարիներ «բուրժուազիայի ընդհանուր տիրապետությամբ»։ Բայց յեթե Իսպանիայի տնտեսական համեմատական հետամնացության շնորհիվ նրա բուրժուազիան XVI դարի սկզբում դեռ չէր հասել այդպիսի գիտակցության, ապա Իսպանիայի հետագա ամբողջ պատմությունը դրան էլ ավելի քիչ

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. X, էջ 721։
[2] Նույն տեղը։

չափով եր նպաստում: Ընդհակառակը, XVI—XVIII դ. դ. Իս-
պանիան տնտեսական յերկարատև անկում է ապրում, իսկ դրա հետ մեկտեղ նկատվում է բուրժուազիայի տեսակարար կշռի խիստ անկում յերկրի սոցիալական ընդհանուր կառուցվածքում. XVI դարի յերկրորդ կեսից Իսպանիայի պատմությունը դրանով արմատապես տարբերվում է Յեվրոպայի մյուս յերկրների մեծ մասի պատմությունից, և այդ յերևույթի հետ է կապված XVI դարի իսպանական մեծ տերության տնտեսական և քաղաքական անկման պատճառի և էության ամենահետաքրքիր, բայց և դժվարին պրոբլեմը: Այս պրոբլեմի լուծումից է կախված Իսպանիայի հետագա ամբողջ պատմության ըմբռնումը:

Պետք է մատնանշել, վոր XVI դարի յերկրորդ կեսի և XVII դարի սկզբի Իսպանիայի ներքին պատմությունը հարուստ չէ իրադարձություններով: Ընդհակառակը, այդ ժամանակվա Իսպանիայի արտաքին քաղաքականությունը լեցուն է ամենադրամատիկական և իրենց հետևանքներով կարևոր եպիզոդներով: Բավական է հիշել Կարլոս V-ի անվերջ պատերազմները, Նիդերլանդական հեղափոխությունը և Ֆիլիպպ II-ի օրոք Իսպանիայի պայքարը Ֆրանսիայի և Անգլիայի դեմ: Բայց արտաքին քաղաքականությունն այն ամենի ֆունկցիան է, ինչ վոր կատարվում է հասարակության ներսում, և այս պատճառով մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում Իսպանիայի ներքին պատմության իրադարձությունների աղքատությունը չպետք է թաքցնի առաջին հայացքից աննկատելի այն պրոցեսների կարևորությունը, վորոնք այդ ժամանակ անաղմուկ ծավալվում եյին Իսպանիայում:

XVI դարի յերկրորդ կեսից Իսպանիայի անկումն այնքան անկասկածելի և խիստ աչքի ընկնող մի յերևույթ եր, վոր այդ չեյին կարող չնկատել վոչ ժամանակակիցները, վոչ էլ պատմագիրները: Բայց մինչև հիմա էլ մի ընդհանուր կարծիք չկա այդ փաստի պատճառների մասին: Վորպես որինակ այն գրության, վորի մեջ գտնվում է տվյալ պրոբլեմի վիճակը, կարող է ծառայել իսպանական խոշորագույն պատմագիր Ալտամիրայի տված հանրագումարն այն ամենի, ինչ վոր ասվել է այդ հարցի շուրջը: Նա բերում է ժամանակակիցների, XVI և XVII դ. դ. գրողների կարծիքները, որինակ, Նավարետտայի,— վորն Իսպանիայի անկման պատճառ եր համարում նրա բնակչության

նվազումը,— կամ Մոնկադայի, որը պնդում էր, թե Իսպանիային կործանեց ամերիկյան ոսկին. այնուհետև նա կանգ է առնում ավելի ու ժամանակվա պատմագիրների բացատրության վրա, որոնք մեծ նշանակություն էին տալիս 1609 թվին մորիսկների— արաբների այդ աշխատասեր սերունդների արտաքսման, որոնք Իսպանիայի հարավում զբաղվում էին արհեստներով, մանավանդ մետաքսագործությամբ: Նա իրավամբ գտնում է, որ ինքը, Նավարետեն, ինչպես և մյուս ժամանակակիցները, բացի բնակչության նվազումը, որն ավելի շուտ պետք է համարել տնտեսական անկման սիմպտոմ կամ հետեվանք ու ոչ թե նրա պատճառը,— մոռացված է հիշատակել նաև մի շարք ուրիշ հանգամանքներ,— կառավարության անհեթեթ քաղաքականությունը, անվերջ կռիվները անընդհատ պատերազմների հետևանքով, հարկային բեռի չափից դուրս ավելացումը, եմիգրացիա, ազգային արդյունաբերությանը ցույց տրված կառավարական օգնության պակասությունը, տարբերկրյա արտադրության ապրանքների հեղեղը, տարբերկրյա բանվորների և արհեստավորների խուժն բազմությունը: Վերջին հանգամանքն իր հերթին մի քանիների կողմից դիտվում է ոչ թե իբրև Իսպանիայի անկման և նրա բնակչության նվազելու պատճառ, այլ իբրև դրանց հետևանք: Այնուհետև Ալտամիրան ճիշտ չի համարում Մոնկադայի նաև այն պնդումը, թե «Իսպանիայի աղքատությունն Ամերիկայի հայտնագործման հետևանքն է»: Նա կարծում է, որ XVI դարի Իսպանիայի տնտեսական պատմության վերաբերող մեր գիտելիքների ներկա վիճակով անկարելի յե շատ թե քիչ պարզ կարծիք ունենալ այն մասին, թե Ամերիկայի գյուտը և թանկագին մետաղների Իսպանիա թափվելը քանակական և որակական տեսակետից ինչ ազդեցություն ունեցավ յերկրի տնտեսության, հետևաբար նաև քաղաքականության վրա: Ինչ վերաբերում է մորիսկների դեմ գործադրած հալածանքներին և նրանց արտաքսման, որ տեղի յե ունեցել 1609 թվին, Ալտամիրան գտնում է, որ նրանց նշանակությունը չըպետք է չափազանցնել, թեպետ նա ընդունում է, որ Իսպանիայի հարավի և արդյունաբերության որոշ ճյուղերի, օրինակ, մետաքսե գործվածքեղենի արտադրության համար այդ արտաքսումը բացասական նշանակություն ունեցավ: Ընդհանրապես նա գտնում է, որ XVI դարի Իսպանիայի տնտեսության պատմու-

թյան վերաբերյալ աղբյուրների չափազանց աղքատ լինելու հետևանքով և նկատի ունենալով անկման պրոցեսի բարդ բնույթը, նրա մեջ տնտեսական և քաղաքական կարգի փաստերի միահյուսվելը ու սրանց փոխազդեցությունը, կարելի է միայն ասել, որ պատճառները բազմաթիվ են եղել: Նա ինքը սահմանափակվում է ավելի շուտ երևույթի նկարագրությամբ, քան դրա պատճառների պարզաբանությամբ: Իհարկե այդ մեզ չի կարող բավարարել:

Այսամիրան բերում է չափազանց հետաքրքիր մի փաստաթուղթ, որը ցույց է տալիս, թե իրենք, ժամանակակիցներն ինչպես էին նայում Իսպանիայի անկման էության և պատճառների վրա: Դա Կաստիլիայի խորհրդի 1618 թվին արտահայտած կարծիքն է այն մասին, թե ինչ պատճառներից է առաջացել «աղքատությունը, որի մեջ գտնվում են թագավորության վասալները... բնակչության անկումը և այլ ախտերը, որոնցով տառապում է այս աղքատ և կարիքավոր պետությունը»: Խորհուրդը մատնանշում է, որ այդպիսի պատճառներ են համարվում՝ հարկերի ծանրությունը, որոնք ճնշում են առավելապես կաստիլիացիներին, թագավորության ֆինանսների անկարգ անորինությունը, մեծ նվերներ բաժանող թագավորի շռայլությունը, գյուղատնտեսական մթերքների պակասությունը, հողի սեփականատերերի աբսենտեիզմն իրենց տիրույթների նկատմամբ, փարթամությունը, վանքերի հսկայական քանակությունը: Այդ չարիքն ուղղելու համար խորհուրդը թագավորին խնդրում էր «սահման դնել նոր վանքեր հիմնելուն և միանձների թվին, նորին մեծությանը մատնանշելով այն վնասն ու վտանգը, որոնք առաջանում են նրանց ավելացումից»: Այնուհետև խորհուրդը մատնացույց էր անում ավելորդ քանակությամբ բացառումները հարկերի վճարումից և պարհակներից ու մի շարք ուրիշ փաստեր:

Մեզ համար ժամանակակիցների այդպիսի դիտողությունները առավել ևս արժեքավոր են նրանով, որ պատմագիրները, որոնք անկման պատճառների հարց էին դնում, համարյա երբեք չեն շոշափել հարաբերությունների այն բնագավառը, որի սահմաններում միայն կարելի է փնտրել այդ պատճառների բացատրությունը,— դասակարգային փոխհարաբերությունները, որոնք XVI դարից սկսած բղխում են Իսպանիայում եղած դա-

ռակարգային պայքարի ձևից: Միայն ժամանակակիցների բողոքներում ենք մենք ցուցումներ գտնում մի շարք փաստերի մասին, վորոնք, ինչպես վերևում բերված փաստաթուղթը, ցույց են տալիս այն բացառիկ դիրքը, վոր գրավում եյին ազնվականությունը և հոգևորականությունը (այսինքն նույն ազնվականությունը, միայն թե յեկեղեցական փարաջա հագած) յերկրի կյանքում: Իրոք, թե՛ հարկերի ծանրությունը, թե՛ ֆինանսների անկարգ վիճակը, թե՛ թագավորի շռայլությունը, թե՛ փարթամությունը (իհարկե ազնվականության, մանավանդ պալատական ազնվականության կյանքում) և վերջապես վանքերի հսկայական քանակությունն ու կուսակրոնների թվի ավելացումը,— այս բոլորն ազնվականության անսահման տիրապետության և յերկրի բոլոր ուժերի նրա կողմից շահագործվելու ցուցանիշներն եյին միայն, ի վնաս այդ յերկրի հետագա զարգացման, ամենից առաջ կապիտալիստական տնտեսության զարգացման, վոր պրոգրեսի միակ հնարավոր ձևն եր տվյալ պատմական էտապում: Մարքսը հենց այդ է մատնանշում իր դիտողություններում, աբսոլյուտիզմի եպոխայում Իսպանիայի պատմական զարգացման յուրահատկության մասին. «... արիստոկրատիան անկման եր հասնում, չկորցնելով իր ամենավնասակար արտոնությունները, իսկ քաղաքները կորցրին իրենց միջնադարյան հզորությունը, չստանալով ժամանակակից նշանակություն»[1]:

Իսպանական աբսոլյուտիզմը համեմատելով Յեվրոպայի մյուս յերկրների ֆեոդալական-աբսոլյուտիստական միապետության և նրա պատմական դերի հետ, մենք պարզ համոզվում ենք Մարքսի այդ խորը դիտողության իրավացիության նկատմամբ: Որինակ, Յեվրոպայի այնպիսի յերկրներում, ինչպես Անգլիան և Ֆրանսիան, աբսոլյուտ միապետությունը, մանավանդ իր գոյության վաղ ժամանակաշրջանում, ստիպված եր խրախուսել իր յերկրի կապիտալիստական զարգացումը և ոժանդակել ազգային բուրժուազիայի գործունեությանը: Այդ տեղի յեր ունենում այն պատճառով, վոր տիրող դասակարգը զարգացող արդյունաբերության և առևտրի հարկման մեջ իր իսկ հարստացման և իր փայլուն գոյության համար լրացուցիչ ռեսուրս եր գտնում: Վաղ ժամանակաշրջանի աբսոլյուտ միապետությունը, ինչպես մաս-

1 *Маркс и Энгельс*, Соч. т. X, էջ 721:

նանչում է Մարքսը, «հովանավորում եր առևտուրն ու արդյունաբերությունը և հետևաբար բուրժուազիայի՝ վորպես դասակարգի ծագումը, նրանց մեջ տեսնելով թե ազգային հզորության և թե սեփական փայլի անհրաժեշտ նախադրյալները...»[1]: Անգլիայում, ինչպես հայտնի յե, տիրող դասակարգն ինքը, ազնվականությունը, գործունյա մասնակցություն է ցույց տալիս յերկրի կապիտալիստական զարգացման մեջ, մասամբ բուրժուականացվում է և այս պատճառով ամեն կերպ շահագրգռված է կապիտալիզմի և բուրժուազիայի զարգացմամբ: Ֆրանսիայում ազնվականությունը, մնալով իբրև ֆեոդալական ռենտայով պարազիտորեն ապրող մի դասակարգ, իր սեփական շահերի համար պլանաչափ և սիստեմատիկորեն ոտնահարում եր ազգային արդյունաբերությունը և առևտուրը:

Յեթե մենք հիմա այս որինակներից անցնենք Իսպանիային, ապա մենք այստեղ վոչ մի նման բանի չենք հանդիպի: XV դարի վերջից Իսպանիայի հասարակական զարգացման առանձնահատկությունն այն է, վոր տիրող դասակարգը և մանավանդ նրա կառավարող վերնախավը յեկամտի այնպիսի լրացուցիչ աղբյուրներ գտան, վորոնք նրանց դարձնում եյին անտարբեր, յերբեմն էլ ուղղակի թշնամի՝ իրենց յերկրի տնտեսական, մանավորապես կապիտալիստական զարգացմանը, մինչդեռ մի շարք օբյեկտիվ պայմանների շնորհիվ Իսպանիայում ավելի, քան ուրիշ վորևէ յերկրում, կապիտալիստական տնտեսության զարգացումը պետական խնամակալության և հովանավորության կարիք եր զգում: Այդ բոլորի հետևանքով իսպանական ազնվականությունը և իսպանական աբսոլյուտիստական պետությունը ճղմեցին իրենց սեփական յերկրի կապիտալիստական զարգացման առաջին ծիլերը, թույլ չավին, վոր վոտքի յելնի իրենց ազգային բուրժուազիան, վիժեցրին իրենց պետության տնտեսական հզորությունը և այդ բոլորի հետևանքով արդեն XVII դարի սկզբում նրան քաղաքական խորտակման հասցրին: Իսպանական ազնվականությունը մի շարք օբյեկտիվ պայմանների շնորհիվ իրեն ավելի յերկար ժամկետով ապահովեց բուրժուական հեղափոխությունից, քան ասենք թե Ֆրանսիական ազնվականությու-

1 *Маркс и Энгельс*, Соч. т. V, եջ 214:

նը, բայց նա այդ հատուցեց իր յերկրի տնտեսական և քաղաքական անկումով:

Այժմ մենք կտեսնենք, թե այդ ինչպես կատարվեց:

1491 թվի դեկտեմբերին, յերբ Կոլումբոսին հաջողվեց տեսակցություն ունենալ Իզաբելլա թագուհու հետ, վորպեսզի նըրան գայթակղեցնի արևմուտքի մեծ ճանապարհի իր պլանով, նա ստիպված յեղավ գնալ Սանտա-Ֆե, Գրանադա, ուր այդ ժամանակ գտնվում եր արքունիքը: Նա այնտեղ ժամանեց հենց այն մոմենտին, յերբ կապիտուլյացիա յեր անում քաղաքը, Իսպանիայում արաբների յերբեմնի տիրապետության վերջին հենարանը: Այսպիսով պատահաբար զուգադիպեցին յերկու նշանավոր տարեթվեր,— ռեկոնկիստայի վերջը և գաղութային այն կողոպուտի սկիզբը, վոր հետևեց Կոլումբոսի կողմից Ամերիկան գտնվելուց անմիջապես հետո: Թե մեկը և թե մյուսը գլխավորում եր իսպանական ազնվականությունը: Դաստիարակված լինելով մավրերի դեմ մղված դարավոր պայքարում և հիմա նետվելով Նոր Աշխարհը նվաճելու, իսպանական հիդալգոներն այստեղ հարություն տվին միջնադարյան դաժանության ամենամըռայլ ժամանակներին: Հաջողությունների հանդիպած կոնկիստադորներից նույնիսկ նրանք, վորոնք դուրս եյին յեկել ստորին խավերից, դարձան հողատերեր և ճորտատերեր, այսինքն անցան տիրապետող ֆեոդալական դասակարգի շարքերը: Բնիկների շահագործումը ճորտատիրական, ֆեոդալական շահագործման տիպիկ ձևով եր կատարվում,— այն շահագործման, վոր իմիջի այլոց տեղի ուներ հանքային արդյունաբերության մեջ, յերբ հանվում եյին թանկագին մետաղներ,— արծաթ և վոսկի, վորոնց հայթայթողը դարձավ Ամերիկան: Թե ինչպիսին եր արծաթի և վոսկու հոսանքն Իսպանիայի ամերիկական գաղութներից, այդ մասին կարելի յե գտնել այն ամենալուրջ հետազոտություններից, վոր կատարել ե գերմանական գիտնական Զետբերը, վորի թվերն իրենց յեթե վոչ բացարձակ, գոնե համեմատական նշանակությամբ մինչև հիմա յել չեն կորցրել իրենց արժեքը, չնայելով ամերիկացի Համիլտոնի նոր և չափազանց կարևոր հետազոտություններին (տես այս հատորի II գլուխը): Զետբերը տալիս ե արծաթի և վոսկու համաշխարհային հանույթի և այդ հանույթում Ամերիկայի իսպանական գաղութների բաժնի հետևյալ աղյուսակները:

Տարիներ	Համաշխարհային հանույթ		Իսպանիայի բաժինը		Իսպանիայի բաժինը		
	Վոսկի	Արծաթ	Վոսկի	Արծաթ	% հարաբերություն		
	կիլոգրամներով		կիլոգրամներով		Վոսկի	Ար-ծաթ	Ընդամենը
1493—1520	5800	47000	800	—	13	—	9
1521—1544	7100	90000	2910	30700	41	34	38
1545—1560	8500	311600	5460	246200	64	79	77
1561—1580	6900	299500	3790	248000	55	83	76
1581—1600	7380	418900	4330	374600	59	89	83

Այսպիսով, յեթե 1493 թվից մինչև 1520 թիվը ընկած ժամանակաշրջանում իսպանական արծաթն ու վոսկին կազմում եյին թանկագին մետաղների տարեկան համաշխարհային հանույթի միայն 9%-ը, այսինքն 1/11-ը, ապա արդեն XVI դարի կեսերին այն բարձրանում է մինչև համաշխարհային ամբողջ արտադրանքի 3/4-ը, իսկ այդ դարի վերջում—մինչև 5/6-ը: Յեթե մենք Իսպանիայի արտադրանքն արտահայտենք վոչ թե կշռային, այլ արժեքային հարաբերությամբ, ապա, վորովհետև իսպանական վոսկու տարեկան հանույթի տոկոսային հարաբերությունը վոսկու համաշխարհային հանույթի նկատմամբ ավելի ցածր է, քան արծաթի համապատասխան հարաբերությունը, ուստի ամեն տարի հանվող թանկագին մետաղների ամբողջ պաշարի արժեքը միջին հաշվով XVI դարի ընթացքում կկազմի համաշխարհային հանույթի 64%-ը: Դրամական շրջանառության պատմության բնագավառում հեղինակություն վայելող մի ուրիշ անձնավորություն,— Լեքսիսը, նույնիսկ յենթադրում է, վոր XVI դարի ընթացքում իսպանական արժեքների բաժինը միջին հաշվով կազմում եր համաշխարհային ամբողջ արտադրանքի 72%-ը:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր ամերիկյան գաղութներում հանվող վո՛չ ամբողջ արծաթն ու վոսկին եր հասնում Իսպանիա: XVI դարի վերջում, յերբ իսպանական տնտեսության անկումն ամբողջովին վերցրած ակներև եր դառնում, թանկարժեք բեռների մի զգալի մասը Սևիլիայում կամ նույնիսկ ծովում ուղղակի բարձվում եր հոլանդական, ֆրանսիական և

անգլիական նավերի վրա, վորպես վճար այն ապրանքների, վորոնք ուղարկում էին Իսպանիայի ամերիկական գաղութները: Յեվ այնուամենայնիվ կասկածից դուրս է մնում, վոր թանկագին մետաղների մշտական հոսանքը դեպի Իսպանիա պետք է ցնցող ազդեցություն գործեր այդ յերկրի համեմատաբար թույլ տնտեսության վրա: Այս փաստի սոցիալական նշանակությունը նույնպես վոչ մի կասկածի յենթակա չէ: Իսպանական ազնվականությունը վորպես հանքային ձեռնարկությունների և թանկագին մետաղների սկզբնական տեր, իսպանական գանձարանը վորպես թանկագին մետաղների ամբողջ հանույթի մի վորոշ մասի մասնակից, իսպանական գրանդները վորպես կենսաթոշակներ և նվերներ ստացողներ (թագավորի շռայլություն),— իրենց տնօրինության տակ ունեին հսկայական հարստություններ, վորոնց աղբյուրները կապված չէին մետրոպոլիայի, այսինքն բուն Իսպանիայի տնտեսության հետ: Ուստի նրանց համար միևնույն էր, արդյոք կընկնե՞ր այդ տնտեսությունը, թե կբարգավաճեր: Դեռ ավելին: Թանկագին մետաղների մշտապես դեպի Իսպանիա հոսելու հետևանքները վորոշ չափով հաստատում են Մոնկադայի դատողություններն այն մասին, թե Իսպանիայի աղքատության պատճառը յեղել է Ամերիկայի գյուտը: Կարճ ասած՝ մետրոպոլիայի տնտեսության համար այդ հետևանքների էությունն այն էր, վոր թանկագին մետաղների հոսանքը դեպի Իսպանիա նոր հարստությունների բաշխման և կուտակման ֆեոդալական բնույթի կապակցությամբ հիմնովին խեղդեց մետրոպոլիայի կապիտալիստական զարգացման հնարավորությունը: Ամերիկայի «Վոսկին» իրոք վոր կործանեց Իսպանիան:

Սակայն չպետք է կարծել, վոր իսպանական տնտեսության համար կորստաբեր այդ հետևանքներն արտահայտվեցին մի անգամից: Գաղութներում գյուղատնտեսությունը թույլ էր զարգանում, բացակայում էր արդյունաբերությունը, և գաղութականների ամբողջ սպառումը ծածկվում էր մետրոպոլիայից բերվող ապրանքներով: Այս պատճառով ամերիկյան գաղութացումը սկզբնական ժամանակներում բուն Իսպանիայում արդյունաբերության անկասկածելի վերելք և տնտեսական աշխուժություն առաջացրեց: Գաղութներում ամենից շատ պահանջվում էին պարենամթերքներ, մանավանդ հաց, գինի, ձեթ, ապա մետաքս և բրդե թանկագին գործվածքներ: Արդեն XVI դարի կեսին

գաղութների աճը, իսկ դրա հետ նաև վերոհիշյալ ապրանքների պահանջն այնպես եր, վոր համեմատաբար թույլ իսպանական տնտեսությունը,— նույնիսկ յեթե նկատի ունենանք արդյունաբերության անկասկածելի հաջողությունները,— ի վիճակի չեր սեփական արտադրանքներով լիովին բավարարելու այն, և իսպանական վաճառականները ստիպված եյին այդ պահանջը մասամբ բավարարել օտարերկրյա արտադրանքով: XVI դարի իսպանական գրող Թոմաս դե Մերկադոն ասում եր, վոր Սևիլիայի նման քանի քաղաքն ել բավական չեր գաղութների պահանջները բավարարելու համար, բայց ըստ յերևույթին շատ շուտով սկսվեց տնտեսական այդ վերելքի աստիճանական մարումը, վոր առաջին հայացքից տարօրինակ ե թվում, իսկ հետո վերելքը փոխարինվեց անկումով: Արդեն 1573 թվին կորտեսների սեսիայում դեպուտատները գանգատվում եյին, վոր բոլորովին ընկել ե ազգային արտադրությունը, և ցավելով հիշում եյին այն ծաղկած վիճակը, վորի մեջ քիչ ժամանակ առաջ գտնվում եր այնպիսի քաղաքների արդյունաբերությունը, ինչպես Տոլեդոն, Սեգովիան, Կուենկան, Գրանադան, Սևիլիան: Պաշտոնական տվյալների համաձայն, Կարլոս I-ի (V) օրոք Սևիլիայում կար 16 հազար դազգյահ և 130 հազար բանվոր: Ամերիկական պահանջից առավելապես շահեցին Կաստիլիայի քաղաքները, բայց անուղղակի կերպով շոշափվեցին նաև Արագոնի ու Վալենսիայի քաղաքները: Հիմա հարց ե ծագում, հապա ինչո՞վ ե բացատրվում այդ ամբողջ արդյունաբերության առաջին հայացքից այդ անսպասելի անկումն այդպիսի պայմաններում, վորոնք կարծես թե միանգամայն նպաստավոր եյին: Այս հարցը չափազանց բարդ ե և մենք այստեղ կարող ենք տալ դրա միայն ամենաընդհանուր լուծումը:

Կարող ե տարօրինակ թվալ, վոր մեր հիշած Մերկադոն այդ հսկայական եքսպորտը մեծ դժբախտություն ե համարում Իսպանիայի համար: Այնուհանդերձ նա բազմանշանակալի կերպով ավելացնում ե, թե իսպանական վաճառականները չեյին բավականանում նրանով, վոր օտար պրոդուկտներ եյին տանում գաղութները, այլ իրենց սեփական ապրանքներն ել եյին արտահանում: Մենք հիմա կտեսնենք, վոր Մերկադոյի դիտողությունը վորքան իմաստ ուներ իսպանական պայմաններում:

Կարելի յե ասել՝ հսկայական պահանջը ձյան նման թափվեց

համեմատաբար թույլ և դրան անպատրաստ իսպանական էկոնոմիկայի գլխին: Առաջին անհրաժեշտության պրոդուկտների հսկայական զանգվածն Իսպանիայից արտահանելը գների հեղափոխության պայմաններում, որն առաջացել էր ճորտ բնիկների էժան աշխատանքով ձեռք բերված արծաթի և ոսկու հոսանքից, հասցրեց այն բանին, որ այդ պրոդուկտները չափազանց թանկացան, իսկ թանկության հետ մեկտեղ բարձրացավ նաև աշխատավարձը: Կոնտինենտալ և լեռնային բնույթ ունեցող երկրում հաղորդակցության բնական ճանապարհների բացակայությունը թույլ չէր տալիս արդյունաբերական ռայոններից գաղութները գնացող պրոդուկտների պակասը ծածկել թերակղզու մյուս մասերից ներմուծում կատարելու միջոցով: Դրա հետևանքով Սևիլիայի առևտրական կորպորացիաները,— Սևիլիա, որն իրավունք ուներ մոնոպոլ առևտուր անել ամերիկական գաղութների հետ,— վաղ սկսեցին իսպանական թանկ արտադրանքը փոխարինել ֆրանսիական, հոլանդական և անգլիական ավելի էժան ապրանքներով: Եթե առաջ վաճառականները միաժամանակ նաև տեղական արդյունաբերության մեծագնորդներ էին, իսկ դրա հետ մեկտեղ նաև մանուֆակտուրաների կազմակերպիչներ սկզբնական շրջանում, ապա այժմ վաճառականն ու արտադրողը բաժանվում են իրարից: Շնորհիվ այն հանգամանքի, որ վաճառականն օտարերկրյա ապրանքներ վաճառելուց ավելի շատ օգուտ է ստանում, քան իր երկրի ապրանքները վաճառելուց,— նա այլևս շահագրգռված չէ ազգային արտադրության զարգացմամբ: Այսպիսով թե ազնվականները և թե վաճառականները, այսինքն այն խմբերը, որոնց ձեռքով էին անցնում ամերիկյան գաղութներում ձեռք բերվող թանկագին մետաղները,— միևնույն չափով շահագրգռված չէին ազգային արտադրության վերելքով:

Այդ ցավը կարող էր ամոքել պետությունը, եթե նա, այսինքն ամբողջ տիրող դասակարգը շահագրգռված լիներ օժանդակելու իր արդյունաբերությանը: Բայց իսպանական հիդալգոների ֆեոդալական-աբսոլյուտիստական պետությունը կարծես ամեն ինչ անում էր, որպեսզի քայքայի երկրի տնտեսությունը: Իր մեծապետական քաղաքականությամբ տարված, նա հսկայական գումարներ էր ծախսում պատերազմի և բանակի (այսինքն նույն ազնվականության կերակրելու) վրա, ավելացնում

եր հարկերը, նույնիսկ արգելակալանքի չէր յենթարկում մասնավոր անձանց պատկանող արծաթն ու վոսկին, յերբ դրանք բերվում եյին Իսպանիա, և դրա փոխարեն պարտավորություններ եր տալիս, վորոնք հետո չէր կատարում: Դրանով նա վերջնականապես վիժեցնում եր վարկը, կասեցնում բուրժուական տնտեսության նորմալ զարգացման հնարավորությունը, վորովհետև կառավարության այդ ամբողջ քաղաքականությունը ֆեոդալական տիպիկ տնտեսություն եր: Բայց կային և հատուկ պատճառներ, վորոնք քայքայում եյին իսպանական ազգային արդյունաբերության ամենակարևոր ճյուղը— բրդյա գործվածքների արտադրությունը, վորի մեջ, ինչպես ասում եյին ժամանակակիցները, աշխատում եր իսպանական բնակչության համարյա մեկ յերրորդը, իսկ Կաստիլիայում— գրեթե բոլոր բնակիչները: Արտադրության այդ ճյուղի հումքը, իսպանական հռչակավոր բուրդը պատկանում եր իսպանական ազնվականության, մանավանդ բարձր ազնվականության, ապա իսպանական յեկեղեցուն և նույնիսկ իրեն, թագավորին: Ընկնող արդյունաբերությունը կարելի յեր բարձրացնել միայն յեվրոպական մերկանտիլիզմի վոգով հովանավորական մաքսային տարիֆներ սահմանելու միջոցով, այսինքն հումքի և առաջին անհրաժեշտության մթերքների գներն արհեստականորեն իջեցնելու միջոցով, դրանց արտահանությունն արգելելով: Բայց իսպանական գրանդները դերադասեցին ավելի շուտ իրենց բուրդը համաշխարհային գներով ծախել արտասահմանում, քան բարերարություն անել իրենց բուրժուազիային՝ իրենց պատկանող բրդի գները կամավոր կերպով իջեցնելու միջոցով իրենց յեկամուտների մի մասը զոհելով նրա գրպանը: Չպետք է մոռանալ, վոր յեվրոպական մերկանտիլիզմը, վորը հումքի և հացի արտահանումն արգելելու միջոցով նույնպես արհեստականորեն իջեցնում եր հումքի և հացի—բանվորների սննդի գները, միայն այն ժամանակ եր հաճույքով անում այդպիսի զոհաբերություններ, յերբ դրա համար պետք է հատուցեր առավելապես գյուղացին, վորպես և՛ հումք և՛ հաց արտադրող: Բոլորովին այլ եր դրությունն Իսպանիայում: Յեվ վորպեսզի հասկանանք, թե ինչպես է ծագել Իսպանիայի տիրող դասակարգի յեկամտի մի աղբյուրը ևս, վորը նրան անտարբեր եր դարձնում իր արդյունաբերության և իր

բուրժուազիայի զարգացման հանդեպ, մենք պետք է ծանոթանանք Մեստայի— Իսպանիայի տիտղոսավոր վոչխարաբույծների, հռչակավոր մերինոսների հսկայական հոտեր ունեցողների արտոնյալ ընկերության պատմության հետ,— մերինոսների, վորոնք, ինչպես XVI դարի Անգլիայի վոչ պակաս հռչակավոր վոչխարները, գրավում էին «մարդկանց լափելով»: Դեռ ռեկոնկիստայի ժամանակներում Կաստիլիայի և Էստրամադուրայի հսկայական, հաճախ ամայի տարածությունները սկսում էին վերածվել արոտատեղերի, վորովհետև արաբների կողմից թըշնամական հարձակում լինելու դեպքում հեշտ էր վոչխարի հոտը քշել անվտանգ տեղ: Հսկայական տարածությամբ ամայի հողը, վոր նվաճման հետևանքով ընկել էր թագավորի, սենյորների ու յեկեղեցու ձեռքը և շատ պետքական էր վոչխարներ աճեցնելու համար, շուտով տնտեսության այդ ճյուղը դարձրեց Իսպանիայի ազգային առանձնահատկությունը: Հոտերը յերկու տեսակ էին— տեղական և շրջիկ: Առաջինները յերկրագործության կից լրացուցիչ տնտեսական ճյուղ էին կազմում և պատկանում էին գլխավորապես գյուղացիական համայնքներին, իսկ հետագայում նաև խոշոր հողատերերին. յերկրորդները գտնվում էին բացառապես թագի, խոշոր սենյորների ու յեկեղեցական ընկերությունների տիրապետության տակ և շուտով յուրահատուկ կազմակերպություն ստացան: Վոչխարների հսկայական հոտերն ամառն արածում էին Կաստիլիայի ու Լեոնի բարձրավանդակներում, ձմեռը տարվում էին Էստրամադուրայի և Անդալուզիայի՝ ավելի մեղմ կլիմա ունեցող և սիզավետ հարթավայրերը և ապրիլին վերադառնում էին: Ըստ յերևույթին հենց այդ պայմաններն էլ մշակեցին իրենց բրդով հռչակված իսպանական մերինոսների (merino իսպաներեն նշանակում է «թափառաշրջիկ») տիպը: Շատ վաղ անասնապահությունը, շնորհիվ տնտեսության այդ ճյուղի ազնվական բնույթի և տնտեսական այն հսկայական նշանակության, վոր այն ուներ գանձարանի և արտոնյալների համար,— անցավ թագավորի առանձին հովանավորության տակ: Բայց առանձնահատուկ արտոնություններով էին ոգտվում չըրջիկ հոտերի տերերը: Նրանք կազմում էին արտոնյալ մի ընկերություն, վորը կոչվում էր Մեստա և վորի գլուխն էր կանգնած «Մեստայի պատվավոր խորհուրդը» (Honorado consejo de la mesta): Մեստայի անդամներն իրավունք ունեին իրենց

կապակցությամբ բարձրացնել վարձատրությունը— վոչ մի հաջողություն չունեցան ընդհուպ մինչև XVIII դարի վերջին յերբորդամասը: «Այնտեղ, ուր յերևում է Մեստան,— ասում է ֆրանսիացի մի ճանապարհորդ,— յերկիրն անապատ է դառնում»: Մեստան և նրա վոչխարներն իսկական դժբախտություն դարձան իսպանական գյուղացիության համար, իսկ դրա հետ միասին նաև իսպանական ամբողջ տնտեսության համար: Ամբողջ պրովինցիաներ ամայացան. ամենաբերրի հողերում, վորոնք հիմա արոտավայրերի եյին վերածվել, հազիվ մեկ հինգերորդ մասն եր ապրում այն բնակչության, վորն այստեղ գոյություն ուներ առաջ:

Ըստ 1556 թվի տվյալների, վոչխարների քանակը հասնում եր 7 միլիոն գլխի: Այդ վոչխարների բուրդը, ինչպես ասված է վերևում, արտահանման առարկա յեր: Արդեն 1512 թվին Իսպանիայից արտահանվեց մոտ 50 հազար կվինտալ այդպիսի բուրդ 250 հազար դուկատ արժողությամբ, իսկ 1557 թվին— 150 հազար կվինտալ և 1610 թվին— 180 հազար կվինտալ: XVI դարի կեսերին միայն Բրյուգգե քաղաքն ամեն տարի Իսպանիայից ստանում եր 36-ից մինչև 40 հազար հակ բուրդ, յուրաքանչյուր հակը 16 դուկատի արժողությամբ:

Ամերիկայի վոսկին սպանեց իսպանական արդյունաբերությունը, իսպանական վոչխարաբուծությունը կործանեց գյուղատնտեսությունը և սնանկացրեց իսպանական գյուղացուն, բայց արդյունաբերության վրա յել նրանք նույնպես բացասաբար եյին ազդում: Թե մեկը և թե մյուսն ամրում եր հողում իսպանական ազնվականության և մանավանդ նրա կառավարող վերնախավի շահերի: Ազգի «սերուցքը»— իսպանական ազնվականությունը չորացնում եր այն հողը, վորը կերակրում եր նրան: Բենեդիկտյան Ֆեյխոոն XVII դարի սկզբում գրում եր, վոր «իր յերկրի գյուղացու վիճակն ավելի վատ է, քան ցռկանավի դատապարտված տաժանակրի վիճակը»:

Դրա փոխարեն իսպանական ազնվականությունը յուրովի յեր զարգանում: Ասենք վո՛չ բոլորը: Հենց նոր հարստության աղբյուրների բնույթը, հարստություն, վոր գալվանացրել եր միջնադարյան հասարակության այդ դասակարգին,— վոր պատմական անհրաժեշտության բերմամբ Յեվրոպայում ամենուրեք հակվում եր դեպի անկում,— կանխորոշում եր այդ հարստու-

թյան անհավասարաչափ բաշխումը հենց իրեն, դասակարգի սահմաններում: Արծաթի և ոսկու հանույթը կարող էր վոմանց մի անգամից հարստացնել և վոմանց էլ վոչինչ չտալ. ամեն ինչ կախված էր հաջողությունից: Վոչխարների հսկայական հոտերը և հողի վիթխարի տարածությունները, այդ ամբողջ «պետությունները» (նրանք այդպես էլ կոչվում էին— estados) պատկանում էին գրանդներին, մինչդեռ իսպանական մանր հիդալգների մասսան քարշ էր տալիս իր, ճիշտ է, ազնվական, դեպի աշխատանքն արհամարհանքով լեցուն, բայց բավական վողորմելի գոյությունը, հիշեցնելով անմահ դարձած «տխրադեմ ասպետին», դոն Կիխոտին, վորի դույքը բաղկացած էր մի նիզակից, հնադարյան վահանից, նիհար ձիուց և քերծե չնից»: Ֆեոդալական արիստոկրատիայի հսկայական յեկամուտները նըրան թույլ էին տալիս իր արտոնությունները («վնասակար արտոնությունները») գերծ պահել կապիտալիստական զարգացման քայքայիչ ներգործությունից: Գրեթե բոլոր ազնվականական կալվածքները, նույնիսկ մանր կալվածքներն ունեյին մայորատի իրավունք, այսինքն կարող էին անձեռնմխելի և չպակասած դրությամբ ժառանգաբար հանձնվել վորդիներից մեկին, ազնըվական տոհմի տնտեսական հիմքը պահպանելու համար: Յեթե այստեղ ավելացնենք հողի հսկայական և յերբեք չոտարվող տարածությունները, վորոնք պատկանում էին կաթոլիկ յեկեղեցուն, ապա դուրս կգա, վոր վիթխարի տարածությամբ հողեր հանված էին շրջանառությունից: Իսպանիայում համարյա անկարելի յեր հող գնել, կապալավարձը չափազանց բարձր էր, և իսպանական գյուղացին, նեղվելով մերինոներից, թալանվելով թագավորի կողմից հանուն քաղաքական «մեծ» նպատակների, սնանկացվելով ագահ ու կաշառակեր չինովնիկության կողմից, կորցրեց աղքատությունից ազատվելու ամեն մի հույս, դրա հետ միասին կորցնելով նաև ռացիոնալ կերպով և լարված աշխատելու ցանկությունը: Քաղաքում մանր արհեստավորի և առևտրականի դրությունն ավելի լավ չէր: Այնտեղ ևս բացակայում էին ռացիոնալ աշխատանքի պայմանները և կուտակման հնարավորությունները: Ուստի և իրավացի յե գերմանացի պատմագիր Զուգենհեյմը, յերբ ասում է, վոր տնտեսական հետամնացությունը և բնակչության աշխատավոր խավերի ա՛յն անտարբերությունը դեպի իրենց բախտը, վոր առաջվա ժամա-

նակներում նշվում եր բոլոր դիտողների կողմից,— նրանց վզին փաթաթել եր իսպանական ազնվականական պետությունը, որն իր ամբողջ քաղաքականությունը կառուցում եր միայն արտոնյալների շահերից ելնելով:

Այժմ հասկանալի յե դառնում, թե ինչո՞ւ Իսպանիայում այդպիսի բացառիկ դեր եր խաղում կաթոլիկ յեկեղեցին: Ազնվականական այդ պետության մեջ, որը յերկար ժամանակով իրեն համար անվտանգ եր դարձրել բուրժուական զարգացումը, կաթոլիկ յեկեղեցին, հանդիսանալով «գոյություն ունեցող ֆեոդալական կարգի բարձրագույն ընդհանրացումը և սանկցիան»[1], պետք է որ աչքի ընկնող տեղ գրավեր: Նա մի փորձված միջոց եր հպատակեցնելու տգիտության և սնոտիապաշտության մեջ պահվող գյուղացիական մասսաներին, որոնք պետք է անտրտունջ յենթարկվեյին իրենց վիճակին, բոլոր ձևերի ֆեոդալական ռենտա հայթայթողների վիճակին: Յեվ Իսպանիայի կաթոլիկ յեկեղեցին հսկայական քանակությամբ իր միանձներով և միանձնուհիներով, իր անթիվ ու անհամար կղերականներով,— որոնք մեծ մասամբ հենց նույն իսպանական մակաբույծ ազնվականներն եյին,— իր հսկայական հողային տիրույթներով, ֆանատիզմի ոգնությամբ,— որը դարեր շարունակ ներշնչվել եր մավրերի դեմ մղված պայքարում և հիմա պաշտպանվում եր փառահեղ աուտոդաֆեներով,— իսպանական ժողովրդի ազատության և առաջադիմության դերեզմանափորի բացառիկորեն մռայլ դերը խաղաց: Իսպանիայում աշխարհիկ սուրը և հոգևոր սուրը միացած եյին թագավորի միևնույն ձեռքում, և իսպանական հռչակավոր ինկվիզիցիան Իսպանիայում աբսոլյուտիզմի ռակալի գործիք դարձավ:

Քաղաքների, առևտրի և արդյունաբերության անկումը, յերկրի կապիտալիստական զարգացման դադարը, առանց այն էլ թույլ ներքին տնտեսական կապերի թուլացումը յերևան հանեցին յուրաքանչյուր մարզի ֆեոդալական հին առանձնահատկությունները, տեղական սովորությունները, և վերակենդանացրին յերկրի քաղաքների և պրովինցիաների միջնադարյան սեպարատիզմը: Այստեղից է բղխում աբսոլյուտիզմի եպոխայի իսպանական պետության այն յուրահատուկ բնույթը, որը Մարքսին

[1] *Маркс и Энгельс,* Соч. т. VIII, էջ 128:

թույլ ավեց VXI-VXII դարերի Իսպանիան համեմատել Թուրքիայի հետ, այնքա՛ն քիչ էր նման իսպանական աբսոլյուտիզմն իր յեվրոպական նմուշին:

«Այն չափով, ինչ չափով ընկնում էր քաղաքների առևտրական և արդյունաբերական կյանքը,— ասում է Մարքսը, նկատի ունենալով XVI-XVII դարերը,— ներքին փոխանակությունն ավելի հազվադեպ էր դառնում, զանազան պրովինցիաների բնակիչների փոխադարձ շփումն ավելի յեր թուլանում, հաղորդակցության միջոցներն անուշադրության եյին մատնվում, մեծ ճանապարհներն ամայանում եյին... Այնինչ աբսոլյուտ միապետությունն Իսպանիայում դառավ մի մատերիալ, վորն իր իսկ բնությամբ չի յենթարկվում կենտրոնացման, նա արավ այն ամենն, ինչ վոր կախված եր իրենից, վորպեսզի թույլ չտա ընդհանուր շահերի աճ, վորոնք ծագում են աշխատանքի ազգային բաժանումից և ներքին փոխանակության բազմակերպությունից, վորոնք և հանդիսանում են իսկական ֆունդամենտ ադմինիստրացիայի միանական սիստեմի և ընդհանուր օրենքի տիրապետության համար: Այսպիսով աբսոլյուտ միապետությունն Իսպանիայում... ինչպես Թուրքիայում, մնաց իբրև վատ կառավարող հանրապետությունների կուտակված՝ անվանական սուվերենի գլխավորությամբ»[1]:

Իսպանական աբսոլյուտիզմի և նրա դասակարգային հիմքի— իսպանական ազնվականության տնտեսական ֆունդամենտը, այն պայմանների բացակայությունը, վորոնք Յեվրոպայի աբսոլյուտ միապետություններում աբսոլյուտիստական կառավարություններին ստիպում եյին աջակցել կապիտալիստական զարգացման և սեփական բուրժուազիայի շահերին, մի խոսքով, իսպանական հասարակության տիրող դասակարգի տնտեսական ռեսուրսների թույլ կապը հենց Իսպանիայի հողի հետ՝ այն հետևանքն ունեցան, վոր Իսպանիայի արտաքին քաղաքականությունը XVI դարում յուրահատուկ կերպով զրկվեց հիմքից, կրեց լայն թափ և ֆանտաստիկ բնույթ և ընկավ XVII դարում: Հենց Իսպանիայի դերը կայանում եր նրանում, վոր նա այդ համաշխարհային քաղաքականությունը պետք է ապահովեր իր զավակների արյունով և ուժից վեր հարկային ճնշումով— այն ժամանակաշրջաններում, յերբ վճարներով սաստիկ ծանրաբեռնված պետական

[1] *Маркс и Энгельс*. Соч. т. X, եջ 721—722:

գանձարանը չէր կարողանում ծածկել այն ծախսերը, վորոնք կապված եյին աղնվականական միապետության մեծ պլանների իրականացման հետ, և հերթական սնանկություն եր հայտարարում:

Կարլոս V-ն իր ամբողջ կյանքն անցկացրեց արշավանքներում և համարյա չէր լինում Իսպանիայում: Իր թագավորության ընթացքում նա պատերազմում եր թուրքերի հետ, վորոնք հարավից հարձակվում եյին իսպանական տերության վրա և հարավ-արևելքից— ավստրիական Հաբսբուրգների տիրությունների վրա, պատերազմում եր Ֆրանսիայի հետ՝ Եվրոպայում և մանավանդ Իտալիայում գերակշռություն ձեռք բերելու համար, պատերազմում եր իր իսկ հպատակների, Գերմանիայի բողոքական իշխանների հետ: Համաշխարհային միապետություն ստեղծելու վիթխարի պլանը վիժեց, չնայելով Կարլոսի բազմաթիվ հաջողություններին: 1555 թվին Կարլոս V-ը, վոր վաղաժամ ծերացել եր ու զառամել, հանդիսավոր կերպով հրաժարվեց գահից, և Իսպանիան Նիդերլանդների, Նոր Աշխարհի գաղութների և իտալական տիրությունների հետ միասին անցավ նրա վորդի Ֆիլիպպ II-ին:

Իսպանիան Ֆիլիպպ II-ի օրոք

Ֆիլիպպը խոշոր մարդ չէր: Լինելով քիչ կրթված, սահմանափակ, բծախնդիր և ագահ, նա խորապես համոզված եր, թե անսասան են իր իշխանությունը և այն սկզբունքները, վորոնց վրա հենվում եր այդ իշխանությունը,— կաթոլիկությունն ու աբսոլուտիզմը:

Այստեղից է բղխում Ֆիլիպպ II-ի գործունեյության յուրորինակ բնույթը: Լինելով մռայլ և լռակյաց, այդ դահակալ կանցելյարիստն իր ամբողջ կյանքն անցկացրեց իր ապարանքներում, աշխատասենյակում զբաղվելով թղթե «մեծ» գործով, վորով նա ուզում եր փոխարինել քաղաքագետի կենդանի գործունեյությունը: Նրան թվում եր, վոր թղթերն ու կարգադրությունները բավական են, վորպեսզի ամեն ինչ գիտենալ, ամեն ինչ տնորինել: Ինչպես սարդը մութ անկյունում, նա իր նուրբ քաղաքականության աներևույթ թելերն եր հյուսում հանուն կաթոլիկական աստծո և Իսպանիայի փառքի, և այդ թելերը կտրվում եյին տվյալ փոթորկալից ու անհանգիստ ժամանակի թարմ քամու առաջին իսկ հպումից: Նրա բանակները ջարդված եյին, նրա նավատորմիղները ծովերի հատակն եյին

իջնում, նրա աստծուն ամենուրեք անջնջելի վիրավորանքներ ե-յին չպրտում, և նա ստիպված եր ցավով խոստովանել, վոր «հերետիկոսական վոգին նպաստում է առևտրին և բարգավաճմանը»: Մի անգամ նա հայտարարեց. «Յես գերադասում եմ բոլորովին չունենալ հպատակներ, քան վորպես այդպիսիներ ունենալ հերետիկոսներին»: Բայց հերետիկոսները մնում եյին, ապրում, իսկ ազնվականական Իսպանիան անփառունակ կերպով ներքև գլորվեց ու Յեվրոպայում յերկրորդական տեղ բռնեց:

Ֆիլիպ II-ի մայրաքաղաքն ել զարմանալիորեն ներդաշնակված եր նոր թագավորի և նրա գործունեյության բնույթի հետ: Նա թողեց իսպանական թագավորների աթոռանիստ քաղաքներ Տոլեդոն և Վալյադոլիդը և իր մայրաքաղաքը դարձրեց Մադրիդը— փոքրիկ քաղաքը Կաստիլիայի ամայի ու անարգավանդ բարձրավանդակում: Մադրիդին մոտիկ նա միաժամանակ կառուցեց մի մռայլ պալատ և գերեզմանատուն— Եսկուրիալը, վորին վիճակված եր դառնալ Իսպանիայի մեծ անցյալի վեհաշուք դամբարանը:

Ինկվիզիցիան դարձավ գլխավոր գործիք նրա ներքին քաղաքականության, վորը հիմնված եր կաթոլիկության նկատմամբ ֆանատիկոսական և վայրի ճիվաղային նվիրվածության և անխոս հնազանդության պահանջելու վրա:

Իսպանիայում վորպես թագավոր առաջին անգամ 1559 թվին իր յերևան գալը նա նշանավորեց մի վիթխարի աուտոդաֆեյով, վորի ժամանակ այրվեցին իսպանացի բազմաթիվ բողոքականներ և, ինչպես ասում են, Ֆիլիպը մերկացնելով սուրը, հանդիսավոր կերպով յերդվեց պահպանել հավատի մաքրությունը և աջակցել «սուրբ» ինկվիզիցիային: Սակայն այդ չեր նշանակում, թե նա հռոմեական յեկեղեցու հնազանդ զավակն եր: Նա ուզում եր, վոր իսպանական հոգևորականությունը և հենց իսպանական ինկվիզիցիան յենթարկվեյին միայն իրեն, ուրիշ վոչ վոքի: Այս հողի վրա լուրջ թյուրիմացություններ եյին տեղի ունենում ամենաջերմեռանդ կաթոլիկ թագավորի ու յերկրում Քրիստոսի փոխանորդի միջև, վորն իր թաթն եր մեկնում այդ թագավորի իտալական տիրությունների վրա: Պողոս IV պապը, նախկին կարդինալ Կարաֆֆան դրեթե իր ամբողջ պոնտիֆիկատի ընթացքում բանադրանքի տակ եր պահում Կարլոս V-ին և նրա հաջորդին, և միայն Կարաֆֆայի հաջորդ Պիոս IV-ը վերջնակա-

նապես լիկվիդացիայի ենթարկեց այդ թյուրիմացությունները, հաշտվելով այն բանի հետ, վոր իսպանական թագավորը փաստորեն դարձել է իսպանական եկեղեցու գլուխ:

Հավատի միասնությունը, վոր քողարկում էր իսպանական ազնվականության կողմից թե իսպանական և թե օտար բնակչության ֆեոդալական շահագործման միասնությունը, Ֆիլիպ II-ին դրդեց պայքար մղել իր նիդերլանդական հպատակների դեմ, վորոնք չէին ցանկանում ենթարկվել այն վիճակին, վոր ապրում էր իսպանական բուրժուազիան,—զոհ դառնալ իսպանական ազնվականությանը: Հավատի միասնությունը նրան թույլ էր տալիս իր իսկ երկրում կողոպտել իր այն հպատակներին, վորոնք մեղավոր էին միայն նրա համար, վոր չէին կարող մինչև վերջ դառնալ իսպանացիներ և կաթոլիկներ: Նա խիստ միջոցներ ձեռնարկեց մորիսկների, մավրերի հետնորդների դեմ, վորոնք քրիստոնեություն էին ընդունել: Նրանք ապրում էին Գրանադայի նախկին իշխանությունում և ամբողջ Անդալուզիայում ու կազմում էին բնակչության ամենաջանասեր մասը: Իսպանիայի մետաքսի արդյունաբերությունն իր գոյությամբ պարտական էր նրանց: Նրանցից շատերը թեև պաշտոնապես քրիստոնյաներ էին համարվում, բայց շարունակում էին գաղտնի դավանել իրենց հայրերի հավատը: Նրանց ճնշել սկսեցին դեռ Ֆիլիպից առաջ: Կարլոս I-ի որոք հրատարակվեց մի որենք (1526 թ.), վորը մորիսկներին արգելում էր գործածել արաբական լեզուն, ազգային հագուստ և զենք կրել: Մորիսկների մեջ առանձնապես ջանադիր էր լինում ինկվիզիցիան: 1565 թվից հրատարակվեցին մի շարք էդիկտներ, վորոնք ուժեղացրին նրանց հետապնդումը: Հուսահատության հասած մորիսկները 1568 թվին ապստամբություն բարձրացրին՝ խալիֆայության վերականգնելու լոզունգով: Իսպանական կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը (1570 թ.) և մորիսկների մի զգալի մասն աքսորել Կաստիլիա: Մնացածն ավարտեց ինկվիզիցիան, վորը մասսաներով այրեց ծածուկ կերպով «ճշմարիտ հավատն ուրացողներին»: Մորիսկների ապստամբության ճնշումը նախերգանքն էր Իսպանիայից նրանց լիակատար արտաքսման և նրանց գույքի գրավման, վոր տեղի ունեցավ 1609 թվին: Սակայն Ֆիլիպ II-ը վոչ պակաս խիստ էր վարվում նաև խռովարար իսպանացիների հետ:

Այսպես, արդեն նրա թագավորության վերջում արագոնցիները դուրս չեկան իրենց ազատությունները պաշտպանելու (1591 թ. մայիս)։ Ֆիլիպպի զինվորներն ու ինկվիզիցիան ճնշեցին նաև այս ապստամբությունը։

Բայց և այնպես, Ֆիլիպպի այդ «հաջողությունների» հետ մեկտեղ ընկնում էր ամբողջ պրովինցիաների բարեկեցությունը, կործանվում արդյունաբերությունը, իսկ դրանց հետ նաև Իսպանիայի հույսերն ապագայի նկատմամբ։ Իսպանական ազնվականությունը կարողացավ իր բոլոր արտոնությունները պահպանել յերկրի ավերման և իսպանական մեծ տերության անկման գնով, իսկ Իսպանիան այդպիսի տերություն էր XVI դարում։

Այդ անկումը շուտով դրսևորվեց Իսպանիայի նաև արտաքին քաղաքականության մեջ։

Կարլոս I-ն իր որդուն ամուսնացրեց անգլիական թագուհի Մարիա Թյուդորի հետ։ Թե՛ Կարլոսը և թե՛ Ֆիլիպպը ցանկանում էին ո՛չ միայն վերականգնել կաթոլիկությունն Անգլիայում, այլև միացնելով Իսպանիայի ու Անգլիայի ուժերը, շարունակել համաշխարհային միապետություն ստեղծելու քաղաքականությունը։ Բայց 1558 թվին Մարիան մեռավ, իսկ ամուսնության առաջարկը, որ Ֆիլիպպն արեց նոր թագուհի Յեղիսաբեթին, մերժվեց։ Յեղիսաբեթի քաղաքականությունը շահավետ էր նոր ազնվականության և բուրժուազիայի, որոնց համար Իսպանիան ամենավտանգավոր մրցակիցն էր ծովում։ Նիդերլանդական հեղափոխության ժամանակ Յեղիսաբեթը սկզբում գաղտնի, իսկ հետո բացահայտ կերպով աջակցում էր Ֆիլիպպի խռովարար հպատակներին։ Անգլիական ծովահենները և Յեղիսաբեթի ադմիրալները կողոպտում էին իսպանական նավերը, մանավանդ «Ֆլոտներն ու գալեոնները», այսինքն այն նավերը, որոնք Ամերիկայից վերադառնում էին թանկագին մետաղների բեռով։ Ֆիլիպպի առաջ ծառացավ մի խնդիր— ջախջախել այդ հերետիկոսական և ավազակային բույնը և յեթե հնարավոր է, տիրանալ Անգլիային։ Այս խնդիրն սկսեց միանգամայն իրագործելի թվալ այն բանից հետո, յերբ Ֆիլիպպը 1581 թվին Փորթուգալիան միացրեց Իսպանիային, յերբ արդեն մեռել էր թագավորող դինաստիայի վերջին ներկայացուցիչ դոն Սեբաստյան թագավորը։ Իր կողմն ունենալով փորթուգալական ազնվականության և ճիզվիտների համակրանքը, Ֆիլիպպ II-ը մեծ զորք

ուղարկեց Փորթուգալիա, հերցոգ Ալբայի հրամանատարությամբ, որը շուտով գրավեց մայրաքաղաքը։ 1581 թ. ապրիլին փորթուգալական կորտեսները Ֆիլիպ II-ին հռչակեցին իրենց թագավոր։ Փորթուգալիայի հետ միասին Ֆիլիպի ձեռքն անցան նաև փորթուգալական գաղութներն Արևելյան և Արևմտյան Հնդկաստանում։ Ստանալով նոր ռեսուրսներ, Ֆիլիպ II-ը սկսեց աջակցել Անգլիայի կաթոլիկ շրջաններին, վորոնք ինտրիգներ էին լարում Ելիզաբեթի դեմ և վերջինիս փոխարեն անգլիական գահի համար առաջ էին քաշում շոտլանդական թագուհի Մարիա Ստյուարտին։ Բայց 1587 թվին Մարիայի դեմ կազմված դավադրությունը հայտաբերվեց և Մարիան գլխատվեց։ Վորպես նախազգուշության միջոց, Ելիզաբեթը դեպի Կադիքս ուղարկեց մի նավախումբ՝ ադմիրալ և ծովահեն Դրեկի հրամանատարությամբ։ Վերջինս, ներխուժելով նավահանգիստը, փոչնչացրեց իսպանական նավերը (1587 թ.)։ Այս դեպքն Իսպանիայի և Անգլիայի միջև բացահայտ պայքարի սկիզբ դարձավ։ Ֆիլիպ II-ը սկսեց կազմակերպել մի հսկայական նավախումբ, վորը պետք է նվաճեր Անգլիան։ Սկզբում ենթադրվում էր, վոր 556 նավերից բաղկացած նավախումբն իր հետ կվերցնի 60 հազար զինվոր և 1600 հեծելակ։ Բայց այդպիսի հսկայական ձեռնարկման համար փողը չբավականացավ և «անպարտելի Արմադան»— այդպես էին անվանում իսպանական նավախումբը— վորը 1588 թվի հունիսի վերջին Կորունյայից մեկնեց դեպի Անգլիայի ափերը, շատ ավելի քիչ էր,— 131 նավ 7500 հոգի անձնակազմով և 17 հազար զինվորներով։ Դյունկիրխենում նավատորմիղը պետք է լրացվեր Նիդերլանդների իսպանական փոխարքա Ալեքսանդր Ֆարնեզեյի զինվորներով։ Սակայն այդ ամբողջ ձեռնարկումը կատաստրոֆով վերջացավ։ Թեև անգլիական նավատորմիղն իսպանականից քիչ էր, բայց անգլիական թեթև նավերը շարունակ հարձակվում էին իսպանական նավախմբի վրա, վորը բաղկացած էր ծանր և անճոռնի նավերից։ Բացի այդ, փոթորիկ բարձրացավ և իսպանական անճարակ ադմիրալ Մեդինա Սիդոնիան, վախենալով, վոր անգլիացիները կարող են վառել իր նավերը, Անգլիայի շուրջը պտտելով, հետ դարձավ։ Փոթորիկը ցրիվ տվեց իսպանական նավատորմիղը և նրան հսկայական կորուստներ պատճառեց։ «Արմադայի» միայն խղճուկ մնացորդները վերադարձան Իսպանիա։

«Անպարտելի Արմադայի» կործանումը մի սարսափելի հարված եր, վոր հասավ Իսպանիայի հեղինակությանը և վիժեցրեց նրա ծովային հզորությունը: Դրանից հետո Անգլիան մի անգամից առաջ անցավ վորպես առաջնակարգ ծովային տերություն:

Անհաջողությունը Ֆիլիպ II-ին չխանգարեց կատարելու մի քաղաքական սխալ ևս,— միջամտելու այն քաղաքական խռովությանը, վոր այդ ժամանակ յեռում եր Ֆրանսիայում: 1589 թվին սպանվեց Վալուա դինաստիայի վերջին թագավոր Հենրիխ III-ը: Նրա հաջորդը դարձավ հուգենոտների գլուխ Հենրիխ Բուրբոնը, ապագա թագավոր Հենրիխ IV-ը: Ֆիլիպն ոժանդակում եր Ֆրանսիայի կաթոլիկական շրջաններին, վորոնք չեյին ցանկանում Հենրիխ Բուրբոնին թագավոր ճանաչել, բայց այս դեպքում ևս նա անհաջողության հանդիպեց: Իսպանական թագավորի միջամտությունը նույնիսկ ոգտակար յեղավ Հենրիխին, վորին ֆըրանսիացիների մեծամասնությունն սկսեց համարել ազգային իշխանության ներկայացուցիչ և Ֆրանսիան ոտարերկրացիների մեքենայություններից պաշտպանող: Յերբ Հենրիխ IV-ը կաթոլիկություն ընդունեց և Փարիզը նրա առաջ բացեց իր դռները, Ֆիլիպ II-ի գործը վերջնականապես տանուլ եր տրված:

Վերջապես, Ֆիլիպին մի քիչ հաղթանակի դափնիներ բերեց նրա պայքարը թուրքերի դեմ: Թուրքական վտանգը, վոր Յեվրոպային սպառնում եր XVI դարի սկզբից, առանձնապես շոշափելի դարձավ այն ժամանակ, յերբ թուրքերը գրավեցին Հունգարիայի մեծ մասը և թուրքական նավատորմիղը սկսեց սպառնալ Իտալիային: 1564 թվին թուրքերը բլոկադայի յենթարկեցին Մալտան և միայն մեծ դժվարությամբ հաջողվեց փրկել կղզին: 1571 թվին իսպանական-վենետիկյան միացյալ նավատորմը Կարլոս V-ի արտամուսնական վորդու, դոն Խուան Ավստրիացու առաջնորդությամբ Լեպանտո ծովածոցում վճռական պարտություն հասցրեց թուրքական նավատորմին: Սակայն հաղթողները չկարողացան ոգտվել այդ հաղթանակի պտուղներից և նույնիսկ Թունիսը, վոր գրավել եր Խուանը, նորից անցավ թուրքերին: Իր թագավորության վերջում Ֆիլիպը ստիպված եր խոստովանել, վոր իր գրեթե բոլոր ընդարձակ պլանները ձախողվել են: Իսպանիայի ծովային հզորությունն ընկած եր: Նիդերլանդները կիսով չափ անջատվեցին Իսպանիայից, յերկիրը տնտեսական յերկարատև անկում եր ապրում,

պետական գանձարանը քայքայված էր և հաճախակի սնանկությունների հետևանքով կորցրեց ամեն մի կրեդիտ: Ֆիլիպը կարող էր պարծենալ միայն մի բանով. բուն Իսպանիայում հերետիկոսությունն արմատախիլ էր արված: Աղքատ և ավերված Իսպանիան հավատարիմ մնաց աստծուն և կաթոլիկ եկեղեցուն:

Ֆիլիպի ամենամեծ և անուղղելի անհաջողությունը Նիդերլանդներում նրա վարած քաղաքականությունն էր, որի հետևանքով Իսպանիան կորցրեց այդ երկիրը, որը համարյա թե Եվրոպայի ամենահարուստ երկիրն էր XVI դարում:

ԳԼՈՒԽ VIII

ԻՍՊԱՆԻԱՆ ՅԵՎ ՓՈՐԹՈՒԳԱԼԻԱՆ XVII ԴԱՐՈՒՄ

Իսպանիայի տնտեսական անկումը XVII դ. սկզբում

Ֆիլիպպ III-*ի* (1598—1621 *թ. թ.*) *գահ նստելուց հետո վրա յե հասնում իսպանական միապետության ահեղ անկման յերկարատև ժամանակաշրջանը:*

Վերջին յերեք Հաբսբուրգները, վորոնք կառավարում եյին XVII *դարի ընթացքում, իրենց վրա կրում եյին ֆիզիկական այլասերման գծերը: Այդպես եր ամենից առաջ Ֆիլիպպ* II-*ի անմիջական հաջորդը, նրա վորդի Ֆիլիպպ* III-*ը: Այդքան և բախտավորել յերկիրը կառավարում եյին ֆավորիտ Լերման ու յուրայինները: Մադրիդի արքունիքը ժամանակակիցներին ապշեցնում եր իր ճոխությամբ և շռայլությամբ, մինչդեռ ժողովրդական մասսաներն ուժասպառ եյին լինում հարկերի և անվերջ ու ապօրինի տուրքերի ուժից վեր ծանրության տակ: Նույնիսկ ամեն ինչում հնազանդ կորտեսները, վորոնց հաճախ դիմում եր թագավորը նորանոր սուբսիդիաներ ստանալու համար, ստիպված եյին հայտարարել, վոր վճարել հնարավոր չե, վորովհետև յերկիրը վերջնականապես քայքայվել ե, առևտուրը մեռել և այկարարայից, արդյունաբերությունն անկման ե հասել, քաղաքներն ամայացել են: Լերմայի խորհրդով թագավորն դրամից ուժեղ թափով պատվավոր կոչումների և տիտղոսների վաճառքով, բայց այդ գումարները ես մի կաթիլ եյին կարիքի ծովում: Ամերիկական գաղութներից չարունակում եյին ժամանել գալեոնները, վորոնք բեռնված եյին լինում ազնիվ մետաղով, բայց այդ արժեքավոր բեռը կամ անգլիական ու հոլանդական ծովահենների ավար եր դառնում, կամ ընկնում եր մասնա-*

վոր ձեռքեր, նախ քան նավերը կհասնեյին Սեվիլիայի նավահանգիստը:

Վոսկե և արծաթե դրամը չքանում եր շրջանառությունից, մինչդեռ յեկեղեցիները և պրելատների մասնավոր տները լիքն եյին թանկագին մետաղներից պատրաստած առարկաներով: Հոգևորականության վրա ճնշում գործադրվեց, վորպեսզի նա իր թանկարժեք գույքի մի մասը նվիրի պետությանը, բայց այդ անհետևանք մնաց: Պետությունն սկսեց պղնձադրամ բաց թողնել, վորը հանգեց միայն դրամի արժեքազրկման և գների հետագա թանկացման, մանավանդ առաջին անհրաժեշտության առարկաների նկատմամբ: Հետևանքը յեղավ աղաղակող մի հակասություն: Իսպանական թագավորը, վորը համարվում եր ամերիկական գանձերի անկոնտրոլ տերը, հաճախ դրամ ել չեր ունենում, վոր վճարեր իր ծառաներին և ապահովեր իր ամենորյա սնունդը: Միևնույն ժամանակ արքունիքը թաղված եր փարթամության մեջ, հսկայական գումարներ եյին ծախսվում չքեղ հագուստի, ամեն տեսակ տոնախմբությունների և զվարճությունների համար:

Մորիսկների արտաքսումը Ֆիլիպպ III-ն իր հորից ժառանգեց վոչ միայն քայքայված յերկիրը, այլև կառավարման վատթարագույն գծերը, առաջին հերթին բռնացումը տգետ ու ագահ հոգևորականության, վորը գտնվում եր Լերմայի հատուկ հովանավորության տակ: Բացառիկ դեր եր խաղում Վալենսիայի արքեպիսկոպոս Ռիբեյրան, այդ ծայրահեղ ֆանատիկոսն ու ճիվաղը, վորն իր ուշադրությունը բևեռել եր Վալենսիայի մորիսկների կողմը: Արդեն Ֆիլիպպ III-ի թագավորության առաջին տարիներում նա համառորեն աշխատում եր մորիսկներին արտաքսելու ուղղությամբ: Մորիսկների մեղքը միայն այն եր, վոր նրանց ձեռքում եյին կենտրոնանում արդյունաբերությունը և առևտուրը: Նրանք Վալենսիան դարձրին մի ծաղկող պարտեզ, միանգամայն լոյալ եյին և հետապնդումների վոչ մի առիթ չեյին տալիս: Յեկեղեցու յեռանդուն պրելատին յերկար ժամանակ չեր հաջողվում իրագործել իր գարշելի նպատակը: Հալածանքի փորձերը բողոքներ եյին առաջացնում բարձր դասի և հողի սեփականատերերի կողմից, վորոնք վախենում եյին, թե մորիսկների արտաքսվելուց նյութական վնաս կկրեն: Հոգևորականության վորոշ ներկայացուցիչներ նույնպես դեմ եյին այդպիսի

քաղաքականության և բողոքում էին Հռոմի գահի առաջ: Սակայն 1609 թվին հերցոգ Լերմայի դրդումով հրատարակվեց մի էդիկտ, վորի համաձայն քրիստոնեության ամենահավատարիմ մորիսկների թվից միայն 6% էր թողնվում տեղերում, վորովհետև նրանք բնակչությանը սովորեցնեյին հողի մշակման յեղանակները: Մնացածները յենթակա էին արտաքսման: Դժբախտ մորիսկները մահապատժի սպառնալիքի տակ ստիպված էին յերեք օրվա ընթացքում նավեր նստել և մեկնել Բերբերիա, իրենց հետ վերցնելով միայն այն, ինչ վոր կարող էին տանել ձեռքով: Դեպի նավահանգիստները տանող ճանապարհներին նրանցից շատերը թալանվեցին կամ սպանվեցին: Լեռնային ռայոններում մորիսկները դիմադրություն ցույց տվին, վորն արագացրեց վողբերգական վախճանը:

1610 թվի ձմեռին մոտ 150 հազար հոգի աքսորվեցին Վալենսիայից: Դրանից հետո նույն վիճակին յենթարկվեցին Արագոնի, Մուրսիայի, Անդալուզիայի, Կատալոնիայի, Կաստիլիայի, Լա-Մանչայի և Եստրեմադուրայի մորիսկները: Ընդամենը արտաքսման յենթարկվեց մոտ 500 հազար մարդ, չհաշվելով ինկվիզիցիայի զոհերին և այն անձանց, վորոնք սպանվեցին արտաքսման պրոցեդուրան կատարելու ժամանակ: Իսպանիային, նրա արտադրական ուժերին հասցվեց էլի մի անուղղելի հարված, վորը միայն արագացրեց նրա հետագա անկումը:

Ֆիլիպպ III-ի ժառանգած քաղաքականության անհաջողությունները

Չնայելով յերկրի ապշեցուցիչ աղքատությանը և ամայությանը, իսպանական միապետության ղեկավարները պահպանեցին անցյալ թագավորությունից ժառանգած հավակնությունը՝ ղեկավար դեր խաղալու յեվրոպական գործերում: Ֆիլիպպ II-ի աշխարհակալական պլանների կործանումը բնավ չզգաստացրեց սահմանափակ խելքի տեր նրա հաջորդին: Յերբ Ֆիլիպպ III-ը գահ նստեց, Յեվրոպայում պատերազմը դեռ շարունակվում էր: Անգլիայում դեռ կենդանի էր Յեղիսաբեթ թագուհին, վորը Հենրիխ IV-ի Հոլանդիայի և Ֆրանսիայի հետ դաշնակցած, գործում էր Հաբսբուրգների դեմ. Հոլանդիան զենքը ձեռքին իր անկախությունն էր պաշտպանում իսպանական միապետությունից. Յեվրոպայի զանազան թատերաբեմերում ռազմական գործողություններ էին կատարվում: Հարավային Նիդերլանդների փոխարքաները,— Հերցոգ

Ալբերտը և նրա կին Իզաբելլան (Ֆիլիպպ II-ի ավագ դուստրը) բավականաչափ ռազմական ուժեր չունեյին և փորձում եյին հաշտություն կնքել Անգլիայի և Հոլանդիայի հետ, բայց այդ փորձը վիժեց իսպանական կառավարության չափից դուրս մեծ պահանջների հետևանքով: Լերման չեր թողնում Անգլիան նվաճելու միտքը, չնայելով «Անպարտելի Արմադայի» տխուր դասին: Այս նպատակներով 1601 թվին նա կորտեսներին ստիպեց հաստատել 24 միլիոն դուկատի արտակարգ հարկը և զորքեր ուղարկեց Իռլանդիա, այնտեղ բռնկված ապստամբությանն օժանդակելու համար: Սակայն այս անգամ ևս գործը վիժեց: Իսպանական նավատորմիղը դեպի Անգլիայի ափերն ընթանալիս սաստիկ վնասվեց փոթորկից, շատ զինվորներ մեռան հիվանդությունից, իսկ այդ ժամանակ իռլանդական ապստամբությունը ճնշվեց:

1603 թվին անգլիական թագուհի Ելիզավետը մեռավ: Նրա հաջորդ Հակոբ I Ստյուարտը մի անգամից փոխեց Անգլիայի արտաքին քաղաքականությունը: Լոնդոնի իսպանական դեսպան Սարմիենտոյին հաջողվեց անգլիական թագավորին քաշել իսպանական քաղաքականության շրջանակի մեջ: Բայց Հոլանդիայի դեմ մղվող պատերազմում Իսպանիան շարունակում եր անհաջողությունների հանդիպել: Իսպանական բանակի գլխավոր հրամանատար Սպինոլան յեռանդուն ու տաղանդավոր զորավար եր, բայց նրա բոլոր ջանքերն ի դերև յելան շնորհիվ արքայական գանձարանի լիակատար քայքայման: Իսպանական կառավարության համար ամենավտանգավորն այն եր, վոր հոլանդացիներն Ազորյան կղզիների մոտ բռնում եյին իսպանական գալեոնները և հենց իսպանական միջոցներով եյին պատերազմում: 1609 թվին Իսպանիան ստիպված եր Հոլանդիայի հետ զինադադար կնքել 12 տարվա ժամկետով:

Սակայն Իսպանիային մի նոր պատերազմ եր սպառնում: Ֆրանսիական թագավոր Հենրիխ IV-ը բողոքական պետությունների կոալիցիա յեր կազմում Հաբսբուրգների դեմ: 1610 թվի մայիսին նա սպանվեց Ռավալյակի դաշույնով և այդ ժամանակավորապես փոխեց միջազգային դրությունը հօգուտ Իսպանիայի: Ֆրանսիայի նոր թագավոր Լյուդովիկոս XIII-ն ամուսնացավ իսպանական արքայադուստր Աննայի հետ, իսկ Ֆիլիպպ III-ի ավագ վորդին նշանվեց Փրանսիական արքայազն իշխանուհի Ելի-

դիտարեն Բուրբոնի հետ: Թվում եր, թե այդ ամուսնական կապերը, ինչպես նաև Հակոբ I-ի խաղաղական օրիենտացիան, Իսպանիայի ամրապնդման հնարավորություններ եյին ստեղծում: Իրականությունը տակն ու վրա արավ Իսպանիայի կառավարիչների բոլոր հաշիվները:

Իսպանիան Յերեսնամյա պատերազմի ժամանակ

1618 թվին սկսվեց Յերեսնամյա պատերազմը, որին անմիջական առնչություն չուներ Իսպանիայի հետ: Սակայն Իսպանիան Ֆերդինանդ կայսեր առաջին իսկ կոչով միջամտեց այդ պատերազմին: Գերմանիայի սահմաններն ուղարկվեց յերկու բանակ. մեկը— Ֆլանդրիայից, կայսերական զորքերին օգնելու համար, իսկ մյուսը Սպինոլայի առաջնորդությամբ գրավեց Պալատինատը: Իսպանիայի դիվանագիտական և դրամական օգնությունը Ֆերդինանդի համար հեշտացրեց ապստամբած չեխերի դեմ դատաստան տեսնելը, բայց այնու հանդերձ յեվրոպական գործերին միջամտելը բուն Իսպանիայի համար հանդիսացավ նրա վերջնական անկման սկիզբը: 1621 թվին Ֆիլիպպ III-ը մեռավ և թագավոր դարձավ նրա որդի Ֆիլիպպ IV-ը (1621—1665 թ. թ.): Թագավորի փոխվելը բնավ չփոխեց ոչ յերկրի դրությունը, ոչ էլ իսպանական քաղաքականության ընդհանուր ուղղությունը: Իսպանիան դարձյալ կառավարում եյին ֆավորիտները և նորը միայն այն եր, որ նախկին ֆավորիտ Լերմային փոխարինեց թագավորի սիրելի և նրա սեղանակից կոմս Օլիվարեսը, որը փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց կառավարման բոլոր թելերը: Լինելով ավելի ընդունակ, քան Լերման, նոր ֆավորիտը թե արտաքին գործերում և թե ներքին քաղաքականության մեջ շարունակում եր ընթանալ իր նախորդի հետքերով: Ինչ վերաբերում է նոր թագավորին, նա նույնպես ուներ այլասերման բոլոր գծերը: Դժգույն, թույլ և քարացած դեմք,— այսպիսի տեսք ունի նա իսպանական հռչակավոր նկարիչ Վելասկեսի պորտրետներում: Նրա յերկարատև կառավարումը հանդիսացավ Իսպանիայի միջազգային պրեստիժի վերջնական անկումի ժամանակաշրջան: Յերեսնամյա պատերազմը յեռուն վիճակում եր. յեվրոպական տերությունների մեծամասնությունը մասնակցում եր այդ պատերազմին: Պալատինատի գրավումը չափազանց սրեց միջազգային հակասությունները: Սակայն պայքարող ուժերի փոխ-հարաբերության մեջ զգալի փոփոխությու-

ներ տեղի ունեցան: Ամուսնական դաշինքները, վորոնք կնքվել էյին իսպանական և ֆրանսիական թագավորական տների միջև, չխանգարեցին Ֆրանսիայի նոր կառավարչին, խելացի և հեռատես կարդինալ Ռիշելյեյին յեվրոպական գործերում ինքնուրույն և ղեկավարող դիրք բռնելու: Խնդիրն այն էր, թե Յեվրոպայում ո՞վ է անցնելու հեգեմոնիան: Մինչև այժմ այդ դերի նըկատմամբ հավակնություն ուներ Իսպանիան, և կոմս Ոլիվարեսն իր նախորդից ե՛լ ավելի յեռանդուն կերպով էր հետևում այդ աշխարհակալական տրադիցիաներին, ամեն կերպ աջակցելով ավստրիական Հաբսբուրգներին: Իսկ Ֆրանսիան գտնվում էր հակադիր լագերում, իր շուրջը համախմբելով բողոքական պետություններին:

Իսպանական քաղաքագետների և դիվանագետների ձեռքում միակ կոզիրը մնում էր Անգլիան, վորը կառավարում էյին սահմանափակ Հակոբ I-ը և անշնորհք ֆավորիտները: Կոմս Գոնդոմարը, Լոնդոնի իսպանական դեսպանը, փաստորեն դարձել էր թագավորի գլխավոր խորհրդականը: Նրա աջակցությամբ փորձ արվեց գահաժառանգ Կարլոսին ամուսնացնել իսպանական արքայադստեր հետ: 1622 թվին Կարլոսը հերցոգ Բեկինգեմի հետ գաղտնի մեկնեց Մադրիդ, վորպեսզի գլուխ բերի այդ գործը: Բայց յերկու կողմից առաջադրված անիրագործելի պայմանների պատճառով այդ ամբողջ պրոյեկտը ձախողվեց: Մասնավորապես Հակոբն ուզում էր, վորպեսզի Իսպանիան, վորը գրավել էր Պալատինատի մի մասը, ոգնի այդ տերիտորիան վերստին հանձնելու Ֆրիդրիխին, նրա փեսային: Ռիշելյեն ոգտագործեց ամուսնական բանակցությունների խզումը: Կարլոսն իսպանական արքայադստեր փոխարեն ամուսնացավ ֆրանսիական արքայազն իշխանուհի Հենրիետտա Մարիայի հետ և այդ նշանակում էր Անգլիան ներառնել այն կոալիցիայի մեջ, վորն ուղղված էր Հաբսբուրգների դեմ: 1625 թվին իսպանական զորքերը, շնորհիվ Սպինոլայի հմտության, մի շարք հաղթանակներ տարան, վորոնք ամրապնդեցին Իսպանիայի դրությունը: Հոլանդական Բրեդա բերդը ստիպված յեղավ տասն ամիս դիմադրելուց հետո անձնատուր լինել իսպանացիներին: Այս հաղթանակները ցնծություն առաջացրին Մադրիդի արքունիքում և ինքը, թագավորը ստացավ «մեծ» մականունը, բայց այդ բոլոր հաջողությունները չէյին կարող վերացնել մի տխուր փաստ,— յերկիրը վերջնակա-

նապես քայքայված էր և յեթե Կաստիլիայի կորտեսները, թեպետ և բողոքելով, դեռ սուբսիդիաներ էին տալիս թագավորին, ապա առանձին մարզերի— Արագոնի, Կատալոնիայի և Վալենսիայի կորտեսները, վորոնք հրավիրվեցին 1626 թվին, յերկար ու համառ դիմադրում էին, վկայակոչելով իրենց ազատությունները:

Հետագա տարիներում էլ Իսպանիան շարունակում էր պատերազմել վո՛չ առանց հաջողության: Ռիշելյեի ուշադրությունը առժամանակ շեղվեց Անգլիայի և ֆրանսիական բողոքականների դեմ մղվող պատերազմի կողմը: Բայց Լարոշելի անկումից հետո նա ազատ գործելու հնարավորություն ստացավ: Նրա ջանքերով կազմվեց մի նոր, ընդարձակ կոալիցիա, վորի մեջ մտան Ֆրանսիան, պապը, Վենետիկը, Հոլանդիան: Իսպանական թատերաբեմում ռազմական գործողությունները անհաջող էին Իսպանիայի համար և վերջացան Կազալեյում կնքված (1630 թ.) պայմանագրով, վորը շահավետ էր Ֆրանսիայի համար: Նույնպես անհաջող էին նաև դեպի Հոլանդիա ձեռնարկված արշավանքները: Գործերի դրությունը վատանում էր նաև Գերմանիայի տերիտորիայում: Այնտեղ հաջողությամբ գործում էր Գուստավ-Ադոլֆը: Ասպարեզից հեռացան կայսեր լավագույն զորավարները, Տիլլին և Վալլենշտեյնը. ավելի առաջ մեռել էր Սպինոլան: Սակայն իսպանական զորքերին հաջողվեց 1634 թվի սեպտեմբերի 27-ին Նորդլինգենի մոտ մի խոշոր հաղթանակ տանել: Բայց այդ վերջին հաղթությունն էր: 1635 թվից Ֆրանսիան անմիջականորեն միջամտեց դեպքերին: Ռիշելյեն պատերազմ հայտարարեց Իսպանիային և նրա դաշնակից կայսրության և իր առաջ խնդիր դրեց թշնամու վրա գրոհել բոլոր ռազմաճակատներում— Ֆլանդրիայում, Գերմանիայում, Հյուսիսային Իտալիայում, Էլզասում, Ֆրանշ-Կոնտեյում: 1636—1637 թ. թ. ընթացքում իսպանական զորքերը մեծ մասամբ պարտություններ էին կրում. բացի դրանից, նրանք ցրված էին ամբողջ Յեվրոպայում: 1638 թվին Ռիշելյեն ոգտագործեց այդ հանգամանքը և վորոշեց հարված հասցնել բուն Իսպանիայի տերիտորիայում: Ֆրանսիական զորքերը գրավեցին Ռուսսիլյոնը և դրանից հետո ներխուժեցին Իսպանիայի հյուսիսային պրովինցիաները, բայց այնտեղ նրանք հանդիպեցին ժողովրդի դիմադրության: Անհաջող յեղավ նաև 1639 թվի ռազմական արշա-

վանքը։ Կատալոնցիները վճռական հակահարված տվին ֆրանսիացիներին, թեև վոչ մի համակրանք չեյին տածում դեպի իսպանական կառավարության։ Բայց Ֆրանսիայի այդ անհաջողությունը համակշռվեց նրանով, վոր նույն 1639 թվին հոլանդացիները վոչնչացրին իսպանական նավատորմիղը։ Իսպանիայի ծովային ուժերին հասած այդ հարվածից նա այլևս չեր կարող վոտքի կանգնել։

XVII դարի 40-ական թվականներին իսպանական միապետությունը, վորին ղեկավարում եյին ֆավորիտները, լիակատար անզորություն եր ցուցաբերում։ Ֆինանսական միջոցների մշտական պակասությունը, հարկերի ու տուրքերի դիզումը, դատարկապորտ ազնվականության և ֆանատիկոս հոգևորականության տեր ու տնորեն լինելը, գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի անկումը— այս բոլորը խոր դժգոհություն եր առաջացնում ժողովրդական մասսաների մեջ։ 1640 թվին դրսևորվեց այդ դժգոհությունը, այն էլ թերակղզու յերկու հակադիր ծայրերում— Փորթուգալիայում և Կատալոնիայում։

Փորթուգալիայի անջատումը

1581 թվին, յերբ Փորթուգալիան մտավ իսպանական միապետության կազմի մեջ, տեղական հնամյա ազատությունները անձեռնմխելի թողնվեցին և ինքը, թագավորն էլ ձգտում եր չգրգռել իր նոր հպատակներին։ Դրությունը խիստ վատթարացավ նրա հաջորդների, մանավանդ Օլիվարեսի օրոք։ Փորթուգալիան դարձավ անխնա շահագործման նույնպիսի օբյեկտ, ինչպես և Իսպանիայի մնացած պրովինցիաները։ Խոշոր պաշտոնները տրվեցին Օլիվարեսի ֆավորիտներին, վորոնք պատկանում եյին Կաստիլիայի գրանդների և պրելատների միջավայրին. փորթուգալական ընդարձակ գաղութները դարձան Հոլանդիայի ավար։ Կադիքսը դեպի իրեն քաշեց Լիսաբոնի առևտուրը։ Մտցվեց Կաստիլիայի հարկային սիստեմը։ Ի լրումն այդ ամենի Օլիվարեսը վորոշեց ձեռնարկել մի ռադիկալ միջոց,— լիկվիդացիայի յենթարկել փորթուգալական կորտեսները և նրանց փոխարինել ներկայացուցչությամբ՝ կաստիլական կորտեսներում։ Այս դժգոհությունը, վոր աճել եր փորթուգալական հասարակության լայն շրջաններում, պայթեց 1637 թվին, բայց այդ առաջին ապստամբությունը ճնշվեց։ Սակայն անջատվելու և անկախության հաչա-

կելու միտքը սկսեց թափանցել նույնիսկ բարձր դասակարգերի գիտակցության մեջ, վորոնք գահի համար առաջ էյին քաշում Բրագանցի հերցոգին, թագավորական հին տան ներկայացուցչին: Մի խումբ դավադիրներ հեղաշրջում էյին նախապատրաստում: Նրանց թվում էյին՝ Լիսաբոնի արքեպիսկոպոսը, փորթուգալական բարձր դասի ներկայացուցիչները, զգալի թվով քաղաքացիներ: 1640 թվի դեկտեմբերի 1-ին դավադիրները Լիսաբոնում գրավեցին պալատը, ձերբակալեցին Փորթուգալիայի փոխարքա Վասկոնսելլոսին և թագավոր հռչակեցին Իոանն IV Բրագանցուն: Իսպանական կառավարությունն անզոր էր վորևէ բան ձեռնարկելու, մանավանդ վոր նույն 1640 թվին, դեռ մինչև փորթուգալիայի հեղաշրջումը, ավելի ահեղ ապստամբություն բռնկվեց Կատալոնիայում:

Ապստամբություն Կատալոնիայում Իսպանական կառավարության բռնակալական քաղաքականությունը, վաղեմի իրավունքների և ազատությունների խախտումն արդեն առաջ էլ Կատալոնիայում խուլ հուզումներ էյին առաջացնում: Կատալոնացիները, վոր կաստիլիացիներից տարբերվում էյին իրենց լեզվով, կուլտուրայով և պատմությամբ, իր ժամանակին հակահարված տվին ներխուժած ֆրանսիական զորքերին և թանկ էյին գնահատում իրենց ազատությունն ու անկախությունը: Կատալոնացիների համբերության բաժակը լցվեց, յերբ Ոլիվարեսի կարգադրությամբ Կատալոնիայի վրա հարկ դրվեց ըստ ունեորության աստիճանի· հրատարակվեց մի հրաման, վորով 6 հազար կատալոնացիներ, հակառակ իրենց ցանկության, պետք է ուղարկվեյին Իտալիա, իսկ կաստիլիական զինվորները տեղավորվեցին Կատալոնիայում: Սովորաբար նրանց ռոճիկ չէյին վճարում, նրանք զբաղվում էյին անկարգությամբ և կողոպուտներով: 1640 թվի հունիսի 7-ին, տոն օրը լեռնային ռայոններից շատ հնձվորներ էյին յեկել Բարսելոն: Հենց նրանք էլ ապստամբություն բարձրացրին, Բարսելոնի փողոցներում գոռալով՝ «Վրե՛ժ, ազատությո՛ւն: Կորչի՛ Ֆիլիպի վատ կառավարությունը: Կեցցե՛ թագավորը»: Պրինցիպատի փոխարքա Սանտա Կոլոման կտոր-կտոր արվեց, կաստիլիական շատ զինվորներ կոտորվեցին: Ապստամբությունը տարածվեց ամբողջ Կատալոնիայում: Շարժումը ճնշելու համար բոլոր պրովինցիաներից մոբիլիզացիայի յենթարկվեցին կաստիլիական զորքերը: Բայց գյուղացիներն ու քաղաքացիները համառ

կերպով դիմադրում էին: Բարսելոնը սաստիկ ամրացված և պատրաստ էր պաշտպանվելու: Հույս չդնելով սեփական ուժերի վրա, կատալոնցիները դիմեցին Ռիշելյեի օգնությանը: Բայց մինչդեռ բանակցություններ էին տարվում, իսպանական զորքերը Տորտոսայի մոտ անցան Էբրո գետը: Ֆրանսիական ջոկատները գեներալ Եպերնոնի գլխավորությամբ այդ ժամանակ արդեն անցել էին սահմանը և գրավել Տարագոնան: Այդ քաղաքի մերձակայքում կատալոնցիները կռվի բռնվեցին իսպանական զորքերի հետ, բայց լիակատար պարտություն կրեցին: Եպերնոնը հետ դարձավ և բարսելոնցիներին խորհուրդ տվեց կապիտուլյացիա անել, սակայն բարսելոնցիները քաղաքը մարտական լիակատար պատրաստության հասցրին և հռչակեցին Բարսելոնի կոմսության ձևական անջատումն Իսպանիայից և այդ կոմսության յենթարկումը ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XIII-ին: Բարսելոնի պաշարումն իսպանացիների համար անհաջող վերջացավ. նրանք ստիպված յեղան նահանջել, վորից հետո ապստամբությունը նորից ընդգրկեց ամբողջ Կատալոնիան: Այստեղ ուղարկվեց ֆրանսիական մի նոր բանակ և Կատալոնիան դարձավ ֆրանսիացիների և իսպանացիների միջև մղվող ռազմական գործողությունների թատերաբեմ: Պատերազմը ձգձգվեց մի քանի տարի և Իսպանիայի համար մեծ մասամբ անհաջող էր անցնում: Ֆրանսիական զորքերն օկուպացիայի յենթարկեցին Կատալոնիան, Արագոնը, Պերպինյանը, Ռուսիլյոնը: Նույնիսկ անհող Ֆիլիպպ IV-ը բացեց աչքերն ու տեսավ իր ֆավորիտի քաղաքականության հետևանքները: 1643 թվին Օլիվարեսը ստիպված յեղավ հրաժարական տալ:

Սակայն վոչ ղեկավարության փոխվելը, վոչ Ռիշելյեի և Լյուդովիկոս XIII-ի մահը, վոր շուտով հետևեց դրան,— չբարելավեցին Իսպանիայի դրությունը: Ռոկրուայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1643 թվի մայիսին) ամբողջովին ջախջախվեց իսպանական հռչակված հետևազորը: Իսպանիայի համար անհաջող էին գնում նաև Ֆլանդրիայում, Կատալոնիայում և փորթուգալական սահմանում տեղի ունեցող ռազմական գործողությունները: 1647 թվին մի շարք ապստամբություններ բռնկվեցին Իսպանիայի իտալական տիրություններում (տես III գլ.):

Ֆրանս-իսպանական մրցակցության հանրագումարները

1648 թվին Երեսնամյա պատերազմը վերջացավ Վեստֆալյան հաշտությամբ։ Սակայն Ֆրանսիայի և Իսպանիայի միջև պայքարը շարունակվում էր, թեև շատ թույլ, որովհետև ֆրանսիական կառավարության գործողությունները կաշկանդված էին Ֆրոնդայի շարժումով (տես XVI գլ.)։ Մազարինին նույնիսկ փորձ արեց խաղաղ ճանապարհով համաձայնության գալ Իսպանիայի հետ, բայց Ֆիլիպ IV-ը չափից անցնող պահանջներ ներկայացրեց— մաքրել ֆրանսիացիների գրաված բոլոր տերիտորիաները։ Պատերազմի հետագա ընթացքում Ֆրոնդայի մասնակիցներից մեկը, արքայազն Լյուդովիկոս Կոնդեն, որ Ռոկրուայի մոտ հաղթանակ էր տարել, իր բանակով անցավ Իսպանիայի կողմը և նշանակվեց Ֆլանդրիայում եղած իսպանական ուժերի գլխավոր հրամանատար։ Ֆիլիպ IV-ը միաժամանակ փորձում էր համաձայնություն կնքել Կրոմվելի հետ և եվրոպական միապետներից առաջինն էր, որ ճանաչեց «արքայասպանների հանրապետությունը»։ Սակայն Կրոմվելը դերադասեց համաձայնության գալ Ֆրանսիայի հետ։ Անգլիական նավատորմը գաղութային ծովերում Իսպանիայից խլեց Յամայկան, իսկ Եվրոպայում բլոկադայի ենթարկեց Դյունկիրխենը, որը ցամաքից պաշարված էր ֆրանսիական զորավար Տյուրենի կողմից։ Այդ բերդի կորստյան հետևանքը եղավ իսպանական Ֆլանդրիայի մի շարք քաղաքների կորուստը։ 1659 թվի Պիրենեյան հաշտությամբ, որով վերջացավ պատերազմը, Իսպանիան կորցրեց Ռուսիլյոնը, գրեթե ամբողջ Արտուան և Ֆլանդրական մի քանի քաղաքներ, որոնք անցան Ֆրանսիային, նաև Յամայկան, որն անցավ Անգլիային։

1665 թվին Ֆիլիպ IV-ը ստիպված եղավ ճանաչել Պորտուգալիայի անկախությունը, Պորտուգալիայի, որի հետ Կրոմվելը դեռ 1654 թվին դաշնագիր էր կնքել, որն այդ երկիրը դարձրեց անգլիական կապիտալի հարկատու։

Հաբսբուրգների դինաստիայի վերջը Իսպանիայում

Իսպանական վերջին Հաբսբուրգի, Կարլոս II-ի (1665—1700 թ. թ.) կառավարման ժամանակը համընկնում է Իսպանիայի պատմության ամենատխուր ժամանակներից մեկը։ Մինչև այդ անչափահաս թագավորի չափահաս դառնալը պետությունը կառավարում էր նրա մայրը, Մարիա-

Աննա Ավստրիացին, վորը գտնվում եր հոգևորականության ուժեղ ազդեցության տակ և իր գլխավոր խորհրդականն ու խոստովանահայրը դարձրեց շտիրիացի ապաշնորհ գերմանացի, ճիզվիտ Նիտհարդին։ 1675 թվին Կարլոս II-ը հայտարարվեց չափահաս և հայտնեց, վոր մտադիր է անձամբ զբաղվել պետական գործերով։ Բայց դրա համար նա բոլորովին անընդունակ յեղավ։ Չնայելով իր 17 տարեկան հասակին, նա մանկական խաղերով եր զբաղվում, իր սենյակում կենդանիներ եր վարժում, ժամանակն անց եր կացնում թզուկների և պալատական խեղկատակների հետ և մահացու ձանձրույթ եր զգում, յերբ մինիստրները գալիս եյին իրեն զեկուցումներ տալու։ Շուտով, Կարլոս II-ին չափահաս հայտարարելուց հետո, տեղի ունեցավ նրա ամուսնությունը Լյուդովիկոս XIV-ի քրոջ աղջկա, Մարիա-Լուիզա Որլեանցու հետ։ Ֆրանսիական թագավորը, վոր աչալուրջ կերպով հետևում եր Պիրենեյան լեռնաշղթայի մյուս կողմում կատարվող դեպքերին, արդեն այն ժամանակ հույս ուներ այդ ամուսնությամբ ձևական իրավունք ձեռք բերել իսպանական թագը Բուրբոններին անցնելու վերաբերյալ։

Յերբ 1700 թվի նոյեմբերին Կարլոս II-ը մեռավ առանց սերունդ թողնելու, և այսպիսով ասպարեզից հեռացավ իսպանական Հաբսբուրգների վերջին ներկայացուցիչը, պետությունը մնացած եր և հեշտ ավար եր ներկայացնում գրավման և մասնատման համար։ Սակայն իսպանական ժողովրդի ստեղծագործական ուժերը չեյին ճզմվել Հաբսբուրգների բռնությամբ, գրանդների և յեկեղեցու տիրապետությամբ։ XVII դարը կազմում է իսպանական կուլտուրայի պատմության մի փայլուն եջը և նշանավոր է Սերվանտեսի, Լոպե դե Վեգայի, Կալդերոնի, Վելասկեսի, Ռիբեյրայի, Մուրիլյոյի և շատ ուրիշների մեծ անուններով։ Միայն այդ հարյուրամյակի վերջում եր, վոր անկման գծերն սկսեցին անդրադառնալ իսպանական գրականության և արվեստի վրա։

Պատերազմ «Իսպանական ժառանգության» համար

Կարլոս II-ի մահը հարց եր դնում վոչ միայն նոր թագավոր ընտրելու, այլև Իսպանիայի բախտի մասին՝ նրա բոլոր տիրույթներով հանդերձ, վորոնք գտնվում եյին Յեվրոպայում և ովկիանոսի մյուս կողմում։ XVII դարի վերջին տարիներում առաջացան Իսպանիայի բաժանման

մի քանի պրոյեկտներ, որոնց գործունյա մասնակցություն էր ցույց տալիս Լյուդովիկոս XIV-ը: Կարլոս II-ը մահից առաջ իր կտակում գահաժառանգ հայտարարեց Լյուդովիկոս XIV-ի թոռ Ֆիլիպպ Անժուացուն, այն վերապահությամբ, որ իսպանական և ֆրանսիական թագերը չպետք է հանձնվեն միևնույն անձնավորությանը: 1701 թվի ապրիլին նոր թագավոր Ֆիլիպպ V-ը ժամանեց Մադրիդ և անցավ թագավորության կառավարման: Բայց Ֆիլիպպի գահ նստելու փաստը դեռևս չէր վճռում իսպանական ժառանգության հարցը: Եվրոպայում արդեն ստեղծվել էր մեծ կոալիցիա, որն ուղղված էր Ֆրանսիայի դեմ և սկսվել էր պատերազմ իսպանական ժառանգության համար (1701—1714 թ. թ.): Նոր թագավորի իշխանությունը ճանաչվեց Կաստիլիայում, որի վրա հենվելով, Ֆիլիպպը համառորեն պաշտպանում էր փորթուգալական սահմանը և էլ ավելի մեծ համառությամբ— Արագոնը և Կատալոնիան: 1705 թվին անգլիական նավատորմի աջակցությամբ այստեղ ժամանեց իսպանական թագի ավստրիական հավակնորդը, կայսրի կրտսեր եղբայր Կարլոսը: Կատալոնացիները նրան Կարլոս III անվան տակ իրենց թագավոր հռչակեցին: 1706 թվին կոալիցիայի զորքերի հարձակումը, որ կատարվում էր Փորթուգալիայի և Կատալոնիայի վրայով, այնքան հաջող էր, որ Ֆիլիպպը ստիպված եղավ փախչել դեպի հյուսիս, իսկ Կարլոս III-ը գրավեց Մադրիդը, բայց նույն թվականի վերջում Ֆիլիպպն իր մրցակցին դուրս մղեց մայրաքաղաքից, իսկ 1707 թվի ապրիլին ավստրիացիներին մնաց միայն Կատալոնիան: Արագոնը հպատակեցնելով իրեն, Ֆիլիպպ V-ը գրչի մի շարժումով ոչնչացրեց Արագոնի հնամյա ազատությունները: Մինչ այս, մինչ այն, պատերազմը հասնում էր իր վախճանին: Ուտրեխտի և Ռաշտադտի հաշտության դաշնագրերի համաձայն, որոնք վերափոխեցին Եվրոպայի քարտեզը, վճռվեց նաև իսպանական միապետության բախտը: Ջիբրալթարն անցավ Անգլիային, հարավային Նիդերլանդները, Նեապոլը, Միլանը և Սարդինիան— Ավստրիային, իսկ Սիցիլիան— Սավոյային: Ֆիլիպպ V-ը ճանաչվեց Իսպանիայի թագավոր, բայց այն վերապահությամբ, որ իսպանական և ֆրանսիական թագերը չպետք է պատկանեն մեկ անձնավորության:

Ֆիլիպպ V-ը յեվ Իսպանիայի տնտեսական վերելքի սկիզբը XVIII դ.

Ֆիլիպպ V-ի կառավարման ժամանակը (1701—1746 թ. թ.) հիշեցնում եր նախկին դինաստիայի ժամանակները: Նոր թագավորը գտնվում եր իր կանանց և ֆավորիտների ազդեցության տակ, բայց այս անգամ (վորպես տարբերություն XVII դարի ֆավորիտներից) նրանք միացած ու վոգևորված եյին ռեֆորմներ կատարելու ցանկությամբ: Պետական կարգը վերակառուցվում եր ֆրանսիական որինակով, վոր մի կողմից վորոշ կարգ ու կանոն եր մտցնում ֆինանսներում և կառավարման մեջ, իսկ մյուս կողմից հանգում եր տեղական մարզային ազատությունների վերացմանը: Հին ֆուերոսները պահպանվեցին միայն բասկական նահանգներում և Նավարրայում: Սակայն կառավարման սիստեմի վերակազմումն անձեռնմխելի յեր թողնում գրանդների և թվաչատ հոգևորականության իշխանությունն ու արտոնությունները: Եկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում անկասկածելի վերելքով նշանավոր դարձավ նաև Ֆերդինանդ VI-ի կարճատև կառավարումը (1746—1759 թ. թ.): Ֆերդինանդ VI-ի մինիստրները զուտ ազգային քաղաքականություն եյին կիրառում: Նրանց ջանքերով վերականգնվեց իսպանական նավատորմը, մի շարք ձեռնարկումներ կատարվեցին առևտրի զարգացման, յերկրագործության բարձրացման, վոռոգման ջրանցքների և ճանապարհների կառուցման, արդյունաբերությունը հովանավորելու համար: Նորից վերականգնվեց իսպանական հանքարանների շահագործումը:

«Լուսավոր աբսոլյուտիզմ"» Իսպանիայում

Ֆերդինանդ VI-ի հաջորդի, Կարլոս III-ի (1759—1788 թ. թ.) կառավարման ժամանակն ե՛լ ավելի մեծ չափով ե անցնում XVIII դարի լուսավորական գաղափարների վոգով կատարված ռեֆորմների նշանաբանի տակ: Մինչև իր գահ նստելը Կարլոսը յերկու Սիցիլիաների թագավորն եր և արդեն այնտեղ իրեն ցույց տվեց իբրև նոր գաղափարների կողմնակից՝ քաղաքականության և կառավարման մեջ: Վորպես այդպիսին նա հանդես ե գալիս նաև Իսպանիայում: Հանձին նրա մենք ունենք այսպես կոչված «լուսավոր աբսոլյուտիզմի» ներկայացուցիչներից մեկը, վորի կիրառողը դարձավ ֆրանսիական լուսավորության յերկրպագու կոմս Արանդան:

1767 թվին հրատարակվեց թագավորի հրամանագիրը ճիզ–

վիտներին Իսպանիայից արտաքսելու մասին: Բազմաթիվ վանքերից վերցրին մոտ 6 հազար ճիզվիտ և նավ նստեցրին՝ արտասահման ուղարկելու համար: Նույնը կատարվեց նաև գաղութներում: Այս վճռական միջոցը չէր կարող չհանդիպել ընդդիմադրության՝ առաջին հերթին Հռոմի պապի կողմից: Բայց յերկարատև բանակցությունների հետևանքով և Արանդայի ու նրան փոխարինած կոմս դե Կամպոմանեսի, ինչպես նաև պապական պալատում դեսպան ու Կարլոս III-ի ապագա մինիստր կոմս Ֆլորիդա-Բլանկայի ջանքերի շնորհիվ Կլիմենտ XIV պապը տեղիված էր ստորագրել մի հրամանագիր ճիզվիտների օրդենը լիկվիդացիայի յենթարկելու մասին:

Արանդան և նրա հաջորդները մի ամբողջ շարք միջոցներ կիրառեցին յերկրագործության, հարկային սիստեմի, արդյունաբերության հովանավորելու բնագավառում, Իսպանիայի տնտեսական դրությունը բարելավելու համար: Մեծ տարածությամբ խոպան հողերում սկսեցին զանազան կուլտուրաներ մըշակվել: Ճիզվիտներին արտաքսելուց հետո կրթությունը դարձավ աշխարհիկ, համալսարանները մաքրվեցին կղերական տարրերից: Իր յերբեմնի հզորությունը կորցրեց նաև «սուրբ ինկվիզիցիան», թեև նա բոլորովին չվոչնչացվեց: Կարլոս III-ի կառավարման ամբողջ ժամանակվա ընթացքում կախարդության մեղադրանքով խարույկի վրա այրեցին միայն մի պառավի,— 1780 թվին, Սեվիլիայում: Վերջապես, պրուսական օրինակով վերակազմվեցին բանակը և նավատորմը: Կարլոս III-ի կառավարությունը հանձին նրա գլխավոր մինիստրների ամեն կերպ խուսափում էր պատերազմից, բայց Անգլիայի ու Ֆրանսիայի մըրցակցությունը մի քանի անգամ պատերազմի մեջ քաշեց Իսպանիային: Կարլոս III-ի կառավարման վերջին տարիներն անցան արտաքին խաղաղ պայմաններում և այդ հնարավորություն տըվեց ն՛լ ավելի մեծ մասշտաբով ռեֆորմներ կատարել: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց սեփական արդյունաբերության զարգացման վրա: Հիմնվեց ազգային բանկ: Ալկաբալան և այլ հարկերը կրճատվեցին: Իսպանիայի արտադրողական ուժերի վերականգնման ցուցանիշն էր բնակչության զգալի աճը: Կարլոս III-ի կառավարման ժամանակ բնակչությունն ավելացավ 1½ միլիոնով, կազմելով ընդամենը 10½ միլիոն մարդ: 1788 թվին ասպարեզից հեռացավ Կարլոս III-ը, իսկ մի տարուց

հետո սկսվեց Ֆրանսիական հեղափոխությունը: Իսպանիայում սկսվեց ֆեոդալական ռեակցիայի մի յերկարատև ժամանակաշրջան, ռեակցիա, վորը Ֆրանսիական հեղափոխության ուժեղ ազդեցության տակ նախադրյալներ ստեղծեց XIX դարի իսպանական հեղափոխությունների համար:

Փորթուգալիան XVIII դարում

Իսպանիայի իշխանությունից իր ազատվելուց հետո Փորթուգալիան մի ամբողջ շարք պայմանագրերով հաստատապես ու յերկար ժամանակով մտավ անգլիական քաղաքականության ուղեծիրի մեջ: Ըստ 1703 թվի պայմանագրի, փորթուգալական ամբողջ առևտուրն ընկավ անգլիացիների ձեռքը: Փորթուգալիայի տնտեսական առաջադիմությանը նպաստեց վոսկու հանքերի գյուտը Բրազիլիայում: Բայց այն հսկայական հարստությունները, վորոնք ստացվում եյին անդրովկիանոսյան յերկրներից, ծախսվում եյին շքեղ շենքեր կառուցելու և Հռոմի գահին խոշոր նպաստներ տալու վրա, իսկ Հռոմի գահը դեռ հեռավոր միջնադարի ժամանակներից այստեղ բավական զգալի դեր եր խաղում: Հոգևորականության իշխանությունը Փորթուգալիայում ե՛լ ավելի հզոր եր, քան Իսպանիայում, մինչդեռ ժողովրդական մասսաները տնտեսապես քայքայվել եյին և ուժասպառ եյին լինում ուժից վեր տուրքերից: Փորթուգալիան այդպիսի տխուր դրության մեջ եր գտնվում XVIII դարի ամբողջ առաջին կեսում, Խուան V-ի թագավորության ժամանակ (1707—1750 թ. թ.), բայց նրա հաջորդ Խոզե I-ի օրոք (1750—1777 թ. թ.) Փորթուգալիայում ևս զգացվում եր լուսավորական գաղափարների վոգին: Ինքը, թագավորը լիակատար վոչնչություն եր, բայց նրա գլխավոր մինիստր մարկիզ Պոմբալը ռադիկալ ռեֆորմներ կիրառող եր հանդիսանում այդ փոքրիկ յերկրում: Սակայն նա գործում եր խիստ, տեռորիստական մեթոդներով, կանգ չառնելով մահապատիժների, խարույկի վրա այրելու, մասսայական ձերբակալությունների առաջ: Այդ տեռորի դեմ դարձավ ամենից առաջ փորթուգալական ազնվականությունը: Բնորոշ ե, վոր Պոմբալի քաղաքականության կիրառողը հոգևորականությունը, մանավանդ բարձր հոգևորականությունն եր: Սակայն այդ չխանգարեց Պոմբալին Փորթուգալիայից վերացնելու Հռոմի գահի ազդեցությունը: 1759 թվին Փորթուգալիայում նա փակեց ճիզվիտական օրդենը: Պոմբալին չի կարելի համարել լուսավորական

գաղափարների հետևողական կողմնակից: Նա ինկվիզիցիան պահպանեց և դարձրեց իր իշխանության գործիք: Նա այրեց ֆրանսիացի հռչակավոր փիլիսոփա Ռեյնալի երկերը: Բայց դրա հետ մեկտեղ նրա անվան հետ կապված են այն ռեֆորմները, վորոնք Փորթուգալիան դուրս բերին յերկարատև անկման վիճակից: Բանակն ու նավատորմը վերակազմվեցին. պետական յեկամուտները կարգավորվեցին: Կիրառվեցին մի շարք միջոցներ՝ գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի զարգացման համար: 1755 թվին Փորթուգալիայի մայրաքաղաքն ավերվեց յերկրաշարժից: Պոմբալն այն վերականգնեց իր կառավարման ժամանակ: Նա բուրժուական վոգով մի շարք լուսավորական միջոցներ գործադրեց: Ժոզե I թագավորի մահն առիթ հանդիսացավ դաժան դիկտատորի դեմ ոպոզիցիայի աճման: Մարիա Թագուհու օրոք (1777—1789 թ. թ.) հոգևորականությունն ու ազնվականությունը հաղթանակեցին: Պոմբալը դատի տրվեց և աքսորվեց, իսկ նրա կատարած բոլոր ռեֆորմները լիկվիդացիայի յենթարկվեցին:

ԳԼՈՒԽ IX

ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Նիդերլանդների տնտեսական դրությունը հեղափոխության նախօրյակին

Այն երկիրը, որտեղ տեղի ունեցավ առաջին բուրժուական հեղափոխությունը,— Նիդերլանդները («ցածրադիր երկրներ»— այս անունն առաջին անգամ երևան է գալիս XV դարում), գրավում են Հյուսիսային ծովի մոտ, Հռենոս, Մաաս և Շելդա գետերի ստորին հոսանքներում գտնվող տերիտորիան, որն այժմ ընդգրկում է Հոլանդիան, Բելգիան և հյուսիսային Ֆրանսիայի մի մասը:

Վաղ միջնադարում Նիդերլանդներն իրենցից ներկայացնում էին մի շարք ֆեոդալական տիրույթներ, որոնք գրեթե կապված չէին միմյանց հետ: XIV և XV դ. դ. ընթացքում բուրգունդական հերցոգներն այդ տիրույթները միավորեցին իրենց իշխանության տակ: 1477 թվից, Մաքսիմիլիանի և բուրգունդական հերցոգուհի Մարիայի ամուսնությամբ Նիդերլանդները մտան Հաբսբուրգյան տան տիրույթների կազմի մեջ:

Թեև արդեն բուրգունդական դինաստիայի օրոք Նիդերլանդները միավորված էին և մի քաղաքական ամբողջություն էին կազմում, բայց և այնպես, նրա առաջվա քաղաքական մասնատվածությունն իր դրոշմը դրեց նաև հետագա պետական կառուցվածքի վրա. նախկին անկախ տիրույթները վերածվեցին առանձին պրովինցիաների, որոնք ընդամենը 17 էին, իրենց կազմով շատ խայտաբղետ էին և նրանցից յուրաքանչյուրը պահպանել էր իր առանձնահատուկ իրավունքներն ու ազատությունները:

XV դարի վերջում և XVI դարում Նիդերլանդները Եվրոպայի ամենահարուստ և խիտ բնակչություն ունեցող երկրներից

մեկն եյին։ XVI դարի կեսին նրանց բնակչությունը կազմում եր մոտ 3 միլիոն մարդ։ Իտալացի Գվիչչարդինին, վորը մեզ թողել է XVI դարի կեսի Նիդեռլանդների մանրամասն նկարագրությունը, այնտեղ հաշվում է 303 քաղաք ու արդյունաբերական ավաններ և ավելի քան 6500 գյուղ։ Չնայած իր աննշան տարածությանը (մոտ 78 հազար քառակուսի կիլոմետր), Նիդեռլանդների առանձին մասերը տնտեսական տեսակետից միատեսակ չեյին և այդ տեսակետից նրան կարելի յե բաժանել յերեք խումբ տերիտորիաների. 1) կենտրոնական արդյունաբերական ռայոն— Ֆլանդրիա և Բրաբանտ, 2) հյուսիսային արդյունաբերական ռայոն իր տնտեսական կենտրոն Հոլանդիայով ու Զելանդիայով և 3) հարավային և արևելյան ռայոններ, վորոնք հարավ-արևմուտքից սահմանակից են Ֆլանդրիային և Բրաբանտին (Արտուան և Հեննեգաուն), հարավ-արևելքը (Լյուքսեմբուրգը) և արևելքը (Հելդերնը), վորոնք զգալի չափով պահպանել եյին իրենց ագրարային բնույթը։ Ամենահարուստ պրովինցիաները— Ֆլանդրիան և Բրաբանտը— ունեյին բազմաթիվ առևտրա-արդյունաբերական քաղաքներ, վորոնք տնտեսական և քաղաքական մեծ նշանակություն ստացան։ Ֆլանդրիայի յերեք «բարի քաղաքները»— Գենտը, Իպրը, Բրյուգգեն իրենց արտոնությունների շնորհիվ վոչ միայն գրեթե բոլորովին անկախ դիրք եյին գրավում տերիտորիալ իշխանության նկատմամբ, այլև քաղաքական ու տնտեսական մեծ ճնշում եյին գործադրում մարզի մնացած մանր քաղաքների վրա։ «Բարի քաղաքների» գլուխ կանգնած համքարային բուրժուազիան ձգտում եր նրանց ոգտագործել հոգուտ իր շահերի։ Հյուսիսային նահանգներում— Հոլանդիայում, Զելանդիայում, Ֆրիսլանդիայում գերակշռում եյին ծովագնացությունը, ձկնորսությունը, առևտուրը։ Նրանք հաջողությամբ մրցակցում եյին Հանզայի հետ և վերջ ի վերջո նրան հետ մղեցին։ Հարավային և արևելյան մարզերը գլխավորապես յերկրագործական եյին։ Սակայն հարավում եվ (Արտուայում և Հեննեգաույում) XV դարի վերջից սկսեց զարգանալ տնայնագործական արդյունաբերությունը։

Կենտրոնական ռայոն Նիդեռլանդների տնտեսական կյանքում XV դարի ընթացքում և XVI դարի առաջին կեսում զգալի փոփոխություններ կատարվեցին։ Ֆլանդրիայի և Բրաբանտի բրդի հին արդյունաբերությունն անկման հասավ, առա-

ջացան արդյունաբերության նոր ճյուղեր, սկսեց զարգանալ կապիտալիստական արդյունաբերությունը, իսկ այս կապակցությամբ սկսեցին թուլանալ նաև տնտեսական հին կենտրոնները— Բրյուգգեն, Իպրը, Գենտը. դրա փոխարեն աճեցին Անտվերպեն և Ամստերդամ քաղաքները, որոնք իրենց հարստությամբ, տնտեսական թափով և նշանակությամբ գերազանցեցին համքարային արհեստի և համքարային ռեգլամենտացիային յենթակա առևտրի հին քաղաքները:

Ֆլանդրիայի քաղաքներում մահուդի արտադրությունը կործանվեց՝ սեփական հումքի բացակայության հետևանքով. XIV դարից կրճատվում, հետո յել բոլորովին դադարում ե անգլիական բրդի ներմուծումը, որովհետև Անգլիան ինքն ե զարգացնում բրդի արդյունաբերությունը և հետզհետե ավելի մեծ քանակությամբ ե սկսում իր մահուդը ներմուծել Նիդերլանդներ, որտեղից այդ մահուդը տարածվում ե ամբողջ Յեվրոպայում:

Համքարային բուրժուազիայի փորձերը— մրցակցել անգլիական արդյունաբերության հետ— լիակատար ձախողման յենթարկվեցին: Ցեխերի քաղաքականությունը խորապես ռեակցիոն եր: Նրանց միջավայրում չգտնվեցին այնպիսի տարրեր, որոնք չհագեցված լինեին արտադրության տրադիցիոն յեղանակների խորտակմամբ, այն նոր սկզբունքների հիման վրա կառուցելով, որը կհանդիսանար միակ յելքը տիրող դրությունից: «Բարի քաղաքների» համքարային բուրժուազիան դրա փոխարեն համառ կերպով պահանջում եր արգելել անգլիական մահուդը Նիդերլանդներ ներմուծելը: Նա ե՛լ ավելի ամուր կառչեց հին տեխնիկային, ե՛լ ավելի խստորեն սկսեց կիրառել արտադրության ռեգլամենտացիան, ե՛լ ավելի դժվարացրեց իր միջավայրը մուտք գործելը: Նա համառորեն պաշտպանում եր իր արտոնությունները, արտադրության նկատմամբ միայն իրեն պատկանող իրավունքը և կտրականապես պահանջում եր արգելել համքարային կազմակերպությունից դուրս յեղած արդյունաբերական գործունեությունը: Մինչդեռ հենց այդ ժամանակ Նիդերլանդներում քաղաքային համքարային արդյունաբերության հետ մեկտեղ բարգավաճում ե արտահամքարային գյուղական արդյունաբերությունը: Առաջ ել այդ արդյունաբերությունը բավական լայն չափով տարածված եր Ֆլանդրիայում և Բրաբանտում: Նրան վիճակվեց դաժան պայքար մղել քաղաքի համքարային

արդյունաբերության դեմ, որն ամեն տեսակ արգելքներով նեղում էր նրան, երբեմն էլ կանգ չէր առնում գյուղական արհեստանոցներն ուղղակի ոչնչացնելու առաջ: Այն հարվածը, որ անգլիական բրդի ներմուծումը դադարելու շնորհիվ հասավ համքարային արդյունաբերության, գյուղական արդյունաբերությանը ոչ մի վնաս չտվեց, որովհետև առաջ էլ անգլիական հումքը գրեթե չէր ընկնում գյուղական ջուլհակի ձեռքը, ամբողջ հումքը վերցնում էին նրան նեղող քաղաքները: Գյուղական արդյունաբերությունն աշխատում էր գլխավորապես իսպանական բրդով: Ռեգլամենտացիայից չնեղվելով, այն լավ հարմարվեց շուկայի նոր պայմաններին և մրցման մեջ չմտնելով անգլիական մահուդի հետ, սկսեց արտադրել բրդե գործվածքների նոր, թեթև տեսակները, որոնք վաճառահանվում էին լայն չափով և XVI դարի սկզբում դարձան Նիդեռլանդների արտահանման գլխավոր առարկաներից մեկը:

Գյուղական այդ արդյունաբերությունը պարզապես կապիտալիստական բնույթ է կրում: Աշխատողների մեջ քիչ են ինքնուրույն վարպետները: Հսկայական մեծամասնությունը պատկանում է մեծագնորդին— խոշոր վաճառականին: XVI դարի սկզբում մենք այստեղ արդեն տեսնում ենք վարձու աշխատանքի լայն գործադրությունը: Հարավ-արևմտյան Ֆլանդրիայում և Հեննեգաույում, ուր առանձնապես զարգանում է այդ տնայնագործական արհեստը, մի շարք ավաններ աճում ու դառնում են իսկական քաղաքներ, և ամեն կողմից այստեղ են հավաքվում անտուն, թափառաշրջիկ մարդիկ, քաղաքի բազմաթիվ գործազուրկ ջուլհակներ, որոնք այստեղ աշխատանք են գտնում:

Նույնպիսի բնույթ է կրում նաև XV դարի վերջում գյուղերում, համքարություններից դուրս զարգացած՝ վուշի արդյունաբերությունը, բարակ կտավի արտադրությունը: Քաղաքներում վուշի մշակմանը ձեռնամուխ եղան բազմաթիվ գործազուրկ ջուլհակներ, որոնք առաջ աշխատում էին բրդե գործվածքների արտադրության մեջ, բայց նրանք այնտեղից վտարվեցին դեպի գյուղերը: Այս կապակցությամբ վուշի կուլտուրան դառնում է գյուղատնտեսության խիստ կարևոր ճյուղը: Վուշը Ֆլանդրիայի համար դարձավ այն, ինչ որ բուրդն Անգլիայի համար, բայց XVI դարում սեփական վուշն արդեն չէր բավա-

կանանում և այն սկսեցին ներմուծել Մոսկովյան պետությունից:

Կապիտալիստական սաղմային ձեռնարկության նույն գծերը նկատելի յեն նաև գորգերի արտադրության մեջ, վորը զարգանում եր թե՛ գյուղում և թե՛ քաղաքում, մանավանդ Բրյուսելյում: Այդ արտադրությունն ընդառաջ եր գնում պերճանքի աճող ծարավին, և նրա գործվածքները, շնորհիվ գեղեցիկ նկարի, վորը հաճախ պատրաստում եր ականավոր նկարիչը, շնորհիվ գույների պայծառության և մնայուն բնույթի, վորոնց գաղտնիքը գտնվում եր Բրյուսելի վարպետների ձեռքում,— լայն չափով վաճառքի եյին հանվում ամբողջ Յեվրոպայում: Այստեղ ես վարպետը դառնում եր ձեռնարկու-կապիտալիստ, իսկ յենթավարպետներն ու աշակերտները— վարձու բանվորներ, վորոնք աշխատում եյին չնչին վճարով և դաժանորեն շահագործվում եյին:

Համքարային հին արդյունաբերության քաղաքական կազմավորումը

Անգլիական կոնկուրենցիայի և տեղական տնային արդյունաբերության դեմ մղած պայքարը համքարային հին քաղաքները հասցրեց այնտեղ, վոր նրանք սուր ընդհարումներ ունեցան բուրգունդական դինաստիայի, հետո յել Հաբսբուրգների հետ:

Հերցոգները ստանում եյին մեծ յեկամուտ,— ներմուծման մաքսային տուրքեր, ուստի անգլիական մահուդի ներմուծումն արգելելու պահանջները դեմ եյին նրանց շահերին: Ցանկանալով ուժեղացնել իրենց սեփական իշխանությունը, նրանք ձգտում եյին պակասեցնել ամեն տեսակ տեղական արտոնությունները, ազատություններն ու առանձնաշնորհումները: Պաշտպանելով հենց այդ ազատությունները, քաղաքները դարձան ռեակցիոն սեպարատիզմի ջատագովներ, սեպարատիզմի, վոր ուղղված եր կազմավորվող, կենտրոնացված միապետական պետության դեմ: Համքարային քաղաքների և դինաստիայի միջև յեղած թշնամությունը հաճախ բուռն թափով դրսևորվում եր XV և XVI դարերի ընթացքում: Հենց այս հողի վրա, օրինակ, անկարգություններ ծագեցին Նիդերլանդներում, Մարիա Բուրգունդացու մահից հետո, Մաքսիմիլիանին խնամակալ նշանակելու կապակցությամբ: Բրյուգգեյում տեղի ունեցավ համքարային արհեստավորների ապստամբությունը: Մաքսիմիլիանին, վորն այնտեղ

էր ժամանել խնամակալության մասին բանակցություններ վարելու համար, ձերբակալեցին, նրան ուժով ստիպեցին ստորագրել մի հրովարտակ, որը վերականգնում էր քաղաքի և նրա համքարային արհեստի բոլոր վաղեմի, բայց արդեն բոլորովին հնացած արտոնությունները, և ազատեցին միայն չորս ամսից հետո, կայսերական զորքերի հարձակման սպառնալիքի տակ:

Արդեն զգալի չափով թուլացած համքարային տարրերի և միապետական կառավարության միջև վերջին խոշոր ընդհարումը Գենտ քաղաքի ապստամբությունն էր, որ տեղի ունեցավ 1539—1540 թվականներին, Կարլոս կայսեր դեմ: Ապստամբության առիթը Գենտի հրաժարվելն էր Կարլոսին սուբսիդիաներ վճարելուց: Գենտը վկայակոչում էր Ֆլանդրիայի յուրաքանչյուր «անդամի» իրավունքը՝ չմուծել այն հարկերը, որոնց նկատմամբ նա համաձայնություն չէր տվել շտատներում դրանց վավերացման ժամանակ,— մի իրավունք, որը բոլորովին մոռացված էր ու երբեք չէր առաջադրվում մյուս քաղաքների կողմից: Գենտում իշխանությունը գրավեցին համքարային արհեստավորները. նրանք վերականգնեցին համքարային հին արտոնությունները, հրաժարվեցին կայսրին ճանաչել որպես իրենց անսահմանափակ իշխողը և փորձեցին անցնել ֆրանսիական թագավոր Ֆրանցիսկ I-ի պաշտպանության տակ: Կարլոսը վրա հասավ մեծ զորքով և քաղաքը խիստ էկզեկուցիայի ենթարկեց: Անկարգությունների որոշ մասնակիցներ մահապատժի ենթարկվեցին: Բացի իրեն հասանելիք նպաստաբաժինը վճարելուց, Գենտը պետք է ե՛լ ավելի շատ տուգանք վճարեր և բացի դրանից, ամեն տարի կայսեր օգտին մուծեր 6 հազար ոսկեդրամ: Համքարությունները որպես քաղաքական կազմակերպություններ, ցրվեցին: Բոլոր արտոնատու հրովարտակները ոչնչացվեցին: Քաղաքացիների պատգամավորությունը պետք է ոտաբոբիկ, միայն շապիկներ հագած, պարանոցներին պարաններ գցած՝ ներում խնդրեր կայսրից:

Համքարային արհեստի քաղաքները կորցրին իրենց նշանակությունը ո՛չ միայն իբրև արդյունաբերական կենտրոններ: Համքարային արդյունաբերության կործանման հետ զգալի չափով կապված էր նաև այն, որ Բրյուգգե քաղաքը, որպես միջազգային առևտրի կարևորագույն հանգույց, կորցրեց իր դիրքը: Բրյուգգեյի առևտուրը սաստիկ տուժեց այն ջրանցքների

կանխվելուց և ծանծաղանալուց, որոնք նրան կապում էին ծովի ու ամբողջ երկրի ներքին ռայոնների հետ, բայց նրա անկման գլխավոր պատճառը նրա արգելիչ քաղաքականությունն էր օտարերկրյա ապրանքների նկատմամբ, իսկ Բրյուգգեի ամբողջ անտեսակարգի պայմաններում այդ քաղաքականությունն այլ բնույթ չէր կարող ունենալ:

Անտվերպեն Անգլիական վաճառականները, որոնց արգելված էր մուտք գործել Բրյուգգե, վերջինիս փոխարեն իրենց մահուդի համար գտան մի ուրիշ պահեստավայր, այն է՝ Անտվերպենը: Ապրանքի հետ այնտեղ անցան նաև գնորդները: Արդեն XV դարի սկզբում այս քաղաքը Բրյուգգեի վտանգավոր մրցակիցն էր: Նրա նավահանգիստը, որ գտնվում էր Շելդայի լայն գետաբերանում, ոչ մի կերպ չէր կարող համեմատվել Բրյուգգեի նեղ և ծանծաղացած ջրանցքի հետ: Անտվերպենի տնտեսական կյանքը կառուցված էր բոլորովին այլ հիմունքներով, քան Բրյուգգեյում: Օտարերկրացիները և նրանց ապրանքներն ամենալայն չափով մուտք էին գործում քաղաքը: Անտվերպենի քաղաքացիներն օտարերկրացիների համեմատությամբ ոչ մի արտոնությամբ և առավելությամբ չէին օգտվում, իսկ Անտվերպենում քաղաքացիության իրավունք ստանալն էլ համեմատաբար հեշտ էր: Անտվերպենում գործունեության լիակատար ազատություն էր տրվում օտարերկրյա վաճառականներին: Այստեղ ամեն ինչ արվում էր, որպեսզի ներգրավվեին վաճառականները և ապրանքները, ստեղծվեին առևտրի լավագույն պայմաններ, բարեկարգվեր նավահանգիստը, կառուցվեին պահեստներ, վերջապես, կառուցվեց բորսայի հատուկ շենք: Ներդերլանդական կառավարությունը, որ թշնամաբար էր տրամադրված դեպի համքարային հին քաղաքները, ամեն կերպ խրախուսում էր օտարերկրյա վաճառականների այդ շարժումը դեպի Անտվերպեն:

XV դարի երկրորդ կեսից յեվրոպական խոշորագույն առևտրական տները սկսում են Անտվերպենում բանալ իրենց գրասենյակները: Բայց Անտվերպենը ոչ միայն դեպի իրեն էր գրավում օտարերկրյա կապիտալներն ու ապրանքները, այլև ամենախոշոր արդյունաբերական կենտրոն էր դառնում: Տեղական ձեռնարկուներն օգտագործեցին հումքի և մատերիալների հոսանքը և հիմնեցին մի շարք արտադրություններ, որոնք նոր

էին Նիդերլանդների համար: Անտվերպենում ներկվում ու նըրբագործվում է անգլիական մահուդը, իսկ թե որչափ կարևոր էր այդ արտադրությունը, այդ յերևում է նրանից, որ տվյալ արտադրության և մահուդի վերավաճառքի յեկամուտները կազմում էին 338 հազար լիվր, այսինքն գրեթե այնքան, որքան և մահուդի ներմուծման արժեքը (350 հազար լիվր): Անտվերպենում իտալական ձևով արտադրվում է ապակի և մայոլիկա, բացվում են օճառի գործարաններ, մի փոքր ավելի ուշ զարգանում է շաքարի արտադրությունը: Վերջապես, առաջանում է մի արտադրություն, որը կարող էր աճել միայն հարստությունների խոշոր կուտակման պայմաններում և որի կենտրոնը մինչև այժմ էլ մնացել է Անտվերպենը,— հարյուրավոր բանվորներ զբաղված էին ալմաստի թրաշարաններում:

Անտվերպենը հանդիսացավ մի կենտրոն, որը դեպի իրեն էր քաշում ամբողջ յերկրի արտադրանքը, կազմակերպում և ղեկավարում էր նրա արդյունաբերության մի զգալի մասը, շահագործում էր նրա բնակչության կեսը: Անտվերպենի վաճառականներն իրենց ձեռքը վերցրին բրդե գործվածքների այն նոր արտահամքարային արդյունաբերությունը, որն աճել էր արևմտյան Ֆլանդրիայի, Հեննեգաուի և հարավային Բրաբանտի սահմանամերձ ռայոնների քաղաքներում, ավաններում ու գյուղերում: Մոտ 1560 թվին Անտվերպենի համար մինչև 20 հազար մարդ էր աշխատում Օուդենարդի, Տուրնեյի, Վալանսենի, Աթի, Ենգիենի, Նիվելի շրջաններում:

Անտվերպենը գնում էր ֆլանդրական կտավը, այնտեղ էին վաճառահանվում նաև Բրյուսելի գորգերը և Լյեժի զենքը: Անտվերպենի վաճառականները և Ծեոցի բանկիրները, տիրանալով Լիմբուրգի ցինկի հանքարաններին, իրենց ձեռքը վերցրին արույրե շինվածքների արտադրությունը, որ խոշորագույնն էր Եվրոպայում և ուներ հազարավոր տնայնագործներ, որոնք ցրված էին ընդարձակ շրջանում— ամբողջ ստորին Հռենոսի յերկարությամբ գրեթե մինչև Քյոլն:

Կապիտալիստական արդյունաբերության ռազմական կողմնորոշումը

Անտվերպենի բուրժուազիան, որ աճել էր համքարային պայմաններից դուրս, խորապես համակվել կապիտալիստական տենդենցներով և ազատ կոնկուրենցիայի ոգով, հանդիսացավ բուրժուազիական և հաբսբուրգյան դինաստիաների մտերիմ դաշնակիցը: Նրանց շահերը շատ կողմերով զուգա-

դիպում էին։ Նրանց միավորում էր թշնամանքը դեպի համքարային հին քաղաքները։ Անտվերպենը հանձին դինաստիայի պաշտպանություն էր գտնում համքարային քաղաքների հարձակումների դեմ։ Անտվերպենի բուրժուազիան շահագրգռված էր այն միավորիչ քաղաքականությամբ, որ կիրառում էր կառավարությունը, այն տնտեսական արտոնությունների և արհեստների ու առևտրի վրա և սահմանափակումների վերացմամբ, որոնք նեղում էին կապիտալի գործադրության և բնակչության շահագործելու ազատությունը։ Նիդերլանդական կառավարությունը համքարային քաղաքների նկատմամբ վարած իր քաղաքականությամբ ճանապարհ էր հարթում առաջացող կապիտալիստական արտադրության համար։ Անտվերպենը մշտապես դրամական մեծ օգնություն էր ցույց տալիս կառավարությանը։

Ամերիկայի գյուտը հսկայական նշանակություն ունեցավ Նիդերլանդների պատմության համար։ Հիմա նա գտնվում էր համաշխարհային ուղիների կենտրոնում, իսկ Անտվերպենը դարձավ համաշխարհային առևտրի կենտրոն։

Հյուսիսային ռայոնը

Հոլանդիայի և Զելանդիայի հյուսիս-արևմտյան ծովամերձ պրովինցիաներում զարգանում է նավագնացությունը, ձկնորսությունը, նավաշինարարությունը և առևտուրը։ Այդ բոլոր ճյուղերում առաջ են գալիս խոշոր ձեռնարկություններ։ Ինչպես և հարավային (բելգիական) պրովինցիաներում, այստեղ էլ մենք տեսնում ենք դինաստիայի դաշինքը ձեռնարկատիրական շրջանների հետ, թե բուրգունդական դինաստիան և թե Հաբսբուրգներն արտաքին քաղաքականություն են վարում հոլանդական վաճառականների ու արմատորների շահերի տեսակետից։ Հոլանդիան և Զելանդիան XV և XVI դարերում հետ են մղում Հանզային և գրավում են առևտուրը Բալտիկ ծովի հետ, որտեղից նրանք հաց և փայտեղեն են արտահանում։ XVI դարում Ամստերդամը դարձավ հացի առևտրի խոշորագույն կենտրոնը Եվրոպայում։ Զելանդիան շատ աշխույժ առևտրական հարաբերություններ էր պահպանում հարավային Ֆրանսիայի հետ, այնտեղից աղ և գինի էր արտահանում։ Հոլանդական և զելանդական նավերը մտնում էին Միջերկրական ծովը, հասնում Մադեյրա և Ազորյան կղզիները և նույնիսկ փորձում էին ճանապարհ գտնել դեպի Հնդկաստան, հյուսիսից շրջանցելով ամերիկական ցամաքը։

Ձկնորսությունը հասավ այնպիսի չափերի, որոնք գոյություն չունեյին Եվրոպայի որևէ այլ վայրում։ Նավերի մեծ տորմիղներ գնում էին տառեխ որսալու,— գլխավորապես դեպի Անգլիայի ափերը։ Ստեղծվեց մի առած, թե «Ամստերդամն աճել է տառեխի ոսկորների վրա»։ Մեծ նշանակություն ուներ նաև կետ ձկան որսը։

Հակառակ Անտվերպենին, որը չուներ սեփական նավատորմիղ, Հոլանդիայում և Զելանդիայում ամբողջ առևտուրը և ձկնորսությունը կատարվում էին սեփական նավերով։ Այդ պրովինցիաների նավատորմը դարձավ խոշորագույնը Եվրոպայում։ Նավաշինությունը վերածվեց արդյունաբերության մի ճյուղի, որը կարևորագույն նշանակություն ուներ յերկրի համար։

Տնտեսության այդ բոլոր ճյուղերում զարգանում են խոշոր ձեռնարկությունները։ Քաղաքներում առաջանում է հարուստ բուրժուազիան, բայց առևտրական շրջանառության մեջ էյին քաշված նաև բնակչության լայն մասսաները,— ձկնորսական և վաճառականական նավերի բազմաթիվ նավազները, նավահանգստային բանվորները, հազարավոր մարդիկ, որոնք զբաղված էյին նավաշինությամբ և առագաստներ ու պարաններ պատրաստելով և այլն։ Աշխատավորների այդ լայն մասսաների շահերը, դասակարգային բոլոր անխուսափելի հակասություններով հանդերձ, սերտորեն միահյուսվում էյին խոշոր բուրժուազիայի շահերի հետ։

Առևտրի և արդյունաբերության արագավոր աճն անդրադարձավ նաև գյուղատնտեսության վրա, որն այստեղ կապիտալիստական յուրահատուկ յերանգավորում ստացավ։ Կուլտուրական հողի տարածությունն ընդարձակելու համար ցամաքեցման խոշոր աշխատանքներ էյին պահանջվում։ Հոլանդացիներն ու զելանդացիները ծովից թիզ առ թիզ նվաճում են ցամաքը և չորացնում ներքին լճերը։ Այդ աշխատանքները կապիտալների մեծ ներդրում էյին պահանջում։ Ցամաքի նոր տարածությունները— պոլդերները— աչքի էյին ընկնում հազվագյուտ բերրիությամբ և սովորաբար մանր, ստրկացուցիչ կապալով տրվում էյին գյուղացիներին։ Հոլանդիան վաղ սկսեց արտահանել գյուղատնտեսական մթերքները. հոլանդական պանիրն ու յուղը հռչակված էյին արդեն XV—XVI դարերում։

Հարավային և արևմտյան ռայոններ

Արդյունաբերական այդ ռայոններից հեռու, նրանցից դեպի հարավ և արևելք կյանքը հոսում էր համեմատաբար ավելի դանդաղ տեմպերով: Պրովինցիաների այն յեռանկյունին, որ կազմում էին՝ Հելդերն պրովինցիան արևելքից, Լյուքսեմբուրգը— հարավ-արևելյան ամենահեռավոր ծայրից և Արտուան ու Հեննեգաուն— հարավ-արևմուտքից, իրենից ներկայացնում էր ագրարային բնույթի հետամնաց մարզեր: Յեթե կենտրոնական և հյուսիսային պրովինցիաներում, սկզբում համքարային և ապա կապիտալիստական արդյունաբերության ազդեցության տակ, որոնք զարգացած էին այստեղ,— գյուղացիությունը վաղուց արդեն ազատվել էր ճորտական կախումից, ապա այստեղ դեռևս կար սենյորների և պարտավոր գյուղացիների առաջվա թագավորությունը: Լյուքսեմբուրգում դեռ կային խիստ շատ ճորտեր, որոնք իրավունք չունեին ժառանգաբար հանձնելու հողը և ամուսնանալու համար պետք է սենյորից թույլտվություն խնդրեին: Լյուքսեմբուրգը մասնակից չեղավ 1525 թվի գյուղացիական պատերազմին:

Հարավային պրովինցիաներում, Արտուայում, Հեննեգաույում և Նամյուրում չափազանց զարգացած էր յեկեղեցական-վանքական հողատիրությունը: Հողի մի զգալի մասը պատկանում էր վանքերին և կապիտուլներին: Այսպիսով հարավն ու արևելքը ֆեոդալական ազնվականության և հոգևորականության հենարանն էին:

Նիդերլանդների պետական կարգը

Նիդերլանդների պետական կառուցվածքը հիմնականում կազմավորվել էր բուրգունդական ժամանակաշրջանում և վերջնական ձևավորում ստացել Կարլոս V կայսեր օրոք: Առանձին մասերում, որոնք կազմում էին Բուրգունդական հերցոգությունը, գոյություն ունեին՝ դասային ներկայացուցչություն, պրովինցիալ շտատներ, որոնց ամենագլխավոր ֆունկցիաներից մեկն էր հերցոգին տրվող սուբսիդիաների հաստատումը: Ձգտելով միավորել յերկիրը, որպեսզի ավելի հարմար լինի տնօրինել նրա ռեսուրսները, բուրգունդական հերցոգները միավորեցին այդ դասային ներկայացուցչությունները: 1463 թվին առաջին անգամ հրավիրվեցին գլխավոր շտատները, որոնք կազմված էին պրովինցիալ շտատների ներկայացուցիչներից: Դասային ներկայացուցչու-

թյան և հերցոգների հարաբերությունները վորոշվում եյին այն հանդիսավոր խոստումներով, վոր նրանք տալիս եյին գահ նըստելիս: Այդպիսի մի կարևորագույն փաստաթուղթ եր այսպես կոչված մեծ արտոնությունը, վոր ձեռք բերին գլխավոր շտատները, հրավիրվելով Գենտում, Կարլոս Խիզախի դուստր Մարիայի գահ նստելու ժամանակ: Այն ժամանակ վորոշվեց, վոր գլխավոր և պրովինցիալ շտատներն իրավունք ունեն հավաքվել սեփական նախաձեռնությամբ և դրամական վոչ մի տուրք չի կարող գանձվել առանց նրանց համաձայնության: Առանձին պրովինցիաներ ձեռք բերին զանազան արտոնություններ, վորոնք չափազանց ընդլայնեցին նրանց անկախությունը: Սակայն այդ առանձնաշնորհումներն ու արտոնությունները զգալի չափով մնացին թղթի վրա, բայց դրանց մասին հիշեցին իսպանական տիրապետության դեմ մղված պայքարի ժամանակ: Թե՛ Մաքսիմիլիանի, թե՛ նրա վորդու—Ֆիլիպպ Գեղեցիկի, և թե՛ Կարլոսի որոք շտատները հավաքվում եյին միայն թագավորի հրավերով: Անձեռնմխելի պահպանվեց նրանց իրավունքը՝ հաստատել սուբսիդիաները, վորոնք կամավոր եյին համարվում, բայց չի յեղել մի դեպք, վոր շտատները մերժեն թագավորի պահանջած դրամական գումարը: Այսպես «ոգնության» կամավորությունը ֆիկտիվ եր: Կարլոսի որոք նույնիսկ սահմանվեց յուրաքանչյուր պրովինցիայի բաժինը՝ պետական ծանրությունները կրելու մեջ: Ամենից շատ վճարում եյին Ֆլանդրիան և Բրաբանտը: Հոլանդիան տալիս եր Ֆլանդրիայի վճարածի մի քառորդը, Զելանդիան՝ մեկ տասնվեցերորդը և այլն: Թեև շտատները միշտ անվերապահորեն տալիս եյին պահանջված փողը, այնուամենայնիվ Կարլոսի փորձերը— մտցնել մշտական հարկեր— անհաջողության հանդիպեցին: Դիմելով գլխավոր շտատներին, թագավորներն առաջ եյին քաշում նրանց նշանակությունը,— վորպես մի որգան, վորը միավորում ե ամբողջ յերկիրն իբրև հակակշիռ պրովինցիալ շտատների:

XVI դարի կեսում գլխավոր շտատներում սկսեցին առաջատար դեր խաղալ Բրաբանտի մի խումբ դեպուտատները: Այդ խմբի մեջ մտնում եյին վոչ միայն Նիդերլանդների ամենաականավոր ընտանիքների ներկայացուցիչները, այլև Անտվերպեն քաղաքի դեպուտատները: Այսպիսով նոր բուրժուազիան խիստ ազդեցիկ մի գործոն դարձավ յերկրի քաղաքական կյանքում:

Բարձր ազնվականությունը գործունյա մասնակցություն էր ցույց տալիս պետության կառավարման: Այդ համարվում էր նրա ժառանգական արտոնությունը և պարտականությունը: Եթե առաջ արիստոկրատները, վորպես բուրգունդական հերցոգի անմիջական, խոշոր վասսալներ, մասնակցում էյին հերցոգական խորհրդին, ապա այժմ նրանց միջավայրից պետք է նշանակվեյին այդ խորհրդից առանձնացված պետական խորհրդի անդամները, պետական խորհուրդ, վորտեղ քննարկվում էյին կարևորագույն քաղաքական հարցերը: Բայց թագավորն իր անմիջական վերահսկողության տակ առավ նաև պետական կառավարման յերկու կարևորագույն բնագավառները. ֆինանսները և դատարանը: Մյուս յերկու խորհուրդները, վորոնք նույնպես առանձնացվում էյին հերցոգական խորհրդից,— ֆինանսական և գաղտնի (դատական գործերի) խորհուրդները կազմված էյին ֆինանսների և իրավունքի գիտակ, մանր ազնվականության ու բուրժուազիայի պատկանող աստիճանավորներից և այսպիսով կառավարման այս բնագավառներում թուլացած էր արիստոկրատիայի ազդեցությունը: Արիստոկրատիայի միջավայրից նշանակվում էյին թագավորի ներկայացուցիչները պրովինցիաներում— կուսակալները կամ շտատհալտերները, վորոնք ունեյին խիստ անորոշ և լայն կոմպետենցիա և շատ անկախ էյին կենտրոնական իշխանությունից:

Երբ Նիդերլանդներն անցան Հաբսբուրգներին, կառավարող թագավորը, միաժամանակ լինելով կամ հռոմեական թագավոր, կամ գերմանական կայսր, կամ Իսպանիայի թագավոր, միայն յերբեմն և այն էլ կարճ ժամանակով էր լինում Նիդերլանդներում: Այս կապակցությամբ ծագում է նրա փոխանորդի, գլխավոր շտատհալտերի պաշտոնը: Այդ պոստը դրավողը սովորաբար կին էր լինում— թագավորի մոտիկ ազգականուհին: Այսպես, Կարլոս V-ը փոխարքա նշանակեց իր քույր Մարգարիտ Հունգարացուն (1531—1555 *թ. թ.*), *իսկ Ֆիլիպպ* II-*ի օրոք կառավարում էր նրա խորթ քույր Մարգարիտ Պարմացին* (1559 *թ. մինչև* 1567 *թ.*):

Նիդերլանդները Կարլոս V-ի կայսրության կազմում

Կարլոս V-ի միապետությանը Նիդերլանդները միացնելը սկզբում վերջինիս հսկայական օգուտներ տվեց, բայց վերջիվերջո բանն այնտեղ հասավ, վոր Նիդերլանդներն ապստամբեցին իսպանական

տիրապետության դեմ: Եվրոպայում տնտեսական տեսակետից ամենաառաջավոր յերկիրն իր արագորեն ու ուժեղ թափով աճող բուրժուազիայով գտնվում էր ազնվականական պետության իշխանության տակ, պետություն, որը նրան համարում էր իր հարստացման կարևորագույն աղբյուրը: Կարլոսը, մանավանդ իր թագավորության վերջին տարիներում, Նիդերլանդներից հսկայական գումարներ էր կորզում: Իսպանական միապետության յեկամուտը կազմող 5 միլիոն դուկատներից 2 միլիոնը Կարլոսին տալիս էին Նիդերլանդները, մինչդեռ ամերիկյան տիրույթներից նա ընդամենը կես միլիոն էր ստանում: Ուրիշ տվյալների համաձայն, Կարլոսը մինչև 1540 թվականը Նիդերլանդներից ստանում էր տարեկան մոտ մեկ միլիոն լիվր, իսկ 12 տարի անց Նիդերլանդներից հավաքում էին ավելի քան 6 միլիոն լիվր: Միայն կառավարական փոխառությունների գծով տոկոսներից ու մարումից ստացվում էր համարյա 1,5 միլիոն լիվր: Եվ այդ բոլոր փողերը ծախսվում էին այնպիսի ձեռնարկումների վրա, որոնք բոլորովին անօգուտ էին Նիդերլանդների համար: Նիդերլանդների վրա յեր ընկնում ա՛յն պատերազմների ծախսերի ամբողջ ծանրությունը, որ Կարլոսը մղում էր Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում:

Սակայն, բացի ֆինանսական շահագործումից, Նիդերլանդներն իսպանական միապետության համար արժեքավոր էին նրանով, որ Եվրոպայում չափազանց կարևոր քաղաքական-ստրատեգիական դիրք էին գրավում: Կարևոր էր ո՛չ միայն այն, որ Նիդերլանդները գտնվում էին համաշխարհային առևտրի հանգույցում, այլև այն, որ հյուսիս-արևմտյան այդ հանգույցից կարելի յեր հարմար կերպով ներգործել Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի վրա: Այդ մի իսկական միջնաբերդ էր, որտեղից հաբսբուրգյան տունը կարող էր իր օրենքները թելադրել ամբողջ Եվրոպային:

Անհրաժեշտ էր հնազանդ պահել այդ հարուստ յերկիրը և բոլոր միջոցներով խափանել այն ամենը,ինչ որ կարող էր նրան դուրս բերել թագավորի կամ կայսեր իշխանության տակից, իսկ այդպիսի սպառնալիք էր հանդիսանում Նիդերլանդներում հետզհետե ավելի մեծ չափով տարածվող բողոքականությունը, սկզբում լյութերականությունը, իսկ XVI դարի 40-ական թվականներից— կալվինիզմը: Քայքայելով կաթոլիկ յեկեղեցին, այն

ստանում էր կայսեր հեղինակությանը: Բայց կառավարության կրոնական քաղաքականությունը, որի նպատակն էր պայքարել բողոքականության դեմ, ճակատագրական նշանակություն ունեցավ Նիդերլանդներում իսպանական տիրապետության համար: Կարլոսը սկսեց արտաքո կարգի խստությամբ ճնշել հերետիկոսությունը: Սկզբում նա յենթադրում էր Նիդերլանդներում ինկվիզիցիա մտցնել, բայց սահմանափակվեց հատուկ կոմիսար նշանակելով (1522 թ.), որը յերկու օգնականների հետ պետք է «բոլոր նրանց, ովքեր վարակված են հերետիկոսության թույնով, գտներ և պատժեր այնպես, ինչպես այդ կաներ ինքը, կայսրը», ընդ որում իշխանության բոլոր օրգանները պետք է նրան ամեն տեսակ աջակցություն ցույց տային այդ գործում: Մի փոքր ավելի ուշ յեպիսկոպոսներն ինկվիզիտորների լիազորություններ ստացան (յեպիսկոպոսական ինկվիզիցիա), վերջապես, Կարլոսն իր թագավորության վերջին տարիներում մի շարք հրամանագրեր («պլակատներ») է հրատարակում «հերետիկոսության» դեմ: Մի առանձին դաժանությամբ էր աչքի ընկնում 1550 թվի «պլակատը»: Դա կազմված էր այնպես, որ ամեն մի անցանկալի մարդու վրա կարելի յեր հերետիկոսության մեղադրանք բարդել: Գոյություն ուներ միայն մի պատիժ — գույքի գրավում և մահ: Տղամարդիկ գլխատվում եյին սրով, կանայք կենդանի թաղվում հողի մեջ, իսկ հերետիկոսությունում համառողներն այրվում խարույկի վրա: Ամեն կերպ խրախուսվում էր մատնությունը, հերետիկոսի գույքի մի մասը տրվում էր մատնողին: Դատավորներին ամենախիստ կերպով արգելված էր պատժի թեթևացումը, ինչպես նաև թույլ չէր տրվում, որ որևէ մեկը խնդրի ներել հերետիկոսներին:

Ֆրանսիայի հետ պատերազմելու համար Կարլոսը 1553 թվին իսպանական զորքեր մտցրեց Նիդերլանդներ: Դրանք իրենց պահում եյին ինչպես նվաճված յերկրում և իրենց դեմ ընդհանուր ատելություն եյին գրգռում:

Ֆինանսական շահագործումը, կրոնական-քաղաքական ճնշում — ինկվիզիցիա մտցնելը, օտարերկրյա զորքերի առկայությունը յերկրում — այս բոլորը նախադրյալներ ստեղծեց իսպանական միապետության և Նիդերլանդների միջև ապագա ընդհարման համար:

Ֆիլիպպ II-ի թագավորության սկիզբը

1555 թվին Կարլոսը Բրյուսելում հանդիսավոր կերպով հրաժարվեց իսպանական թագից և Նիդեռլանդներում ու Իսպանիայում իր իշխանությունը հանձնեց իր որդի Ֆիլիպպին: Ինքնապարփակ, մռայլ, կեղծավոր, Նիդեռլանդներից դուրս մեծացած Ֆիլիպպն իր կառավարման առաջին իսկ քայլերից իր նկատմամբ ընդհանուր անվստահություն առաջացրեց: Արտաքուստ նա ոչ մի փոփոխություն չմտցրեց Կարլոսի օրոք ստեղծված կարգերի մեջ: Նա կառավարմանը մասնակից դարձրեց բելգիական ազնվականության ներկայացուցիչներին, բայց գործերի մասին խորհրդակցում էր միայն իր իսպանացի մերձավորների հետ: Ճիշտ է, նա միայն հաստատեց հերետիկոսների դեմ ուղղված՝ Կարլոսի «պլակատները», որոնց առաջադրանքները գործնականում այնքան էլ խստորեն չէյին իրականացվում, բայց իր կառավարման հենց առաջին ամիսներում նա մի ամբողջ շարք հրահանգներով պահանջեց անողոք կերպով գործադրել այդ առաջադրանքները:

Կարլոսն իր հաջորդին թողեց ֆինանսական մի ծանր ժառանգություն— պետական հսկայական պարտք: Իր թագավորման առաջին իսկ տարիներում Ֆիլիպպին հարկավոր յեղավ հսկայական դրամ՝ Ֆրանսիայի դեմ պատերազմելու համար: Նա էլ ավելի յէ ուժեղացնում ֆինանսական ճնշումը Նիդեռլանդների վրա: Բայց այն պայքարում, որ թագավորը մղում էր յերկրի ռեսուրսների համար, դասային ներկայացուցչության դեմ, ուր բուրժուազիան շատ մեծ կշիռ ուներ,— թագավորը ստիպված յեղավ զիջումներ անել: 1557 թվին Իսպանիան պետական սնանկություն հայտարարեց: Այդ քիչ վնաս չհասցրեց նիդեռլանդական, մանավորապես Անտվերպենի բուրժուազիային, և Նիդեռլանդների առաջավոր բուրժուազիայի ու միապետության դաշինքում, որը մենք տեսանք բուրգունդական եպոխայում և առաջին Հաբսբուրգների օրոք,— ճեղքվածք առաջացավ: Չորս տարի— 1555 թվից մինչև 1559 թիվը գտնվելով Նիդեռլանդներում, թագավորը ծայրահեղ կարիքի շնորհիվ չորս անգամ հրավիրեց գլխավոր շտատները և փորձում էր մշտական հարկ մտցնել մերթ անշարժ կայքերի յեկամուտների 1%-ի և ապրանքների վաճառքի 2%-ի ձևով, մերթ այլ գանձումների ձևով: Սակայն շտատները վճռականապես մերժում եյին այդ

ձեռնարկումները: Նրանք Թագավորին մեծ սուբսիդիաներ էին տրամադրում, բայց այնուհանդերձ մի շարք քաղաքական պահանջներ ներկայացրին: Նրանք բարձրաձայն բողոքում էին, որ երկիրը ստիպված է ծածկել այնպիսի ծախսեր, որոնք Նիդերլանդների հետ ոչ մի առնչություն չունեն: Շտատները պահանջում էին, որ օտարերկրյա զորքերը հեռացվեն, իսկ երկրի պաշտպանությունը հանձնարարվի տեղական զորքերին, տեղական ազնվականությունը մասնակից դառնա երկրի կառավարմանը: Բացի այդ, Հոլանդիայի ներկայացուցիչները պահանջում էին սահմանափակել ինկվիզիցիայի լիազորությունները: Անտվերպենի բուրժուազիան վճռականապես միջամտեց իսպանական սնանկացած կառավարության ֆինանսական գործերին և իր ձեռքը վերցրեց բաց թողնված դրամի ծախսման տնօրինությունը. Անտվերպենի բուրգոմիստրներից մեկը, Անտոն Վան Ստրալենը նշանակվեց գլխավոր կոմիսար և բարձրագույն ինտենդանտ՝ զորքերին ռոճիկ վճարելու գծով:

1559 թ. Ֆիլիպը Նիդերլանդներից մեկնեց Իսպանիա: Մեկնելուց առաջ նա անցկացրեց երկու միջոցառում, որոնք ամենաուժեղ վրդովմունք առաջացրին բնակչության բոլոր խավերում: Նա հրատարակեց հրահանգներ, որոնք պահանջում էին «պլակատների» հիման վրա ամենախիստ կերպով հետապնդել հերետիկոսներին, իսկ հետո պապի համաձայնությամբ կարգադրեց հիմնել 14 նոր եպիսկոպոսական աթոռ (առաջ դրանք երկրում ընդամենը 6 էին, հիմա ենթադրվում էր, որ դրանք կլինեն 18,— երկու նախկին աթոռներ վերացվել էին): Այդ ձեռնարկման նպատակն էր ոչ միայն ուժեղացնել պայքարը հերետիկոսության դեմ (եպիսկոպոսները նաև ինկվիզիտորներ էին), այլև Թագավորը նկատի ուներ այդ կերպ թուլացնել արիստոկրատիայի ազդեցությունը: Ենթադրվում էր մի քանի հարուստ վանքեր հատկացնել եպիսկոպոսներին պահելու համար: Այդ վանքերի աբբաների փոխարեն,— որոնք սովորաբար պատկանում էին տեղական ականավոր տոհմերի կրտսեր անդամների թվին և այս պատճառով բավական անկախ էին Թագավորից,— հիմա պրովինցիաների շտատներում պետք է նստեին եպիսկոպոսները, որոնք Թագավորի կողմից նշանակվում էին գիտուն, բայց ոչ ազնվատոհմ մարդկանցից: Ամեն ինչով պարտական լինելով Թագավորին, այդ մարդիկ իհարկե պետք է

կլերանյին նրա քաղաքականությունը: Հասկանալի յե, թե ինչու այդ միջոցը թշնամաբար ընդունվեց թե՛ արիստոկրատիայի և թե՛ պլեբյաների կողմից: Լայն մասսաները հուզվում էյին և սպասում, վոր դրանից հետո կմտցվի իսպանական ինկվիզիցիան:

Գրանվելլայի կառավարումը յեվ իսպանական ռեժիմի դեմ յեղած ոպոզիցայի աճը

Ֆիլիպը Նիդերլանդներում փոխարքա նշանակեց իր խորթ քույր Մարգարիտին, Պարմայի հերցոգուհուն,— վորն իր ծագումով բրաբանտցի յեր,— բայց բոլոր գործերի տնորինությունը հանձնարարեց հավատարմատար անձնավորության— Անտուան Պերրենոյին, վորը շուտով կարդինալ Գրանվելլայի աստիճան ստացավ: Անտուան Պերրենոն, վոր ծագումով բուրգունդացի յեր, Կարլոս V-ի մինիստրի վորդի, շատ ընդունակ և փայլուն կրթություն ստացած մարդ,— օտար եր այն յերկրին ու ժողովրդին, վորոնց կառավարում եր: Լինելով ագահ, փառասեր և իշխանասեր, նա հանդիսանում եր աբսոլյուտ միապետության կազմավորվող բարձրագույն բյուրոկրատիայի տիպական ներկայացուցիչը: Կապված լինելով միայն միապետի հետ, ամեն ինչով պարտական լինելով նրան, նա իր ամբողջ գործունեության իմաստը տեսնում եր թագավորին ծառայելու և սեփական կարյերա ստեղծելու մեջ: Պետական խորհուրդը, վոր բաղկացած եր նիդերլանդական բարձր դասի ներկայացուցիչներից, նրա օրոք կորցրեց իր գրեթե ամեն մի նշանակությունը:

Ֆիլիպ II-ի քաղաքականությունը նպատակ ուներ Նիդերլանդները դարձնել իսպանական աբսոլյուտ միապետության պրովինցիաներից մեկը: Թագավորն ուզում եր յերկրի ռեսուրսները կամայականորեն տնորինելու հնարավորություն ստանալ: Իսպանական աբսոլյուտիզմի տեսակետով այդ քաղաքականությունը պատմական անհրաժեշտություն եր հանդիսանում: Իսպանական աբսոլյուտ միապետությունը, վորպես քաղաքական տիրապետություն տնտեսապես բոլորովին անարտադրողական դասակարգի, վորը մի քանի հարյուրամյակների ընթացքում ապրում եր գրեթե միայն պատերազմով և կողոպուտներով, կարող եր քաղաքականապես իր իշխանության տակ գտնվող մարզերի բնակչության շահագործման միայն այդպիսի քաղաքականություն վարել. անդրծովյան գաղութներում տեղի յեր ունենում բացա-

հայտ կողոպուտ, յեվրոպական տիրություններում այդ կողոպուտը միայն ավելի քողարկված ձևեր եր ընդունում, բայց գործի եությունը նույնն եր: Հետաքրքիր ե, վոր ժամանակակիցները խիստ պարզ են մատնանշել իսպանական աբսոլուտիզմի այդ թալանչիական բնույթը: «Իսպանացիները կարծում են,— ասում եյին Նիդերլանդներում 1565 թվին,— վոր նրանք այստեղ կգտնեն գժբախտ հնդիկներ, վորոնց նրանք խեղդում են ամբողջ միլիոններով,— բայց նրանք սխալվում են»:

Այդ քաղաքականությունը պետք ե առանձնապես վճռական դիմադրության հանդիպեր Նիդերլանդներում, այն յերկրում, ուր բուրժուազիան արդեն իշխող տեղ եր գրավում տնտեսական կյանքում և շատ ազդեցիկ դիրք՝ քաղաքական կյանքում: Նիդերլանդական ուժեղացող բուրժուազիայի և իսպանական ֆեոդալական ազնվականության միջև մղվող պայքարը Նիդերլանդներում յուրահատուկ ձևեր ընդունեց: Վորովհետև յերկու պայքարող դասակարգերը պատկանում եյին յերկու տարբեր ազգությունների և պատմական զարգացման ընթացքով արհեստականորեն միավորվել եյին քաղաքական մեկ որգանիզմի սահմաններում, ուստի պայքարն ազգային անկախության համար բռնկված ապստամբության ձև ընդունեց: Ֆեոդալիզմի դեմ ուղղված պայքարը միահյուսվեց իսպանացման դեմ մղվող պայքարի հետ: Այդ ազգային պայքարին նրա առաջին ետապներում մասնակից դարձան Նիդերլանդների նաև ֆեոդալական տարրերը, վորոնք չեյին ուզում հրաժարվել յերկրի ռեսուրսները տնորինելուց, բայց դասակարգային տեսակետից նրանք իհարկե ավելի մոտիկ եյին իսպանական ֆեոդալական հասարակության, քան իրենց ազգային բուրժուազիային և այս պատճառով պայքարի հետագա ընթացքում նրանք հեղափոխությունից մի կողմ քաշվեցին և ռեակցիոն դիրք բռնեցին:

Նիդերլանդներում բուրժուական հեղափոխությունը չհանգեց այն քաղաքական կոմպլեքսի քաղաքական և սոցիալական կարգի խորտակմանը, վորի ընդերքում այն տեղի յեր ունենում: Այդ հեղափոխությունը չկործանեց իսպանական միապետությունը, բայց և չճնշվեց ֆեոդալիզմի ուժերով: Նրա հետևանքը յեղավ միապետության ա՛յն մասի տերիտորիալ առանձնացումը, վորտեղ տեղի յեր ունենում պայքարը, այդ մասի անջատումն իսպանական միապետությունից, նրանից դուրս նոր

պետության կազմվելը,— վորը հանդիսացավ բուրժուական սոցիալական նոր կարգի քաղաքական ձևը: Նիդերլանդական բուրժուազիան չուներ բավականաչափ ուժ և բացի այդ, դեռևս պատմական նախադրյալները չեյին հասունացել այնքան, վորպեսզի պայթեցվեր իսպանական աբսոլուտ միապետությունը, բայց նա այնքան ուժ ունեցավ, վոր ազատվի իսպանական ճանկերից և պաշտպանի իր քաղաքական անկախությունը:

Բնակչության գրեթե բոլոր խավերում աճում եր դժգոհությունը Ֆիլիպպի սահմանած կարգերի դեմ: Նոր վարչության առաջին իսկ ամիսներից արիստոկրատիայի մի զգալի մասը նրա նկատմամբ ոպոզիցիոն դիրք բռնեց: Նիդերլանդական հարուստ ազնվականությունը սովորել եր կայսեր նկատմամբ իրեն անկախ պահել: Այդ նրան չխանգարեց հավատարմությամբ ծառայել կայսրին և նրա շարքերից շատերն այդ ծառայության ընթացքում զոհեցին իրենց կյանքը, բայց այդ ազնվականությունը յեռանդով պաշտպանում եր իր իրավունքներն ու արտոնությունները, վորոնք նրան հնարավորություն եյին տալիս բավական ինքնուրույն կերպով կատարելու Նիդերլանդների պետական գործերը և, վոր գլխավորն ե, տնօրինելու պետական փողերը: Ազնվականությունը խիստ փարթամ կյանք եր վարում— դեռ բուրգունդական դինաստիայի օրոք Բրյուսելի արքունիքը հռչակված եր իր պերճանքով և շռայլությամբ— և սաստիկ խճճվեց պարտքերի մեջ: Արիստոկրատներից ամենահարուստը և առատաձեռնը իշխան Վիլհելմ Որանցին և կոմս Եգմոնտն եյին: Դրանք դեռ համեմատաբար յերիտասարդ մարդիկ եյին: Կոմս Եգմոնտը շատ հին հոլանդական տոհմից եր, ուներ ընդարձակ պոլդերներ Հոլանդիայում և կալվածքներ— Ֆլանդրիայում, փայլուն զինվորական եր, հրապուրվող, համարձակ ու վճռական մի մարդ, բայց անհեռատես քաղաքագետ: Վիլհելմը ծագումով գերմանացի յեր, կոմս Նասսաուի ավագ վորդին ու ժառանգը, իր հորեղբոր վորդուց ստացել եր հսկայական ժառանգություն,— Որանյան իշխանությունը (Որանժ) Ֆրանսիայի հարավում և ընդարձակ տիրույթներ Նիդերլանդներում: Այս առթիվ հայրը նրան բողոքականությունից կրկին դարձրեց կաթոլիկ և ուղարկեց Բրյուսելում դաստիարակվելու: Լինելով գրեթե յերեխա, Կարլոս V-ի սիրած մանկլավիկը, նա արդեն ծանոթ եր պետական քաղաքականության

բոլոր գաղտնի զսպանակներին և պալատական ինտրիգայի նըր-բություններին: Ընկնելով նիդեռլանդական ազնվականության միջավայրը, Վիլհելմը յուրացրեց նրա բարքերը, փարթամ ապ-րելակերպը: Նա դարձավ ճարպիկ քաղաքագետ, որը կատարե-լապես յուրացրեց ժողովրդականություն ձեռք բերելու արվես-տը, հմուտ դիպլոմատ, որն իր քաղաքական կարյերայի հենց սկզբում չափազանց հաջող կերպով հաշտության բանակցու-թյուններ վարեց Ֆրանսիայի հետ, և ինչպես ազնվատոհմ իշ-խանների մեծ մասը,— մեծ հարբեցող, որի չքեղ պալատում,— իսկ այդ պալատի դռները բաց էին կանչված ու անկոչ հյուրե-րի համար,— գիշեր-ցերեկ հեղեղի նման հոսում էր գինին, իսկ սեղանները լիքն էին լինում Յեվրոպայի լավագույն խոհարար-ների պատրաստած կերակուրներով: Դրա համար չէր բավակա-նանում նույնիսկ այն 200 հազար տարեկան յեկամուտը, որ ուներ Նիդեռլանդների այդ ամենահարուստ մարդը, և ինչպես ասում էր Գրանվելլան, նրա պարտքերը 900 հազար վոսկեդրամի էին հասնում: Լինելով լավ կրթված մարդ, հեղափոխության այդ ապագա առաջնորդը, որ բուրժուական մի քանի պատմա-գիրների կարծիքով գործում էր կրոնական մոտիվներից դըրդ-ված,— բոլորովին անտարբեր էր կրոնի հարցերին, քրիստոնե-ությունը համարում էր «քաղաքագետների գյուտ, ատծո օգ-նությամբ ժողովրդին հնազանդ պահելու համար», և իր կյանքի ընթացքում չորս անգամ փոխեց իր հավատը:

Արիստոկրատիան ձգտում էր տապալել Գրանվելլային և ամ-բողջ վարչությունը վերստին կենտրոնացնել իր ձեռքում: Պե-տական խորհուրդը նորից պետք է դառնար գլխավոր օրգան: Ազնվականությունն օգտվեց այն դժգոհությունից, որ բնակ-չության մեջ առաջացրել էին Ֆիլիպպի վերջին ձեռնարկում-ները (յեպիսկոպոսությունների հիմնելը, «պլակատների» հաս-տատումը, յերկրում իսպանական զորքեր պահելը): Այդ բոլոր ձեռնարկումների հեղինակ համարում էին Գրանվելլային (իրա-կանում այդպես չէր), որն ընդհանուր ատելություն առաջաց-րեց դեպի իրեն: Եգմոնդը և Վիլհելմ Օրանցին հրաժարվեցին պետական խորհրդին մասնակցելուց, հայտարարելով, թե չեն ուզում պատասխանատվություն կրել Գրանվելլայի քաղաքակա-նության համար: Արիստոկրատների մեծամասնության անունից նրանք հաճախ Ֆիլիպպին էին դիմում նամակներով, որոնց

մեջ մռայլ գույներով նկարագրում էյին յերկրի դրությունը և բոլոր դժբախտությունների համար մեղադրում էյին Գրանվել-լային: Բայց ազնվականությունը, հետապնդելով իր նեղ դասային նպատակները, միաժամանակ պաշտպանում էր յերկրի շահերը: Պետական խորհրդում նրա ներկայացուցիչները վճռական դիմադրություն ցույց տվին իսպանական կառավարության փորձերին՝ ոգնելու Յեկատերինա Մեդիչուն և Նիդերլանդներին քաշելու այն պայքարի մեջ, վոր տեղի էր ունենում Ֆրանսիայում, կաթոլիկների և հուգենոտների միջև:

Իսպանական քաղաքականության դեմ ուղղված ոպոզիցիան կենտրոնացավ յեպիսկոպոսությունների վերաբերյալ հարցի շուրջը: Բարձր դասն այս հարցում աջակցություն գտավ Բրաբանտի պրովինցիալ շտատների կողմից, վորոնք նույնպես պատգամավորություն ուղարկեցին թագավորի մոտ, Գրանվելլայի դեմ գանգատվելու համար, իսկ հետո դադարեցրին դրամական սուբսիդիաների վճարումը: Թագավորը վերջիվերջո զիջեց: 1564 թվին Գրանվելլան հեռացավ Նիդերլանդներից:

Արիստոկրատիան իրեն ցույց էր տալիս իբրև յերկրի հինավուրց ազատությունների և արտոնությունների պաշտպան: Նա կտրականապես պահանջում էր հրավիրել գլխավոր շտատները: Նրա քաղաքական, գրական ծրագիրը լավ է բնորոշել Գրանվելլան Ֆիլիպպ II-ին ուղղված նամակներից մեկում. «Նրանք ուզում են յերկիրը դարձնել յուրատեսակ հանրապետություն, վորտեղ թագավորը կարող է անել միայն այն, ինչ վոր հաճելի յե նրանց»:

Դժգոհության պատճառներն ավելի խորն էյին և իսպանացիների դեմ ուղղված ոպոզիցիան ավելի լայն էր բնակչության բուրժուական և պլեբեյական խավերում: Այստեղ, բացի այդ, հասունանում էյին նաև հեղափոխական տրամադրությունները: Թե ազգային և թե սոցիալ-քաղաքական այդ պայքարն ամենասերտ կերպով կապված յեղավ կրոնական շարժման հետ: Կալվինիզմը դարձավ ազգային ազատության համար մղվող պայքարի իդեոլոգիա:

Կարլոս V-ի և Ֆիլիպպ II-ի «պլակատները» չկանգնեցրին կալվինիզմի տարածումը Նիդերլանդներում: Այն ընթանում էր յերկու ուղիներով: Ֆրանսիայից այն տարածվում էր նրան սահմանակից հարավային և հարավ-արևմտյան մարզերում, քաղաք-

ներում և ավաններում, ուր զարգացել էր նոր, կապիտալիստական արդյունաբերությունը,—Տուրնեյում, Վալանսյենում, Լիլլում, Արմանտյերում: Կալվինիզմի թափանցման մի այլ ընդգրավող էին՝ Անտվերպենը և արևմտյան ծովամերձ պրովինցիաները,— Հոլանդիան, Զելանդիան: Կալվինիզմն այստեղ էր անցնում Անգլիայից, որի հետ այդ ամբողջ ծովափն առևտրական սերտ հարաբերություններ էր պահպանում: Կալվինիզմը տարածվում էր նոր բուրժուազիայի մեջ, ինչպես նաև նրա կողմից շահագործվող մասսաներում: Բնորոշ է, որ հին համքարային արհեստի քաղաքներն ընդհանրապես պահպանեցին կաթոլիկությունը: Կալվինիզմը, այդ այն մարդկանց «հերետիկոսությունն» էր, «որոնք,— Գրանվելլայի ասելով,— հարստացել էին իրենց ձեռնարկությունների և առևտրական գործարքների շնորհիվ և այս պատճառով հենց միմիայն նորամուծությունների մասին էին յերազում»: Գրանվելլան մի հետաքրքիր դիտողություն է անում, թե կալվինիստ ձեռնարկուներն ու վաճառականները ստիպում էին հերետիկոսության անցնել աղքատ և «իրենցից կախում ունեցող չքավորներին,— նրանք փակում էին վերջիններիս բերանը»: Կալվինիզմը բազմաթիվ կողմնակիցներ գտավ նաև մանր ազնվականության միջավայրում,— որի դրությունը մոտիկ էր ֆրանսիական ազնվական-հուգենոտների դրության: Ինչպես և ամենուրեք, նիդերլանդական մանր ազնվականությունը տնտեսական քայքայում էր ապրում, որն ուժեղանում էր «գների հեղափոխությունից»: Պատերազմը դադարելուց հետո սպառվեցին նաև կողմնակի յեկամուտները— փրկանքն ու ավարը: Ազնվականությունը թաղվեց պարտքերի մեջ և նրա միջավայրում պլաններ էին կազմվում յեկեղեցական հողային տիրություններն աշխարհականացնելու մասին: Ազնվականների կարծիքով այդ հողերը «պետք է որ հանձնվեն զինվորական ոգտագործման և բաժանվեն բազմաթիվ չքավոր ազնվականներին, որոնք դրա համար պատրաստ կլինեյին ծառայությամբ... Յեվ այս դեպքում դատարկապորտ միանձների բազմության փոխարեն միշտ ձեռքի տակ կլիներ հիանալի հեծելազոր հոգուտ թագավորի և ի բարօրություն յերկրի»:

Հետապնդումները և ինկվիզիցիա մտցնելու լուրերը կալվինիստների էմիգրացիայի մեծ հոսանք առաջացրին: Յերկրից

փախչում էին վաճառականներ, ձեռնարկուներ և նույնիսկ բանվորներ։ Բայց էմիգրացիան շոշափում էր նաև մնացողների շահերը։ Ամեն անգամ, յերբ կալվինիստները հեռանում էին Նիդերլանդներից, տնտեսական կյանքում քայքայում էր առաջանում։ Կալվինիստ— վաճառականի կամ ձեռնարկուի փախուստից տուժում էին ո՛չ միայն նրա ընկերակիցները, գործակատարները։ Նրա մոտ աշխատող բանվորները նույնպես գործազրկության էին մատնվում։

Փախստականներն իրենց ձեռներեցությունը, գիտելիքները, տեխնիկական ընդունակություններն ու գաղտնիքները տանում էին գլխավորապես Անգլիա, որը մրցում էր Նիդերլանդների հետ։ Ժամանակակիցների հաշվով՝ Նիդերլանդներից Անգլիա էին տեղափոխվել ավելի քան 30 հազար էմիգրանտներ, որոնք Անգլիայում ստեղծում էին նոր արհեստներ և կատարելագործում հները, իսկ դա Անգլիան դարձնում էր նիդերլանդական արդյունաբերության էլ ավելի վտանգավոր մրցակից։

Բուրժուազիայի միջավայրում դժգոհություն էր առաջացնում նաև Ֆիլիպ II-ի արտաքին քաղաքականությունը։ Այն ոչ միայն չէր պաշտպանում Նիդերլանդների շահերը, այլև մեծ վնաս էր հասցնում այդ յերկրին։ Անգլիայի հետ յեղած հարաբերությունների խզվածությունն Անտվերպենում անմիջապես զգալ էր տալիս իրեն նրանով, որ պակասում էր անգլիական մահուդի ներմուծումը և կրճատվում էին անգլիական վաճառականների հետ յեղած գործարքները։ Մյուս կողմից Ֆիլիպի կառավարությունն ընդհանուր քաղաքականության նկատառումներով բավականաչափ յեռանդով հանդես չէր գալիս Հյուսիսային ծովում ու Լամանշում զարգացող անգլիական ծովահենության դեմ, որը զգալի վնաս էր հասցնում հոլանդական առևտրին։ Միշտ չէր, որ Նիդերլանդների շահերին համապատասխանող հարաբերություններ էին լինում Դանիայի հետ, որը փակում էր Բալթիկ ծովի մուտքը, իսկ այդ ծովը խիստ կարևոր էր հոլանդական առևտրի համար։

Վերջապես, իսպանական միապետությունը 1557 թվի իր սնանկությունից հետո Անտվերպենի բորսայի աչքում զգալի չափով կորցրեց այն, ինչով որ նա կարող էր գրավել այդ բորսային,— ֆինանսական խոշոր գործարքների համար շահավետ կոնտրագենտի իր դերը։

1559 թվին Ֆիլիպ II-ը գլխավոր շտաբներին ուղղված իր հրաժեշտի դիմումի մեջ պնդելով, որ պետք է վճռական պայքար մղել «հերետիկոսության» դեմ, հայտարարեց. «Ինչպես ցույց ե տալիս անցյալի փորձը, կրոնի փոխվելու հետ միշտ փոխվում ե պետական կարգը, և չքավորները, դատարկապորտները ու թափառաշրջիկները հաճախ այդ պատրվակ են դարձնում, որպեսզի տիրանան հարուստների գույքին»:

Սակայն դասակարգերին վախեցնելով հեղափոխության ուրվականով, թագավորը մարգարե դարձավ: Արդեն հետևյալ տարում, Ֆրանսիայում սկսված կրոնական պատերազմների ազդեցության տակ տեղի յեն ունենում պլեբեյական ստորին խավերի ելույթներ Ֆլանդրիայի և Հեննեգաույի արդյունաբերական քաղաքներում, որտեղ կալվինիզմի հետզհետե ուժեղացող քարոզը հեղափոխական պրոպագանդայի բնույթ ընդունեց և բարդացավ նրանով, որ գործադուլների հուզումներ առաջացրեց: Թե Գրանվելլան և թե Մարգարիտը գտնում եյին, որ կանգնած են հեղափոխական մեծ, անխուսափելի պայթյունի առաջ: Հեղափոխական նոր ալիքը բարձրանում ե 1565 թվին, երբ լուրեր տարածվեցին, թե մտցվելու յե իսպանական ինկվիզիցիա, թե չընդունելով արիստոկրատիայի բողոքներին— որպես պատգամավոր, Եգմոնտը գնացել եր Մադրիդ— թագավորը հրաժարվել ե վերացնել «պլակատները» և ընդհակառակը, պահանջել ե խիստ հետապնդել «հերետիկոսությունը»: Երկիրը հեղեղվեց պամֆլետներով, որոնք մասսաներին կոչ եյին անում հակահարված տալ իսպանական տիրապետությանը, թագավորի կամայականությանը, «պլակատների» գործադրությանը, պահանջում եյին դավանության ազատություն:

1565 թվի «կոմպրոմիսը»

Հուզումն ընդգրկեց ոչ միայն քաղաքները, այլև գյուղերը, և այնքան ուժեղ եր, որ ազնվականության ելույթ առաջացրեց: 1565 թվի նոյեմբերին ազնվականներն ամեն կողմից հավաքվեցին Բրյուսսել և կնքեցին այսպես կոչված «կոմպրոմիսը»: «Ֆլամանդական ազնվականության միություն իսպանական ինկվիզիցիայի դեմ»— այսպես եր պայմանագրի տեքստի վերնագիրը: «Կոմպրոմիսի» անդամները պետք ե երդվեյին, որ բոլոր ուժերով կպայքարեն ինկվիզիցիա մտցնելու դեմ, ինկվիզիցիա, որը «հակասում ե յեկեղեցական ու քաղաքացիական կարգին, առևտրի քայքայում ե ա—

առաջացնում, խռովությունների աղբյուր է դառնում և քաղաքացիական պատերազմ հրահրում...» Միության մեջ կային շատ կալվինականներ, բայց կաթոլիկներն էլ քիչ չէին: Սակայն «կոմպրոմիսը» վերահաս կրոնա-քաղաքական տեռորի հանդեպ ինքնապաշտպանության միություն չէր միայն: Այն առաջացավ նաև այն յերկյուղի շնորհիվ, թե կառավարության կրոնական քաղաքականությունը շարունակվելու դեպքում գյուղացիները և քաղաքային ստորին խավերը կարող են մեծ ապստամբություն բարձրացնել: Ազնվականներն ուղղակի մտածում էին, որ իսպանական ռեժիմի դեմ ապստամբություն լինելու դեպքում նրանք առաջինը հարձակման կենթարկվեն իրենց տներում և կալվածքներում:

Արիստոկրատների մի մասը հարեց «կոմպրոմիսին», մի մասն էլ նրան աջակցություն խոստացավ և ցույց տվեց այդ աջակցությունը. վերջիններիս թվումն էր Վիլհելմ Օրանցին: Սկզբում ազնվականության մեջ դուցե և պլաններ էին կազմըվում իսպանական ռեժիմի դեմ ապստամբելու համար, սակայն նրա բարձր խավը չպաշտպանեց այդ պլանները: Եգմոնտը հրաժարվեց ապստամբությունը գլխավորելուց:

1566 թվի ապրիլի 5-ի խնդրագիր

Այդ ժամանակ Վիլհելմ Օրանցին ազնվականներին խորհուրդ տվեց խնդրագիր տալ կառավարչուհուն և միաժամանակ ուժեղ ցույց կազմակերպել: Այդպես էլ արվեց 1566 թվի ապրիլի 5-ին: Բրյուսելում հավաքվեցին մի քանի հարյուր ազնվականներ, որոնք իրենց պատգամավորությանն ուղեկցեցին մինչև պալատի մուտքը: Ազնվականները խնդրագրում պնդում էին, որ թագավորի մոտ պատգամավորներ ուղարկվեն, խնդրելով մեղմացնել «պլակատները» և գումարել գլխավոր շտատները, իսկ առայժմ, մինչև թագավորի վճիռը «պլակատները» չլինեն ուժի մեջ: Այնուհանդերձ նրանք կտրուկ կերպով մտածում էին հնարավոր ապստամբությունը, որն ամենից առաջ իրենց էր սպառնում, յեթե շարունակվեր նախկին քաղաքականությունը:

Տեսնելով կիսամաշ, քրքրված հագուստով ազնվականներին, ընդունելությանը ներկա գտնվող ավագանիներից մեկն արհամարհական դիտողություն արավ. «արժե՞ արդյոք, տիրուհի, որ դուք վախենաք այդ քրջոտներից (գյոզերից)»: Այս մականունից ազնվականները չհրաժարվեցին և սկսեցին իրենց գյոզեր

անվանել. Հետագայում այդպես էին կոչվում բոլոր նրանք, ովքեր ապստամբում էին իսպանական ռեժիմի դեմ:

Մարգարիտը խոստացավ մեղմացնել «պլակատները»: Ցենթադրվում էր ուղղակի չանհանգստացնել կալվինականներին, յեթե միայն նրանք պարզապես չցուցադրեն իրենց այլադավանությունը, բայց Թագավորը չհամաձայնվեց նաև այդ աննշան զիջման հետ: Սակայն գյոզերի ցույցերի ազդեցության տակ, վորոնք տեղի ունեցան 1566 թվի գարնանն ու ամառը, կալվինիզմի քարոզը չարունակում եր ուժեղանալ ամբողջ յերկրում: Կալվինականները բոլորովին բացահայտ կերպով ժողովներ եյին գումարում: Ժողովները սովորաբար տեղի եյին ունենում քաղաքից դուրս: Հաճախ դրանց մասնակիցները գալիս եյին զինված, վորպեսզի դիմադրություն ցույց տան ժողովները ցրելու փորձերի դեպքում: Քարոզը սկսում եր պարզապես հեղափոխական բնույթ ընդունել: Մի շարք քաղաքներում կալվինականներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը:

«Կոմպրոմիսում» կազմակերպված ազնվականների յելույթն առաջ բերեց նույնպիսի միությունների կազմակերպում բնակչության նաև մյուս խավերում: «Կոմպրոմիսում» կազմակերպվում է Անտվերպենի կալվինական վաճառականությունը: Վախենալով իսպանական կառավարության ռեպրեսիաներից, Անտվերպենի վաճառականությունը սկզբում յենթադրում եր ազատվել նույնիսկ դրամական մեծ փրկանք տալու միջոցով: Դրամատեր մարդկանց այդ միությունը ֆինանսական ցգալի ուժ եր ներկայացնում: Կալվինական բուրժուազիան ձգտում է միավորվել ազնվականական «կոմպրոմիսի» հետ, ավելի ճիշտ՝ նրան իր մոտ ծառայության վերցնել, իսպանական կառավարությանն ընդհանուր ուժերով հակահարված տալու համար: Վիլհելմ Օրանցին նույնպես գտնում եր, վոր պետք է պատրաստվել պայքարելու, և բանակցություններ եր սկսում գերմանական իշխանների հետ: Ցերկրի տագնապալից դրությունը նորից առաջացրեց ցգալի վարանդիություն, գործերի քայքայում և գործազրկություն: Անտվերպենը լիքն եր գործազուրկներով, հազարավոր գործազուրկներ թափառում եյին հարավ-արևմտյան արդյունաբերական ռայոններում: Ցերկրում տարածվում եյին թռուցիկներ, վորոնք կոչ եյին անում վոչնչացնել «կռապաշտությունը»:

Պատկերամարտական շարժումը 1566 թվի ամառը

Սկսվեցին յեկեղեցիների ու վանքերի ավերումները: Այդ տարերային պատկերամարտական շարժումը ծագեց արևմտյան Ֆլանդրիայում, կալվինական արդյունաբերական ռայոններում և օգոստոսի ընթացքում արագությամբ ընդգրկեց ամբողջ յերկիրը: Այն առանձնապես վիթխարի չափերի հասավ Անտվերպենում: Ֆիլիպպի լրտեսները հաղորդում եյին, թե յերկրում 200 հազար յեկեղեցի յե ավերված, իհարկե չափազանցնելով այդ: Ժամանակակիցները մատնանշում եյին, թե պատկերամարտները Ստորին Ֆլանդրիայում «վոչինչ չեն հափշտակել, այլ ամբողջ վոսկին ու արծաթն ինվենտարային ցուցակներով հանձնել են քաղաքային վարչություններին ու յեկեղեցական յերեցփոխներին և քաղաքային վարչություններին ստիպել են յերդվել, վոր նրանք այդ բոլորը կվերածեն արծաթե դրամի, աղքատներին բաժանելու համար»:

Պատկերամարտական հուզումների տպավորության տակ Մարգարիտը զիջումներ արավ, հույս ունենալով, վոր իր կողմը կքաշի ազնվական կալվինականներին: Հայտարարվեց, վոր մինչև թագավորի կողմից վճիռ ընդունելն իշխանությունները չեն արգելի այն քարոզները, վորոնք տեղի յեն ունենում սովորական տեղերում: Միության անդամներն իրենց կողմից Մարգարիտին խոստացան ամբողջ ուժերով աջակցել կողոպուտների դադարեցմանը, ժողովրդին ստիպելով վար դնել զենքը և ցրված համարել ազնվականների միությունը: Պատկերամարտական շարժումը պառակտում առաջացրեց ազնվականության միջավայրում և ուժեղացրեց ռեակցիան: Ազնվատոհմիկների մի մասը դեռ ազնվականների առաջին յելույթի ժամանակ անցավ Մարգարիտի կողմը: Կալվինականների յելույթների հետևանքով կազմվեց զուտ կաթոլիկական կուսակցություն: Աշնանն ազնվականության մի զգալի մասն արդեն անցավ կառավարական լագերը: Իսպանիայից դրամ ուղարկվեց, վորով Մարգարիտը կարող եր զորքեր վարձել: Նա հրաժարվեց բոլոր զիջումներից: Սկսվեցին կալվինականների հետապնդումները, վորոնց մասնակցեց նաև ազնվականությունը: Կալվինականների առանձին ջոկատներ ջարդվեցին, նրանց վերցրած քաղաքները հետ գրավվեցին, ազնվատոհմիկները և ազնվականները նոր յերդում տվին կառավարությանը հավատարիմ լինելու մասին: Վիլհելմը հրաժարվեց դրանից և

մեկնեց Գերմանիա: Նա նախատեսեց դաժան պատիժներ: 1567 թվի գարնանը շարժումն այնպես ճնշված եր և հանդարտեցել եր յերկիրը: Բայց իսպանական կառավարությունը Նիդերլանդներում տեղի ունեցած դեպքերը պատրվակ դարձրեց յերկրում աբսոլյուտիզմի ռեժիմը մտցնելու համար:

Վոչնչացնել քաղաքների արտոնությունները, քաղաքային իշխանությունները փոխարինել թագավորի պաշտոնյաներով, արձակել տեղական զորքերը, հարկեր գանձել առանց շտատների համաձայնության,— ահա այս եր Ֆիլիպպ II-ի ծրագիրը: Յեթե այդ իրականացվեր, յերկրի ռեսուրսները կլինեյին իսպանական կառավարության տնորինության տակ: Ֆիլիպպ II-ը հասկանում եր, վոր այդ ծրագիրն անկարելի յե կենսագործել առանց յերկիրը ռազմական ոկուպացիայի յենթարկելու: Այս պատճառով նա 1567 թվի ամառը Նիդերլանդներ ուղարկեց տասը հազարանոց ընտիր զորք, բաղկացած իսպանական այն ջոկատներից, վորոնք կայազորներ եյին կազմում Իտալիայում, և այդ զորքի գլուխ նշանակեց հերցոգ Ալբային:

Հերցոգ Ալբան Նիդերլանդներում յեվ տեռորի սկիզբը

Թվում եր, թե դժվար ե ավելի հարմար մարդ գտնել նշված խնդիրը կատարելու համար: Ֆեոդալական միապետությունը բուրժուական հասարակության դեմ պայքարելու համար ուղարկում եր իր ամենաականավոր ներկայացուցիչներից մեկին, թերևս այն ժամանակվա Յեվրոպայի խոշորագույն զորապետին, աչքի ընկնող դիվանագետին, մի մարդու, վորը պարզ նշում եր իր նպատակները և անշեղորեն ձգտում դրանց, կանգ չառնելով վոչնչի առաջ: Կաստիլիայի հին ազնվականի ռազմամոլ տրադիցիաները և ֆանատիկոսությունը նրա մեջ միացած եյին ա՛յն սերնդին պատկանող իսպանական բարձր դասի գոռոզության հետ, վորի որոք Իսպանիան դարձավ Յեվրոպայի մեծագույն տերություն:

1567 թվի ոգոստոսի 23-ին Ալբան իր բանակի գլուխ անցած, հանդիսավոր կերպով մտավ Բրյուսել: Նա իր զորքերն, իբրև կայազորներ, անհապաղ տեղավորեց կարևորագույն քաղաքներում և ձեռնամուխ յեղավ այնտեղ միջնաբերդեր կառուցելու: Այսպիսով առաջին իսկ որերից վճռական միջոցներ ձեռք առնվեցին ապստամբությունը կանխելու համար: Այնուհետև ձերբակալվեցին ոպոզիցիոն ազնվականության առաջնորդ-

ները,— կոմս Եգմոնտը և ծովակալ Հորնը, ինչպես նաև Անտվերպենի բուրգոմիստր Վան Ստրալենը: Մադրիդում վաղուց արդեն վորոշված էր մահապատժի յենթարկել նրանց, ինչպես և ուրիշ շատերին: Դեռ Գրանվելլայի ժամանակներում Ալբան թագավորին խորհուրդ էր տալիս առայժմ առերես զիջումներ անել և սպասել, «մինչև վոր կարելի կլինի կտրել բոլոր նրանց գլուխը, ովքեր արժանի յեն դրան»:

«Արյունոտ խորհուրդ»

Ալբան ամենադաժան տեռորի ռեժիմ սահմանեց: Հիմնվեց «անկարգությունների վերաբերյալ խորհուրդ», վորը ստացավ «արյունոտ խորհուրդ» մականունը: Սկսվեցին մասսայական ձերբակալություններ՝ խռովության, պատկերամարտության, «կոմպրոմիսը» ստորագրելու մեղադրանքով: Շուտով խորհուրդը սկսեց հարյուրներով մահվան դատավճիռներ ընդունել: Շատ ազնվականներ գլխատվեցին կառափնարանում: 1568 թվի գարնանը մահապատժի յենթարկվեցին Եգմոնտը և Հորնը: Առաջինը, չնայելով իր լոյալության և միապետությանը նվիրված լինելուն, կարող էր խիստ վտանգավոր թվալ իբրև հնարավոր ապստամբության զինվորական առաջնորդ: Սաստիկ տուժեց նաև ունևոր բուրժուազիան: Չնայելով ամենախիստ արգելքներին, ով կարող էր ազատվել, գաղթում էր արտասահման, գլխավորապես Անգլիա: Վորոշ տվյալների համաձայն, ընդամենը վեց տարվա ընթացքում «արյունոտ խորհուրդը» մահապատժի յենթարկեց 6—8 հազար մարդու, բայց տեռորի նպատակն էր վոչ միայն վոչնչացնել խռովարար «հերետիկոսներին», այլև ավելացնել թագավորական յեկամուտները, վորովհետև մահապատիժների հետ մեկտեղ կատարվում էր գույքի գրավում հոգուտ թագավորի: Ալբան պարծենում էր, վոր այդ ֆինանսական գործարքներով նա 500 հազար վոսկեդրամի յեկամուտ է հայթայթել թագավորին:

Թվում էր, թե Ալբայի տեռորիստական ռեժիմը լուրջ դիմադրություն չի առաջացնում: Իսպանական կայազորները հնազանդ էին պահում յերկիրը: Բայց օրեցոր ավելանում էր բոլոր դասերի այն մարդկանց թիվը, վորոնք դուրս էին յեկել հունից, սնանկացել, գործազրկության մատնվել, փախչում էին մահապատիժներից և եկզեկուցիաներից, ծայրահեղորեն դայրացած էին, հուսահատված: Բնակչությունը գնում էր խուլ տե-

ղերը, անտառները: Այստեղ ստեղծվում եյին «անտառային յեղբայրների», «անտառային գյոզերի» ջոկատներ, վորոնք հարձակվում եյին յեկեղեցիների ու վանքերի վրա: Բայց նրանք չեյին կարող լուրջ հակահարված տալ Ալբայի զորքերին: Ծովամերձ պրովինցիաների բնակչությունը, վորը գործազրկության հետեվանքով սովի յեր մատնված, և Ֆրիսլանդիայի, Զելանդիայի և Հոլանդիայի նավաստիներն ու ձկնորսները գնում եյին ծով, ծովահենություն եյին անում: Հաճախ նրանց հրամանատարներ եյին լինում ազնվական-կալվինականները, վորոնք փախել եյին «արյունոտ խորհրդի» դահիճներից: Այդ «ծովային գյոզերը» հարձակվում եյին թե իրենց յերկրին պատկանող և թե օտար նավերի վրա: Իսպանիայի հետ ծովի վրայով հարաբերություններ պահպանելը դժվարացավ:

Եմիգրացիան նույնպես կազմակերպեց իր ուժերը՝ Ալբայի դեմ պայքարելու համար: Ամբողջ գործը վոգեշնչում եյին Վիլհելմ Որանցին և նրա յեղբայր Լյուդովիկոսը: Վիլհելմը փորձում եր իր կողմը քաշել գերմանական իշխաններին, բանակցություններ եր վարում նաև ֆրանսիական հուգենոտների հետ: Հավաքված փողերով վարձվեց բավական խայտաբղետ զորք, վորով Վիլհելմը 1568 թվին մտավ Նիդերլանդներ, հույս ունենալով ապստամբություն բարձրացնել: Բայց նա աջակցություն չգտավ տեռորի յենթարկված բնակչության մեջ: Ալբան մի քանի անգամ պարտություն պատճառեց Վիլհելմին, կռիվը շարունակելու համար փողը չբավականացավ և Վիլհելմի բանակը քայքայվեց:

Որանցու հարձակումը հետ մղելուց հետո Ալբան իրեն զգաց խիստ հաստատուն դիրքում: «Բնակիչները շատ գոհ են,— գրում եր նա թագավորին,— և աշխարհում չկա մի ուրիշ ազգ, վորին կառավարելն ավելի հեշտ լինի, քան այս ազգը, յեթե միայն գիտես, թե ինչպես պետք ե նրան ղեկավարել»:

Արդեն 1568 թվի սկզբում նա ձեռնամուխ յեղավ այն խնդրի կատարմանը, վորի համար ուղարկված եր Նիդերլանդներ,— յերկրի իսպանացմանը, նրան իսպանական պրովինցիա դարձնելուն: Ալբան ձգտում ե հիմնովին խորտակել նրա քաղաքական և սոցիալական կարգը: «Պետք ե ստեղծել բոլորովին նոր աշխարհ,— գրում եր նա թագավորին,— և աստված տա գլուխ բերել այդ, քանի վոր հեշտ գործ չե վոչնչացնել այնպիսի մի

ազատասեր ժողովրդի մեջ արմատացած սովորությունները, ինչպիսին միշտ եղել են նիդերլանդցիները: Ցես առանց ձեռներս ծալելու կաշխատեմ դրա համար»:

Պետական խորհուրդը հեռացվեց գործերից: Ալբան խորհրդակցում էր միայն իրեն մերձավոր իսպանացիներից մի քանիսի հետ և առաջարկում էր իսպանացիներից կազմված նոր խորհուրդ նշանակել: Վերջապես, հիմնվեցին նաև նոր եպիսկոպոսություններ, որոնց հարցը երկար ժամանակ այնքան դժգոհություն էր առաջացնում: Բայց գլխավորը Նիդերլանդներում ֆինանսական սիստեմի արմատական փոփոխությունն էր, որը թույլ կտար ամենաքիչ ջանքեր թափելով որքան կարելի է շատ կորզել այդ երկրից: Ալբան թագավորին գրում էր. «Այն ամենն, ինչ որ դուք ուզում եք, կարող եք ստանալ այս երկրից, որին դուք մինչև այժմ պետք է անվերջ դիմումներ անեիք ձեզ տրամադրված յուրաքանչյուր ֆլորինի համար, և այդ դիմումներն անեիք այնպես, որ ես— ձեր հասարակ զինակիրը— ոչ մի կերպ չեմ հանդուրժի այդ»: Բայց բուրժուական հարստության վրա ֆեոդալական միապետության այդ գրոհը չհաջողվեց: Հարկման նոր սիստեմ մտցնելու ուղղությամբ Ալբայի հենց այդ փորձերը հանդիպեցին վճռական հակահարվածի և հանդիսացան ապստամբության անմիջական պատճառ:

Ալկաբալա մտցնելու փորձ 1569 թվի գարնանը հրավիրվեցին գլխավոր շտատները և նրանց առաջարկվեց ժամանակավոր նպաստների փոխարեն մտցնել մշտական հարկ,— 1% շարժական և անշարժ կայքերից, 5% հողի վաճառման յուրաքանչյուր գործարքից և 10%— շարժական գույքի վաճառքից: Վերջին հարկը ոչ այլ ինչ էր, բայց եթե արաբական հին ալկաբալա, որը գոյություն ուներ Իսպանիայում: Այնպիսի մի երկրում, ինչպես Նիդերլանդներն էին իրենց զարգացած առևտրով, այդ հարկը սպառնում էր քայքայել տնտեսական ամբողջ կյանքը: Սակայն Ալբան վիճակատար անհասկացողությամբ և բութ համառությամբ այնպիսի արգումենտներ էր բերում իր սիստեմը պաշտպանելու, որոնք տիպիկ էին ֆեոդալական տնտեսական իդեոլոգիայի համար: Նա մատնանշում էր, թե այդ հարկերը չեն ծանրաբեռնի ոչ ազնվականությանը, ոչ հոգևորականությանը և որ դրանք ամբողջ ծանրությամբ կընկնեն

վաճառականների և արհեստավորների վրա: Եվրոպայում տնտեսապես ամենազարգացած յերկրի նկատմամբ նա գործադրում եր իր ֆեոդալական սենյորության տնտեսական փորձը: Չե՞ վոր նա, ինչպես ինքն եր հավատացնում, Ալբա կոչված իր փոքրիկ քաղաքից տարեկան ստանում եր 50 հազար դուկատի յեկամուտ իբրև ալկաբալա,— սակայն նա մի փոքր չափազանցնում եր այդ: Հապա ի՞նչ պետք ե տային Նիդերլանդները, վորոնք, ինչպես ցույց տվին Ալբայի հրամանով կատարված հետազոտությունները, տարեկան 45 միլիոն ֆլորինի ապրանք եյին արտադրում:

Շտատները կտրականապես հրաժարվեցին տասը տոկոս հարկ մտցնելուց, բայց վերջիվերջո նահանջեցին սպառնալիքների հանդեպ: Գործը վերջացավ կոմպրոմիսով. շտատները համաձայնվեցին տասը տոկոսանի և հինգ տոկոսանի հարկը յերկու տարով հետաձգելու համար ամեն տարի մուծել 2 միլիոն ֆլորին, իսկ մի տոկոսանի հարկը սկսեց անհապաղ գանձվել և 1571 թվի փետրվարին տվեց 3 միլիոն 300 հազար ֆլորին: Թվում եր, թե Ալբայի ֆինանսական քաղաքականությունը հաջողություն ուներ: Ինչպես նա հավատացնում եր թագավորին, մի քանի ֆինանսիստներ արդեն նրան առաջարկեցին իրենց ծառայությունները— ալկաբալան կապալով վերցնել տարեկան 4 միլիոն ֆլորինով, բայց նա հույս ուներ ստանալ 6 միլիոն: Մադրիդի գանձարանը դրանից կստանար 2 միլիոնի զուտ յեկամուտ: Ալբան վորոշեց ե՛լ ավելի մեծ համառությամբ իրագործել տասը տոկոսանի հարկը, մանավանդ վոր Իսպանիայից համառորեն փող եյին պահանջում, իսկ նա մեկնելիս խոստացել եր, վոր փողը վոսկե առվակի նման կհոսի Նիդերլանդներից: 1571 թվին, չնայելով դիմադրության, տասը տոկոսանի հարկն այնուամենայնիվ մտցվեց: Թե խոշոր և թե մանր բուրժուազիան պատասխանեց ընդհանուր գործադուլով: Ամբողջ առևտուրը, իսկ նրա հետ միասին նաև պատվերներից զրկված արդյունաբերությունը, մեռան: Ժամանակակիցների ասելով՝ Անտվերպենի բնակչությունը ճյան նման հալչում եր: Շուկայական տեղերը վարձով տալու յեկամուտները 80 հազար ֆլորինից ընկան 14 հազարի: «Գարեջրագործները գարեջուր չեյին պատրաստում, հացթուխները հաց չեյին թխում»: Հարկի ամենամեծ ծանրությունն ընկնում եր բնակչության ամենից քիչ ապահովված աշխատավորական մաս-

տների վրա: Վրա հասավ մասսայական գործադրկությունը, մինչդեռ տասը տոկոսանի հարկն անողոք կերպով գանձվում եր առաջին անհրաժեշտության առարկաներից: Բացի այդ, բուրժուազիան էլ աշխատեց օգտագործել մասսաների ծանր դրությունը: Մի ժամանակակցի վկայությամբ օգտվեցին ժողովրդի կարիքավորությունից, վորպեսզի մեկ յերրորդի չափով իջեցնեն աշխատավարձը:

Հարկավոր եր մի փոքրիկ ցնցում, վորպեսզի Ալբայի և նրա ռեժիմի դեմ կուտակված ատելությունը վերածվեր բացահայտ ապստամբության:

Այդ ցնցումն առաջացրին ծովային գյոզերը:

Ալբայի հարկերը մտցնելուց հետո այդ գյոզերի թիվը խիստ շատացավ: Ծովային շահավետ ավազակության եյին գնում վոչ միայն ծովամերձ պրովինցիաների նավատերերն ու ձկնորսները, այլև հարավ-արևմտյան վալլոնական ռայոնների գործադուրկները: Նրանց միացան նաև ֆրանսիական բազմաթիվ հուգենոտներ Լարոշելից:

Բրիլի գրավումը գյոզերի կողմից յեվ ընդհանուր ապստամբության սկիզբը

Ծովային գյոզերն այդ ժամանակ լուրջ վտանգ եյին ներկայացնում. նրանք համարյա բոլորովին կտրեցին Նիդերլանդների ծովային հաղորդակցությունները, մանավանդ Իսպանիայի հետ: Նրանք ապաստան եյին գտնում անգլիական նավահանգիստներում, բայց իսպանական կառավարության վճռական պնդումներից հետո Անգլիան այլևս չեր աջակցում գյոզերին և 1572 թվի մարտին պահանջեց, վոր նրանց նավերը հեռանան անգլիական նավահանգիստներից: Ծովային գյոզերի այդպիսի նավատորմներից մեկը, մթերապաշար վորոնելով, մոտեցավ Հռենոսի գետաբերանում գտնվող Փոորն կղզուն և գրավեց Բրիլ փոքրիկ քաղաքը: Այդ պատահեց 1572 թվի ապրիլի 1-ին: Բրիլի գրավումը դարձավ մի ազդանշան, վորով ամբողջ հյուսիսն ապստամբեց իսպանական ռեժիմի դեմ:

Գյոզերը հետ մղեցին իսպանական ջոկատների հարձակումը և շուտով նրանց ձեռքն անցավ Հռենոսի և Շելդայի գետաբերանում գտնվող կղզիների մեծ մասը: Գյոզերն անխնայորեն կողոպտում եյին յերկիրը, մանավանդ վանքերն ու յեկեղեցիները և իհարկե վստահություն չեյին վայելում բուրժուական շրջաններում: Հոլանդիայում մի շարք քաղաքներ ընդունեցին

Վիլհելմ Օրանցու կայազորները: Այդ ժամանակ մի քանի քաղաքներում իսպանական կայազորների հետ ընդհարումներ տեղի ունեցան: Սակայն իսպանացիներին հաջողվեց իրենց ձեռքում պահել Ամստերդամը: Հարավային պրովինցիաներում հուգենոտների ջոկատները, որ Ֆրանսիայից բերել էր Վիլհելմի եղբայր Լյուդովիկոսը, գրավեցին Մոնսը, ուր կային Վիլհելմի շատ կողմնակիցներ: Մոնսի հարուստ բուրժուազիան— վաճառականները, մետաքսագործներն ու մահուդագործները— իր հաշվին մարտական ջոկատներ կազմակերպեց:

Ինքը, Օրանցին, զորքերով անցավ Հռենոսը, ներխուժեց Բրաբանտ և ուղևորվեց դեպի Մոնս: Պրովինցիաների բնակչությունը նրան ընդունեց ոչ այնքան սրտաբաց, որքան սպասում էր նա: Բրյուսելը և մյուս քաղաքները նրա առաջ փակեցին իրենց դռները: Վիլհելմ Օրանցու խայտառակ զորքը, որը վատ և անկանոն էր վարձատրվում, խիստ սանձարձակ էր և կողոպտում էր բնակչությանը, գուցե և ավելի շատ, քան իսպանական կարգապահ ջոկատները, իսկ այդ իհարկե չէր կարող նպաստել գործի հաջողության: Չարդարացավ Վիլհելմ Օրանցու այն հույսը, թե Ֆրանսիան օգնություն ցույց կտա: «Բարդուղիմյան գիշերը» (1572 թվի օգոստոսի 24-ին) վիժեցրեց բոլոր պլանները: Ալբան, որ պաշարել էր Մոնսը, խուսափում էր վճռական ճակատամարտերից, համոզված լինելով, որ Վիլհելմի փողերը երկար չեն բավականանա և նրա զորքն ինքնին կքայքայվի: Հիրավի, երկու ամիս էլ չէր անցել իր ներխուժումից հետո, երբ Վիլհելմը վերադարձավ Գերմանիա, ուր նա այնուհետև արձակեց իր ջոկատների խղճուկ մնացորդները: Դրանից հետո նա մեկնեց Հոլանդիա: Այստեղ բնակչությունը նրան ցնծությամբ ընդունեց, հոլանդական շտատները նրան հռչակեցին թագավորի շտատհալտեր Հոլանդիայում, Զելանդիայում, Ֆրիսլանդիայում և Ուտրեխտում: Նրան էին ենթարկվում զինվորական ուժերը. գյոզերի առաջնորդ Լյումեյը համարվում էր նրա տեղակալը:

Վիլհելմի նահանջից հետո Ալբան գրավեց Մոնսը: Տեղի ունեցան բազմաթիվ մահապատիժներ և գույքի կոնֆիսկացիա: Այնուհետև Ալբան գնաց հյուսիսային պրովինցիաները խաղաղացնելու: Ճանապարհին նրա զորքերը թալանեցին Մեխելնը, Նիդերլանդների եկեղեցական մայրաքաղաքը, «կարծես թե այդ

թուրքական քաղաք լինել», — ասում է ժամանակակիցը: Ալբան վերցրած ավարով հաշիվները մաքրեց զորքերի հետ: Շարժվելով դեպի հյուսիս, Ալբան աշխատեց արեւմտյան պրովինցիաները կտրել Գերմանիայից, վորպեսզի կանխի հնարավոր ոգնությունը գերմանական իշխանների կողմից: Սարսափելի կոտորածից և ջարդից հետո, վոր նա կազմակերպեց Ցուտֆեն քաղաքում, մնացած քաղաքները, վորոնք գտնվում եյին Իսսել գետի վրա, առանց դիմադրության անձնատուր յեղան նրան: Զյուդերզեյի վրա գտնվող Նաարդեն քաղաքը, վորը փորձեց նրան հակահարված տալ, ջնջվեց յերկրի յերեսից: Հենվելով Ամստերդամի, իբրև բազայի վրա, Ալբան 1572 թվի վերջին ձեռնամուխ յեղավ Հաարլեմի պաշարմանը: Քաղաքն ամենահամառ դիմադրություն ցույց տվեց, 7 ամիս դիմացավ, բայց Վիլհելմի բոլոր փորձերը— փրկել Հաարլեմը— անհաջողությամբ վերջացան: Նա միջոցներ չուներ լանդսկնեխտներ վարձելու համար: Հաարլեմը հանձնվեց հաղթողի վողորմածությանը,: Ջարդից ազատվելու համար բնակչությունը 100 հազար վոսկեդրամ վճարեց, բայց Ալբան ծովում խեղդեց Հաարլեմի քաջարի կայազորը: Ալբայի այդ հաղթանակը, վոր ձեռք բերվեց թանկ գնով, նրա վերջին հաջողությունն եր: Նա մտածում եր ամենադաժան տեռորով ջախջախել դեռ չնվաճված քաղաքների դիմադրությունը: Յերբ նա ձեռնամուխ յեղավ Ալկմարի պաշարմանը, սպառնաց, վոր այնտեղ վոչ մի կենդանի մարդ չի թողնի: «Վորովհետև Հաարլեմի որինակն անոգուտ յեղավ (Ալբան գտնում եր, վոր չափից դուրս մեղմ է վարվել այդ քաղաքի հետ), ուստի դաժանության որինակը թերևս խելքի բերի մյուս քաղաքները», բայց հարկավոր յեղավ վերացնել Ալկմարի պաշարումը, վորովհետև յերկիրն հեղեղում եր սպառնում: Հոլանդացիք իսկապես դիմեցին այդ ծայրահեղ միջոցին, յերբ Ալբայի հաջորդի զորքերը պաշարել եյին Լեյդենը:

Սակայն բաց դաշտում Որանցու զորքերը շարունակ պարտություն եյին կրում: Վիլհելմի յեղբայր Լյուդովիկոսը 1574 թվի գարնանը կրկին ներխուժեց կարգապահության վատ յենթարկվող զորքով, վորը կազմված եր ամեն տեսակ խուժանից և վոր գլխավորն է, վատ եր վարձատրվում: Զորքը կողոպուտներով ու անկարգություններով եր զբաղվում: Հենց առաջին լուրջ ճակատամարտում իսպանական զորքերը գլխովին ջարդեցին այդ

թուրքական քաղաք լինել»,— ասում է ժամանակակիցը: Ալբան վերցրած ավարով հաշիվները մաքրեց զորքերի հետ: Շարժվելով դեպի հյուսիս, Ալբան աշխատեց արևմտյան պրովինցիաները կտրել Գերմանիայից, վորպեսզի կանխի հնարավոր օգնությունը գերմանական իշխանների կողմից: Սարսափելի կոտորածից և ջարդից հետո, վոր նա կազմակերպեց Ցուտֆեն քաղաքում, մնացած քաղաքները, վորոնք գտնվում եյին Իսսել գետի վրա, առանց դիմադրության անձնատուր յեղան նրան: Զյուդերզեեյի վրա գտնվող Նաարդեն քաղաքը, վորը փորձեց նրան հակահարված տալ, ջնջվեց յերկրի յերեսից: Հենվելով Ամստերդամի, իբրև բազայի վրա, Ալբան 1572 թվի վերջին ձեռնամուխ յեղավ Հաարլեմի պաշարմանը: Քաղաքն ամենահամառ դիմադրություն ցույց տվեց, 7 ամիս դիմացավ, բայց Վիլհելմի բոլոր փորձերը— փրկել Հաարլեմը— անհաջողությամբ վերջացան: Նա միջոցներ չուներ լանդսկնեխտներ վարձելու համար: Հաարլեմը հանձնվեց հաղթողի ողորմածությանը,: Ջարդից ազատվելու համար բնակչությունը 100 հազար վոսկեդրամ վճարեց, բայց Ալբան ծովում խեղդեց Հաարլեմի քաջարի կայազորը: Ալբայի այդ հաղթանակը, վոր ձեռք բերվեց թանկ գնով, նրա վերջին հաջողությունն եր: Նա մտածում եր ամենադաժան տեռորով ջախջախել դեռ չնվաճված քաղաքների դիմադրությունը: Յերբ նա ձեռնամուխ յեղավ Ալկմարի պաշարմանը, սպառնաց, վոր այնտեղ վոչ մի կենդանի մարդ չի թողնի: «Վորովհետև Հաարլեմի որինակն անոգուտ յեղավ (Ալբան գտնում եր, վոր չափից դուրս մեղմ ե վարվել այդ քաղաքի հետ), ուստի դաժանության որինակը թերևս խելքի բերի մյուս քաղաքները», բայց հարկավոր յեղավ վերացնել Ալկմարի պաշարումը, վորովհետև յերկիրն հեղեղում եր սպառնում: Հոլանդացիք իսկապես դիմեցին այդ ծայրահեղ միջոցին, յերբ Ալբայի հաջորդի զորքերը պաշարել եյին Լեյդենը:

Սակայն բաց դաշտում Որանցու զորքերը չարունակ պարտություն եյին կրում: Վիլհելմի յեղբայր Լյուդովիկոսը 1574 թվի գարնանը կրկին ներխուժեց կարգապահությանը վատ յենթարկվող զորքով, վորը կազմված եր ամեն տեսակ խուժանից և վոր գլխավորն ե, վատ եր վարձատրվում: Զորքը կողոպուտներով ու անկարգություններով եր զբաղվում: Հենց առաջին ճակատամարտում իսպանական զորքերը գլխովին ջարդեցին այդ

ջոկատները (ապրիլի 14-ին, Մոոկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում)․ Վիլհելմի յերկու յեղբայրներն ընկան կռվում։ Մոոկի մոտ հաղթանակ տանելուց հետո իսպանացիք ձեռնամուխ յեղան Լեյդեն քաղաքի պաշարմանը (1574 թվի մայիս-հոկտեմբեր)։ Քաղաքը մոտ եր կործանման, բայց հոլանդական շտատները կարգադրեցին բաց անել ամբարտակները, վորոնք յերկիրը պահպանում եյին հեղեղումից։ Սարսափելի գյուղերի նավատորմիղը մթերքներ հասցրեց սովատանջ բնակչությանը և իսպանացիք ստիպված յեղան նահանջել։ Լեյդենի մոտ իսպանացիների անհաջողությունները հանդիսանում են ամբողջ կամպանիայի դարձակետը, բայց և այնպես սպառնալիքի տակ եր ապստամբների բախտը,— վորոնք դիմադրում եյին մի քանի քաղաքներում, փոքրիկ տարածությամբ ցամաքում։ Ճիշտ է, նրանց ուժը կայանում եր նրանում, վոր նրանք տիրում եյին ծովին, հարվածում եյին իսպանական եսկադրաններին և կարող եյին պաշարման յենթարկել Նիդերլանդները։ Ապստամբների գործը փրկեցին վոչ միայն նրանց քաջությունն ու անձնուրացությունը, այլև իսպանական ֆինանսների քայքայումը, վորը վաղուց արդեն նախապատրաստվել եր և վորին վերջին աղդակ հանդիսացավ նիդերլանդական ապստամբությունը։

Ալբայի քաղաքականությունը լիակատար անհաջողության մատնվեց։ Այն 2 միլիոն ֆլորինի փոխարեն, վոր Իսպանիան ստանում եր Նիդերլանդներից, հիմա նա ինքն ամեն տարի այնտեղ պիտի ուղարկեր դրեթե նույնպիսի գումար։ Հինգ տարում, 1567 թ․ մինչև 1572 թ․, Իսպանիայից ուղարկվեց 8 միլիոն ֆլորին, զորքը պահելու և պատերազմելու՝ համար, չհաշված տեղական միջոցներով կատարվող ծախսերը։ Իսկ այդ ծախսերն անվերջ եյին։

Ալբան հետ կանչվեց և 1573 թվի վերջում հեռացավ Նիդերլանդներից։

Նրա հաջորդ Ռեկեզենսը տվեց նրա ֆինանսական քաղաքականության դրամական տխուր հանրագումարները։ Պատերազմի վրա արդեն 40 միլիոն դուկատ եր ծախսված։ Բացի դրանից, կառավարությունը բանակին պարտք եր 6,5 միլիոն դուկատ և պատերազմն ամեն ամիս նստում եր 600 հազար դուկատ։ Իսպանական ֆինանսների դրությունն անդրադարձավ նաև իսպանական բանակի դրության վրա։ Հաարլեմի գրավումից անմիջա-

պես հետո իսպանական զորքերը, որոնք ռոճիկ չէին ստացել, խռովություն բարձրացրին և իրենց թշնամի Վիլհելմին նույնիսկ առաջարկեցին 40 հազար դուկատով հետ ստանալ քաղաքը, բայց Վիլհելմի մոտ այդ գումարն էլ չկար: Մի կերպ հաջողվեց դադարեցնել հուզումը, բայց այդ խռովությունները քանի գընում այնքան լուրջ էին դառնում: Բանակը խռովություն է բարձրացնում Մոոկի մոտ հաղթանակ տանելուց հետո, շարժվում է դեպի Անտվերպեն և հայտարարում, որ այդ քաղաքը պետք է վճարի իրեն հասանելիք ռոճիկը, քանի որ այն դավաճանի կապ է պահպանում հոլանդական խռովարարների հետ: Անտվերպենի բուրժուազիային մեծ դժվարությամբ հաջողվեց հսկայական գումար վճարելով ազատվել խռովություն բարձրացրած զինվորայնությունից (1574 թ. ամառը):

1575 թվի աշնանն իսպանական կառավարությունը դադարեցրեց իր պարտավորությունների վճարումը: Պետական ֆինանսների քայքայումն իհարկե էլ ավելի բարդացրեց դրությունը: Ռեկեզենսը հարավային պրովինցիաների շտատներից պահանջեց իրեն տալ 1·200 հազար ֆլորինի փոխառություն և մերժման դեպքում սպառնում էր այնտեղ զորքեր տեղավորելով և զինվորների բունտերով: Շտատները փող տվին, բայց այդ փողը չբավականացավ: Զելանդյան կղզիների դեմ ուղղված կամպանիան, որ սկզբում հաջող էր իսպանացիների համար և հաղթանակով վերջանալու դեպքում նորից կապահովեր հարավային Նիդերլանդների ելքը դեպի ծով,— վիժեց զինվորական բունտի շնորհիվ: Զինվորները գնացին Բրյուսելի վրա, բայց քաղաքը պատրաստվել էր դիմադրության և նրանք գրավեցին մոտ գտնվող փոքրիկ, բայց հարուստ Ալոստ քաղաքը:

Իսպանացիների ռազմական ձեռնարկումների անհաջողությունը նրանց ստիպեց բանակցություններ սկսել Վիլհելմ Որանցու հետ, բայց դրանք քանիցս ընդհատվում էին, որովհետև թագավորը ոչ մի զիջում չէր անում: Կառավարությունն իր հերթին հրաժարվեց Ալբայի տեռորիստական մեթոդներից: Դեռ նրա կառավարման ժամանակ փաստորեն վերացվել էր տասը տոկոսանի հարկը: Զգալիորեն մեղմացվել էր նաև «անկարգությունների վերաբերյալ խորհրդի» գործունեությունը,— հիմա նա մահվան դատավճիռներ չէր ընդունում: Վերջապես, Ռեկեզենսը հայտարարեց թագավորական ամնիստիայի մասին, բայց

այդ վոչ մի տպավորություն չթողեց, վորովհետև բոլորովին հավատ չեյին ընծայում կառավարությանը և մասնավորապես Ռեկեզենսին, վորը մավրերին նվաճելիս նենգաբար չեր կատարել նման խոստումները: Վիլհելմի համար պարզ եր, վոր ինքն առանց կողմնակի ոգնության չի կարող մնալ հյուսիսային պրովինցիաներում, և նա շարունակ փորձում ե կապվել մերթ ֆրանսիական և մերթ անգլիական կառավարության հետ, ոգտագործելով թե այդ յերկու յերկրների միջև յեղած անտագոնիզմը և թե նրանց թշնամանքը դեպի Իսպանիան: Նա բազմիցս առաջարկում եր անգլիական թագուհի Ելիզավետին իր հովանավորության տակ առնել Հոլանդիան և Զելանդիան և ոկուպացիայի յենթարկել մի քանի կարևոր ծովամերձ կետեր, սրանց թվում— Ֆլիսսինգենը, բայց Ելիզավետան առայժմ չընդունեց այդ առաջարկը:

Հյուսիսային պրովինցիաները 1572 թվից հետո

Ապստամբությունը սկսվելուց հետո չորս տարվա ընթացքում հյուսիսային և հարավային պրովինցիաներում սոցիալական և քաղաքական զգալի փոփոխություններ կատարվեցին:

Հյուսիսում ապստամբությունը կենտրոնացավ քաղաքներում: Բնակչության քաղաքային դասակարգերը, վորոնք կապված եյին արհեստների և առևտրի հետ, հանդիսացան հակահարվածի մարտիկներ և կազմակերպիչներ: Բնակչության հողատեր ու հողագործ խմբերն ավելի պասիվ և նույնիսկ յերբեմն թըշնամաբար եյին վերաբերվում դեպի պայքարը: Շահագործման իսպանական սիստեմը գյուղատնտեսության կառուցվածքին ավելի քիչ եր հակասում, քան քաղաքային առևտրին և արդյունաբերությանը: Գյուղացիության լայն մասսաները դեռ կաթոլիկներ եյին: Գյուղացիության համար ավելի հեշտ եր հաշտվել իսպանական ռեժիմի հետ: Սակայն պատերազմն իր ավերածություններով առանձնապես ծանր եր գյուղացիության համար, բոլորովին քայքայում եր նրա տնտեսությունը: Նրա համար վողբերգական հետևանքներ ունեցավ պրովինցիաների պաշտպանության յուրահատուկ սիստեմը— լայնատարած ռայոնների հեղեղումը: Այդ սիստեմը յեթե վոչ ընդմիշտ, գոնե խիստ յերկար ժամանակով բնակչությանը զրկում եր գոյության միջոցներից: Հասկանալի յե, վոր գյուղացիները խիստ թշնամաբար եյին վերաբերվում դեպի այդ ծայրահեղ միջոցը: Որք-

նակ, նրանք համառորեն դիմադրում եյին Ալկմարի շրջակայքի հեղեղմանը: Վիլհելմ Օրանցու զինակիցները ստիպված յեղան ճնշել գյուղացիական շարժումները, այն ել չլսված դաժանությամբ: Բայց իր սոցիալական և քաղաքական նշանակությունից շատ բան տանուլ տվեց նաև շահագործող հողատեր դասակարգը— ազնվականությունը և հոգևորականությունը: Կաթոլիկ յեկեղեցին, վորպես սոցիալական կազմակերպություն, հյուսիսում կորցրեց իր նյութական բազան և գրեթե չքացավ. 1573 թվին տեղի ունեցավ յեկեղեցական հողերի գրավումը, վորից հետո հոգևորականությունն այլևս չեր յերևում շտատների ժողովներում:

Ազնվականները նույնպես կորցրին իրենց նախկին սոցիալական և քաղաքական դիրքը: Ազնվականության մի մասն անցավ թշնամիների կողմը և նրանց հողերը գրավվեցին: Հոլանդիայի և Զելանդիայի շտատներում ազնվականությունն այնուհետև աննկատելի տեղ է գրավում. որինակ, Զելանդիայում նա ուներ ընդամենը մի ձայն՝ քաղաքային բնակչության վեց ձայնի դիմաց:

Քաղաքային բնակչությունը քաղաքական և սոցիալական գերակշռող նշանակություն ստացավ: Այնուհետև նա դեպուտատների ճնշող մեծամասնություն ուներ Հոլանդիայի ու Զելանդիայի շտատներում: Նույնպես դասային ներկայացուցչության խարխլված շրջանակներում աճում է քաղաքական մի նոր որգան, վորն իրենով մարմնացնում է բուրժուազիայի տիրապետությունը: Բուրժուազիան Վիլհելմին ոժտեց խիստ մեծ, գրեթե դիկտատորական լիազորություններով: Նա բուրժուազիային հարկավոր եր Իսպանիայի դեմ պայքարելու համար: Նա հանդիսանում եր գերագույն զորապետ և առհասարակ կարող եր անսահմանափակ կերպով տնորինել այն ամենն, ինչ վոր վերաբերում եր պետության անվտանգությանը: Բայց բուրժուազիան շատ հաստատուն կերպով իր ձեռքը վերցրեց պետական փողերի տնորինությունը: Վիլհելմը պետք է նրանից համառորեն փող խնդրեր, վորը հարկավոր եր պետության պաշտպանության համար:

Յերկու պրովինցիաների, Հոլանդիայի և Զելանդիայի պետության (1575 թվին տեղի ունեցավ նրանց ավելի սերտ միավորումը), վորպես բուրժուական պետության դասակարգային

նոր բնույթն արտահայտվում է ֆինանսական այն շահագործմամբ, վոր կիրառում են շտատները: Նրանք ձգտում են հարկերի ծանրությունը փոխադրել լայն մասսաների վրա: Յերևան են գալիս լայն սպառման առարկաների բազմաթիվ անուղղակի հարկեր— մի գիծ, վորը խիստ բնորոշ էր Հոլանդիայի համար նաև ավելի ուշ ժամանակաշրջանում,— մինչդեռ առևտուրն ու արտադրությունը խիստ քիչ են հարկվում:

Չնայելով պատերազմին, Հոլանդիայի ծովափնյա քաղաքների և մասնավորապես Ամստերդամի առևտուրը վոչ միայն զգալի վնաս չկրեց, այլ ընդհակառակը, սկսեց բարգավաճել: Այստեղ էր գալիս էմիգրացիան իսպանացիների գրաված հարավային մարզերից: Այդ ժամանակվա ընթացքում խիստ աճեց Հոլանդիայի քաղաքների բնակչությունը: Ամստերդամը սկսեց դեպի իրեն քաշել Անտվերպենի առևտուրը, իսկ Անտվերպենը գյոզերը կտրել էյին ծովից: Հոլանդական բուրժուազիան կանգ չի առնում թշնամու հետ առևտուր անելու առաջ: Պետությունը մեծ յեկամուտներ է ստանում նրանից, վոր թույլտվություններ է տալիս առևտուր անելու Իսպանիայի իշխանության տակ գտնվող նահանգների, նաև Ֆլանդրական ծովափի հետ: Թե ինչու Հոլանդիայի կարևորագույն քաղաքը,— Ամստերդամն այնքան ժամանակ չէր անցնում ապստամբների կողմը, դրա պատճառն այն էր, վոր նա չէր ցանկանում խզել չափազանց շահավետ առևտրական կապերն Իսպանիայի հետ:

Հարավային պրովինցիաները 1576 թվին

Խռովություն բարձրացրած իսպանական զինվորության կողոպուտներն ու անկարգություններն ատելության ընդհանուր պայթյուն առաջացրին Նիդերլանդական հարավային պրովինցիաներում: Բնակչությունն ամենուրեք զենք է վերցնում, ինքնապաշտպանության ջոկատներ կազմակերպում զինվորական կողոպտիչ բանդաներին դիմադրելու համար: Որինակը ցույց տվեց Բրյուսելը: Բրաբանտի շտատները զորքեր են հավաքագրում: Մոմենտը չափազանց հարմար էր, վորպեսզի նաև հարավային պրովինցիաները, գլխավորապես Ֆլանդրիան և Բրաբանտը, վոտքի հանվեյին Իսպանիայի դեմ պայքարելու համար: Վիլհելմը յեռանդուն ագիտացիա սկսեց: Նրան շրջապատող բազմաթիվ էմիգրանտները, վորոնք հարավային նահանգներից էյին, նաև Ֆրանսիայից գաղթածները— հուգենոտները,— վորոնց մեջ կային մի շարք տաղանդավոր

հրապարակախոսներ,— հարավային պրովինցիաները հեղեղում են պամֆլետներով, կոչերով, դիմումներով: Բռնակալության դեմ մարտնչողների իրենց թեորիան համարեցնելով նիդերլանդական պայմաններին, իսպանական թագավորի իշխանությանը հակադրելով գլխավոր շտատների իշխանությունը, դրանց պատկերելով իբրև ամբողջ ժողովրդի ներկայացուցչություն, որ բոլորովին չէր համապատասխանում իրականությանը—մի ներկայացուցչություն, որին պատկանում է բարձրագույն իշխանությունը յերկրում,—նրանք մնում են բոլոր 17 պրովինցիաների քաղաքական, պատմականորեն առաջացած միասնության վրա և Վիլհելմին առաջ են քաշում որպես «միասնական հայրենիքի» ազատության և անկախության պաշտպան: Այն հանգամանքը, որ Հոլանդիան և Զելանդիան, ազատվելով ոտարերկրյա լծից, հասան բարգավաճող դրության, պետք է առանձնապես ուժեղ ազդեցություն թողներ հարավային պրովինցիաների բնակչության վրա, որը անտեսապես քայքայվել էր իսպանացիների տիրապետության շնորհիվ: Վիլհելմի կողմնակիցները, լինելով կալվինականներ, այնուամենայնիվ իրենց յերկերում,— որոնք նախանշված եյին հարավային պրովինցիաների կաթոլիկ բնակչության համար,— շատ զգույշ կերպով եյին խուսափում կրոնական հարցից:

Այդ իդեաները կենդանի արձագանք եյին գտնում բնակչության շատ լայն խավերում, առաջին հերթին բուրժուական ինտելիգենցիայի ազատ պրոֆեսիաների տեր մարդկանց միջավայրում, բայց յուրահատուկ կերպով բեկվելով, դրանք տարածվում եյին նաև քաղաքային բնակչության ստորին խավերում: Այդ խավերը, որոնք հարել եյին Որանցուն և նրա ներկայացրած՝ հյուսիսային պրովինցիաների բուրժուազիային, դասակարգայնորեն ոտար եյին նրան: Նրանք պատկանում եյին այն «ժողովրդին», պլեբեյական այն մասսաներին, որոնք հուգենոտյան հրապարակախոսության աչքերում «բազմագլուխ հիդրա» եյին և որոնց, ընդհանուր անարխիայից խուսափելու համար, ամենևին չպետք էր թույլ տալ որևէ անմիջական մասնակցություն ունենալու պետության կառավարմանը:

Բրյուսելում գտնվեցին Որանցու շատ կողմնակիցներ,— «որանժիստներ», որոնք իրենց «իսկական հայրենասերներ» եյին անվանում:

1576 թվի սեպտեմբերի 4-ին Բրյուսելում «հայրենասերները» հեղաշրջում կատարեցին: Ձերբակալվեցին պետական խորհրդի անդամները, պետական խորհուրդ, որն այդ ժամանակ իսպանական փոխարքայի բացակայության պատճառով (Ռեկեզենսը մեռել էր, իսկ նոր փոխարքան— դոն Խուան Ավստրիացին դեռ չէր ժամանել) իշխանության բարձրագույն օրգանն էր: Բրաբանտի շտատներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: «Հայրենասերների» ճնշման տակ գումարվեցին գլխավոր շտատները: Շարունակելով իսպանական թագավորին ճանաչել իբրև իրենց «գերագույն օրենսդիրը» և «բնածին թագավորը», նրանք այդ թագավորին ուղղված իրենց դիմումի մեջ պահանջեցին երկրից դուրս տանել իսպանական զորքերը և պարզապես խախտելով նրա առանձնաշնորհությունը, բանակցությունների մեջ մտան ապստամբած պրովինցիաների ներկայացուցիչների հետ: Նախատեսելով անխուսափելի պայքարն իսպանական զորքերի դեմ, շտատները սկսեցին կազմակերպել իրենց բանակը, որի գլուխն անցան բարձր դասի ներկայացուցիչները: Արիստոկրատիան նորից գործերի վրա ազդեցություն ձեռք բերեց: Այդ դրությունը պահպանելու համար նա առայժմ անբարյացակամ դիրք գրավեց Իսպանիայի նկատմամբ:

Իսպանական զորքերը, որոնք ցրված էին երկրում, փակվեցին քաղաքների միջնաբերդերում, որտեղ նրանց պաշարել սկսեցին ազգային զորքերի ջոկատները: Իսպանացիների գլխավոր ուժերը կենտրոնացան Անտվերպենի բերդում: 1576 թվի նոյեմբերի 4-ին նրանք հանկարծակի հարվածով ճեղքեցին իրենց պաշարած զորքերի գիծը, նրանց դուրս մղեցին քաղաքից և հարձակվեցին հեքիաթային հարստություն ներկայացնող ավարի վրա: Անտվերպենը չլսված ավերածության ենթարկվեց: Այրվեց քաղաքի լավագույն մասը— ավելի քան 500 մարմարե պալատներ: Մինչև 8 հազար քաղաքացիներ կոտորվեցին կամ խոշտանգումների ենթարկվեցին: Կողոպտվեցին ավելի քան 6 միլիոն ոսկեդրամի թանկարժեք իրեր և արժեքավոր ապրանքներ: «Անտվերպենը,— գրում էին Բրաբանտի շտատները,— դեռ երեկ ամբողջ Եվրոպայի գլխավոր զարդարանքը, ամբողջ աշխարհի ժողովուրդների ապաստանը, անհամար գանձերի աղբյուրը, ամեն տեսակ արհեստների ու արվեստների անդաստանը, գիտության և առաքինության պահապանը և որ գլխավորն

և՝ իր թագավորին ավելի քան հավատարիմ ու նվիրված այդ քաղաքը հիմա դարձել է ավազակների և մարդասպանների— աստծո և թագավորի թշնամիների մռայլ մի վորջ»:

«Գենտի Շտատների լիազորների բանակցություն- **պասիֆիկացիան»** ը Հոլանդիայի և Զելանդիայի պատգամավորների հետ՝ տեղի եյին ունենում Գենտում և վերջացան հոկտեմբերի 31-ի համաձայնությամբ, վորը «պասիֆիկացիայի» (խաղաղացման) անվան տակ հայտարարվեց Գենտում, 1576 թվի նոյեմբերի 8-ին: Հյուսիսային պրովինցիաների պահանջները գրեթե ամբողջությամբ ընդունվեցին: Յերկու կողմերը պարտավորվում եյին յերկրին ազատել «իսպանական զինվորներից և այլ ամեն տեսակ ոտարերկրացիներից, վորոնք փորձում եյին տիրանալ յերկրի հարստություններին և ի լրումն այդ ամենի ուզում եյին ստրկացնել ժողովուրդը և նրան պահել մշտական ճորտության մեջ»: «Հերետիկոսությունների» վերաբերյալ այն բոլոր հրամանները, վոր հրատարակել եր Ալբան, հայտարարվում եյին անվավեր, կոնֆիսկացիաները վոչնչացվում եյին: Բռնագրված անշարժ գույքի համար տերերը վարձատրություն եյին ստանում, բայց Հոլանդիայում և Զելանդիայում հաստատվում եր յեկեղեցական կայքերի աշխարհականացում. դրանց նախկին տերերը, այսինքն կաթոլիկ հոգևորականությունը, ստանում եյին վոչ թե վարձատրություն, այլ միայն կենսաթոշակի իրավունք: Հոլանդիան և Զելանդիան պահպանում եյին իրենց առանձին վարչությունը և իրենց դրամական սիստեմը: Այն պարտքերը, վոր արել եր Վիլհելմ Որանցին 1568 և 1572 թ. թ. արշավանքների ժամանակ, պետք է վճարեր «համայն յերկրին ամբողջովին վերցրած»: Կրոնական հարցի վերաբերյալ ամենակարևոր կետն այնպես եր ձևավորված, վոր վերջին հաշվով չեր կարող բավարարել վոչ մեկ և վոչ մյուս կողմին: Հոլանդիայում և Զելանդիայում կաթոլիկությունն արգելվում եր, բայց բողոքականներն էլ այդ պրովինցիաների սահմաններից դուրս չեյին կարող բացահայտ կերպով դավանել իրենց հավատը: Ընդհանրապես այդ բոլոր հարցերը պետք է լուծվեյին գլխավոր շտատների ժողովում, իսպանացիներին արտաքսելուց հետո:

Գենտի պասիֆիկացիան չհանգեց հյուսիսային և հարավային պրովինցիաների սերտ համախմբման. Հյուսիսային պրովին-

ցիաներում իշխում էր բուրժուազիան, իսկ հարավային պրովինցիաներում ֆեոդալական տարրերը շարունակում էին ազդեցիկ դիրք պահպանել: Գենտի պասիֆիկացիան նույնպես չվճռեց նույնիսկ այն հիմնական հարցը, որի համար ստեղծվել էր համաձայնությունը,— վերաբերմունքը դեպի Իսպանիան: Վիլհելմը շարունակում էր պնդել հետագա դիմադրության վրա, բարձր ազնվականությունը և խոշոր բուրժուազիան, որոնք իշխում էին հարավային պրովինցիաներում, հույս ունեին համաձայնության գալ իսպանական կառավարության հետ: Բայց Գենտի համաձայնությունն այնու հանդերձ հանդիսանում էր այն պայմանների մինիմումը, որոնց հիման վրա հարավային Նիդերլանդների տիրապետող խավերը համաձայնվում էին ճանաչել Իսպանիայի սուվերենիտետը: Ազնվականության համար ամենակարևոր կետն էր իսպանական զորքերը երկրից դուրս տանելու հարցը:

Իսպանական ռեժիմն այն ձևով, որով նա իրեն ցուցաբերեց Նիդերլանդներում, վերջին 10 տարում, բոլորովին անընդունելի էր նիդերլանդական ազնվականության համար, որովհետև նրան զրկում էր քաղաքական ազդեցությունից և կշռից: Այդ ազնվականության ծրագիրը հիմնականում անփոփոխ մնաց: Դա կրկին այն արիստոկրատական հանրապետությունն էր, որի մասին գրում էր դեռ Գրանվելլան, մի հանրապետություն, որը պետք է դրվեր Թագավորի գերագույն, նույնպես բոլորովին ֆիկտիվ ղեկավարության տակ: Թագավորի իշխանությունն անհրաժեշտ է— դա գոյություն ունեցող կարգի սիմվոլն է և կարող է հենարան լինել ներքին ցնցումների դեմ: Իսպանացիները շատ լավ էին հասկանում, թե ինչ է ուզում նիդերլանդական արիստոկրատիան: Դոն Ժուանը գրում էր Թագավորին. «Յեթե Նիդերլանդները կառավարվեն իրենց արտոնությունների համաձայն, ապա կարիք չի լինի վախենալու որևէ ապստամբությունից, քանի որ այդ արտոնությունները վերջին հաշվով բոլորովին կաշկանդում են կառավարողի իշխանությունը և այս պատճառով նա, ով այդպես է կառավարում, հանդիսանում է ոչ այլ ինչ, բայց յեթե մի խաղագնդակ նիդերլանդցիների ձեռքում»: Նրա կարծիքով այդպիսի պայմաններում կառավարելն այնպիսի մի գործ էր, որը վայել չէր տղամարդուն. կինն ավելի լավ կլուծեր այդ խնդիրը: Այդ հիման վրա դոն Ժու-

անը խնդրում եր իրեն ազատել իր վրա դրված պարտականություններից։

Հարավային պրովինցիաների տիրող դասակարգերը, Գենտի պացիֆիկացիան մեկնաբանելով հօգուտ կաթոլիկության, այդ պացիֆիկացիան Իսպանիայի դեմ ուղղված պայքարի զենքից վերածեցին Իսպանիայի հետ համաձայնության գալու զենքի։ Շտատները համաձայնվում եյին նոր փոխարքային (դոն Խուանին) ճանաչել միայն այն պայմանով, յեթե նա ճանաչի Գենտի պացիֆիկացիան։ Դոն Խուանը կեղծավորաբար ընդունեց պայմանները և ստորագրեց այսպես կոչված «մշտական էդիկտը» (1577 թ. փետրվարի 2-ին)։ Նա մտավ Բրյուսել, իսպանական զորքերը դուրս հանեց Նիդեռլանդներից, բայց շատ չուշացավ խըզեց հարաբերությունները շտատների հետ և գրավեց Նամյուր բերդն իբրև հենակետ, ուր նորից սկսեց հավաքել զորքերը։ Սպասվում եյին ռազմական ընդհարումներ իսպանացիների հետ։

Պլեբեյության ելույթը հարավային քաղաքներում

Մինչ այս, մինչ այն, 1577 թվի աշնանը Բրյուսելում հանդես եկան քաղաքի մանր-բուրժուական և պլեբեյական տարրերը։ Նրանք պահանջեցին վճռական պայքար մղել իսպանական օկուպացիայի դեմ։ Պետության ազնվականական թեորիայից, վոր նրանց մեկնաբանում եյին «հայրենասերները», անելով հետագա և իհարկե նրանց ուսուցիչների համար անցանկալի տրամաբանական հետևությունները, նրանք լայն դեմոկրատիայի ծրագիր եյին զարգացնում այն մասին, թե երկրի կառավարմանը պետք է մասնակցեն ոչ միայն արտոնյալ դասերը, այլև բոլոր քաղաքացիները, վորպեսզի «յուրաքանչյուր քաղաքացու և բոլորին գործողությունների լիակատար ազատություն տըրվի»։ Բրյուսելում քաղաքային բնակչության լայն խավերն ընտրեցին «18-ի կոմիտե»։ Կոմիտեն սկսեց տնօրինել բոլոր գործերը, թեպետ նրա պաշտոնական խնդիրն եր հետևել ամրությունների կառուցման։ Ունևոր խավերի յեկամուտների վրա հատուկ հարկ դրվեց։ Դադարեցվեց ռենտաների վճարումը։ Քաղաքային բնակչության մասսաների վրա հենվելով, կոմիտեն ազդում եր նաև գլխավոր շտատների քաղաքականության վրա։ Բրաբանտի շտատները նրա ճնշման տակ Վիլհելմ Օրանժեցուն դիկտատոր ընտրեցին. նախկին աքսորականը ժողովրդի ընդհանուր ցնծության ներքո հանդիսավոր կերպով մտավ Բրյուսել։

Հեղափոխական-դեմոկրատական նույնպիսի շարժումներ են տեղի ունենում նաև մյուս քաղաքներում: Գենտում չքավորությունը կալվինականներ Ռիխովեյի և Գամբիզեյի ղեկավարությամբ ապստամբում է քաղաքային հին արտոնությունները վերականգնելու լոզունգով և վարչությունից վտարում է բուրժուազիային: Գենտը դարձավ գլխավոր շտաբներից դրեթե անկախ կոմունա, վորը կազմակերպում էր իր բանակը, յեռանդով ամրացնում քաղաքը, ռեկվիզիցիայի յենթարկում յեկեղեցական թանկարժեք գույքը: Գենտի դեմոկրատիան ռազմական ոգնություն է ցույց տալիս, յերբ նույնպիսի հեղաշրջումներ են տեղի ունենում արևմտյան Ֆլանդրիայի մի շարք ուրիշ քաղաքներում, Բրյուգգեյում, Իպրում և այլն: Ամենուրեք հիմնվում են «18-ի կոմիտեներ», սկսվում էր բողոքական քարոզ և հետապնդվում էին կաթոլիկները: Շարժումներ են տեղի ունենում նաև վալլոնական քաղաքներում: Արրասում հասարակ ժողովուրդը պահանջում էր պատերազմ «իսպանական բռնակալության» դեմ: Այստեղ ևս «18-ի կոմիտե» ստեղծվեց: Նրան պաշտպանում էին «կոշկակարները, մաշակարները, գդլարները, ջուլհակները և այլ արհեստավորները»: «Հոգևոր դասը,— ասում է ժամանակակիցը,— հուսահատության էր հասել, ազնվականները դողում էին վախից: Քաղաքի հարուստներն իրենց սեփական տներում իրենց զգում էին անհաստատ վիճակում»: Քաղաքային պլեբսի այդ շարժումները ջախջախվեցին ազնվականական զորքերի կողմից, բայց նրանք նպաստեցին հարավային պրովինցիաներում սկսված ազնվականական ռեակցիայի աճին և ուժեղացման, ռեակցիա, վորը վերջիվերջո հանգեց Իսպանիայի հետ համաձայնություն կնքելուն և հարավային պրովինցիաների հյուսիսային պրովինցիաներից վերջնականապես անջատվելուն:

Պլեբեյական շարժման դեմ ուղղված ռեակցիան հարավային պրովինցիաներում

Ռեակցիայի ոջախը Հեննեգաույի և Արտուայի պրովինցիաներն էին: Դրանք առավելապես յերկրագործական մարզեր էին: Այստեղ գոյություն ուներ յեկեղեցական խոշոր հողատիրություն, ընդորում տեղական պրելատները այնպես թշնամաբար չէին տրամադրված Իսպանիայի նկատմամբ, ինչպես Ֆլանդրիայի և Բրաբանտի հոգևորականությունը, վորը տուժել էր նոր յեպիսկոպոսություն-

ներ հիմնելուց: Մեծ կշիռ ուներ նաև ազնվականությունը: Հիմա նա մնում էր ամբողջովին կաթոլիկ, վորովհետև ազնվական-կալվինականները, վորոնք առաջ բազմաթիվ էին, մասամբ կոտորվեցին, մասամբ էլ գնացին հյուսիսային նահանգները: Այդ ֆեոդալական տարրերն իրենց կողմը քաշեցին նաև իր ընդհանուր մասսայով հետամնաց գյուղացիությանը, վորը սաստիկ տուժել էր ռազմական գործողություններից և այս պատճառով ձգտում էր դեպի պատերազմի վախճանը:

Թե վորքան ուժեղ էին ֆեոդալական տարրերն այդ մարզերում և, ընդհակառակը, ինչպիսի աննշան քաղաքական կշիռ կարող էին ունենալ այստեղ քաղաքները, այդ յերևում է թեկուզ նրանից, վոր Հեննեգաույի պրովինցիալ շտատներում քաղաքներն ունեյին միայն մի տեղ, իսկ Արտուայում— միայն յերեք տեղ: 1578 թվի հունվարին դոն Խուանը վճռական պարտություն պատճառեց գլխավոր շտատների զորքերին: Հետեվանքն այն յեղավ, վոր գլխավոր շտատների և պարտված բանակի, մանավանդ նրա հրամանատարների միջև խիստ լարված հարաբերություններ սկսվեցին: Սպաները, գլխավորապես Հեննեգաույի և Արտուայի նույն ազնվականները, կազմում են «դժգոհների» խումբ: Քաղաքային ստորին խավերի շարժումը և քաղաքներում կալվինականների կողմից իշխանության գրավումն ուժեղացնում են Իսպանիայի հետ մերձեցում ստեղծելու հոսանքը: Ֆեոդալական խավերն ու խոշոր բուրժուազիան իրենց զգացին մեծ վտանգի մեջ: Հեննեգաույում շտատների նիստերում խոսում էին այն մասին, թե ժամանակ է վորևէ միջոցներ ձեռնարկել, վորպեսզի «պաշտպանվել... անգամ իսպանացիներին գերազանցած աղանդավորների և նրանց կողմնակիցների բարբարոսական բռնակալությունից և լկտիությունից և բացի այդ, խանգարել վոչնչացմանը և կործանմանը, վորոնք սպառնում են մեր սուրբ հավատին (այսինքն կաթոլիկության), ինչպես նաև ազնվականությանը և առհասարակ, բոլոր աստիճաններին ու դասերին»:

Արրասի 1579 թ. հունվարի 6-ի ունիան

Հեննեգաույի շտատներն Արտուայի շտատներին առաջարկեցին միավորվել մի ընդհանուր լիգայում: 1579 թվի հունվարին այդ յերկու մարզերի շտատների դեպուտատները միմյանց միջև համաձայնություն կնքեցին Արրաս քաղաքում (Արրասի 1579 թվի հուն-

վարի 6-ի ունիա): Նրանք հաստատապես վճռեցին հաջողեցնել ընդհանուր համաձայնություն կաթոլիկ թագավորի հետ», վորին նրանք համարում եյին իրենց «որինական տերը և թագավորը»:

Ուտրեխտի 1579 թ. հունվարի 23-ի ունիան

Իբրև հակակշիռ Արրասի կաթոլիկական լիգայի, վոր կազմել եր հարավային պրովինցիաների ազնվականությունը, հյուսիսային պրովինցիաները 1579 թվի հունվարի 23-ին Ուտրեխտում համաձայնություն ստորագրեցին: Ուտրեխտի ունիային մասնակից եյին Հոլանդիան, Զելանդիան, Հելդերնը, Ուտրեխտը և Ոմմելյանդը (Գրոնինգենը), ավելի ուշ, 1580 թվին— Ովերիսսելը: Պրովինցիաները պետք և ընդմիշտ համախմբվեյին այնպես, վոր «կարծես թե նրանք մի պրովինցիա եյին կազմում», և պահպանելով իրենց հին արտոնությունները «պայքարելու ճնշումների կամ բռնությունների դեմ, վորոնք լինում են թագավորի կողմից կամ նրա անունից»: Մի շարք կետերում սահմանված եյին պրովինցիաների պաշտպանություն, փոխադարձ ոգնություն ցույց տալու պարտավորությունները, արտաքին հարաբերությունների կարգը: Կարևորագույն ձեռնարկումները, վորոնք վերաբերում եյին ամբողջ ունիային, պետք և միաձայն ընդունվեյին պրովինցիաների ներկայացուցիչների կողմից: Հայտարարվում եր հավատի դավանության ազատություն, մտցվում եր հարկերի միանման սիստեմ: Ունիային հարեցին Ֆլանդրիայի և Բրաբանտի խոշորագույն քաղաքները,— Անտվերպենը, Գենտը, Իպրը, Բրյուգգեն: Ունիայում իշխող դիրք գրավեցին Հոլանդիան իր ուժեղ առևտրական բուրժուազիայով: Արևելյան ազնվականական–հողատիրական մարզերը միշտ չե, վոր նրա հետ լիակատար համերաշխություն եյին ցուցաբերում: Սկսվեց պատերազմ Իսպանիայի հետ:

Նոր փոխարքան, մեռած դոն Խուանի հաջորդ Ալեքսանդր Ֆարնեզե Պարմացին, Մարգարիտի վորդին, յեղավ վոչ միայն ականավոր զորավար, այլև գերազանց դիվանագետ, վորը կարողացավ ամենից առաջ մի ամբողջ շարք զիջումներով իր կողմը քաշել ռեակցիոն ազնվականությանը, վորը կազմակերպվել եր Արրասի ունիայում: Ըստ Արրասի 1579 թվի մայիսի 17-ի համաձայնության, իսպանական կառավարությունը ճանաչեց Գենտի համաձայնությունը, պրովինցիաներից դուրս տարավ ոտարերկրյա զորքերը, վերականգնեց պրովինցիաների բոլոր

նախկին ազատություններն ու արտոնությունները և խոստացավ բոլոր կարևորագույն պաշտոնները հանձնել բնիկ տեղացիներին: Այսպիսով լիովին իրականանում եյին այն պահանջները, վոր ներկայացնում եր ազնվականական ոպոզիցիան Ֆիլիպպի թագավորության առաջին տարիներում:

Ֆիլիպպ II-ի գահընկեցությունը: Պատերազմի վախճանը

Ուտրեխտի ունիան դեռ չեր նշանակում քաղաքական անջատում իսպանական միապետությունից: Հյուսիսային միացյալ պրովինցիաները դեռ ճանաչում եյին իսպանական թագավորի գերագույն իշխանությունը, բայց լիակատար դժտությունն անխուսափելի յեր. 1581 թվի հունիսի 21-ին գլխավոր շտատները հանդիսավոր կերպով հայտարարեցին Ֆիլիպպ II-ի գահընկեցության մասին: Դրա փաստարկումը վերցվեց միապետության, բռնակալության դեմ մարտնչողների՝ մոնարխոմախների թեորիայից,— «Քանի վոր թագավորն անտեսում ե իր հպատակների շահերը, նա այլևս կառավարող չե, նա բռնակալ ե, վորին չպետք ե հնազանդվել»: Բայց հանրապետություն չհռչակվեց. պետության միապետական գլխի ֆիկցիան պահպանվեց վորպես հրապույր՝ դաշնակիցներին Իսպանիայի դեմ ծավալվող պայքարին մասնակից դարձնելու համար: Ֆրանսիական թագավոր Հենրիխ III-ի ոգնության հույսով պրովինցիաների գերագույն իշխանությունն Որանցու պնդումով առաջարկվեց Հենրիխ III-ի յեղբորը, Անժույի հերցոգին: Բայց Ֆրանսիայի ոգնության հույսերը չարդարացան: Առաջադրում եյին Վիլհելմ Որանցու թեկնածությունը, բայց նրա հանկարծակի մահվան պատճառով այդ պլանները չիրականացան. 1584 թվի հուլիսի 10-ին նա սպանվեց (արդեն 1580 թվին Ֆիլիպպ II-ը նրան հայտարարել եր որենքից դուրս և նրա գլուխը գնահատված եր 25 հազար կրոն): Կառավարման գլուխն անցավ պետական խորհուրդը, բաղկացած 18 անդամից: Վիլհելմի վորդի Մորիցը նշանակվեց խորհրդի նախագահ: Շտատները նորից դիմեցին Հենրիխ III-ին, առաջարկելով պրովինցիաները մտցնել նրա միապետության կազմի մեջ, բայց մերժում ստանալով, ոգնություն խնդրեցին անգլիական թագուհի Յեղիսաբեթից: 1585 թվի վերջում Նիդերլանդներ ժամանեց նրա ֆավորիտը, կոմս Լեյստերը, վեց հազարանոց զորքի գլուխն անցած: Լեյստերը նշանակվեց գլխավոր շտատհալտեր և արտակարգ լիազորություններ ստացավ, բայց

ակսեց խիստ անհամառ քաղաքականություն վարել: Հետապնդելով գլխավորապես անգլիական շահերը, նա պրովինցիաներին արգելեց Իսպանիայի հետ առևտուր անել: Այդ հակառակ էր հոլանդական բուրժուազիայի շահերին: Նրա մղած պատերազմը նույնպես անհաջող էր: Նա ծայրահեղ դժգոհություն առաջացրեց բուրժուազիայի միջավայրում ու հետ կանչվեց (1587 թ. դեկտեմբեր): Հյուսիսային պրովինցիաների ռազմական ուժերի գլուխ նշանակվեց Վիլհելմի որդի Մորից Օրանցին:

Ալեքսանդր Պարմացու ռազմական գործողությունները սահմանափակվում էին քաղաքների սիստեմատիկ պաշարմամբ: Քաղաքները գրավվում էին սովի մատնվելու միջոցով, բայց դրանց գրավմանը չէին հետևում սովորական ջարդերը և բնակչության կոտորածը: Կապիտուլյացիայի պայմանները սովորաբար խիստ մեղմ էին լինում: Այսպես, 1584 թվին գրավվեցին Բրյուգգեն և Գենտը, 1585 թվին— Բրյուսելը: Շատ համառ բնույթ էր կրում Անտվերպենի պաշարումը (գրավվեց 1585 թ. օգոստոսին): Այդ ժամանակ յերկու կողմերն էլ ռազմա-տեխնիկական մեծ հնարամտություն ցուցաբերեցին: Զինվորական յերիտասարդությունն ամբողջ Յեվրոպայից հավաքվում էր Անտվերպենի մոտ, ռազմական տեխնիկայի վերջին կատարելագործությունը սովորելու: Անտվերպենի առումից հետո հյուսիսային պրովինցիաներին անմիջականորեն պատերազմական վտանգ էր սպառնում, բայց Անգլիայի և Ֆրանսիայի հետ պատերազմի մեջ մտած Իսպանիան, չնայելով 1581 թվին Փորթուգալիայի հետ միանալուն, այլևս չէր կարող վերստին իրեն միացնել անջատված պրովինցիաները: Մորից Օրանցին, վորը ռազմական անկասկածելի տաղանդ էր ցուցաբերում, վերակազմեց բանակը և անցավ հարձակման, գլխավորապես դեպի արևելք: Նրա հաջողությունները նշանակալից չափով պայմանավորված էին բանակի լավ հանդերձանքով և պահվածքով: Սակայն, չնայելով ռազմական հաջող գործողություններին, Մորիցը չարշավեց դեպի հեռավոր հարավը՝ այնտեղի պրովինցիաները գրավելու համար. դրանց միացումը հյուսիսային Նիդերլանդներին՝ վոչ մի օգուտ չէր բերի վերջիններին, իսկ առևտրական Անտվերպենի միացումն ուղղակի վտանգավոր էր նրա ամբողջ առևտուրը գրաված Ամստերդամի համար:

1609 թվի զինադադարը

Երկարատև բանակցություններից հետո, որոնք սկսվել էին Հարավային պրովինցիաների նախաձեռնությամբ, 1609 թվին 12 տարով զինադադար կնքվեց։ Իսպանիան ճանաչեց Հյուսիսային Միացյալ պրովինցիաների անկախությունը և թույլ տվեց, որ հոլանդացիներն առևտուր անեն նրա գաղութների հետ, որոնք հիմա, Փորթուգալիայի միացման ժամանակից սկսած, ընդգրկում էին նաև արևելա-հնդկական ամենահարուստ տիրույթները։ Շելդայի գետաբերանն առևտրի համար փակ մնաց։

Հարավային Նիդերլանդները բոլորովին քայքայվեցին պատերազմից, որը տևեց գրեթե 40 տարի։ Հյուսիսային պրովինցիաները քիչ չնպաստեցին նրա հետագա տնտեսական անկմանը։ Մի քանի անգամ յենթարկվելով ավերածության, կտրված լինելով աշխարհից, Անտվերպենը կորցրեց իր տնտեսական նշանակությունն իբրև կարևորագույն շուկա գաղութային ապրանքների, որոնց բեռներն այնուհետև հոսում էին դեպի Ամստերդամ։

Կոնֆիսկացիաներից, ռազմական ջարդերից և զորքեր պահելուց առաջացած ավերածությունը, խոշոր և մանր բուրժուազիայի, վաճառականների, ձեռնարկուների, արհեստավորների մասսայական էմիգրացիան բոլորովին քայքայեցին Ֆլանդրիայի և Բրաբանտի արդյունաբերությունն ու առևտուրը։ Էմիգրացիան հիմա ուղևորվում էր դեպի հյուսիսային պրովինցիաները, նա ընդգրկեց նաև ինտելիգենցիայի խավերը։ Կարելի յե հաշվել տասնյակ գիտնականներ, մաթեմատիկոսներ, լեզվաբաններ, աստվածաբաններ, բուսաբաններ, աշխարհագրագետներ, հրատարակիչներ, ինժեներներ, նկարիչներ, որոնք Հարավային Նիդերլանդներից գաղթեցին Միացյալ պրովինցիաները։ Վերջիններիս տնտեսական և կուլտուրական բարգավաճումը զգալի չափով պարտական էր հարավից յեկած այդ տարրերին։

Նիդերլանդական ապստամբությունը բուրժուական առաջին հեղափոխությունն էր, թեպետ այն սահմանափակ նշանակություն ունեցավ։ Դրանումն է նրա առաջադիմական կարևոր դերը։ Այն հանգամանքը, որ իսպանական աբսոլուտիզմի լծից ազատագրվեց Նիդերլանդների միայն հյուսիսային մասը, բացատրվում է հարավի համեմատությամբ հյուսիսի սոցիալ-քաղաքական առանձնահատկություններով։ Հյուսիսում բուրժուա-

գիան պայքարի ընթացքում շարունակ ամրապնդվում էր, համալրվելով առավել յեռանդուն տարրերով, վորոնք ստիպված էյին փախչել Հարավից: Հյուսիսի բանվորական մասսաները, վորոնց մի զգալի մասը ծառայում էր նավատորմում, չնայելով նրանց և նավատերերի միջև գոյություն ունեցող դասակարգային ներհակություն, Իսպանիայի դեմ մղած պայքարում ավելի սերտ էյին կապված բուրժուազիայի հետ, քան Հարավի մանր բուրժուազիան և պլեբեյությունը: Հարավն ավելի մեծ չափով էր պահպանել իր արիստոկրատական բնույթը և այս պատճառով քաղաքներում պլեբեյական մասսաների շարժումը, վորը վախեցրեց թե՛ արիստոկրատիային և թե՛ բուրժուազիայի ամենահարուստ և պահպանողական տարրերին, վերջին հաշվով օգտակար յեղավ Իսպանիային: Պետք է մատնանշել նիդերլանդական հեղափոխության նաև մի բնորոշ գիծը. վորպես ամենավաղ բուրժուական հեղափոխությունը Յեվրոպայում, այն ժողովրդական մասսաներին և դեռ հենց նոր ստեղծվող պրոլետարիատին գտավ բուրժուազիայի դեմ ուղղված պայքարին անպատրաստ վիճակում, այնպես վոր նրա հետևանքը յեղավ այն շահագործման չափազանց ծանր ձևը, վորին յենթարկվեցին այդ մասսաները: Մարքսն այդ հիանալի մատնանշել է «Կապիտալում». «Հոլանդիայի ժողովրդական մասսաներն արդեն 1648 թվին չափից դուրս աշխատանքից ավելի էյին տառապում, ավելի աղքատ էյին և ավելի դաժան ճնշման էյին յենթարկվում, քան մնացած ամբողջ Յեվրոպայի ժողովրդական մասսաները»[1]:

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVII, եջ 824:

ԳԼՈՒԽ X

ՀՈԼԱՆԴԻԱՆ XVII ՅԵՎ XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Միացյալ պրովինցիաների քաղաքական կարգը

Միացյալ պրովինցիաների պետությունն իրենից ներկայացնում էր ո՛չ միատեսակ մի ամբողջություն— առանձին պրովինցիաներ միմյանցից զգալիորեն տարբերվում էին բնական պայմաններով, տնտեսության բնույթով, տնտեսական զարգացման աստիճանով և բնակչության սոցիալական կազմով, որը մի քանի մարզերում բավական փոխվել էր պատերազմի ժամանակ: Այն պրովինցիաները, որոնք մտան Ուտրեխտի ունիայի մեջ, քաղաքականապես շատ թույլ էին կապված միմյանց հետ: Ժամանակակիցները գտնում էին, որ դաշինքը գոյություն ունի միայն ընդհանուր թշնամուց պաշտպանվելու շնորհիվ և կքայքայվի խաղաղ ժամանակի առաջին իսկ տարիներում: Ամենից հետամնաց էին արևելյան պրովինցիաները: Օվերիսսելում և Հելդերնում դեռ XVII և XVIII դարերում ֆեոդալական հողային հարաբերությունները իրենց լիակատար ուժի մեջ էին: Հելդերնը մանր, թվաչատ ազնվականություն ունեցող մի մարզ էր, Օվերիսսելը չքավոր, սակավահող գյուղացիական բնակչություն ուներ: Քաղաքային կենտրոններն աննշան էին: Ֆրիսլանդիայում գերակշռում էին ազատ գյուղացիությունը և ձկնորսական բնակչությունը, ընդ որում գյուղացիությունը մասնակցում էր երկրի քաղաքական կյանքին, ազնվականների հետ ընտրելով շտատների դեպուտատներին:

Հոլանդիայում և Զելանդիայում ազնվականությունը գրեթե բոլորովին չքացավ և իշխող դիրք էր գրավում քաղաքային բուրժուազիան, որը դաժան կերպով շահագործում էր գյուղական բնակչությանը և ձգտում նրա վրա բարդել հարկերի ծանրությունը:

Միացյալ պրովինցիաներում գերագույն օրգան էին հան-

գլխանում գլխավոր շտատները, որոնց մեջ յուրաքանչյուր պրովինցիա ուներ անսահմանափակ թվով դեպուտատներ, բայց ընդամենը մեկական ձայնով: Որոշումները պետք է ընդունվեին միաձայն: Դեպուտատները խիստ սահմանափակ լիազորություններ ունեին և որևէ չնախատեսնված հարցեր ծագելու դեպքում պետք է հարցնեին, թե այդ առթիվ ինչ են որոշել իրենց ընտրողները: Վերջին հաշվով գերագույն իշխանությունը պատկանում էր քաղաքային բուրժուազիայի վերնախավին, որը նիստեր էր ունենում քաղաքային մագիստրատներում, և ազնվականության ու գյուղացիության տեղական ներկայացուցչություններին (վերջիններս— միայն Ֆրիսլանդիայում): Գլխավոր շտատների հետ մեկտեղ կենտրոնական ընդհանուր-միութենական օրգան էր պետական խորհուրդը, որտեղ Հոլանդիան ուներ յերեք ներկայացուցիչ, Զելանդիան, Ֆրիսլանդիան և Գրոնինգենը— յերկուական ներկայացուցիչ, Ուտրեխտը, Հելդերնը և Ովերիսելը— մեկական ներկայացուցիչ: Որանյան իշխանները յերկու ձայն ունեին: Քվեարկությունը տեղի յեր ունենում գլուխ առ գլուխ: Խորհուրդը գլխավորապես ռազմական գործեր էր վարում: Գլխավոր շտատները նշանակում էին բանակի հրամանատարին (գեներալ-կապիտանին) և նավատորմի հրամանատարին (գեներալ-ադմիրալին): Այս պաշտոնները մեծ մասամբ գրավում էին Որանյան իշխանները: Յուրաքանչյուր պրովինցիա կառավարում էին պրովինցիալ շտատները— քաղաքների և ազնվականության ներկայացուցիչների ժողովը: Հոգևորականությունը միայն Ուտրեխտում ուներ իր ներկայացուցիչները, որոնք ընտրվում էին միայն ազնվականների և քաղաքացիների կողմից, իսկ Ֆրիսլանդիայում— նաև գյուղացիության կողմից: Վետոյի իրավունքը, մանավանդ ֆինանսական հարցերում, լայնորեն կիրառվում էր պրովինցիալ շտատներում: Պրովինցիալ շտատներն առանձնացնում էին հատկապես լիազորված մի անձնավորություն, այսպես կոչված փաստաբան կամ խորհրդական,— պրովինցիայի պենսիոնարին: Առանձնահատուկ նշանակություն ձեռք բերին Հոլանդիայի պրովինցիաների պենսիոնարները՝ նրանց թվումն էին Նիդերլանդների խոշորագույն քաղաքական գործիչներ Ոլդենբարնեվելդեն և Յան դե Վիտը:

Յուրաքանչյուր պրովինցիայում մինչհեղափոխական ժամանակից պահպանվել էր կայսերական փոխանորդի, շտատհալտե-

քի պաշտոնը։ Այս պաշտոնն իրենց ձեռքում միացնում էին Օրանյան իշխանները։ Նրանք միաժամանակ շտատհալտերներ էին լինում մի քանի պրովինցիաներում (Վիլհելմ I-ը— երեք, Մորիցը— վեց պրովինցիաներում)։ Պրովինցիալ շտատհալտերությունը երբեմն ձգտում էր վերածվել ընդհանուր-միութենական ժառանգական պրեզիդենտության։

Քաղաքական պայքարը Միացյալ պրովինցիաներում։ «Պրովինցիալիստներ» և «ունիտարիստներ»

Հոլանդիան իր տնտեսական զարգացմամբ և քաղաքական նշանակությամբ ունիայում իշխող դեր էր գրավում։ Պրովինցիաների բնակչության մոտ երկու երրորդ մասը (XVII դարում մոտ 2 միլիոն մարդ) ապրում էր Հոլանդիայում։ Հոլանդիան 1616 թվին ծածկում էր պետական բոլոր ծախսերի 57%-ը։ Այս պատճառով Հոլանդիայի կառավարող խավերը ձգտում էին քաղաքականապես լիովին իշխել ունիայում, ամենալիակատար չափով շահագործել ունիան իրենց շահերի համար, ամենից առաջ քաղաքային վաճառականական օլիգարխիայի վերնախավի շահերի համար։ Հոլանդիան պայքարում է ունիայի կենտրոնական օրգանների, գլխավոր շտատների դեմ և իբր դրանց հակակշիռ, առաջ է քաշում առանձին պրովինցիաների ավտոնոմիան, ազատությունը—«պրովինցիալիզմը»։ «Նիդերլանդների Միացյալ շտատները հանրապետություն չեն կազմում, յուրաքանչյուր պրովինցիա առանձին հանրապետություն է»,— ասում էր դե Վիտը, հոլանդական բուրժուազիայի առաջնորդներից մեկը։ Նիդերլանդական բուրժուազիան իրենից չէր ներկայացնում սերտորեն համախմբված սոցիալական մի գրուպպա։ Այսպես, օրինակ, Զելանդիայի և Հոլանդիայի բուրժուազիայի միջև գոյություն ուներ հակասություն, վորովհետև Հոլանդիայի բուրժուազիան հետ էր մղել զելանդական հին առևտրական քաղաքները (Միդդելբուրգը) և Զելանդիայի հետ մեկտեղ չէր քայլում առևտրական շահերի ուղղությամբ (Հոլանդիայի մեծ շահագրգռվածությունը բալթյան առևտրով)։

Իբրև հակակշիռ Հոլանդիայի «պրովինցիալիզմի», վորը քողարկում էր միության մեջ հեգեմոնիա ձեռք բերելու նրա ձգտումը, շտատհալտերն իրեն առաջ էր քաշում վորպես պաշտպան ընդհանուր-միութենական շահերի, պրովինցիալ շահերի հանդեպ նրանց դերակշռման, կենտրոնական օրգանների ուժե-

ղացման՝ իբրև հակակշիռ տեղական օրգանների։ «Ռեմոնստրանտիզմի» այդ սկզբունքների շուրջը, որոնց ջատագովներն Օրանյան իշխաններն էին (այստեղից և ռեմոնստրանտիզմի սերտ կապն օրանժիզմի հետ), համախմբվում էին ունիայի բոլոր հակահոլանդական տարրերը, ինչպես նաև բնակչության հակաբուրժուական խավերը բուն Հոլանդիայում։ XVII և մասամբ XVIII դարում Նիդերլանդներում «ռեմոնստրանտիզմ» և «պրովինցիալիզմ» լոզունգներով էր ընթանում ներքին սոցիալական և քաղաքական պայքարը։

Այդ հակասությունները յերևան յեկան Միացյալ պրովինցիաների հանրապետության կազմվելու առաջին իսկ մոմենտին. նրանք դրսևորվեցին 1609 թվին զինադադար կնքելուց հետո, արդեն առաջին տարիներում։ Իբր առիթ ծառայեցին այն ընդհարումները, որ տեղի ունեցան կրոնական հողի վրա, մի կողմից այսպես կոչված հոմարականների (ատովածարան Հոմարի անվամբ), խիստ կալվինականների — որոնք անհամբերատարությամբ էին վերաբերվում դեպի ամենաչնչին դոգմայական շեղումները և Նիդերլանդներում կազմված բազմաթիվ աղանդները — մյուս կողմից ավելի ազատամտորեն տրամադրված արմինիականների (աստվածաբան Արմինիայի անվամբ) միջև։ Հոմարականներին պաշտպանում էր զինադադար կնքելուց դժգոհ ազնվականությունը, որն ապրում էր պատերազմով և այս պատճառով առանձնապես անհաշտ էր տրամադրված դեպի Իսպանիան և իր կրոնական հայացքներով պարզապես կալվինական էր։ Նրան գլխավորում էր զինադադարից դժգոհ, հաղթական զորավար, շտատհալտեր Մորից Օրանցին, որն անտարբեր էր դեպի կրոնական հարցերը։ Հոմարականներին աջակցում էր Զելանդիայի և մի քանի ուրիշ պրովինցիաների բուրժուազիայի մի մասը, որը դժգոհ էր հոլանդական վաճառականական օլիգարխիայից։ Արմինիականների թիկունքում կանգնած էր գլխավորապես հոլանդական բուրժուազիան՝ Հոլանդիայի պենսիոնար Օլդենբարնեվելդեյի գլխավորությամբ, բուրժուազիան, որն իր կողմը գրավեց Ուտրեխտ և Օվերիսսել պրովինցիաները (որոնք պահպանել էին կաթոլիկ միջնախավը)։ Այդ յերեք պրովինցիաները գլխավոր շտատներում բողոքեցին ազգային սինոդի գումարման դեմ և սկսեցին կազմակերպել իրենց զինվորական ուժերը, — քաղաքային գվարդիան, որը

յենթարկվում եր վոչ թե շտատհալտերին, այլ քաղաքային մագիստրատներին: Ընդհարումը վերջացավ ունիտարների հաղթանակով: Մորիցը, գլխավոր շտատներից ոժանդակություն ստանալով, զինաթափեց քաղաքային ջոկատները, պաշտոնանկ արավ քաղաքային խորհուրդների՝ իրեն թշնամի անդամներին— պրովինցիալիզմի կողմնակիցներին, ձերբակալեց Ոլդենբարնեվելդեյին և նրան հանձնեց հատուկ հանձնաժողովի դատին (վոր բոլորովին ապորինի յեր): Ոլդենբարնեվելդեն մեղադրվեց Իսպանիայի հետ դավաճանական հարաբերություններ պահպանելու համար և մահապատժի յենթարկվեց (1619 թ. մայիսի 13):

1621 թվից վերսկսված յերկարատև (մինչև 1648 թ.) պատերազմն Իսպանիայի դեմ՝ ել ավելի ուժեղացրեց «ունիտարների» ազդեցությունը և մեծացրեց շտատհալտերի նշանակությունը,— վորպես միապետական իշխանության, վորը տնորինում ե հանրապետության ուժերը: Չնայելով Մորիցի ռազմական անհաջողություններին, նրա մահից (1625 թ.) հետո գեներալ-կապիտան և գեներալ-ադմիրալ հռչակվեց նրա յեղբայր Ֆրեդերիկ-Հենրիխը, և վեց պրովինցիաները նրան շտատհալտեր ընտրեցին:

Իսպանիայի դեմ պատերազմը մղվում եր վո՛չ առաջվա միահամուռությամբ և ենտուզիազմով: Հոլանդիան հաշտություն կնքելու կողմնակից եր: Ամստերդամի վաճառականությունն ամենից շատ վախենում եր այն բանից, վոր շտատհալտերը կգրավի Անտվերպենը և այդ դեպքում Ամստերդամի այդ ամենավտանգավոր մրցակիցը կմտնի միության կազմի մեջ: Այս պատճառով հիշյալ վաճառականությունը նույնիսկ ռազմական հանդերձանքով և պարենով ողնում եր Անտվերպենի իսպանական կայազորին, յերբ Անտվերպենը պաշարված եր շտատհալտերի զորքերով: Հաշտության դաշնագրով, վոր յերկար բանակցություններից հետո և վոչ առանց որանժիստների ուժեղ դիմադրության կնքվեց Մյունստերում, 1648 թվին, վերջնականապես ճանաչվեց Միացյալ պրովինցիաների անկախությունը: Հռոմեական սրբազան կայսրության հետ նրանց ձևական կապը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկվեց: Ունիային միացվեց այն յերկրների մի մասը, վորոնք նվաճվել եյին Ֆլանդրիայում, Բրաբանտում և Լիմբուրգում, գեներալիտետային (ամբողջ միությանը պատկանող) յերկրների անվան տակ, վորոնք գլխավոր

շտատներում ներկայացուցչություններ չունեյին: Շելդայի գետաբերանը փակված էր մնում, Անտվերպենը կտրված էր ծովից:

Հաշտության կնքելը Հոլանդիայի բուրժուազիայի հաջողությունն էր, բուրժուազիայի, որն ավելի և ավելի մեծ հաջողություն էր ձեռք բերում միության մեջ, բայց դեռ բավականաչափ ուժեղ չէր, որպեսզի լիակատար հեգեմոնիա նվաճեր: Օրանժիստները, որոնք խմբվում էին շտատհալտերի շուրջը, դեռ զգալի ուժ էին ներկայացնում իրենցից: Ֆրիդրիխ-Հենրիխի հաջորդը, նրա որդի Վիլհելմ II-ը բավականաչափ իշխանություն ուներ: Նա շտատհալտեր էր վեց պրովինցիաներում, գեներալ-ադմիրալ էր և գեներալ-կապիտան: Քիչ մնաց, որ ներքին պատերազմի վերածվեր այն ընդհարումը, որ տեղի ունեցավ նրա և հոլանդական շտատների միջև, բանակը խոշոր չափով կրճատելու հարցի շուրջը, որի վրա պնդում էր Հոլանդիան, որը ցանկանում էր թուլացնել Վիլհելմ II-ի և օրանժիստների ազդեցությունը և նեղվում էր զորքերի վրա կատարվող մեծ ծախսերի իր բաժնից: Վիլհելմի զորքերը սկսեցին պաշարել Ամստերդամը և նահանջեցին միայն հեղեղման սպառնալիքից դրդված: Գործը վերջացավ կոմպրոմիսով: Զորքերի քանակության հարցը պետք է լուծեյին գլխավոր և ոչ թե պրովինցիալ շտատները: Բայց Վիլհելմ II-ի մահից հետո երկար ժամանակով գերակշռող դարձավ «պրովինցիալիստների» կուսակցությունը: 1651 թվի հունվարին ազգային մեծ ժողովում Հոլանդիային հաջողվեց անցկացնել մի որոշում շտատհալտերի պաշտոնը միայն այն պրովինցիաներում պահելու մասին, որոնք այդ կցանկանան: Վերացվեցին մշտական գեներալ-կապիտանի և գեներալ-ադմիրալի պաշտոնները, կրճատվեց զորքը, որը սկսեց համարվել յոթ առանձին պրովինցիալ բանակների միացում: Ամբողջ իշխանությունը փաստորեն անցավ Հոլանդիայի պրովինցիալ շտատներին, այսինքն հոլանդական բուրժուազիայի վերնախավի ձեռքը, իսկ այդ բուրժուազիան առաջ քաշեց բացառիկ տաղանդի տեր մի քաղաքագետի՝ հանձին Հոլանդիայի պենսիոնար Յան դե Վիտտի: Միության մեջ Հոլանդիայի հեգեմոնիան համապատասխանում էր նրա բուրժուազիայի զարգացման, նրա առևտրի, զա-

ղութային ձեռնարկությունների հսկայական աճին, ծովագնացության, մեծ կապիտալների կուտակման:

Հոլանդական բուրժուազիայի ամբողջական տիրապետության ժամանակը զուգադիպում է այն դաժան պայքարի հետ, վոր նա մղում էր Անգլիայի դեմ, ծովային հեգեմոնիա ձեռք բերելու համար:

Հոլանդիայի տնտեսական նշանակությունը XVII—XVIII դ. դ.

Միացյալ պրովինցիաներն այդ ժամանակ դարձան Յեվրոպայի ամենաուժեղ առևտրական տերությունը: Նրանց առևտրական նավատորմը գերազանցում էր յեվրոպական մյուս բոլոր նավատորմներին (15 հազար նավ ամբողջ Յեվրոպայի 25 հազար նավերից):

Հոլանդիան դարձավ Հանզայի ժառանգ և միջնորդ՝ Հյուսիսային ու Հարավային Յեվրոպայի միջև: Արդեն XVI դարի կեսին Ամստերդամն այդ առևտրի գլխավոր կենտրոնն էր: Հոլանդիայի համար առաջնակարգ նշանակություն ուներ առևտուրը Բալթիկայի հետ, վորտեղ հոլանդացիք տիրապետող դիրք էին գրավում. նրանց էր պատկանում այն բոլոր նավերի մոտ յերկու յերրորդ մասը, վորոնք 1578—1657 թ. թ. ընթացքում անցան Զունդի վրայով: Առանձնապես մեծ նշանակություն ուներ հացի առևտուրը: Արդեն XV դարից Ամստերդամն իր մեջ էր կենտրոնացրել այն, իսկ XVII դարի կեսերին նա դարձավ հացի խոշորագույն շուկա Յեվրոպայում: Մերձբալթյան հացի արտահանությունը վոչ միայն հսկայական օգուտներ էր տալիս Ամստերդամի վաճառականությանը, այլև նրա առաջ բաց էր անում Փորթուգալիայի և Իսպանիայի նավահանգիստները, վորովհետև նույնիսկ պատերազմի ժամանակ իսպանական կառավարությունը չէր կարող դադարեցնել հացի ներմուծումը: Հոլանդացիք հացը տանում էին Միջերկրական ծով, Լիվորնո և Ջենովա: 1597 թվին հոլանդական ավելի քան 400 նավեր անցան Ջիբրալտարը: Բալթիկայից տանում էին յերկաթ, նավաշինական փայտեղեն, մեղրամոմ: Գրեթե բոլոր գաղութային ապրանքները, հռենոսյան և ֆրանսիական ամբողջ գինին, վոր Զունդի վրայով դեպի արևելք էր ուղարկվում, տարվում էր հոլանդական նավերով: XVII դարի առաջին կեսում Ֆրանսիայի արտաքին առևտրի մեծ մասը գտնվում էր հոլանդացիների ձեռքում:

Տիրելով Հռենոսի գետաբերանին, Հոլանդիան իշխում եր արևմտյան Գերմանիայի առևտրի վրա: Հնդկաստանի հյուսիսային ճանապարհը գտնելու անհաջող փորձը հոլանդացիներին հասցրեց Սպիտակ ծովը, վորի վրայով առևտրական աշխույժ կապեր սկսվեցին Մոսկվայի հետ: Ռուսական մորթիներն ու մեղրամոմը հաճախ Սպիտակ ծովից հոլանդական նավով գնում եյին ուղիղ դեպի Իտալիա:

Հոլանդիան ժառանգեց քայքայված Անտվերպենի գաղութային առևտուրը: Այնտեղից գաղթած վաճառականներն իրենց հետ բերին վոչ միայն կապիտալ, այլև գաղութային առևտրի փորձ, գործարարական լավ կապեր Իսպանիայի և Փորթուգալիայի հետ, բայց Ամստերդամը գերազանցեց Անտվերպենին,— նրա նավերը հասան մինչև գաղութային յերկրները, այս կերպ ավելորդ դարձնելով Լիսաբոնի միջնորդական դերը գաղութային առևտրում:

Արևմտա-Հնդկական ընկերությունը յեվ Հոլանդիայի գաղութային տնտեսությունը

Արդեն XVI դարի վերջում, չնայելով Իսպանիայի դեմ մղվող պատերազմին, Հոլանդիայի առևտուրն այնքան զարգացավ, վոր պլաններ են ծագում առևտրական անմիջական հարաբերություններ սկսել Արևելյան Հնդկաստանի հետ և ազատվել փորթուգալական միջնորդությունից: Այդ պլանների իրականացման դրդիչ ծառայեց հոլանդական այն նավերի կալանքը, վորոնք 1585 թվին գտնվում եյին իսպանական և փորթուգալական նավահանգիստներում: Սակայն նավերը շուտով ազատվեցին, վորովհետև, չնայելով պատերազմին, Իսպանիան և Փորթուգալիան շարունակում եյին առևտուր անել Նիդերլանդների հետ, վորպեսզի հաց գնեյին և վաճառահանեյին Հնդկաստանից բերած համեմունքները: Սակայն այն ժամանակից հոլանդացիները փորձում են անհնարին դարձնել նման փաստերի կրկնվելը և կազմակերպում են մի քանի եքսպեդիցիա դեպի Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը, վորպեսզի իրենք Ասիայի շուրջը ճանապարհ գտնեն դեպի Հընդկաստան: Այդ փորձն իհարկե ձախողվում ե. հոլանդացիք Նոր Յերկրից և Վայգաչ կղզուց ավելի հեռու չգնացին, բայց նրանք Վիլհելմ Բարենցի ղեկավարությամբ մանրակրկիտ կերպով հետազոտեցին այդ ծովերը և մի շարք կետերի անուններ տվին, վորոնք պահպանվել են մինչև հիմա:

Հսկայական արդյունք տվեց Ամստերդամի վաճառականների կազմակերպած Եքսպեդիցիան դեպի Հնդկաստան, Աֆրիկայի շուրջը յեղած արդեն ծանոթ ճանապարհով: Առաջ հոլանդական շատ ծովագնացներ փորթուգալական նավերով գնում եյին Հնդկաստան: Այսպիսով դեպի այնտեղ տանող ճանապարհը ծանոթ եր հոլանդացիներին: Եքսպեդիցիան վերադարձավ 1597 թվին և հնդկական ապրանքներ բերեց: Դրանից հետո ամեն տարի ընկերություններ են կազմվում դեպի Հնդկաստան նավեր ուղարկելու համար, իսկ 1602 թվին այդ բոլոր ընկերությունները միաձուլվում և կազմում են Արևելա-Հնդկական ընկերությունը: Վերջինս հիմնված եր ընդամենը 21 տարով: Բավական յերկար ժամանակ նա պահպանում եր առանձին ընկերությունների միավորության բնույթը: Նա բաժանվում եր տեղական վեց պալատների (կամերաների): Սրանցից յուրաքանչյուրն ընդգրկում եր Նիդերլանդների մի վորոշ ռայոնը և տնորինում եր գործերն այդ ռայոնի սահմաններում: Ընկերության գործերը կառավարում եյին պալատների դեպուտատների ընդհանուր ժողովը, դիրեկտորները—ընդամենը 60 հոգի: Ընկերության կապիտալը գոյանում եր «ակցիաներից» («ակցիա» տերմինը, վոր նշանակում է փայ, հոլանդական ծագում ունի: Ակցիաներ— փայատեր: Այս տերմինն առաջին անգամ գործածվել է 1610 թվին): XVII դարի վերջում Արևելա-Հնդկական ընկերության ակցիաները պատկանում եյին 550–600 ակցիոներների: Բայց ակցիա ունենալը դեռ իրավունք չեր տալիս մասնակցելու ընկերության գործերի կառավարմանը: Հասարակ ակցիոներներն իրավունք ունեյին միայն դիվիդենդ ստանալու, վորը սկզբում տրվում եր ապրանքներով և միայն 1699 թվից— դրամով: Ընկերության գործերը վարում եյին միայն գլխավոր մասնակիցները: Տոն եր տալիս Ամստերդամի բուրժուազիայի վերնախավը, նա պաշտպանում ու կենսագործում եր ընկերության ամենախիստ մոնոպոլիան արևելա-հնդկական առևտրում: Նա առաջադրում եր ամենախիստ մոնոպոլիայի սկզբունքը վորպես հաջողության անհրաժեշտ պայման այնպիսի վտանգավոր մրցակիցների դեմ մղվող պայքարում, ինչպես անգլիացիները և նրանց Արևելա-Հնդկական ընկերությունը, բայց մոնոպոլիան նաև լավ միջոց եր ապահովելու վստահելի և մեծ յեկամուտ: Ընկերության 200 տարվա գոյության ընթացքում յուրաքան-

հյուր ակցիոններին տարեկան միջին հաշվով վճարվում եր դիվիդենդի 18 տոկոսը: Ընկերության գործերը վարողների մի փոքրիկ խմբակը, ստանալով անհամեմատ ավելի բարձր յեկամուտներ, վորոնք յերբեմն կազմում եյին 100 տոկոս և ավելի, խորապես գաղտնի տնօրինում եր բոլոր գործերը: Նա վոչ վոքի վոչ մի հաշիվ չեր տալիս: Նա հեշտությամբ կարող եր կլորանել ընկերության համար շահավետ ձեռնարկումները, վորովհետև ընկերության դիրեկտորների մեծ մասը միաժամանակ հանդիսանում եր Հոլանդիայի կառավարություն:

Արևելա-Հնդկական ընկերությունն օգտվում եր ամբողջ Հնդկական և Մեծ օվկիանոսների վրա կատարվող առևտրի մոնոպոլիայով: Նա սուվերեն պետության նման՝ գլխավոր շատաների անունից պայմանագրեր և դաշինքներ եր կնքում, զորքեր եր պահում, դրամ կտրում, ուներ բերդեր, իր դատարանն ու իր ադմինիստրացիան: Ընկերության առևտրական գործունեությունը հանգում եր տրոպիկական յերկրների բնական հարստությունների ամենաբարբարոսաբար քայքայելուն և բնիկների շահագործմանը: Նրա գործունեության գլխավոր ասպարեզն եյին Զոնդյան և Մոլուկկյան կղզիները, վորտեղից նա դուրս մղեց փորթուգալացիներին: Եյապես վոչ մի առևտուր, իբրև մոտավորապես համարժեք առարկաների փոխանակություն, տեղի չեր ունենում: Յերբեմն վաճառում եյին սոսկ կողոպտած ապրանքը: Ապրանքների մի մասը ընկերությունը ստանում եր տեղական մանր իշխաններից իբրև հարկ: Սովորաբար ընկերության և տեղական իշխանների միջև պայմանագիր եր կնքվում, վորի հիման վրա բնակչությունը պարտավոր եր վորոշված գնով պրոդուկտներ հայթայթել ընկերությանը: Ընկերությունն այդ գինը սահմանում եր բոլորովին կամայականորեն: Ընկերությունը հազվադեպ դեպքերում եր վճարում դրամով, սովորաբար վճարում եր ապրանքներով, վորոնք յերբեմն անպետք եյին լինում և հաճախ բոլորովին հարկավոր չեյին բնիկներին: Ընկերությունը ձեռք եր բերում բրինձ, պղպեղ, շաքար, կաշի, սուրճ, դարչին, այդ գործարքներից վաստակելով 500, 600 և 1000 տոկոս: Նա ձգտում եր լիակատար մոնոպոլիա պահպանել ամենաարժեքավոր եկզոտիկ համեմունքների նկատմամբ,— մուսկատի ծաղիկ, մուսկատի ընկույզ և մեխակի ծառ: Վորպեսզի բնիկները չկարողանային այդ համե-

մունքները կողմնակի կերպով վաճառել վորևե մեկին, ընկերությունն ամենաբարբարոսաբար փչնչացրեց մուսկատի ընկույզենու անտառները և մեխակի ծառի տունկերը բոլոր կղզիներում, բացի մի կղզուց, վորը մուսկատի ընկուզենու համար եր և մի փոքրիկ արշիպելագից— մեխակի ծառի համար: Այդ կղզիների բնակչությունը կամ կոտորվեց, կամ ստրկացվեց, իսկ տունկերը բաժանվեցին ընկերության պաշտոնյաների և սպաների միջև: Գների անկումից խուսափելու համար ընկերությունը հսկայական քանակությամբ վառում եր այդ ամենաարժեքավոր պրոդուկտները:

Բոլոր յեվրոպացիներից միայն հոլանդացիներն եյին առևտուր անում Ճապոնիայի հետ, բայց այստեղ նրանք պետք ե խիստ ճնշիչ ռեժիմի յենթարկվեյին: Այնուամենայնիվ Ճապոնիայի հետ յեղած առևտուրը մինչև 100 տոկոս ոգուտ եր տալիս:

«Հոլանդական գաղութային տնտեսության պատմությունը — իսկ Հոլանդիան XVII դարի որինակելի կապիտալիստական յերկիրն եր— բաց ե անում մատնությունների, կաշառքների, սպանությունների և ստորությունների անորինակ մի պատկեր, — ասում ե Մարքսը: Յեվ նա շարունակում ե. չկա վոչինչ ավելի բնորոշ, քան հոլանդացիների գործադրած մարդագողության սիստեմը Ցելեբեսում, Ճավա կղզում ստրուկների կադրերը լրացնելու համար: Այդ նպատակով հատուկ մարդագողեր եյին պատրաստվում: Գողը, թարգմանն ու վաճառողը այդ առևտրի գլխավոր գործակալներն եյին, տեղական պրինցները— գլխավոր վաճառողները: Գողացված յերիտասարդությունն արգելափակվում եր Ցելեբեսի գաղտնի բանտերում, մինչև վոր հասներ այն տարիքին, վորը բավականաչափ հասուն եր ստրուկներով բեռնված նավերով ուղարկվելու համար»[1]:

Հոլանդիան, վորտեղ առաջին անգամ լրիվ զարգացավ գաղութային սիստեմը, արդեն 1648 թվին հասել եր իր առևտրական հզորության գագաթնակետին: Մարքսը ցիտատ ե բերում Հոլանդիայի պատմագիր Գյուլլիխից, վորը գրում եր. «Նրա (Հոլանդիայի— խմբ.) գրեթե անբաժան տիրապետության տակ եյին գտնվում արևելա-հնդկական առևտուրը և յեվրոպական հարավ-արևմուտքի ու հյուսիս-արևելքի առևտրական հա-

---

1 *Маркс и Энгельс,* Соч. т. XVII, *եջ 822.*

բարերությունները: Նրա ձկնորսությունը, նավագնացությունը, մանուֆակտուրաները իրենց հավասարը չունեյին ուրիշ վոչ մի յերկրում: Այդ հանրապետության կապիտալները թերևս ավելի խոշոր եյին, քան մնացած ամբողջ Յեվրոպայի բոլոր կապիտալները միասին վերցրած»... Գյուլլիխը...— ասում է Մարքսը,— մոռանում է ավելացնել՝ Հոլանդիայի ժողովրդական մասսաներն արդեն 1648 թվին ավելի շատ եյին տառապում չափից դուրս աշխատանքից, ավելի աղքատ եյին և ավելի դաժան ճնշման եյին յենթարկվում, քան մնացած ամբողջ Յեվրոպայի ժողովրդական մասսաները»[1]:

Հոլանդացիների գաղութային ձեռնարկումները չեյին սահմանափակվում միայն Արևելքով: 1621 թվին հիմնվեց Արևմտա-Հնդկական ընկերությունը, Հարավային Ամերիկայի և Աֆրիկայի արևմտյան ափի հետ առևտուր անելու և նրանց գաղութացման համար: Նա հետապնդում եր նաև իսպանական առևտուրը քայքայելու և Իսպանիայի գաղութների վրա հարձակվելու մարտական նպատակներ: Բայց հոլանդացիների բռնագրավումները Հարավային Ամերիկայում ավելի քիչ նշանակալից եյին, քան Արևելքում. նրանց չհաջողվեց հաստատապես ու յերկար ժամանակով հիմնվել Բրազիլիայում, դրա փոխարեն նրանք գրավեցին մի քանի փոքր կղզիներ Կարաիբյան ծովում (Կյուրասաո, վորը շուտով դարձավ ստրուկների վաճառքի կենտրոն) և հաստատվեցին Սուրինամում: Մի քանի գաղութներ հիմնվեցին Հյուսիսային Ամերիկայում (Նոր Ամստերդամն այժմյան Նյու-Յորքի տեղում): Վերջապես, Աֆրիկայում նրանց հաջողվեց մի քանի կետերից դուրս մղել փորթուգալացիներին և սկիզբ դնել Կապյան յերկրի գաղութացմանը (1648 թ.):

Անգլո-հոլանդական մրցակցությունը և անգլո-հոլանդական պատերազմները

Անգլիայում «Նավարկության ակտի» հրատարակումը, ակտ, վորն ուղղված եր Նիդերլանդների դեմ, և հոլանդական նավերի վրա անգլիական ծովահենների հարձակումները հասցրին արդեն վաղուց հասունացած ընդհարման: Անգլո-հոլանդական առաջին պատերազմը (1652—1654 թվականներին) գրեթե ամբողջ ծանրությամբ ընկավ Հոլանդիայի վրա, վորը պատերազմի յեր հանել նիդերլանդական ամբողջ նավատորմիղի հինգ վեցերորդ մասը: Հոլանդիան առաջ քաշեց

1 *Маркс и Энгельс,* Соч. т. XVII, եջ 824։

Նշանավոր ադմիրալներ (դե Ռոյտեր, Տրոմպ, դե Վիտտ)։ Ծովային ճակատամարտերը, վորոնք յերբեմն մի քանի օր եյին տևում, աչքի եյին ընկնում արտակարգ դաժանությամբ։ Յերկու կողմից կռվի յեր հանված հարյուրից ավելի մեծ նավ։ Չընայելով անգլիացիների կրած մի շարք պարտությունների (Պլիմուտի մոտ 1652 թ. օգոստոսին, Դուվրի մոտ 1652 թվի դեկտեմբերին), գերակշռությունն այնուամենայնիվ մնաց նրանց կողմը։ Պատերազմը հսկայական լարվածություն պահանջեց Միացյալ պրովինցիաներից, ուղեկցվում եր որանժիստների հուզումներով և ապստամբություններով, բայց Նիդերլանդների համար անհաջող վերջացավ, վորովհետև «Նավարկության ակտը» չվերացվեց։ Ըստ հաշտության լրացուցիչ պայմանի, Հոլանդիան, առանձնապես դիմադրություն չցուցաբերելով, պարտավորվեց վոչ մի պաշտոն չտրամադրել Որանյան իշխաններին, վորոնք ազգակից եյին տապալված Ստյուարտներին («Հեռացման ակտ», 1654 թ.)։

1658—1659 թ. թ. Հոլանդիան Բալտիկայի հետ կատարվող առևտուրը պաշտպանելու նպատակով, վոր չափազանց կարևոր եր իր համար, պատերազմ մղեց Շվեդիայի դեմ, վորը հարձակվել եր Դանիայի վրա, և ջախջախեց շվեդական նավատորմը։

1665—1667 թվականների անգլո-հոլանդական յերկրորդ պատերազմը մղվեց գաղութներում ու Յեվրոպայում։ Ծովային խոշոր ճակատամարտերում, վորոնք տեղի եյին ունենում Լամանշում և Հյուսիսային ծովում, հոլանդացիները մի քանի անգամ հաղթանակ տարան։ Նրանց նավատորմը, սպառնալով Լոնդոնին, ներխուժում եր Թայմսի գետաբերանը։ Պատերազմի հետևանքով Նիդերլանդները կորցրին Հյուսիսային Ամերիկայի գաղութները, բայց ձեռք բերեցին Սուրինամը և իրենց նավերով գերմանական ապրանքներն Անգլիա տանելու իրավունք նվաճեցին։

Ներքին քաղաքականության բնագավառում հոլանդական բուրժուազիայի առաջնորդ դե Վիտտը շարունակում է յեռանդուն պայքար մղել որանժիստների դեմ։ Ստյուարտյան Անգլիայի դեմ մղած պատերազմը մի հարմար առիթ եր, վորպեսզի բոլորովին վերացվեր ստատհալտերի պաշտոնը։ 1667 թվի «մշտական եդիկտի» համաձայն, Հոլանդիայում և Ուտրեխտում առժամապես բոլորովին վերացվեց ստատհալտերի պաշտոնը։

Անգլիայի հետ ունեցած յերրորդ պատերազմը (1672–1674 թ. թ.) բարդացավ այն պայքարով, վորը մղվեց Լյուդովիկոս XIV-ի Ֆրանսիայի գլխավորած մի ամբողջ կոալիցիայի դեմ։ Մի շարք պատճառներ Նիդերլանդներին դրդեցին ընդհարվել Ֆրանսիայի հետ։ Լյուդովիկոս XIV-ի առաջխաղացումը դեպի իսպանական Նիդերլանդներ, վորով ֆրանսիական հզոր միապետության հետ անմիջականորեն հարևան լինելու վտանգ եր ստեղծվում և հնարավոր եր դառնում ֆրանսիացիների ուղղակի ներխուժումը Հոլանդիա, Ֆրանսիայի ձգտումը՝ ընդլայնել իր գաղութային տերությունները, ֆրանսիական պրոտեկցիոնիզմի թշնամանքը դեպի բուրժուական հանրապետությունը— այն բոլոր տարրերի հենարանն ու ապաստարանը, վորոնք օպոզիցիոն դիրք եյին բռնել ֆրանսիական միապետության և կաթոլիկության նկատմամբ, Կոլբերի պրոտեկցիոնիզմի շնորհիվ չափազանց անշահավետ այն պայմանները, վորոնցով առևտուր եր կատարվում Ֆրանսիայի հետ,— այս բոլորը Նիդերլանդներին դրդում եր մասնակցել այն կոալիցիաներին, վորոնք ստեղծվում եյին Ֆրանսիայի դեմ, և նրանց քաշում եր ծանր պատերազմների մեջ։ Բայց այդ պատերազմները վոչ մի շոշափելի, անմիջական ոգուտ չբերին հանրապետությանը։ Անգլիայի և Շվեդիայի հետ միասին Նիդերլանդները Ֆրանսիայի վզին են փաթաթում Աախենի հաշտությունը (1668 թ.) և դրանով չափազանց լարում իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ։

Այն հարձակմանը, վոր Ֆրանսիան կազմակերպել եր հանրապետության դեմ, մասնակցում եյին Անգլիան, Շվեդիան և գերմանական վորոշ պետություններ։ Ֆրանսիացիների հսկայական բանակը, ներխուժելով յերկիրը, մոտեցավ Ամստերդամին։ Որանժիստները յեռանդուն ագիտացիա սկսեցին դե Վիտտի և Ամստերդամի հարուստների դեմ, վորոնք, ագահությունից դրդված, չեյին հոգացել պաշտպանության մասին և պատրաստ եյին մի տակառ ոսկով ծախել յերկրի անկախությունը։

Վիլհելմ III-ը, Վիլհելմ II-ի վորդին, գլխավոր շտատների կողմից նշանակվեց գեներալ կապիտան (1672 թ. փետրվարի 24-ին) և ապա շտատհալտեր Հոլանդիայում ու Զելանդիայում։ Ամստերդամում տեղի ունեցած անկարգությունների ժամանակ ամբոխը սպանեց դե Վիտտին, թերևս որանժիստների դրդումով։

Հոլանդիան հարձակումը կանգնեցրեց արդեն փորձված մի-

ջոցի— յերկիրը հեղեղելու օգնությամբ, իսկ աղմիրալ դե Ռյույտերը հետ մղեց անգլիացիների ծովային գրոհները և մի շարք պարտություններ պատճառեց անգլիական նավատորմին: Անգլիացիների դեմ մղած պատերազմը վերջացավ 1674 թվին, Դուվրի հաշտությամբ, վորը վորևէ էական փոփոխություններ չմտցրեց կողմերի դրության մեջ: Բայց Ֆրանսիացիների դեմ պայքարը շարունակվում եր. Վիլհելմ III-ին հաջողվեց իր կողմը քաշել դաշնակիցներին: Նիմվեգենի 1678 թվի հաշտությամբ Միացյալ պրովինցիաները ստացան Մաստրիխտը և Ֆրանսիայի հետ առևտուր անելու ավելի շահավետ պայմաններ սահմանեցին իրենց համար: Վիլհելմ III-ի ժողովրդականությունը չափազանց մեծ եր: Հանրապետականները ստիպված եյին զգալի զիջումներ անել: Վիլհելմին մեծ լիազորություններ տըրվեցին. նա կարող եր զինվորական պաշտոնների նշանակել մարդկանց և, վոր գլխավորն է, իր հայեցողությամբ վորոշել քաղաքային մագիստրատների կազմը, վորի շնորհիվ թե պրովինցիալ և թե գլխավոր շտատները լցվեցին նրա կողմնակիցներով: Օրանցիների դեմ ուղղված ակտերը վերացվեցին: Շտատներն Օրանցիների տան նկատմամբ ժառանգական հայտարարեցին գեներալ-կապիտանի և գեներալ-աղմիրալի պաշտոնը, իսկ հինգ պրովինցիաներում սահմանվեց ժառանգական շտատհալտերություն: Վիլհելմն այսպես ընթանում եր դեպի Օրանցիների դինաստիայի ժառանգական միապետության հաստատումը: Նրա անգլիական գահ նստելն (տես XIV գլ.) ել ավելի ուժեղացրեց նրա դիրքը: Հանրապետությունը գոյություն ուներ միայն անունով:

Ունիան Անգլիայի հետ զգալի վնաս հասցրեց Միացյալ պրովինցիաներին: «Նավարկության ակտը» չվերացվեց, ինչպես դրա վրա հույս եր դրել հոլանդական բուրժուազիան, վորն աջակցում եր Վիլհելմի ձեռնարկմանը: Առևտրական տարաձայնությունները վճռվում եյին Անգլիայի օգտին: Արտաքին քաղաքականության մեջ Նիդերլանդները նշանակալից չափով հարկադրրված եյին պայքարելու անգլիական շահերի համար: Վիլհելմ III-ի մահվան ժամանակին (1702 թ.) բուրժուազիան չափազանց թշնամաբար եր տրամադրված դեպի Օրանցիները, և ժառանգական շտատհալտերությունը վերացվեց:

Հոլանդիայի անկումը XVIII դարում

XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի պատերազմները, որ մղվում էին Ֆրանսիայի դեմ, Նիդերլանդներին չտվին այն օգուտները, որոնք համապատասխան լինեյին տրված զոհերին: Ռիսվիկի հաշտությամբ (1697 թ.) Նիդերլանդները Ֆրանսիայից ձեռք բերեցին մաքսային ձեռնտու տարիֆներ և ստացան Մաստրիխտը, Ուտրեխտի հաշտությամբ (1713 թ. ապրիլի 1) նրան հանձնվեց «բարյերի» հսկողությունը, այսինքն Ավստրիական Նիդերլանդների ութը բերդերում իր կայազորը տեղավորելու իրավունքը: Միացյալ պրովինցիաները պայքարից դուրս յեկան սաստիկ հյուծված:

XVIII դարի ընթացքում Հոլանդիան ընդհանրապես խաղաղասիրական արտաքին քաղաքականություն է վարում: Նա թույլ է մասնակցում ավստրիական ժառանգության համար մղված պատերազմին (Անգլիայի կողմում, ֆրանսիացիների դեմ) և XVIII դարի վերջի անգլո-ֆրանսիական պայքարին (Ֆրանսիայի կողմում),— յերկու անգամն էլ իր համար անհաջող: 1747 թվին ֆրանսիական բանակը գրեթե անարգել ներխուժեց Հոլանդիա, իսկ Անգլիայի հետ յեղած ընդհարման (1780 թ.) հետևանքով Հոլանդիան կորցրեց իր ֆակտորիաները Հնդկաստանի Կորոմանդելյան ափում և արևելա-հնդկական գաղութները բացվեցին անգլիական առևտրի համար:

Նիդերլանդները XVII դարի առևտրական մեծ տերությունից XVIII դարում վերածվեցին յերկրորդական պետության, որը, ճիշտ է, պահպանեց գաղութային խոշոր տիրույթներ, բայց կորցրեց իր հզորության տնտեսական հիմքերը: Ամենից առաջ ընկավ Նիդերլանդների առևտրական նշանակությունը, հոլանդական առևտրական նավատորմը կորցրեց համաշխարհային առևտրում նավեր տրամադրելու իր մոնոպոլ դիրքը: Անգլիան և Ֆրանսիան ստեղծում են իրենց ծովային նավագնացությունը: Ճիշտ է, այն դեռ զիջում է հոլանդական նավագնացության, բայց խիստ թուլացնում է վերջինի նշանակությունը: Մոտավորապես 1670 թվին հոլանդական նավատորմն ուներ 3½ հազար նավ 600 հազար տոննա տարողությամբ. 30 տարուց հետո (1702 թ.) Անգլիան ունեցավ գրեթե նույն քանակությամբ նավեր 3,300), ճիշտ է, ավելի քիչ տոննաժով (260 հազար տոննա), իսկ 1761 թվին անգլիական նավատորմի տոննաժը գերազանցեց հոլանդականին:

Բոլորովին ի չիք դարձավ հոլանդական ձկնորսությունը: Ձկնորսական նավատորմիկները սաստիկ վնասվեցին XVII դարի յերկրորդ կեսի ծովային պատերազմների ժամանակ, հանդիսանալով խիստ հարմար օբյեկտ հարձակումների համար: Հոլանդական տառեխը, «վորի վոսկորների վրա կառուցվել եր Ամստերդամը», հանդիպեց ուժեղ մրցակիցների— շոտլանդական և նորվեգիական տառեխին: 1601 թվին տառեխ վորսալու համար դուրս եր գալիս 1500 նավ, իսկ 1736 թվին— միայն 219: Նիդերլանդական բուրժուազիան ձեռներեց վաճառականներից և ծովագնացներից վերածվում եր ռանտյեների: Նիդերլանդներն արդեն XVII դարի ընթացքում սկսում են ավելի և ավելի մեծ չափով դառնալ Յեվրոպայի բանկիր: Հոլանդական կապիտալի զգալի ոգնությամբ ստեղծվեց անգլիական բանկը: 1780 թվին Անգլիան Նիդերլանդներին պարտք եր 400 միլիոն ֆլորին, այսինքն Անգլիայի ամբողջ պետական պարտքի մեկ քառորդը: Հոլանդական փոխառությունների ցանցն ընդգրկեց ամբողջ Յեվրոպան, ներառյալ Ռուսաստանն ու Լեհաստանը: 1786 թվին անգլիացիները հոլանդացիներին իբրև փոխառությունների տոկոսներ վճարեցին 15 միլ. ֆլորին, ֆրանսիացիք—12 միլ. ֆլորին:

XVIII դարում Հոլանդիայի անկման պատճառները

Հոլանդիայի առևտրական հզորությունը նրա քաղաքական հզորության հիմքն եր, բայց դրանում եր կայանում նաև Հոլանդիայի թուլությունը, վորով և բացատրվում ե, թե ինչու Հոլանդիան XVIII դարի սկզբում ստիպված յեղավ առևտրի ու արդյունաբերության մեջ իր տեղը զիջել մի ուրիշ յերկրի,— Անգլիային, վորը յեղավ նրա ավելի յերջանիկ մրցակիցը: Անգլիայի առևտուրը թեև ավելի դանդաղ եր զարգանում և XVII դարում հետ եր մնում հոլանդական առևտրից, բայց և այնպես, այն զարգանում եր սեփական արտադրության հիման վրա: Այն պայքարում, վոր XVII դարի ամբողջ յերկրորդ կեսի ընթացքում մղվեց Անգլիայի և Հոլանդիայի միջև, պարզվեց, վոր սեփական արդյունաբերություն ունեցող յերկիրը վաղ թե ուշ կհաղթահարի միմիայն առևտրական յերկրին: «Հոլանդիայի, վորպես տիրապետող առևտրական ազգի անկման պատմությունը,— ասում ե Մարքսը,— առևտրական կապիտալի՝ արդյունաբերական կապիտալին յենթարկելու պատմությունն ե»[1]:

[1] *Маркс*, Капитал, Партиздат ЦК ВКП(б), 1936, т. III, ч. I, գլ 20 եջ 299:

ԳԼՈՒԽ XI

ԱՆԳԼԻԱՆ ԹՅՈՒԴՈՐՆԵՐԻ ՕՐՈՔ

XVI դարում Անգլիան մի փոքրիկ պետություն էր, բնակչության քանակով (2,5—3 միլիոն) նա յերեք անգամ փոքր եր Իսպանիայից և հինգ անգամ փոքր Ֆրանսիայից: Բայց հենց XVI դարն անգլիական տնտեսության ա՛յն վերելքի սկիզբն եր, վորի շնորհիվ Անգլիան յերեք հարյուրամյակից հետո դարձավ ամբողջ աշխարհի ֆաբրիկան և աշխարհում ամենահզոր գաղութային տերությունը:

Դրա պատճառներն այն են, վոր արդեն XVI դարից Անգլիայում սկսում են զարգանալ կապիտալիստական արդյունաբերությունը և կապիտալիստական գյուղատնտեսությունը: Անգլիան դառնում է այն յերկիրը, վոր Մարքսը բերել է իբրև կապիտալիստական զարգացման կլասիկ օրինակ «Կապիտալի» առաջին հատորի հռչակավոր 24-րդ գլխի,— «Այսպես կոչված նախասկզբնական կուտակման մասին» գլխի համար:

Անգլիայի տնտեսական զարգացումը XVI դարում

Հենրիխ VII-ից (1485 թ.) մինչև Յեղիսաբեթի,— Թյուդորների վերջին ներկայացուցչի մահը (1603 թ.) այդ գինաստիայի կառավարումը բնորոշվում է չափազանց կարևոր տընտեսական փոփոխություններով, վորոնք հանգում են յերկու հիմնական փաստերի.

1) XVI դարում Անգլիայում զարգանում է կապիտալիստական մանուֆակտուրան, վորն այդ դարի կեսից մինչև XVIII դարի վերջին յերրորդամասը, այսինքն մինչև արդյունաբերական հեղաշրջման և խոշոր արդյունաբերության գործարանային սիստեմի հաստատման եպոխան՝ հանդիսանում է կապիտալիստական արտադրության բնորոշ ձևը:

2) Դրա հետ միաժամանակ գյուղում տեղի են ունենում իր

հետևանքներով կարևոր՝ գյուղացիության հողազրկման պրոցեսը— գյուղատնտեսական անմիջական արտադրողների էքսպրոպրիացիան, վորը կազմում է այսպես կոչված նախասկզբնական կուտակման հիմքը,— մի պրոցես, վորն Անգլիայում սկսվում է դեռ XV դարի վերջից և հիմնականում ավարտվում մոտ XVIII դարի կեսին:

Բրդի արդյունաբերության զարգացումը

Անգլիական գյուղում այդ փոփոխություններին անմիջական զարկ տվեց մահուդի արդյունաբերության զարգացումը Ֆլանդրիայում և բրդի գների բարձրացումը բուն Անգլիայում, վորն Անտվերպենի վրայով բուրդ և ապա մահուդ եր արտահանում դեպի Նիդերլանդներ: XVI դարում բուն Անգլիայում բրդե արդյունաբերությունը սկսեց արագ զարգանալ կապիտալիստական մանուֆակտուրայի ձևով: Խոշոր մահուդավաճառներն իրենց ձեռքում են կենտրոնացնում բրդե արդյունաբերության կազմակերպումը, բուրդ են գնում վոչխարաբույծ-ֆերմերներից, իրենց ազդեցությանն ու վերահսկողությանն են յենթարկում գյուղական մանր արտադրողներին— բուրդ մանողներին և ջուլհակներին, նրանց դարձնելով ուժեղացող կապիտալիստական շահագործման օբյեկտ: Մի քանի մահուդավաճառներ, վորոնք մեծ թվով դազգյահներ ունեն, դրանք անչափ բարձր վճարով տալիս են մանր ջուլհակ-արհեստավորներին, վորոնք շարունակում են աշխատել իրենց տանը, չկտրելով կապը հողի հետ: Իրենց տանն աշխատող և արտադրության սեփական գործիքներից զրկված այդ ջուլհակներն ըստ եյության դառնում եյին վարձու բանվորներ: Հաճախ խոշոր մահուդավաճառները պայմանավորվում եյին միմյանց հետ և միասին ցածր վճար եյին սահմանում մանողների և ջուլհակների համար, առաջացնելով բողոքներ նրանց կողմից: Խոշոր մահուդավաճառները յերբեմն իրենց համար աշխատող ջուլհակներին տեղավորում եյին մի հարկի տակ, նպատակ ունենալով ավելի լիակատար հսկողություն ունենալ նրանց վրա, ավելի լավ և ավելի պլանաչափ կերպով կազմակերպել նրանց աշխատանքը: Վերջին դեպքում մեր առաջ է արդեն իսկական կապիտալիստական կենտրոնացված մանուֆակտուրան, վորը տեղավորվում եր ձեռնարկուին պատկանող շենքում, իսկ ձեռնարկուն իրականացնում եր արտադրական պրոցեսի ընդհանուր ղեկավարությունը, արտադրության պրոցեսի՝ առանձին գոր-

ծանրությունների բնորոշ մասնատումով և աշխատանքի շատ թե քիչ բաժանմամբ հանդերձ։ Կային մանուֆակտուրաներ, ուր աշխատում էին հարյուրավոր բանվորներ,— ջուլհակներ, տղամարդիկ և կին մանողներ. արդեն մասամբ գործադրվում էր նաև մանկական աշխատանքը։ Գյուղերում մանուֆակտուրաների յերևան գալը բնակչության մի մասին հին արդյունաբերական քաղաքներից քաշում էր դեպի գյուղերը, քաղաքներից, ուր արդյունաբերությունը համքարային հիմունքներով էր կազմակերպված։ Արդյունաբերական հին քաղաքների անկումը XVI դարի անգլիական կյանքի բնորոշ յերևույթն է։

Գյուղական խոշոր արդյունաբերության կոնկուրենցիան բողոքներ էր առաջացնում քաղաքային արհեստավորների և գյուղական մանր, տնտեսապես քայքայվող ջուլհակների կողմից։ Մանր ջուլհակների այդ բողոքների և խնդրագրերի պատասխանը յեղան XVI դարի 50-ական թվականների ստատուտները։ Սրանցից առաջինը, վոր հայտնի յե ջուլհակների վերաբերյալ ակտ անունով և հրատարակվել էր 1555 թվին, քաղաքային մահուդավաճառներին արգելում էր գյուղերում պահել և մահուդի արտադրության համար օգտագործել մեկից ավելի մանածագործական դազգյահներ։ Այդ ակտի համաձայն, գյուղական ջուլհակները կարող էին իրենց տանն ունենալ վոչ ավելի, քան յերկու դազգյահ։ Այնուհետև, 1555 թվի ակտը արգելում էր մահուդի արտադրությունն այն վայրերից դուրս, ուր առաջ արտադրվում էր այն, և պահանջում էր աշակերտության յոթնամյա ստաժ, վորպես պայման, վորով կարելի յեր ջուլհակի արհեստով զբաղվելու իրավունք ստանալ։ Յերկրորդ ստատուտը, վոր հրատարակվեց 1557—1558 թ. թ., հաստատում էր քաղաքներից և ավաններից դուրս մահուդ արտադրելու արգելքը։ Այսպիսով կառավարությունն անհաջող փորձեր էր անում կասեցնելու մահուդի արդյունաբերության կազմակերպման կապիտալիստական ձևերի զարգացումը, վախենալով հուզումներից և անկարգություններից, վորոնք կարող էին ծագել այդ կապակցությամբ։ Հիմնականում կանգնած լինելով ֆեոդալական արտադրության հողի վրա, Թյուդորների ֆեոդալական-աբսոլյուտիստական կառավարությունը փորձում էր պայքարել Անգլիայում զարգացած՝ արդյունաբերության կապիտալիստական կազմակերպման ձևերի դեմ։

Ցանկապատումները Անգլիայում XVI դարում

Անգլիայում բրդե արդյունաբերության զարգացման, մանուֆակտուրայի և դրա հետ միասին արտադրության կապիտալիստական յեղանակի յերևան գալու շնորհիվ անգլիական գյուղի ագրարային կարգում տեղի ունեցան այն կարևոր փոփոխությունները, վորոնց հետևանքով XVIII դարի կեսերին չքացավ գյուղացիական տնտեսությունը, իսկ նրա հետ միասին նաև գյուղացիությունը վորպես դասակարգ, իր տեղը զիջելով ֆերմերության և գյուղատնտեսության կապիտալիստական կազմակերպմանը:

Անգլիական գյուղում առաջացած այդ բեկման ռադիկալ բընույթը հասկանալու համար հարկավոր է պարզ պատկերացնել, թե անգլիական գյուղն ի՞նչ եր ներկայացնում XVI դարի սկզբին:

XV դարի ընթացքում անգլիական գյուղացիությունը հիմնականում ազատվեց անձնական կախումից, բայց շարունակում եր հողային և դատական կախում ունենալ մանորի լորդից: Վիլլանը— ճորտը դարձավ անձնապես ազատ կոպիհոլդեր, այսինքն սովորական, մանորիալ իրավունքով և ֆեոդալական հիմունքով հողը պահող: Կոպիհոլդը վորպես հողը ֆեոդալական հիմունքով պահելու ձև և կոպիհոլդերը վորպես կոպիհոլդի տեր,— ահա ագրարային հարաբերությունների տիպիկ ձևերն անգլիական գյուղում, XV դարի վերջում:

Այդ հարաբերությունների իրավաբանական կողմն ըմբռնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր մանորը— յեվրոպական սենյորության անգլիական այլատեսակությունը— Անգլիայում դեռ շարունակում եր գոյություն ունենալ վորպես իրավահարաբերությունների սիստեմ, վորն անմիջական արտադրողին— գյուղացուն կապում է ֆեոդալ տիրոջ— մանորի լորդի հետ: Մանորն առաջվա նման բաղկացած եր յերկու մասից. 1) լորդին պատկանող հողից, այսպես կոչված դոմենից կամ դոմենիալ հողից և 2) գյուղացիների ձեռքում գտնվող հողից, գյուղացիական հողաբաժիններից: Լորդի իրավունքներն իր դոմենի հողի նկատմամբ վորոշվում եյին իբրև ֆրիհոլդ (freehold), այսինքն վորպես ազատ հողատիրություն, վորովհետև յենթադրվում եր, վոր լորդն այդ հողը պահում է վորպես մի ուրիշ լորդից կամ թագավորից ստացած հող: XVI դարում,

յերբ գյուղացին անձնապես ազատվեց, հող պահելու նկատմամբ նրա իրավունքները վորոշվում եյին իբրև կոպիհոլդ, այսինքն հողատիրության ըստ կոպիայի[1]:

Վորովհետև մանորի բոլոր հողերի գերագույն տերը կամ ֆեոդալական սեփականատերը մանորի լորդն եր, իսկ մյուս կողմից պարհակների քանակությունը և բնույթը վոչ թե լորդի կամայականությամբ եյին վորոշված, այլ հաճախ սահմանված եյին լինում մի քանի դար առաջ և սովորություն եյին դառնում, ուստի կոպիհոլդը վորոշվում եր մանորիալ կամ սովորական իրավունքի տեսակետից վորպես «հողակալություն լորդի կամքով և ըստ մանորի սովորության»: Մանորի սովորությունը կարող եր տարբեր լինել, վորի հետևանքով կոպիհոլդի իրավունքներնել տարբեր եյին, նրա համար շատ թե քիչ բարենպաստ: Կոպիհոլդը կարող եր լինել ժառանգական հողակալություն, կարող եր լինել հողակալություն յերեք, յերկու կամ մեկ կյանքի համար, այսինքն ժառանգաբար հանձնվում եր միայն մինչև յերրորդ կամ յերկրորդ սերունդը, կարող եր լինել նաև վորոշ ժամկետով հողակալություն: Ճիշտ նույնպես այն պարհակները, վորոնք ընկնում եյին կոպիհոլդի վրա, կարող եյին լինել տարբեր, շատ թե քիչ ծանր: Բայց կար մի նշան, վորն ընդհանուր եր ամեն մի կոպիհոլդի համար. վորպես հողակալություն վոչ միայն «լորդի կամքով», այլև «ըստ մանորի սովորության», կոպիհոլդը միշտ, սովորության համաձայն, տերերի փոխվելու բոլոր դեպքերում պետք է մնար անփոփոխ: Նրա պայմանները, վորոնք գրանցված եյին լորդի կուրիայում, գյուղացիության իրավունքն եյին, և լորդն իրավունք չուներ փոխելու կոպիհոլդի պայմանները: Այդ պատճառով յերբ XVI դարում հողի համար դաժան պայքար բռնկվեց և լորդերը սկսեցին գրավել գյուղացիական հողաբաժինները, սրանք ցանկապատել և արոտատեղերի վերածել, այդպիսի բռնագրավումն իսկական ուզուրպացիայի մի տեսակ եր, վորովհետև նույնիսկ այն դեպքերում, յերբ սովորական իրավունքը լորդին թույլ եր տալիս փոխելու հողամասի տիրոջը, այդ բնավ նրան իրավունք չեր տալիս հիշյալ հողամասը միացնելու իր հողին և հետևաբար փոխելու հողակալության պայմանները:

---

[1] «Կոպիհոլդ» տերմինի մասին տես «Միջին դարերի պատմության», հ. I, գլ. XXIV—«Գյուղը և քաղաքը XIV դարի վերջին»

Գրավելով հողը, լորդը դրա նկատմամբ այնպիսի իրավունքներ էր յուրացնում, որոնք մինչ այդ չէր ունեցել: Այս պատճառով Մարքսը, խոսելով Անգլիայում XVI դարում ծագած ագրարային հեղափոխության մասին, լիակատար հիմք ուներ ասելու. «Խոշոր ֆեոդալներն իրենք... ստեղծեցին անհամեմատ ավելի թվաշատ պրոլետարիատ, **ուզուրպացիայի յենթարկելով** համայնական հողերը և գյուղացիներին քշելով նրանց գրաված հողամասերից, որոնց վրա **գյուղացիները սեփականության նույնպիսի ֆեոդալական իրավունք ունեյին, ինչպես իրենք, ֆեոդալները**»[1] (ընդգծումը մերն է— խմբ.):

Ինչպես մենք արդեն կարողացանք նկատել, կոպիհոլդը ֆեոդալական հողակալության միակ ձևը չէր: Մանորի լորդն իր դոմենի հողի նկատմամբ ազատ հողակալության (ֆրիհոլդի) իրավունքներ ուներ: Բայց ֆրիհոլդը նաև հողակալության ավելի տարածված ձև էր: Ինչպես վերևում ասվեց, Անգլիայում ազատ գյուղացիությունն ավելի մեծ չափով էր պահպանվել, քան մայր-ցամաքում, այնպես որ ֆրիհոլդը կարող էր գտնվել նաև գյուղացիների ձեռքում: Գյուղական մանր ազնվականությունը նույնպես մեծ մասամբ ֆրիհոլդի իրավունք ուներ իր հողի վրա: Բայց ֆրիհոլդը, ինչպես և կոպիհոլդը, կարող էր տարբեր բնույթ ունենալ: Ֆրիհոլդի որոշ ձևերի հետ կապված էին ֆրիհոլդերի պարտականությունները՝ մասնակցել մանորի լորդի կուրիայի նիստերին և նույնիսկ որոշ, ճիշտ է, աննշան պարհակներ վճարել լորդին: Վերջապես, ֆեոդալական հողակալության հետ մեկտեղ սկսեց զարգանալ նաև սովորական վարձակալությունը (լիզհոլդ):

Մինչև այժմ խնդիրը վերաբերում էր XVI դարի Անգլիայի ագրարային կարգի իրավաբանական կողմին: Եվ ավելի կարևոր նշանակություն ունի այդ հարցի տնտեսական կողմը: Անգլիայում գյուղացիությունը վաղուց արդեն չէր կազմում տնտեսապես շատ թե քիչ հավասար՝ համայնքի անդամների միատեսակ մասսա: Գյուղատնտեսության ապրանքայնության վաղ զարգացումը, վոչխարաբուծական խոշոր տնտեսության տարածումը, հողակալության ժառանգականությունը և հողը ժառանգաբար պահողների իրավունքը՝ մանորի լորդի նկատմամբ որոշ ձևականություններ պահպանելով հանդերձ—ծախելու, գրավ դնելու,

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. XVII, էջ 786.

նվիրելու իրենց հողը և այլն— այս բոլորը նպաստում եր գյուղացիության շերտավորմանը: Միջին, հաստատապես տնտեսավարող գյուղացիության և նրանից առանձնացած ունևոր վերնախավի կողքին— թե մեկ և թե մյուս խավին պատկանող գյուղացիները կոչվում եյին յոմեններ— մենք Անգլիայում շատ վաղ հանդիպում ենք սակավահող և նույնիսկ հողազուրկ գյուղացիների (կոտտերներ), վորոնք հարկադրված եյին բատրակություն անել կամ արտոնյալների տնտեսություններում, կամ հենց իրենց ավելի ունևոր յեղբոր— դեղջուկի մոտ:

Թե խոշոր և թե մանր գյուղացին կարող եր լինել և կոպիհոլդեր և ֆրիհոլդեր, նայած այն իրավունքին, վորը վորոշում եր նրա հող պահելը: Իհարկե, ֆրիհոլդերն ավելի հաճախ եր խոշոր տնտեսատեր լինում, մանավանդ յեթե նա ազնվական եր, բայց նույնիսկ ֆրիհոլդերների մեջ շատ կային այնպիսիները, վորոնց տիրությունները մասամբ ֆրիհոլդ եյին, մասամբ էլ կոպիհոլդ:

Մինչև XVI դարի ագրարային փոփոխությունների սկիզբն անձեռնմխելի յեր մնում նաև միջնադարյան գյուղի տնտեսական ընդհանուր կառուցվածքը: Տնտեսական տեսակետից գյուղն իրենից ներկայացնում եր վորոշ ամբողջություն— համայնք: Առանձին գյուղացիների հողաշերտերն ընկած եյին մեջեմեջ և այդ շերտամիջությունը դաշտավարության համեմատաբար պրիմիտիվ տեխնիկայի կապակցությամբ (յեռադաշտ) առաջ եր բերում մի կարգ, վորով առանձին գյուղացին հարկադրված եր իր տնտեսական դիտավորություններով ամբողջովին համակերպվել գյուղի ընդհանուր վորոշման հետ (հարկադրական ցանքաշրջանառություն): Այդ կարգին հաճախ պետք է հնազանդվեր և ինքը, լորդը, քանի վոր նրա հողերը գյուղացիական հողերի հետ գտնվում եյին մեջեմեջ: Հացի բերքահավաքից հետո այդ բոլոր հողերն օգտագործվում եյին անասուններին արածացնելու համար: Նույնիսկ վարելահողերը, վորոնք այդպիսի տնտեսական ռեժիմի եյին յենթարկվում, չնայելով վոր գտնվում եյին գյուղացիական ընտանիքների անհատական տիրապետության տակ, կոչվում եյին համայնական դաշտեր (common fields), մինչդեռ համայնական անդակները— արոտավայրերը, հանդերը, մարգագետինները, ճահիճները, ամայի վայրերն ու անտառները, վորոնք գտնվում եյին ամբողջ գյուղի ընդհանուր օգտա-

գործման տակ, ուղղակի կոչվում էին «համայնական հողեր» (commons)։

Գյուղում տեղի ունեցած փոփոխությունների էությունն էլ հենց այն էր, որ ոչխարաբուծության զարգացումը պահանջեց հողի այնպիսի տարածություններ, ինչպիսին առաջ չունեին խոշոր հողատերերը։ Այդ հողը ստանալու համար նրանք սկսեցին գրավել ոչ միայն համայնական անտառները (այդ արվում էր նաև առաջ, XIII դարում), այլև գյուղացիական վարելահողերը (common fields), սկսեցին գյուղացիներին արտաքսել հողից, այդ կերպ նրանց դարձնելով հողազուրկ պրոլետարիատ, իսկ գրավված հողը նրանք սկսեցին միացնել իրենց հողին, փոխանակությունների, գնման կամ ուղղակի հետագա բռնագրավումների միջոցով ընդարձակելով և երբ մի ամբողջության միավորելով իրենց տիրույթները, որոնք նրանք «ցանկապատում էին»,— իրենց հողերը ցանկապատելով անջատում գյուղական համայնքի հողերից։ Դրա հետ միասին նրանք հնարավորություն էին ստանում շահագործելու ցանկապատված հողը, լինելով միայն իրենց սեփական տնտեսական դիտավորություններից և հաշվի չառնելով գյուղական կարգերը։

XVI դարում ցանկապատված հողը մեծ մասամբ արոտավայրի էր վերածվում, բայց ո՛չ միշտ։ Մահուդի արդյունաբերության զարգացումը կապիտալիստական մանուֆակտուրայի ձևով՝ նպաստում էր ներքին շուկայի և հացի պահանջի մեծացմանը, իսկ դրանով նախադրյալներ էին ստեղծվում գյուղատնտեսության ավելի ինտենսիվ ձևերի համար։ Խոշոր գյուղացիները— կուլակները նույնպես դեմ չէին իրենց հողերը «ցանկապատելու», այսինքն նույնպես շահագրգռված էին հին համայնական կացութաձևի կործանմամբ և կապիտալիստական վարձակալության զարգացմամբ։ Այսպիսով XVI դարում արդեն առաջանալ սկսեց անգլիական կապիտալիստական այն ֆերմերի տիպը, որ վարձակալությամբ է վերցնում հողը և այն մշակում հողազրկված և իրենց հողից արտաքսված գյուղացիների վարձու աշխատանքի օգնությամբ։

Ցանկապատումները լայն տարածվում են XVI դարում։ Թյուդորյան ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում մենք բողոքների ենք հանդիպում այն մասին, որ գյուղը դատարկվում է մարդկանցից, որ համայնական դաշտերի ցանկապատ-

ման և վարելահողը վոչխարների արոտավայրեր դարձնելու կապակցությամբ հետզհետե հողազրկվում ու չքանում են գյուղացիները: Թոմաս Մորը 1516 թվին հրատարակված իր «Ուտոպիայում» խարազանում է խոշոր լենդլորդներին,— «աղահ և անկուշտ վորկրամոլներին, իրենց հայրենիքի իսկական ախտին»,— վորոնք վոչնչացնում են դաշտերի սահմանները, հազարավոր ակրերով հող են վերցնում իրենց ձեռքը, ցանկապատում են այդ հողը:

Գյուղի հողազրկումը յեվ նոր ազնվականությունը

Գյուղի կապիտալիստական վերածնության արագացման իմաստով մեծ նշանակություն ունեցավ վանքական հողերի սեկուլյարիզացիան, վոր Անգլիայում տեղի յեր ունենում կրոնական ռեֆորմացիայի հետ միաժամանակ: Յեկեղեցական կալվածքների սեկուլյարիզացիայից նախ և առաջ շահեց թագը, վորին անցավ վանքական հողերի ընդարձակ, միլիոնավոր ակրերի հասնող տարածությունը: Այնուհետև այդ հողերը շնորհումների ու վաճառքի հետևանքով անցան թագավորի ֆավորիտներին և պալատականներին, թագավորության պերերին և բյուրոկրատիայի ներկայացուցիչներին, հողատեր ազնվականությանը և քաղաքային արիստոկրատիային, խոշոր վաճառականներին և ֆինանսիստներին, Անգլիայում զարգացած նոր, կապիտալիստական մանուֆակտուրայի ներկայացուցիչներին: Բայց հողային այդ մոբիլիզացիայից առավելապես շահեցին գյուղական ազնվականները— ջենտլմենները, միջին և մասամբ խոշոր հողատերերը: Յեթե հին ֆեոդալական արիստոկրատիան առաջին թյուդորների որոք վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական տեսակետից անկման ժամանակաշրջան եր ապրում, ապա իր նշանակությամբ խիստ աճեց միջին, գյուղական ազնվականությունը,— թյուդորյան աբսոլուտիզմի իսկական հենարանը: Ազատվելով արիստոկրատական հին տոհմերի ճնշիչ ազդեցությունից,— վորոնք քայքայվել ու նոսրացել եյին XV դարի խռովություններից հետո,— իր իշխանությանը յենթարկելով իր այդ նախկին մրցակիցներին ու կոնկուրենտներին, վորոնք անգլիական գահի նկատմամբ հաճախ վոչ պակաս «իրավունքներ» ունեյին, քան թյուդորների նոր դինաստիան, վերջինս փորձում է կառավարական նոր սիստեմի համար հենարան և հիմք գտնել հողատեր ջենտրիների լայն շրջաններում: Սկվայրներն ու ջենտլմենները գյուղում տիրող դասակարգ են դառնում:

Վանքական հողերի նոր տերերը յուրացնում էին հողի և գյուղատնտեսության նկատմամբ նոր, կապիտալիստական մոտեցման սկզբունքները, ձգտում էին ավելացնել գյուղացիական վճարները կամ գյուղացի-հողակալներին փոխարինել խոշոր ֆերմերներով — կապալառուներով: Ազնվականները, վորոնք սկսում էին կապիտալիստական ձևով գյուղատնտեսությամբ պարապել, առևտրականներն ու վաճառականները, վորոնք գնում էին գյուղացիական և սեկուլյարիզացիայի յենթարկված հողերը, ազգակցական կապեր էին հաստատում ազնվականների հետ և իրենք էլ ազնվականներ դառնում, — ստեղծեցին բուրժուականացած ազնվականության և ազնվականացած բուրժուազիայի մի նոր խավ: Հենց այս խավն էլ սկսեց կոչվել նոր ազնվականություն, տարբերվելով հին, ֆեոդալական ազնվականությունից, վորի գոյության աղբյուրը ֆեոդալական ռենտան էր:

Թյուդորների ագրարային քաղաքականությունը: Օրենսդրություն ցանկապատումների դեմ

Այս կապակցությամբ խիստ կարևոր է կանգ առնել Թյուդորյան ժամանակաշրջանի օրենսդրությամբ ցուցաբերված՝ գյուղացիների տըխ-րահռչակ «պաշտպանության» վրա: Սկսած 1489 թվի ստատուտից, վոր հրատարակվել էր Հենրիխ VII-ի օրոք, մինչև Յեղիսաբեթի 1597 թվի ստատուտը Թյուդորյան կառավարության մի շարք օրենսդրական ակտեր նպատակ ունեյին դադարեցնել համայնական հողերի բաժանումները, վորոնք կապված էին գյուղացիների հողազրկման հետ: Այդ ակտերը պահանջում էին վոչնչացնել ցանկապատերը, մշակելի դարձնել այն հողերը, վորոնք վերածվել էին վոչխարների արոտավայրերի, և վերականգնել գյուղացիական ծխերն ու ագարակները: Ցանկապատումների դեմ ուղղված դեռ առաջին ստատուտը, վոր հրատարակվեց Հենրիխ VII-ի օրոք, նշում էր մի շարք աղետալի հետևանքներ, վորոնք առաջացել էին գյուղացիական ագարակների քայքայումից և վարելահողերն արոտատեղերի վերածելուց: Նույնանման փաստեր էր արձանագրում ցանկապատումների դեմ ուղղված այն ակտը, վոր հրատարակվել էր 1516 թվին, Հենրիխ VIII-ի օրոք, և վորին հետևեց կարդինալ Ուոլսեյի հանձնաժողովի նշանակումը, հետաքննելու դրեթե յերեք տասնամյակում կատարված բոլոր ցանկապատումները: Հենրիխ VIII-ի ստատուտը պահանջում էր վերստին վարել այն բոլոր հողերը, վորոնք

ապօրինի կերպով արոտատեղերի եյին վերածվել, վերականգնել ավերված գյուղերը, նորաշենները ու տները, ուր առաջ ապրում եյին հողը վարող գյուղացի տնտեսատերերը: Սակայն արդեն այդ ակտը պարունակում եր բացահայտ զիջում խոշոր ցանկապատողներին, համայնական հողերը բռնագրավողներին. ակտը չեր շոշափում այն հողերը, վորոնք վերածվել կամ վերածվում եյին վայրի կենդանիների պարկերի, վոր կառուցում եյին խոշոր ֆեոդալները, վորս սիրողները: Կառավարության փորձերը— գործնականում իրականացնել 1516 թվի ակտի հիմնական դրույթները,— վերջացան բացահայտ անհաջողությամբ: Կառավարության կոմիսարները, վոր այդ ակտի դրույթներին համապատասխան նշանակվել եյին, վորպեսզի հետաքննություն կատարեին հողի ցանկապատումների և կոնվերսիաների մասին, տեղերում համառ դիմադրության եյին հանդիպում վոչ միայն խոշոր լենդլորդերի— ցանկապատողների կողմից, այլև յերբեմն շարքային, միջին ազնվականության կողմից, վորը նույնպես շահագրգռված եր ցանկապատումներով:

XVI դարի օրենսդրությունը ցույց ե տալիս, վոր Թյուդորների կառավարությունը ցանկապատումներից, գյուղացիության սնանկացումից և կապիտալիստական խոշոր ֆերմաների աճից վախեցել եր վոչ պակաս, քան բրդե արդյունաբերության ընդգավառում կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացումից: Թյուդորների օրենսդրությունը «դեռ չեր կանգնած քաղաքականության այն բարձրության վրա,— հեգնում ե Մարքսը,— վորով Wealth of the Nation»-ը (ազգային հարստությունը»), այսինքն կապիտալի առեղծումը և ժողովրդական մասսայի անողոք շահագործումն ու պաուպերիզացիան համարվում ե ամեն մի պետական իմաստության ultima Thule (սահմանը»[1]: Ինքնին հասկանալի յե, վոր ցանկապատումների դեմ Թյուդորների այդ պայքարը պետք ե լիակատար ձախողման յենթարկվեր: Նրանք,— ասում ե Մարքսը Բեկոնի խոսքերով,— ուզում եյին ունենալ այնպիսի հպատակներ, վորոնք բավականաչափ ապահովված են, չեն ստորացված ստրկական կախումով, ունեն այնպիսի քանակությամբ հող, վորտեղ գութանը վարեր վոչ թե վարձկանի, այլ սեփականատիրոջ ձեռքով:

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. XVII, էջ 787:

«Բայց,— ավելացնում է Մարքսը,— կապիտալիստական արտադրությունն, ընդհանրապես, պահանջում էր ժողովրդական մասսաներին մատնել հենց ստրկական դրության, նրանց դարձնել վարձվորներ և նրանց աշխատանքի միջոցները դարձնել կապիտալ»[1]:

«Արյունոտ օրենսդրություն ունեզրկվածների դեմ»

Յեթե Թյուդորների կառավարությունն անզոր յեղավ կանխելու ցանկապատումները, ա- [illegible] դրությամբ էր հարձակվում «ագրարային հեղափոխության» զոհերի վրա: Այսպես է թափառաշրջիկների և մուրացիկների վերաբերյալ Թյուդորյան օրենսդրությունը, որ Մարքսն այնպես արտահայտիչ կերպով անվանել է «արյունոտ օրենսդրություն ունեզրկվածների դեմ»: Նոր, կապիտալիստական արդյունաբերությունն անզոր էր իր մեջ առնելու «ցանկապատումների» և համայնական հողերն ու անդաստանները բռնագրավելու հետևանքով ունեզրկվածների ամբողջ մասսային: Մուրացիկների և թափառաշրջիկների ամբոխները հեղեղում էին Անգլիայի ճանապարհներն ու գյուղերը: Նրանցից շատերը ստիպված էին գոյության միջոցներ գտնել հանցագործություն կատարելով: Հենց նրանց դեմ էր ուղղված նոր օրենսդրությունը: Հողից արտաքսված մանր գյուղացին կամ վարձակալը, կորցրած բանվորը, որին միայն մի ամիս ժամանակ էր տրվում աշխատանք գտնելու համար, հեշտությամբ կարող էր մատնվել թափառաշրջիկի դրության: Այդ ժամկետը լրանալուց հետո գործազուրկն արդեն համարվում էր թափառաշրջիկ, որը, Եդվարդ VI-ի օրոք հրատարակված օրենքի համաձայն, կարող էր ստրկության տրվել իրեն որպես թափառաշրջիկի մատնողին: Հարկավոր էր լինում վերցնել ամեն մի աշխատանք, թեկուզ միայն ուտելիք ձեռք բերելու համար,— յեթե միայն աշխատանք տվող էր գտնվում: Բայց աշխատանքի մտնելուց հետո դժվար էր ինքնակամ հեռանալ: Օրենքով ինքնագլուխ կերպով հեռանալը համարվում էր փախուստ. մեղավորին վերադարձնում էին տիրոջը, նրան հանձնում էին տիրոջից անձնական կախման, սկզբում ժամանակավոր, կամ ստիպողական կարգով ուղարկում էին իր ծննդավայրը, յեթե տերը հրաժարվում էր այդպիսի փախստականին աշխատանքի ընդունելուց: Ծննդավայր

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVII, էջ 788։

ուղարկված գործավորը «թափառաշրջիկը» դառնում եր «ծխի ստրուկ»: Փախուստի դեպքում նրան խարանում եյին, մատնում ցմահ ստրկության և նույնիսկ մահապատժի եյին ենթարկում: Թափառաշրջիկներին մտրակահարությամբ, խարանելով և փախուստը կրկնվելու դեպքում մահվան պատժով սպառնացող դաժան վորոշումներ են հրատարակվում նաև Եղիսաբեթի օրոք, յերբ օրենսդրությունը նորից ուշադրություն է դարձնում թափառաշրջիկության ուժեղացման վրա և յերբ ի լրումն թափառաշրջիկների վերաբերյալ Հենրիխ VIII-ի հին օրենքների, նոր, դաժան վորոշումներ են հրատարակվում: Կտակելով անգլիական արդի կեղծավոր օրենսդրությունը, Թյուդորները հետապնդում եյին նաև մուրացիկությունը. վողորմություն կարելի յեր խնդրել միայն իշխանությունների թույլտվությամբ, այն էլ միայն իր շրջանում:

Այսպիսով, ինչպես ասում է Մարքսը, այժմյան բանվոր դասակարգի հայրերին պատժի եյին ենթարկում միայն այն բանի համար, վոր նրանց բռնի կերպով թափառաշրջիկներ և պաուպերներ եյին դարձնում:

Քետի ապստամբությունը

Այն պայքարում, վոր անգլիական գյուղացիությունը Թյուդորների օրոք մղում եր հողի համար, ամենայուրահատուկ եպիզոդներից մեկը հանդիսանում է Ռոբերտ Քետի ապստամբությունը: Այդ ապստամբությունը տեղի ունեցավ 1549 թվին, Նորֆոլկում— գյուղատնտեսության տեսակետից առաջավոր անգլիական կոմսությունում, վորը դրա հետ մեկտեղ մահուդի արդյունաբերության կենտրոններից մեկն եր: Ռոբերտ Քետը մանր կալվածատեր եր և միաժամանակ ուներ կաշու մի փոքրիկ ձեռնարկություն: Բայց նա գլխավորեց գյուղացիական շարժումը, վոր ուղղված եր բարձր դասի և ազնվականների կամայականության դեմ, լենդլորդների— ցանկապատողների դեմ: «Մենք այլևս չենք կարող տանել այնքան մեծ ու դաժան անարդարություն: Մենք այլևս չենք կարող ձեռներս ծալած թույլ տալ արիստոկրատիայի և գյուղական ազնվականության կամայականությունը. ավելի լավ է մենք զենք վերցնենք, ավելի լավ է շարժման մեջ դնենք յերկինքն ու յերկիրը, քան այսպիսի սարսափներ հանդուրժենք... Մենք քարուքանդ կանենք ցանկապատերն ու ցցապատերը, կլցնենք խրամատները, կվերադարձնենք համայնական հողերը և

Հողին կհավասարեցնենք առանց բացառության բոլոր անջրպետները, որոնք կառուցված են խայտառակ ստորությամբ և անզգամությամբ»,— ժամանակակիցների վկայությամբ ահա թե ինչ էյին հայտարարում ապստամբած գյուղացիները: Ապստամբածների հիմնական պահանջներից մեկն էր կիրառել ցանկապատումների դեմ կառավարության հրատարակած օրենքները— մի պահանջ, որի արդարացիությունը չէր կարող չընդունել պրոտեկտոր Սոմերսետը, որը 1548 թվին նոր հանձնաժողով նշանակեց ցանկապատումները հետաքննելու համար: Ապստամբների կողմն անցավ նաև Նորիչ քաղաքի չքավորությունը, և Նորիչի բուրժուազիայի մի մասն անգամ ժամանակավորապես հարեց շարժմանը: Նորֆոլկի զանազան հարյուրակների կողմից ընտրված պատգամավորների հետ միասին 29 հոդվածներից բաղկացած գյուղացիական ծրագրի քննարկմանը մասնակցեցին նաև Նորիչի ներկայացուցիչները: Քետի ծրագիրն արտացոլում է գյուղացիների կարևորագույն պահանջներն ու կարիքները: Պնդելով այն օրենքների կատարման վրա, որ առաջ հրատարակվել էյին ցանկապատման դեմ, գյուղացիներն առաջադրում էյին մի պահանջ ևս— լենդլորդներին բոլորովին զրկել համայնական արոտավայրերն օգտագործելու իրավունքից, որն առիթ էր տալիս հետագայում բռնագրավելու համայնական հողերը: Ապստամբած գյուղացիները, սկզբունքով չառարկելով հողն ըստ կոպիհոլդի վարձակալելու դեմ, բողոքում էյին կոպիհոլդերների չափազանց ծանր, անապահով դրության դեմ, վճարներով և պարհակներով նրանց չափից դուրս ծանրաբեռնելու դեմ: Ինչպես գերմանական գյուղացիները, որոնք ապստամբեցին 1525 թվին, Նորֆոլկի գյուղացիները պահանջում էյին անտառների, գետերի, որսորդության, ձկնորսության ազատություն, պահանջում էյին գյուղացիներին ազատել ճորտական կախումից: Նորֆոլկի գյուղացիները պնդում էյին քահանա ընտրելու իրենց իրավունքի վրա, իսկ այդ քահանան պետք է բարեխղճությամբ կատարի իր պարտականությունները, քարոզի և սովորեցնի յերեխաներին: Գյուղացիները պահանջում էյին վերացնել յեկեղեցական բնամթերքային տասանորդը և այն փոխարինել տասը տոկոսանի դրամական վճարով: Քետի 1549 թվի ծրագրի մի շարք կետերի և «12 հոդվածների» ակնբախ նմանությունն այս փաստն ըստ ամենայնի արժանի է ուշադրության: Հիշենք, որ

գյուղացիական պատերազմի տարիներում գերմանական անաբապտիստները— Մյունցերի եմխարները փախչում եյին իրենց հայրենիքում յելած կրոնական հետապնդումներից և ապաստանում արդյունաբերական և առևտրական տեսակետից առաջավոր Նորֆոկում և արևելյան Անգլիայի մյուս ծովամերձ կոմսություններում: Միանգամայն հնարավոր ե, վոր նրանք այստեղ բերին նաև գերմանական գյուղացիների ծրագիրը և նպաստեցին գյուղացիական այն ապստամբության իդեոլոգիական ձևավորմանը, վորը բռնկվեց Նորֆոլկում—խիստ զարգացած, XVI դարի համար առաջավոր յերկրագործություն ունեցող կոմսությունում: Կալվածատերերի կողմից համայնական հողերի և արոտավայրերի բռնագրավումները, նրանց անցումն ապրանքային անասնապահական տնտեսության— մասնավորապես վոչխարաբուծության— բրդի բարձր գների կապակցությամբ յեղան գյուղացիական ապստամբության հիմնական պատճառը և առիթը:

Սակայն այդ ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, նրա առաջնորդները և բազմաթիվ մասնակիցները կոտորվեցին կամ մահապատժի յենթարկվեցին: Գերմանական վարձված լանդսկնեխտների օգնությամբ Ուորիկի զորքերին հաջողվեց գրոհելով գրավել Նորիչը և ապա գյուղացիական առաջնորդների տակտիկական սխալի հետևանքով Նորիչի շրջակայքում ջարդել գյուղացիական աշխարհազորը:

Վրա հասավ դաժան ռեակցիան: Հարյուրներով կախում եյին ապստամբ գյուղացիներին: Իրեն Քետին իր յեղբայր Ուիլյամի հետ շղթայակապ տարան Լոնդոն և դատապարտեցին կախման և քառաճատման: Ուորիկն ազնվականներին համոզեց, վոր Նորֆոկի ժողովրդական ապստամբությունը, վորն արտացոլվեց նաև ուրիշ մի քանի կոմսություններում բռնկված գյուղացիական շարժումների վրա, կազմակերպված ե Սոմերսետի կողմից, վորը դեմ եր համայնական մարգագետիններն ու հողերը մասնավոր սեփականություն դարձնելուն: Պրոտեկտորի պաշտոնում փոխարինելով Սոմերսետին, Ուորիկն ամբողջովին պաշտպանում եր խոշոր լենդլորդերի— ցանկապատողների դասակարգային շահերը և անձնապես շահագրգռված եր համայնական հողերի ցանկապատումներով: Հետևանքները չուշացին յերկար սպասել իրենց: 1550 թվին ապստամբած գյուղացիները

դեմ դաժան դատաստան տեսնելուց հետո հաստատվեցին և վերականգնվեցին XIII դարի արխայիկ ստատուտները,— Մերտոնի (1235 թ.) և Ուեստմինստերի (1285 թ.) ստատուտները, վորոնցով սանկցիա արվեց համայնական արոտավայրերը լորդերի կողմից բռնագրավելուն և այդ արոտավայրերի ցանկապատմանը: 1550 թվի ստատուտը լենդլորդների համար հեշտացրեց ա՛յն ցանկապատերի ավերման վնասների գանձումը, վորոնք կառուցված եյին լորդերի գրաված հասարակական արոտավայրերի մանորների շուրջը:

Մերկանտիլիզմ: Գաղութային բռնագրավումների սկիզբը: Արևելյա-Հնդկական ընկերության հիմնումը

XVI դարում կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացումն Անգլիայում, ամենից առաջ բրդե արդյունաբերության մեջ, և վոչխարաբուծական խոշոր ֆերմաների յերևան գալը միևնույն պրոցեսի— արհեստավորական մանր արդյունաբերության և գյուղացիական մանր տնտեսության կապիտալիստական վերակառուցման յերկու կողմերն եյին: Կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացումն իր արտացոլումն է գտնում նաև անգլիական արտաքին առևտրի բնույթի մեջ: Առևտրի նշանակությունն աճում է և այդ առևտուրը սկսում է ավելի և ավելի մեծ չափով ազդել Անգլիայի արտաքին քաղաքականության վրա:

Դեռ Հենրիխ VII-ի թագավորության ժամանակ, 1496 և 1506 թ. թ. Նիդերլանդների հետ կնքվել եյին յերկու առևտրական պայմանագրեր, վորոնք նպատակ ունեյին ապահովել անգլիական մահուդի արտահանությունն Անտվերպենի վրայով և այն վաճառել վոչ միայն մեծաքանակ, այլև հատով: Անգլիական արտաքին առևտրի օբյեկտ է դառնում արդեն վոչ թե բուրդը, այլ մահուդը: Հենրիխ VII-ն անգլիական հյուպատոս է նշանակում Պիզայում, վորը դառնում է Անգլիայի բրդի ու մահուդի առևտրի կենտրոն Միջերկրական ծովում, ուր անգլիական վաճառականները սկսում են մրցել վենետիկցիների հետ: Հյուսիսում անգլիական վաճառականները մրցում են Հանզայի միության հետ: Անգլիական կառավարությունը փորձում է հանզայականներից կորզել Ռիգան, վերջինիս հետ կնքելով սեպարատ առևտրական պայմանագիր, վորը պետք է ամրապնդեր անգլիական առևտրի դրությունը Բալթյան ծովում: Աջակցելով առևտրի աճին, կառավարությունն առևտրական արտոնությունների-

րից և առանձնաշնորհումներից զրկում է Հանզայի վաճառականներին, որոնք Լոնդոնում ունեյին իրենց ֆակտորիան— այսպես կոչված Պողպատե տունը, և հետագայում (1598 թ.) փակում է այն և հանզայան վաճառականներին առաջարկում է հեռանալ Անգլիայից։ Կառավարությունը հրատարակում է օրենքներ, որոնք խրախուսում են անգլիական առևտուրը և ծովագնացությունը։ Դեռ Էդվարդ VI-ի օրոք, 1552 թվին Վիլլոուբի—Չենսլերի էքսպեդիցիան հայտնագործեց Սպիտակ ծովով դեպի Արխանգելսկ տանող ճանապարհը։ Դա Սիբիրի ափերով դեպի Հնդկաստան տանող հյուսիսային մեծ ճանապարհի հայտնագործման պլանի միայն մասնակի իրականացումն էր։ Անգլիացիներին չհաջողվեց գտնել այդ ճանապարհը, բայց դրա փոխարեն նրանք մուտք գործեցին Մոսկովյան պետությունը։ Իսկ Մոսկովիայի վրայով անգլիական մահուդը կարող էր գնալ Կովկաս և Միջին Ասիա. անգլիական վաճառականները հասան մինչև Թիֆլիս և Սամարղանդ։ Անգլիական ծովագնացության մի ուրիշ էնտուզիաստ, Դեվիսը, փորձում է գտնել հյուսիս-արևմտյան մեծ ճանապարհը դարձյալ դեպի նույն, անգլիական վաճառականներին հրապուրող Հնդկաստանը։ Դեվիսի յերեք ճանապարհորդության (առաջինը— 1585 թ.) հետևանքով նրան հաջողվում է հասնել Գրենլանդիայի ափերը և հայտնագործել այն նեղուցը, որը կոչվում է նրա անունով։

Խրախուսելով անգլիական ծովագնացության և անդրծովյան առևտրի զարգացումը, անմիջականորեն մասնակցելով հեռավոր, խոշոր ոգուտներ խոստացող առևտրական ճանապարհորդությունների կազմակերպման, Թյուդորները մի շարք մոնոպոլիաներ, առանձնաշնորհումներ և արտոնություններ են տալիս առևտրական ընկերություններին և միաժամանակ նպաստում են անգլիական ծովային ուժի աճմանը, ծովերում Անգլիայի տիրապետության ամրապնդմանը։ Անգլիական ծովային առևտրի զարգացման մեջ հսկայական դեր խաղաց վաճառական-ավանտյուրիստների (Merchant Adventurers) հռչակավոր հին ընկերությունը, որը մոնոպոլիայի յենթարկեց մահուդի արտահանությունն Անգլիայից։ Դեռ առաջին Թյուդորները մի շարք առանձնաշնորհումներ և արտոնություններ են տալիս Հանզայի հետ մրցող այդ ընկերությանը։ Առևտրական բուրժուազիան և խոշոր մանուֆակտուրիստներն ընկերու-

թյան հաջողությունները յուրատեսակ ազգային հաղթանակ էին համարում: Ելիզավետի օրոք այդ հին ընկերություններից բացի ծագում են մի շարք նոր ընկերություններ, որոնց հենց անունները ցույց են տալիս, թե ինչ ուղղություններ ունեին անգլիացիների առևտրական ձգտումները,— Մոսկովյան, Թուրքական, Էստլանդական, Մարոկկյան, Գվինեյան, Արևմտա-Հնդկական և վերջապես հետագայում այնքան հռչակված Արևելա-Հնդկական ընկերությունը (1600 թ.): Դրանք գլուխ բարձրացրած առևտրական կապիտալի հզոր կազմակերպություններն էին, որոնք այս կամ այն երկրի հետ առևտուր անելու մոնոպոլ իրավունքներ ունեին: Չնայած ընկերությունների չարաչարությունների վերաբերյալ մի շարք բողոքներին, այդ մոնոպոլիաների համար արտոնագրեր բաժանելու գործում թագի իրավունքների առթիվ պարլամենտի առարկություններին, կառավարությունը խրախուսում է նրանց զարգացումը: Ընկերությունները էքսպեդիցիաներ են կազմակերպում, տանում են հսկայական օգուտներ, որոնց մի մասը գնում է թագի օգտին: Հովանավորելով ընկերություններին, կառավարությունն իր առևտրական և արտաքին քաղաքականության մեջ ավելի և ավելի է պաշտպանում առևտրական կապիտալի շահերը:

XVII դարի սկզբում Հյուսիսային Ամերիկան գաղութացնելու առաջին փորձերն են արվում: Հիմնվեց Վիրգինիա գաղութը (1607 թ.): Գրավվում են մի շարք կետեր Աֆրիկայի ծովափում, նպատակ ունենալով նեգր-ստրուկներ հայթայթել արևմտա-հնդկական ամերիկական գաղութներին: XVI դարի վերջում անգլիական նավեր էին հանդիպում արդեն աշխարհի բոլոր ջրերում: Դեպի գաղութները տանող ճանապարհներին Անգլիան ընդհարվեց XVI դարի մեծագույն գաղութային տերության— Իսպանիայի հետ:

Անգլիայի քաղաքական կարգը XVI դարում: Անգլիական աբսոլյուտիզմի սոցիալական էությունը

Ինչպես Եվրոպայում ամենուրեք, XVI դարի Անգլիայում հաստատվում է տիրապետող դասակարգի քաղաքական կազմակերպության այն ձևը, որ մենք աբսոլյուտիզմ ենք անվանում: Բայց Անգլիայում աբսոլյուտ միապետությունն ուներ որոշ առանձնահատկություններ, որոնք նրան տարբերում են XVII դարի ֆրանսիական կլասիկ աբսոլյուտիզմից: Անգլիական աբսոլյուտիզ-

մի յուրահատկությունը նախ այն էր, որ, չնայելով թագավորական իշխանության ուժեղացմանը, Անգլիայում պառլամենտը չդադարեցրեց իր գոյությունն ինչպես ֆրանսիական գլխավոր շտատները և չհանգեց հանդիսավոր ցերեմոնիայի, ինչպես կորտեսներն Իսպանիայում: Անգլիական աբսոլյուտիզմի երկրորդ առանձնահատկությունը,— դա բյուրոկրատիայի և կառավարման կենտրոնացված ապարատի համեմատական թուլությունն է և ընդհակառակը, տեղական ինքնավարության խոշոր դերը: Նրա երրորդ առանձնահատկությունն այն էր, որ անգլիական աբսոլյուտիզմը չստեղծեց, կամ ավելի ճիշտ ասած՝ չկարողացավ ստեղծել մշտական, միայն թագավորից կախված բանակ:

Ինչպես յեվրոպական, այնպես էլ անգլիական աբսոլյուտիզմն ամբողջ ֆեոդալական դասակարգի տիրապետության քաղաքական ձևն էր, Անգլիայում ևս աբսոլյուտիզմի հիմնական հենարանը ֆեոդալական դասակարգն էր, որը կորցրել էր իր վերնախավը— թագավորից անկախ ֆեոդալական խոշոր սենյորներին: Ֆեոդալական հին, բարձր ազնվականությունը մասամբ ֆիզիկապես ոչնչացավ Կարմիր և Սպիտակ վարդի պատերազմների ժամանակաշրջանում, մասամբ նրա քաղաքական ինքնակայությանը վերջ տվին առաջին Թյուդորները: Ինչպես հայտնի է, այդ դինաստիայի առաջին թագավորը, Հենրիխ VII-ը (1485—1509 թ.թ.), անողոք պայքար էր մղում բարոնների դեմ: Այն ֆեոդալները, որոնք չէին ուզում հաշտվել թագավորական ուժեղ իշխանության հետ, հալածանքների էին ենթարկվում: Թագավորը հրատարակեց մի օրենք, որով արգելվում էին լիվրեները, այսինքն այն շքախումբը, որն իր սենյորների համազգեստներ էր կրում: Այս միջոցը վիժեցրեց ֆեոդալների ռազմական հզորությունը: Հատկապես ֆեոդալների դեմ պայքարելու համար ստեղծվեց «աստղային պալատը»— քաղաքական դավաճանության գործերի գերագույն դատարանը: Այդ պալատը մահվան և գույքի զրավման էր դատապարտում այն ֆեոդալներին, որոնք դիմադրում էին թագավորին: Կոնֆիսկացիայի ենթարկված հողերը վաճառվում էին, իսկ դրանք գնողները, որ գլխավորապես բուրժուազիայի շարքերից էին դուրս գալիս, ֆեոդալական տիրույթների հետ միասին նաև ազնվական կոչում էին ձեռք բերում:

սոլյուտ իշխանությունը վորպես ազնվականական ամբողջ դասակարգի որգան, իր քաղաքականությունը վարում եր այն խմբերի շահերի համար, վորոնք ներկայացուցչություններ ունեյին պարլամենտում,— այն ազնվականության շահերի համար, վորը համակված եր բուրժուական շահերով և բուրժուազիայի շահերի համար, վորը մասամբ ազնվականություն եր դառնում: Քանի դեռ այդ միաձուլումը գտնվում եր կազմավորման պրոցեսում, թագավորի իշխանությունը, խուսանավելով այդ յերկու խմբերի միջև, կարող եր վորոշ չափով ինքնուրույնություն ստանալ և ստիպել պարլամենտին, վոր հնազանդ լինի: Բայց հենց պարլամենտի կառուցվածքն ել քիչ չեր նպաստում այն հանգամանքին, վոր նա սովորաբար հնազանդ եր մնում թագավորին:

Պարլամենտն ընտրվում եր այն սովորությունների հիման վրա, վորոնք սահմանվել եյին դեռ XIII դարում: XV դարի 30-ական թվականներին այդ սովորությունների մեջ մտցվեցին վորոշ փոփոխություններ, վորոնք նախ՝ ընտրական ցենզ սահմանեցին և յերկրորդ՝ ընտրողների թվից վտարեցին կոպիհոլդերներին: Պարլամենտի անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեյին միայն հողն ազատորեն օգտագործողները— ֆրիհոլդերները, վոչ պակաս, քան տարեկան 40 շիլլինգ յեկամտի ցենզով: Ընտրությունները առաջվա նման տեղի եյին ունենում ըստ կոմսությունների և քաղաքների, ընտրական այդ միավորներից յուրաքանչյուրն ընտրում եր յերկու դեպուտատ: Բայց քաղաքներն այդ ժամանակ խիստ եյական եվոլյուցիա եյին ապրում: Ինչպես մենք տեսանք, նոր արդյունաբերությունը զարգանում եր գլխավորապես գյուղերում, համքարային հին քաղաքներն ընկնում եյին ու կորցնում իրենց նշանակությունը: Այդ քաղաքներից շատերը գտնվում եյին լորդերի հողերում և այն չափով, ինչ չափով ընկնում եր նրանց տնտեսական նշանակությունը, նրանք խաղալիք եյին դառնում իրենց լորդերի ձեռքում: Շատ դեպքերում այդպիսի քաղաքներից դեպուտատներ ընտրելը հավասարազոր եր լորդի կողմից դեպուտատներ նշանակելուն: Այս պատճառով զարմանալի չե, վոր պարլամենտում գերակշռում եյին ազնվականության դեպուտատները: Այնուհետև մեծ թվով դեպուտատներ անմիջականորեն կախում ունեյին թագավորից: Հարավ-արևմուտքում կային թագավորական շատ

չենք, վոր անգլիական ազնվականությունը հողից չէր կտրում իր կապը, ընդհակառակը, այն չափով, ինչ չափով զարգանում էր կապիտալիստական տնտեսությունը, այդ ազնվականությունը դառնում էր գյուղի տնտեսական հաջողությունների գործունյա ագենտը: Այս պատճառով ազնվականները գրավում են տեղական ինքնավարության մեջ յեղած բոլոր աչքի ընկնող պաշտոնները, նրանցից նշանակվում են հաշտարար դատավորներ, վորոնք հանդիսանում են ազնվականական իշխանության գլխավոր հենարանը տեղերում:

Նույնն է տեղի ունենում նաև քաղաքներում: Ունևոր բուրժուազիան կազմում է արտոնյալ կորպորացիա, վորի ձեռքում է գտնվում տեղական ինքնավարությունը: Այդ բուրժուազիան վերևում հիշված պատճառներով շահագրգռված է թագավորական ուժեղ իշխանության գոյությամբ, ուստի և հնազանդ է թագավորին: Այս պատճառով թագավորական իշխանության համար անհրաժեշտ չէր տեղերում նոր հիմնարկություններ ստեղծելը:

Այնուամենայնիվ թագավորական իշխանության ուժեղացումը իր արտահայտությունը գտավ զուտ բյուրոկրատական բընույթի մի շարք կենտրոնական հիմնարկություններ ստեղծելու մեջ: Այդպիսին էր նախ՝ արդեն վերևում հիշված «աստղային պալատը»: Այդ պալատին մոտիկ էր «խնդրագիրների պալատը» — թագավորական գերագույն բյուրոկրատական դատարանը, վորն անկախ էր ընդհանուր իրավունքի դատարաններից: 1559 թվին, Յեղիսաբեթի որոք, ստեղծվեց յեկեղեցական գործերի «բարձր հանձնաժողով»: Դա յեկեղեցու վարչության և յեկեղեցական գործերի դատարանի գերագույն որգանն էր: Նրա դատարանում եյին դատվում հերետիկոսները, յերբ արդեն յեկեղեցին (անգլիկանական) դարձել էր թագավորական յեկեղեցի: Բյուրոկրատական կառավարման որգանների նույն կատեգորիային պետք է վերագրել հյուսիսային կոմսությունների գործերի հատուկ Հյուսիսային խորհուրդը, վոր ստեղծվեց 1537 թվին, Ուելսի գործերի վերաբերյալ Ուելսի խորհուրդը և մի շարք ուրիշ հիմնարկություններ: Սակայն դրանք բոլորը չեն կարող համեմատվել Յեվրոպայում յեղած աբսոլյուտ միապետությունների բյուրոկրատական մեքենայի հետ:

Անգլիական աբսոլյուտիզմի յերրորդ առանձնահատկությու-

նը— մշտական բանակի բացակայությունը— մասամբ բացատրվում է նրանով, որ Անգլիան կղզու վրա գտնվող պետություն է և բացակայում է հարձակումներից մշտական պաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտությունը, հարձակումներ, որոնք այնքան հաճախ էյին լինում այն ժամանակաշրջանում, յերբ Յեվրոպայի ցամաքում տերիտորիալ մեծ պետություններ էյին կազմվում։ Այն պատերազմները, որ Անգլիան մղեց XVI և XVII դարերում, գլխավորապես ծովային պատերազմներ էյին և այս պատճառով Անգլիան հիմնականում ուշադրություն էր դարձնում նավատորմին։ Ցամաքային բանակն առաջվա նման աշխարհազոր էր, որը հավաքվում էր կոմսություններում, որոնցից յուրաքանչյուրը պետք է տար որոշ թվով զինված մարդիկ։ Այդ աշխարհազորներն ամեն տարի հավաքվում էյին ռազմական ուսուցման, բայց այդ ուսուցումը վատ էր կազմակերպված և հավաքվողների համար անօգուտ էր անցնում։

Սրանք են սոցիալական հարաբերություններում և քաղաքական կազմակերպության մեջ յեղած այն փոփոխությունները, որ ապրեց Անգլիան XVI դարում։ Այն յերևույթների մեջ, որոնք պայմանավորեցին այդ փոփոխությունները և Անգլիայում արագացրին նախասկզբնական կուտակման պրոցեսը, աչքի ընկնող տեղ է պատկանում անգլիական ռեֆորմացիային։

Անգլիական ռեֆորմացիան

Անգլիայում կրոնական ռեֆորմացիային անմիջականորեն զարկ ավեց Հենրիխ VIII-ի և Յեկատերինա Արագոնցու ապահարզանի պրոցեսը— հռոմեական կուրիայի համար մեծ բարդությունների և դժվարությունների աղբյուրը։ Յեկատերինան Կարլոս V կայսեր ազգականուհին էր, և պապը, որ գտնվում էր կայսեր ազդեցության տակ, չէր կարող նրան վիրավորել ապահարզանով։ Բայց այդ հանգամանքից անկախ քիչ չէյին այն պատճառները, որոնք Հռոմի յեկեղեցու դեմ դժգոհություն առաջացրին անգլիական պետական իշխանության ներկայացուցիչների մեջ և հասցրին այնտեղ, որ այդ իշխանությունը խզեց իր կապը հռոմեական յեկեղեցու։

Հռոմեական կուրիայի միջամտությունը տեղական յեկեղեցիների գործերին՝ միշտ դժգոհություն էր առաջացնում տեղերում, և ազգային յեկեղեցիները, ոգտվելով թագավորական

ամրապնդվող իշխանությունից, շուտով սկսում են սահմանափակել պապերի պահանջները: Կառավարությունը և պառլամենտը միշտ դեմ էին Անգլիայում պապի կողմից յեպիսկոպոսական ամբիոնների համար օտարերկրացիներ նշանակելուն։ Դեռ 1351 թվին հրատարակվել էր «De provisoribus» ստատուտը, վորն արգելում էր յեպիսկոպոսական ամբիոններն օտարերկրացիներին հանձնելը: 1352 թվին «պրովիզորները», այսինքն այն անձինք, վորոնք զանազան միջոցներով դրդում էին պապին, վոր սա իրենց հանձնի Անգլիայում յեղած յեպիսկոպոսական ամբիոնները, նույնիսկ հայտարարվեցին օրենքից դուրս, իհարկե յեթե նրանք անգլիացիներ էին: Դեռ XIV դարում անգլիական դատարաններն ավելի հաճախակի յեն բողոքում դատական գործերը Հռոմ փոխադրելու, հռոմեական կուրիայի դատարանին դիմելու դեմ: Վանքական հողատիրության դեմ անգլիական թագի պայքարը, վորի հետևանքը յեղավ XVI դարի սեկուլյարիզացիան, նույնպես ունի իր նախընթաց պատմությունը: Դեռ 1279 թվին հրատարակված էր «De viris religiosis» ստատուտը, վորն արգելում էր յեկեղեցական հողատիրության հետագա աճը: Ճիշտ է, այն վատ էր կատարվում, թե՛ յեկեղեցական և թե՛ վանքական հողատիրությունը շարունակում էր աճել: Բայց այդ հողատիրության դեմ լայն շարժում էր սկսվում, վորը յերկրում համակրանք էր գտնում: Ինչպես հայտնի յե, դեռ XIV դարում Վիկլեֆը և լոլլարդները պահանջում էին կոնֆիսկացիայի յենթարկել յեկեղեցական կալվածքները:

1521 թվի հոկտեմբերին Հենրիխ VIII-ը Հռոմ ուղարկեց իր անունից գրված մի գիրք, վորն ուղղված էր Լութերի դեմ և պաշտպանում էր կաթոլիկ յեկեղեցու ուսմունքը յոթը խորհուրդների մասին: Հենրիխը պապից իբր նվեր ստացավ վոսկե վարդ և «հավատի պաշտպանի» տիտղոս, լութերականության դեմ ուղղված պայքարում առանձին յեռանդ ցուցաբերելու համար: Ընդհակառակը Լութերը Հենրիխին ուղղած իր պատասխանում չարաչար նախատեց նրան: Իսկ Հենրիխ VIII-ը, դիմելով Հռոմ և խնդրելով իրեն ապահարզան տալու մասին, աջակցություն չգտավ պապի կողմից, այլ ընդհակառակը, մերժում ստացավ. Նա վորոշեց պապի վճռի դեմ բողոքել համալսարաններին և ապագա տիեզերական ժողովին: Հանդես գալով պապի դեմ, թագավորը փորձում էր իրեն ցույց տալ պապական ճնշումներից և

տուրքերից անգլիական ազգային հոգևորականությունը պաշտպանողի դերում։ Իրականում Հենրիխ VIII-ը խոշոր չափով ղեկավարվում էր անձնական մոտիվներով. յերկու պապերը, կաթոլիկ և բողոքական պապերն անձնապես վիրավորել եյին Հենրիխ VIII-ին։ Ահա նրա կուրսի փոխվելու պատճառը[1]։ Հռոմի հետ խզումը միանգամից չկայացավ։ 1533 թվին հրատարակվեց մի ստատուտ, վորը վերացնում եր պապի իրավասությունն անգլիական գործերում։ 1534 թվին «սուպրեմատիայի» կամ առաջնության ակտով թագավորը հայտարարվեց անգլիական յեկեղեցու գլուխ, ընդ վորում ընդգծվում եր, վոր կաթոլիկության վոչ մի դոգմա չի վերացվելու, վոր կփոխվի միայն յեկեղեցական վարչության բնույթը։ 1539 թվին հրատարակված «վեցապոչը» պահպանում եր կաթոլիկական դավանության հիմնական սկզբունքները։ 1543 թվի այսպես կոչված «Թագավորական գրքում» հավատի դոգմաների պաշտոնական շարադրանքը նույնպես շատ մոտիկ է կաթոլիկությանը։ Հռոմի հետ կապը խզելուց հետո էլ Անգլիայում շարունակվում է բողոքականների հետապնդումը. պայքարելով պապի դեմ, Հենրիխ VIII-ը չեր ուզում կտրվել կաթոլիկությունից։ Յեվ այնուամենայնիվ, խզելով իրենց կապը պապի հետ, անգլիական ռեֆորմատորները պետք է աստիճանաբար կտրվեյին կաթոլիկությունից, թեպետև փորձում եյին պահպանել յեկեղեցական ստրոյայի, ժամերգության, յեկեղեցական հագուստի կաթոլիկական արտաքին տեսքը և այլն։ Նրանք հրաժարված եյին կաթոլիկությունից տարբերվող յերևույթներ գտնել, վորպեսզի արդարացնեյին վանքական կալվածքների սկսված սեկուլյարիզացիան և կաթոլիկների հետապնդումները։ Ժամասացության լեզուն դառնում է անգլերենը։ Ցերբեմն նույնիսկ յեպիսկոպոսության միջավայրում բողոքական հայացքների տեր մարդիկ են գտնվում։ Թագավորը հետզհետե սկսեց վոչ միայն թեկնածուներ նշել յեկեղեցական պաշտոնների համար, այլև վորոշել դավանությունը։ Թագավորը վորպես անգլիական յեկեղեցու միասնության պահպանողը, իր վրա յե վերցնում հերետիկոսությունների դեմ պայքարելու գործը, մանավանդ վոր դրանց մեջ իրենց արտահայտությունն եյին գտնում մասսաների դժգոհու-

---

[1] Տես՝ Маркс, Хронологические выписки։

թյունը և քաղաքական ազդեցիայի առաջին նշույլները։ Կառավարությունը կրոնական գործերում սկսում է դիմել բռնախնդիր խնամակալության և վերահսկողության։ Արգելվում է այն գրքերի ընթերցումը, վորոնց մեջ հերետիկոսական մտքեր էր արտահայտվում։ Հենց ավետարանի և հին կտակարանի ընթերցումը դասային բնույթ է ստանում․ դրանք կարող են իրենց համար կարդալ վաճառականները և յոմենները։ Ուրիշների համար ավետարանը կարդալու իրավունք ունեն միայն ջենտլմենները։ Մանր գյուղացիները, արհեստավորները, աշակերտները, յենթավարպետները, օրավարձով աշխատողները և ծառաներն առհասարակ իրավունք չունեն աստվածաշունչը կարդալու։

Բայց Անգլիայում Թագավորական ռեֆորմացիայի հիմնական պատճառը բղխում էր յեկեղեցական գույքերը տիրող դասակարգի և Թագավորական գանձարանի համար օգտագործելու ձգտումից։ Սուպրեմատիայի ակտը հրատարակվելուց անմիջապես հետո սկսվեց վանքական հողերի և գույքերի մասնակի գրրավում։ 1535 Թվին տեղի ունեցավ բոլոր վանքերի ու յեկեղեցիների գնահատումը և դրանից հետո շուտով սկսեցին փակել վանքերն ու կոնֆիսկացիայի յենթարկել սկզբում մանր, քայքայված և ապա խոշոր վանքերի հողերը։ Գյուղացիության մի մասը դիմադրում էր կոնֆիսկացիային, խիստ վախենալով, վոր նոր տերերն ավելի դաժան շահագործողներ կլինեն, քան վանքական ադմինիստրացիան։ Դեպի վանքերն ուղարկվեցին Թագավորի կոմիսարները, վորոնք բռնագրավում էյին վանքական գույքը, վերցնում Թանկարժեք իրերը, հանում էյին նույնիսկ արճիճե տանիքները և այդ բոլորն ուղարկում էյին Թագավորի գանձարանը։

Բայց կոնֆիսկացիայի գլխավոր առարկան վանքական հողերն էյին։ Իր ձեռքն առնելով վանքական կալվածքները, Հենրիխ VIII-ը սկսեց վանքական յեկամուտները և հողերը շնորհել պալատականներին, բարձր աստիճանավորությանը, հաճախ Թանկ գնով վաճառել այդ գույքը։ Կառավարությանը փող էր հարկավոր և նա հողը ծախում էր առավելապես այն մարդկանց, ով կարող էր մեծ գումար տալ և մի անգամից շատ վճարել։ Այս պատճառով վանքական հողերը գնողների մեջ կային շատ ֆինանսիստներ, մանուֆակտուրիստ-

ներ, կային նաև արհեստավորներ, բայց դրեթե բացակայում եյին գյուղացի-յոմեններ: Այնուամենայնիվ կառավարությունը չհաջողվեց դուրս գալ ֆինանսական դժվարություններից: Այն հույսերը, թե վանքական կալվածքների գրավումը մեծապես կավելացնի թագի յեկամուտները և գուցե նույնիսկ կվերացնի հարկերի անհրաժեշտությունը,— չարդարացան: Դեռ Հենրիխ VIII-ի օրոք վանքական հողերի ընդարձակ տարածության մեծ մասն անցավ մասնավոր մարդկանց: Թագավորի շռայլությունը և նրա մինիստրների գանձագողությունն այն հետևանքն ունեցան, որ մի նոր գերատեսչություն— «շահույթների դատարան» հիմնելու միջոցով թագի յեկամուտների բարձրացման հույսերն ի դերև յելան, իսկ այդ գերատեսչությունը հատկապես հետևվում եր նախկին վանքական հողերից ստացվող մուտքերին: Մյուս կողմից վանքական հողերն իբր պարգև տալը, դրանց բաժանումն ու վաճառքը և ապա հողի հետագա աշխույժ մոբիլիզացիան, նրա նոր անցումները յերրորդ ձեռքերը— նոր հողատեր ազնվականությանն ու բուրժուազիային— չափազանց աղետալի հետևանքներ եյին ունենում գյուղական բնակչության լայն մասսաների— վանքական հողերը հողակալող գյուղացիների համար: Գյուղացիական հողերի տարածությունը չավելացավ վանքական կալվածքների վաճառքից: Ընդհակառակը, գյուղացիությունը խիստ տուժեց վանքական հողատիրության լիկվիդացիայից: Յեկեղեցական կալվածքները կազմում եյին «հողային սեփականության տրադիցիոն հարաբերությունների կրոնական ամրոցը: Այդ ամրոցի անկումից հետո չեյին կարող հաստատուն մնալ նաև այդ հարաբերությունները»[1]: Գյուղացիների— վանքական հողերի ցմահ հողակալների մասսաները խիստ շահագրգռված եյին յեկեղեցական այդ սեփականության բախտով, որին նրանք որոշ իմաստով մասնակից եյին: Այնուհետև, վանքական տնտեսության հատուկ ռուտինան և տնտեսական հետամնացությունը գյուղացիներին որոշ չափով պահպանում եյին դժբախտություններից, որոնք կապված են ավելի ինտենսիվ շահագործման հետ: Վանքական կալվածքները նոր տերերին— ազնվականներին կամ բուրժուազիային անցնելու հետևանքով սովորաբար ուժեղանում եր հողը պահողների կալի-

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVII, *եջ 790—791*:

տալիստական շահագործումը, բարձրանում եյին նրանց վճարած ռենտաներն ու պարհակները, հաճախ այդ նրանց սպառնում եր զրկվել համայնական իրավունքներից, անտառներն արոտավայրերը տանելու իրավունքներից և նույնիսկ արտաքսվել հողից: Ինքնին հասկանալի յե, որ այն մարդիկ, որոնք կապիտալ եյին ծախսել հող գնելու համար, ուզում եյին ամենամեծ շահույթ ստանալ: Այս պատճառով նախկին վանքական հողերում տեղի յեր ունենում ցանկապատումների արագ պրոցես, այսինքըն հողը դառնում եր գնորդի հաստատուն տիրությունը, արտաքսվում եյին գյուղացիները, վանքական հողերի նախկին հողակալները և հողի սեփականատերերը:

Վանքական գույքերի գրավումն ուժեղացրեց գժտությունն Անգլիայի և Հռոմի միջև ու հին հարաբերությունների լիակատար վերահաստատումն անկարելի դարձրեց նույնիսկ կաթոլիկական ռեակցիայի ժամանակաշրջանում, XVI դարի 50-ական թվականներին: Անգլիական յեկեղեցու և Հռոմի միջև առաջացած այդ գժտության իդեոլոգիական արտահայտությունը և խարխումը հանգիսացավ յեկեղեցական հետագա օրենսդրությունն Եդվարդ VI-ի օրոք, իսկ այդ օրենսդրությունն ընդգծեց նոր, պապից անկախ յեկեղեցու դոգմայական առանձնահատկությունները: 1549 թվի վերջում Կրանմերն ավարտեց անգլիական յեկեղեցու նոր պատարագը կազմելը (Book of common prayer) և յեկեղեցական խորհուրդների կատարման ձևնարկը: Հաղորդությունը սկսեց դիտվել իբրև սոսկ հիշողություն խորհրդավոր ընթրիքի մասին: Կրանմերը, որ Հենրիխ VIII-ի օրոք մարդկանց այրում եր խարույկի վրա այն պատճառով, որ նրանք չեյին հավատում գոյափոխմանը, հիմա պատրաստ եր խարույկի վրա այրել այն մարդկանց, ովքեր հավատում եյին գոյափոխմանը: 1552 թվին պարլամենտն ընդունեց Կրանմերի նոր ժամասացության ծեսը— նրա պատարագը և նոր դավանության 42 կետերը: Դրա հետ միասին շարունակվում եր յեկեղեցական գույքերի հափշտակությունը թագավորի ֆավորիտների կողմից: Յեկեղեցիներից դուրս եյին տարվում ոսկե ու արծաթե սրբապատկերները, բուրվառները, աշտանակները, շքեղ զգեստները: Թագավորի և պարլամենտի անունով տեղի յեր ունենում յեկեղեցիների ընդհանուր կողոպուտ: Սոմերսետը, թալանելով մի

քանի լիազորություններ, Լոնդոնում իր համար շքեղ պալատ կառուցեց:

Կաթոլիկական ռեակցիա Կրանմերի կարծիքով անգլիկանական եկեղեցու պատարագ մտցնելը պետք է վերջ տար բոլոր տարաձայնություններին, կրոնական միօրինակություն ստեղծեր: Սակայն Էդվարդ VI-ի հաջորդի— Մարիայի օրոք (1553—1558 թ. թ.) կրոնական ռեֆորմացիան փոխարինվեց կաթոլիկական դաժան ռեակցիայով, որին նպաստեց սերտ մերձեցումն Իսպանիայի— կաթոլիկության հենարանի հետ և Մարիայի ամուսնությունն Իսպանիայի թագավոր Ֆիլիպպ II-ի հետ: Կրանմերի ամբողջ գործը փչացավ: «Օրենքով սահմանված» բողոքական եկեղեցին հայտարարվեց սակավաթիվ, այլանդակված վանքերի նորոգություն և հնարում, նորից մտցվեց կաթոլիկական պատարագ լատիներեն լեզվով: Մարիան փորձում էր ամբողջովին վերականգնել կաթոլիկությունը: Անգլիական պարլամենտը Մարիային և նրա ամուսին Ֆիլիպպ II-ին դիմեց մի խնդրագրով, որով խնդրում էր, որպեսզի նորին մեծությունները, մասնակից չլինելով կաթոլիկ եկեղեցուց անջատվելու «մեղքին», պապի առաջ միջնորդեն «մեղսագործներին ներելու և նրանց վերստին հռոմեական եկեղեցուն միացնելու մասին»: Պապական պատվիրակը պապի անունից հանդիսավոր կերպով մեղքերի թողություն շնորհեց լորդերի պալատներին և անգլիական ամբողջ ազգին: Սակայն ավելի դժվար էր վերադարձնել եկեղեցուց հափշտակված կալվածքները: Վանքական հողերն անցել էին մասնավոր տերերի ձեռքը: Մարիան կարող էր եկեղեցուն վերադարձնել միայն այն վանքական կալվածքները, որոնք դեռ մնում էին թագավորի ձեռքում: Բայց այդպիսի հողերն արդեն քիչ էին: Թագուհին ստիպված եղավ ամենալուրջ զիջում անել եկեղեցական հողերի նոր տերերի նկատմամբ և անվիճելի ճանաչել նրանց իրավունքներն այդ հողերի վրա: Ինքը, պապը հարկադրված էր հաշվի առնել վանքական հողերի հիմնական զանգվածի լիկվիդացիայի արդեն կատարված փաստը և «դիսպենսացիա»— մեղքերի թողություն տալ նոր տերերին, որոնք «ապօրինի կերպով» ստացել կամ ձեռք էին բերել վանքական կալվածքները:

Մարիայի օրոք կաթոլիկության վերահաստատման հետ մեկտեղ ուժեղանում էին հերետիկոսների և աղանդավորների հե-

տապնդումները։ Լոնդոնի յեպիսկոպոսի դատարանի վճռով հերետիկոսներին այրում եյին խարույկների վրա։ Նույնը վիճակվեց նաև կրանմերին, վորը մեղադրվում եր հերետիկոսության և պետական դավաճանության համար, թեև կրանմերը Տաուերում բանտարկված ժամանակ վեց անգամ դիմում եր ստորագրել իր առաջվա «մոլորություններից» հրաժարվելու մասին։ Ի միջի այլոց կրանմերը մեղադրվում եր նաև Հենրիխ VIII-ի և Յեկատերինա Արագոնցու— Մարիայի մոր ապահարզանի համար։ Այդ ապահարզանն «ապօրինի» ճանաչվեց և այդ կերպ «ապօրինածին» համարվեց Յեղիսաբեթը— Հենրիխ VIII-ի և Աննա Բոլեյնի դուստրը, վոր և հայտարարվեց պարլամենտական ակտով։ Մարիան պատմագրության մեջ մտավ «Արյունոտ» տիտղոսով, վորին քիչ չնպաստեցին ռեֆորմացիայի բողոքական պատմիչները, մոռանալով, վոր ե՛լ ավելի արյունոտ են յեղել «հրեշ» Հենրիխ VIII-ը և «ծայրահեղ-արյունոտ» թագուհի Յեղիսաբեթը— Մարիայի հաջորդը[1]։

Ռեֆորմացիայի վերջնական հաղթանակը

1558 թվի նոյեմբերին մեռավ Մարիան և թագուհի հռչակվեց Յեղիսաբեթը։ Թագադրության ժամանակ Յեղիսաբեթ հանդիսավոր յերդում տվեց կաթոլիկ յեկեղեցուն հավատարիմ մնալու մասին։ Բայց յերբ Պողոս IV պապը չցանկացավ ճանաչել Յեղիսաբեթի, վորպես «ապօրինածինի» իրավունքներն անգլիական գահի նկատմամբ և հայտարարեց, թե անգլիական թագի իրավունքները պատկանում են Հենրիխ VIII-ի օրինական ժառանգուհուն, Մարիա Ստյուարտին, Յեղիսաբեթն իրեն հայտարարեց բողոքականության «պաշտպան» և սկսեց հավատացնել գերմանական բողոքականներին, թե ինքը կողմնակից է բողոքական կրոնին։ Խզելով կապը Հռոմի և կաթոլիկության հենարան Իսպանիայի հետ, Յեղիսաբեթը վերականգնեց անգլիական բարենորոգված պետական յեկեղեցին։ Նորից մտցվեց անգլիերեն ժամասացություն կրանմերի՝ պատարագի ուղղված ձեռնարկով։ Վերականգնվեցին առաջնության ակտը և Հենրիխ VIII-ի ու Եդվարդ VI-ի մյուս ռեֆորմացիոն ստատուտները։ Յեղիսաբեթը վերստին հայտարարվեց յեկեղեցու վոչ թե «գլուխ», ինչպես Հենրիխ VIII-ը, այլ միայն «գերագույն կառավարիչ»։ «Բարձր

---

[1] Տե՛ս Маркс, Хронологические выписки։

հանձնաժողովին» հանձնարարվեց կարգավորել յեկեղեցական գործերը և մեծ «միակերպություն» մտցնել դավանության և յեկեղեցական պաշտամունքի հարցերում։ Հռոմի կուրիան ոչ մի կերպ չէր ուզում հաշտվել Անգլիան կորցնելու հետ և յերազում էր տապալել Յեղիսաբեթին, վորին պապը 1570 թվին հայտարարեց բանադրանքի յենթարկված և տապալված։ Պապը Յեղիսաբեթի հպատակներին ազատեց թագուհուն տված յերդումից։ Այնուամենայնիվ Յեղիսաբեթի կառավարությանը հաջողվում է դուրս գալ դժվար դրությունից և Անգլիայում ամրապնդել բարենորոգված յեկեղեցին։ 1571 թվին պարլամենտի կողմից ընդունվում է անգլիական նոր հավատո հանդանակը— այսպես կոչված «Յերեսուն ինը հոդվածները», վորոնք մի անգամ ևս ձևակերպում են բարենորոգված անգլիական յեկեղեցու սկզբունքները։ Դավանությունը կոմպրոմիսային բնույթ էր կրում։ Ստեղծվել էր սերտ կապ յեկեղեցական և պետական վարչությունների միջև. «բարձր հանձնաժողովը» վարչական-յեկեղեցական հսկողության և կառավարման գերագույն որգանն էր։ Տեղերում շերիֆները հետևում էին բնակիչների հաճախմանն անգլիկանական յեկեղեցիները։ Յեկեղեցական յերեցփոխները նրանց ոգնում էին այդ վերահսկողության գործում։ Կաթոլիկների դրությունը սկզբում առանձնապես ծանր չէր Յեղիսաբեթյան Անգլիայում, բայց հետո, յերբ հռոմեական կուրիան փորձեր է անում դահընկեց անել Յեղիսաբեթին, սկսվում են նրանց հետապնդումները։ Յերկրում կազմակերպվում են կաթոլիկական դավադրություններ, վորոնց գործունյա մասնակցություն են ունենում իսպանական արքունիքում պատսպարված անգլիացի եմիգրանտ-կաթոլիկները։ Հռոմում հիմնվում է հատուկ քոլեջ, ուր պետք է պատրաստվեյին ապագա քահանաները, կաթոլիկության քարոզիչներն ու միսիոներները հերետիկոսական Անգլիայում։ Նույնպիսի մի այլ քոլեջ կազմակերպվում է Դուեյում, հենց Լամանշի ափին, ակներևաբար նպատակ ունենալով կաթոլիկական եմիսարներին և պրոպագանդիստներին վորքան կարելի յե շուտ ուղարկել Անգլիա։ Կազմակերպվում են կաթոլիկական դավադրություններ հոգուտ Մարիա Ստյուարտի, շոտլանդական թագուհու, վոր Շոտլանդիայից արտաքսված էր բողոքական կուսակցության կողմից և Յեղիսաբեթի անմիջական մասնակցությամբ, վորը

փողով օգնում եր չոտլանդական դավադիրներին: Ստիպված լինելով փախչել Անգլիա, Մարիան ընկավ իր մրցակցուհու՝ Յեղիսաբեթի ձեռքը, վորը նրան խիստ կալանքի տակ եր պահում:

Անգլիայում կաթոլիկների հետապնդումը 70-ական թվականներից խիստ դաժան բնույթ ընդունեց. Անգլիայում մտցվեց զուտ «իսպանական» կրոնական օրենսդրություն, միայն թե «անգլիկանական բնույթով»[1]: Պապի և ճիզվիտների հետ հարաբերություններ պահպանելը, բողոքականին կաթոլիկ դարձնելը կամ նույնիսկ դրան ներկա գտնվելը պետական դավաճանություն հայտարարվեց: Անգլիկանական յեկեղեցիները չհաճախելու համար ծանր, սնանկացուցիչ տուգանքներ եյին գանձվում:

Անգլիայում կազմակերպվում ե «սրբազան գուգադ» կաթոլիկության և նրա մեքենայությունների դեմ պայքարելու համար: Ճիզվիտներին և կաթոլիկական քոլեջների սաներին առաջարկվեց մահվան սպառնալիքի տակ հեռանալ Անգլիայից: Սահմանափակվեց կաթոլիկ անգլիացիների իրավունքը՝ յերկրում մի տեղից մի այլ տեղ փոխադրվելու: Ընդհանուր հուզումն ուժեղանում ե, յերբ սպանվում ե Վիլհելմ Օրանցին, բողոքականների առաջնորդը, վորը 1584 թվին ընկավ մի դավադիր-կաթոլիկի ձեռքով: Անգլիայում Յեղիսաբեթի հրամանով մահապատժի յեն յենթարկում Մարիա Ստյուարտին, վորի օգտին կաթոլիկական դավադրություններ եյին կազմակերպվում:

Այսպես եր քաղաքական իրադրությունն այն տարիներում, վորոնք անմիջականորեն նախորդեցին իսպանական «Անպարտելի Արմադայի» ջախջախմանը, «Անպարտելի Արմադա», վոր Ֆիլիպպ II-ը յենթադրում եր 1588 թվին ուղարկել Անգլիա:

Յեղիսաբեթի կառավարությունը ստիպված եր պայքար մղել վոչ միայն կաթոլիկների և կաթոլիկական վտանգի, այլև ավելի ռադիկալ կրոնական հոսանքների ու աղանդների դեմ: Յեվ այդ հասկանալի յե: Անգլիկանական նոր յեկեղեցին կամ, ինչպես սկսեցին նրան անվանել՝ «բարձր յեկեղեցին» մնում եր իբրև արիստոկրատական հիմնարկություն, վորը շատ բան եր պահել հին ֆեոդալական կաթոլիկ յեկեղեցուց,— յեպիսկոպոսություն, պաշտամունքի կաթոլիկական արտաքին և ժամասա-

1 Տես՝ Маркс. Хронологические выписки.

ցություն: Ցեղախմբապետները սովորաբար նշանակվում եյին ազնըվականական ականավոր տոհմերից և նույնպես սեփական աստիճանավորներ եյին: Գելական ցեղերու այդ արիստոկրատական բնույթը նպաստեց այն հանգամանքին, վոր նա վոչ միայն դարձավ Թյուդորյան աբսոլյուտիզմի հենարանը, այլև Ստյուարտների որոք Թագի և պարլամենտի միջև մղված հետագա պայքարում վճռականապես կողմնակից յեղավ նոր դինաստիայի աբսոլյուտիստական պահանջներին:

Դրա հետ միասին դեռ XVI դարի 60–70-ական թվականներին Անգլիայում ուժեղացավ պուրիտանիզմը (լատիներեն purus բառից— մաքուր), վորի համար բնորոշ եր նողկանքը դեպի կաթոլիկական արարքներ, վոր մասամբ ժառանգել եր անգլիկանական պետական յեկեղեցին: Այդ հոսանքի կողմնակիցները դեմ եյին արտահայտվում յեկեղեցական գործում թագուհու գլխավորության սկզբունքին, յեկեղեցական դատարաններին, պահանջում եյին, վոր քահանաներն ընտրվեն համայնքի կողմից: Կալվինիզմում, վորն անգլիական հողի վրա ստացավ պուրիտանիզմ անունը, նոր ազնվականությունն ու բուրժուազիան գտան մի կրոն, վորը համապատասխանում եր նրանց ճաշակին և շահերին: Կալվինիզմին— ռեֆորմացիայում այդ բուրժուական տիպիկ հոսանքին հատուկ ձգտումը դեպի «եժան յեկեղեցին», դեպի «պաշտամունքի» պարզացումն ու մաքրումն առանձնապես վառ արտահայտություն գտավ հենց Անգլիայում: Կալվինիզմի բուրժուական եությունը թերևս վոչ մի տեղ այնպես պարզ չեր արտահայտվում, ինչպես անգլիական պուրիտանիզմում: Անգլիական պուրիտանականությունը— դա բուրժուազիայի և նոր ազնվականության կրոնն ե: Իսկական պուրիտանը, այդ ժրաջան խնայող-տնտեսատերն ե, խոշոր մանուֆակտուրիստը կամ գյուղական ազնվականը, վորը նոր ցանկապատված հողամասում ջանասիրությամբ զբաղվում ե ռացիոնալ տնտեսությամբ կամ յեկամտաբեր վոչխարաբուծությամբ:

Բայց պուրիտանության մեջ կար յերկու հոսանք, մեկը— ավելի չափավոր, մյուսը— ռադիկալ: Չափավորները հետևում եյին Կալվինի ուսմունքին, նրա յեկեղեցական կազմակերպությանը և ցանկանում եյին, վոր Անգլիայում հաստատվի պրեսբիտերական պետական յեկեղեցի, նման այն յեկեղեցուն, վոր այդ ժամանակ հաստատվել եր Շոտլանդիայում: Պուրիտանության

ռադիկալ ուղղությունը դատապարտում էր պետական եկեղեցու բուն սկզբունքը: Յուրաքանչյուր տեղական եկեղեցական համայնք պետք է լինի անկախ (այստեղից և այդ ուղղության կողմնակիցների անունը— ինդեպենդենտներ):

70-ական թվականների սկզբում Անգլիայում կազմակերպվում է պրեսբիտերական առաջին համայնքը: 1575 թվին Լոնդոնում այրվեցին ֆլամանդացի երկու անաբապտիստներ: 1581 թվին Նորիչում, մահուդի արտադրության կենտրոնում, հիմնվեց ինդեպենդենտների համայնքը, որ առաջինն էր Անգլիայում: Կրոնական ռադիկալիզմի այդ բոլոր արտահայտությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետագա այն կրոնական պայքարի կապակցությամբ, որ տեղի ունեցավ XVII դարի առաջին տասնամյակներում և մանավանդ XVII դարի 40–50-ական թվականների անգլիական բուրժուական հեղափոխության տարիներում: Բայց արդեն յեղիսաբեթյան եպոխայում պարզ էր, որ չնայելով «բարձր հանձնաժողովի» բոլոր միջոցառումներին և պաշտոնական անգլիկանիզմի եկեղեցական-վարչական ճնշման, մի շարք կրոնական խմբավորումներ և հոսանքներ դուրս մնացին պաշտոնական ռեֆորմացիայի ցանկից: Յեղիսաբեթի կառավարությունը նրանց դեմ ձեռք էր առնում ամենավճռական միջոցներ, ընդհուպ մինչև երկրի սահմաններից արտաքսելը և մահապատիժները: Այս կողմից Յեղիսաբեթի կառավարությունը հետ չէր մնում գերմանական իշխաններից և լյութերական ռեֆորմացիայի առաջնորդներից, որոնք խստորեն դատաստան էին տեսնում անաբապտիստների և այլ աղանդավորների դեմ:

Յեթե առաջ գերմանական անաբապտիստները, փախչելով իրենց հայրենիքում յեղած կրոնական հետապնդումներից, թաքնվում էին արևելյան Անգլիայի առևտրա-արդյունաբերական քաղաքներում, ապա այժմ սկսվում է պուրիտանների գաղթը Անգլիայից դեպի Նիդերլանդներ, ուր կար կրոնական մեծ ազատություն, իսկ հետագայում, XVII դարի առաջին տասնամյակներում, Ստյուարտների օրոք պուրիտանները գաղթում են Հյուսիսային Ամերիկա, այնտեղ հիմք դնելով անգլիական գաղութացման:

Թյուդորների արտաքին քաղաքականությունը: Պայքար Իսպանիայի դեմ

Արտաքին առևտուրը, որն աճում էր իր չափերով և նշանակությամբ, Թյուդորների եպոխայում դառնում է այնպիսի մի գործոն, որը հետզհետե ազդում է Անգլիայի արտաքին քաղաքականության ուղղության վրա: Իսպանիան մյուս պետություններից ավելի մեծ չափով է խոչընդոտ հանդիսանում անգլիական փորձերին՝ հաստատվելու անդրծովյան երկրներում, առևտրական հարաբերություններ սկսելու նրանց հետ: Իսպանիային մյուս պետություններից ավելի շուտ հաջողվեց հաստատվել օվկիանոսի մյուս կողմում: Այս պատճառով Իսպանիան Անգլիայի ամենալուրջ հակառակորդն էր այն փորձերի բնագավառում, որ Անգլիան անում էր առևտրական և ապա գաղութային էքսպանսիայի ուղղությամբ: XVI դարի ընթացքում երկու անգամ փորձ է արվում դինաստիական ամուսնությունների միջոցով վերացնել անգլո-իսպանական հակասությունների սրությունն ու լարվածությունը: Հենրիխ VIII-ը, անգլիական գահ նստելով 1509 թվին, ամուսնանում է Եկատերինա Արագոնցու, իր ավագ եղբոր այրիի հետ: Նույն ժամանակաշրջանի ընթացքում դինաստիական երկրորդ ամուսնությունը— դա Մարիա Թյուդորի և Իսպանիայի թագավոր Ֆիլիպպ II-ի ամուսնությունն էր: Մարիան, որ մոր կողմից իսպանուհի էր, Հենրիխ VIII-ի և Եկատերինա Արագոնցու դուստրը, 1553 թվին անգլիական գահ նստելով, դառնում է կաթոլիկական արյունոտ ռեակցիայի ջատագովն Անգլիայում, այնուհանդերձ Անգլիայի քաղաքականությունը ենթարկելով Իսպանիայի շահերին: Ընդհակառակը, Եղիսաբեթ Թյուդորը (1558–1603 թ. թ.), որ անգլիական գահ նստեց Մարիա Արյունոտից հետո, մերժում է իրեն առաջարկված ամուսնությունն իսպանական թագավորի հետ, ամեն կերպ նպաստում է անգլիկանիզմի—Անգլիայում բարենորոգված պետական եկեղեցու հաստատմանը, միաժամանակ հանդես գալով իբրև բողոքականության պաշտպան Եվրոպայի ցամաքում, այն ժամանակ, երբ իսպանական թագավորը ձգտում է ճնշել բողոքականությունն իր նիդերլանդական տիրույթներում և Եվրոպայում վերականգնել կաթոլիկ եկեղեցու տիրապետությունը: Ամենուրեք օժանդակելով իսպանական թագավորի թշնամիներին— բողոքականներին, օգնելով Ֆիլիպպի դեմ ապստամբած նիդերլանդական գյոզերին,

Յեղիսաբեթն այնու հանդերձ ուժեղ թափով հովանավորում է անգլիական առևտրի և ծովագնացության զարգացմանը, Իսպանիայի դեմ համառ պայքար է մղում դեպի անդրօվկիանոսյան յերկրները տանող նրա առևտրական ճանապարհներում: Այսպիսով ակներև է բողոքական հակաիսպանական քաղաքականության կապը նոր ազնվականության և բուրժուազիայի շահերի հետ: Իզուր չէ, որ ռազմասեր պուրիտանները, նույնիսկ հալածվելով Յեղիսաբեթի կառավարության կողմից, Իսպանիայի դեմ ուղղված պայքարում նրան լիակատար աջակցություն եյին ցույց տալիս և խորտակելով ու կողոպտելով իսպանական նավերը, «Ֆիլիպպի քթի տակ իրենց սաղմոսներն եյին յերգում»: Ընդհակառակը, կաթոլիկական ռեակցիան և Իսպանիայի նկատմամբ հաշտվողական քաղաքականությունը միաժամանակ կապված եյին զուտ ֆեոդալական շահերի և խավերի ժամանակավոր հաղթանակի հետ:

Յեղիսաբեթի եպոխայում անգլիական նավատորմի զարգացման մեջ հսկայական դեր խաղացին մասնավոր ձեռնարկուները, առևտրական ճանապարհորդությունների կազմակերպիչները, ծովային խիզախ առևտրականներն ու միաժամանակ ծովահենները: Անգլիական ծովահենները թագուհու վոչ-պաշտոնական ոժանդակությամբ ծովային ավազակությամբ են զբաղվում իսպանական առևտրական ուղիներում, ավերում են Արևմտյան Հնդկաստանի ափերը: Յեղիսաբեթի յերկու հռչակավոր ադմիրալները— Դրեկը և Գաուկինսը ծովահեններ եյին: Անգլիական ծովահենների նավերը չափազանց մեծ դեր խաղացին Իսպանիայի դեմ Անգլիայի մղած պայքարի յեզրափակիչ եպիզոդում, 1588 թվին իսպանական «Անպարտելի Արմադան» ջախջախելու մեջ,— որը պետք է իսպանական եքսպեդիցիոն բանակն ափ հաներ Անգլիան նվաճելու համար: Իսպանական նավատորմի ջախջախումն այնքան լիակատար եր, որ Իսպանիան այլևս չեր կարող ուշքի յեկնել այդ ջախջախումից: Նրա համար սկսվում է տնտեսական դեգրադացիայի և անկման ժամանակաշրջանը. Ընդհակառակը, Անգլիան ամրապնդում է իր գերակշռող դիրքը ծովային առևտրական ուղիներում:

Անգլիայի կուլտուրան Թյուդորների եպոխայում: Թոմաս Մոր: Շեքսպիր

XVI դարը, երբ տեղի ունեցավ Անգլիայի գաղութային և առևտրական հզորության վերելքը, այնու հանդերձ այն ժամանակն էր, երբ զարգացավ անգլիական հումանիզմը և ծաղկեցին անգլիական գրականությունն ու թատրոնը: Այդ ծաղկումն անխզելիորեն կապված է Թոմաս Մորի, հռչակավոր հումանիստի, «Ուտոպիայի» հեղինակի, և Վիլյամ Շեքսպիրի անունների հետ,— վորն իր յերկերում դըրսևորեց այդ եպոխայի գեղարվեստական կերպարը և հսկայական արժեք ներկայացնող գրական ժառանգություն թողեց հետագա սերունդներին:

Թոմաս Մորն անգլիական հումանիզմի ամենաականավոր ներկայացուցիչն է և դրա հետ միասին նոր ժամանակի արևմտա-յեվրոպական սոցիալ-ուտոպիական մտքի նախահայրերից մեկը: Մորն ամենասերտ կերպով կապված է իր դարաշրջանի, Թյուդորյան Անգլիայի, ռեֆորմացիայի եպոխայի կրոնա-քաղաքական պայքարի, XVI դարի գերմանական հումանիզմի հետ: Միևնույն ժամանակ Մորը հեղինակ է սքանչելի մի յերկի, «Ուտոպիայի», վորի մեջ Մորին ժամանակակից իրականության զայրացկոտ քննադատությունը և անալիզը միացված են ապագայի նկատմամբ XVI դարի համար խորը պրոգնոզի հետ. Մորը հանդիսանում է արևմտա-յեվրոպական ուտոպիական սոցիալիզմի հայրը:

Թոմաս Մորը ծնվել է XV դարի 70-ական թվականների վերջում, «քիչ անվանի, բայց հարգելի ընտանիքում»: Նրա հայրը դատավոր էր թագավորական դատարաններից մեկում: Ինքը, Մորը սովորում էր Ոքսֆորդի համալսարանում, ուր 90-ական թվականների վերջին Երազմ Ռոտտերդամցին հունարեն լեզու յեր ավանդում: Մորն ուժեղ թափով գրավվում էր կլասիկներով: Նա առանձնապես տարվում էր Պլատոնով և նրա դպրոցով: Պլատոնի «Հանրապետությունը» դարձավ Մորի «Ուտոպիայի» նախատիպը: XVI դարի անգլիական ռեալ իրականության գծերն «Ուտոպիայում» միահյուսվում են իդեալական պետության վերաբերյալ Մորի պատկերացման հետ: Ուտոպիան մի յերկիր է, վորը չի գտնվում յերկրագնդի վրա (հունարեն οὐ τόπος — վոչ մի տեղ), այդ յերանավետ մի յերկիր է, ուր բացակայում է հողի մասնավոր սեփականությունը, ուր հողը

հանդիսանում է ընդհանուր սեփականություն: Այդ իդեալական յերկրին հակադրվում է Մորին ժամանակակից Անգլիան իր հագած և անկուշտ վորկրամոլներով», վորոնք վոչնչացնում են արտերի սահմանները, իրենց ձեռքի տակ հազարավոր ակրերով հող են պահում, արտաքսում են գյուղացիներին և իրենց բռնություններով ու ճնշումներով նրանց անտուն թափառաշրջիկներ են դարձնում: Մորի «Ուտոպիայում» մենք գտնում ենք Մարքսի «Կապիտալում» բերված այն ֆրազը, թե Անգլիայում վոչխարները ուտում են մարդկանց:

Ըստ Մորի վո՞րն է Անգլիան ընդգրկող դժբախտության հիմնական պատճառը.— հողի մասնավոր սեփականությունը: «Ականավոր այր Ռաֆայել Հիտլոդեյը», վորի բերանով Մորն արտահայտում է իր սեփական մտքերը, հայտարարում է, թե լիովին համաձայն է Պլատոնի հետ, վորը հրաժարվել էր օրենքներ գրել այնպիսի ժողովրդների համար, վորոնք մերժում են գույքերի ընդհանրությունը: Այնուհետև Մորը տալիս է Թյուդորյան Անգլիայի սոցիալական հիմնական թշվառություններից մեկի հիանալի անալիզը,— թափառաշրջիկության, վորի դեմ կառավարությունը փորձում էր պայքարել մտրակներով, շիկացած յերկաթով և կախաղաններով: «Անկուշտ վորկրամոլները» հողից արտաքսում են գյուղացի-տնտեսատերերին, նրանց դարձնելով անապաստան թափառաշրջիկներ: Բնավեր յեղած գյուղացիները ծախում են իրենց գույքը: Նրանք ստիպված են հեռանալ իրենց վաղեմի, հարազատ վայրերից: «Յեվ յերբ այդ դժբախտ թափառականները ծախել են ամեն ինչ մինչև վերջին կոպեկը, ի սեր աստուծո, ասացեք խնդրեմ, էլ ի՞նչ է մնում նրանց անելու, յեթե վոչ գողանալ... Նրանց, վորպես թափառաշրջիկների, բանտ են նետում այն պատճառով, վոր նրանք անգործ թափառում են: Նրանց մեղադրում են անգործության համար, նրանց, վորոնց վոչ վոք չի ուզում աշխատանք տալ, վորքան էլ նրանք յեռանդով փնտրեն այն...» Մեր առաջ է «նախասկզբնական կուտակման» գործերով լեցուն Թյուդորյան Անգլիայի ծանոթ պատկերը: Դրա փոխարեն իբր հակադրություն Մորին ժամանակակից XVI դարի այդ Անգլիայի,— ուր տեր ու տնօրեն են բռնակալ լենդլորդերը և իսկական դատարկապորտ-աբբաները, վոչխարաբույծներն ու հողը ցանկապատողները,— իդեալական, յերանավետ յերկրում, Ուտոպիայում ամբողջ հո–

ղը կազմում է ընդհանուր սեփականություն, մշակվում է այնտեղ ապրող մարդկանց ազատ աշխատանքով: Ուտոպիայում արտադրության բնատնտեսական-արհեստավորական կազմակերպությունը նույնպես ամենևին չի հիշեցնում Անգլիայում ստեղծված կապիտալիստական մանուֆակտուրաները, ընդհակառակը, նա ավելի նման է միջնադարյան բնատնտեսական-արհեստավորական կարգերին: «Ուտոպիայի» լույս տեսնելուց յերկու տարի անց (1-ին հրատ. 1516 թ.) մենք Մորին գտնում ենք Հենրիխ VIII-ի արքունիքում: «Ուտոպիայի» հեղինակի, Երազմ Ռոտտերդամցու բարեկամի հռչակն այդ ժամանակ շատ մեծ եր: Հենց այդ էլ Հենրիխ VIII-ին դրդեց իրեն մոտեցնել ականավոր հումանիստին, վորի ոգնությունը շուտով նրան հարկավոր յեղավ Լութերի հետ բանակռիվ մղելու համար:

1521 թվին հրապարակվեց «Յոթը խորհուրդների հաստատումն ընդդեմ Մարտին Լութերի» աշխատությունը, վոր հրատարակեց «Անգլիայի և Ֆրանսիայի ամենաանպարտելի թագավորը», Հենրիխ VIII-ը, Թոմաս Մորի անմիջական մասնակցությամբ, Թոմաս Մորի, վոր ի դեպ ասած՝ առարկում եր պապի հեղինակությունը չափից դուրս ընդգծելու դեմ և թագավորին հիշեցնում եր 1325 թվի praemunire ստատուտը, վորը վերացնում եր պապի իրավունքների մի մասն Անգլիայի նկատմամբ և արգելում եր դանցառել անգլիական դատարաններն ու դիմել հռոմեական կուրիային: Հենց այդ գրքի համար եր, վոր պապը Հենրիխ VIII-ին տվեց «հավատի պաշտպան» տիտղոսը, իսկ բոլոր նրանց, ովքեր կարդացել եյին այդ գիրքը, մեղքերի թողություն խոստացվեց:

Մորի մասնակցությունը թագավորական ջատագովական աշխատությունը կազմելուն և խմբագրելուն և նրա «Պատասխանը Մարտին Լութերին», վոր հրատարակվեց 1523 թվին և վորը հերքում եր Լութերի առարկությունները առաջին աշխատության առթիվ, հետագայում հիմք ծառայեցին Մորին մեղադրելու... պետական դավաճանության համար: Յերբ Հենրիխ VIII-ը, չստանալով պապի համաձայնությունը Յեկատերինայից ապահարզան տալու առթիվ, խզեց կապը Հռոմի հետ, Մորին մեղադրեցին, վոր նա «զարշելի խարդավանքով բոլորովին անբնականորեն թագավորին հասցրեց այն վիճակին, վոր վերջինս գիրք հրատարակեց ի պաշտպանություն յոթ խորհուրդների և

պապության»։ Մորի «դավաճանությունն» այն եր, վոր 1521 թվին այդ գրքի հրատարակությամբ նա պապին տվել եր մի զենք, վորն ուղղված եր Անգլիայի թագավորի դեմ։ Իսկ գործի եյությունն այն եր, վոր Մորը չեր համաձայնվում կանոնիկորեն վավերական ճանաչել Հենրիխ VIII-ի և Յեկատերինայի ամուսնալուծությունը, այսինքն այս անգամ պապի տեսակետն եր պաշտպանում։ 1532 թվին Մորը հրաժարվեց Անգլիայի լորդ-կանցլերի պաշտոնից, վոր նա կրում եր 1529 թվից, հրաժարվեց յերդում տալ թագավորին, վորպես «յեկեղեցու գլխին»։ Նրան բանտարկեցին Տաուերում։ Գտան մի կեղծ վկա, վորը ցուցմունք տվեց, թե Մորի կարծիքով պարլամենտն իրավունք չունի թագավորին «յեկեղեցու գլուխ» հայտարարելու։ Մորի «դավաճանությունը» համարվեց «ապացուցված»։ Նրան դատապարտեցին քառահատման։ Հենրիխ VIII-ը քառահատումը «վողորմածաբար» փոխարինեց գլխատմամբ։ Թոմաս Մորն իր դեմ մահվան դատավճիռ կայացնելուց հետո հայտարարեց, վոր անգլիկանական յեկեղեցին քրիստոնեական ամբողջ աշխարհի մի մասն ե միայն։ Այս պատճառով չի կարելի հրատարակել այնպիսի որենքներ, վորոնք հակասում են յեկեղեցական ընդհանուր կարգերին։

Թոմաս Մորի կյանքը, գրական և քաղաքական գործունեությունը վերաբերում են մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի սկզբին, առաջին յերկու Թյուդորների— Հենրիխ VII-ի և Հենրիխ VIII-ի թագավորությանը։

Շեքսպիրի ստեղծագործությունը— նրա հռչակավոր տրագեդիաները, պատմական դրամաները և փայլուն, գունազեղ, նրան ժամանակակից յեղիսաբեթյան «ուրախ» Անգլիան արտացոլող կոմեդիաները գրվել են Թյուդորների եպոխայի վերջում։

Շեքսպիրի սկզբնական յերկերում առանձնապես նկատելի ե Վերածնության դարաշրջանի իտալական գրողների ազդեցությունը։ Իտալական նովելլաները խիստ հետաքրքրում են նրան։ Ռենեսանսի վոգով են տոգորված նրա «Յերկու Վերոնացի», «Ռոմեո և Ջուլիետա և այլ յերկերը։ Բայց նրան գրավում են նաև անտիկ սյուժեները։ Հիշենք «Վեներան և Ադոնիսը», ուր նկատվում ե Ովիդիուսի ազդեցությունը։ Այնուհետև Շեքսպիրը դիմում ե անգլիական պատմության սյուժեներին։ Շեքսպիրի մի շարք պատմական դրամաների համար ամենահարուստ նյութ են

տալիս նրա կողմից ուշադրությամբ ուսումնասիրված պատմական խրոնիկաները։ Շեքսպիրի պատմական դրամաները «Հովհան արքա», «Ռիչարդ II», «Հենրիխ IV», «Հենրիխ V», «Ռիչարդ III»— ընդգրկում են անգլիական պատմության մի ամբողջ մեծ ժամանակաշրջան, XIII դարից մինչև XV դարը։ Շեքսպիրի հետաքրքրությունը դեպի անցյալը, XVI դարին նախորդած հարյուրամյակների անգլիական պատմության պերսոնաժները— խիստ բնորոշ է։ Շեքսպիրը վերցնում է խրոնիկաների մշուշային ուրվագները և վերածում իրեն ժամանակակից, պայծառորեն գծագրված տիպերի, տալիս է նրանց խիստ նուրբ հոգեբանական մեկնաբանությունը։

«Անտոնիոս և Կլեոպատրա» դրամայով, վոր անտիկ բովանդակություն ունի, սկսվում են Շեքսպիրի մի ամբողջ շարք լավագույն, ամենախոր յերկերը,— «Լիր արքա», «Մակբեթ», «Կորիոլան», «Օթելլո» և «Համլետ»։ Սյուժեները, վորոնք իրենց բնույթով պատմական են, Շեքսպիրը հաճախ ի վնաս պատմական ճշմարտության խորացնում է հոգեբանորեն, դարձնում համամարդկային տիպարներ և ուրվագներ, վորոնք մինչև այժմ էլ պահպանում են իրենց ուժը։ Իզուր չէ, վոր այդ գեղարվեստական տիպերը և ուրվագները նորանոր քննախոսության և մեկնաբանության են յենթարկվում։ Շեքսպիրի ստեղծագործության այդ վերջին ժամանակաշրջանը բնորոշվում է մռայլ, պեսսիմիստական տրամադրությամբ, նրա յերկերում առաջին տեղն է բռնում մարդուն դեպի կործանում տանող մութ, ճակատագրական ուժերի իդեան։ Այդ ժամանակաշրջանի ամենախոր դրամաներից մեկն է «Համլետը», վոր գրված է վոչ առանց հունական տրագեդիայի ազդեցության։ Հնարավոր է, վոր Համլետը, իր հոր սպանության համար վրեժ առնողն ունի իր նախատիպը հանձին Եսքիլեսի Օրեստի, վոր իր մորից վրեժ է առնում Ագամեմնոնի սպանության համար։ Սակայն «Օրեստականի» սյուժեն բավական տիպիկ էր նաև Ռենեսանսի եպոխայի համար։ Բայց այդ դրամայի սյուժեյին այնպիսի խոր-հոգեբանական մեկնաբանություն է տրված, վոր յեղիսաբեթյան եպոխայի հանճարի ստեղծած այդ ուրվագը մինչև այժմ էլ պահպանում է իր ուժը և համոզչությունը։

Շեքսպիրի յերկերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն պատմիչի համար, վորն ուսումնասիրում է Յեղիսա-

բետի ժամանակների Անգլիան: Ճիշտ է, Շեքսպիրի յերկերում չկան պատմական անպատեհություններ: Հնագարյան Հռոմը և հին Անգլիան հաճախ պատկերվում են Շեքսպիրին ժամանակակից անգլիական իրականության գծերով: Կիսավայրենի շոտլանդացիների առաջնորդ Մակբեթն արտասանում է պեսսիմիստական տիրադներ, վորոնք պատկերում են Շեքսպիրի միայն սեփական աշխարհայացքը նրա ստեղծագործության վերջին ժամանակաշրջանում: Բայց անկասկած է, վոր Շեքսպիրը շատ լավ գիտեր անգլիական պատմության՝ իրեն ամենամոտ ժամանակաշրջանը: Ընթերցողների առաջ անցնում է Մարիայի ու Յեղիսաբեթի ժամանակվա թագավորների, բարոնների, ասպետների, քաղաքացիների և արհեստավորների դեղարվեստական պորտրեների շարանը: Յեղիսաբեթյան Անգլիայի մի շարք պայծառ ներկայացուցիչներ տպավորվել են անգլիական մեծ դրամատուրգի դրամաներում, կոմեդիաներում և պիեսներում: Շեքսպիրի դրամաները հանդիսանում են «նրա դարի մեծագույն փառքը», վորը ստվերել ու գերազանցել է «Յեղիսաբեթի դարի» մյուս «պանծալի գործերը»: Այդ պետք է ընդունեն նաև անգլիական պատմագիրները, վորոնք գովաբանում են «Յեղիսաբեթի դարը»:

Գ Լ Ո Ւ Խ XII

ԱՆԳԼԻԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Անգլիայի տնտեսական զարգացումը յեվ տնտեսական քաղաքականությունը առաջին Ստյուարտների օրոք

XVII դարի առաջին տասնամյակներում կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացումը նորանոր հաջողություններ է ունենում Անգլիայում։ Արագ աճում է բրդե արդյունաբերությունն իր նոր, կապիտալիստական ձևերով, յերևան են գալիս մահուդի արտադրության նոր, մասամբ Նիդերլանդներից փոխառած տեսակները, աճում է մշակված, ներկված մահուդի արտահանությունը։ Փորձեր են արվում արգելելու վոչ միայն չմշակված բրդի, այլև դրանից կիսով չափ պատրաստված ֆաբրիկատի— չներկված մահուդի արտահանությունը։

XVII դարի առաջին տասնամյակներում բրդե արդյունաբերության նոր ձևերի զարգացումը մեծ կարևորությամբ հարց էր դնում առևտրի և կոնկուրենցիայի ազատության մասին։

Այդ ժամանակաշրջանի գյուղատնտեսությունը ճիշտ նույնպես բնորոշվում է կապիտալիստական հարաբերությունների հետագա աճով։ «Ցանկապատումները», վորոնք այնքան բողոքներ եյին առաջացնում ամբողջ XVI դարում, շարունակվում են նաև XVII դարի առաջին տասնամյակներում։ Թեև այդ ժամանակ ցանկապատման յենթարկված հողի տարածության ճիշտ չափերը չեն կարող պարզվել, բայց և այնպես կասկածից դուրս է, վոր ցանկապատումները բավական շոշափելի եյին և նպաստում եյին գյուղական բնակչության աճող հողազրկմանը։ Խոշոր ֆերմեր-կապիտալիստը գյուղում հետզհետե ավելի աչքի ընկնող դեմք է դառնում։ Աճում և զարգանում են կապիտալիստական վարձակալության հարաբերությունները, ուժեղանում է մի տենդենց,— սովորական ժառանգական կամ ցմահ կոպիհոլդերից

և փիկացիայի ենթարկված նրա վճարումներից անցնել հողը բարձր «բարելավված» ռենտայով հանձնելուն և վերջապես սովորական վարձակալության, այսինքն ընդհանուր իրավունքի լիզհոլդին։ Ապա կասկածից դուրս է, որ XVII դարի ցանկապատումները, ի տարբերություն XVI դարի ցանկապատումներից, որոնք նպատակ ունեին անցնել առավելապես արոտային, ոչխարաբուծական տնտեսության, հաճախ հետապնդում էին այլ նպատակներ,— երկրագործության ինտենսիֆիկացիա, ցանքաշրջանառության բարելավում, գյուղատնտեսական տեխնիկայի մակարդակի բարձրացում։ Հետագա ցանկապատումների և գյուղացիության պաուպերիզացիայի վրա հակազդեցություն գործեցին XVII դարի գյուղացիական շարժման բազմաթիվ արտահայտությունները։ Այսպես, 1607 թվին գյուղացիների ապստամբություն է տեղի ունենում Անգլիայի կենտրոնական կոմսություններում, որոնք խիստ ինտենսիվ ցանկապատման էին ենթարկվել։ Ապստամբության մասնակիցները, որոնք քանդում էին ցանկապատերը, լցնում փոսերը, որոնցով բաժանված էին ցանկապատված հողամասերը,— իրենց անվանում էին «հավասարիչներ» և «փորիչներ»— լեվելլերներ և դիգգերներ, կանխելով XVII դարի 40–50-ական թվականների հեղափոխական տերմինոլոգիան։

Ինչպե՞ս էր վերաբերվում Ստյուարտների կառավարությունը գյուղում հողի համար մղվող այդ պայքարին, ցանկապատումներին և սրանց դեմ ուղղված գյուղացիական շարժման ալիքին։

1607 թվի ապստամբությունից հետո Հակոբ I-ը հանձնաժողով նշանակեց կատարված ցանկապատումները հետաքննելու համար։ Նորից դիմեցին ցանկապատումների դեմ «պայքարելու» հին, դեռ Թյուդորների ժամանակ փորձված յեղանակին։ Ցանկապատումները հետաքննելու համար քանիցս հանձնաժողովներ են նշանակվում նաև 30-ական թվականներին, Կարլոս I-ի օրոք։ Սակայն այդ հանձնաժողովների գործունեության հետևանքները չնչին էին։ Ցանկապատումների դեմ ուղղված պայքարը փաստորեն դադարում է դեռ առաջին Ստյուարտի օրոք, որն իր թագավորման վերջում վերացնում է առաջվա օրենսդրական այն կետերը, որոնք ուղղված էին ցանկապատումների դեմ։ Ինչ վերաբերում է այն հանձնաժողովներին, որոնք նշանակ-

վում էին Կարլոս I-ի կողմից, նրանք բացառապես ֆիսկալ նպատակներ էին հետապնդում. գահը փորձում էր խոշոր ցանկապատողների վրա տուգանքներ դնելու միջոցով բարելավել իր բավական անհաստատ ֆինանսական դրությունը, ըստ էության սանկցիաներ տալով ցանկապատողների կողմից համայնական հողերի բռնագրավմանը։ Նման քաղաքականությունը բնավ չէր կասեցնում գյուղի կապիտալիստական զարգացման պրոցեսները, բայց այնու հանդերձ գրգռում էր նույնիսկ խոշոր հողատերերին, ուժեղացնելով դժգոհությունը կառավարության ֆինանսական քաղաքականության դեմ։

Անգլիական աբսոլյուտիզմն առաջին Ստյուարտների օրոք։ Մոնոպոլիաները յեվ հարկային քաղաքականությունը

Արդեն Ելիզավետան առիթ ունեցավ հանդիպելու պառլամենտի բավական լուրջ դիմադրությանը։ Այդ ոպոզիցիան կապված էր կառավարության ֆինանսական դժվարությունների հետ, որոնցից դուրս գալու համար նա ուժեղ թափով մոնոպոլիաներ էր բաժանում, որոնք գանձարանին մեծ եկամուտ էին բերում։ Բայց պառլամենտում բողոքներ է առաջացնում մոնոպոլիաների թվի հենց այդ աճը, մոնոպոլիաներ, որոնք արտոնյալ դրություն էին ստեղծում մոնոպոլիստների համար և անկարելի էին դարձնում ազատ կոնկուրենցիան։ Ստյուարտները շարունակում են մոնոպոլիաներ բաժանելու քաղաքականությունը։ Բայց մի առանձին դժգոհություն է առաջացնում Ստյուարտների հարկային քաղաքականությունը, Ստյուարտների, որոնք չէին ցանկանում հաշվի առնել հարկերը վավերացնելու նկատմամբ պառլամենտի իրավունքը, որը դեռ Թյուդորների օրոք սահմանադրական պրակտիկա չէր դարձել։ Պառլամենտի դիմադրությունը թագի ֆինանսական ձեռնարկումներին՝ սուր կոնֆլիկտներ է առաջացնում։

Մի կողմ թողած այն տարաձայնությունները, որոնք կապված էին ֆինանսական և տնտեսական քաղաքականության հարցերի հետ, թագի և պառլամենտի միջև ելած կոնֆլիկտի աճմանը նպաստում էր մի շարք հակասությունների առկայությունն առաջին Ստյուարտների կրոնական և արտաքին քաղաքականության բնագավառում, առաջին Ստյուարտների, որոնք բնավ չէին արտահայտում առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի և նոր ազնվականության «ազգային» և տնտեսական շահերը։

Առաջին Թյուդորները և մանավանդ այդ դինաստիայի վերջին ներկայացուցիչը, Ելիզաբեթը, իրենց արտաքին, կրոնական և առևտրական քաղաքականության մեջ ղեկավարվում եյին այն սկզբունքներով, վորոնք համապատասխանում եյին անգլիական բուրժուազիայի և նոր ազնվականության հիմնական շահերին: Այդ դասակարգերը կարիք ունեյին կենտրոնական ուժեղ իշխանության, ոժանդակում եյին նրան և Թագի բնական դաշնակիցներն եյին ֆեոդալական հին ազնվականության դեմ մղվող պայքարում:

Նույնպես այլ պատկեր ենք մենք տեսնում Ստյուարտների որոք: Անհաստատ ու յերկդիմի իրենց արտաքին քաղաքականության մեջ ղեկավարվելով առավելապես իրենց անձնական և դինաստիական նկատառումներով, Ստյուարտները հաճախ դեմ եյին գնում բուրժուազիայի և նոր ազնվականության շահերին:

Այս բոլորը միասին վերցրած՝ նպաստում եր ստյուարտյան աբսոլուտիզմի դեմ գործող քաղաքական ոպոզիցիայի աճմանը XVII դարի 20–30-ական թվականներին, ուժեղացնում եր նրա անժողովրդականությունը և վերջին հաշվով նպաստում նրա անկմանը 40-ական թվականներին:

Հակոբ I Ստյուարտը (Շոտլանդիայում Հակոբ VI-ը), վորը գահ նստեց 1603 թվին, Ելիզաբեթի մահից հետո, մահապատժի յենթարկված Մարիա Ստյուարտի վորդին եր, իսկ Մարիա Ստյուարտը— Հենրիխ VIII-ի քույր Մարգարիտի թոռը:

Հակոբ I Ստյուարտը յեվ նրա քաղաքական հայացքները

Տոգորված լինելով խիստ չափազանցված պատկերացումներով Թագավորական իշխանության բնույթի և իրավունքների մասին և այս կողմից ոժանդակություն գտնելով անգլիկան յեպիսկոպոսության կողմից, նա բարձր եր գնահատում այն, վոր կանգնած եր անգլիկան յեկեղեցու գլուխը: Հենց դրանով և բացատրվում այն աջակցությունը, վոր նա միշտ պատրաստ եր ցույց տալ անգլիկանական յեպիսկոպոսներին, միևնույն ժամանակ հայտարարելով, վոր այս վերջինները ես հանդիսանում են Թագավորական իշխանության հենարան: Մեծացած և դաստիարակված լինելով շոտլանդական արքունիքի մթնոլորտում և նրա տրադիցիաներով, լինելով փառամոլ և թույլ, ֆավորիտիզմին հակամետ, Հակոբ I-ը լավ ծանոթ չեր Անգլիային:

Ստյուարտների որոք շարունակում ե իր գործունեությու-

նը «բարձր հանձնաժողովը», որն Անգլիայում ուժեղ թափով տարածում էր կրոնական «միակերպության» սկզբունքները: Եղիսաբեթի եպոխայի համեմատությամբ այդ հանձնաժողովը նույնիսկ ընդլայնվում է իր կազմով և իր գործունեության շրջանով: Բայց Անգլիայի կրոնական կյանքը XVII դարի սկզբում ամենից քիչ էր աչքի ընկնում այն «միակերպությամբ», որը նրան փորձում էր տալ պաշտոնական անգլիկանական եկեղեցին, որը պաշտպանում էր աբսոլուտիզմը և վերջինիս կողմից բավական ակտիվ աջակցություն էր գտնում: Սկզբում անգլիկանությունը պաշտպանում էր ոչ միայն թագավորը, այլև անգլիական բուրժուազիայի և ազնվականության մի զգալի մասը: Սակայն բուրժուազիայի մեջ ուժեղանում են օպոզիցիոն տրամադրություններն անգլիկանական եկեղեցականության նկատմամբ, որը կաթոլիկությունից շատ բան էր պահել թե՛ դավանության և թե՛ եկեղեցական կարգապահության ու արարողության ծեսի տեսակետից: Հենց անգլիկանական եկեղեցին կաթոլիկական սնոտիապաշտությունների մնացորդներից մաքրելուն էր ձգտում պուրիտանական հոսանքը, որը բազմաթիվ կողմնակիցներ ուներ անգլիական բուրժուազիայի շարքերում: Ինչ վերաբերում է քաղաքային բնակչության ստորին խավերին— մանր բուրժուազիային, քաղաքային արհեստավորներին և յենթավարպետներին, այս միջավայրում աճում էր կրոնական ծայրահեղ ռադիկալիզմի կողմնակիցների թիվը, ուժեղանում էր աղանդավորությունը, տարածվում էին անաբապտիզմի իդեաները: Աղանդավորական շարժմամբ ընդգրկված էր նաև ստորին հոգևորականության մի զգալի մասը: 1605 թվին իրենց ծխերից վտարվեցին մոտ 300 քահանա-նոնկոնֆորմականներ (անգլիկանական եկեղեցու հետ չհամաձայնվողներ): Բայց, չնայելով նոնկոնֆորմականների դեմ ուղղված վարչական պատիժներին, Անգլիայում շարունակում էր ուժեղանալ պուրիտանիզմը, ստանալով ոչ միայն կրոնական, այլև քաղաքական խոշոր ուժի նշանակություն:

Չափավոր պրեսբիտերության ներկայացուցիչների կողքին, որոնք ձգտում էին քահանաներով և «ավագագույն» անդամներով կառավարվող մի շարք եկեղեցական համայնքներ կազմակերպել, ուժեղանում է սեպարատական (ինդեպենդենտական) անհաշտ մի շարժում, որը հակամետ չէ որևէ կամպրոմիսի

դիմել յեկեղեցական կազմակերպության հարցերում: Սեպարատականները դեմ էյին թե՛ տիեզերական և թե՛ ազգային կամ պետական ամեն մի «մեծ յեկեղեցու» և առաջ էյին քաշում «ընդհանուր սրբադնության» և «ճշմարիտ յեկեղեցու»— «սըրբերի» և «ընտրյալների» յեկեղեցու գաղափարը:

Սեպարատականներին հալածում էյին դեռ Յեղիսաբեթի օրոք, XVI դարի 80–90-ական թվականներին, հալածում էյին նաև առաջին Ստյուարտների օրոք: Հետապնդումներից ազատվելու համար նրանք փախչում էյին Հոլանդիա, այնտեղ հարում կրոնական ռադիկալ աղանդների ներկայացուցիչներին: Տարբեր յերանգի սեպարատականներ փախչում էյին նաև Հյուսիսային Ամերիկա, այնտեղ հիմք դնելով անգլիական գաղութացման: Այնտեղ, Նոր Աշխարհում հաստատվում էր կրոնական և քաղաքական նոր միտքը: 1620 թվին «Նոր Անգլիայի» հիմք են դնում հռչակավոր «ուխտավոր հայրերը», վորոնք յերազում էյին Ամերիկայի կուսական հողում հիմնել իրենց նոր աշխարհը, միևնույն ժամանակ կապ պահպանելով Անգլիայի հետ: Մինչև 1640 թվականը Նոր Անգլիա գաղթեցին մոտ 20 հազար հոգի, վորոնք փախչում էյին իրենց հայրենիքում յեղած կրոնական հալածանքներից: 1628 թվին սկսվում է Մասաչուսեթի— Հյուսիսային Ամերիկայում մի այլ անգլիական գաղութի բնակեցումը: Այսպիսով Հյուսիսային Ամերիկան մի յուրատեսակ ավետյաց յերկիր էր կրոնական և քաղաքական ծայրահեղ ապոզիցիայի բոլոր ներկայացուցիչների համար: Անգլիայում աբսոլյուտիզմի անկումից հետո միայն կանգ է առնում անգլիական էմիգրանտների այդ հոսանքը դեպի Նոր Աշխարհ, փոխարինվելով հակադարձ ալիքով: Ռեէմիգրանտների հետ միասին դեպի Անգլիա յեն հոսում քաղաքական նոր գաղափարները և կրոնական համոզմունքները, վորոնք մասամբ ծագել կամ ձևափոխվել էյին ամերիկական հողի վրա: Այդ քիչ դեր չխաղաց նաև բուն մետրոպոլիայում հեղափոխական ալիքի բարձրացման համար:

Ստյուարտների արտաքին քաղաքականությունը

1603 թվին, յերբ Հակոբ I-ը անգլիական գահ բարձրացավ, հարց ծագեց, թե արդյոք Անգլիան շարունակելո՞ւ է Իսպանիայի դեմ մղած պատերազմը, վոր արդեն տևել էր 20 տարի: 1598 թ. պայմանագրով Անգլիան դաշինքով կապված էր Նիդերլանդական Միացյալ պրովինցիաների հետ, վորոնց դարձյալ սպառնում էր

Իսպանիան: Բայց Հակոբ I-ը հակամետ չէր Նիդերլանդները պաշտպանելու: Նրա աչքում հոլանդացիները դավաճաններ էյին իրենց «օրինական» միապետի— իսպանական թագավորի նկատմամբ: Բացի այդ, Հակոբը, վորպես Շոտլանդիայի թագավոր, իրեն չէր համարում Իսպանիայի դեմ պատերազմողի վիճակում:

Անգլիական գահը բարձրանալուց հետո շուտով Հակոբ I-ը դադարեցնում է ծովի վրա մղվող պատերազմական գործողությունները Իսպանիայի դեմ, իսկ 1604 թվին հաշտության մասին բանակցություններ է սկսում: Ճիշտ է, խիստ դժվար էր Իսպանիայի հետ համաձայնության գալ հաշտության պայմանների մասին և խզել կապը Նիդերլանդներից, վորի հետ անգլիացիներին կապում էյին առևտրական շահերը: Իսպանիան չէր ուզում ընդառաջ գնալ անգլիացիների առաջադրած պահանջին՝ թույլ տալ ազատ առևտուր իսպանական թագավորի գաղութային տիրույթներում:

Անգլիական ծովագնացությունը և ծովային առևտուրը շարունակում էյին վնասվել իսպանացիների հարձակումներից: Իսպանացիները գրավում էյին անգլիական նավերը, կասկածելով, թե արդյոք անգլիացիներն այդ նավերով հոլանդական ապրանքներ չե՞ն տանում և արդյոք առևտրական հարաբերություններ չե՞ն պահպանում հրեաների և թուրքերի, քրիստոնեական կրոնի թշնամիների հետ: Իսպանացիներն անգլիական ծովագնացներին բանտ էյին նստեցնում, ամենադաժան կերպով էյին վարվում նրանց հետ, յերբեմն սպանում էյին:

Այսպես էր իրադրությունը, յերբ Յեվրոպայում բռնկվեց Յերեսնամյա պատերազմը, վորին Հակոբ I-ը ստիպված էր միջամտել վորպես «բողոքականության պաշտպան», ի դեպ, նաև վորպես իր դստեր Յեղիսաբեթի վտանգված իրավունքների պաշտպան, Յեղիսաբեթի, վորն ամուսնացած էր Ֆրիդրիխ Պֆալցցու հետ: Գերմանական կայսր Ֆերդինանդ II-ը 1620 թվին Սպիտակ Լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Ֆրիդրիխ Պֆալցցուն զրկել էր նրա տիրույթներից— Պալատինատից:

Հակոբ I-ը վորոշում է պաշտպան կանգնել իր փեսայի իրավունքներին և Պալատինատը վերադարձնել Ֆրիդրիխին: Պարլամենտը թագավորին մեծ նպաստ է բաց թողնում կոնտինենտալ պատերազմին մասնակցելու համար և այդ հաճույքով է

անում, վորովհետև Ֆրիդրիխ Պֆալցցին Անգլիայում համակրանք եր վայելում վորպես բողոքական ունիայի գլուխ և բողոքականության գործի մարտիկ, մինչդեռ նրա հակառակորդը, վորը Ֆրիդրիխին զրկել եր տիրույթյուններից, կաթոլիկական ռեակցիայի մոլեռանդ ներկայացուցիչ եր: Հակոբ I-ի պլանն այն եր, վոր փորձ՝ դաշինք կնքել Իսպանիայի հետ և նրան համոզի միջամտել Յերեսնամյա պատերազմին ընդդեմ կայսր Ֆերդինանդ II-ի, պաշտպանելով Ֆրիդրիխ Պֆալցցու իրավունքները: Վորպես կոմպենսացիա բողոքականների կողմից Իսպանիայի միջամտելու համար, Հակոբ I-ն իսպանական թագավորին առաջարկեց բաժանել Նիդերլանդները:

Անգլիական գահաժառանգ Կարլոսը և Հակոբ I-ի սիրելի ու առաջին մինիստր Բեկինգեմը մեկնում են Մադրիդ, վորպեսզի իսպանական թագավորից վճռական պատասխան ստանան այն հարցին, թե արդյոք նա համաձա՞յն է ոգնելու Ֆրիդրիխ Պֆալցցուն, և այդ վորոշումը վավերացնեն Կարլոսի և իսպանական պրինցուհու ամուսնությամբ: Ստանալով բացասական պատասխան թե մեկ և թե մյուս առաջարկին, Կարլոսը և Բեկինգեմը խիստ սրտնեղած վերադառնում են Անգլիա և Հակոբ I-ին համոզում են պատերազմ սկսել Իսպանիայի դեմ:

1624 թվին Անգլիան դաշնագիր կնքեց Միացյալ պրովինցիաների հետ, նրանց խոստանալով ֆինանսական և ռազմական ոժանդակություն Իսպանիայի դեմ նրանց մղած պատերազմում:

Անգլիան փնտռում է նաև ուրիշ դաշնակիցներ: 1625 թվին անգլիական գահ նստած Կարլոս I-ի և ֆրանսիական պրինցուհի Հենրիետտա-Մարիայի ամուսնությունը նկատի ուներ ապահովել Ֆրանսիայի դաշնակցությունն ու ոգնությունը: Սակայն Բեկինգեմի և Ռիշելյեյի բանակցությունների հետևանքով պարզվում է, վոր Ֆրանսիան մտադիր չէ պատերազմել Պլատինատը Ֆրիդրիխ Պֆալցցուն վերադարձնելու համար: Ֆրանսիական պրինցուհու հետ Կարլոս I-ի ամուսնության անմիջական նպատակը չիրագործվեց: Դրա փոխարեն անգլիացիները նորից ունեցան կաթոլիկ թագուհի, վորի արքունիքը դարձավ կաթոլիկական ինտրիգների և ազդեցության կենտրոն Անգլիայում:

Անգլիան փորձեր է անում իր դաշնակիցների թվի մեջ մտցնել նաև շվեդական թագավոր Գուստավ-Ադոլֆին: Սակայն վերջինս Ֆրիդրիխ Պֆալցցուն ոգնելու համար պահանջեց մի

հսկայական գումար, որն անգլիական գանձարանի ուժից վեր էր։

Անգլիան ավելի հաջող բանակցություններ վարեց դանիական թագավոր Քրիստիան IV-ի հետ, որը համաձայնվեց ներխուժել Գերմանիա այն պայմանով, որ անգլիացիները կվճարեն նրա յոթը հազարանոց կորպուսը պահելու արժեքը։ Այդ առաջարկն ընդունվեց։

Վերջապես, 1625 թվի աշնանը Բեկինգեմի հրամանատարությամբ դեպի Իսպանիայի ափերն է մեկնում անգլիական մի մեծ նավատորմ, էքսպեդիցիոն կորպուսով։ Այդ նավատորմը պետք է վերցներ Կադիքսը և գրավեր իսպանական նավերը, որոնք Մեքսիկայից արծաթ էին բերում։ Անգլիացիք հույս ունեյին իսպանացիներից գրավվելիք ավարով ծածկել պատերազմական այն ծախսերը, որոնք կապված էին կոնտինենտալ պատերազմում Անգլիայի մասնակցության հետ։ Սակայն Բեկինգեմի էքսպեդիցիան ավարտվեց լիակատար անհաջողությամբ։ Չհասնելով նշված նպատակներից ոչ մեկին, նրա նավատորմն Անգլիայի ափերը վերադարձավ փոթորկից սաստիկ վնասված, կորցնելով շատ զինվորներ և ծովագնացներ, որոնք կոտորվեցին հիվանդություններից և վատ սննդից։

Անհաջող եղան անգլիացիների նաև հետագա ծովային էքսպեդիցիաները, որոնք ուղղված էին Իսպանիայի դեմ։ Երրորդ էքսպեդիցիայից առաջ սպանվեց թագավորի ֆավորիտ Բեկինգեմը, որն իր դեմ ծայրահեղ վրդովմունք էր առաջացրել Անգլիայում։

Մի շարք անհաջողությունների հանդիպած Անգլիայի դրությունը բարդացավ նաև նրանով, որ 1627 թվին նա պատերազմի բռնվեց Ֆրանսիայի հետ։ Ֆրանսիական կառավարությունը խիստ դժգոհ էր Անգլիայում կաթոլիկների դեմ ուղղված հետապնդումներից, մանավորապես Հենրիետտա-Մարիա թագուհու պալատական շրջաններին պատկանող մի շարք ֆրանսիացիներին այնտեղից արտաքսելուց։ Մյուս կողմից Անգլիայում շատերը խիստ վրդովվել էին այն հանգամանքից, որ անգլիական նավատորմը «պապական» թագավոր Լյուդովիկոս XIII-ի նավատորմի հետ պետք է մասնակցեր հուգենոտյան Լարոշելի պաշարման։ Դաշնակիցների փոխադարձ վրդովմունքը, որին հե-

տևեց միմյանցից նավեր գրավելը, հասցրեց այնտեղ, վոր նրանց մեջ պատերազմ սկսվեց:

Աճում է կոնֆլիկտը թագավորի յեվ պարլամենտի միջեվ

Իսպանիայի և ապա Ֆրանսիայի դեմ մղված պայքարում ռազմական անհաջողությունները խիստ դժվարացրին Կարլոս I-ի կառավարության դրությունը:

Թագավորի ֆավորիտ Բեկկինգեմը, վիժեցնելով Իսպանիայի դեմ ուղղված էքսպեդիցիան, նույնպիսի անհաջողությամբ եր գործում ֆրանսիացիների դեմ, Լառոշելի մոտ, վորտեղ նա պետք է օգնություն ցույց տար ֆրանսիական հուգենոտներին:

Ստյուարտների աբսոլյուտիզմը վարկաբեկվեց: Կարլոս I-ի պարլամենտները թագավորին միայն չնչին նպաստներ եյին տալիս, մինչդեռ պալատների բողոքներին վերջ չկար: Առաջին հերթին պահանջում եյին, վոր Բեկկինգեմը պաշտոնաթող լինի: Թագավորը փորձում եր գործել առանց պարլամենտի. մաքսային տուրքեր եր գանձում մեկ տարուց ավելի ժամկետի համար, մինչդեռ պարլամենտը թույլ եր տվել գանձել մեկ տարվա ժամկետով. կազմակերպում եր հարկադրական փոխառություններ: Ովքեր հրաժարվում եյին վճարելուց, բանտարկվում եյին: Ձերբակալված հինգ ազնվականներ բողոք տվին թագավորական բարձրագույն դատարանին, պահանջելով, վոր դատավորներին ներկայացվեն հիմքեր նրանց ձերբակալման մասին: Դատարանն այդ հիմքերն օրինավոր չճանաչեց: Թագավորը ստիպված եր ազատել ձերբակալվածներին և 1628 թվին նոր պարլամենտ հրավիրեց: Պարլամենտի ընտրությունները ոպոզիցիոն մեծամասնություն տվին:

Յերկրում բարձրանում եր բողոքների ալիքը: Ոպոզիցիայի առաջնորդների մեջ աչքի եյին ընկնում՝ հռչակավոր իրավաբան Եդվարդ Կոկը— «ազատությունների» պաշտպանը, վոր անգլիական ազգին շնորհված եյին Ազատությունների մեծ խարտիայով, առևտրի ազատության կողմնակիցը և մոնոպոլիաների թշնամին. Էլիոտը— Իսպանիայի դեմ մղված պատերազմի անհաջողության հանցավորներին ցասկոտ կերպով մերկացնողը, Ստյուարտների աբսոլյուտիստական ռեժիմի ամենավճռական հակառակորդներից մեկը. Պիմը— մյուս ականավոր ոպոզիցիոները և Յերկարատև պարլամենտի ապագա գործիչը: Վերջապես, 1628 թ. պարլամենտի ոպոզիցիայի առաջնորդներից մեկն եր

Հաև Ուենտվորտը, վորը հետագայում անցավ թագավորի կողմը և պարլամենտին դավաճանելու համար ստացավ կոմս Ստրաֆֆորդի տիտղոս։ Էլիոտը և Ուենտվորտը յեղել էյին ձերբակալված հինգ ազնվականների թվում։ Հիմա նրանք անցան օպոզիցիայի գլուխ։

Խնդրագիր իրավունքի մասին

Էլիոտը, ուժեղ պարլամենտի ջերմ կողմնակիցը, պնդում էր, թե պետք է թագավորին տալ ընդհանուր բողոք, այսպես կոչված «իրավունքի խնդրագիր»։

Վկայակոչելով այն հիմնական դրույթները, վորոնք բերված էյին յերկար ժամանակ մոռացված և Կոկի հայտաբերած՝ 1215 թ. Ազատությունների մեծ խարտիայում, խնդրագիրը կազմողները պահանջում էյին՝ 1) վորպեսզի պետական ծախսերի համար միջոցներ գանձվեն միայն պարլամենտի համաձայնությամբ, 2) վորպեսզի թագավորը զինվորներին բնակչության մեջ չտեղավորի օթևանելու համար և այդ կերպ հպատակներին չստիպի հարկեր վճարել, 3) վորպեսզի առանց դատարանի չկատարվեն կամայական ձերբակալություններ և բանտարկություններ։

Խնդրագիրը դարձավ օրենք, բայց թագավորը կրկին շարունակում էր խախտել իրավունքը և վորոշեց արձակել օպոզիցիոն պարլամենտը։ Այդ ժամանակ Էլիոտի առաջարկով պարլամենտն ընդունեց հետևյալ բանաձևը. «Ամեն վոք, ով խախտում է կրոնական կարգը, ամեն մի մինիստր, վորը պարլամենտի կողմից չթույլատրված տուրքեր է հավաքում,— պետության և հասարակության թշնամին է. ամեն մի հպատակ, վորը կամավոր կերպով համաձայնվում է յենթարկվել հակաօրինական ակտերին և պահանջներին,— անգլիական ազատության դավաճանն ու թշնամին է»։

Պալատն արձակելուց հետո Էլիոտին նստեցրին բանտ, վորտեղ նա մեռավ։

1629 թվին արձակելով պարլամենտը, Կարլոս I-ը շտապում է հաշտություն կնքել իր յերկու հակառակորդների, թե Ֆրանսիայի և թե Իսպանիայի հետ։ Նա ստիպված է լինում զոհել Պալատինատը, իր փեսայի և քրոջ շահերը, ստիպված է լինում բախտի քմահաճույքին թողնել իր բողոքական դաշնակիցներին։ Դանիայի թագավոր Քրիստիան IV-ը ջարդվեց. Ֆրանսիացինե-

-քը դրավեցին Լարոշելը: Իսպանիայի և Ֆրանսիայի հետ կնքված դաշնագրերը նշանակում էին, վոր Ստյուարտներն այլևս չեն կարող փորձ անել վարելու արտաքին ակտիվ քաղաքականություն, վորը հասցրեց մի շարք անհաջողությունների ու պարտությունների, քաղաքական ոպոզիցիայի աճման և Կարլոսի ու պարլամենտի միջև յեղած դժտության: Կարլոս I-ի այդ անհեթեթ քաղաքականության «փայլուն ավարտումը» յեղավ Նիդերլանդների բաժանման մասին իսպանական թագավորի հետ կնքված մի նոր, գաղտնի դաշնագիրը, վորը ստորագրվեց Մադրիդում և վորը ցույց էր տալիս, թե Կարլոս I-ը վերջնականապես կորցրել է ռեալության զգացումը:

Կառավարում առանց պարլամենտի

Կարլոս I-ը հույս ուներ այլևս յերբեք չգումարել պարլամենտը և յերկիրը կառավարել իր հայեցողությամբ: Նա սխալվեց: Նրան հաջողվեց առանց պարլամենտի կառավարել միայն 11 տարի (1629—1640 թ. թ.):

1629 թվի պարլամենտն արձակելուց հետո իշխանության դրությունը վորոշ ժամանակ կրիտիկական էր: Արձագանքելով պարլամենտի կոչին, վաճառականությունը հրաժարվում էր հարկեր վճարելուց: Առևտուրը սկսեց թուլանալ: Աճում էր գործազրկությունը և յերկրին անկարգություններ էին սպառնում: Բայց շուտով ամեն ինչ մտավ սովորական հունի մեջ: Իսպանիայի և Հոլանդիայի միջև մղված պատերազմն օգուտ տվեց անգլիական վաճառականություն, վորն իր նավերով իսպանական ապրանքներ էր փոխադրում: Անգլիայի դրամատեր մարդիկ հարստանում էին յերկու թշնամի կողմերի վարկային գործարքներից: Ճգնաժամն անցավ, իսկ դրա հետ միասին թուլացավ նաև այն դիմադրությունը, վոր վաճառականությունը ցույց էր տալիս թագավորին:

Թվում էր, վոր թագավորը կարող է վայելել պարլամենտի դեմ վճռականապես դատաստան տեսնելու պտուղները: Ոպոզիցիայի առաջնորդները նստած էին բանտում, Ուենտվորտը, վոր դարձել էր թագավորի գլխավոր խորհրդականը, պնդում էր, վոր Կարլոս I-ը «ծայրահեղ քայլի» դիմի: Դրա համար կարծես թե կային բոլոր հիմքերը: Կոնտինենտի որինակները քաջալերող ազդեցություն էին գործում: Կարլոսը հիանում էր կարդինալ Ռիշելյեյի գործունեությամբ,— վորը Ֆրանսիայում թագավո-

րական իշխանությունն անհասանելի բարձրության հասցրեց,— և դեմ չեր նրա մեթոդներն Անգլիա փոխադրելուն: Այդ նպատակով ուժեղացվեց բարձրագույն, արտակարգ դատարանների— «աստղային պալատի» և «բարձր հանձնաժողովի» ակտիվությունը,— վորոնք անողոք կերպով դատաստան եյին տեսնում թագավորին անհաճելի ու յեկեղեցուն անհնազանդ հպատակների հետ: Մյուս կողմից արքեպիսկոպոս Լոդն աշխատում եր հոգուտ անգլիկանական և կաթոլիկ յեկեղեցիների մերձեցման, ջանք եր թափում վերականգնելու քահանաների ամուրիությունը, գաղտնի խոստովանությունը և «սրբության գեղեցկությունը», այսինքն կաթոլիկական պաշտամունքի շքեղությունն ու փառահեղությունը: Միաժամանակ սկսվեցին պուրիտանների հետապընդումները և նրանցից շատերը ստիպված եյին հեռանալ հայրենիքից: 1630 թվին մի գրողի, Ալեքսանդր Լեյտոնին, յեպիսկոպոսական յեկեղեցու դեմ գրված գրքի համար դատապարտեցին 10 հազար ֆունտ ստերլինգ տուգանքի և ցմահ բանտարկության․ բացի դրանից կտրատեցին նրա ռունգներն ու ականջները, իսկ այտերի վրա տաժանակրի դրոշմ դրին: 1637 թվին նույնպիսի վիճակի յենթարկվեցին յերեք պուրիտան-քարոզիչներ,— Պրինը, Բերտոնը և Բաստվիկը: Իսկ 1638 թվին բանտարկվեց յերիտասարդ Ջոն Լիլբերնը, լեվելլերների ապագա առաջնորդը, այն մեղադրանքով, վոր Հոլանդիայում չթույլատրված գրքեր եր տպագրում և դրանք կոնտրաբանդով փոխադրում Անգլիա: Նախ քան բանտարկվելը նրան հրապարակով խարազանեցին և ցուցադրեցին խայտառակության սյան մոտ:

Արդյոք Կարլոսը հիմք ունե՞ր մտածելու, վոր Ռիշելյեյի և կոնտինենտալ պետությունների որինակը կարող եր Անգլիայում հաջողությամբ պսակվել:

Իհարկե վոչ: Իսպանական բուրժուազիան, զոհաբերվելով ազնվականության շահերին, քարշ եր տալիս իր վողորմելի գոյությունը: Ֆրանսիայում բուրժուազիան դեռ թույլ եր, ազնըվականությունն ապրում եր միայն ֆեոդալական ռենտայով և իր պարազիտական գոյության հիմնական յերաշխիքը տեսնում եր թագավորի աբսոլյուտ իշխանության մեջ: Մինչդեռ Անգլիայում կապիտալիստական զարգացման հաջողությունները և բուրժուական շահերն ընդգրկեցին վոչ միայն բուրժուազիային, այլև ազնվականության մի զգալի մասին: Պետությունը պետք ե ծա-

ռայեր այդ շահերին, իսկ թե դրանք ինչումն եյին կայանում, բուրժուազիան և նոր ազնվականությունը, ինչպես իրենք եյին կարծում, ավելի լավ գիտեյին, քան թագավորն ու նրա կառավարությունը։ Պարլամենտը դառնում եր հետզհետե ավելի հզորացող այդ շահերի օրգանը և ներկայացուցիչը․ պարլամենտի և թագի փոխհարաբերությունների հարցը դառնում եր հեղափոխական հարց։

Բայց կառավարությունը, վոգեշնչվելով Ստրաֆֆորդի կողմից, փորձում եր դիմել «ծայրահեղ քայլի»։ Նա հավակնում եր, վոր իր գործի հաջողության համար հարկավոր ե յերկու միջոց․ բանակ և դրամ, պարլամենտից անկախ։ Ստրաֆֆորդը, վորպես փոխարքա ուղարկվեց ճնշելու ապստամբությունն Իռլանդիայում, ուր նա հույս ուներ բանակ ստեղծել։ Ավելի դըժվար եր փող ձեռք բերելը։ Կառավարությունը, վորի պարտքը 1629 թվին 1 միլիոն ֆունտ ստեռլինգից ավելի յեր, մաշվում եր հպատակների քսակներից փող դուրս բերելու միջոցների վորոնման մեջ։ Կառավարական տուգանքները սիստեմ դարձան։ Բանը կուրյոզների յեր հասնում։ 1630 թվին, որինակ, հիշեցին, վոր մի ժամանակ յուրաքանչյուր հողատեր, ունենալով տարեկան 40 ֆունտ յեկամուտ, պետք ե ասպետ ձեռնադրվեր, և հիմա սկսեցին տուգանել բոլոր նրանց, ովքեր Կարլոս I-ի գահ նստելու ժամանակ (1625 թ․) չեյին ներկայացել այդ ձեռնադրությունն ընդունելու։ Այս կերպ հաջողվեց հավաքել ավելի քան 100 հազար ֆունտ ստեռլինգ։ Նույն 1630 թվին ձեռնարկվեց «ցանկապատումների» ստուգում, վորոնք կատարվել եյին արգելումներին հակառակ։ Տվյալ դեպքում խնդիրը վերաբերում եր իհարկե վոչ թե գյուղացիներին պաշտպանելուն, այլ «ցանկապատողներից» խոշոր փրկավճար կորզելուն։

Բայց կառավարությունը շուտով դեմ առավ պատին։ 1635 թվին նա մտցրեց նավահարկ («նավադրամ»), վորը դեռ XI դարում գանձվում եր առափնյա կոմսություններից, նորմանների ավազակությունների դեմ պայքարելու համար։ Հիմնվելով այն բանի վրա, վոր այդ հարկը սահմանվել եր դեռ մինչև պարլամենտի ծագումը, կառավարությունը «վերականգնեց» այն և նույնիսկ ուզում եր տարածել ամբողջ Անգլիայի վրա։ Այստեղ նա վճռական դիմադրության հանդիպեց։ Վճարելուց հրաժարվում եյին նույնիսկ խոշոր հողատերերը։ Նրանցից մեկը, Ջոն

Գեմպդենը, գործը ավելի դատարան, հայտարարելով, վոր այդ պահանջն ապօրինի է։ Թեև յերկու ձայների մեծամասնությամբ մեղադրական դատավճիռ կայացվեց Գեմպդենի նկատմամբ, բայց և այնպես, դատարանի վճռի դեմ ուղղված ոպոզիցիան այնքան ուժեղ էր, վոր նավագրամի հետագա գանձումը թագի համար չափազանց դժվարացավ։

Ոպոզիցիան աճում էր բուրժուազիայի և նոր ազնվականության միջավայրում։ Մոնոպոլիաների վաճառքը թագավորի կողմից անդադար կերպով ի չարը գործադրելը մի առանձին դժգոհություն էր առաջացնում։ 30-ական թվականների վերջում դրան ավելացավ վորոշ կանգառումն առևտրի և արդյունաբերության մեջ։ Գործազրկությունը և բարձր հարկերը սկսեցին հուզել ժողովրդական ստորին խավերին։

Կարլոս I-ի կառավարության դրությունն առանձնապես դժվարացավ այն ժամանակ, յերբ Շոտլանդիայում ապստամբություն սկսվեց։

Ապստամբություն Շոտլանդիայում

Այդ ժամանակ Շոտլանդիան Անգլիայի համեմատությամբ ամբողջովին վերցրած՝ մի հետամնաց յերկիր էր։ Նա բաժանվում էր յերկու մասի,— լեռնային մաս, վորտեղ բնակչությունը դեռ ապրում էր տոհմական (կլանական) կարգում և զբաղվում գլխավորապես անասնապահությամբ ու վորսորդությամբ. հարթավայրային մաս, ուր կային քաղաքներ, առևտուր և արհեստներ և ավելի զարգացած յերկրագործություն, քան լեռնային Շոտլանդիայում։ Կլանների առաջնորդներն իրենցից ներկայացնում էին արիստոկրատներ, վորոնք աստիճանաբար դառնում էին ֆեոդալական սենյորներ, վերջիններս XVII դարում դեռ իրենց զգում էին գրեթե անկախ թագավորական իշխանությունից։ Կալվինիզմը (պրեսբիտերական յեկեղեցին), վոր դեռ XVI դարում տարածվել էր Շոտլանդիայում, կազմակերպության նոր և հզոր ձև տվեց շոտլանդական արիստոկրատիային։ Ստյուարտներն իրենց խնդիրն էին համարում հենց այն, վորպեսզի վերջ տան շոտլանդական ֆեոդալների անկախության և Շոտլանդիայում աբսոլյուտիզմ հաստատեն։ Հասկանալով, թե պրեսբիտերականությունն ինչպիսի կազմակերպիչ նշանակություն ուներ ֆեոդալների համար, նրանք փորձում էին թագավորին հնազանդ անգլիկանական յեպիսկոպոսական յեկեղեցին բռնությամբ

տարածել Շոտլանդիայում: Բայց աբսոլուտիզմի դեմ ապստամբեց նաև շոտլանդական բուրժուազիան:

1606—1607 թ. թ. անգլիական պառլամենտում քննարկվեց Անգլիայի և Շոտլանդիայի միջև ավելի սերտ կապ ստեղծելու հարցը, անկախ այն անձնական ունիայից, որով երկու թագավորությունները կապված էին այն հանգամանքի շնորհիվ, որ Հակոբ I-ն (Շոտլանդիայում Հակոբ VI-ը) անգլիական գահ էր նստել: Առաջ քաշելով անգլո-շոտլանդական ավելի սերտ միության գաղափարը, Հակոբ I-ը յենթադրում էր Անգլիայի և Շոտլանդիայի տնտեսական, քաղաքական և կրոնական միավորումն իրականացնել «հավերժական ամուսնության» հանուն յերկու ազգերի հաշտության և առաջադիմության և ի մեծ փառս նրանց թագավորի: Սակայն յերկու յերկրներում մի շարք հակասական շահերի առկայության հետևանքով չհաջողվեց իրականացնել այդ նախագիծը: Լոնդոնի վաճառականները դեմ էին Անգլիայի և Շոտլանդիայի միջև ազատ առևտրին, վախենալով վերջինի կոնկուրենցիայից: Առարկություններ էր առաջացնում նաև շոտլանդացիների նատուրալիզացիայի նախագիծը: Դժվար էր հաշտեցնել նաև կրոնական հակասությունները, որոնք գոյություն ունեյին յերկու յերկրների միջև: Անգլիայի և Շոտլանդիայի միջև սերտ միություն հաստատելու նախագծի քննարկումից յերեսուն տարի անց, յերբ Լոդը փորձեց Շոտլանդիայում անգլիկան պատարագ մտցնել, այդ փորձն այնտեղ վճռական դիմադրության հանդիպեց: Շոտլանդացիները դրան պատասխանեցին պաշտոնական յեկեղեցուն դիմադրելու վերաբերյալ «կովենանտ»— պայմանագիր կնքելով և թշնամական գործողություններ սկսեցին Կարլոսի դեմ:

1639 թվին շոտլանդացիները ներխուժեցին Անգլիա և գրավեցին հյուսիսային կոմսությունները: Նրանց հաջողություններին բուն Անգլիայում համակրում էին օպոզիցիայի առաջնորդները, որոնք հույս ունեյին, որ թագավորի ռազմական անհաջողությունների հետևանքով կփոխվի Անգլիայի վրա ծանրացած քաղաքական ռեժիմը:

Հիրավի, շոտլանդացիների դեմ պատերազմելու համար Կարլոս I-ին հարկավոր էր փող, որը չկար: Թագավորի ռազմական ուժերը չնչին էին և չէյին կարող շոտլանդացիներին լուրջ դիմադրություն ցույց տալ: Թագավորը ստիպված յեղավ հրավիրել վաղուց չհավաքված պառլամենտը: Բայց նա սկզբում

հույս ուներ խուսափել այդ անհաճելի քայլից և 1639 թվին շոտլանդացիների հետ հաշտություն կնքեց, վորը յերաշխավորում եր նրանց տված ամնիստիան և Շոտլանդիայի ներքին, ժամանակավորապես յեկեղեցական կարգի անձեռնմխելիությունը: Սակայն 1640 թվին վերսկսվեց պատերազմը Շոտլանդիայի հետ, և պատերազմական գործողությունների ընթացքն ե՛լ ավելի անհաջող յեղավ անգլիացիների համար: 1640 թվի պատերազմն ավելի մեծ չափով դրսևորեց անգլիական միապետության թուլությունը, շոտլանդական բանակի ուժը և աբսոլուտիզմի դեմ ոպոզիցիայի աճը բուն Անգլիայում:

1640 թվին ռազմական գործողությունները սկսվելուց անմիջապես առաջ շոտլանդացիները, մի կողմ թողնելով թագավորին, դիմեցին անգլիական պարլամենտին և ժողովրդին: Նրանք հայտարարեցին, վոր մտադիր չեն պատերազմել անգլիական ժողովրդի հետ և պայքարում են միայն թագավորի ու նրա վատ խորհրդականների— Լոդի և Ստրաֆֆորդի դեմ:

Շոտլանդական բանակը կրկին ներխուժեց հյուսիսային կոմսությունները: Բուն Անգլիայում թագավորական աբսոլուտիզմին թշնամի բոլոր տարրերը պարտվողական դիրք բռնեցին, շոտլանդացիների հաղթանակները համարելով Ստյուարտների աբսոլուտիզմի խորտակում: Նույնիսկ լորդերի պալատում գտնվեցին պերեր, վորոնք հայտարարեցին, թե անգլիական ոպոզիցիայի և շոտլանդական կովենանտների շահերը համերաշխ են:

Կարճատև յեվ Յերկարատև պարլամենտների գումարումը

Կարլոս I-ի կառավարությունն ուրիշ բան չեր մնում անել, բայց յեթե վերստին բանակցությունների մեջ մտնել շոտլանդական «խռովարարների» հետ և աջակցություն խնդրել անգլիական պարլամենտից, վորը տասնմեկ տարվա ընդհատումից հետո հրավիրվեց 1640 թվի ապրիլի 13-ին: Այդ «Կարճատև պարլամենտն» եր, վորը գոյություն ունեցավ ընդամենը յերեք շաբաթ և ապա արձակվեց թագավորի կողմից:

Բաց անելով 1640 թվի պարլամենտը, կառավարությունը փորձում եր «ազգային զգացումների» կոչ անել անգլիացիներին, շոտլանդացիներին մեղադրելով «խռովության», «դավաճանության» և Ֆրանսիայի հետ հարաբերություններ պահպանելու համար: Սակայն ոպոզիցիայի առաջնորդները չարձագանքեցին կանցլերի այդ փորձերին՝ պարլամենտը զբաղել Շոտլանդիայի

դեմ և դրդել նպաստ տալու պատերազմի շարունակման համար. ընդհակառակը, ապոզիցիոներները կանցլերին մատնացույց արին, որ գլխավոր վտանգը ոչ թե շոտլանդացիների հարաբերություններն են Ֆրանսիայի հետ, այլ այդ վտանգը գալիս է ներսից, անգլիական ազգային ազատության թշնամիների կողմից— թագավորի և նրա խորհրդականների կողմից:

Ապոզիցիայի առաջնորդ Պիմը մեծ և գունագեղ ճառում թվեց այն բոլոր ապօրինություններն ու զեղծումները, որ կատարել էր Կարլոս I-ի կառավարությունը երկար ժամանակ առանց պարլամենտի կառավարելիս: Պիմը ռեֆորմներ էր պահանջում և ընդգծում էր պարլամենտի քաղաքական սուպրեմատիան: Կարլոս I-ի կառավարությունը ռեֆորմներ «խոստացավ», բայց առաջուց փող էր պահանջում Շոտլանդիայի դեմ պատերազմը շարունակելու համար: Չստանալով պահանջված նպաստը, Կարլոս I-ն արձակեց պարլամենտը (1640 թ. մայիսի 5-ին):

Բայց պատերազմի համար փող չկար ու չկար: Մինչդեռ թագավորական բանակը Նյուբերնի մոտ շոտլանդացիներից պարտություն կրեց, որը տոնվեց Լոնդոնում, կարծես թե դա անգլիացիների հաղթանակը լիներ: Ապոզիցիոն կերպով տրամադրված պերերը և Լոնդոնի Սիտին թագավորին ներկայացրին մի խնդրագիր, որով մատնանշվում էր, թե անհրաժեշտ է անհապաղ գումարել պարլամենտը: Թագավորը ստիպված եղավ զիջել: Այս անգամ գումարված պարլամենտը եղավ արդեն ոչ թե «Կարճատև», այլ «Երկարատև» պարլամենտ,— անգլիական բուրժուական հեղափոխության պարլամենտ:

1641 թվի իռլանդական ապստամբությունը

Կարլոս I-ի բռնակալության և նրա խորհրդականների— Լոդի և Ստրաֆֆորդի չարարքությունների դեմ ուղղված շոտլանդական «խռովությունը» ճանապարհ հարթեց XVII դարի 40-ական թվականների անգլիական հեղափոխության համար: Այս տեսակետից մեծ դեր խաղացին նաև իռլանդական գործերը: Պատերազմելով շոտլանդացիների դեմ, անգլիական աբսոլյուտիզմը դեմ չէր իռլանդական կաթոլիկներին օգտագործելու ոչ միայն Շոտլանդիայի պրեսբիտերականների, այլև բուն Անգլիայում քաղաքական օպոզիցիայի դեմ մղած պայքարի համար: Բանն այն է, որ Իռլանդիայում անգլիական գաղութարարների կա-

տարած բռնագրավումների առնչությամբ կար կաթոլիկական ուժեղ կուսակցություն, որը, վախենալով անգլո-շոտլանդական օպոզիցիայի հաղթանակից, պատրաստ էր կառավարությանն աջակցություն ցույց տալ այն պայքարում, որ վերջինը մղում էր յերկրին սպառնացող հեղափոխության դեմ։ Կարճատև պարլամենտը ցրելուց հետո Ստրաֆֆորդը թագավորին խորհուրդ էր տալիս իռլանդական բանակն ուղարկել Շոտլանդիան ճնշելու համար։ Ստրաֆֆորդը յենթադրում էր նույն իռլանդական բանակն օգտագործել Անգլիայում, հեղափոխական պայքարի սկզբում, հեղափոխությունը ճնշելու համար։

Բայց շոտլանդական կովենանտերներն Իռլանդիայում ունեյին բնական դաշնակիցներ հանձին շոտլանդական և անգլիական գաղութարար-բողոքականների, վորոնք հենց անգլիական կառավարության օժանդակությամբ գրավել եյին Ոլստեր պրովինցիայի մի զգալի մասը։ Իռլանդական հանդույցն արդեն կապված էր անգլիական աբսոլուտիզմի նախընթաց ձեռնարկումներով, անգլիական աբսոլուտիզմի, վորը դեռ Թյուդորների օրոք ձգտում էր յուրացնել և ստրկացնել «կանաչ կղզին»։

Այնքան էլ հեշտ չէր օգտագործել նաև իռլանդական բանակը, վոր Ստրաֆֆորդը մեծացրել և վերակազմել էր այն ժամանակ, յերբ նա փոխարքա յեր Իռլանդիայում։ Բուն Իռլանդիայում միանգամայն հնարավոր էր, վոր ապստամբեր տեղական բնակչությունը, վորը յերկար ժամանակ ճնշվում էր անգլիական աբսոլուտիզմի գաղթողական քաղաքականությամբ։ Հիրավի, այդպիսի մի ապստամբություն բռնկվեց 1641 թվին, յերբ անգլիական աբսոլուտիզմն անգլո-շոտլանդական պատերազմում կրած պարտությունների և հենց Անգլիայում հեղափոխական շարժման աճի կապակցությամբ դժվար դրության մեջ էր ընկել։ 1641 թվի իռլանդական այդ ապստամբության մեջ ղեկավար դեր խաղացին Ստրաֆֆորդի ստեղծած և պարլամենտի պահանջով զորացրված իռլանդական բանակի զինվորները։ Իռլանդական պարլամենտը գլխավորեց Իռլանդիայի այդ ազգային-կրոնական շարժումը, հարցականի տակ դնելով Ստրաֆֆորդի հրատարակած մի շարք ակտերի օրինականությունը և հատուկ դեկլարացիայում հայտարարելով, վոր իռլանդացիներն ազատ ժողովուրդ են, վորը պետք է կառավարվի Անգլիայի ընդհանուր իրավունքի և իռլանդական ստատուտների և սովորությունների հիման վրա։ Իռլանդական ապստամբության լուրը

մեծ տագնապ առաջացրեց Անգլիայում: Այդ ապստամբության մեջ տեսան սպառնալիք անգլիական գաղութարարների դեմ և կաթոլիկական ռեստավրացիա: Լուրեր եյին պտտվում, թե իռլանդական խռովարարները գործում են թագավորի անունից, թե բանակցություններ են վարվում կոնտինենտի կաթոլիկական տերությունների հետ: 1641 թվի իռլանդական ապստամբությունը չափազանց լարեց քաղաքական մթնոլորտը և մոտեցրեց այն մոմենտը, յերբ Կարլոս I-ի և Յերկարատև պարլամենտի միջև յեղած սահմանադրական կոնֆլիկտը վերածվեց բացահայտ քաղաքացիական պատերազմի, վորը տեղի ունեցավ «կավալերների»— թագավորի կողմը կանգնած ռոյալիստների և պարլամենտի միջև, վորին պաշտպանում եյին «կլորագլուխները»— թագավորի հակառակորդները քաղաքացիական պատերազմում:

Յերկարատեվ պարլամենտը յեվ նրա ձեռնարկումները (1640-1642 թ.թ.)

Յերկարատև պարլամենտի ընտրությունները անցնում եյին ընդհանուր հուզմունքի մթնոլորտում: Ընտրությունների արդյունքները խիստ աննպաստ եյին դահի համար: Վերընտրվեցին մոտ 300 դեպուտատներ— թագավորի կողմից արձակված Կարճատև պարլամենտի անդամները: Ինչ վերաբերում է Յերկարատև պարլամենտի սոցիալական կազմին, նրա մեջ գերակշռում եր միջին հողատեր ազնվականությունը, թեև քիչ չեյին նաև հողատեր արիստոկրատիայի, բարոնետների ու ասպետների ներկայացուցիչները: Վաճառականներն ու մանուֆակտուրիստները քիչ եյին: Վոչ միայն կոմսություններից, այլև քաղաքներից մեծ մասամբ ազնվականներ ընտրվեցին: Բայց հենց այդ դասակարգը, վորն առաջ թյուդորյան աբսոլյուտիզմի հենարանն եր, 40-ական թվականներին թշնամաբար եր տրամադրված Ստյուարտների ռեժիմի դեմ: Ճիշտ է, ազնվականների, նույնիսկ շարքային հողատեր ջենտրիների մի մասն այնուամենայնիվ Կարլոս I-ի կողմն եր: Բայց հիմնականում թագավորը կարող եր հույս դնել պարլամենտի միայն արիստոկրատական մասի աջակցության վրա:

Ստրաֆֆորդի դատավարությունը յեվ մահապատիժը

Յերկարատև պարլամենտը, վոր հավաքվեց 1640 թվի նոյեմբերի 3-ին, անհապաղ գործ հարուցեց Ստրաֆֆորդի դեմ, նրան մեղադրելով պետական դավաճանության մեջ: Իր հերթին Ստրաֆֆորդը դավաճանության մեղադրանք եր բարդում

պարլամենտական ոպոզիցիայի առաջնորդների վրա, շոտլանդացիների հետ նրանց վարած բանակցությունների համար: Ստրաֆֆորդը ձերբակալվեց և բանտարկվեց Տոուերում: Կանցլեր Ֆինչը, վոր մեղադրվում եր ապօրինի կերպով նավագրամ գանձելու համար, փախավ Ֆրանսիա:

Ստրաֆֆորդի դատավարությունը մոտ յերեք շաբաթ տևեց: Ստրաֆֆորդը փորձում եր հերքել Պիմի կողմից իր դեմ հարուցված մեղադրանքը պետական դավաճանության մեջ և իր դիտավորությունը Անգլիա մտցնել իռլանդական բանակը, վորը, ի դեպ ասած, թագավորը համառորեն չեր ուզում արձակել, չնայելով պարլամենտի պահանջներին:

Մեղադրանքը հիմնավորել իրոք վոր դժվար եր, վորովհետև ըստ անգլիական հին օրենքների, պետական դավաճանություն ասելով հասկացվում եյին միայն այն ակտերը, վորոնք ուղղված եյին թագավորի դեմ, մինչդեռ Ստրաֆֆորդն անկասկած գործում եր վերջինի հրամաններով: Պարլամենտում ընդունվում է մի բիլ (bill of Attainder), վորի համաձայն Ստրաֆֆորդը «վորպես Անգլիայի և Իռլանդիայի թագավորության հիմնական և վաղեմի օրենքները տապալելու փորձ անող», հայտարարվեց պետական դավաճան:

Լորդերը մի փոքր տատանվելուց հետո հաստատեցին բիլլը: Կարլոսը, վոր առաջ հավաստիացնում եր Ստրաֆֆորդին, թե նրա կյանքին, պատվին ու կարողությանը վոչինչ չի սպառնում, ստիպված յեղավ հրաժարվել իր սիրելիից: Ստրաֆֆորդը մահապատժի յենթարկվեց:

Ստրաֆֆորդի դատավարության և մահապատժի կապակցությամբ Լոնդոնում արտակարգ կարգի հուզում եր տիրում: Ժողովրդի, յենթավարպետների ու բանվորների բազմությունները շրջապատեցին թագավորի պալատը, սպառնալով ներս խուժել և պահանջելով, վոր թագավորը համաձայնություն տա մեղադրական դատավճռին: Մոտ յերկու հարյուր հազար դիտողներ հավաքվեցին Տոուերի մոտ, այնտեղ, ուր մահապատժի յենթարկվեց պարլամենտական կառավարման սկզբունքների մեծ ուրացողը և Շոտլանդիայի դեմ մղված դժբախտ պատերազմի հանցավորը:

Ստրաֆֆորդի մահապատժից հետո պարլամենտն ընդունում է մի շարք ձեռնարկումներ, վորոնք նպատակ ունեին լիկվի-

դացիայի յենթարկել ստյուարտյան աբսոլուտիզմի պետական հիմնարկությունները: Ընդունվեց «յեռամյա ակտը», վորը նախատեսում եր պարլամենտի գումարումն անկախ թագավորի կամքից, յեթե վերջինս պարլամենտի ցրումից յերեք տարի անց ինքը չհրավիրեր նոր պարլամենտ: Այնուհետև միջոցներ ձեռնարկվեցին թագավորի հնարավոր փորձերի դեմ՝ արձակել տվյալ պարլամենտը կամ ընդհատել վերջինիս նիստերն առանց նրա համաձայնության: Ստրաֆֆորդի մահապատժից հուզված, թագավորը համաձայնություն տվեց այդ միջոցներին:

Այնուհետև պարլամենտը վերացրեց ապօրինի կերպով գանձվող հարկերն ու մաքսերը. ռեֆորմի յենթարկեց թագավորի գաղտնի խորհուրդը. վոչնչացրեց Թյուդորյան և ստյուարտյան աբսոլյուտիզմի այնպիսի կարևոր կենտրոնական օրգանները, ինչպես «աստղային պալատը», «խնդրագիրների պալատը» և «բարձր հանձնաժողովը». արձակեց Հյուսիսային խորհուրդը և Ուելսի խորհուրդը, վորոնք անգլիական աբսոլյուտիզմի ծայրերկրային քաղաքականության գործիքներն եյին. ապօրինի ճանաչեց վոչ միայն նավադրամի գանձումը, վոր թագավորը կատարում եր առանց պարլամենտի կառավարելու ժամանակաշրջանում, այլև հենց դատարանի վորոշումը, վոր ուղղված եր Գեմպդենի դեմ: Այսպիսով վերականգնվեցին պարլամենտի այն իրավունքները, վորոնցով նա օգտվում եր Թյուդորների ժամանակ: Ազնվականության մի մասը գտնում եր, վոր պարլամենտի օպոզիցիան, վորը գործում է թագավորի դեմ, այլևս հիմք չունի գոյություն ունենալու: Սակայն թագավորը չեր ցանկանում անձնատուր լինել: 1641 թվի օգոստոսին նա մեկնեց Շոտլանդիա, հույս ունենալով իր կողմը քաշել շոտլանդական ազնվականությանը և օգտագործել շոտլանդական բանակը՝ պարլամենտը ցրելու համար: Սակայն շոտլանդացիները չեյին կարող նրան ավելին խոստանալ, քան Անգլիայում տեղի ունեցող պայքարին չմիջամտելը:

Թագավորի դավաճանական փորձերի վերաբերյալ լուրերը, վորոնք ստացվում եյին Շոտլանդիայից, ավելի ևս իրլանդական ապստամբության սկիզբը, պարլամենտին ստիպեցին վճռական ձեռնարկումների դիմել:

Մեծ ռեմոնստրացիա

1641 թվի նոյեմբերին պարլամենտում քըննարկվեց և ընդունվեց Մեծ ռեմոնստրացիան— անգլիական սահմանադրական պատմության կարևորագույն փաստաթղթերից մեկը: Նրա շուրջը լարված պայքար սկսվեց ռոյալիստների և պարլամենտական ոպոզիցիայի առաջնորդների միջև: Ռեմոնստրացիան թվում եր քաղաքական ու յեկեղեցական այն բոլոր իրավախախտումները, վոր կատարել եր արքունիքը, և պահանջում եր պետական կարևոր պաշտոնները տալ այնպիսի մարդկանց, վորոնք պարլամենտի կողմից վստահություն են վայելում: Վերոհիշյալ ռեմոնստրացիայում ի միջի այլոց խոսքը վերաբերում եր յեպիսկոպոսությունը յեկեղեցու կոլեգիալ կառուցվածքով փոխարինելուն, յեպիսկոպոսների իշխանությունը սահմանափակելուն, ուստի այդ անխուսափելի յեր դարձնում պարլամենտի պառակտումը և յեպիսկոպոսության կողմնակիցների ու ռոյալիստների բլոկը:

1641 թվի դեկտեմբերի 1-ին Մեծ ռեմոնստրացիան, վերջապես, ներկայացվեց թագավորին: Միաժամանակ համայնքների պալատը վորոշում է ընդունում ռեմոնստրացիան տպագրելու և տարածելու մասին: Դրանից հետո թագավորը, հույս դնելով ստորին և վերին պալատների միջև յեղած եյական տարաձայնությունների վրա (արդեն այդ ժամանակ համայնքների պալատի մեծամասնությունը հակամետ եր պալատը դիտելու վորպես ամբողջ ազգի ներկայացուցչական որգան, մինչդեռ լորդերն այդպիսի պայմաններում բնականաբար հակվում եյին թագավորի կողմը), փորձում է բանի ճանապարհով գլխատել պարլամենտական ոպոզիցիան: Վրդովվելով իր նկատմամբ ոպոզիցիայի առաջադրած այն մեղադրանքներից, թե ինքը դավադրություն է կազմել թագավորության դեմ և ոժանդակում է իրլանդական ապստամբությանը, Կարլոս I-ը վորոշում է ձերբակալել հինգ դեպուտատներին— ոպոզիցիայի առաջնորդներ Պիմին, Գեմպդենին, Գելլսին, Գեզիլրիջին և Ստրոդին, նրանց մեղադրելով պետական դավաճանության և շոտլանդական խռովարարներին աջակցելու համար:

Բայց թագավորի այդ պլանը վիժեց: Նույնիսկ լորդերի պալատը հրաժարվեց կարգադրություն անել հինգ ոպոզիցիոներներին ձերբակալելու մասին: Նրանց չմատնեց նաև համայնքների պալատը, չնայելով, վոր Կարլոսն անձամբ, զինված ջո-

կառով գնաց Ուեստմինստեր: Պիմը, Գեմպդենը և մյուսները թաքնվեցին Լոնդոնի Սիտիյում, վորը վորոշեց զինված ուժով նրանց պաշտպանել ձերբակալելուց: Նավաշինարաններից նավաստիները գալիս են ոգնելու Սիտիին և նրան պաշտպանող զինվորական ջոկատին.

Մի շաբաթ անց հինգ դեպուտատները հանդիսավոր կերպով վերադարձան Ուեստմինստեր: Ժողովուրդը վողջունում եր նրանց: Նրանց՝ համայնքների պալատը վերադառնալուց մի որ առաջ Կարլոս I-ը հեռացավ Ուայտհոլլից և մայրաքաղաքից (1642 թվի հունվար): Մոտենում եր այն մոմենտը, յերբ թագավորի և պարլամենտի միջև յեղած կոնֆլիկտն անխուսափելիորեն պետք է ընդուներ այն զինված պայքարի ձևը, վորը մղվեց ռոյալիստների և պարլամենտի կողմնակիցների միջև:

Դ Լ Ո Ւ Խ XIII

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(1642—1649 Թ. Թ.)

Այն վճռականությունը, վորով գործում եյին համայնքների պալատի ոպոզիցիոն դեպուտատները, 1641 թվի նոյեմբերին կենսագործելով Մեծ ռեմոնստրացիան, իհարկե բացատրվում եր վո՛չ միայն նրանով, վոր նրանք պաշտպանում եյին իրավունքն ընդդեմ թագավորի փորձերի՝ ուզուրպացիայի յենթարկել պարլամենտի իշխանությունը: Թագավորը փաստորեն ստիպված յեղավ զիջել և ճանաչել պարլամենտի նախկին իրավունքները: Հերթի յեր դրված արդեն վոչ թե իրավունքի, այլ հեղափոխության հարցը: Այսպես եյին դրությունը հասկանում համայնքների պալատի այն անդամները, վորոնք բողոքում եյին Մեծ ռեմոնստրացիայի դեմ և վորոնք հասկանալով վոր սկսվում ե հեղափոխությունը, անցան թագավորի կողմը:

Շարժում գյուղացիների յեվ քաղաքային ստորին խավերի մեջ

Ոպոզիցիոն կոմմոններների թիկունքում կանգնած եյին հեղափոխականորեն տրամադրված մասսաները: Նրանք պալատը մղում եյին դեպի վճռական գործողություններ և նպաստում այն ուժերի սահմանազատման, վորոնք խմբվում եյին յերկու թշնամի կողմերի— թագավորի և պարլամենտի շուրջը:

Լոնդոնում յեղած հեղափոխական ժողովներն արագությամբ արձագանք գտան պրովինցիայում: Սկսվեցին գյուղացիական հուզումներ: Գյուղացիները քանդում եյին ցանկապատերը, հրաժարվում ռենտաներ վճարելուց, անասունները տանում ցանկապատված արոտատեղերը, ձուկ եյին վորսում, պուրակներում վայրի կենդանիներ բռնում, կտրատում անտառները, իսկ տեղ-տեղ նույնիսկ ավերում եյին կալվածատերերի տներն ու հափըշ–

տակում նրանց գույքը, հանդես գալով ամբողջ բազմություններով, ինչով ասես զինված:

1641 թվի գարնանը լորդերի պալատը հրատարակեց մի որոշում, որով տեղական իշխանություններին հրամայվում էր ճնշել «ամեն տեսակ խռովություններն ու ապօրինի հավաքույթները»: Այդ որոշումը թույլ էր կատարվում և հարկավոր չեղավ զինվորական ջոկատներ ուղարկել: Արիստոկրատիային ոչ պակաս վախեցնում էին՝ Լոնդոնի մասսաների շարժումը, նրանց կորական խնդրագրերը, նրանց բուռն ցույցերը, նրանց ատելությունը նախկին ռեժիմի կողմնակիցների դեմ:

Երկու թշնամի ճամբարները հիմա սկսեցին պարզ ձևավորվել: Ընդհանրապես ասած՝ հյուսիսը և արևմուտքը թագավորի կողմն էին, հարավը և արևելքը— պառլամենտի կողմը, բայց հյուսիսում էլ արդյունաբերական մի շարք խոշոր կենտրոններ (Գուլլը, Վեստ-Ռայդինգ մանուֆակտուրային շրջանը Լիդս, Գալիֆակս և Բրեդֆորդ քաղաքներով) պառլամենտի կողմն էին: Պառլամենտի համար ապահովված էր Անգլիայի բոլոր նավահանգստային քաղաքների ու ավանների, ամբողջ նավատորմի աջակցությունը, և այս հանգամանքը չափազանց կարևոր հետևանք ունեցավ. պառլամենտը կարող էր ծովի վրայով կապ պահպանել նրանց միջև, մինչդեռ թագավորի ստանալիք արտաերկրյա օգնությունը վաղօրոք անհաջողության էր մատնված: Պառլամենտի կողմն էր նաև Անգլիայի ամբողջ արդյունաբերական հարավ-արևելքը, որ տնտեսապես առաջավոր էր, վերջապես, նրա կողմն էր Լոնդոնը, երկրի ֆինանսական և վարչական կենտրոնը: Այսպիսով կառավարման ապարատը նույնպես գտնվում էր պառլամենտի ձեռքում: Ճիշտ է, այդ արդեն ամբողջական պառլամենտ չէր: Նրա մի մասը հետևեց թագավորին, և 1643 թվին գործում էր երկու պառլամենտ. մեկը թագավորականը— Օքսֆորդում, մյուսը, «Երկարատև պառլամենտը»— Լոնդոնում: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, իր իշխանության անսահմանափակության համար պայքարող թագավորը բոլորովին բանի տեղ չէր դնում Օքսֆորդի իր պառլամենտը և հաշվի չէր առնում նրա կարծիքը:

Այսպիսով Անգլիան բաժանված էր երկու տերիտորիալ մասերի— թագավորական և պառլամենտական: Բայց դրա հիմքը կազմում էր դասակարգային բաժանումը— ֆեոդալական և

բուրժուական Անգլիա: Թագավորի կողմն եյին՝ ֆեոդալական արիստոկրատիան, Անգլիայի հյուսիս-արևմուտքի տնտեսապես հետամնաց ազնվականությունը և բուրժուազիայի մի աննշան մասը, վորը իր շահերը կապել եր Թագավորի դրամական գործարքների հետ: Պարլամենտական լագերի դասակարգային կազմը շատ ավելի բարդ եր և այդ բարդությունը հղի եր գալիք կոնֆլիկտներով: Պարլամենտի կողմն եյին բոլոր նրանք, ովքեր կապված եյին բուրժուական շահերի հետ,— հենց բուրժուազիայի լայն շրջանները, նոր ազնվականությունը, քաղաքային մանըր բուրժուազիան, կիսապրոլետարական և պրոլետարական խավերը և վերջապես գյուղացիների խոշորաթիվ մասսաները:

Սակայն պետք ե նկատել, վոր Կարլոսի զորքերի մեջ ել շատ գյուղացիներ կային: Այդ իհարկե բնավ չի նշանակում, վոր նրանք անցել եյին Թագավորի կողմը: Նրանց մեծամասնությունը վերցրել եյին ստիպողական զորահավաքի կարգով, և միայն հետամնաց ռայոնների մի մասը, որինակ, Ուելսը, կամավոր կերպով գնացել եր Թագավորի հետևից: Հիմնականում գյուղացիները պարլամենտի կողմն եյին և հույս ունեյին, վոր նա իրենց կազատի ֆեոդալական մնացուկներից:

Յերկու լագերների դասակարգային սահմանազատումը բնականաբար զուգորդվեց Անգլիայի նաև կրոնական բաժանմանը: Այն ժամանակ, յերբ կաթոլիկները և անգլիկանները, մանավանդ անգլիկանական հոգևորականությունը, անցել եյին Թագավորի կողմը, պուրիտանիզմի յերկու հիմնական հոսանքները— պրեսբիտերականներն ու ինդեպենդենտները, իսկ վերջիններիս հետ նաև ավելի ծայրահեղ աղանդները պարլամենտի կողմն եյին: Անգլիական կալվինիզմը վոչ միայն «այն ժամանակվա բուրժուազիայի ամենահամարձակ մասի» կրոնական իդեոլոգիան եր, այլև ֆեոդալիզմի դեմ բուրժուազիայի մղած «պայքարի պատրաստի թեորիան»: Վորպեսզի լրիվին հասկանանք այն իրադրությունը, վորի մեջ սկսվեց քաղաքացիական պատերազմը Անգլիայում, պետք ե հիշենք, վոր տնտեսապես հետամնաց կաթոլիկական Իռլանդիան անցել եր Թագավորի կողմը, ինչպես նաև Շոտլանդիայի հետամնաց (լեռնային) մասը: Ընդհակառակը, հարթավայրային Շոտլանդիայի ազնվականները և բուրժուազիան պարլամենտի կողմն եյին:

Մի փոքր ավելի ուշ, յերբ պարլամենտական բանակը սկսեց

պարտություններ կրել և պարլամենտը դրսից օգնություն էր
փնտրում, ձևավորվեց Անգլիայի դաշինքը Շոտլանդիայի հետ,
հռչակավոր «լիգան և կովենանտը», որով անգլիացիները և
շոտլանդացիները պարտավորվում էին պաշտպանել պրեսբիտե-
րական եկեղեցին, Անգլիայի և Շոտլանդիայի պարլամենտները
և թագավորության ազատություններն ու արտոնություն-
ները (1643 թ. սեպտեմբերի 25):

Երկու խմբերն էլ շուտով մականուններ ստացան: Թագա-
վորի կողմնակիցները կոչվում էին «կավալերներ», որովհետև
նրանց մեջ գլխավոր դեր էին խաղում արիստոկրատներն ու
ազնվականները, պարլամենտի կողմնակիցները կոչվեցին «կլո-
րագլուխներ», որովհետև այդ ժամանակ բուրժուազիայի մեջ
սովորություն էր դարձել մազերը խուզել կլոր ձևով:

Թագավորական և պարլամենտական զորքերի միջև ռազմա-
կան գործողությունները մի անգամից չսկսվեցին: Պրեսբիտերա-
կան վերնախավը, որը ղեկավարում էր պարլամենտը, երկար
ժամանակ չէր կորցնում այն հույսերը, թե կհաջողվի թագավո-
րի հետ գործը հաշտությամբ վերջացնել:

1642 թվի հունվարին, երբ Կարլոս I-ը իր կողմնակիցների
մի փոքրիկ խմբի ուղեկցությամբ մեկնեց Լոնդոնից, նրա դրու-
թյունը խիստ աննախանձելի էր: Նրա փորձը— հյուսիսում
ռազմական ուժեր կազմակերպել պարլամենտի դեմ պայքարելու
համար— անհաջողությամբ վերջացավ: Թագավորը երկու ան-
գամ փորձեց գրավել Գուլլը— ուր ռազմական հանդերձանքի մեծ
պաշար էր պահվում— և երկու անգամն էլ ձախողվեց այդ
փորձը: Այդ ժամանակ, արձակելով Յորքշիրի ազնվականների
ջոկատը, որոնք արձագանքել էին թագավորի կոչին՝ գալու
նրան պաշտպանելու, Կարլոսը նորից շարժվեց դեպի հա-
րավ: Օգոստոսին նա Նոտտինգեմ ժամանեց մի փոքրիկ ջոկա-
տով,— ընդամենը 800 հեծելազորային և 300 հետևակ:

Չնայելով թագավորի ծանր դրության, պարլամենտը նրա
հետ բանակցությունների մեջ մտավ, 1642 թվի ամառը նրան
ներկայացնելով «Տասնինն առաջարկները», որոնց հետ համա-
ձայնվելով, Կարլոսը կարող էր գահը վերադարձնել իրեն: Պար-
լամենտը պնդում էր, որ գաղտնի խորհրդի անդամները,
բարձրագույն պաշտոնատար անձինք և բերդերի պետերը նշա-
նակվեն նրա գիտությամբ և համաձայնությամբ. պարլամենտը

պահանջում էր խստորեն կիրառել այն օրենքները, վորոնք ուղղված էյին կաթոլիկների դեմ, և պապիստներին վտարել լորդերի պալատից. նոր նշանակվող պերերը պետք է լորդերի պալատը մտնեյին միայն պարլամենտի յերկու պալատների համաձայնությամբ. վերջապես, թագավորը պետք է համաձայնվեր յեկեղեցական ռեֆորմ մտցնել և «դելինկվենտներին» հանձնել պարլամենտի դատին (դելինկվենտներ կոչվում էյին պարլամենտի հակառակորդները, վորոնք գտնվում էյին թագավորի լագերում):

Թագավորը պատասխանեց կտրուկ մերժումով: Պարլամենտը սեպտեմբերի սկզբին հրատարակեց մի դեկլարացիա, վորով նա հայտարարում էր, թե պարլամենտի զինված ուժերը չեն ցրվի, մինչև վոր վերջանա կոնֆլիկտը թագավորի հետ և վերջինիս հանձնեն բոլոր դելիկվենտներին և չարագործներին: Պարլամենտն ընդունեց նաև մի ուրիշ կարևոր վորոշում, վորը սկիզբ դրեց հեղափոխության ագրարային օրենսդրության. վորոշվեց դելինկվենտների կալվածքներն օգտագործել բանակի պահպանման ծախսերը ծածկելու համար, նրանց հաշվին վճարելով այն անձանց պարտքերը, վորոնք պարլամենտին փոխարինաբար կըտան պայքարը շարունակելու համար անհրաժեշտ միջոցները:

Թագավորը նույնպես միջոցներ էր ձեռք առնում, վորպեսզի կազմակերպի իր ռազմական ուժերը: Նրա բանակում հավաքվում էին անգլիկանական յեկեղեցու հավատարիմ զավակները, յեկեղեցի, վորին պաշտպանելու խոստում էր տվել թագավորը. հավաքվում էին գահին և «աստծո օծյալ» թագավորին հավատարիմ արիստոկրատներն ու ազնվականները. յեկեղեցու և թագավորի նկատմամբ նրանց ջերմեռանդությունը զորավիգ էր լինում անբարյացակամությունը դեպի «վաճառականներն ու խանութպանները», վորոնք պարլամենտի կողմն էյին, նրանց թշնամությունը դեպի պուրիտանիզմը, վորը տարածված էր ստորին դասակարգերի մեջ: Ուժեղ թափով տեղի յե ունենում հետևազորի և հեծելազորի հավաքագրումը ռոյալիստական բանակի համար. 1642 թվի սեպտեմբերի վերջին Կարլոս I-ն արդեն ուներ մոտ 6 հազար հետևակ և 2 հազար հեծելազոր:

Քաղաքացիական պատերազմի սկիզբը յեվ առաջին տարիները

Երբ Թագավորը 1642 թվի օգոստոսի 22-ին Նոտինգեմից պատերազմ հայտարարեց պարլամենտին, նա քիչ թնդանոթներ և ավելի քիչ փող ուներ: Հարկավոր էր լինում դիմել մասնավոր մուծումների և կամավոր օգնության: Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններն օգնեցին Թագավորին: Թագավորական բանակի կազմակերպման գործի համար մեծ գումարներ տվին այնպիսի արիստոկրատներ, ինչպես Հենրի Սոմերսետը, Ուստերի կոմսը և Ուիլյամ Կավենդիշը, Նյուկեսլի կոմսը, վորոնք քաղաքացիական պատերազմի վրա ավելի քան մեկ և կես միլիոն ֆունտ ծախսեցին: Բայց Թագավորը պարլամենտի համեմատությամբ չնչին միջոցներ ուներ պատերազմ մղելու համար: Յեվ այնուամենայնիվ «կավալերները» սկսեցին ջարդել «կլորագլուխների» բանակը:

Պարլամենտական բանակի անհաջողությունները յեվ դրանց պատճառները

Քաղաքացիական պատերազմի առաջին խոշոր ճակատամարտը տեղի ունեցավ Եջհիլի մոտ, 1642 թվի աշնանը: Թագավորի հեծելազորը ծանր կորուստներ պատճառեց պարլամենտի զորքերին, վորոնք թվով զգալիորեն գերազանցում էին Թագավորական բանակին և վորոնց հրամանատարն էր լորդ Եսսեկսը: Պարլամենտական բանակը նահանջում է դեպի Լոնդոն, Թագավորին հաջողվում է գրավել Օքսֆորդը, վորն այնուհետև դառնում է Թագավորի գլխավոր ռազմակայանը: Շուտով այստեղ ժամանեցին պարլամենտի յերկու պալատների հակահեղափոխական զորամասերը, վորոնք կազմեցին իրենց Թագավորական «Օքսֆորդի պարլամենտը», սակայն վերջինս միանգամայն չնչին դեր էր խաղում: Հետագա մեկ ու կես տարուց քիչ ավելի ժամանակամիջոցում, մինչև Մարստոն-Մուրի մոտ պարլամենտական զորքերի հաղթանակ տանելը (1644 թ. հուլիսի 2-ին), գերակշռությունը պարզապես Թագավորի կողմն էր, չնայելով վոր պարլամենտական բանակը թվով ավելի մեծ էր Թագավորական բանակից և նյութապես ավելի լավ էր մատակարարված:

Պարլամենտական բանակի համար առանձնապես ծանր էր 1643 թվի ամառը: Հյուսիսում նրա մի մասը, վորի հրամանատարները Ֆերֆակսներն էին (հայրը և վորդին), ջարդվեց: Արևմուտքում Թագավորական բանակը գրավեց կարևոր քաղաք

և նավահանգիստ Բրիստոլը, վորտեղ իր ավար վերցրեց մեծ քանակությամբ ռազմական հանդերձանք և նավերի մի մասը: Նույն Բրիստոլ քաղաքից մի փոքր դեպի արևելք պառլամենտական գեներալ Ուոլլերը յերկու անգամ պարտություն կրեց:

Միայն 1644 թվի հուլիսի 2-ին, Մարստոն-Մուրի ու Յորքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռոյալիստները ջարդվեցին, կորցնելով բազմաթիվ գերիներ, թնդանոթներ և հանդերձանք: Դա պառլամենտական բանակի մեծ հաղթանակն եր, վորին խիստ նպաստեց Կրոմվելի լավ ուսուցված և կարգապահ հեծելազորը: Ռոյալիստների շարքերում բարոյալքում ե սկսվում: Զգալի թվով ռոյալիստական սպաներ փախչում են կոնտինենտ:

Այնուամենայնիվ թագավորին հաջողվեց Մարստոն-Մուրից հետո յել ռազմական գործողությունների կենտրոնական և արևմտյան թատերաբեմերում ծանր պարտություն պատճառել պառլամենտական գեներալներ Ուոլլերի և Եսսեքսի բանակներին, ընդ վորում Ուոլլերի բանակը խռովություն բարձրացրեց և ցրվեց տները, պահանջելով չվճարված ռոճիկը, իսկ Եսսեքսի հետևազորն ամբողջովին գերի ընկավ թագավորին:

Պառլամենտական բանակի անհաջողությունները բխում եյին յերկու տեսակի պատճառներից— ռազմա-կազմակերպչական և քաղաքական: Պառլամենտական բանակը յերկար ժամանակի ընթացքում վատ եր կազմակերպված: Նա բաղկացած եր յերկու մասից— մշտական զորքերից և ժողովրդական աշխարհազորից: Առաջինները վարձովի եյին, բաղկացած եյին բոլոր այն մարդկանցից, ովքեր ուզում եյին ռոճիկով ծառայել: Դրանք մեծ մասամբ այնպիսի մարդիկ եյին, վորոնք շատ թե քիչ բավարար եյին կռվում, քանի դեռ նրանց ռոճիկ եյին վճարում, և կարող եյին ցրվել, յեթե նրանց ռոճիկ չեր վճարվում: Ժողովրդական աշխարհազորը հավաքվում եր գրաֆություններում և Լոնդոնում: Գրաֆությունները պարտավոր եյին իրենց զորամասերին հայթայթել այն ամենն, ինչ վոր անհրաժեշտ եր: Այս զորքերն ավելի հուսալի եյին, բայց վատ եյին զինված և հանդերձված և պետքական եյին գլխավորապես պաշտպանության համար: Ամենից լավն եր Լոնդոնի միլիցիան, վոր բաղկացած եր արհեստավորներից, յենթավարպետներից և բանվորներից, բայց նա քիչ պետքական եր դաշտային ծառայության համար: Թագավորի

բանակը, որ թվով անհամեմատ ավելի քիչ էր, քան պառլամենտի բանակը, բաղկացած էր գլխավորապես ազնվականներից, որոնց համար զինվորական ծառայությունը կենսական կոչում էր: Այն ավելի կարգապահ էր, ավելի լավ էր կազմակերպված և, որ առանձնապես կարևոր է, ուներ հեծելազորի մեծ ջոկատներ, որը և նրան թույլ էր տալիս ուժեղ և անակնկալ հարվածներ հասցնել:

Բայց քաղաքացիական պատերազմի առաջին տարիներում Թագավորի հաջողությունների պատճառները չէին կայանում միայն նրանում, որ «կավալերների» թագավորական բանակը գերազանցում էր զուտ ռազմական տեսակետից: Պակաս դեր չէին խաղում նաև քաղաքական պատճառները: Պառլամենտական բանակը գլխավորում էին այնպիսի մարդիկ, որոնք մոտիկ էին կառավարող պրեսբիտերական վերնախավին, նրա հետ միասին իրենք էլ ցանկանում էին համաձայնության գալ թագավորի հետ և վախենում էին հեղափոխության հետագա խորացումից: Այդ բանակի գլխավոր հրամանատարն էր կոմս Էսսեկսը, հրամանատարները— ականավոր լորդեր և բարձր ազնվականությունը, որը թեև «սահմանադրական» տեսակետ ուներ, բայց աչքի չէր ընկնում մի առանձին վճռականությամբ և ամեն կերպ աշխատում էր քիչ վնաս հասցնել թագավորին: Այդ բանակի գլխավոր հրամանատարներից մեկը՝ լորդ Մանչեստրն այսպիսի խոսքերով որոշեց իր դրությունը. «Եթե մենք նույնիսկ իննըսունինն անգամ ջարդենք թագավորին, այնուամենայնիվ նա կմնա թագավոր և այդպիսին կմնա նրա սերունդը, բայց եթե թագավորը մեզ ջարդի թեկուզ մի անգամ, մենք բոլորս կըկախվենք, իսկ մեր սերունդը ստրուկներ կդառնա»: Պարզ էր, որ այդ մարդկանց համար արդեն ավարտված էր հեղափոխությունը: Վերջինս կարող էին շարունակել միայն այն մարդիկ, ովքեր կխիզախեին մինչև վերջ հարվածել թագավորին, որպեսզի նրանց սերունդն ազատ լիներ: Այդպիսի մարդկանցից մեկն էր Օլիվեր Կրոմվելը: Ի պատասխան վերևում բերված Լորդ Մանչեստրի խոսքերի, Կրոմվելն ասաց. «Միլորդ, եթե այդ այդպես է, ապա ինչո՞ւ առհասարակ դուք զենք վերցրիք: Այդ խոսում է պատերազմը շարունակելու դեմ: Այդ դեպքում պետք է հաշտություն կնքել, որքան էլ որ այն մեզ համար ստորացուցիչ լինի»:

Կրոմվելը (1599—1658 թ. թ.) պատկանում էր Ցերկարատև պարլամենտի ինդեպենդենտական փոքրամասնության և քիչ էր աչքի ընկնում պրեսբիտերական մեծամասնության «մեծ» հռետորների և ճարտար իրավաբանների մեջ: Միջակ դիրքի տեր այդ գյուղական ջենտլմենի, իր դասակարգային շահերի սահմանային իրավացիության անկեղծորեն հավատացող պուրիտանորեն պարզ և շիտակ գործերն ավելի քան հարմար էին լուծելու այն հեղափոխական խնդիրը, որ ծառացած էր նրա և իրեն համախոհ ինդեպենդենտների առաջ,— ընթանալ մինչև վերջ և անողոք լինել անցյալի հանդեպ, նոր ապագան օրինականացնելու համար: Մի քանդակագործ պատկերել է նրա հանգիստ կերպարը, մի ձեռքում սուր և մյուսում աղոթագիրք,— այն զենքը, որի օգնությամբ նա լուծում կամ ավելի լավ է ասել՝ կտրում էր իր փոթորկալից և մեծ ժամանակի ամենաբարդ հարցերը: Արդեն պատերազմի առաջին տարիներում նա ցուցաբերեց ռազմական կազմակերպչի տաղանդ, որը նրան թույլ տվեց հետագայում դառնալ հաղթանակի կազմակերպիչ: Պատերազմի սկզբում նա Քեմբրիջում կամավորներից ստեղծեց յերկու հեծյալ ջոկատ, որոնք դարձան «յերկաթակողերի» նրա բանակի կորիզը: Դրանք հասարակ վարձկաններ չեյին. նրա ջոկատների մարդիկ, մեծ մասամբ ազատավորներ, յոմեններ— գյուղացիներ և արհեստավորներ եյին, որոնք գտնվում եյին նույնպիսի ազնվական-ինդեպենդենտների հրամանատարության տակ, ինչպես և ինքը Կրոմվելն էր: Կրոմվելի ասելով՝ նրանք բոլորը «բարեպաշտ եյին, ազնիվ, աստվածավախ և ըստ խղճի պահանջի պաշտպանում եյին իրենց գործը»: Նրանք յեռանդով քննարկում եյին քաղաքական հարցերը, իբր ապացույց վկայակոչելով աստվածաշունչը, ճակատամարտից առաջ յերկար աղոթում եյին և կռվի գնալով, սաղմոս եյին յերգում:

Պարլամենտական բանակը Մարստոն-Մուրի մոտ տարած հաղթանակով պարտական էր Կրոմվելի ջոկատին, յերբ Կրոմվելը, լինելով ձախ թևի հրամանատար, նետվեց թշնամու զորքերի վրա և վճռեց ճակատամարտի բախտը: Այդ հաղթանակը նրա փառքի սկիզբն էր: Պարլամենտում նա հանդես յեկավ ինդեպենդենտների արդեն ձևավորվել սկսող կուսակցության կողմից և պահանջեց ավելի յեռանդուն կերպով մղել պատերազմը և վերակազմել բանակը: «Յեթե բանակն այլ կերպ կազմակերպ-

ված չլինի և յեթե պատերազմը չմղվի ավելի յեռանդուն կերպով, ժողովուրդը չի կարողանա այլևս տանել այն և ձեզ կստիպի խայտառակ հաշտություն կնքել»,— ասում եր նա: Վորպես բանակի ռեֆորմի նախնական միջոց, պարլամենտն ընդունեց «ինքնահրաժարման բիլլը», վորի համաձայն պալատների այն անդամները, վորոնք միաժամանակ զինվորական պաշտոններ եյին զբաղվում, պետք է հրաժարվեյին դրանցից: Այդ միջոցի հետևանքով փոխվեց առաջվա արիստոկրատական հրամանատարությունը, քանի վոր և՛ կոմս Եսսեկսը և՛ գլխավոր հրամանատարների մեծամասնությունը պարլամենտի անդամներ եյին: 1645 թվի հունվարի 28-ին ստորին պալատն ընդունեց բանակի բարեփոխման պլանը, վոր առաջարկել եր Կրոմվելը: Առանձին ջոկատների փոխարեն, վորոնք պահվում եյին կոմսությունների միջոցներով, հիմնվում եր միասնական բանակ միասնական հրամանատարության տակ, այն միջոցներով, վոր բաց եր թողնելու պարլամենտը: Այդ բանակի գլուխ նշանակվեց Թոմաս Ֆերֆաքսը, բայց նրա իսկական կազմակերպիչն ու առաջնորդը Կրոմվելն եր, վորի համար նույնիսկ բացառություն արին նոր ընդունած «ինքնահրաժարման բիլլից»: Նա դարձավ լեյտենանտ-գեներալ (այսինքն գլխավոր հրամանատարի առաջին օգնական)՝ միաժամանակ մնալով պարլամենտի անդամ: Այդ վերակազմված «նոր ձևի բանակը» («նոր մոդել»), ինչպես նրան անվանում եյին, նույնպես կարգապահ եր, «աղնիվ և բարեպաշտ», ուներ սոցիալական նույն կազմը, ինչ վոր Կրոմվելի «յերկաթակողերի» ջոկատը: Հենց նա յել դարձավ հեղափոխության բանակ՝ այդ հեղափոխության հետագա ետապներում:

Այդ բանակի զինվորներն եյին գյուղացիները, արհեստավորներն ու բանվորները: Նրա հրամանատարական կազմը, մանավանդ կրտսեր և միջին, զգալի չափով համալրվում եր ժողովրդից դուրս յեկած մարդկանցով: Կոշկակար Հյուսոնը, կառապան Պրայդը, կաթսագործ Ֆոկսը, նավաստի Ռեյնսբորոն այդ բանակում գնդապետներ դարձան: 1645 թվի հունիսի 14-ին Նեզբիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վոչ միայն նոր բանակի հաղթահանդեսն եր, այլև հեղափոխության վերջնական հաղթանակը թագավորի դեմ: Հաղթողների ձեռքն ընկան 5 հազար գերիներ, թագավորական բանակի ամբողջ հրետանին և հանդերձանքը, ինչպես նաև շտաբ-կայանը «դաղտնի

կաբինետով» հանդերձ, վորտեղ գտնվում էր Թագավորի դիվանագիտական գրագրությունը, վորը վերջնականապես վարկաբեկեց նրան։ Պարզվեց, վոր Թագավորը պայմանագիր էր կնքել իռլանդական կաթոլիկների հետ, Յեվրոպայում ոտարերկրյա ոգնություն էր խնդրում և հույս ուներ իրեն անկասկած թվացող հաղթանակից հետո մի լավ պատժել իր «խռովարար» հպատակներին։

Նեյզբիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վճռեց Թագավորի բանակի բախտը։ Նույնպես այդ ճակատամարտով ավարտվում են առաջին քաղաքացիական պատերազմի խոշոր գործողությունները։ Այնուհետև գործը սահմանափակվում է առավելապես այն բերդերի պաշարմամբ, ուր դարանակալել էին ռոյալիստները։ Ֆերֆաքսը գրավեց Բրիստոլը։ Ռոյալիստների բերդերը մեկը մյուսի հետևից անձնատուր են լինում պարլամենտական բանակին։ 1646 թվի մարտին առաջին քաղաքացիական պատերազմը հիմնականում վերջացել էր։ Պարլամենտական բանակը ջարդել կամ վոչնչացրել էր Թագավորի ռազմական ուժերը։ Նույն թվականի մայիսին Կարլոս I-ը փախչում է հյուսիս և հանձնվում շոտլանդացիներին, վորոնց բանակը Լեվլի հրամանատարության տակ գտնվում էր Անգլիայի սահմաններում և վորոշ դեր խաղաց 1645—1646 թ. թ. դեպքերում։ Վերջապես, 1646 թվի հունիսին Օքսֆորդն էլ հանձնվեց պարլամենտի ռազմական ուժերին։

Յերբ Թագավորը փախավ Շոտլանդիա, ապա այդ բացատրվում էր նրանով, վոր այնտեղ դեռ 1645 թվին լեռնցի կլանների առաջնորդներից մեկը, Մոնտրոզն անցել էր նրա կողմը։ Բայց նույն թվականի օգոստոսին Մոնտրոզը ջարդվեց և Կարլոսը, հանձնվելով հարթավայրի շոտլանդացիներին, հույս ուներ նոր զիջումներով և խոստումներով նրանց իր կողմը քաշել։ Բայց այստեղ էլ նա անհաջողության հանդիպեց։ Կարլոսին չեյին հավատում։ Մյուս կողմից պարլամենտը, վոր ձգձգում էր շոտլանդական բանակին տրվելիք վճարն այն ոգնության համար, վոր նրանք ցույց էին տվել 1645—1646 թ. թ., հիմա առաջարկեց առանց հետաձգելու սկսել վճարումը 400 հազար ֆունտ ստերլինգի չափով։ Դրա փոխարեն շոտլանդացիները համաձայնվեցին Կարլոսին հանձնել անգլիացիներին։ 1647 թվի փետրվարին անգլիական լիազորները նորին մեծությանը քաղա-

քավարի խնդրեցին հետևել իրենց, հսկողության տակ դնել Յուլմրի ամրոցը, որ գտնվում էր Ներրիի մերձակայքում:

Տնտեսական ճգնաժամը հեղափոխական պատերազմի տարիներում: Մանուֆակտուրային արդյունաբերության անկումը: մասսաների աղքատացումը

Երկարատև քաղաքացիական պատերազմը քայքայեց յերկրի ամբողջ տնտեսական կյանքը: Կտրվեց այն կապը, որ Անգլիայի առանձին ռայոնները միացնում էր իբրև տնտեսական մի ամբողջություն: Ամենից շատ տուժեց Լոնդոնը, որն արդեն այդ ժամանակ կարող էր գոյություն ունենալ միայն մթերքներ և հումք ներածելու շնորհիվ: Այդ կապակցությամբ դադարել էին սկսում առևտուրն ու արդյունաբերությունը, գործազրկություն էր սկսվում: Բրդե արդյունաբերության մեծ թվով մանածագործներ գաղթեցին Հոլանդիա: Վատ էր նաև գյուղատնտեսության դրությունը: 1646 և 1647 թվականներին վատ բերք ստացվեց և այդ բացատրվում էր ոչ միայն նրանով, որ յեղանակն անբարենպաստ էր, այլ պատերազմի հետ կապված մի հանգամանքով—պակասել էին աշխատող ձեռքերն ու ձիերը, անցնող զորքերը փչացրել էին ցանքերը, տեղի էին ունենում կողոպուտներ և այլն: Հացի և մսի գները գրեթե յերկու անգամ բարձրացան: Աշխատավոր մասսաների դրությունը չափազանց ծանր էր: Նրանց դրությունն էլ ավելի յեր ծանրանում պարլամենտի կամ ավելի ճիշտ՝ նրա պրեսբիտերական մեծամասնության հարկային քաղաքականության հետևանքով:

Երկարատև պարլամենտի օրենսդրական գործունեությունը

Կրոմվելի «յերկաթակողերի», այսինքն գլխավորապես գյուղացիների, արհեստավորների և բանվորների արյունով հաղթելով թագավորին, պարլամենտի պրեսբիտերական մեծամասնությունը կամ՝ ինչպես այն ժամանակ սկսեցին նրան անվանել՝ «դրամապարկի կուսակցությունը»,— Սիտիի տեր ու տնօրենները և նոր ազնվականության վերնախավերը շտապում էին յուրովի կատարել հեղափոխությունը: Նրանք փութկոտ ագահությամբ հարստանում էին հեղափոխության հաշվին և աշխատում էին օրենսդրական ճանապարհով ամրապնդել իրենց «նվաճումները»:

Հարստացման աղբյուրն ամենից առաջ հենց հեղափոխությունն էր: Այն հսկայական միջոցները, որոնք պահանջվում

էին պատերազմը մղելու համար, հիմնականում ձեռք էին բերվում յերեք աղբյուրներից,— հարկերից, փոխառություններից և ֆեոդալական դասակարգերի գույքերը կոնֆիսկացիայի յենթարկելուց: Բուրժուազիան աշխատեց բոլոր յերեք աղբյուրներից իր օգտին քամել այն ամենն, ինչ վոր կարելի յեր: Հարկման բնագավառում անգլիական բուրժուազիան, հետևելով իր յերջանիկ նախորդի— հոլանդական բուրժուազիայի օրինակին, սպառման առարկաների վրա ակցիզներ, այսինքն անուղղակի հարկեր դրեց, այս կերպ հարկային բեռի ծանրությունը բարդելով աշխատավոր մասսաների ուսերին: Ակցիզի գանձումը փրկանքով տրվում եր կոմսություններին և տեղական դրամատեր մարդիկ շահվում եյին այդ փրկանքներից: Կառավարական փոխառությունները հարստության խոշոր աղբյուր եյին Սիտիի կալվինիստորեն աստվածավախ մեծաքսակների համար: Նրանք վերցնում եյին 8-ից մինչև 10% և, բացի դրանից, օգտվում եյին նրանով, վոր փոխառություններն ապահովված եյին լինում հողային գույքերով, վորոնք յերբեմն չնչին գնով ընկնում եյին հենց նրանց ձեռքը: 1642 թվի փոխառությունը, վոր կնքված եր իռլանդական ապստամբությունը ճնշելու համար, ապահովվեց ապստամբների հողերով: Այնուհետև, 1643 թվին պրեսբիտերական յեկեղեցի մտցնելուց հետո կնքվեցին փոխառություններ, վորոնք ապահովված եյին յեպիսկոպոսական հողերով և դելինկվենտների, այսինքն այն ազնվական-ռոյալիստների հողերով, վորոնք վերջնականապես անցել եյին հակահեղափոխության բանակը: Վորովհետև պարլամենտը քիչ հող ուներ, այդ հողերն եժան եյին ծախվում և դրանց շուրջը կատաղի սպեկուլյացիա յեր տեղի ունենում: Դրանց մեծ մասն ընկավ բուրժուազիայի և նոր ազնվականության ձեռքը: Նույն դելինկվենտներից առանց ճնշվելու կաշառքներ էլ եյին վերցնում, վորպեսզի պակասեցնեյին նրանց վճարած տուգանքները, նրանց հետ նաև այն հողի բաժինը, վոր ծախվում եր տուգանք վճարելու համար: Ինչպես տեսնում ենք, պետական բարիքը հափշտակելու գործում նույնպես հեղափոխություն եր տեղի ունենում և պրեսբիտերական գործարարները վաստակելու և սոսկ գանձագողության գործում հին արիստոկրատիայից շատ ավելի հեռու գնացին: «Ամենուրեք կար անարդարություն և ճընշում,— հետագայում գրում եր բանաստեղծ և ինդեպենդենտ

Միլտոնը։— Ամեն որ կատարվում էյին ամոթալի և զարշելի գործեր, վորոնք գաղտնի կամ բացահայտ ոժանդակություն էյին գտնում։ Ծառերը, վորոնց դուրս քաշեցին խանութից կամ գրասենյակից, վորպեսզի նրանց պատվավոր պաշտոններ տան ազգի բարձրագույն խորհուրդներում կամ կոմիտեներում, թեպետև նրանք զուրկ էյին վորևէ արժանիքից,— այստեղ չարունակում էյին իրենց սովորական զործառնությունը, վաճառքի հանելով հասարակական բարօրությունը»։

Այս բոլորը հսկայական հետևանքներ տվեց հողային սեփականության փոխադրության բնագավառում։ Բուրժուազիան և նոր ազնվականությունը ստացան հողային հսկայական ֆոնդեր վոչ պակաս, քան Հենրիխ VIII-ի որոք վանքական գույքերը գրավելու ժամանակ։ Շատ հաճախ տիրոջ փոխվելու դեպքում փոփոխություններ էյին տեղի ունենում նաև գյուղացիների, այդ հողի հողակալների դրության մեջ։ Հողի նկատմամբ գյուղացիների հին, հաստատուն ֆեոդալական իրավունքը լիկվիդացիայի յեր յենթարկվում, ժառանգական հողակալությունները վերածվում էյին ցմահ հողակալությունների կամ նույնիսկ սովորական ժամկետային վարձակալության։

Այդ բոլորին հետևեց հեղափոխության տված հետևանքների նաև որենսդրական հաստատումը։ 1646 թվի փետրվարին վերացվեցին ասպետական հողակալությունները։ Այդ ռեֆորմը, վոր առաջին հայացքից կարևոր չէր, սկզբունքային խոր նշանակություն ունեցավ։ Վերևում մատնանշվեց, վոր ֆեոդալական կարգերի— մանորի կառուցվածքում մանորի լորդի անմիջական տիրության տակ գտնվող հողի մի մասը, այսպես կոչված դոմենը, «ազատ հողակալությունն» էր, ֆրիհոլդ և վոչ թե լորդի բուրժուական լիակատար սեփականություն։ Ֆեոդալական հարաբերությունների համար բնորոշ էր հենց այն, վոր ամեն մի հող, վորքան էլ դրա նկատմամբ հաստատուն լինեյին տիրոջ իրավունքները, այնուամենայնիվ հանդիսանում էր այնպիսի տիրություն, վորի հանդեպ նրա տերը պարտավոր էր վորոշ պարհակներ կամ վճարներ հատուցել վերադաս սենյորի կամ թագավորի ոգտին։ Անգլիայում խոշոր տիրությունների մեծ մասը համարվում էր թագավորից տրված, այն պայմանով, վոր դրանք ոգտագործողները թագավորի ոգտին ասպետական ծառայություն կատարեյին։ XVII դարում այլևս ասպետական ծա-

ռայություն չէր պահանջվում, բայց ասպետական հողերի տերերը դրա փոխարեն պետք է փող վճարեյին թագավորին: Հետո այդ բոլոր վճարները վերացվեցին և ասպետական հողը սեփականություն հայտարարվեց: Բայց ազնվականների նկատմամբ վերացնելով ֆեոդալական հողատիրությունը, պառլամենտը նույնը չարավ վոչ ազնվականական հողատիրությունների նկատմամբ: Կոպիհոլդը չվերացվեց և կոպիհոլդ պահողները պետք է ֆեոդալական նախկին պարհակները մուծեյին իրենց լորդերի օգտին: Պառլամենտն ամբողջովին դադարեցրեց նաև ցանկապատումների դեմ ուղղված բոլոր օրենքները և տապալեց այդ առթիվ ներկայացված բոլոր օրինագծերը: Անգլիական հեղափոխության թերևս վոչ մի ակտում այդչափ պարզությամբ չարտահայտվեց անգլիական և ֆրանսիական բուրժուական հեղափոխությունների միջև յեղած տարբերությունը,— վորոնցից յերկրորդն ամբողջովին և առանց փրկանքի վոչնչացրեց սեփականության ֆեոդալական ձևը հօգուտ բուրժուական սեփականության: Բայց այդ սկզբունքային տարբերությունը բխում էր դասակարգային ուժերի փոխհարաբերությունների զանազանությունից. անգլիական հեղափոխության ժամանակ «Բուրժուազիան նոր ազնվականության հետ դաշինք կնքած, պայքարում էր միապետության, ֆեոդալական ազնվականության և տիրող յեկեղեցու դեմ»[1], մինչդեռ 1789 թվին «բուրժուազիան ժողովրդի հետ դաշինք կնքած, պայքարում էր միապետության, ազնվականության և տիրող յեկեղեցու դեմ»[2] (բոլոր ընդգծումները մերն են— խմբ.): Այս պատճառով XVII դարի անգլիական հեղափոխությունը սեփականության ֆեոդալական ձևը հօգուտ բուրժուական ձևի վոչնչացրեց վոչ թե ամբողջովին, այլ միայն «նոր ազնվականության հետ դաշինք կնքած բուրժուազիայի» համար:

Հեղափոխության այդ ժամանակաշրջանում պրեսբիտերական տիրապետությունն իր հաջողություններն ամրապնդեց նաև կրոնական շղթաներով: 1643 թվին կալվինիստական յեկեղեցին, կրոնա-բարոյական այդ կազմակերպությունը և կապիտալիստական կուտակման արդարացումը, Անգլիայում տիրապետող յեկե-

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. VII, էջ 54.
[2] Նույն տեղը:

դեցի Հայտարարվեց։ Ինչպես կալվինիստական յեկեղեցում ամենուրեք, տեղական յեկեղեցական համայնքներում իբրև ավագներ (պրեսբիտերներ) յերևան են գալիս տեղական դրամատեր մարդիկ, վորոնք յեկեղեցական-վոստիկանական հսկողության, տուգանքների և բանտարկությունների միջոցով պարլամենտի պրեսբիտերական քաղաքականությունը և հաղթանակող պլուտոկրատիան ջերմեռանդությամբ պաշտպանում են աջից և մանավանդ ձախից յեղած ամեն մի քննադատությունից։

Պարլամենտի հարկային քաղաքականությունը և օրենսդրությունը, վորոնք կիրառվում եյին պրեսբիտերականների, այսինքն խոշոր բուրժուազիայի և նոր ազնվականության վերնախավի շահերի ոգտին, չեյին կարող ոպոզիցիա չառաջացնել բուրժուազիայի և նոր ազնվականության մնացած մասսայի, այլ նաև բնակչության լայն խավերի կողմից, վորոնց համար պրեսբիտերական հեղափոխությունը սպառնում եր նոր շահագործման վերածվել։ Այդ ոպոզիցիայի ղեկավար դարձավ ինդեպենդենտական կուսակցությունը, վորի մեջ, ինչպես և պրեսբիտերականների մոտ, դասակարգային շահերը քողարկված եյին կրոնական վորոշ դոկտրինայով։ Այդ միջին առևտրական և արդյունաբերական բուրժուազիան եր և միջին նոր ազնվականությունը (ջենտրիները)։ Սկզբում նրան հարում եր նաև մանր բուրժուազիան, ինչպես և խոշոր և միջակ գյուղացիությունը (յոմենները)։ Այդ կուսակցությունը սկսել եր ստեղծվել դեռ թագավորի դեմ ուղղված պայքարի ժամանակաշրջանում, պահանջում եր յեռանդուն կերպով պատերազմել մինչև հաղթանակ։ Պրեսբիտերական պարլամենտում նա փոքրամասնություն եր կազմում, բայց վորովհետև վերջիվերջո պրեսբիտերականների համար ևս թագավորի դեմ տարված հաղթանակը— թագավոր, վորը չեր ուզում վորևէ համաձայնության գալ— նրանց սեփական հաջողության անհրաժեշտ պայմանն եր, նրանք ստիպված եյին իրենց ձեռքից բաց թողնել բանակի կազմակերպումն ու նրա հրամանատարությունը և այդ բոլորը հանձնել ինդեպենդենտներին։

1645 թվի աշնանը տեղի եյին ունենում պարլամենտի լրացուցիչ ընտրությունները, այդ տարիների ընթացքում հեռացած դեպուտատների— գլխավորապես թագավորի բանակը փախած ռոյալիստների փոխարեն նոր անդամներ ընտրելու համար։ Ըն-

դամենը պետք է ընտրվեր պարլամենտի 235 անգամ: Չնայելով, որ Նեյզբիի մոտ տեղի ունեցած հակատամարտից հետո ինդեպենդենտները ժողովրդականություն էին վայելում և լրացուցիչ ընտրությունների ժամանակ անկասկածելի հաջողություն ունեյին, այնուամենայնիվ ինդեպենդենտների կուսակցությունը պարլամենտում դարձյալ փոքրամասնություն կազմեց, թեև ավելի մեծաթիվ, քան առաջ: Ընտրությունների ժամանակ ինդեպենդենտների համար պարզվեց, որ նրանք չեն կարող հաջողության վրա հույս դնել ընտրությունների հին սիստեմի դեպքում, երբ ամեն մի նշանակություն կորցրած մանր, հին քաղաքներն ու ավանները, որոնք հաճախ կախում ունեյին հարևան հողատիրոջից, պարլամենտ էին ուղարկում այնպիսի դեպուտատներ, որոնք հաճելի էին հարուստ հովանավոր-«հարևաններին»: Ընտրությունների ժամանակ չնվաճելով պարլամենտը, ինդեպենդենտներն իրենց գործունեությունը կենտրոնացրին բանակում, որը և դարձավ հեղափոխության հետագա խորացման օրգան:

Պրեսբիտերականներն իշխում էին պարլամենտում, ինդեպենդենտները— բանակում: Պրեսբիտերական պարլամենտը ստիպված էր բանակին թույլ տալ վերջնականապես ջարդելու թագավորին, որովհետև թագավորը չէր ցանկանում նույնիսկ պարլամենտին զիջումներ անել: Բայց պարլամենտը վախենում էր հեղափոխությունից: Երբ թագավորը ջարդվեց և հանձնվեց շոտլանդացիների կողմից, պարլամենտը գտնում էր, որ բանակն ավարտել է իր գործը և պետք է այլևս գոյություն չունենա: Այդ ժամանակ բանակը, այսինքն ինդեպենդենտները, վճռական բողոք հայտնեց և դրանով իսկ ցույց տվեց, որ պրեսբիտերականներին թույլ չի տա իր ջանքերով և արյունով իրականացված հեղափոխությունն օգտագործել միայն «դրամապարկերի» շահերի համար: Ահա այն իրադարձությունների ընդհանուր իմաստը, որոնք տեղի ունեցան թագավորին վերջնականապես ջախջախելուց անմիջապես հետո:

Սակայն այն ժամանակ, երբ թագավորը հանձնվեց պարլամենտին, բանակն արդեն քաղաքականապես միասնական չէր: Նրա մեջ տեղի ունեցավ պառակտում, որը արտացոլեց բանակից դուրս տեղի ունեցող դասակարգային պայքարը, որը սըրվեց 1646—1647 թ. թ. տնտեսական ընդհանուր ճգնաժամի, ար-

դյունաբերության և առևտրի անկման, գործազրկության և մասսաների տնտեսական քայքայման ազդեցության տակ։ Եթե բանակը և նրա ինդեպենդենտական ղեկավարությունը հիմա դուրս էին գալիս պրեսբիտերական պարլամենտի դեմ,— վորովհետև վերջինս գործում էր միայն բուրժուազիայի ու նոր ազնվականության վերնախավի շահերի համար,— ապա հենց բանակում աճում էր նրա ամենադեմոկրատիկ խավերի, գլխավորապես զինվորների մասսայի դժգոհությունն ինդեպենդենտական ղեկավարության դեմ։ Պարլամենտի և բանակի միջև յեղած կոնֆլիկտը բարդացավ ինդեպենդենտների և զինվորական մասսայի միջև յեղած կոնֆլիկտով, զինվորական մասսայի, վորը հիմա հաճույքով ունկնդրում էր այսպես կոչված լեվելլերական շարժման ավելի ռադիկալ իդեոլոգների ագիտացիային։

Ջոն Լիլբեռնը յեվ լեվելլերները Լեվելլերները (անգլիական level բառից— հավասարեցնել)— «հավասարիչները»— կազմում էին մի խումբ, վորը բավական բազմազան էր իր սոցիալական կազմով։ Դրանք գլխավորապես քաղաքի և գյուղի մանր բուրժուական տարրերն էին,— ունևոր գյուղացիները, վորոնք տուժել էին քաղաքացիական պատերազմի ավերածություններից, մասամբ քաղաքի մանր բուրժուազիան, վորի վրա յեր ընկնում արդյունաբերական կանգառման հետևանքների ծանրությունը։ Բայց սկզբում գյուղացիության ամենաչքավոր խավերն ու քաղաքային նախապրոլետարիատը նույնպես հարում էին լեվելլերներին, վորպես ամենառադիկալ խմբավորման։ Լեվելլերների յելույթի առաջին էտապում նրանց հիմնական պահանջներն էին քաղաքական լայն ռեֆորմները և սրանց մեջ հետագայում սովորական դարձած՝ մանր-բուրժուական քաղաքական մտածողության արդյունքը— ընդհանուր ընտրական իրավունքը, որենքի առաջ բոլորի ձևական հավասարությունը, վորը մանր-բուրժուազիային հնարավորություն կտար ընկնելու պարլամենտ և այնտեղ պաշտպանելու իր շահերը։ Լեվելլերների առաջնորդն էր Ջոն Լիլբեռնը, յեվրոպական բուրժուական ռադիկալիզմի նախահայրը, անգլիական հեղափոխության մեծ տրիբունը։

Ջոն Լիլբեռնը ծնվել է 1618 թվին, Գրինվիչում, Լոնդոնի մոտ։ Նրա հայրը, չնայելով իր արիստոկրատական ծագման (Լիլբեռնները ծագել են Նորսեմբեռլենդների հին արիստոկրատա-

կան տոհմից), միջին ջենտրիների տիպիկ ներկայացուցիչ էր, իսկ նրա հորեղբայրն առևտրով էր զբաղվում:

Ջոն Լիլբեռնը լուրջ, սիստեմատիկ կրթություն չստացավ: Տասնվեց տարեկան հասակում նա իբր «աշակերտ» ընդունվեց մահուդ և գաղութային ապրանքներ վաճառող մի հարուստ առևտրականի մոտ: Լիլբեռնն առևտրական ընդունակություններ չուներ: Նրա պրակտիկ դպրոցը բանտն էր, ուր շատ անգամ հաճախում էր նա, կատարելով իր տիրոջ հանձնարարությունները: Յերիտասարդ ժամանակ նա գնաց Հոլանդիա, մի կալվինական քարոզչի, Բաստվիկի գրքերն այնտեղ տպագրելու և Անգլիայում տարածելու համար,— այդ գրքերն ուղղված էին յեպիսկոպոսների իշխանության դեմ: Վերադառնալով հայրենիք, Լիլբեռնը ձերբակալվեց, հանձնվեց «աստղային պալատի» դատին և դատապարտվեց տուգանքի, խարազանման և անարգանքի սյան: Անարգանքի սյան մոտ կանգնած, դիմելով ամբոխին, Լիլբեռնը մատնացույց արավ իր դեմ ընդունված դատական վճռի անարդարացիությունը: Լիլբեռնին բանտարկեցին, կապեցին շղթաներով: Բայց նա բանտից պրոկլամացիաներ է գրում և նրա բարեկամները դրանք տարածում են Լոնդոնի գիլդիական աշակերտների մեջ:

Լիլբեռնը բանտում նստեց մինչև ստյուարտյան ռեժիմի անկումը: Միայն 1641 թվի մայիսին նա ազատվեց, յերբ արդեն այդ մասին խնդրագիր էր տվել Յերկարատև պարլամենտին:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ Լիլբեռնների ընտանիքը, ինչպես և պետք էր սպասել, անցավ պարլամենտի կողմը: Ինքը, Ջոն Լիլբեռնը ստացավ մի հետևակ գունդ, մասնակցեց մի շարք ճակատամարտերի, վորոշ ժամանակ գերի յեղավ ռոյալիստների մոտ: Զարգացնելով բնական իրավունքի գաղափարները, Լիլբեռնն ամեն մի օրինական իշխանության աղբյուրը տեսնում էր ժողովրդական համաձայնության, դաշնագրի մեջ: Ժողովրդական «դաշնագրի» գաղափարն իր դեմոկրատական լայն բովանդակությամբ գրավում էր լևելլերների առաջնորդին: Ինչ վերաբերում է ժողովրդին, Լիլբեռն այդ ասելով ամենից առաջ հասկանում էր միջին կարողություն և դիրք ունեցող մարդկանց— վաճառականներին, արհեստավորներին, զինվորներին, գյուղացի-յոմեններին, նավաստիներին և այլն— միջին և մանր բուրժուազիային և գյուղացիությանը: Հենվելով այդ միջին,

մասամբ և մանր բուրժուազիայի շահերից, Լիլբեռնը պահանջում է առևտրական մոնոպոլիաների վերացում և «ազատ առևտուր»: Պարլամենտը բնականաբար հակամետ էր պաշտպանելու այն վաճառական-ավանտյուրիստների մոնոպոլ իրավունքները, վորոնք նրան ֆինանսավորել եյին Թագավորի դեմ մղված քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում: «Առևտրի ազատություն» այդ սահմանափակումները վրդովում եյին միջին վաճառականությանը: Լիլբեռնն էլ պնդում էր, թե անհրաժեշտ է վերացնել բոլոր— «թագավորության հիմնական ազրանքին առևտրի մոնոպոլ իրավունքները:

Ինչ վերաբերում է Լիլբեռնի կրոնա-քաղաքական ծրագրին, նա պահանջում էր վերացնել կովենանտը, վորպես մի ակտ, վորը դեմ է խղճի ազատությանը, վոչնչացնել անգլիկանական յեկեղեցու հիմքը— յեպիսկոպոսությունը, վորը միաժամանակ թագավորական աբսոլուտիզմի հենարաններից մեկն էր, և ամեն տարի հրավիրել պարլամենտը, նպատակ ունենալով ապահովել ընտրողների ազատ վերահսկողությունը նրա անդամների վրա:

1646 թվին լորդերի պրեսբիտերական պալատը «խռովարար» պամֆլետների համար նրան դատապարտեց Տոուերում յոթը տարվա բանտարկության, 4 հազար ֆունտ ստերլինգ տուգանքի և վորևէ զինվորական կամ քաղաքացիական պաշտոն վարելու իրավունքից զրկման: Բայց այդ բանտարկությունը միայն նպաստեց Լիլբեռնի ժողովրդականության մեծացման և բանակում հեղափոխական տրամադրության աճին: Լիլբեռնի պամֆլետները, վոր նա շարունակում էր գրել նույնիսկ Տոուերում նստած ժամանակ, մեծ հետաքրքրությամբ կարդացվում և քննարկվում եյին զինվորների մեջ, խիստ ուժեղ տպավորություն եյին թողնում բանակում գտնվող նրա համախոհների վրա և մեծ ժողովրդականություն եյին վայելում Լոնդոնի աշակերտների ու յենթավարպետների մեջ: Դեռ 1646 թվի նոյեմբերին, գտնվելով Տոուերում, Լիլբեռնը գրում է «Լորդերի բռնակալության անատոմիա» պամֆլետը, վորտեղ բացատրվում էր, թե լորդերը ծագել են Վիլհելմ Նվաճողի զինակիցներից, վորոնք բռնությամբ գրավել եյին հողերը և իշխանությունը ժողովրդի վրա և սկսել եյին իրենց անվանել հերցոգներ, կոմսեր, բարոններ:

Լիլբեռնի դեմ լորդերի պալատի դատավճիռն ուժեղացնում

և ընդհանուր վրդովմունքը և հարձակումները վերին պալատի վրա։ Լիլբեռնի կողմնակիցները համայնքների պալատին խնդրագրեր են տալիս, պահանջելով անհապաղ վոչնչացնել լորդերի պալատը։ 1647 թվի ամառը Լիլբեռնի ազատման մասին է հոգում բանակը։ Լիլբեռնի կողմնակիցները զինվորների մասսային կազմակերպում են պառլամենտի և բանակի սպայական կազմի, այսպես կոչված գրանդների դեմ պայքարելու համար։

Կոնֆլիկտ բանակի և պառլամենտի միջև

Թագավորական բանակի Անգլիայից հեռանալուց և Կարլոս I-ին պառլամենտին հանձնելուց հետո հարց ծագեց պառլամենտական բանակի հետագա բախտի մասին։ Յենթադրվում էր նրա մի մասն օգտագործել իռլանդական ապստամբների դեմ պայքարելու համար, իսկ մյուս մասը զորացրել, թողնել իրենց տները, հնարավորին չափ կրճատելով վճարման յենթակա ռոճիկի գումարը։ Ազատվելով հեղափոխական զինվորական ուժի առկայությունից, պառլամենտը յենթադրում էր շարունակել բանակցությունները Կարլոս I-ի հետ, նրա վերստին գահ նստելու պայմանների մասին։

Բայց պառլամենտը միանգամից լուրջ դժվարությունների հանդիպեց, յերբ փորձ արավ հիշյալ յեղանակով զորացրել բանակը։ Բոլորովին քիչ եյին այն կամավորները, վորոնք համաձայնվեցին արշավանքի գնալ դեպի Իռլանդիա։ Ամբողջ բանակը կազմակերպված դիմադրություն ցույց տվեց պառլամենտի փորձերին՝ արձակել այն, առանց վճարելու հասանելիք ամբողջ ռոճիկը։ Գեներալ Ֆերֆաքսի բանակի նախ՝ ութ հեծելազորային գնդերում, ապա նաև մյուս գնդերում ընտրվում են զինվորական դեպուտատներ կամ ագիտատորներ, վորոնք սպաների հետ միասին կազմում են բանակի խորհուրդը, վորը հանդես է գալիս նրա անունից։ Բանակի խորհրդում հենց սկզբից, բացի պարտքը մարելու գործի զուտ նյութական կողմից, քննարկվում է սկզբունքային մի հարց այն իրավունքներն ու ազատությունները պահպանելու մասին, վորոնք նվաճվել եյին թագավորի դեմ հաղթանակ տանելու հետևանքով։ 1647 թվի ամռանն ու աշնանը բանակի խորհուրդը դառնում է այն օրգանը, վորը հանդես եր գալիս հեղափոխական բանակի կողմից, փորձելով իր ձեռքը վերցնել առանց պառլամենտի և նրանից անկախ պետությունը նոր, դեմոկրատական սկզբունքներով կառուցելու գործը։

Բանակի խորհրդի նիստերի արձանագրությունները, վոր կազմել էր Կլարկը, նաև ուրիշ նյութեր, վորոնք պարունակվում են այսպես կոչված՝ «Կլարկի թղթերում» (Clarke Papers), թույլ են տալիս բավական մանրամասն ծանոթանալ պառլամենտական բանակի այ՛ն շրջանի կյանքի հետ, վոր սկսվել էր թագավորի և ռոյալիստների դեմ մղված առաջին քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո:

Յերբ զինվորներն իմացան, վոր պառլամենտը մտադիր է արձակել բանակը և միաժամանակ կամավորներ ցուցակագրել դեպի Իռլանդիա արշավելու համար, ուժեղ տրտունջ սկսվեց: Կրոմվելը զինվորների ներկայացուցիչներին յեռանդով համոզում էր յենթարկվել պառլամենտի վորոշմանը, խոստանալով, վոր իռլանդական արշավանքի համար ցուցակագրված զինվորներին առաջին հերթին կվճարվի նաև քաղաքացիական պատերազմի ժամանակ վաստակած ռոճիկը:

Կրոմվելի ճառը զինվորների ներկայացուցիչների մեջ ընդհանուր զայրույթ առաջացրեց: Սպայության մեջ ևս պառակտում է տեղի ունենում: Կրոմվելի կողմնակիցները սպայության շարքերում խիստ արտահայտություններով հարձակվեցին սպաների վրա, վորոնք միացել էին զինվորների հետ և նրանց կոչ էին անում հաստատապես պաշտպանել իրենց իրավունքներն ու ազատությունը, այդ սպաներին մեղադրում էին զինվորներին անբարոյացնելու, բանակը քայքայելու համար: Համայնքների պալատում Կրոմվելը բանակի դրության մասին զեկուցելիս ստիպված էր հայտնել իր այն կարծիքը, թե զինվորները զուցե և յենթարկվեն զորացրման վերաբերյալ հրամանին, բայց յերբեք Իռլանդիա չեն գնա:

Պառլամենտն ի պատասխան վորոշեց արգելել զինվորների միտինգները և բանակի զորացրումը նշանակեց մայիսի 25—28-ին: Սակայն չհաջողվեց կատարել այդ վորոշումը: Պառլամենտը հանդիպեց զինվորական ներկայացուցիչների կազմակերպված դիմադրությանը: Զինվորական ներկայացուցիչները կազմակերպչական մեծ աշխատանք են կատարում առանձին գնդերում, տպագրում են կոչեր և պրոկլամացիաներ, վորոնք ուղղված էին թե՛ զանազան զորամասերին և թե՛ Անգլիայի տարբեր կոմսությունների բնակչությանը:

Համախմբվածության և կազմակերպվածության շնորհիվ

ագիտատորներին հաջողվեց վիժեցնել պարլամենտի կողմից ծրագրված՝ բանակի զորացրումը։

Մինչ այս, մինչ այն, յերկրում կարևոր դեպքեր եյին կատարվում։ Հանդիպելով բանակի կազմակերպված դիմադրությանը, պարլամենտը բանակցություններ է վարում իր թագադիր գերու, Կարլոս I-ի հետ։ Հաջողվում է թագավորին ընդունել տալ առաջարկները՝ կովենանտը ճանաչելու, յեպիսկոպոսարանը վերացնելու և թագավորության բոլոր զինված ուժերը քսան տարվա ժամկետով պարլամենտի վերահսկողությանը հանձնելու մասին։ Թագավորը համաձայնվում եր նաև պրեսբիտերական կարգ հաստատել և ընդունել, վոր պարլամենտը պետք է վերահսկողություն ունենա Լոնդոնի միլիցիական ուժերի վրա։ Պարլամենտական բանակն առանց այն ել արդեն չեր յենթարկվում պարլամենտին։

Այդ ժամանակ Կրոմվելը մի կարևոր վորոշում ընդունեց։ Դեռ վերջին ժամանակներում նա զինվորներին համոզում եր յենթարկվել զորացրման վերաբերյալ հրամանին։ Հիմա Կրոմվելը գժտվում է պարլամենտի հետ, փորձում է ամբողջովին հենվել բանակի վրա և Կոռնետ Ջոյսին հրամայում է հեծելազորային ջոկատով բռնել Կարլոս I-ին և տեղափոխել Նյումարկետ, վորը նշանակված եր ամբողջ բանակի հավաքման վայր։ Հեռանալով մայրաքաղաքից, Կրոմվելը գնում է գեներալ Ֆերֆաքսի բանակը, վորի տնօրինության տակ եր Կարլոս I-ը։ Միևնույն ժամանակ ինդեպենդենտական բանակի շարքերից արտաքսվում են այն բոլոր սպաները, վորոնք պարլամենտի կողմն եյին, տեղի յե ունենում բանակի յուրահատուկ զտում, ժողովրդականություն չվայելող սպաների արտաքսում։ Պարլամենտի և բանակի միջև լիակատար գժտություն է առաջանում։

1647 թվի հունիսի 4—5-ի համաբանակային ժողովում, վորը տեղի ունեցավ Նյումարկետում, ընդունվեց և բանակի խորհրդի անդամների կողմից ստորագրվեց բանակի «Հանդիսավոր պարտավորությունը», վորը ձևակերպեց նրա նպատակներն ու քաղաքական ծրագիրը։ Բանակն ուզում եր բավարարված տեսնել իր «արդարացի և օրինական պահանջները» և բավականաչափ յերաշխիքներ ստանալ այն մասին, վոր «անգլիական ազատածին ժողովուրդը», ինչպես և պարլամենտական բանակի

նախկին գլխավորները, այդ բանակի զորացրումից հետո չեն ճնշվի կամ չեն յենթարկվի վորևէ անարդարացիության կամ վիրավորանքների: Առանց այդ պահանջների բավարարման և համապատասխան յերաշխիքներ ստանալու բանակը չէր ուզում ցրվել կամ մասերի բաժանվել: Միևնույն ժամանակ բանակի խորհուրդը հայտարարում էր, թե բանակը բնավ չի ձգտում գոյության ունեցող կարգի տապալմանը, թե ինդեպենդենտական կառավարություն ստեղծելը և պրեսբիտերականության տապալումը չի մտնում նրա պլանների մեջ:

Դրանից հետո շուտով բանակի գլխավոր զորակայանը Նյումարկետից տեղափոխվեց Սանտ-Ալբանս, վոր ավելի մոտ էր Լոնդոնին: Բանակի խորհուրդը հունիսի 14-ին հրատարակում է մի նոր դեկլարացիա, վորը նպատակ ուներ արդարացնել բանակը Լոնդոնին մոտենալը, վոր մեծ յերկյուղ էր առաջացրել մայրաքաղաքում: Ընդգծելով իր պատրաստակամությունը՝ պայքարելու հանուն ժողովրդի արդարացի իրավունքների և ընդդեմ ամեն մի կամայականության և բռնության, հունիսի 14-ի դեկլարացիան պահանջում էր կատարել պարլամենտի ազատ ու հավասար ընտրություններ, սահմանել նրա նստաշրջանների ժամկետները, ներկա պարլամենտը «զտել» բանակի համար ամենաատելի նրա տասնմեկ անդամներից և ամնիստիա հայտարարել:

Ֆերֆաքսի բանակում Լոնդոնը ռազմական ոկուպացիայի յենթարկելու միտքը հետզհետե ավելի շատ թվով կողմնակիցներ է գտնում: Դեռ հուլիսի կեսերին ագիտատորները պահանջում էին անհապաղ մտնել մայրաքաղաք, զտել պարլամենտը, միլիցիան հանձնել ինդեպենդենտներին, պարլամենտն էլ հայտարարի, վոր վոչ մի պատրվակով ոտարերկրյա զորքեր չեն բերվի Անգլիա: Ագիտատորները յենթադրում էին, վոր բանակը Լոնդոն մտցնելը վճռականապես վերջ կտա նրա այն թշնամիների մեքենայություններին, վորոնք նոր քաղաքացիական պատերազմ էին ծրագրում, բանակի դեմ գրգռում մայրաքաղաքի բնակչությանը, մի շարք «գրպարտիչ պամֆլետներ» էին հրատարակել:

Ընդհակառակը, Կրոմվելը և Այրտոնը համոզում էին, վոր չպետք է անհապաղ մտնել Լոնդոն, ապացուցում էին, վոր չըպետք է ուշադրություն դարձնել մայրաքաղաքում հրատարակ-

վող պամֆլետների վրա, վորոնք ուղղված են բանակի դեմ,— «Արժե՞ արդյոք վիճել ամեն մի շան հետ, վորը հաչում է փողոցում»: Բարձրագույն սպայությանն իրոք հաջողվեց առժամանակ հետաձգել բանակի մուտքը Լոնդոն: Կրոմվելի և Այրտոնի առաջարկով սահդվում է 12 սպայից և 12 ագիտատորից բաղկացած մի հանձնաժողով, կազմելու բանակի հիմնական պահանջների ցանկը վորպես հիմք՝ թագավորի ու պարլամենտի հետ հետագա բանակցությունների համար:

Այդ հանձնաժողովը մշակեց այսպես կոչված «առաջարկների գլուխները» (Heads of Proposals), վորոնց համաձայն պարլամենտն այնուհետև պետք է ընտրվեր միայն յերկու տարվա ժամկետով: Այդ նորընտիր յերկամյա պարլամենտին պետք է անցներ բանակի ու նավատորմի վերահսկողությունը տասը տարվա ժամկետով: Արտաքին քաղաքականությունը ղեկավարելու համար յենթադրվում եր ստեղծել մի հատուկ որգան,— պետական խորհուրդ, վորը պարլամենտի համաձայնությամբ պատերազմ է հայտարարում և հաշտություն կնքում և նշանակում պետության բարձրագույն պաշտոնատար անձանց: Այնուհետև, այդ նախագծի համաձայն, պետք է վերացվեյին այն բոլոր ակտերը, վորոնցով պարտադիր եր համարվում անգլիկան պատարագի սահմանված տեքստի ոգտագործումը: Մյուս կողմից չեր կարելի վոչ վոքից պահանջել, վոր ընդունվի կովենանտը: Ռոյալիստները հինդ տարվա ընթացքում չպետք է նշանակվեյին պետական պաշտոնների և ընտրվեյին պարլամենտի անդամներ: Սակայն նրանց հնարավորություն տրվեց տուգանքներ մուծելու միջոցով փրկագնվել և այդ կերպ իրենց վրայից վերցնել դելինկվենտության բիծը:

Կարլոս I-ը հրաժարվեց բանակի այդ առաջարկներն ընդունելուց և սկսեց յերկակի խաղ խաղալ: Դրա փոխարեն պարլամենտը ժամանակավորապես զիջումներ է անում: Ֆերֆակսը նշանակվում է Անգլիայի բոլոր ռազմական ուժերի գլխավոր հրամանատար,— նրանց թվում նաև հյուսիսում դանվող զորքերի, վորոնց հրամանատարն առաջ, մինչև իր ձերբակալվելը, պարլամենտական գեներալ Պոյնցն եր: Վորոշվեց Լոնդոնի միլիցիայի հրամանատարությունը հանձնել ինդեպենդենտներին: Քաղաքական այդ սիտուացիայում պարլամենտական «տասնմեկի» խմբի անդամներին ուրիշ բան չեր մնում անել, բայց յեթե

Լոնդոնից հեռանալու և կոնտինենտ մեկնելու թույլտվություն խնդրել:

Բայց այնուհետև Լոնդոնում պրեսբիտերական հեղաշրջման փորձի նմանվող ինչ-որ բան է տեղի ունենում: Պարլամենտ է ներխուժում ամբոխը, որին ղեկավարում են ինդեպենդենտական բանակի թշնամիները: Ինդեպենդենտ դեպուտատները ստիպված են լինում փախչել մայրաքաղաքից: Նրանք փախչում են գեներալ Ֆերֆաքսի բանակը, որից աջակցություն են խնդրում: Լայն ֆրոնտով շարք կանգնած զինվորները ողջունում են ինդեպենդենտական դեպուտատներին ու յերդվում են զոհել իրենց կյանքը, միայն թե ապահովվի ազատությունը և պարլամենտի նիստերի անձեռնմխելիությունը:

Լոնդոնի օկուպացիան

Մինչ այս, մինչ այն, մայրաքաղաքում միլիցիայի հրամանատարությունը նորից անցնում է պրեսբիտերականների ձեռքը: Կազմակերպվում են զինված ուժեր՝ Լոնդոնը պաշտպանելու համար: Այդ իրադարձությունների ժամանակ Ֆերֆաքսի բանակը շարժվեց դեպի Լոնդոն և օգոստոսի 6-ին մտավ մայրաքաղաք:

Գեներալ Ֆերֆաքսի բանակի կողմից մայրաքաղաքի օկուպացիան անցավ գրեթե առանց դժվարությունների, չնայելով որ պարլամենտը և Սիտին փորձեցին դիմադրություն կազմակերպել:

Բանակը, որ մտավ Լոնդոն յերկու պալատների սպիկերներին պահպանելու և պարլամենտի նիստերի ազատությունն ապահովելու համար, տոգորված է ըստ էության առանց կռվի ձեռք բերած հաղթանակի ոգևորությամբ: Բանակը պահանջեց ձերբակալել «տասնմեկի» խումբը և այլ դավադիրներին, որոնք փախել էյին Լոնդոնից: Քենտի և Եսսեքսի բոլոր նավահանգիստները գործակալներ ուղարկվեցին, որոնք պետք է ձերբակալեյին փախստականներին, յերբ վերջիններս փորձ անեյին մեկնել կոնտինենտ:

«Առաջարկների գլուխներ» յեվ «Ժողովրդական դաշնագիր»

Դեռ մինչև բանակը մայրաքաղաք մտնելը, նրա անունից հրապարակվեցին «Առաջարկների գլուխները»— յերկրի քաղաքական վերակառուցման նախագիծը, որ կազմվել եր Այրտոնի ամենամոտ մասնակցությամբ և 1647 թվի հունիսի կեսին քննարկվել բանակի խորհրդում: Սակայն պար-

լամենտը չէր համաձայնվում բանակի այդ ծրագիրն ընդունել իբրև պետության քաղաքական կառուցվածքի հիմք: Նույնիսկ ինդեպենդենտական բանակի ներկայությունը մայրաքաղաքում բավականաչափ արգումենտ չէր պարլամենտի պրեսբիտերական մեծամասնության համար: Այդ ժամանակ ագիտատորները բանակի խորհրդին առաջարկեցին ռադիկալ զտում կատարել պարլամենտում, այնտեղ ինդեպենդենտական մեծամասնություն ստեղծելու համար: Այդ առաջարկն ընդունվեց: Ինքը Կրոմվելն էր վրա վերցրեց դրա կատարումը: Պարլամենտի մոտ տեղավորելով հեծելազորային մի գունդ և գրավելով շենքի մուտքը, Կրոմվելը կարողացավ պարլամենտի միջոցով վերացնել տալ նրա այն որոշումները, որոնք ընդունվել էին հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 6-ը, դրսից յեղած ճնշման տակ: Շատ պրեսբիտերականներ հիմա առհասարակ թողնում են պարլամենտը, այլևս չեն հաճախում նրա նիստերին: Մյուս պրեսբիտերականները հարում են ինդեպենդենտներին: Համայնքների պալատում, նրա «զտման» ձեռնարկումների հետևանքով, այդ ժամանակ ինդեպենդենտական մեծամասնություն առաջացավ:

Սակայն այդ հաղթանակը, որ բանակի առաջնորդները և նրա խորհուրդը տարան ընդդեմ Յերկարատև պարլամենտի, միայն արտացոլեց այն յերկպառակությունը, որ վաղուց նըկատվում էր բանակի խորհրդի սպայական և զինվորական մասերի միջև— ինդեպենդենտորեն տրամադրված գրանդների ու գեներալ Ֆերֆաքսի բանակի հիմնական մասսայի միջև, որի միջավայրում հետզհետե ավելի մեծ համակրանք էր գտնում հեղափոխության խորացման լեվելլերական ծրագիրը, որ զարգացրել էին Լիլբեռնը և միջին ու մանր բուրժուազիայի մյուս ռադիկալ առաջնորդները: Բանակում հենց նրանց գործունեության արդյունքը յեղավ լեվելլերական ծրագիրը, որը հիմնավորվեց ու զարգացվեց բանակի խորհրդում քննարկված փաստաթղթերում— «Բանակի գործը» և «Ժողովրդական դաշնագիր» կամ «Ժողովրդական համաձայնություն» (Agreement of the People):

«Բանակի գործը» և «Ժողովրդական դաշնագիրը», որոնք առաջարկվել էին որպես հիմք պետության արմատական վերակառուցման համար, առաջնակարգ տեղ էին տալիս ընտրական իրավունքի ռեֆորմի հարցին: Այն ժամանակ, երբ «Սա-

ջարկների գլուխները», որ հրապարակվել էին բանակի անունից 1647 թվի օգոստոսի 1-ին, պարունակում էին միայն խիստ անորոշ մի պահանջ— ավելի արդարացիորեն և համաչափ դասավորել ընտրական օկրուգները,— «Ժողովրդական դաշնագիրը» յենթադրում էր անհապաղ իրականացնել ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքները, կատարել «ընդհանուր քվեարկություն» (manhood suffrage), վորին մասնակցում են բոլոր չափահաս քաղաքացիները:

Կոնֆերանս Պյուտնիում Հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին Պյուտնիում տեղի յեր ունենում բանակային կոնֆերանս, վորտեղ յերկու կուսակցությունները— ինդեպենդենտները և լևելլերները տաք վեճի բռնվեցին այն սկզբունքների առթիվ, վորոնք կազմում էին «ժողովրդական համաձայնության» հիմքը: Ինդեպենդենտների ներկայացուցիչները գլխավորապես բանակի գեներալներն ու բարձրաստիճան սպաներն էին, լևելլերների կողմից հանդես յեկան վոչ միայն ագիտատորները և կրտսեր սպաները, այլև վոչ-զինվորական լևելլերները, վորոնք կոնֆերանս էին յեկել Լոնդոնից: Ամենից շատ վիճաբանություններ առաջ բերեց ընտրական իրավունքի հարցը: Ուայլդմանը, Սեկսբին և մյուս լևելլերները պնդում էին, վոր յուրաքանչյուր անգլիացի, շնորհիվ իր «բնածին իրավունքի» (birth right), պետք է լինի օրենքներ կազմող ժողովրդական ներկայացուցիչներ ընտրող. բոլոր անգլիացիները յենթակա յեն օրենքների ուժին, հետևաբար— դատում էին լևելլերական առակերի պաշտպանները— բոլորը պետք է մասնակից լինեն օրենքներ կազմելուն:

«Պատերազմի ժամանակ մենք նրա համար չէինք կռվում և մեր կյանքը վտանգի յենթարկում, վոր իրավազուրկ մնանք»,— ասաց Սեկսբին: Զինվորները, վորոնք իրենց արյունով են նվաճել ազատությունը, պետք է նույնպիսի իրավունքներ ունենան, ինչ վոր գրանդները: Մի՞թե միայն հողատերերը պետք է մասնակցեն պարլամենտի ընտրություններին: Սեկսբիի կարծիքով այդ կնշանակեր, վոր թագավորի դեմ հաղթություն տարած բանակն իզուր է կռվել: Այն մարդկանցից շատերը, վորոնք սեփական հող չունեն, ըստ Սեկսբիի վոչ պակաս իրավունք ունեն իրենց ներկայացուցիչներին պարլամենտ ուղարկելու, քան խոշոր հողատերերը:

Սկզբունքորեն համաձայնվելով, որ անհրաժեշտ է որոշ չափով վերաբաժանել ընտրական օկրուգները և մասնակի ուղղումներ մտցնել հնացած ընտրական սիստեմում, գրանդները վճռականապես առարկում էին ընդհանուր քվեարկության լեվելլերական նախագծի դեմ, այդ սկզբունքը վտանգավոր համարելով մասնավոր սեփականության համար: Ընդհանուր ընտրական իրավունքի դեպքում,— կարծում էին խոշոր հողատիրության շահերի պաշտպանները,— կարող է ընդունվել այնպիսի մի օրենք, որը կխախտի սեփականության այդ իրավունքը: Թերևս մտցվի գույքերի և կալվածքների հավասարություն, որը վախեցնում էր նրանց:

Զինվորների ներկայացուցիչները լեվելլերական ծրագրի առաջին կետի քննարկման ժամանակ— իսկ այդ կետը նախատեսում էր ընդհանուր քվեարկություն մտցնել— մատնանշում էին Անգլիայում գործող ընտրական սիստեմի վոչ միայն անարդարացիությունը, այլև անհետևողականությունը. այդ սիստեմի համաձայն, ընտրական իրավունքներով կարող էին օգտվել միայն այն ֆրիհոլդերները, որոնք տարեկան 40 շիլլինգից վոչ պակաս յեկամուտ տվող հող ունեին: Զինվորների ներկայացուցիչները գտնում էին, որ թագավորի դեմ տարած հաղթանակների հիմնական արդյունքը և այդ հաղթանակները տարած բանակի ստանձնած «պարտավորությունների» իմաստն այն է, որպեսզի ապահովվի ամբողջ ժողովրդի ազատությունը, որ նվաճված է «աստծո ժողովրդին» ճնշող բռնակալի դեմ մղված պայքարում: Յեվ հենց այս պատճառով «ագիտատորները» պահանջում էին ամբողջովին վերացնել «40 շիլլինգի սահմանադրությունը», որը հակասում էր ժողովրդական ազատությանը:

Սակայն լեվելլերները, պահանջելով վերացնել այդ «40 շիլլինգի սահմանադրությունը», ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքները պաշտպանելիս մինչև վերջ հետևողական չեղան. լեվելլերները հնարավոր էին համարում ընտրական իրավունքներից զրկել յենթավարպետներին, ծառաներին և մուրացիկներին, որպես տնտեսական ինքնուրույնությունից զուրկ մարդկանց: Լեվելլերների քաղաքական ռադիկալիզմն արտացոլում էր միջին և մանր բուրժուազիայի, ունևոր գյուղացիության և ինքնուրույն արհեստավորների տնտեսական և քաղաքական աշխարհայացքը, բայց վո՛չ «յենթավարպետների, ծառաների և մուրա-

ցիկների», այսինքն վո՛չ «նախապրոլետարիատի» կամ անմիջական մանր արտադրողների արդեն ամբողջովին պրոլետարացված մասի աշխարհայացքը:

Բավականաչափ ռադիկալ էր «Ժողովրդական դաշնագրի» չորրորդ հոդվածը, վորը հռչակում էր համայնքների պալատի առաջնության սկզբունքը: Իրենց ծրագրում կանխելով այն մի շարք մոմենտներն ու պրոբլեմները, վորոնց շուրջը սահմանադրական լարված պայքար էր տեղի ունենում հետագա հարյուրամյակներում, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, լեվելլերները պահանջում էին, վորպեսզի ստորին պալատի ընդունած ակտերը լորդերի պալատի և թագավորի կողմից հաստատվելուց անկախ՝ որենքի ուժ ստանան: «Ժողովրդական դաշնագրի» հեղինակները լորդերի պալատը և թագը համարում էին միևնույն բռնության յերկու ճյուղեր, վորոնք պետք էր ջարդել և վոչնչացնել: Ընդհանրապես «Ժողովրդական դաշնագիրն» առաջարկում էր որենսդրական իրավունքները խլել թագավորից և լորդերից, վորպես «թագավորի չար կամքի» իսկական «ծնունդից»:

Ընդհակառակը, Կրոմվելը, Այրտոնը և մյուս գրանդները ամենից առաջ ուզում էին «հանգստություն և խաղաղություն» հաստատել թագավորության մեջ: Դրա համար նրանց հարկավոր էր «թագավորի ոգնությունը»: Իզուր չէ, վոր պրեսբիտերական պարլամենտը, վորն ինքը բազմիցս փորձել էր բանակցություններ վարել թագավորի հետ, ինդեպենդենտական բանակի հրամանատարներին մեղադրում էր թագավորի հետ համաձայնության գալու մեջ: Բանակի հրամանատարներին հաջողվեց իրենց հետևից տանել այն ագիտատորների մի մասին ևս, վորոնք սպայության հետ հավասար հիմունքներով մասնակցել էին ոգոստոսյան «Առաջարկների գլուխները» կազմելուն (համաբանակային ծրագիրը կազմելուն և խմբագրելուն մասնակցել էին 12 սպա և 12 ագիտատոր):

Բանակի խորհրդի նիստում լեվելլերական ծրագրի աղմկալից քննարկումից հետո 1647 թ. հոկտեմբերի 29-ին կազմվեց մի հատուկ հանձնաժողով, վորը նպատակ ուներ բանակի նախկին պահանջները և դեկլարացիաները «համաձայնեցնել» լեվելլերների առաջադրած «Ժողովրդական դաշնագրի» հետ: Այդ հանձնաժողովի մեջ, վորի առաջ դրված էր ըստ էության անլուծելի մի խնդիր, մտան 12 սպա և ընդամենը 6 ագիտատոր: Դա գր-

քանդների ակնբախ հաղթանակն էր։ Զինվորների ներկայացուցիչները Հանձնաժողովին մասնակցողների ընդհանուր թվի միայն մի չորրորդ մասն էին կազմում։ Զարմանալի չէ, վոր այն «կոմպրոմիսային» նախագիծը ևս, վորն այդ «համաձայնեցուցիչ» Հանձնաժողովի աշխատանքի արդյունքն էր, ըստ էության նշանակում էր օգոստոսյան «Առաջարկների գլուխների» ռեստավրացիա և լևելլերական կուսակցության այն հիմնական, ռադիկալ պահանջների վերացում, վորոնք ձևակերպված էին «Ժողովրդական դաշնագրում»։ Վորոշվեց առհասարակ չշոշափել ընդհանուր ընտրական իրավունքը. յենթադրվում էր լևելլերների այդ հիմնական պահանջը քննարկման համար փոխադրել Յերկարատև պարլամենտ, վորը 1648 թվի սեպտեմբերի 1-ից վոչ ուշ պետք է գրաղվեր քվեներն ավելի հավասարաչափ բաշխելու հարցով։ Հանձնաժողովի կարծիքով ընտրական իրավունքները պետք էր տարածել բոլոր նրանց վրա, ովքեր պարլամենտի կողմից կռվել էին քաղաքացիական պատերազմի ժամանակ կամ թագավորի դեմ մղված պատերազմում պարլամենտին օգնել էին դրամով, արծաթե ամանեղենով, ձիերով կամ զենքով։ Այսպիսով արդեն վաղորոք խեղաթյուրվում էր ընդհանուր քվեարկության լևելլերական նախագծի բուն էությունը։

Փոխանակ անհապաղ հռչակելու և իրականացնելու յուրաքանչյուր անգլիացու «բնածին իրավունքը»— պետության օրենքները կազմելուն մասնակցել ընդհանուր քվեարկության միջոցով, վոր պահանջում էին լևելլերները— բավական անորոշ «ցանկություն» էր հայտնվում. ընտրական ռեֆորմի հարցը հետաձգվում էր և թողնվում պարլամենտի հայեցողության։

Նկատի ունենալով գործերի այդպիսի դրությունը և սպայության ակնբախ ձգտումը— խոչընդոտ հարուցել լևելլերական ծրագրի հիմնական կետի իրականացման դեմ,— բանակի խորհրդում գործող լևելլերները վորոշում են գործադրել ծայրահեղ մի միջոց. անմիջականորեն դիմել հենց ընտրողներին— առանձին գնդերի զինվորներին— և աշխատել, վոր «Ժողովրդական դաշնագիրն» ընդունվի համարանակային ժողովում, վոր յենթադրվում էր հրավիրել լևելլերների պահանջով։

1647 թվի նոյեմբերի սկզբին բանակում տեղի յեն ունենում վճռական դեպքեր, վորոնք, սակայն հանգում են վոչ թե լևելլերների հաղթանակին, այլ բանակի խորհրդի նախկին կազմի

ցման, նրանից զինվորական ներկայացուցիչների հեռացման, բանակի խորհուրդը սպայական խորհրդի վերածելուն, վորը հնազանդությամբ կատարում է բարձր հրամանատարության դիրեկտիվները:

Դժբախտաբար Կլարկի գրառումներում բավական թերի ու կցկտուր կերպով են արտացոլված այն վիճաբանությունները, վորոնք տեղի յեն ունեցել բանակի խորհրդում, նոյեմբերի 1-ից մինչև 8-ը: Շարունակվում եր Թագավորի իշխանությանը և լորդերի պալատի իրավունքներին վերաբերող հարցի հետագա քննարկումը, ընդ վորում լեվելլերների կողմից արվեցին խիստ վճռական հայտարարություններ այն մասին, վոր անհրաժեշտ է Անգլիայում վոչնչացնել թագավորական իշխանությունը: «Աստված ուզում է վոչնչացնել թագավորի իշխանությունը, իսկ մենք խոսում ենք նրա վերականգնման մասին»,— վրդովվում եր լեվելլեր Սեկսբին: Լեվելլերների մի ուրիշ ներկայացուցիչ, Վայլդմանը հարց դրեց թագավորին մահապատժի յենթարկելու մասին. արդյոք արդարացի՞ յե մահով պատժել նրանց, ովքեր, հետևելով հրամանին, գնացել եյին պատերազմ, և գթությանը ճանապարհ տալ պատերազմի գլխավոր հանցագործի նկատմամբ:

Բանակի խորհրդի նիստն առանձնապես աղմկալից բնույթ եր կրում նոյեմբերի 5-ին, յերբ հաղթանակը տարան թագավորի հետ հետագայում ամեն տեսակ բանակցությունների հակառակորդները: Լեվելլերներին հաջողվում է այդ նիստում հասնել մի ուրիշ կարևոր հետևանքի— բանակի խորհուրդը համաձայնվում է հրավիրել բանակի ընդհանուր ժողով, ուր նրանք յենթադրում եյին հարց դնել «ժողովրդական դաշնագիրն» ամբողջ բանակի կողմից ընդունվելու մասին:

Գրանդները չափազանց վախեցան զինվորների մասսայի սկսվող շարժումից: Այն առաջարկը, թե նախագծի քննարկումը պետք է փոխադրել համաբանակային միտինգ, մի կողմ թողնելով բանակի խորհուրդը, վորի մեջ սպաներն ավելի լրիվ չափով եյին ներկայացված, նրանց համար նշանակում եր տանուլ տալ գործը, կորցնել իրենց հեղինակությունը և «անարխիա» թույլ տալ: Կրոմվելը և Ֆերֆաքսը վորոշեցին ինչ կերպ ել լինի թույլ չտալ համաբանակային միտինգ:

Թագավորի իշխանությունը պահելու կողմնակիցները վճռա-

կան հարձակման անցան, ձգտելով ի չիք դարձնել այն հաղթանակի նշանակությունը, վոր լեվելլերները ձեռք եյին բերել նոյեմբերի 5-ի գիշերային նիստում:

Նոյեմբերի 8-ի նիստում լեվելլերների և ագենտների դեմ խիստ վճռական կերպով հանդես ե գալիս ինքը Կրոմվելը, վորը նախատում ե լեվելլերական առաջնորդներին, նրանց մեղադրում բանակը քայքայելու մեջ և այլն: Կրոմվելը խիստ քննադատության յենթարկեց «Ժողովրդական դաշնագրի» այն հոդվածը, վորն ընդհանուր ընտրական իրավունք եր պահանջում: Կրոմվելի ասելով՝ այդ հոդվածն ընդունելը լիակատար անարխիայի կհանգեր: Կրոմվելը դեմ եր ընտրական իրավունքները գյուղացի-կոպիհոլդերների, այսինքն գյուղական բնակչության հիմնական մասսայի վրա տարածելուն: Կրոմվելը պաշտպանում եր հին ընտրական ցենզը, այսինքն 40 շիլլինգի տրադիցիոն սահմանափակությունը, վորի վրա այնքան հարձակվում եյին լեվելլերները: Նոյեմբերի 8-ի նույն նիստում վորոշում ընդունվեց բանակի խորհրդի նիստերը յերկու շաբաթով ընդհատելու մասին:

Ամբողջ բանակի ընդհանուր ժողովի փոխարեն, ուր լեվելլերները յենթադրում եյին ընդունել տալ «Ժողովրդական դաշնագիրը», հրամանատարները վորոշեցին կատարել բանակի առանձին մասերի ստուգատես՝ յերեք ժամկետում, յերեք տարբեր վայրերում:

Լեվելլերական ապստամբության փորձը

Լեվելլերների փորձը՝ օգտագործել Ուերում յեղած հինգ գնդերի ստուգատեսը, վոր նշանակված եր նոյեմբերի 15-ին, և այն վերածել ամբողջ բանակի ընդհանուր ժողովի— բոլորովին ձախողվեց: Հակառակ Ֆերֆաքսի հրամանին, լեվելլերներին հաջողվեց Ուեր բերել ևս յերկու գունդ, վորպեսզի զինված ցույց կատարել ի պաշտպանություն «Ժողովրդական դաշնագրի»: Բայց այդ գնդերն արագությամբ հնազանդվեցին հրամանատարությանը: Ֆերֆաքսը զինվորներին հրամայեց գլխարկներից պոկել դրանց ամրացրած «Ժողովրդական դաշնագրի» տեքստը, «ազատություն ժողովրդին, իրավունքնե՛ր զինվորներին» մակագրությամբ, վոր և կատարվեց վորոշ տատանումներից հետո: Անհապաղ գումարվեց զինվորական դատարանը, վորը յերեք զինվորներին— «դրդիչներին» գնդակահարման դատապարտեց: Նրանցից մեկի դեմ

ընդունված դատավճիռը գնդի առաջ տեղն ու տեղն ի կատար ածվեց։

Բանակի մյուս զորամասերի ստորադասները հրամանատարական կազմի համար բարեհաջող անցան։ Բանակի առանձին մասերում «անկարգ յելույթները» դադարեցին։ Ֆերֆաքսը նոյեմբերի 25-ին հրավիրեց «բանակի խորհուրդը», որտեղ ընդհանրապես բացակայում էին զինվորների ներկայացուցիչները։

Բացի այդ «խորհրդից», որը մաքրված էր լեվելլերներից, ագիտատորներից և ագենտներից, Վինձորում գործում էր մի այլ օրգան ևս, զինվորական խորհուրդը, որը դատում ու պատժում էր «խառնակության» մասնակից, լեվելլերականորեն տրամադրված զինվորներին և սպաներին։ Դատում էն «խռովության» գրգիչներին և «զինվորական կարգապահությունը խախտողներին»։ Գնդակահարման դատապարտեցին նաև մի կապրալի։ Վեց կամ յոթը զինվորների զորաշարքի միջով անցկացնելով ծեծի յենթարկեցին։ Բայց դրանից հեռու չգնացին։ Ընդհակառակը, դեկտեմբերին հաշտություն կայացավ գրանդների ու լեվելլերների միջև։ Լեվելլերականորեն տրամադրված բոլոր սպաները և յելույթի մյուս մասնակիցները վերադարձան իրենց առաջվա պարտականությունների կատարմանը։ Այդ անհրաժեշտ էր անել, որովհետև յերկրում ռոյալիստները գլուխ էին բարձրացնում և զգացվում էր, որ մոտ է նոր փոթորիկը։

Երկրորդ քաղաքացիական պատերազմը

Թագավորը, որ բանակից փախել էր Ուայթ կղզին, դեկտեմբերի վերջին գաղտնի պայմանագիր կնքեց խոշոր ֆեոդալների աջ-պրեսբիտերական կուսակցության հետ, որը հաղթանակել էր Շոտլանդիայում, և այդ պայմանագրի համաձայն շոտլանդացիները, Թագավորից համաձայնություն ստանալով պրեսբիտերական կարգ հաստատելու և ինդեպենդենտությունը ճնշելու մասին, պետք է զենքի ուժով վերականգնեյին Թագավորական իշխանությունը, ցրեյին բանակն ու պարլամենտը։ Թագավորի օգտին յելույթ էր պատրաստվում նաև Անգլիայում։ Հաշվի առնելով այդ բոլորը, Կարլոսն ընդհատեց պարլամենտի հետ ունեցած հարաբերությունները։ 1648 թվի մարտից սկսվեցին ռոյալիստական ապստամբությունները. Ուելսում, Քենտում և ուրիշ մի քանի կոմսություններում ազնվական-ռոյալիստները փորձում էին հօգուտ Թագավորի ոտքի հանել գյուղացիներին,

բայց հաջողություն չունեցան։ Լոնդոնում ապրիլին ընդհարումներ տեղի ունեցան բանակի զինվորների և ռոյալիստների միջև։ Մի քանի ռազմանավեր ապստամբեցին ու մեկնեցին Հոլանդիա, ուր նրանց հետ հարաբերությունների մեջ մտավ Ուելսի պրինցը, Կարլոսի որդին։ Հյուսիսից Անգլիայի վրա յեր գալիս շոտլանդացիների քսան հազարանոց բանակը։ Ռոյալիստները նույնպես բանակ եյին պատրաստում Իռլանդիայում։ Բայց հեղափոխական բանակը արթուն եր։ 1648 թվի ապրիլի 9-ին բանակի ժողովում ինդեպենդենտները և լևելլերները յերդվեցին՝ «Պատասխանատվության յենթարկել Կարլոս Ստյուարտին, այդ արյունոտ մարդուն, նրա թափած ամբողջ արյան և այն վնասի համար, վոր նա իր ուժերի ներածին չափ պատճառեց աստծո գործին և այս խեղճ ազգին»։ Մի քանի ամսից հետո բանակը տանում եր ամբողջ գծում տարած հաղթանակը։ Անգլիայում ռոյալիստական շարժումն արագությամբ ճնշվեց։ Ուելսի պրինցի նավատորմը փախուստի դիմեց։ Պրեստոնի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1648 թ. օգոստոս) Կրոմվելը գլխովին ջարդեց շոտլանդացիներին։ Անգլիական զորքերը սեպտեմբերին գրավեցին Շոտլանդիայի մայրաքաղաք Եդինբուրգը։ Շոտլանդիայում իշխանությունն անցավ ձախ պրեսբիտերականների, անգլիական պարլամենտի դաշնակիցների ձեռքը։

Սակայն այդ ժամանակ վտանգն ուրիշ կողմից ծագեց։ Քանի դեռ բանակը Լոնդոնից դուրս եր, պրեսբիտերականները նորից տիրացել եյին պարլամենտին։ Ազդարարելով, վոր անգլիական սահմանադրությունը հավերժարար պետք ե պահպանի թագավորին, լորդերին և համայնքները, պարլամենտը նորից թագավորի հետ բանակցություններ ե վարում նրա վերահաստատման պայմանների մասին։

Նոյեմբերին պարլամենտի և թագավորի բանակցությունները արդեն նպատակավոր վախճանի եյին մոտենում։

«Պրայդյան զտումը» Այդ ժամանակ հաղթական բանակը վերադառնում եր դեպի Լոնդոն։ Մայրաքաղաքից մի օրվա ճանապարհի վրա, Սենտ-Ալբանսում նա բողոքի դեկլարացիա ընդունեց թագավորի հետ պարլամենտի վարած բանակցությունների դեմ և պահանջում եր դատել նրան և արձակել պարլամենտը։ Յերբ պարլամենտը բողոքեց, բանակը նրան զտման յենթարկեց։ 1648 թվի դեկտեմբերի 5-ին գնդապետ Պրայդը մի

ջոկատով գրավեց այն շենքի բոլոր սանդուղքներն ու յելքերը, ուր նիստ ուներ պարլամենտը: Գրայդը ցուցակը ձեռքին պարլամենտը «զտեց» բանակին անհաճելի պրեսբիտերականներից—մոտ 140 հոգուց: Ուղիղ մի ամսից հետո, հունվարի 4-ին Անգլիայում հանրապետություն հռչակվեց (commonwealth): Այնուհետև կազմվեց հատուկ գերագույն տրիբունալ, բաղկացած 135 հոգուց, թագավորին դատելու համար: Այդ տրիբունալի կազմի մեջ մտան յերկու պալատների անդամներ,— ականավոր իրավաբաններ, բանակի բարձրաստիճան սպաներ, Լոնդոնի խորհրդի անդամներ և այլն: Հունվարի 27-ին գերագույն դատարանը թագավորի դեմ մահվան դատավճիռ ընդունեց. Կարլոս Ստյուարտը վորպես բռնակալ, դավաճան, մարդասպան, պետության թշնամի, յենթարկվում է մահապատժի— գլխատման: 1649 թվի հունվարի 30-ին Կարլոսը գլխատվեց: Մի շաբաթից հետո համայնքների պալատ մտցվեց յերկու բիլլ, վորոնցից մեկը վերացնում եր լորդերի պալատը, մյուսը— թագավորական իշխանությունը վորպես «ավելորդ, ծանրաբեռնիչ և անգլիական ժողովրդի ազատության, անվտանգության ու շահերի համար վնասակար»: Այս ակտերը վերջնականապես ընդունվեցին 1649 թվի մարտի 17-ին և 19-ին, բայց հանրապետությունը փաստորեն հռչակվել եր 1649 թ. հունվարի 4-ին, յերբ ժողովուրդը և նրա ընտրած համայնքների պալատը հայտարարվեցին անգլիական ազգի գերագույն իշխանություն:

ԳԼՈՒԽ XIV

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ

(1649—1659 թ. թ.)

Դրությունն Անգլիայում, թագավորին մահապատժի ենթարկելուց հետո

Թագավորին մահապատժի ենթարկելը և հանրապետություն հռչակելը վերջինիս նկատմամբ բուռն ատելություն առաջցրին ռոյալիստների մեջ: Այդ ժամանակ ռոյալիստների մեջ էին ոչ միայն առաջվա կավալերները, այլև Սիտիի պրեսբիտերականները և ազնվականներից շատերը, որոնք առաջ տատանվում էին և հիմա իրենց բացահայտ կերպով հայտարարել էին «արքայասպանների» հակառակորդներ: Իռլանդիայում և Շոտլանդիայում շարունակվում էին ապստամբությունները: Միապետականները Շոտլանդիայի թագավոր հռչակեցին Կարլոս II-ին, գլխատված թագավորի որդուն, հույս ունենալով այդ անունը դարձնել ամբողջ հակահեղափոխական շարժման լոզունգ: Արիստոկրատ էմիգրանտները բոլոր ուժերով աշխատում էին Յեվրոպայի միապետությունները ոտքի հանել հանրապետության դեմ և նրանց համոզել, որ ինտերվենցիա ձեռնարկեն: Վերջապես, հանրապետության առաջ դրված էր թերևս ամենադժվար խնդիրը, այն ներքին հակասությունները լուծելու խնդիրը, որոնք գոյություն ունեին հաղթանակ տարած ունևոր դասակարգերի և մանր բուրժուական ու աշխատավորական լայն մասսաների պահանջների միջև: Այդ հակասություններն այնքան էին սրվել, որ 1649 թվին մի նոր քաղաքացիական պատերազմ էր սպառնում:

1649 *թվին Անգլիայի տնտեսական դրությունը չափազանց ծանր էր: Շարունակվում էր արդյունաբերական և առևտրական ճգնաժամը: Աճում էին սննդամթերքների գները, ավելանում*

էր գործազրկությունը, աղքատությունն ընդգրկում էր աշխատավոր բնակչությանը: Քաղաքական պամֆլետներում, որոնք այն ժամանակ լրագրերի դեր էին խաղում, հաղորդվում էր, թե Անգլիայում տասնյակ հազարավոր չքավորներ— տղամարդիկ, կանայք ու յերեխաներ սովի յեն մատնված և կոտորվում են հյուծվելուց, թե նույնիսկ «միջին կարողության տեր մարդիկ չքավորներ են դարձել, իսկ նրանք, ովքեր առաջ չքավոր էին, հիմա կորստյան անդունդին են հասել»:

Մինչդեռ ինդեպենդենտների տնտեսական քաղաքականությունը քիչ էր տարբերվում պրեսբիտերականների քաղաքականությունից: Հանրապետությունը պատերազմներ էր մղում իր գոյության համար, ֆինանսական դրությունը նորանոր հարկեր էր պահանջում: Անուղղակի հարկերն ավելանում էին: Նոր կառավարությունը խիստ հոգատար էր վերաբերվում դեպի խոշոր բուրժուազիան, որը ֆինանսավորում էր նրան: Սիտին ամենևին չէր շտապում կիրառել այն ձեռնարկումները, որոնք կարող էին թեթևացնել բնակչության լայն մասսաների դրությունը: Այս բոլորն առաջացրեց մանր-բուրժուական մասսաների իդեոլոգների— լևելլերների մի նոր յելույթ:

Լևելլերների պայքարը ինդեպենդենտական հանրապետության դեմ

Լևելլերներն այդ ժամանակ հանդես էին գալիս իբրև համախմբված մի կուսակցություն, որը ձևավորվել էր քաղաքացիական յերկրորդ պատերազմի ժամանակաշրջանում: Ինդեպենդենտների հետ նրանց դաշինքն այդ ժամանակ նշանակում էր վճռական պատերազմ թագավորի դեմ և ինդեպենդենտների անհաշտ վերաբերմունք դեպի պրեսբիտերականները: Այդ պատճառով վերջիններն ամեն կերպ աշխատում էին դժտություն սերմանել ինդեպենդենտների և լևելլերների միջև և պառակտել իրենց համար այնքան վտանգավոր դաշինքը: Դեռ 1648 թվի օգոստոսին պրեսբիտերական պարլամենտը բանտից ազատեց Լիլբեռնին, հույս ունենալով, որ վերջինս հանդես կգա Կրոմվելի դեմ: Բայց Լիլբեռնն այդ ժամանակ նպատակահարմար էր գտնում դաշինք պահպանել գրանդների հետ: Քաղաքացիական լարված պատերազմի ժամանակաշրջանում, 1648 թվի աշնանը նա հույս ուներ, որ վերջապես, «ժողովրդական համաձայնությունը» կընդունվի: Յերկու կուսակցությունների ներկայացուցիչներից կազմակերպ-

վեց խառը համաձնաժողով, և հնայելով վեճերին ու տարաձայնություններին, ինդեպենդենտներն ընդունեցին «Համաձայնությունը»: Դեկտեմբերի կեսին դրա տեքստը հրապարակվեց «Ազատության հիմքերը կամ ժողովրդական դաշնագիր» վերնագրով: Դեպքերը գրանդներին ստիպեցին իրականացնել լևելլերների պահանջների մի մասը: Անգլիան դարձավ հանրապետություն «առանց թագավորի և լորդերի»: Բայց չուշացավ նոր թյուրիմացություններ սկսվեցին: Լևելլերները պահանջում էյին, որպեսզի «ժողովրդական համաձայնությունը» դրվի համաժողովրդական քվեարկության (ռեֆերենդումի), մինչդեռ գրանդներն այն հանձնեցին սպաների խորհրդի քննարկմանը և այստեղ այն նոր, էական փոփոխությունների ենթարկեցին: Անհնարև էր, որ ինդեպենդենտների կառավարող վերնախավը, որին գլխավորում էր Կրոմվելը, դեպի դիկտատուրա յն հակվում: Այսպիսի պարագաներում տեղի ունեցավ Լիլբեռնի և լևելլերների նոր ելույթը, այս անգամ արդեն ինդեպենդենտական հանրապետության դեմ:

1649 թվի հունվարին, երբ համայնքների պալատում ժողովուրդը հայտարարվեց ամեն մի արդարացի իշխանության աղբյուր, իսկ համայնքները— ժողովրդական ընտրության հետևանքով պետության բարձրագույն իշխանություն, իբրև հակակշիռ այն հին դոկտրինայի, թե «թագավորը բարձր է օրենքներից», առաջ քաշվեց բուրժուական նոր իրավունքի տեսակետը,— «օրենքը բարձր է թագավորից, և պարլամենտը, որ ժողովրդի հետ օրենքներ է ստեղծում, բարձր է օրենքից»:

Այս արդումենտացիայում մենք գտնում ենք Լիլբեռնի և լևելլերների պետական-իրավական թեորիաները: Սակայն արդեն 1649 թվի փետրվար-մարտ ամիսներում Լիլբեռնը հաջորդաբար հրատարակում է երկու պամֆլետ, որոնց մեջ հարձակվում է 1649 թվի հանրապետության կարգի, որպես «Անգլիայի նոր շղթաների» վրա:

Բանն այն է, որ ինդեպենդենտները, գրավելով իշխանությունը, իրենց համար ապահովելով ձայների մեծամասնությունը պետական խորհրդում—գործադիր իշխանության նոր գերագույն օրգանում, կտրականապես փոխեցին իրենց վերաբերմունքը դեպի լևելլերները: Լևելլերների հետ կապված այն բլոկը, որ ինդեպենդենտների համար կարևոր էր թագավորի դեմ ու-

ղեկված քաղաքացիական յերկրորդ պատերազմի ժամանակաշրջանում և 1648 թվի վերջում—այն ամիսներին, վորոնք անմիջականորեն նախորդեցին հանրապետություն հիմնելուն,— այլևս հարկավոր չեր: Ոգտագործելով լեվելլերներին, ինդեպենդենտներն այժմ վճռականապես անտեսում են Լիլբեռնին, նրա կուսակցությունը, լեվելլերների սահմանադրական նախագծերը, ռեֆերենդումի նրանց պլանները և այլն: Ահա թե ինչու Լիլբեռնը, կոչ անելով դեպի «ժողովրդական դաշնագրի» և Ազատությունների մեծ խարտիայի սկզբունքները, հարձակվում է պետական խորհրդի վրա, վոր պարլամենտը նշանակել եր իր միջավայրից, 40 անդամներից, վորպես մի որգանի վրա, վորը պարզապես սպառնում է նոր բռնակալության աղբյուր դառնալ: Լիլբեռնը սպառազինվում է «յերկրին սպառնացող զինվորական դիկտատուրայի» դեմ, «Անգլիայի ազատ ժողովրդին սպառնող» և «ուզուրպատոր» Կրոմվելի դեմ, վորը մինչև այժմ քողարկում եր իր պլանները, իսկ հիմա սկսում է ավելի բացահայտ կերպով ցույց տալ իր իսկական դեմքը:

Լիլբեռնը պահանջում եր գումարել նոր, դեմոկրատական հիմունքներով արդարացիորեն ընտրված պարլամենտ: Նա այդ պահանջով դիմեց իր վողորմելի գոյությունը քարշ տվող Յերկարատև պարլամենտին, վորը հետզհետե ավելի մեծ չափով եր հլու գործիք դառնում Կրոմվելի և բանակի տեր ու տնորենների ձեռքում, վորոնք իշխում եյին պետական խորհրդում:

Ի պատասխան այդ յելույթի, Լիլբեռնն իր համախոհների հետ միասին նորից բանտարկվեց Տաուերում:

Ժողովրդա-դեմոկրատական ռեֆորմների լեվելլերական պլանը

Մի ուրիշ պամֆլետում, վորի վերնագիրն եր «Անգլիայի ազատ ժողովրդի դաշնագիրը» և վորը Լիլբեռնը գրել եր արդեն բանտում, զարգացվում եր դեմոկրատական հանրապետության ծրագիրը: Այդ նախագծի համաձայն, Անգլիայում գերագույն իշխանությունը պետք է պատկաներ 400 հոգուց բաղկացած ժողովրդական ներկայացուցչությանը, նրանք պետք է ընտրվեյին քվեարկության այն սիստեմի հիման վրա, վորով ընտրական իրավունքներից պետք է ոգտվեին 21 տարին լրացրած բոլոր անգլիացիները, բացի ծառաներից և մուրացիկներից: Ռոյալիստները նույնպես ձայնազուրկ եյին արված 10 տարվա ժամկետով: Լեվելլերական նախագծի համաձայն, Յերկարատև պարլամենտը

պետք է 1649 թվի օգոստոսի 1-ից դադարեցներ իր գոյությունը։ Այդ ժամանակ պետք է ավարտվեյին նոր պարլամենտի ընտրությունները։ Հետագա բոլոր պարլամենտները պետք է ընտրվեյին մեկ տարվա ժամկետով։ Պարլամենտի անդամ ընտրված դեպուտատին չէր կարելի վերընտրել անմիջապես հաջորդ պարլամենտի անդամ, այն անհարմարություններից և վտանգներից խուսափելու համար, որոնք բղխում են նրանից, որ միևնույն անձնավորությունները երկար ժամանակ մնում են իշխանության մեջ, և այն հնարավորությունն ապահովելու համար, որով ամեն տարի ինկապես նոր պարլամենտ է ընտրվում։

Այդ նախագծի համաձայն, պարլամենտին է պատկանում խաղաղությունը պահպանելու, քաղաքացիների կյանքի, անձնավորության և ազատության անվտանգությունը, նրանց սեփականության և կալվածքների անձեռնմխելիությունն ապահովելու հոգատարությունը։ Պարլամենտը պետք է հոգա նաև օտարերկրյա պետությունների հետ առևտուրը զարգացնելու, պետության բարեկեցության աճման և հասարակական տղեկները վերացնելու մասին։

Պետք է դադարեցվեյին հավատի գործերին վերաբերող հետապնդումները, վերացվեյին ամեն տեսակ կավենանտները, երդումներն ու օրենքները, որոնք հետապնդումներ են սահմանել կրոնական համոզմունքների համար, որովհետև «բոլոր դարերում ոչինչ չի առաջացրել այնքան շատ երկպառակություններ և տանջությունն, որքան հետապնդումներն ու հալածանքները կրոնական գործերի նկատմամբ»։

Այստեղ արգելվում էր սախպողական զինվորական ծառայությունը. յուրաքանչյուր մարդ այնուհետև ինքը պետք է որոշեր, թե արդյոք արդա՞ր է այն գործը, որի համար նա կռվում է։

Վերջապես, «Ազատ ժողովրդի դաշնագիրը» չենթադրում էր վերացնել մենաշնորհները, բոլոր անգլիացիներին իրավունք տալ անդրծովյան առևտուր անել, ոչնչացնել ակցիզները, մաքսերը, տասանորդները— նրա սեփականատերերի վարձատրությամբ հանդերձ, մեղմացնել քրեական կոդեքսը և այլն։

Զինվորական դիկտատուրայի վտանգը կանխելու համար չենթադրվում էր, որ բանակը պետք է համապատասխան բաշխ-

մի բատ կոմսությունների և քաղաքների: Պարլամենտը պետք է նշանակեր բանակի հրամանատարներին և բարձրագույն սպայությանը: Իսկ գնդերի, էսկադրոնների և վաշտերի հրամանատարներն այնուհետև պետք է ընտրվեին այս կամ այն կոմսության տեղական ընտրողների կողմից, վորոնք պարլամենտի ընտրությունների ժամանակ քվեարկելու իրավունք ունեն:

«Ազատ ժողովրդի դաշնագրի» յերրորդ մասում ավելացվում եր, վոր պարլամենտը չի կարող վերացնել, կրճատել կամ լրացնել ամբողջ ժողովրդի կողմից ընդունված այդ դաշնագիրը, ճիշտ այնպես, ինչպես պարլամենտը չի կարող հավասարեցնել մարդկանց կարողությունները, վոչնչացնել սեփականությունը և բոլոր իրերն ընդհանուր դարձնել:

Այսպիսով Լիլբեռնը և մյուս լևելլերները մի անգամ ևս խիստ վճռականորեն հրաժարվում եյին գույքերի և կալվածքների ընդհանրության գաղափարից:

Այս եր ռադիկալ-դեմոկրատական ռեֆորմների պլանը, վոր պարզացրել եյին լևելլերները: Այդ պլանն ուտոպիական եր: Դեմոկրատիայի ուժերը դեռևս չափազանց թույլ եյին և չեյին կարող դիմադրել այն խոշոր մոնոպոլիստ-արդյունաբերողների և խոշոր հողատերերի շահերին, վորոնք իրենց կալվածքներն ավելացնում եյին դեյինկվենտական, յեպիսկոպոսական և դահական հողերը վաճառելու հաշվին: Հենց այդ դասակարգերի շահերին եր համապատասխանում Կրոմվելի միանձնյա դիկտատուրան, վոր Անգլիայում հաստատվում եր XVII դարի 50-ական թվականների կեսին:

Հավասարար լեվելլերների հետ կապ. բանակում եղած ապստամբության ճնշումը

1649 թվին Անգլիայում բավական լայն չափով բարձրանում է գյուղացիական շարժումների ալիքը: Այդ շարժումների ծրագիրն եր «Ազատ ժողովրդի դաշնագիրը», վոր պարունակում եր դեմոկրատական ռեֆորմների նախագիծը, իսկ այդ շարժումների կազմակերպմանը վորոշ մասնակցություն ունեցան նաև Լոնդոնի յենթավարպետներն ու աշակերտները, վորոնք վաղուց մեծապես հակամետ եյին «ազատածին Ջոնի» գաղափարներով գրավվելուն: Սակայն 1649 թվի գյուղացիական շարժումները մասնատված, մեկուսացած բնույթ եյին կրում և չվերածվեցին մի նոր «լևելլերական պատերազմի»: Կրոմվելը և Ֆերֆաքսը վճռականապես ճզմեցին գյուղա-

կան ապստամբությունների առանձին փորձերը, որից հետո լեվելլերներն արագությամբ կորցնում են իրենց ժողովրդականությունը բանակում և հեռանում են քաղաքական ասպարեզից:

Դիգգերները Լիլբեռնը և նրա հետ կապված լեվելլերները կողմնակից էին հողի մասնավոր սեփականությունը պահպանելուն: Բայց լեվելլերական շարժման մեջ կար նաև ավելի ռադիկալ թեր— դրանք այսպես կոչված «իսկական լեվելլերներն» էին կամ դիգգերները (փորիչները), որոնք պնդում էին, թե հողը պետք է ընդհանուր սեփականություն լինի: Իսկ մասնավոր հողային սեփականությունը շահախնդիր մարդկանց— լենդլորդերի կողմից հողը բռնազրավելու հետևանքն է միայն, լենդլորդերի, որոնք հակառակ աստծո պատվիրաններին՝ չքավորներին ստրուկներ են դարձրել: 1648—1649 թ. թ. դիգգերական յերկու պամֆլետներում («Լույսը, որ շողշողաց Նոտտինգեմշիրում») շարադրվում է հողի «գերության» ծագման պատմությունը: Զավթողները, լենդլորդերը ոչ միայն տիրացել են հողին, այլև հիմք են դրել միապետության, որը դարձել է մեծամասնության վրա փոքրամասնության իշխելու գործիք: Դիգգերների կարծիքով միապետության անկումից հետո պետք է սոցիալական արմատական հեղաշրջում կատարվեր,— վերացվեյին հողային անհավասարությունը և խոշոր հողատերերի— ազնվականների և բուրժուազիայի առավելությունները: Ամեն մեկը կարող է միայն այնքան հող ունենալ, որքան հարկավոր է նրանով իր գոյությունը պահելու համար: Բոլորը պետք է միատեսակ աշխատեն, միատեսակ գույք և միատեսակ իրավունքներ ունենան: Այդ գաղափարների հետ մեկտեղ, որոնք համապատասխանում են չքավոր գյուղացիության մանր սեփականատիրական, հավասարարական հողերմնության, դիգգերներն ունեյին նաև խիստ կոնկրետ պլաններ, որոնց համաձայն պետք էր չքավորների մեջ բաժանել պետական այն ազատ հողերը, որոնք գրավված էին դահից, յեպիսկոպոսներից և ռոյալիստներից— հեղափոխության հակառակորդներից: Դիգգերներն առարկում էին այդ հողերն օգտագործելու այն կարգի դեմ, որով պարլամենտը դրանք բաժանում էր իր անդամներին: Հենց 1649 թվի դիգգերական պամֆլետն էլ «յեղբայրներին» կոչ էր անում ապստամբվել դրանդների դեմ, որոնք չեյին ցանկանում հրաժարվել իրենց արտոնություններից:

Զգալով այդպիսի ապստամբության հետևանքները, դիգգերներն առաջարկում էին անհապաղ ձեռնամուխ լինել չզբաղեցրած, ազատ հողերի միատեղ մշակման։ Դիգգերների կողմից ազատ հողերը կոլեկտիվ կերպով վարելու այդպիսի փաստեր տեղի ունեցան 1649 թվին, Լոնդոնի մոտ, Սյուրրիում, ս. Ջորջի բլուրի վրա։

Իմանալով այդ մասին, պետական խորհուրդը հեծելազոր ուղարկեց դիգգերներին ցրելու համար։ Այդ ժամանակ նրանց ներկայացուցիչները— Ուինստենլին և Եվերարդը գնացին գեներալ Ֆերֆաքսի մոտ, վորպեսզի բացատրություն տան. հետո էլ ինքը, Ֆերֆաքսը դիգգերների գաղութի մոտից անցնելիս կանգ առավ և նրանց հետ զրույց ունեցավ։ Փորիչները գանգատվում էին հարևան գյուղացիներից, վորոնք նրանցից խլում էին գործիքները, փչացնում նրանց ցանքերը, փչացնում անասունները, նույնիսկ քանդում տները, գանգատվում էին նաև գեներալ-մայորից և հաշտարար դատավորներից, վորոնք փորիչների դեմ գործ էին հարուցել ուրիշի սեփականությունը խախտելու մասին։ Փորիչները դիմում են պարլամենտի ողնությանը, խնդրում են, վոր չքավորներին— «կրտսեր յեղբայրներին»,— վորոնք ջենտլմեններին ողնել էին թագավորին դահընկեց անելու,— թույլ տրվի վարել ամայի հողերը։

Ազատ հողերը վարելու նույնպիսի փորձեր տեղի ունեցան Նորթհեմպտոնշիրում,— վորտեղ իբր թե մինչև հազար փորիչներ էին հավաքվել,— նաև Քենտում։ Նորթհեմտոնշիրի դիգգերները նույնիսկ փորձեցին դիմել պետական խորհրդին, խնդրելով վարած հողը հաստատել իրենց վրա։ Բայց պետական խորհուրդը կարգադրեց դատի յենթարկել և ուժով ցրել փորիչներին։

Իսկական լեվելլերների ագրարային ծրագիրը և հասարակական վերակառուցման նրանց պլաններն ամենալրիվ չափով արտացոլված են Ջերարդ Ուինստենլու հետևյալ յերկում. «Ազատության օրենքը, վոր շարադրված է պլատֆորմի ձևով, կամ կառավարման ճշմարիտ սիստեմի վերականգնումը» (1651—1652 թ. թ.)։ Ուինստենլիի շարադրությունն անկասկած դրսևորում է Թ. Մորի «Ուտոպիայի» ազդեցությունը։ Այն նվիրված է առաջին հերթին Կրոմվելլին, վորն արտաքսել էր «փարավոնին» և կոչված էր ժողովրդի առաջնորդ դառնալու։ Ուինստենլին

Կրոմվելի վրա առանձին հույսեր է դնում հողատիրության ա՛յն կարգերը վերացնելու նկատառմամբ, որոնք իրենց ծագումով «նորմանդական բռնակալության» և լենդլորդների կողմից հողը զավթելու հետևանք են հանդիսանում:

Հիշեցնելով Կրոմվելին, որ Թագավորի դեմ հաղթանակը ձեռք է բերվել հասարակ ժողովրդի օգնությամբ, Ուինստենլին Կրոմվելին հորդորում է հողը տալ ժողովրդին և դրանով իսկ արժանի լինել իրեն վիճակված պատվին:

Ուինստենլին բողոքում է, որ համայնական հողերը բռնազրավվել են այդ ժամանակվա ազնվականների կողմից, որոնք ավելի ագահ են, քան հին ֆեոդալները. այդ զավթողներն այնքան անասուններ են տանում համայնական արոտավայրերը, որ չքավոր մարդու մի կովի համար ել արածելու տեղ չի մնում: Ուինստենլին բողոքում է նաև գահական, յեկեղեցական և մասամբ ազնվականական հողերը հսկայական չափով վաճառքի հանելու դեմ, որը հանգել է ժողովրդի ե՛լ ավելի ծանր ստրկությանը:

Ուինստենլին հողի առևտուրը մեծագույն հանցագործություն է համարում: Նրա ուտոպիական պրոյեկտում հողի վաճառքը մահով է պատժվում:

Ուինստենլին բավական նայիվ հույսեր է հայտնում առ այն, թե Կրոմվելը, որ հենվում էր հողին և մանուֆակտուրաներին ծառայող բուրժուազիայի և հողատեր ազնվականության հիմնական մասսայի վրա, հողը կտա ժողովրդին: Հրաժարվելով կապալավարձ վճարելուց ու գտնելով, որ յուրաքանչյուրը պետք է ունենա այնքան հող, որքան հարկավոր է այդ հողով իր գոյությունը պահպանելու համար, այն մշակելով անձնական աշխատանքով, դիգգերները հույս ունեին խաղաղ ճանապարհով սոցիալական հեղաշրջում կատարել: Նրանք դեմ էին նոր կարգերի բռնի հաստատմանը: Նրանք հույս ունեին, որ կգա ժամանակ, երբ առաջվա հողատերերը— «նորմանդական բռնակալության» հեղինակները, ինչպես նաև նոր հողատեր—սպեկուլյանտները, որոնք իրենց տնտեսությունը կազմակերպում էին կապիտալիստական վարձակալության և վարձու աշխատանքը շահագործելու սկզբունքներով, իրե՛նք կհրաժարվեն հողից, կոչնչացնեն ցանկապատերը, հողը կհանձնեն հասարակական օգտագործման, կամավոր կերպով կհարեն բոլոր չքավորների և ճնշվածների միությանը... Հենց այդ ժամանակ ել կիրականացվի

շարժումն ընդգրկում եր հարավ-արևմտյան Անգլիայի մի մասը և անցնում եր քաղաքացիական պատերազմում բնավեր յեղած գյուղացիության զինված չեզոքության նշանաբանով: Կլոբմենները չեյին ուզում պատերազմել վոչ մեկ և վոչ ել մյուս կողմից, թեպետ և՛ թագավորը և՛ պարլամենտը փորձում եյին այդ շարժումն ոգտագործել իրենց նպատակների համար: Կլոբմենների հետ բանակցություններ եր վարում Ֆերֆաքսը, փորձելով նրանց քաշել պարլամենտի կողմը:

Կլոբմենների շարժման մեջ արտացոլվեց այն փաստը, վոր ագրարային փոփոխությունները, վորոնք կապված եյին կոնֆիսկացիայի յենթարկված հողերի արդելակալանքի ու վաճառման վերաբերյալ Յերկարատև պարլամենտի որենսդրության հետ, չեյին համապատասխանում գյուղացիական գյուղի — վոչ միայն նրա ստորին, այլև նույնիսկ վերին խավերի շահերին; վորովհետև թագավորից, յեկեղեցուց և ռոյալիստներից գրավված հողերի գնումներին չնչին չափով եյին մասնակցում գյուղացիները, նույնիսկ խոշոր գյուղացիները: Անգլիական գյուղացիական գյուղը վոչ թե շահեց, այլ, ընդհակառակը, տուժեց հեղափոխության ագրարային որենսդրությունից: Այսպիսով այն հաղթանակը, վոր տարավ անգլիական յոմանրին թագավորի ու ռոյալիստների դեմ մղված քաղաքացիական պատերազմում, այն հաղթանակը, վորի պտուղները բաժին ընկան մյուս դասակարգերին, խիստ բացասական հետևանքներ ունեցավ ամբողջովին վերցրած անգլիական գյուղացիության համար: «Գյուղացիները հանդիսանում են այն դասակարգը, վորը նվաճված հաղթանակից հետո անխուսափելիորեն քայքայվում ե այդ հաղթանակի տնտեսական հետևանքների շնորհիվ: Կրոմվելից հետո հարյուր տարի անց անգլիական յոմանրին... գրեթե բոլորովին չքացավ»[1]:

Ապստամբության ճնշումն Իռլանդիայում, Շոտլանդիայում յեվ ամերիկական գաղութներում

1647 թվի մարտին վորոշում ընդունելով թագավորի դեմ հաղթանակած բանակն արձակելու մասին, պարլամենտը յենթադրում եր նրա մի մասը հենց այդ ժամանակ ուղարկել Իռլանդիա, տեղական ազգային-կաթոլիկական շարժումը ճնշելու համար, ինչպես նաև նպատակ ունենալով իռլանդական հողերի հաշվին վարձատրել բանա-

---

[1] Ленин, Соч. т. XII, էջ 210 (ցիտատ Էնգելսից, տես հ. XVI, II մաս, էջ 297):

կը և այն անձանց, վորոնք առաջին քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում պարլամենտին դրամական նպաստներ էյին տալիս, հույս ունենալով իռլանդական հողերից հատուցում ստանալ:

Բայց անգլիական պարլամենտը քաղաքացիական յերկրորդ պատերազմը վերջանալուց և Անգլիայում 1649 թվի հանրապետությունը հաստատելուց հետո միայն կարողացավ ձեռնամուխ լինել Իռլանդիայի նվաճմանը, իմիջի այլոց նաև նպատակ ունենալով իռլանդական հողերով փոխհատուցում տալ իր վարկատուներին:

Անցնելով հատկապես այդ նպատակի համար կազմակերպված տասներկու հազարանոց բանակի գլուխ, Կրոմվելը մեկնում է Իռլանդիա: 1649 թվի օգոստոսին Դուբլինում այդ բանակն ափ է դուրս գալիս: Կրոմվելն անհապաղ արշավում է դեպի Իռլանդիայի հյուսիսը, դեպի Դրոգեդա, վորը գրավված էր յերեք հազար իռլանդացիներով: Դրոգեդայի կայազորը մեծ քաջությամբ դիմադրություն ցույց տվեց, բայց անգլիական զորքերին վերջիվերջո հաջողվեց գրոհելով վերցնել բերդը: Արտասովոր դաժանությամբ կոտորելով կայազորը և Դրոգեդայի բնակիչներին, Կրոմվելը պարլամենտին զեկուցագիր ուղարկեց իր հաղթանակի մասին, այդ համարելով իռլանդական «բարբարոսների և սրիկաների» դեմ ուղղված աստծո արդար դատաստանի իրականացում:

Այնուհետև Կրոմվելը շարժվեց դեպի հարավ, Իռլանդիայի մյուս ծովափնյա քաղաքը— Ուեքսֆորդը, վորին վիճակվեց նույնը, ինչ վոր Դրոգեդային:

1649 թվի վերջում Կրոմվելը կարողացավ համայնքների պալատի նախագահին հաղորդել, վոր «աստված որհնեց» անգլիացիներին՝ ձեռք բերելու հողի մի մեծ տարածություն, վորը ձգվում է Իռլանդիայի ծովափի յերկարությամբ: Սակայն անգլիացիներին չեր հաջողվում մտնել «կանաչ կղզու» խորքը: 1650 թվի գարնանը Կրոմվելը հեռանում է Իռլանդիայից, կղզու հետագա նվաճումը թողնելով իր ոգնականներին:

Անգլիացիները հետզհետե գրավեցին Իռլանդիայի բոլոր ամրացված կետերն ու քաղաքները, այնու հանդերձ գործելով բացառիկ դաժանությամբ: Նրանք վառում էյին հացաբույսերի արտերը և անողոք կերպով կոտորում իռլանդական պարտիզաններին, վորոնք փորձում էյին դիմադրել բռնագրավիչներին:

1652 թվի մայիսին ռազմական գործողությունները հիմնականում ավարտված եյին և անգլիացիները ձեռնամուխ յեղան իռլանդական հողերը բաժանելու իրենց պլանների իրականացմանը: «Դելինկվենտների» և պապիստների հողերն արգելակալելու վերաբերյալ Յերկարատև պարլամենտի օրդինանսների, հրամանագրերի և ակտերի ուժը տարածվում է Իռլանդիայի վրա, այստեղից բխող բոլոր հետևանքներով:

Իռլանդացիներին, ինչպես և բուն Անգլիայում դելինկվենտներին, բաժանեցին մի քանի կատեգորիաների, նայած թե նրանք որքանով «հանցավոր» եյին, այսինքն որքանով մասնակցություն եյին ունեցել 1641 թվի ապստամբությանը և անգլիացիների դեմ մղված հետագա պայքարին, և դրան համապատասխան ամբողջովին կամ մասամբ զրկվում եյին նրանց գույքը: Իռլանդիայի «կարգավորման» ակտի հիման վրա, որ հրատարակվեց 1652 թվին, վիթխարի չափերով տեղի ունեցավ իռլանդական բնակչության սիստեմատիկ կողոպուտը: Չսահմանափակվելով հողի, ինվենտարի և այլ գույքի կոնֆիսկացիաներով, անգլիական կառավարությունն իռլանդացիներին բռնությամբ գաղթեցնում էր կղզու արևմտյան մասը, արտաքսում դեպի կոնտինենտ, ուր նրանք Ֆրանսիայում ու Իսպանիայում մտնում եյին զինվորական ծառայության, կամ աքսորում էր գաղութները— Արևմտյան Հնդկաստան, Բարբադոս և Կարաիբյան կղզիները, հարկադիր աշխատանքներ կատարելու:

Հողային այդ մոբիլիզացիայի չափերի և նշանակության մասին կարելի յե դատել «Քաղաքացիական ցուցակագրությունից» («Civil survey»), որը կազմվել է յերեք տարվա ընթացքում, 1654 թվից սկսած, և ընդգրկում է Իռլանդիայի տերիտորիայի մեծ մասը: Սկզբում անգլիական գաղութարարության օբյեկտ հանդիսացան Իռլանդիայի 32 կոմսություններից միայն 10-ը: Այնուհետև հողը չբավականացավ և լրացուցիչ հողեր առանձնացվեցին նաև 11 կոմսություններում:

Հանրապետության կառավարությունն իռլանդական հողերով ամենից առաջ հաշիվները մաքրեց բանակի մատակարարների հետ, որոնց ընդհանուր առմամբ պետությունը պարտք էր ավելի քան 2 միլիոն ֆունտ ստեռլինգ: Այնուհետև տեղի ունեցավ բանակին տրվելիք պարտքի մարումը, որ խիստ շահավետ էր պետության համար և անշահավետ էր զինվորների հա-

մար։ Բանակի զորացրման ու արձակման հետ մեկտեղ, վար, կատարեց յերեք ժամկետում, բայց եյին թողնված այսպես կոչված «պարտավորագրերը» (debentures), վորոնք իրավունք եյին տալիս Իռլանդիայում հողաբաժիններ ստանալ։ Զինվորները, վոր փողի կարիք ունեյին, այդ պարտավորագրերը չնչին գներով ծախում եյին սպաներին, ավանտյուրիստներին ու յերրորդ անձնավորություններին, վորոնք առհասարակ իրավունք չունեյին Իռլանդիայում հող ստանալ։ 1653—1655 թ. թ. պարտավորագրերը ծախվում եյին 4-5 շիլլինգով, իրենց մեկ ֆունտ նոմինալ արժեքի դիմաց։

«Պարտավորագրերի» այդ շահարաշահումների և իռլանդական ռեբելիոնի անգլիացիների կողմից «յուրացնելու» հետագա գործառնությունների հետևանքն այն յեղավ, վոր հողային սպեկուլյանտները, բանակի մատակարարները և մի շարք սպաներ, որոնց թվում նաև ինքը Կրոմվելը, դարձան իռլանդական խոշոր հողատերեր, մի քանի հազար ակր հող ունեցող կալվածքների, իռլանդական նախկին արիստոկրատիայի դղյակների և պարկերի սեփականատերեր, իսկ այդ պարկերում վորսի համար վայրի կենդանիներ և թռչուններ եյին պահվում։

Իռլանդիայում չստեղծվեց ֆերմերական մանր հողատիրություն, ինչպես բուն Անգլիայում գյուղացիությունն իր հողերի տարածության ընդարձակման իմաստով չշահեց հեղափոխության ագրարային օրենսդրությունից։

Սակայն Իռլանդիայում չհաստատվեց լենդլորդիզմի և գյուղատնտեսական բանվորների աշխատանքով մշակվող կապիտալիստական խոշոր ֆերմաների սիստեմը, վոր տիպիկ եր Անգլիայի համար։ Իռլանդիայի համար տիպիկ ձև դարձավ շահագործման ամենադաժան և ամենապարզելի ձևը— գյուղացիական մանրը, կիսաբատրակական վարձակալության ու յենթավարձակալության սիստեմը, հողի մշակումն իռլանդական կիսամուրացիկ վարձակալների աշխատանքով։

Իռլանդիայի դատաստանն այդ կերպ ավարտելու հետևանքները հսկայական եյին։ Դառնալով իռլանդական խոշոր հողատերեր, ինդեպենդենտական սպայությունն արդեն մտածում եր վոչ թե հեղափոխությունը խորացնելու և շարունակելու, այլ նրա շուտափույթ դադարեցման մասին։ Դժբախտ իռլանդացիներին շահագործելու սիստեմը և այն ատելությունը, վոր ստրկացված

բնակչությունը տածում էր դեպի իրեն ճնշողները, վերջիններիս ստիպեցին ամենախիստ միջոցներ կիրառել իռլանդական բնակչության նկատմամբ և Իռլանդիայում գտնվող անգլիական կեղեքիչներին դարձրին բուն Անգլիայում յեղած ամենամռայլ ռեակցիայի հենարան։

«Իռլանդական պատմությունն օրինակից,— գրում էր Էնգելսը Մարքսին 1869 թվին,— կարելի յե տեսնել, թե այդ ինչպիսի դժբախտություն և ժողովրդի համար՝ մի ուրիշ ժողովրդին ստրկացնելը։ Անգլիական բոլոր խոզությունները ծագում են առնում իռլանդական Pale-ից[1]։ Յես դեռ պետք է ուսումնասիրեմ Կրոմվելի եպոխան, բայց ինձ անկասկածելի յե թվում, վոր Անգլիայում գործերն այլ ընթացք կստանային, յեթե չլիներ զինվորական տիրապետություն և Իռլանդիայում նոր արիստոկրատիայի ստեղծման անհրաժեշտությունը»[2]։ Մարքսն էլ ավելի վորոշակի յե արտահայտվել այդ առթիվ. «Կրոմվելի օրոք անգլիական հանրապետությունը խփվեց Իռլանդիային ու ջարդվեց»[3]— գրում է նա Կուգելմանին 1869 թվի նոյեմբերի 20-ին։

Շոտլանդական ապստամբության ճնշումը

Կարլոս I-ի մահապատժից մի քանի օր անց Շոտլանդիայում թագավոր հռչակվեց նրա վորդի Կարլոս II-ը, վորն այդ ժամանակ գտնվում էր Նիդերլանդներում։ 1649 թվի գարնանն այնտեղ մեկնեց շոտլանդական հատուկ մի պատվիրակություն, վորպեսզի Կարլոս II-ի հետ համաձայնության գա նրա գահ նստելու պայմանների մասին։ Շոտլանդացիների յենթադրությունների համաձայն, Կարլոս II-ը պետք է ընդուներ կովենանտը և տարածեր Անգլիայի և Իռլանդիայի վրա։ Սակայն Կարլոս II-ը չեր շտապում համաձայնություն տալ շոտլանդական պրեսբիտերականների այդ պահանջին, հույս ունենալով, վոր հետագա դեպքերը նրանց ավելի զիջող կդարձնեն։ Սակայն այն հաջողությունները, վոր Կրոմվելը ձեռք բերեց Իռլանդիայում, դրությունը փոխեցին վոչ հօգուտ Կարլոս II-ի։ Նրա այն հույսը, թե կարելի կլինի Իռլանդիան բազա դարձնել Անգլիա ներխուժելու համար, հիմա

---

[1] Իռլանդիայի արևելյան, անգլիացիների գրաված մասի անունը—Ծանոթ. խմբ.

[2] Маркс и Энгельс. Соч. т. XXIV, էջ 240—241.

[3] Маркс и Энгельс. Письма, под ред. Адоратского, Партиздат, 1932, էջ 247—248.

ի դերև ելավ։ Կարլոս II-ը ստիպված է լինում համաձայնվել կովենանտին, զիջելով շոտլանդական կոմիսարների պահանջներին։

Երբ Կրոմվելի փորձը— համոզել շոտլանդացիներին, որ խզեն իրենց կապը Կարլոս II-ի հետ— անհաջող անցավ, անգլիական բանակը 1650 թվի ամառը ներխուժեց Շոտլանդիա։ 1651 թվի սեպտեմբերին Վուստերի մոտ Կրոմվելը գլխովին ջարդեց Կարլոս II-ի բանակը։

Դրանից հետո Շոտլանդիայի նվաճումը ժամանակի հարց էր։

Այն ավարտեց Կրոմվելի տեղակալ գեներալ Մոնկը։ Շոտլանդիան, ինչպես Իռլանդիան, միացվեց անգլիական հանրապետությանը։ Վոչնչացվեցին մաքսային ուղեկալները և անգլո-շոտլանդական սահմանի վրա վերացվեց մաքսերի գանձումը։ Այդ միացման պայմանների համաձայն, շոտլանդական յերեսուն դեպուտատներ պետք է մասնակցեյին անգլիական պառլամենտին։

Այս տեղի ունեցավ դատաստան շոտլանդական ազնվական-ռոյալիստների, շոտլանդական արիստոկրատիայի և միջին ազնվականության դեմ, որոնք կանչել եյին Կարլոս II-ին և հանրապետության դեմ ապստամբություն եյին բարձրացրել։ Նրանք իռլանդացիների նման պետք է հատուցեյին հողերի կոնֆիսկացիաներով կամ կոնֆիսկացիան փոխարինող տուգանքներով։

Շոտլանդական ազնվականության հողերի կոնֆիսկացիան նշանակում էր ամենից առաջ հարվածել շոտլանդական հին արիստոկրատական ընտանիքների տիրապետությանը և հողը վերաբաժանել հօգուտ այն դասակարգերի, որոնք ամենից շատ եյին շահել Անգլիայում և Իռլանդիայում յեղած համապատասխան ձեռնարկումներից։ Ամենից առաջ շահեց անգլիական և շոտլանդական բուրժուազիան։ Վերջինիս համար ավելի հեշտ յեղավ համաձայնության գալ հաղթողների հետ, և նա ակտիվ մասնակցություն ունեցավ շոտլանդական ազնվականության և արիստոկրատիայի հողերի վաճառքին։

Շատ հող ընկավ Եդինբուրգի վաճառականությանը։ Անգլիական բուրժուազիան ևս ձեռք բերեց Շոտլանդիայի հողերի մի մասը։

Սակայն բազմաթիվ հողատերերի այն մասսայական արտաքսումը հողից և նրանց տեղում նոր, անգլիական սեփականատերերին տեղավորելը, վոր տեղի ունեցավ Իռլանդիայում, չկրկնվեց Շոտլանդիայում: Շոտլանդական ազնվականությունը և արիստոկրատիան գյուղում ավելի մեծ չափով պահպանեցին իրենց դիրքերը, քան այդ յեղավ Իռլանդիայում: Բայց ֆեոդալական հողային հարաբերությունների վոչնչացման կապակցությամբ հեղափոխության եզրափակում Շոտլանդիայում, ինչպես և Անգլիայում, ուժեղանում է մի տենդենց— գյուղացիներին, հողակալներին դարձնել վոչ թե սեփականատերեր, այլ վարձակալներ. գյուղում ավելանում է չքավորության և ունեզրկված տարրերի թիվը, և շոտլանդական բուրժուազիան ձգտում է դրանց իբր աշխատող ձեռներ օգտագործել մանուֆակտուրաներում:

Իռլանդական և շոտլանդական ապստամբությունները ճնշելու հետ միաժամանակ հանրապետությունը գործ ունեցավ ամերիկական գաղութներում ծագած ռոյալիստական շարժման հետ:

Ազատամտություն ամերիկյան գաղութներում

XVII դարի կեսին Անգլիայի ամերիկյան գաղութներն ընդարձակվել և կազմում եյին բավական զգալի մի մեծություն, մանավանդ այն հալածանքների հետևանքով, վորոնց յենթարկվում եյին նոնկոնֆորմիստները (այսինքն այն անձինք, վորոնք չեյին ընդունում անգլիկանական յեկեղեցին) XVI դ. վերջում և առաջին Ստյուարտների ժամանակ: Դեպի Ամերիկա յեր գնում գաղութարարական յերկու հոսանք,— աղանդավորական-դեմոկրատական և անգլիկանական-կաթոլիկական— արիստոկրատական հոսանքները: Աղանդավորները բնակություն եյին հաստատում գլխավորապես այժմյան ԱՄՆ հյուսիսային մասում, Նոր Անգլիայում: Վորովհետև Անգլիայից նրանց արտաքսում եր գլխավորապես Ստյուարտների կառավարությունը, ուստի պարլամենտը և ապա հանրապետությունն այստեղ մեծ համակրանք եյին վայելում: Բայց քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում թուլացավ գաղութների և մետրոպոլիայի կապը: Յերբ պարլամենտը 1644 թվին գաղութներն ազատեց ներմուծման և արտահանման մաքսերից, Մասսաչուսեթսն այդ իրագործեց ինչպես իր սեփական օրենքը, հայտարարելով, վոր

«անգլիական պարլամենտի ակտերն ուժ ունեն միայն Անգլիայում»:

Հարավային գաղութներում գերակշռում եյին արիստոկրատները, մեծ մասամբ անգլիկանները և ռոյալիստները, վորոնք խոշոր հողամասեր ունեյին: Թագավորի մահապատիժը և հանրապետության հաստատումն այստեղ մեծ ցասում առաջացրեց: Վիրգինիայում պետական դավաճաններ հայտարարվեցին բոլոր նրանք, վորոնք հրաժարվում եյին թագավորի մահապատիժը դատապարտելուց և Կարլոս II-ին թագավոր չեյին ճանաչում: Նույնպիսի բանաձևեր ընդունվեցին նաև մյուս հարավային գաղութներում: Այդ ժամանակ պարլամենտը դավաճաններ հայտարարեց այն կոլոնիաներին, վորոնք չեյին ճանաչում հանրապետությունը և արգելեց ամեն տեսակ հարաբերությունները նրանց հետ (1650 թ.): Դրան իբրև պատասխան, Բարբադոս կղզում (Փոքր Անտիլյան կղզիներ) հրաժարվեցին պարլամենտը ճանաչելուց և 6 հազար հոգուց բաղկացած աշխարհազոր կազմակերպեցին: Բայց յերբ անգլիական մի եսկադրա յերևաց կղզու մոտ, գաղութարարներն ավելի զիջող դարձան: Սակայն հանրապետությունը նույնպես ստիպված յեղավ զիջումներ անել: Թույլատրվեց դավանության ազատություն, վորոշվեց, վոր առանց տեղական բնակչության համաձայնության չի կարելի հարկեր սահմանել, թույլատրվեց ազատ առևտուր անել այն բոլոր պետությունների հետ, վորոնք Անգլիայի հետ պատերազմի մեջ չեն: Շուտով մնացած գաղութները ևս նույնանման արտոնյալ պայմաններով յենթարկվեցին հանրապետության (1652 թիվ):

Կրոմվելի ռազմական հաջողությունները յեվ պրոտեկտորատի հաստատումը

Իռլանդիայում և Շոտլանդիայում Կրոմվելի տարած հաղթանակները նրան իբրև զորավարի հռչակեցին վոչ միայն Անգլիայում, այլև Յեվրոպայի կոնտինենտում: Սակայն իռլանդական ազգային շարժման ջախջախումը, ռոյալիստական խռովության ճնշումը Շոտլանդիայում, հողային հսկայական ֆոնդի կոնֆիսկացիան և վաճառքը— այս բոլորը խարխլում եր հանրապետության հիմքերը և նախադրյալներ եր ստեղծում զինվորական դիկտատուրայի ռեժիմ սահմանելու համար:

Հանրապետությունը Կրոմվելի միանձնյա դիկտատուրայի

վերաներմելու համար վոչ պակաս նշանակություն ունեցավ Կրոմվելի հաջող արտաքին քաղաքականությունը և առևտրական քաղաքականությունը, վորը ղեկավարում էր պետական պրոտեկցիոնիզմի և մոնոպոլիստական արտոնությունների սկզբունքներով: Այդ քաղաքականությունը համապատասխանում էր խոշոր բուրժուազիայի և բուրժուականացած ազնվականության դաշինքի շահերին, դաշինք, վորը նպաստում էր Անգլիայում պրոտեկտորատի ռեժիմին անցնելուն, ապա նաև միապետության վերահաստատմանը:

1650 և 1651 թ. թ. հանրապետությունը հրատարակեց յերկու կարևոր ակտ, վորոնց նպատակն էր միևնույն չափով թե՛ ամրապնդել անգլիական առևտուրն և արդյունաբերությունը և թե՛ քայքայել հոլանդական առևտուրը: 1650 թվի որենքն ոտարերկրացիներին բոլորովին արգելում էր առանց կառավարության թույլտվության առևտուր անել անգլիական գաղութների հետ: 1651 թվի «Նավարկության ակտը» XVII դարի մերկանտիլիզմի ե՛լ ավելի տիպիկ արգասիք է հանդիսանում: Այդ ակտն ընդհանուր և հատուկ վորոշումներ էր պարունակում: Ընդհանուր վորոշումները նկատի ունեին ոտարերկրյա ապրանքների ներմուծումն անգլիական տիրույթները: Ակտը տարբերություն է դնում յեվրոպական և արտայեվրոպական ապրանքների մեջ: Արտայեվրոպական ապրանքները կարող են անգլիական տիրույթները ներմուծվել միայն անգլիական նավերով և նրանց անգլիական անձնակազմով: Յեվրոպական ապրանքները կարող են ներմուծվել կամ անգլիական նավերով, կամ այն յերկրի նավերով, վորտեղից դրանք ծագում են առնում: Հատուկ վորոշումները վերաբերում էին անգլիական ձկնորսությանը պաշտպանելուն. ձկնեղեն ապրանքները կարող էին ներմուծվել միայն այն պայմանով, վոր ձկան վորսը կատարել են անգլիական նավերը: Ձուկը կարելի յե արտահանել միայն անգլիական նավերով: Այս բոլոր դրույթներն ուղղված էին առաջին հերթին Հոլանդիայի դեմ, իսկ հատուկ դրույթները, վորոնք վերաբերում էին ձկնորսության,— բացառապես նրա դեմ: Անգլիացիների մեջ առանձնապես վրդովում էր այն հանգամանքը, վոր հոլանդացիները ձուկ էին վորսում անգլիական ջրերում և ապա այդ ձուկը ծախում էին անգլիացիներին:

Հոլանդիայի մերժումը՝ ճանաչել նավարկության ակտերը՝

1652 թվին հանգեց անգլո-հոլանդական պատերազմին, վորը պահանջեց Անգլիայից ռազմական մեծ լարվածություն և բավական խոշոր ծախսեր, վորոնք քայքայեցին գանձարանը։

Սակայն այդ պատերազմն Անգլիայի համար հաջող վախճանի հասավ: 1654 թվին կնքված հաշտության պայմանագրի համաձայն, Հոլանդիան ստիպված յեղավ ճանաչել Նավարկության ակտերը, վորոնք անկասկած վնաս հասցրին հոլանդական ծովային առևտրին և հեշտացրին անգլիական ծովագնացության և գաղութների հետ յեղած առևտրի հետագա զարգացումը:

Փորթուգալիայի հետ Կրոմվելի վարած պատերազմը նույնպես հաջող վերջացավ: Անգլիան նրա հետ կնքեց առևտրական ձեռնտու մի պայմանագիր, վորն անգլիական վաճառականներին հնարավորություն տվեց առևտուր անել փորթուգալական գաղութների հետ:

Դանիայի հետ կնքված պայմանագիրն անգլիական նավերի համար ապահովեց Զունդի վրայով դեպի Բալթյան ծովը տանող ճանապարհը: Ֆրանսիայի դեմ ուղղված պատերազմը, վորին մասնակցեց անգլիական հանրապետությունը, վերջացավ Ֆրանսիայի հետ հաշտություն, ապա և դաշինք կնքելով: 1656 թվին, արդեն Ֆրանսիայի հետ դաշնակցած, Կրոմվելը պատերազմ է սկսում Իսպանիայի դեմ, վոր մի ժամանակ Անգլիայի գլխավոր հակառակորդն եր, իսկ հիմա վո՛չ այնքան լուրջ հակառակորդը: Անգլիացիներին հաջողվում է իսպանացիներից հետ գրավել Դյունկիրխենը— կոնտինենտում գտնվող կարևոր հենակետը, վոր այնուհետև կորսվեց Կարլոս II-ի որոք, ռեստավրացիայի ժամանակաշրջանում: Իսպանացիների դեմ պատերազմ մղվեց նաև Արևմտյան Հնդկաստանում, վորտեղ անգլիացիները գրավեցին Ցամայկա կղզին:

Կրոմվելը ձգտում եր առևտրական հարաբերություններ հաստատել Մոսկովյան պետության հետ, այս դեպքում ևս շարունակելով Թյուդորյան տրադիցիաները: Սակայն Մոսկվայում, ուր Կրոմվելն ուղարկել եր իր գործակալ Պրիդոյին, բանակցությունները անհաջող անցան: Մոսկվայի պետությունում հոլանդացիները մրցում եյին անգլիացիների դեմ:

Կրոմվելի պրոտեկտորատը

Կրոմվելի հաղթանակը և արտաքին ու ներքին քաղաքականության բնագավառում նրա հաջողությունները նրա կողմը քաշեցին և նրա հետ հաշտեցրին

այնպիսի հասարակական խավերին, վորոնք առաջ օպոզիցիա եյին կազմում ինդեպենդենտների տիրապետության նկատմամբ,— խոշոր բուրժուազիային և նոր ազնվականության վերնախավերին, վորոնք առաջ հետևում եյին պրեսբիտերականներին: Բայց այլասերման յենթարկվեցին նաև իրենք, ինդեպենդենտները: Ինչպես հայտնի յե, ինդեպենդենտ գրանդները բավական շահվել եյին Անգլիայում յեղած հողային սեկուլյարիզացիայի հաշվին և մանավանդ Իռլանդիայում յեղած հողային կոնֆիսկացիաների հաշվին: Ինդեպենդենտական վերնախավի և խոշոր կապիտալիստական շրջանների միաձուլումը պետք է տեղի ունենար նաև այլ պատճառով: Հանրապետության առաջին քաղաքական և գաղութային ձեռնարկումները դրամական մեծ միջոցներ եյին պահանջում, քայքայում եյին ֆինանսները, յերկրում ուժեղանում եյին հարկային ճնշումը և տնտեսական դժվարությունները: Մասսաների հետզհետե աճող դժգոհությունը հեղափոխական ալիքի նոր վերելքի վտանգ եր ստեղծում իշխող դասակարգերի համար: Բուրժուազիայի և նոր ազնվականության վերնախավին Կրոմվելը թվում եր լավագույն յերաշխիք թե՛ նրանց «նվաճումները» վերևից, ռոյալիստական հակահեղափոխությունից պաշտպանելու և թե՛ ներքևից, հեղափոխության հետագա խորացումից ապահովելու համար: Կրոմվելի իշխանությունն աճում եր և հետզհետե դիկտատուրայի նմանվում: Խաղալով անգլիական հեղափոխության Ռոբեսպյերի դեր, նա այդ ժամանակ պատրաստվում եր հանդես գալ այդ հեղափոխության Նապոլեոնի դերում: 1653 թվի ապրիլի 20-ին Կրոմվելը ցրեց Յերկարատև պարլամենտի «պոչուկը», Յերկարատև պարլամենտի, վորը մի քանի զտումներից հետո ուներ ընդամենը հիսունից մի քիչ ավելի դեպուտատ և կորցրել եր ամեն մի կապ իր ընտրողների հետ և ամեն մի նշանակություն յերկրի քաղաքական կյանքում: Ինչպես ասում եր Կրոմվելը, «վոչ մի շուն չհաչեց», յերբ զինվորներն առանց քաշվելու վռնդում եյին դեպուտատներին: Այսպիսով «պոչուկի» լիկվիդացիան առաջադիմական փաստ յեղավ: «Անգլիական ժողովուրդը հանձին Կրոմվելի ցրեց Յերկարատև պարլամենտը»[1],— գրում եյին Մարքսն ու Էնգելսը 1848 թվին:

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. VII, եջ 7.

Կրոմվելը փորձեց «պոչուկի» փոխարեն ստեղծել ազգի ներկայացուցչության ավելի հեղինակավոր որգան, վորն այնուհանդերձ լիներ ավելի հլու գործիք նրա ձեռքում: 1653 թվի հուլիսին հրավիրվեց այսպես կոչված Փոքր կամ Բերբոնի (կաշչեյների) պարլամենտն այն թեկնածուներից, վորոնք ներկայացված եյին անգլիական ինդեպենդենտական համայնքների կողմից, ընդ վորում սպաների խորհուրդը քննարկեց և լրացրեց այդ թեկնածուների ցուցակը: Փոքր պարլամենտում բավական շատ եյին «հինգերորդ միապետության մարդիկ», վորոնք ինդեպենդենտների առաջավոր ռադիկալ ներկայացուցիչների հետ միասին կազմում եյին բավական խոշորաթիվ ձախ թեվ: Այսպիսով Կրոմվելը սխալվեց իր հաշիվների մեջ: Նա հաշվի չառավ այն, վոր վերջերում նորից բարձրանում եյին լևելլերական տրամադրությունները: Ճիշտ է, դրանք այնպես ուժեղ չեյին, ինչպես 1647 կամ 1649 թվականներին:

Բուրժուական շահերի բյուրեղացումը և հեղափոխությունից շահած բոլոր խավերի համախմբումը Կրոմվելի շուրջը, վոր տեղի յեր ունեցել հեղափոխության հետագա խորացումը կանխելու համար, հիմա անհրաժեշտ եյին դարձնում լևելլերական ծրագրի իրականացումը: Այս պատճառով հեղափոխության ռադիկալ գործիչների քաղաքական գաղափարները սկսում են թաղանթապատվել Քրիստոսի գալիք «հազարամյա» արքայության, կրոնական-կոմունիստական համայնքների անարխիական միության միստիկ ակնկալություններով: Այդպիսի գաղափարները հաջողություն ունեն հեղափոխական շարժման անկումի շրջանում, հատկապես այն խավերում, վորոնք հուսալքվել են իրենց քաղաքական իդեալների իրականացման հանդեպ: Հենց այդ գաղափարների և տրամադրությունների ներկայացուցիչներն եյին «հինգերորդ միապետության մարդիկ», վորոնք իրենց կողմնակիցներին հավաքագրում եյին առավելապես քաղաքային մանր բուրժուազիայի և արհեստավոր բանվորների անտեսապես քայքայվող տարրերից: Բայց նրանց միջավայրում կային նաև բանակի գնդապետներ և նույնիսկ մի քանի սպաներ:

Իր գոյության կարճատև ժամանակամիջոցում Փոքր պարլամենտը մեծ աշխատանք կատարեց, փորձելով թեթևացնել բնակչության լայն շրջանների դրությունը: Ակցիզների և այլ

անուղղակի հարկերի գանձումը վերցվեց կապալառուներից և հանձնվեց պետական աստիճանավորների իրավասությանը. Հրատարակվեցին մի շարք ակտեր պետական պարտքի և հարկերի ստուգման խիստ հաշվետվության սահմանելու մասին: Այնուհետև պարլամենտն աշխատեց բանակը և պաշտոնյաների ռոճիկները կրճատելու միջոցով պակասեցնել պետական ծախսերը: Այդ նրան հնարավորություն տվեց թեթևացնել հարկային բեռը, որը ընկնում էր բնակչության վրա: Ենթադրվում էր պարզեցնել դատավարությունը և կարգավորել դատական կոդեքսը: Պարլամենտի «սրբերը»— այսպես էին անվանում բարեպաշտ պանդուխտներին, «հինգերորդ միապետության մարդկանց»,— պնդում էին յեկեղեցին պետությունից բաժանելու վրա և քաղաքացիական ամուսնություն սահմանեցին: Վերջապես, հրատարակվեց մի օրենք՝ բանտարկված պարտապաններին ազատելու մասին և մշակվեց չքավորներին պետական օգնություն կազմակերպելու մի օրինագիծ:

Պարլամենտի այդ գործունեությունը հասկանալի բողոք առաջացրեց այն միջավայրում, որը շրջապատում էր Կրոմվելին: Պարլամենտի չափավոր մեծամասնությունը սկսեց դիմադրել ձախ թևի հետագա ձեռնարկումներին: 1653 թվի դեկտեմբերի 12-ին այդ մեծամասնությունը բուրժուազիայի և ազնվականության արտապարլամենտական շրջանների ճնշման տակ պարլամենտը ցրված հայտարարեց, ճնշելով ձախերի բողոքները, և ամբողջ իշխանությունը հանձնեց Կրոմվելին: Մի քանի օրից հետո սպաների խորհուրդը «Կառավարման գործիք» անվան տակ ներկայացրեց սահմանադրական մի նոր նախագիծ, որի համաձայն հանրապետությունը ցմահ պետք է գլխավորեր պրոտեկտորը (բառացի՝ պաշտպանը, հովանավորը), որը պարլամենտի հետ միասին կառավարում է յերկիրը: Առաջին լորդ-պրոտեկտոր Կրոմվելը դեկտեմբերի 16-ին յերդում տվեց նոր սահմանադրությանը հավատարիմ մնալու մասին: Այդ սահմանադրությունը կազմված էր «Առաջարկների գլուխների» նշանակալից ազդեցության տակ,— որոնք 1647 թվին առաջադրվեցին Կրոմվելի բանակի ինդեպենդենտական սպայության կողմից: Սահմանադրությունը նախատեսում էր փոփոխություններ մտցնել դեպուտատներին ընտրական օկրուգների վրա բաժանելու մեջ: Շատ քաղաքներ և ավաններ, որոնք գյուղե-

րում նոր արդյունաբերության զարգացման կապակցությամբ կորցրել էին իրենց նախկին նշանակությունը, զրկվեցին պարլամենտի դեպուտատներ ընտրելու իրավունքից, դրա փոխարեն ավելացվեց կոմսությունների և գյուղական վայրերի դեպուտատների թիվը: Այսպիսով օկրուգների վերաբաժանումը որոշ չափով համապատասխանում էր այն փոփոխություններին, որոնք կատարվել էին արդյունաբերության զարգացման ազդեցության տակ: Այնուհետև սահմանվեց 200 ֆունտ ստերլինգ տարեկան եկամտի ընտրական ցենզ. այն ժամանակվա համար դա բավական խոշոր գումար էր, որ նշանակում էր չափազանց բարձրացնել առաջվա ընտրական ցենզը, որի համաձայն պետք էր ունենալ տարեկան առնվազն 40 շիլլինգ եկամուտ ազատ ֆրիհոլդ և որի դեմ 1647 թվին լևելլերները բողոքեցին բանակի խորհրդում: Այսպիսով միջին և մանր բուրժուազիան, էլ չխոսելով բանվոր մարդկանց մասսայի մասին, զրկվեց ընտրական իրավունքներից: Ինդեպենդենտների հայացքներին միանգամայն համապատասխան՝ սահմանադրությունը դավանության ազատություն սահմանեց: Բացառություն արվեց միայն անգլիկանական եկեղեցու և կաթոլիկության— ռոյալիզմի և հակահեղափոխության հենարանների համար:

1654 թվին նոր սահմանադրության հիման վրա հավաքվեց Կրոմվելի առաջին պարլամենտը: Գույքային բարձր ցենզն արդարացրեց իրեն. պարլամենտ կարող էին ընկնել միայն «սեփականության և կարգ ու կանոնի» ներկայացուցիչները, ազնվականները, խոշոր և մասամբ միջին բուրժուազիան: Բայց այդ պարլամենտում էլ գտնվեցին մարդիկ, որոնք բողոքում էին Կրոմվելի դիկտատուրայի դեմ: Նրանք հեռացվեցին պարլամենտից: Բայց երբ պարզվեց, որ այդպիսի պարլամենտը էլ փորձում էր սահմանափակել լորդ-պրոտեկտորի իշխանությունը, Կրոմվելը նրան էլ ցրեց և սկսեց կառավարել միանձնյա կարգով: Քանի որ երկրում շարունակվում էին ռոյալիստական դավադրությունները, իսկ մյուս կողմից հեղափոխության հետևանքով կապիտալիստական տնտեսության ամրապնդումը նպաստում էր մանր, անմիջական արտադրողների պրոլետարացմանը և դրանով ավելացնում դժգոհների թիվը, ուստի Կրոմվելը կարող էր առանց ջանք թափելու ոչ միայն միանձնյա դիկտատուրայի ռեժիմ սահմանել, այլև այդ դիկտատուրային զինվորական բնույթ

տալ: Ամբողջ Անգլիան բաժանվեց 11 օկրուգների, վորոնց գլուխ նշանակվեցին անսահմանափակ լիազորություններով օժտված «գեներալ-մայորները», վորոնք զբաղվում եյին հետախուզությամբ և ճնշում ամեն տեսակ ապստամբությունները, լինեյին դրանք աջից—ռոյալիստների կողմից, թե ձախից—լևելլերների և դիգգերների կողմից: Գործելով այսպես, Կրոմվելն ամրապընդում եր հասարակական այն խավերի դրությունը, վորոնց շահերի համար կատարվել եր հեղափոխությունը: Վերջինները հետզհետե ավելի շատ եյին հաստատուն ու անդրդվելի կարգ մտցնում: 1656 թվին, յերբ ֆինանսական կարիքը Կրոմվելին ստիպեց վերստին գումարել պարլամենտը, վերջինս առաջարկեց վերականգնել լորդերի պալատը, պետական յեկեղեցին և նույնակ միապետությունը, այսինքն այն հաստատությունները, վորոնք կարող եյին քաղաքական սանկցիա և կրոնական օրհնություն տալ հաղթանակած բուրժուազիային և նոր ազնվականությանը: Պարլամենտը Կրոմվելին թագ առաջարկեց, սակայն բանակի առաջնորդների զայրույթը Կրոմվելին ստիպեց հրաժարվել այդ առաջարկից:

Բուրժուազիայի և ազնվականության ուժեղացող ռեստավրացիոն տենդենցները Կրոմվելի օրոք չիրականացան միայն այն պատճառով, վոր Կրոմվելին դեռևս պաշտպանում եր բանակը, վորի մեջ ուժեղ եյին դեմոկրատական տրամադրությունները: Բայց քաղաքական դրությունը շարունակում եր լարված մնալ: 1658 թվի սեպտեմբերին Կրոմվելը մեռավ, իսկ նրա մահով վերացան «հաստատուն կարգի» վերականգնման վերջին խոչընդոտները: Հեղափոխությունը, վոր կապիտալիստական տնտեսության համար հետագա ազատ զարգացման ճանապարհ եր հարթել, վերջացավ: Այն իրականացվել եր ժողովրդական լայն մասսաների արյունով, վորոնց համար բերեց կապիտալիստական շահագործման միայն հետագա ուժեղացում, միաժամանակ նրանց զրկելով այն յերաշխիքներից, վորոնք հատուկ են ֆեոդալական տնտեսությանը և հասարակությանը՝ անմիջական արտադրողի մանր, տնտեսապես անկախ տնտեսության իմաստով: Բայց այն հարկավոր եր վորպես մի նոր, անհրաժեշտ օղակ համաշխարհային պատմական զարգացման պրոցեսում, բերելով իր հետ այն բոլոր հեղափոխական հետևանքները, վորոնք կապված եյին կապիտալիստական տնտեսության և բուրժուազիայի

տիրապետության հետ,— պրոլետարիատի աճն ու կոնսոլիդա-ցիան վորպես ապագայի սոցիալիստական հեղափոխության նա-խադրյալ:

Բայց այս վերջին հետևությունն անհասկանալի չէր ժամա-նակիցների համար: Հեղափոխական մանր-բուրժուական մաս-սաները, վորոնք ամենից շատ նպաստեցին նոր կարգի հաղթա-նակին և վորոնք միևնույն ժամանակ դարձան այդ նոր կարգի առաջին զոհը, միանգամայն հասկանալի պատճառով խորը հի-ասթափություն էյին ապրում: Վոմանց մոտ ամենօրյա հոգսով ճզմված, վոմանց մոտ էլ այն արտահայտվում էր միստիկական տրամադրություններով, վորոնք նրանց թույլ էյին տալիս ա-նիծված իրականությունից հեռանալ դեպի Ներքին հայեցողության խորքը և դեպի անհուսալիորեն պասիվ դիմադրությունը գո-յություն ունեցող կարգին: Սրանք են այն պատճառները, վո-րոնցով բացատրվում միստիկական բազմաթիվ աղանդները, մանա-վանդ կվակերների (դողացողների,— այսպես էյին կոչվում այդ աղանդի հետևողները, վորովհետև աղոթքի ժողովներում նը-րանք էքստազի մեջ էյին ընկնում, դողդողում ու ցնցվում) կամ «Ներքին լույսի բարեկամների» աղանդը, վորոնց մոտիկ էյին իրենց կյանքի վերջին տարիներում այնպիսի մարդիկ, ինչպես Ջոն Լիլբերնը և Ուինստենլին: Առաջվա հեղափոխական վոգե-վորությունից նրանց մեջ մնում էյին՝ համակրանքը հանդուրժո-ղության նկատմամբ և ատելությունը Կրոմվելի անձնական դիկտատուրայի ռեժիմի դեմ, վորի համար էլ նրանք շարունակ հալածանքների էյին ենթարկվում: Միայն 1651—1656 թ. թ. ժամանակաշրջանում այդ աղանդի մոտ 2 հազար հետևորդներ նետվեցին բանտերը:

ԳԼՈՒԽ XV

ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱՆ ՅԵՎ «ՊԱՆԾԱԼԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

ԱՆԳԼԻԱՆ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Ռեստավրացիայի նախադրյալները։ Ռեժիմի ճգնաժամը

Պրոտեկտորատի վերջին տարիներում Անգլիան սկսում է տնտեսական ավելի մեծ դժվարություններ կրել։ Իսպանիայի դեմ մղվող երկարատև պատերազմը քայքայում էր անգլիական առևտուրը։ Անգլիական վաճառականները և նավատերերը վնասներ էին կրում իսպանական շուկան կորցնելուց և ծովահենների հարձակումից, որոնց մեջ, ի միջի այլոց, քիչ չէին ռոյալիստ-էմիգրանտները։

Անգլիական վաճառականները բողոքում էին թե հոլանդացիների մրցակցության դեմ և թե Բալթյան ծովում անգլիական առևտրի կրած դժվարությունների դեմ, որոնք ստեղծվել էին 1657—1666 թ. թ. Դանիայի և Շվեդիայի միջև եղած պատերազմի շնորհիվ։

50-ական թվականների վերջն արդեն նշված է տնտեսական լուրջ ճգնաժամով։ Գեներալ Մոնկին ուղղված խնդրագրերը, որոնք արվում էին զանազան կոմսություններից, արձանագրում էին առևտրի և արդյունաբերության անկումը, գործազրկության աճը և երկրի ընդհանուր քայքայումը։

Դրան պետք է ավելացնել կառավարության ֆինանսական մեծ դժվարությունները, որոնք մատնում էին ֆինանսական կատաստրոֆին։ Հողային այն ֆոնդը, որ նա ուներ հանրապետության առաջին տարիներում, պրոտեկտորատի վերջում զգալի չափով պակասել էր։ Պարտքերը վճարելու միջոցներ չկային։

Հողատերերի և առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի այն ներկայացուցիչներն ու խնդրագրերը, որոնք վերաբերում են 1659 թվին, ոչ միայն տալիս են տնտեսության խոր ճգ–

նաժամի պատկերը, այլև լի յեն անհանգստությամբ՝ յերկրում նոր խռովության և հուզումների հնարավորության առթիվ: Բուրժուազիան և ջենտրիները վախենում են հեղափոխական նոր ալիքից, վոր կարող է բարձրանալ ձգձգվող պատերազմի և տնտեսական դժվարությունների կապակցությամբ: Այդ հնարավոր բարդությունների հանդեպ տիրող դասակարգը պատրաստ եր համաձայնության գալ ռոյալիստների հետ:

Այսպիսի «հանգամանքներում— ներքին հակասությունները սրող տնտեսական ընդհանուր ճգնաժամի պայմաններում, ստորին խավերի շարժման և հեղափոխական նոր ալիքի բարձրացման սպառնալիքի պայմաններում— տեղի յե ունենում պրոտեկտորատի ռեժիմի անկում, տեղի յե ունենում Ստյուարտների միապետության վերահաստատում, վոր ըստ եյության արդեն նախապատրաստվել եր Կրոմվելի կառավարման վերջին տարիներում յեղած մի շարք քաղաքական և սահմանադրական փոփոխություններով:

Կրոմվելի վորդի Ռիչարդը բոլորովին անշան մի անձնավորություն եր: Նրան շուտով պաշտոնանկ արեց սպայական վերնախավը— սպայական խորհուրդը, վորին և փաստորեն անցավ իշխանությունը: Սակայն այս վերջինս ել չափազանց անկայուն յեղավ: Այդ «կապիտաններին», «զրահավորներին և նիզակավորներին», ինչպես նրանց հեգնանքով անվանում է Ստյուարտների ռեստավրացիայի ջատագով, պատմագիր Մաքոլեյը, այնպես ել չհաջողվեց կայուն կառավարություն կազմել:

Ռեստավրացիան յեվ հակահեղափոխական տեռոր Ստյուարտների ռեստավրացիայից հետո

Այսպիսի պայմաններում նոր ազնվականության և բուրժուազիայի շարքերին պատկանող «կրթված հայրենասերները» առիպված յեղան մտածել այն մասին, վոր պետք է «հեղափոխության նվաճումներն» իրենց համար ամրապնդել մի այլ ճանապարհով— ֆեոդալիզմի նկատմամբ կոմպրոմիսի դիմելու և միապետությունն այն վորոշակի պայմաններով վերահաստատելու ճանապարհով, վոր շարադրել եր Կարլոս II-ը, մահապատժի յենթարկված թագավորի վորդին, 1660 թվի Բրեդայի դեկլարացիայում: Կարլոս II Ստյուարտի անգլիական գահ նստելու հիմնական պայմաններից մեկն եր ռոյալիստներից, թագից ու յեկեղեցուց գրավված հողերը թողնել նոր տերերին,— այն հողերը, վորոնք հեղափո-

խության ժամանակ զանազան յեղանակներով անցել եյին այդ նոր տերերին:

Մյուս պայմանն եր՝ կրոնի ազատություն տալ: Սպաների նախաձեռնությամբ գումարվեց հատուկ պարլամենտ (կոնվենտ), վոր կազմված եր գլխավորապես պրեսբիտերականներից, աջ ինդեպենդենտներից և մեծ թվով ռոյալիստներից: Այդ պարլամենտը վերոհիշյալ պայմանները բավարար համարեց համաձայնություն կնքելու համար: Լոնդոն ժամանելուց հետո թագավորը ստիպված յեղավ ստորագրել սահմանադրական մի ակտ ևս, վորը հաստատում եր պարլամենտի առաջվա բոլոր արտոնությունները և նրա իրավունքները՝ թագավորության հարկերի ու ֆինանսների բնագավառում: Վորովհետև հեղափոխության ժամանակ գահի բոլոր դոմենները կոնֆիսկացիայի եյին յենթարկված և գրեթե ամբողջովին վաճառված եյին ու դրա հետևանքով թագավորը չուներ յեկամտի սեփական աղբյուրներ, պարլամենտը մի գումար նշանակեց թագավորին և արքունիքը պահելու համար (գահաթերթ): Թագավորը հիմա չուներ նաև մշտական զորք: Այս ճանապարհով նրա ձեռքից խլվեցին թագավորական իշխանությունն ամրապնդելու յերկու ամենաեյական միջոցները: Իսկ ինդեպենդենտական բանակն արձակված եր: Դրության տերը դարձավ պարլամենտը, այսինքն ըստ գործի եյության այն յերկու դասակարգերը, վորոնք օգտագործեցին հեղափոխությունը,— բուրժուազիան և նոր ազնվականությունը:

Սակայն Ստյուարտները, վոր Անգլիա եյին վերադարձել չարացած եմիգրանտների ամբոխի ուղեկցությամբ, վորոնք տուժել եյին խոշոր հողատերերի հեղափոխությունից,— շուտով մոռացան իրենց տված բոլոր խոստումները: Նախկին քաղաքական աքսորականներն ու եմիգրանտներն ուզում եյին առավելագույն չափով վարձատրվել այն բոլոր կորուստների համար, վոր նրանց պատճառել եր հեղափոխությունը: Մոռացվեցին նաև հեղափոխության մասնակիցներին ներում շնորհելու խոստումները: Սկսվում է «արքայասպանների» դեմ ուղղված դատաստանը, վորն ընդունում է ամենավայրենի ձևեր, ընդհուպ մինչև Կրոմվելի և Այրտոնի դիակները կախելը:

Խոստացված կրոնական համբերատարության փոխարեն վերահաստատված միապետությունը վերականգնեց իր հին հենա-

բանը— անգլիկանական յեկեղեցին, որը կրկին, ինչպես առաջին Ստյուարտների օրոք, պետք է ծառայեր իբրև միապետական ռեժիմի հենարան: Նորից սկսվում են պրեսբիտերական քահանաների և հերետիկոսների հետապնդումները: Հետ են գրավվում յեպիսկոպոսական հողերը և այն հողերի մի մասը, որոնք 40-ական թվականներին գրավվել էին ռոյալիստ-դելինկվենտներից:

Ճիշտ է, հիմնական հողային փոփոխությունները, որ կապված էին հեղափոխության հետ, այնուամենայնիվ ուժի մեջ մնացին: Կարլոս II-ը ստիպված յեղավ ճանաչել և հաստատել ասպետական հողատիրության վերացումը ևս, որ կատարվել էր 1646 թվին:

Ռեստավրացիայի տնտեսական քաղաքականությունը

Ստյուարտների ժամանակ ցանկապատումները շարունակվում են և ուժեղանում: Շարունակվում է նաև ազնվականական և բուրժուական հողատիրության աճը: Գյուղացիությունը պարզապես պակասում է, ուժեղանում է գյուղացիական հողերի և հողամասերի գնումը: Միաժամանակ աճում է կապիտալիստական ֆերմերությունը: Ռեստավրացիայի եպոխայի օրենսդրությունը ձգտում է բավարարել կապիտալիստական ֆերմերական տնտեսության պահանջն աշխատող ձեռների նկատմամբ, հրատարակելով այսպես կոչված «նստակեցության օրենքները», որոնք բանվորներին արգելում էին ինքնակամ հեռանալ այն ծխերից, ուր նրանք վարձով աշխատել են խոշոր ֆերմաներում: Ընդհակառակը, յեթե տվյալ ծխում աշխատող ձեռների ավելցուկ էր նկատվում, ապա ծխի իշխանություններն իրավունք ունեին արտաքսել գյուղատնտեսական բանվորներին— ուղարկել իրենց բնակավայրերը:

Գյուղատնտեսությունը խրախուսելու նպատակով Ստյուարտները սահմանափակում են օտարերկրյա էժան հացի ներմուծումն Անգլիա, հացի, ինչպես նաև անասնաբուծական արտադրության մթերքների— անասունների և մսի ներմուծման մաքսեր են սահմանում:

Ագրարային պրոտեկցիոնիզմի հետ մեկտեղ մի շարք միջոցներ են կիրառում արդյունաբերությունը խրախուսելու համար: Մերկանտիլիզմը, այսինքն ձգտումը՝ համապատասխան ձեռ-

նարկումների միջոցով ձեռք բերել առևտրական շահավետ բալանս և առավելագույն քանակությամբ դրամ ներգրավել տվյալ յերկիրը, ռեստավրացիայի տնտեսական քաղաքականության հիմքն էր: Գաղութներից հումք ներմուծելով, Անգլիան աշխատում է գլխավորապես արդյունաբերական ապրանքներ արտահանել: Հայտնի տնտեսագետ Պետտին պլաններ էր կազմում արագորեն զարգացող անգլիական մանուֆակտուրաների համար լայնորեն օգտագործելու իռլանդական բուրդը:

XVII դարի վերջին տասնամյակներում արագությամբ աճում են մանուֆակտուրաները, զարգանում է մանավանդ բամբակե գործվածքների արդյունաբերությունը՝ կապիտալիստական մանուֆակտուրայի ձևով: Ավելանում է ակցիոներական խոշոր ընկերությունների թիվը: Աճում է առևտրական նավատորմը:

Նախկին ընտրական սիստեմի վերականգնումը ռեստավրացիայի ժամանակաշրջանում

Այսպիսով անգլիական բուրժուազիան և հողատեր ազնվականության մի զգալի մասը ռեստավրացիայի ժամանակաշրջանում շարունակում էին ե՛լ ավելի արագ քայլերով ընթանալ ամբողջ տնտեսության կապիտալիստական վերակառուցման ուղիով: Ընդ սմին Ստյուարտները թե՛ հեղափոխությունից առաջ և թե՛ նրանից հետո, մանավանդ իրենց արտաքին քաղաքականության մեջ, այլև ներքին քաղաքական մի շարք ձեռնարկումներում միշտ չէ, որ հաշվի էին առնում բուրժուա-ազնվականական Անգլիայի շահերն ու պահանջները:

Բուրժուազիան շուտով սկսում է սուր կերպով զգալ մի շարք անհարմարություններ և վնասներ, որոնք բխում էին ֆեոդալական արիստոկրատիային նրա արած հարկադրական զիջումից, որի հետևանքը յեղավ ռեստավրացիան և վերադարձ դեպի հին, դեպի առաջին Ստյուարտների վատթարագույն տրադիցիաները:

Մենք տեսանք, որ հեղափոխությունը հերթի դրեց ընտրական լայն ռեֆորմի պրոբլեմը: Այն ընտրական սիստեմը, որ մտցվեց 1653 թվի սահմանադրությամբ, չնայելով ընտրական բարձր ցենզին, այնուամենայնիվ թույլ էր տալիս ընտրական օկրուգների որոշ վերաբաշխում և մինչև որոշ աստիճան համապատասխանում էր արդյունաբերության ռայոնների վերա-

բաշխմանը, արդյունաբերական նոր կենտրոնների աճմանը և առաջվա ա՛յն մի շարք քաղաքների ու ավանների տնտեսական նըշանակության անկմանը, վորոնք առաջ ոգտվում էյին ընտրական իրավունքներով: Կարլոս II-ը վերականգնեց առաջվա, խիստ հնացած ընտրական սիստեմն իր «փտած ավաններով»: Այդ ընտրական սիստեմը, վոր ապահովում եր խոշոր հողատերերի տիրապետությունը պարլամենտում, հակասում եր արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի շահերին:

Ռեստավրացիայի արտաքին քաղաքականությունը

Բուրժուազիայի մեջ ծայրահեղ դժգոհություն եր առաջացնում նաև Կարլոս II-ի շռայլությունը, նրա արքունիքի պերճանքն ու զեղխությունը, նրա գաղտնի դիպլոմատիան և արտաքին քաղաքականությունը: Կարլոս II-ի կապերը Լյուդովիկոս XIV-ի հետ, նրա պատրաստակամությունը— անգլիական մաքսային և արտաքին քաղաքականությունը յենթարկելու Ֆրանսիայի շահերին, վորի մեջ, Իսպանիայի թուլացումից հետո, բուրժուազիան տեսնում եր Անգլիայի խոշորագույն կոնկուրենտն ու մրցակիցը,— այս բոլորն ե՛լ ավելի յեր ուժեղացնում հուզումն առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շրջաններում:

Անգլիայում ծայրահեղ վրդովմունք առաջացրեց այն, վոր Կրոմվելի նվաճած Դյունկիրխենը 1664 թվին վաճառվեց Ֆրանսիային: Այդ առնչությամբ ուժեղանում են հարձակումները թագավորի ֆավորիտ Կլարենդոնի քաղաքականության վրա և այդ հարձակումների հետևանքով Կլարենդոնն աքսորվում է Անգլիայից: Սակայն Կլարենդոնի անկումից հետո ե՛լ Կարլոս II-ի արտաքին քաղաքականությունն ավելի ընդունելի չդարձավ անգլիական բուրժուազիայի համար: 1667 թվին Կարլոս II-ը Լյուդովիկոս XIV-ի հետ կնքում է մի գաղտնի պայմանագիր, վորի համաձայն վերջինին խոստացվում է Անգլիայի աջակցությունը ֆրանսիացիների կողմից Նիդերլանդների մի մասը գրավելու դեպքում, ինչպես նաև խոստացվում է Անգլիայում կաթոլիկություն մտցնել: Կարլոս II-ն այդ խոստումների դիմաց Լյուդովիկոս XIV-ից մի խոշոր գումար ստացավ:

Կարլոս II-ի պայքարը պառլամենտի դեմ: Վիգերի և թորիների կուսակցությունների գոյացումը

Կարլոս II-ի այդ յերկդիմի արտաքին քաղաքականության հողի վրա խիստ վատանում են թագավորի և պառլամենտի հարաբերությունները: 1672 թվին «կրոնական համբերատարության դեկլարացիայի» պատրվակով և ակներեվաբար Լյուդովիկոս XIV-ին տրված խոստումները կատարելու համար Կարլոս II-ը փորձում է քաղաքական իրավունքներ տալ կաթոլիկներին: Պառլամենտը վճռականապես դեմ յեղավ այդ դեկլարացիային և թագավորը վերջիվերջո հրաժարվեց դրանից, ստանալով պառլամենտից դրամական խոշոր նպաստ: Հետեվյալ տարում, 1673 թվին Կարլոս II-ը նույնիսկ վերականգնեց յերդման ակտը (Test act), վորի համաձայն անգլիկանության պատկանելը պետական պաշտոններ գրավելու պայման եր հանդիսանում, թեպետ այդ ձեռնարկումը հակասում եր Լյուդովիկոս XIV-ի տրված խոստմանը— Անգլիայում կաթոլիկություն մտցնելուն:

Բացի պառլամենտի սուբսիդիաներից և Լյուդովիկոս XIV-ի նվերներից, Կարլոս II-ը փոխառություններ եր վերցնում անգլիական ֆինանսիստներից և բանկիրներից: Սակայն, պարտքով փող վերցնելով, կառավարությունն այնուհետև հաճախ հրաժարվում եր այդ պարտքերը վճարելուց, իրեն հայտարարելով սնանկ: Այդ ծայրահեղորեն վրդովում եր վարկատուներին և ուժեղացնում ոպոզիցիան Կարլոս II-ի դեմ:

Ոպոզիցիոն տրամադրությունները առանձնապես սուր ձևեր են ստանում գահաժառանգության հարցի կապակցությամբ: Կարլոս II-ին պետք է հաջորդեր նրա ե՛լ ավելի անժողովրդական յեղբայրը, ապագա Հակոբ II-ը: Այդ չափազանց ռեակցիոն տրամադրություններ ունեցող մի մարդ եր, սերտ կապված եր ֆրանսիական արքունիքի հետ և այն էլ կաթոլիկ եր:

Յերկրում ուժեղանում է «վիգերի» ոպոզիցիան: Հեղափոխության ժամանակ «վիգեր» (whigs) կամ վիգգամորներ whiggamore) եյին անվանում Շոտլանդիայի լեռնցիներին, անհաշտ տրամադրված պրեսբիտերական-կովենանտներին: Հիմա սկսեցին հեղնաբար վիգեր անվանել Հակոբի, Յորքի հերցոգի, անգլիական գահաժառանգի հակառակորդներին: 1679—1680 թ. թ. պառլամենտում վիգերը կտրականապես պնդում եյին, վոր—

պեսզի հրատարակվի մի բիլ՝ Հակոբին, որպես կաթոլիկի, գահից հեռացնելու մասին:

Հակոբի կողմնակիցներին սկսեցին անվանել «տորիներ»,— այն բառը, որով առաջ անվանվում էին իռլանդական պարտիզանները, անհաշտ կաթոլիկները, որոնք համառ պայքար էին մղում հանրապետության զորքերի դեմ:

1679 թվին վիգերին հաջողվում է անցկացնել հռչակավոր Habeas Corpus Act-ը, որը սահմանափակում էր կամայական ձերբակալությունները: Ըստ օրենքի՝ ձերբակալվողին պետք է ներկայացվի դատավորի գրավոր հրամանը. հակառակ դեպքում ձերբակալվածն իր կամ մերձավորներից որևէ մեկի հայտարարությամբ կարող է պահանջել, որպեսզի իրեն քսանչորս ժամվա ընթացքում կամ ներկայացնեն դատարան, կամ ազատեն: Այդ կապակցությամբ վիգերի և տորիների միջև մղվող պայքարը սպառնում էր վերածվել զինված ընդհարման: Քաղաքական մթնոլորտի լարվածությունը վերացնելու և տորիների դիրքն ուժեղացնելու նպատակով Կարլոս II-ը պարլամենտի նիստը փոխադրեց Օքսֆորդ, ուր ուժեղ էին տորիական տարրերը: Վիգերը զինված ներկայացան պարլամենտի նիստին: Թվում էր, թե Անգլիան դարձյալ գտնվում է քաղաքացիական պատերազմի նախօրյակին:

Սակայն Կարլոս II-ին հաջողվեց փրկել դրությունը և մի շարք վիգերի ձերբակալելու միջոցով վերացնել հետագա կոնֆլիկտի հնարավորությունը: Մի քանի վիգեր թագավորի դեմ դավադրություն կազմակերպելու մեղադրանքով նույնիսկ մահապատժի ենթարկվեցին:

Տորիների դրությունն ամրապնդելու համար Կարլոս II-ը նրանց օգտին նորանոր փոփոխություններ է մտցնում ընտրական սիստեմի մեջ: Տորիները պարլամենտում մեծամասնություն են տանում: Սակայն Կարլոս II-ն իր թագավորության վերջին տարիներում (1681—1685 թ. թ.) առհասարակ կառավարում էր առանց պարլամենտի, վերադառնալով իր չարաբաստիկ հոր պրակտիկային:

Հակոբ II-ը յեվ նրա գահընկեցությունը

1685 թվին Կարլոս II-ի մահից հետո գահ նստեց նրա յեղբայրը Հակոբ II-ը: Ինչպես և պետք էր սպասել, վերջինս էլ ավելի վճռական աբսոլուտիստական քաղաքականություն վարեց: Հակոբ II-ն

ըստ յերևույթին լրջորեն մտածում եր կատարել Լյուդովիկոս XIV-ին իր յեղբոր տված խոստումը— կաթոլիկությունը մտցնել Անգլիայում: Զնայելով յերդման ակտին, վոր ընդունվել եր 1673 թվին, նա կաթոլիկներին նշանակում է պետական կարևոր պաշտոնների: 1687 թվին հրատարակվում է կրոնական հանդուրժողության ակտը, վորը սանկցիա յե տալիս կաթոլիկների առաջվա նշանակումներին և նոր նշանակումներ է նախապատրաստում: Ըստ յերևույթին նա մտադրվում եր վոչ միայն վերականգնել կաթոլիկությունը, այլև վերահաստատել յեկեղեցական-վանքական հողատիրությունը, վորը վոչնչացված եր դեռ Հենրիխ VIII-ի ռեֆորմներով:

Այսպիսով Հակոբ II-ը կանգ չեր առնում իր կապն անգլիկանական յեկեղեցու հետ խզելու առաջ, վորի մեջ առաջին Ստյուարտները տեսնում եյին իրենց իշխանության նեցուկը, անգլիական աբսոլյուտիզմի հենարանը:

Անգլիկանական յեկեղեցու հետ յեղած բացահայտ կոնֆլիկտը միայն արագացրեց Հակոբ II-ի անկումը: Նրա հետ միասին ընկավ նաև Ստյուարտների դինաստիան:

1688 թվի «պանծալի հեղափոխությունը»

1688 թվի հեղաշրջումը, վորի հետևանքով փոխվեց անգլիական գահի դինաստիան և վորը հայտնի յե «պանծալի հեղափոխություն» ամպագոռգոռ անունով, կատարեցին վիգերը, վորոնք միացել եյին անգլիկանական հոգևորականության և տորիների կուսակցության մի մասի հետ: Այդ «հեղափոխությունը», վոր այնքան փառաբանված է վիգական ուղղության պատմիչների կողմից, անկասկած նպաստեց վիգական կուսակցության սկզբունքների իրականացմանը, վիգական կուսակցության, վորը կողմնակից եր թագավորական իշխանությունը սահմանափակելուն և պառլամենտի լիազորությունների ընդլայնելուն: Այնուամենայնիվ 1688 թվի հեղաշրջումը մի չնչին եպիզոդ եր՝ համեմատած XVII դարի 40-ական թվականների և 50-ական թվականների սկզբի փոթորկալից իրադարձությունների հետ:

1688 թվին խոսքը վերաբերում եր միայն այն բանին, վոր մեկ թագավորը— Ստյուարտների ծայրահեղորեն անժողովրդական դինաստիայի ներկայացուցիչը փոխարինվի անգլիական գահի մի ուրիշ թեկնածույով, վորն ավելի հարմար եր անգլիական բուրժուազիայի և նրա հետ կապված՝ անգլիական ազնվակա-

նության մի մասի համար: Բնորոշ է, վոր այդ փոխարինումը, վորի օգնությամբ անգլիական պարլամենտը փորձում էր իր օգտին մի շարք էական սահմանափակումներ մտցնել թագի լիազորությունների և իրավունքների մեջ, կատարվեց լեգալության սկզբունքներն ամենախիստ կերպով պահպանելով հանդերձ, վորպեսզի միանգամայն անհնարին դառնար՝ այն միտքը, թե 1688—1689 թ. թ. տեղի յե ունեցել 40-ական թվականների «մեծ խռովության» իրադարձություններին նմանվող վորևէ բան,— վորոնց հետևանքը յեղավ միապետության անկումը:

1688 թվի հունիսին անգլիական պարլամենտը դիմեց Վիլհելմ Որանցուն, Հոլանդիայի շտատհալտերին և Մարիային— Հակոբ II-ի դստեր ամուսնուն, խնդրելով ժամանել Անգլիա և գրավել անգլիական գահը, վորը թափուր էր հայտարարվել Հակոբ II-ի իբր թե հրաժարվելու հետևանքով: Ճիշտ է, վերջինը բնավ չէր էլ մտածում հրաժարվելու մասին, բայց հեղաշրջումը կազմակերպողների համար կարևոր էր պահպանել օրինականության ֆիկցիան: Իսկ յերբ Հակոբ II-ը, վախենալով Վիլհելմ Որանցու զորքերի Լոնդոնին մոտենալուց, իսկապես վորոշեց փախչել, ապա նրան լիակատար հնարավորություն տրվեց Անգլիայից հեռանալու: Հետագայում նրա բոլոր փորձերը, ինչպես նաև նրա վորդու, այսպես կոչված «հավակնորդի» փորձերը— վերադարձնել կորցրած գահը— միշտ ձախողվում էին, հանդիպելով ժողովրդի լիակատար անտարբերությանը և բուրժուազիայի ատելությանը՝ դեպի տապալված դինաստիան: 1688 թ. նոյեմբերին Վիլհելմը և Մարիան մտան Լոնդոն, իսկ 1689 թվի փետրվարի 13-ին նրանք «ընդհանուր ցնծության, փողերի ու ծնծղաների հնչյունների ներքո հռչակվեցին Անգլիայի թագավոր և թագուհի», ինչպես հանդիսավոր կերպով հայտարարում է պատմագիր Մակոլեյը, Մարքսի արտահայտությամբ այդ «պատմության կեղծիչը»[1], վորը նկատի ունի վիգերի կուսակցության շահերը:

Այսպես կատարվեց 1688 թվի «խաղաղ և անարյուն» հեղաշրջումը, վորն իշխանությունը տվեց «հողատերերի ու կապիտալիստների թվին պատկանողներին, հարստության դիզողներին»[2]:

---

[1] Маркс и Энгельс, Соч. т. XVII, էջ 785։

[2] Նույն տեղ, էջ 792։

Ռեստավրացիայի քաղաքական թեորիաները։ Հոբբս։ Լոկկ

60—80-ական թվականների ռեակցիայի ժամանակաշրջանում հրապարակախոսությունը պաշտպանում է իշխանության աստվածայնության սկզբունքներն ընդդեմ ժողովրդի իշխանության գաղափարի, որ հեղափոխության ժամանակ առաջ էին քաշել Միլտոնը, Լիլբեռնը և ուրիշները։ Բայց ռեստավրացիայի եպոխայի անգլիական արիստոկրատիան չափազանց կրթված էր և քիչ կրոնասեր։ Նրա համար բավական չէին այն ապացույցները, վորոնք բերվում էին աստվածաշնչից և սուրբ գրքից։ Այս պատճառով տորիական մեծ իդեոլոգ Թոմաս Հոբբսը (1588—1679 թ. թ.), մատերիալիստ, վոր ժխտում էր հոգու անմահությունը, թագավորի իշխանության հեղինակության համար ուրիշ, ռացիոնալ հիմքեր է փնտրում։ Հետաքրքիր է այստեղ մատնանշել մի հանգամանք։ Կալվինիզմը կրոնական այն քողն էր, վորի տակ հանդես էր գալիս «բուրժուազիայի յերկրորդ խոշոր ապստամբությունը»— XVII դարի անգլիական հեղափոխությունը։ Բայց բուրժուազիան հաղթանակից հետո էլ կրոնի կարիք էր զգում։ Անգլիական բուրժուան կրոնասեր էր, վորովհետև «... կրոնը նրան դրոշակ տվեց, վորով նա հաղթեց թագավորին և լորդերին»[1]։ Բայց նա այնուհետև կրոնի մեջ հայտնագործեց շահագործվողներին հպատակեցնելու միջոցը, մի միջոց, վորով կարելի յեր «... նրանց հնազանդեցնել այն տերերի հրամաններին, վոր նրանց վրա կարգել էր աստծո անքննելի կամքը»[2]։ Իբրև դրա հակադրություն, մատերիալիզմը և դեիզմը, վոր Անգլիայում առել էին պրոգրեսիվ բուրժուազիային, դարձան «արիստոկրատական ուսմունք ընտրյալների համար»։ Հանձին Հոբբսի հենց այդ մատերիալիզմը հանդես յեկավ «... պաշտպանելու թագավորի ամենազորությունը»[3], սկսեց կոչ անել «... սանձահարելու այդ puer robustus sed malitiosus-ին (հաղթանդամ, բայց չարաճճի տղային), այսինքն ժողովրդին»[4]։ Դեռ 1641 թվին Հոբբսը, վոր հարել էր «կավալերներին», փախավ Հոլանդիա և այնտեղ գրեց իր հիմնական յերկը— «Լեվիաթանը կամ

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. II, էջ 299։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը։

մատերիան, յեկեղեցական և քաղաքացիական պետության ձևն ու իշխանությունը»[1] (1651 թ.)։ Հոբբսը պաշտպանում է թագավորի և ժողովրդի միջև հասարակական պայմանագրի տեսակետը, վոր պաշտպանում եյին նաև պուրիտանները։ Բայց նա առանձին մեկնաբանություն է տալիս այդ պայմանագրին։ Նրա կարծիքով մարդկանց բնական դրությունը յեղել է անընդհատ և ամենուրեք իրար հետ մղած պայքարի դրությունը (bellum omnium contra omnes)։ Այդ դրությունից դուրս գալու համար մարդիկ համաձայնվել են հրաժարվել իրենց ազատությունից ու յենթարկվել իշխանության, վորը վերջ է տալիս պայքարին և կարգ ու կանոն է պահպանում։ Նրանք այդ արել են՝ պայմանագիր կնքելով իշխողի հետ և համաձայնվելով անվերապահորեն հնազանդվել նրան։ Իշխանությունը պետք է անպայման լինի. նրան պետք է յենթարկվի նույնիսկ յեկեղեցին։ Պետությունը կլանում է անհատին և հենց այն Լեվիաթանն է, գազանը, վորի մասին խոսում է աստվածաշունչը։

Հոբբսի մատերիալիզմը և ռացիոնալիզմը նրանից վանում եյին արիստոկրատներից շատերին, վորոնք կառչում եյին կամ կաթոլիկությանը, կամ անգլիկանությանը։ Աբսոլուտիզմի նրկատմամբ նրա համակրանքը նրան անընդունելի յեր դարձնում վիգերի համար։ Վերջինները նույնպես յելնում եյին պայմանագրի հասկացողությունից, բայց դրանից այլ հետևություններ եյին անում։ Նրանց հայացքների արտահայտիչն եր անգլիական հռչակավոր փիլիսոփա, եմպիրիկ և մատերիալիստ Ջոն Լոկկը (1632—1704 թ.թ.), հեղափոխության ժամանակ պառլամենտի կողմից կռվող մի ունևոր կալվինիստ փաստաբանի վորդին։ Լոկկը բժիշկ եր Շեֆտսբերի մոտ, վորը վիգական ոպոզիցիայի առաջնորդներից ու Հակոբի, Յորքի հերցոգի, հակառակորդներից մեկն եր։ 1682 թվին, յերբ Շեֆտսբերին դատապարտվեց Անգլիայից աքսորվելու, Լոկկը գերադասեց հետևել նրան և նույնպես թողնել հայրենիքն ու բնակություն հաստատեց Հոլանդիայում, վորտեղից նա վերադարձավ միայն 1688 թվի հեղաշրջումից հետո։ Լոկկը «1688 թվի դասակար-

1 Կա ռուսերեն թարգմանությունը, Սոցեկգիզ, 1936։

գային կոմպրոմիսի զավակն էր»[1], իսկական զավակը և «նոր բուրժուազիայի ներկայացուցիչը նրա բոլոր ձևերում»[2]: Իր «Քաղաքացիական կառավարման մասին» յերկում (1689 թ.) նա, ինչպես և Հոբբսը, գտնում է, վոր մարդիկ նախնադարյան վիճակում չգիտեյին, թե ինչ է սեփականությունը: Բայց «բոլորի դեմ բոլորի պատերազմը» բնավ չի հանդիսանում նրանց բնական դրությունը, ինչպես կարծում եր Հոբբսը: Հարաբերությունները հաշտ եյին, բայց ծագող վեճերը հարթելու համար մարդիկ վաղուց սահմանել են միջնորդներ, դատավորներ: Այդ նպատակով նրանք հասարակական պայմանադրության ճանապարհով իրար մեջ պետական միություն են ստեղծել: Սակայն վերջինս բնավ չի յենթադրում մերժել ազատությունը. մարդիկ միայն համաձայնվել են միասին պաշտպանել իրենց գույքը: Պետությունն էլ հենց գույքային պաշտպանության ու հսկողության օրգան է և նա իրավունք չունի անհատ մարդուց պահանջել ավելին, քան անհրաժեշտ է այդ նպատակի համար: Այս պատճառով պետությունը չի կարող հպատակներից պահանջել անսահման հարկեր և տուրքեր կամ վերեն այլ գոհեր, վորովհետև այդ դեպքում նա կարող է քայքայել նրանց գույքային դրությունը: Այստեղից բղխում է Լոկկի հայացքը կառավարման լավագույն ձևի նկատմամբ. օրենսդրական իշխանությունը պետք է պատկանի քաղաքացիների այն ժողովին, վորը փոխվում է իր կազմով, այսինքն պարլամենտին. գործադիր իշխանությունն ամենից լավ է իրականացվում, յերբ գտնվում է մեկի, այսինքն թագավորի ձեռքում: Բայց յեթե թագավորը խախտում է օրենքները, ապա հպատակներն իրավունք ունեն նրան դիմադրություն ցույց տալ և իշխանությունը հանձնել ուրիշներին: Այսպիսով Լոկկը դարձավ սահմանադրական միապետության քաղաքական դոկտրինայի նախահայրը, չափավոր բուրժուազիայի, հենց այն հասարակական խավերի իդեոլոգիայի ներկայացուցիչը, վորոնք Անգլիայում իշխանության անցան 1688 թվից հետո:

1 *Маркс и Энгельс*, Письма, под. ред. Адоратского, եջ 384.
2 *Маркс и Энгельс*, Соч. т. XII, ч. I, եջ 63.

Մարքսիզմի հիմնադիրները XVII դարի անգլիական հեղափոխության պատմական նշանակության մասին

Գիզոյի «Ինչո՞ւ հաջողվեց անգլիական հեղափոխությունը» բրոշյուրին վերաբերող ռեցենզիայում[1], վոր գրված էր 1848 թվի դեկտեմբերի թարմ տպավորության տակ, Մարքսը տվել է Անգլիայում XVII դարում տեղի ունեցած բուրժուական հեղափոխության փայլուն անալիզը՝ Անգլիայի կապիտալիստական զարգացման ընդհանուր ընթացքի կապակցությամբ։ Բավական կծու կերպով ծաղրելով Գիզոյի տափակ դատողությունները այն մասին, վոր իբր թե անգլիական հեղափոխությունը գլխավորապես «կրոնական» և «պահպանողական» բնույթ է ունեցել և ի հայտ բերելով 1848 թվի փետրվարյան հեղափոխությունից վախեցած բուրժուական պատմաբանի այդ դատողությունների պատճառները, Մարքսը դրսևորում է թե XVII դարի 40–50-ական թվականների և թե 1688 թվի «պանծալի հեղափոխության» իրադարձությունների իսկական նշանակությունը և իմաստը։ Ըստ Մարքսի, վոչ թե կրոնականությունը, այլ ազատամտությունն էր Անգլիայում XVII դարում տեղի ունեցած բուրժուական հեղափոխության կարևորագույն պրոդուկտներից մեկը, իսկ Անգլիայից այդ ազատամտությունն անցավ Ֆրանսիա, այնտեղ փայլուն կերպով զարգանալով 1789 թվի հեղափոխության մեջ։ Հակառակ Գիզոյի, անգլիական հեղափոխությունը բնավ պահպանողական հեղափոխություն չէր, վորը գոյություն ունեցող հին օրենքները միայն պաշտպանում էր գահի վոտնձգություններից։ Անգլիական հեղափոխության «պահպանողական» բնույթը, վոր Գիզոն հակամետ էր բացատրելու անգլիացիների «խոհականությամբ» և «վողջամտությամբ», Անգլիայում ֆրանսիական հասարակական կյանքի «անպետք ծնունդների»— «հանրապետականության և սոցիալիզմի» բացակայությամբ, Մարքսը բացատրում է դասակարգային ուժերի վորոշ փոխհարաբերությամբ, այն է՝ անգլիական բուրժուազիայի և խոշոր հողատերերի միջև յեղած յերկարատև դաշինքով։ Ըստ Մարքսի, այդ դաշինքից է բղխում այն կայունության ու յերկարատևության պատճառը, վոր վայելում էր անգլիական միապետությունը 1688 թվից։

[1] Маркс и Энгельс, Соч. т. VIII, էջ 275—280։

Շարունակելով անգլիական հեղափոխության իր անալիզը, Մարքսը դրսևորում է և՛ «մեծ» և՛ «պանծալի» հեղափոխության իսկական բնույթն ու նշանակությունը։ XVII դարի 40-ական թվականներին յոմենրին Կրոմվելի գլխավոր ուժն ու հենարանն էր թագավորի և ռոյալիստների դեմ մղված պայքարում։ Հարյուր տարի անց, XVIII դարի մոտավորապես կեսին Անգլիայում յոմենները չքացան այն մի շարք պատճառների հետևանքով, վորոնցից հետևյալների վրա Մարքսն առանձին ուշադրություն է դարձնում։ Նախ՝ ռեակցիայի և Ստյուարտների վերահաստատման ժամանակաշրջանում օրենսդրական կարգով, հօգուտ խոշոր հողատերերի, կատարվեց «ուզուրպացիա», վոր կայանում էր հողային հարաբերությունների ֆեոդալական կարգը վոչնչացնելու մեջ։ Խոշոր հողատերերը յուրացրին սեփականության ժամանակակից բուրժուական իրավունքն այն կալվածքների նկատմամբ, վորոնց նրանք առաջ տիրում էին ֆեոդալական իրավունքի հիման վրա։ Յերկրորդ՝ այսպես կոչված «պանծալի», բուրժուական պատմագիրներին առանձնապես հիացնող «հեղափոխությունը» իշխանություն տվեց «հողատերերի և կապիտալիստների թվին պատկանողներին և հարստության դիզողներին», վորոնք հսկայական չափերի հասցրին պետական հողերի հափշտակությունը,— վորոնք ծախվում էին չնչին գներով կամ ուղղակի ուզուրպացիաների ճանապարհով միացվում մասնավոր կալվածքներին։ «Պանծալի հեղափոխությունը» բավական նպաստում էր բուրժուական և ազնվականական խոշոր հողատիրության հետագա աճմանը և գյուղացիության ծավալվող հողազրկմանը, վորի սկիզբը դրվեց XV—XVI դարերի վերջում յեղած ցանկապատումներով և ռեֆորմացիայի եպոխայում յեկեղեցական կալվածքների սեկուլյարիզացիայով։

Համեմատելով յերկու բուրժուական հեղափոխությունները— անգլիականը և ֆրանսիականը, Մարքսն ընդգծում է, վոր Ֆրանսիայում բուրժուազիան ժողովրդի հետ միացավ ընդդեմ միապետության, ազնվականության ու պետական յեկեղեցու, մինչդեռ անգլիական հեղափոխության ժամանակ բուրժուազիան միացավ նոր ազնվականության հետ ընդդեմ միապետության, ֆեոդալական ազնվականության և պետական յեկեղեցու։ Բուրժուազիայի և բուրժուականացած ազնվականության այդ միությամբ էլ բացատրվում է նրա պահպանողական բնույթը, ֆեո-

դալների հետ համաձայնության գալու հնարավորությունը, վոր պայմանավորեց 1660 թվի ռեստավրացիան, և Անգլիայի ամենաուշ շրջանի սահմանադրությունը:

Էնգելսը, զարգացնելով Մարքսի արտահայտած միտքը յոմենրիի վորպես գլխավոր ուժի մասին, վորի վրա հենվում էր Կրոմվելը թագավորի դեմ մղված պայքարում, ընդգծում է գյուղացիների, այլև քաղաքային պլեբեյության, վորպես անգլիական հեղափոխության մարտական ուժի դերը: XVII դարի հեղափոխությունն Անգլիայում սկսեց քաղաքային բուրժուազիան, իսկ միջին գյուղացիությունը, գյուղական շրջանների յոմենրին այն ավարտեց հաղթանակով: «Բոլոր յերեք բուրժուական մեծ հեղափոխություններում (Էնգելսը նկատի ունի 1525 թվի գյուղացիական պատերազմը Գերմանիայում, XVII դ. անգլիական հեղափոխությունը և XVIII դարի ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը:— Ծան. խմբ.) մարտական բանակ են հանդիսանում գյուղացիները. և հենց գյուղացիներն են լինում այն դասակարգը, վորը հաղթանակ նվաճելուց հետո անխուսափելիորեն քայքայվում է այդ հաղթանակի տնտեսական հետևանքների շնորհիվ... Այդ յոմենրիի և քաղաքների պլեբեյական տարրի միջամտության շնորհիվ պայքարը հասցրվեց մինչև վճռական վախճան և Կարլոս I-ն ընկավ կառափնարան»[1]: Բերելով Էնգելսի այս խոսքերը, Վ. Ի. Լենինն ընդգծում է գյուղացիության և քաղաքների պլեբեյական տարրի միջամտության նշանակությունը. քաղաքային պլեբսի և դեմոկրատական գյուղացիության դաշինքը թափ և ուժ տվեց XVII դ. անգլիական հեղափոխությանը: Միայն այդպիսի միջամտությունը «ընդունակ է լրջորեն առաջ մղելու բուրժուական հեղափոխությունը»[2]: Լենինը նկատի ունի վոչ միայն XVII դարի Անգլիան, այլև XVI դարի Գերմանիան, XVIII դարի Ֆրանսիան, XX դարի Ռուսաստանը (1905 թ.):

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները փայլուն կերպով վերլուծեցին անգլիական պատմության այդ իսկապես վոր «նշանավոր ժամանակաշրջանը... վորը ֆիլիստերներն անվանել են մեծ բունտ», ինչպես և բուրժուական հեղափոխության այն հետև-

---

[1] *Маркс и Энгельс*, Соч. т. XVI, ч. II, *էջ 297:*

[2] *Ленин*, Соч. т. XII, *էջ 211*, т. XV, *էջ 347:*

վանքները, վորոնք իրենց բավական վառ արտահայտությունը գտան 1688—1689 թ. թ. հեղաշրջմանը հաջորդող հետագա տասնամյակներում: Թեև այդ հեղաշրջումը, ինչպես մականանվեց, նույնպես չնչին դեպք է հանդիսանում, համեմատած XVII դարի 40—50-ական թվականների «մեծ բունտի» հետ, սակայն 1689 թվից հետո մի առանձին պարզությամբ դրսևորվեցին անգլիական գյուղացիության ձեռք բերած այն հաղթանակի արդյունքները և նրա համար ստացված հետևանքները, վորի պտուղներից ոգտվեց մի ուրիշ դասակարգ, ավելի ճիշտ, դաշնակից դասակարգերը— հողային արիստոկրատիան և բարձրացող ֆինանսական, արդյունաբերական ու առևտրական բուրժուազիան:

Մարքսը, վոր մեծ ուշադրություն եր դարձնում բուրժուական հեղափոխության տնտեսական արդյունքների ուսումնասիրությանը, ազնվականների, բուրժուազիայի և գյուղացիության համար նրա տված հետևանքների, նրա հետ կապված սոցիալական տեղաշարժերի ուսումնասիրությանը և համապատասխան դասակարգերի քաղաքական դերի ու նշանակության փոփոխմանը[1], գալիս է այն յեզրակացության, վոր գյուղացիության չքացումն իր կարևորությամբ հիմնական սոցիալական մի տեղաշարժ եր, վորը հետևեց XVII դարի Անգլիայում յեղած բուրժուական հեղափոխությանը: 1689 թվի կոմպրոմիսը, վորով ավարտվեցին փոթորկալից հիսնամյակի դեպքերը, ծառայեց իբրև յելման կետ Անգլիայի հետագա բուրժուական զարգացման համար: 1689 թվի կոմպրոմիսը հանգում է այնտեղ, վոր քաղաքական spolia opima (հաղթանիչները)— պաշտոնները, սինեկուրաները, բարձր ռոճիկները—բաժին ընկան հողատեր ազնվականության ականավոր տոհմերին, այն պայմանով, վոր վորոշ չափով պահպանվեն ֆինանսական, արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի շահերը, վորոնք բավականաչափ ուժեղ եյին, վորպեսզի վորոշեյին ընդհանուր ազգային քաղաքականությունը[2]: Դրա փոխարեն հողատեր ազնվականության և XVII դ. առաջին տասնամյակներում ձևավորվող արդյունաբերական բուրժուազիայի միջև յեղած այդ կոմպրոմիսի հետևանքով յերրորդ կողմը— գյուղացիությունը, հեղափոխական պայքարում գլխավոր ուժը,

[1] Տես առանձնապես «Կապիտալը», հ. I, գլ. XXIV և հ. III գլ. XLVII:
[2] Маркс и Энгельс Соч. т. XVI ч. II, եջ 298:

վորը մնացած բոլորից ավելի շատ էր նպաստել թագավորի դեմ տարված հաղթանակին, անկման է հասնում։ Անգլիական գյուղացիությունը վճռական, նրան ջախջախող հարվածներ են տրվում, և XVIII դարի մոտ կեսերին գյուղացիությունը չքանում է վորպես դասակարգ։ Աճում է խոշոր հողատիրությունը, գյուղատնտեսության մեջ դրվում են արտադրության կապիտալիստական յեղանակի ամուր հիմքերը։ Իսկ դրա հետ մեկտեղ աճում ու զարգանում է կապիտալիստական արդյունաբերությունը, նախապատրաստելով XVIII դարի յերկրորդ կեսի արդյունաբերական հեղաշրջումը։

Անգլիան 1688 թվից հետո։ Թագավորի իրավունքների սահմանափակումը

Վիլհելմ III Որանցին (1689—1702 թ. թ.) անգլիական գահ նստեց մի շարք կետերի և սահմանափակումների հիման վրա, վորոնք ձևակերպեցին նրա հրատարակած «Իրավունքների դեկլարացիայում», ապա վերամշակվեցին ու դարձան «Իրավունքների բիլլ»։ Դաշնակից դասակարգերը— հողատեր արիստոկրատիան և խոշոր բուրժուազիան— վորոշեցին ամենից առաջ սահմանափակել թագավորի իրավունքները բանակի կոմպլեկտավորման և թագավորության զինվորական ուժերը տնօրինելու գործում։ Մշտական բանակի առկայությունը կախման մեջ էր դրվում պարլամենտից, վորն ամեն տարի վերականգնում էր այն ակտը, վոր թագավորին թույլ էր տալիս տվյալ տարում ունենալու վորոշ կազմով ու թվով բանակ։ Կանոնավորվեց մի ուրիշ հարց ևս, վոր թագի ու պարլամենտի միջև մշտական կոնֆլիկտների աղբյուր էր,— հարկերի հարցը, վորոնց սահմանումն ու գանձումը նույնպես պետք է կախված լիներ պարլամենտի թույլտվությունից։

«Իրավունքների բիլլը» սահմանում էր պարլամենտի խնդրագրեր տալու ազատություն, պարլամենտի վիճաբանությունների ազատություն և յերաշխավորում էր պարլամենտի հաճախակի, կանոնավոր գումարումները։

Վերականգնվեց նաև 1673 թվի յերդման ակտը, վորն արգելում էր պետական պաշտոնների գրավումն այն անձանց կողմից, վորոնք չեյին պատկանում անգլիկանական յեկեղեցուն։ Այս ակտն ուղղված էր գլխավորապես կաթոլիկների դեմ և թույլ էր տալիս մի շարք բացառումներ հօգուտ դիսենտերների։

Մի այլ կարևոր ակտ, վոր հրատարակվեց 1701 թվին, սահ-

մանում եր գահաժառանգության կարգն անզավակ Վիլհելմից և Մարիայից հետո: Այդ ակտի համաձայն, անգլիական գահի ժառանգ հռչակվեց Հակոբ II-ի կրտսեր դուստրը— Աննան: Աննայից հետո անգլիական գահը պետք է անցներ Ստյուարտների ժառանգմանը կողմնական գծով, Հաննովերյան դինաստիայի ներկայացուցիչներին, Հակոբ I-ի և Ֆրիդրիխ Պֆալցցու դստեր սերունդներին, Ֆրիդրիխ Պֆալցցու, վորի շահերը պաշտպանելու համար Անգլիան իր ժամանակին միջամտեց Յերեսնամյա պատերազմին: Սահմանելով գահաժառանգման կարգը, 1701 թ. ակտը դրա հետ միասին մտցնում եր թագավորի իրավունքների հետագա սահմանափակումները, վորոնք կայանում եյին նրանում, վոր սկսեցին վավերական համարվել միայն այն ակտերը, վորոնք, բացի թագավորից, ստորագրված եյին լինում մինիստրների կաբինետի գլխավորողի կողմից, վորին պարլամենտը կարող եր պատասխանատվության յենթարկել: Դրանով սկիզբ դրվեց մինիստրության պատասխանատվության սկզբունքին, վորն աստիճանաբար սահմանադրական պրակտիկա դարձավ:

Մի ուրիշ եյական սահմանափակում, վոր պարունակվում եր գահաժառանգման ակտում, այն եր, վոր թագավորը զրկվում եր դատավորներ նշանակելու և նրանց պաշտոնանկ անելու իրավունքից: Այդ իրավունքն անցնում եր պարլամենտին, դատավորներն այլևս կախում չպիտի ունենային թագավորի կամայական գործողություններից:

Անգլիայի տնտեսական քաղաքականությունը «պանծալի հեղափոխությունից» հետո յեվ Անգլիայի տնտեսական զարգացման հատկանիշները XVIII դարի 60-ական թվականների մոտերքին

1688—1689 թ. թ. պետական հեղաշրջումը դարձավ յելման կետ հետագա բուրժուական-կապիտալիստական զարգացման, վորը մեզ ընդհուպ մոտեցնում է XVIII դարի յերկրորդ կեսի արդյունաբերական հեղափոխությանը: XVIII դարի կեսին արդեն հիմնականում ավարտվում է անգլիական գյուղի և գյուղատնտեսության վերակառուցումը կապիտալիստական ձևով: Այդ վերակառուցման հետևանքը յեղավ գյուղացիության վորպես դասակարգի չքացումը և կապիտալիստական ա՛յն ֆերմերության հետագա հաջողությունները, վորը դառնում է գյուղատնտեսական արտադրության տիպիկ ձև. Մարքսը XVIII դարը դիտում է իր-

րև կապիտալիստական ֆերմերական տնտեսության կլասիկ եպոխա:

Նոր դինաստիան գահ բարձրացնելով, խոշոր հողատերերը և կապիտալիստները, վորոնք իշխում եյին պարլամենտում, կիրառում են մի շարք միջոցառումներ, վորոնք ապահովում են բուրժուական և ազնվականական խոշոր հողատիրության հետագա աճն ի հաշիվ պետական հողերի հափշտակման, վորոնք ծախվում եյին չնչին գներով կամ ուղղակի ուզուրպացիաների ճանապարհով միացվում մասնավոր կալվածքներին:

Պետական հողերի ապօրինի ստացման տվյալ պրոցեսն այն ժամանակաշրջանում, վոր անմիջականորեն հետևում եր 1688 թվի հեղաշրջմանը, պատկերվում է այն աղբյուրներում, վոր վկայակոչում է Մարքսը, համարելով դրանք անգլիական պատմության խայտառակ մի գլուխ, մեծագույն խաբեյության ազգի նկատմամբ: Բացի պետական հողերից, կոնֆիսկացիաների և վաճառքի յեն յենթարկվում կաթոլիկների կալվածքները, տեղի յե ունենում հողի հետագա եքսպրոպրացիա իրլանդացիների մոտ: Հողի այդ բռնագրավումները և դրանց հետ կապված բուրժուա-ազնվականական հողատիրության աճումը հողային սեփականության մոբիլիզացիայի և այն ֆեոդալական տերերից բուրժուական տերերին անցնելու այն պրոցեսի շարունակությունն եյին, վորը տեղի յեր ունենում ավելի քան յերկու հարյուրամյակի ընթացքում, սկսած ռեֆորմացիայի և XVI դարում յեկեղեցական ու վանքական հողերի սեկուլյարիզացիայի եպոխայից:

Այն տասնամյակներում, վորոնք հետևեցին 1688 թվի հեղաշրջմանը, գյուղացիությանը տվեցին վճռական հարվածներ, վորոնք նպաստեցին ծավալվող և մոտ XVIII դարի կեսին հիմնականում ավարտված նրա հողազրկմանը: Հետազոտողները, վորոնք արխիվային նոր նյութեր են ուսումնասիրել գյուղացիության չքացման հարցի շուրջը, հանգում են այն հետևություններին, վորոնք հաստատում են Մարքսի թեզիսը հենց այդ եպոխայում անգլիական յոմենրիի չքացման մասին: XVIII դ. 20—30-ական թվականներից Անգլիայում սկսվում է այսպես կոչված պարլամենտական ցանկապատումների շարժումը, վորն ի դեպ՝ առանձնապես ուժեղանում է XVIII դարի յերկրորդ կեսում, 60—80-ական թվականներից: Պարլամենտական ցանկապատումները

կամ ժողովրդական, համայնական հողերի կողոպտման պարլամենտական ձևը ներկայացնում եր մի նոր եպոխա համայնական հողատիրության մնացորդների լիկվիդացիայի պրոցեսում, մնացորդներ, վորոնք դեռ բավական տարածված ու բազմաթիվ եյին XVIII դարում: Հաննովերյան դինաստիայի որոք, XVIII դարի յերկրորդ-յերրորդ տասնամյակից, բավական ռադիկալ կերպով փոխվում ե կառավարության վերաբերմունքը դեպի ցանկապատումները, մանավանդ համեմատած Թյուդորների եպոխայի հետ: Մի շարք մասնավոր ակտեր հրատարակելու միջոցով, վորոնք նկատի ունեյին առանձին ծխերի ցանկապատման դեպքերը,— իսկ այդ ծխերից համապատասխան խնդրագրեր եյին ստացվում պարլամենտում,— կառավարությունը փորձում ե ամեն կերպ արագացնել համայնական դաշտերի հնամյա սիստեմի մնացուկների վերացման պրոցեսը: Այդպիսի ակտերի համաձայն նշանակված պարլամենտական հանձնաժողովները ստուգում եյին տվյալ ծխում ապրող բոլոր թե՛ խոշոր և թե՛ մանր հողային սեփականատերերի համայնական իրավունքները և կատարում եյին համայնական հողերի բաժանում, շատ հաճախ ի վնաս մանր հողապահների— ֆրիհոլդերների կամ կոպիհոլդերների շահերի, ել չխոսենք գյուղական չքավորության— կոտեջերների և սկուտտերների մասին,— այն առանձին կոտեջների և մի կտոր հողի տերերի մասին, վորոնց նկատմամբ ֆորմալ իրավունքների առկայությունն անկարելի յեր ապացուցել: Պարլամենտական ցանկապատումները, վոր հաճախ ուղեկցվում եյին յեկեղեցական տասանորդի կոմուտացիայով, խիստ նպաստում եյին գյուղացիության հողազրկմանը և ագնվականական, յեկեղեցական ու բուրժուական ամուր հողատիրության աճմանը: Տասանորդի սեփականատերերը սովորաբար ստանում եյին խոշոր, ամբողջական հողամասեր, վորտեղ հաջողությամբ կարող եր զարգանալ խոշոր, կապիտալիստական տիպի վարձակալությունը, վորը XVIII դարում վերջնականապես դուրս ե մղում գյուղացիական տնտեսությունը: Յելնելով ֆերմերական խոշոր տնտեսության շահերից, վորն աշխատուժի կարիք եր զգում, կրկնվեց և ուժեղացվեց նստակեցության վերաբերող ակտը, վորը կիրառվում եր դեռ ռեստավրացիայի ժամանակաշրջանում և վորը գյուղատնտեսական բանվորներին ամրացնում եր ծխերին և նրանց հանձնում ծխական իշխանությունների կամայականությանը:

Սակայն չպետք է այնքան էլ չափազանցնել պառլամենտական ցանկապատումների դերը գյուղացիության չքացման պրոցեսում: Այդ պրոցեսը հիմնականում ավելի շուտ է ավարտվում (մոտ XVIII դ. կեսին), քան իր գագաթնակետին է հասնում պառլամենտական ցանկապատումների շարժումը (XVIII դարի 60–80-ական թվականները և մանավանդ 1793 թ. մինչև 1815 թ. յեղած ժամանակաշրջանը):

Յեթե գյուղատնտեսական արտադրության բնագավառում տվյալ ժամանակաշրջանի վերջը բնորոշվում է անգլիական գյուղում յեղած կարևոր փոփոխություններով և գյուղացիության վորպես դասակարգի չքացումով, ապա արդյունաբերության բնագավառում XVIII դարի 60-ական թվականները մեզ մոտեցնում են արդյունաբերական հեղափոխության եպոխայի սկզբին: Այն ժամանակաշրջանը, վոր հետևեց «պանծալի հեղափոխությանը»,— XVII դարի վերջին տասնամյակից մինչև XVIII դարի 60-ական թվականները,— դա Անգլիայում կապիտալիստական արդյունաբերության զարգացման մանուֆակտուրային շրջանի վերջն է: Ավելի ևս կարևոր է վորոշել անգլիական արդյունաբերության զանազան ճյուղերում տեղի ունեցած ա՛յն փոփոխությունների նշանակությունն ու բնույթը, վորոնք նախապատրաստում եյին արդյունաբերական հեղաշրջումը և մանուֆակտուրայի փոխարինումը ֆաբրիկայով:

Արդյունաբերական և առևտրական բուրժուազիան, ինչպես խոշոր հողատերերը, քիչ չշահեց «պանծալի հեղափոխությունից»: Յեթե հողատերերն իրենց շահերի համար պարգև սահմանեցին հացի արտահանման համար, ապա արդյունաբերական բուրժուազիան շահեց ոտարերկրյա արդյունաբերության ապր-կաների ներմուծման արգելիչ մաքսերից, վորոնք բավական նպաստեցին թուն Անգլիայում մանուֆակտուրաների զարգացմանը: Ռեստավրացիայի մաքսային քաղաքականությունը, վորը հնարավորություն եր ընձեռնում ֆրանսիական արդյունաբերության պրոդուկտները լայն չափով Անգլիա ներմուծելու համար, անգլիական մանուֆակտուրիստների մեջ մեծ դժգոհություն եր առաջացնում: «Պանծալի հեղափոխությունն» իր հետ բերեց անգլիական արդյունաբերության պաշտպանություն՝ գլխավոր մրցակցի— Ֆրանսիայի կոնկուրենցիայից:

Վորո՞նք եյին անգլիական արդյունաբերության հաջողու-

թյունները XVIII դարի 60-ական թվականներին։ Այդ ժամանակվան է վերաբերում հայտնի գյուղատնտես և տնտեսագետ Ա. Յունգի ճանապարհորդությունն Անգլիայի հյուսիսային, առավելապես արդյունաբերական գրաֆություններում և ռայոններում։ Յունգն այցելեց յերկաթի արդյունաբերության այնպիսի կենտրոններ, ինչպես Շեֆֆիլդը և Ռոտերգեմը, մահուդի արտադրության այնպիսի մի կենտրոն, ինչպես Լիդզը, և բամբակե գործվածքների արդյունաբերության կենտրոնը— Մանչեստրը։

Ռոտերգեմում Յունգը տեսավ յերկաթի մանու-ֆակտուրան, վորը նրան ապշեցրեց իր ծավալով և վորտեղ աշխատում եր մոտ 500 բանվոր։ Այդ մանուֆակտուրայի տերը միաժամանակ յերկու հանքերի սեփականատեր եր. հանքերից մեկում յերկաթահանք եր հանվում, մյուսում— ածուխ։ Արդեն այդ մանուֆակտուրայում լայնորեն գործադրվում եյին բանվորների ցածր վարձատրվող կատեգորիաները, բավականաչափ տարածված եր կանացի և մանկական աշխատանքը (տղաներն աշխատանքի եյին ընդունվում տասնչորս տարեկան հասակից, իսկ մի քանի ճյուղերում, որինակ կավագործության մեջ, 9—10 տարեկան հասակից)։

Շեֆֆելդն ուներ մոտ 30 հազար բնակիչ։ Նրանց մեծ մասն զբաղված եր մետաղամշակման արդյունաբերության տարբեր ճյուղերում,— վորը բաժանվում եր մի շարք մասնաճյուղերի,— դանակների, մկրատների, ածելիների և այլ առարկաների արտադրության։ Սրիչ անիվը, ավելի ճիշտ՝ տարբեր մեծության մի շարք անիվներ գործում եյին ջրային շարժիչի միջոցով։ Անիվներն այնքան արագ եյին պտտվում, վոր հաճախ ջարդվում եյին և հաշմում բանվորներին։ Շեֆֆիլդի ձեռնարկություններից մեկում գործադրվում եր հսկայական մեծություն ունեցող մի մուրճ, վորն աշխատում եր ջրանիվով։ Շեֆֆիլդի յերկաթի արդյունաբերությունն աշխատում եր բավական լարված տեմպով, Յոթնամյա պատերազմի (1756—1763 թ. թ.) ժամանակներից սկսած, վորն ավելացրեց մետաղամշակման արդյունաբերության զանազան արտադրանքի պահանջը։

Մանչեստրի բամբակե արտադրությունն արդեն մեծ զարգացման եր հասել։ Բամբակե արդյունաբերությունը բաժանված է մի շարք առանձին ճյուղերի ու յենթաճյուղերի—

բամբասինի, վանդակավոր գործվածքների, գլխարկների արտադրություն և այլն: Բամբակը, որ վերամշակվում է Մանչեստրի մանուֆակտուրաներում, բերվում է Ոստ-Ինդիայից: Բամբակե արդյունաբերության մեջ լայնորեն կիրառվում է ոչ միայն կանացի, այլև մանկական, յերբեմն շատ փոքր մանուկների աշխատանքը:

Բամբակե արդյունաբերությունն աշխատում է ոչ միայն ներքին, այլև— նույնիսկ գլխավորապես արտաքին շուկայի համար: Ամերիկացիների կողմից անգլիական ապրանքները բոյկոտի յենթարկելու կապակցությամբ Մանչեստրի մանուֆակտուրիստները դանդաղվում էյին գործադրկությունից: Ամերիկական գաղութները սովորաբար գնում էյին Մանչեստրում արտադրվող բոլոր գործվածքների իբր թե մինչև 75%-ը:

Առաջանում են մի շարք ակցիոներական ընկերություններ և ձեռնարկություններ, վորոնք հիմնված են բավական թվաշատ մասնակիցների կապիտալների միավորման վրա: Այդ կապակցությամբ ուժեղանում է բորսայական սպեկուլյացիան և աժիոտաժը: Հաճախ ամբողջ կարողություններ են ներդրվում այս կամ այն մոդայական ընկերության ակցիաներում, վորը կարողացել է յեռանդուն ագիտացիա ծավալել և չտեսնված ոգուտների ու շահերի հեռանկարներով շլացնել բազմաթիվ ակցիոներներին:

1711 թվին, որինակ, հիմնվեց Հարավային ծովերի տխրահռչակ ընկերությունը, իսպանական գաղութների հետ առևտուր անելու և կետ ձկներ վորսալու համար: Ընկերությունն ոգտվում էր կառավարության աջակցությամբ, կարողացավ մինիստրների կաբինետի մի շարք ներկայացուցիչներին իր կողմը քաշել և շահագրգռել իր գործունեյությամբ: Մինչև 1720 թիվը զանազան անմաքուր ճանապարհներով մի տասն անգամ բարձրացնելով ակցիաների նոմինալ արժեքը, ընկերությունն այնուհետև հոդս ցնդեց ինչպես սապոնի պղպջակ, հարստացնելով մի շարք գործարար-սպեկուլյանտներին և սնանկացնելով մանր փայատերերի մասսային:

Բայց այդպիսի «սապոնի պղպջակների» կողքին գործում էյին նաև սոլիդ ընկերություններ, որինակ, Արևելա-Հնդկական ընկերությունը, վորը մեծ հաջողությամբ ոժանդակեց անգլիացիների կողմից Ոստ-Ինդիան թալանելուն և յուրացնելուն. այդ-

պես էին նաև՝ Գվինեյան ընկերությունը, որ հարստացավ ստրուկներ վաճառելուց, Հուդզոնի ծոցի ընկերությունը և այլն:

Այն ժամանակաշրջանում, որը հետևեց «պանծալի հեղափոխությանը», Անգլիայում ձևավորվում է պետական վարկի ժամանակակից սիստեմը: 1694 թվին հիմնվեց Լոնդոնի հռչակավոր բանկը: Բարձր տոկոսները, որ սահմանել էր պետությունը, դեպի այդ բանկն էին գրավում բազմաթիվ ավանդատուների, որոնք պետական վարկի սիստեմն օգտագործում էին իրենց անձնական հարստացման համար և այնու հանդերձ պետությանը հնարավորություն էին տալիս օգտագործելու պետական փոխառությունները իբրև ֆոնդ զանազան ձեռնարկումների, այդ թվում նաև ռազմական ձեռնարկումների համար: Իսպանական ժառանգության համար մղված պատերազմը (1701—1713 թ. թ.) և Յոթնամյա պատերազմը (1756—1763 թ. թ.) պահանջեցին մոբիլիզացիայի յենթարկել դրամական մեծ միջոցներ, որոնք չէր կարելի ստանալ առաջ գործադրվող յեղանակների օգնությամբ:

Անգլիայի առևտրին յեվ գաղութային քաղաքականությունը (1689-1763 թ.թ.)

XVIII դարում Անգլիան Ֆրանսիայի դեմ մի ամբողջ շարք պատերազմներ է մղում, որոնցով վճռվում է առևտրի և Անգլիայի գաղութային գերակշռության հարցը, որ նրան բաժին ընկավ «ամենահամառ պայքարի» հետևանքով: Անգլիան կազմակերպում, ֆինանսավորում է մի շարք կոալիցիաներ և անմիջական մասնակցություն է ունենում այդ կոալիցիաներին, որոնք ուղղված էին Ֆրանսիայի դեմ: Դեռ Վիլհելմ Օրանժու ժամանակ դաշինք կնքելով Հոլանդիայի հետ ընդդեմ Ֆրանսիայի, որը ձգտում էր տիրանալ ոչ միայն իսպանական Նիդերլանդներին, այլև բուն Իսպանիային, Անգլիան Աննա Թագուհու օրոք պատերազմ է մղում Ֆրանսիայի դեմ, ժխտելով վերջինիս իրավունքներն «իսպանական ժառանգության» նկատմամբ և ձգտելով վերացնել անգլիացիների՝ Միջերկրական ծովի առևտրին սպառնացող վտանգը, որը կարող էր ստեղծվել, յեթե ֆրանսիացիները գրավեյին Իսպանիան: Ուտրեխտի 1713 թվի հաշտությամբ Անգլիան ստանում է Միջերկրական ծովում տիրապետելու բանալին— Ջիբրալտարը և Մինորկա կղզին: Անգլիացիներին հաջողվեց ձեռք բերել Հուդզո-

նի ծովածոցի ափերին գտնվող ընդարձակ տերիտորիան, վորը պատկանում եր Ֆրանսիային: Այնուհետև Անգլիան ստացավ իսպանական գաղութների հետ առևտուր անելու իրավունք, վորին նա ձգտում եր դեռ առաջին Ստյուարտների օրոք, ինչպես նաև նեգր-ստրուկներին Ամերիկայի իսպանական գաղութները տանելու մոնոպոլ իրավունք:

Ապահովելով Ուտրեխտի հաշտությամբ ձեռք բերված այդ կարևոր նվաճումները, Անգլիան թևակոխում է համեմատաբար խաղաղ զարգացման և այն քաղաքականության շրջանը, վորը հիմնված եր խաղաղություն պահպանելու և գաղութներում ամրանալու ձգտման վրա: Ռոբերտ Վալպոլի— Գեորգ I-ի պրեմյեր-մինիստրի օրոք Անգլիայի արտաքին քաղաքականությունն աչքի յեր ընկնում համեմատական խաղաղասիրությամբ: Վալպոլն իշխեց մոտ 20 տարի (1721—1742 թ. թ.): Վալպոլի դեմ խիստ քննադատությամբ հանդես է գալիս Պիտտը (Ավագը), վորը կողմնակից եր Անգլիայի յեռանդուն արտաքին քաղաքականության, վոր պահանջում եյին անգլիական խոշոր բուրժուազիայի շահերը: Պիտտը հանդես է գալիս վորպես գըլխավոր կազմակերպիչ Յոթնամյա պատերազմի, վորի հետևանքը յեղավ անգլիական գաղութային տիրույթների հաստատելն ի հաշիվ Ֆրանսիայի: Յոթնամյա պատերազմում Անգլիան ամեն կերպ աջակցում է Ֆրիդրիխ II-ին, նպաստներ տալով նըրան և փոքրիկ ոժանդակ կորպուսներ ուղարկելով կոնտինենտ: Բայց Անգլիան առանձնապես յեռանդուն կերպով եր պատերազմում գաղութներում, ձգտելով ֆրանսիացիներին վտարել Հընդկաստանից և գրավել նրանց ամերիկական գաղութները: Այդ պատերազմը տեղի յեր ունենում Գեորգ II-ի (1727—1761 թ. թ.) թագավորության վերջին տարիներում և Գեորգ III-ի թագավորության առաջին տարիներում: Յոթնամյա պատերազմի հետևանքով անգլիացիներին հաջողվեց ֆրանսիացիներին դրեթե ամբողջովին վտարել Հնդկաստանից, գրավել Կալկաթան և Գանգեսի գետաբերանը: 1763 թվի Փարիզյան հաշտության պայմանների համաձայն, անգլիացիներն Ամերիկայում ձեռք բերին Կանադան և Միսսիսիպիից դեպի արևմուտք գտնվող հողերը: Անգլիան դառնում է ամենահզոր գաղութային տերությունը:

Անգլիայի քաղաքական զարգացումը (1689-1760 թ. թ.) Վիգերն ու տորիները

1688 թվի «պանծալի հեղափոխությունը», վոր սահմանափակեց թագավորի իշխանությունը և ընդլայնեց պարլամենտի իրավունքներն ու լիազորությունները, վիգերի կուսակցության սկզբունքների իրականացումն եր, կուսակցություն, վորը քաղաքականապես գերակշռող եր թե՛ Վիլհելմ III Օրանժցու և թե՛ առաջին յերկու Գեորգների— Հաննովերյան դինաստիայի ներկայացուցիչների օրոք: Միայն Վիլհելմ III-ի հաջորդի— Աննայի օրոք (1702—1714 թ. թ.) վորոշ ժամանակ հաղթանակում է տորիների կուսակցությունը— նոր թագուհու թագավորման սկզբում և վերջում, իսկ այդ թագուհին վորպես Հակոբ II-ի դուստր կապված եր Ստյուարտների դինաստիայի հետ: Աննայի մահից հետո տորիները փորձ են անում Գեորգ I-ի փոխարեն անգլիական գահ նստեցնել Ստյուարտների տանը պատկանող հավակնորդին, բայց անհաջող: 1714 թվին, գահաժառանգության ակտի համաձայն, գահ բարձրացվեց Հաննովերյան դինաստիայի ներկայացուցիչը, և այդ կրկին իշխանությունը տալիս է վիգերի կուսակցությանը, վորոնք քաղաքականապես լիովին գերակշռում եյին մինչև մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի վերջը, մինչև 1760 թվականը, այսինքն 46 տարվա ընթացքում: Վիգերի կուսակցության սոցիալական կազմն աչքի յեր ընկնում զգալի բարդությամբ: Վիգերի կուսակցության մեջ շատ ուժեղ եյին առևտրա-արդյունաբերական տարրերը, վորոնք շահագրգռված եյին ծովային առևտրի աճով և Անգլիայի գաղութային ձեռնարկումներով, հարստացել եյին ստրուկների վաճառքից և Հնդկաստանի հետ յեղած առևտրից: Այդ կուսակցության մեջ եր մտնում նաև հողատեր արիստոկրատիայի մի զգալի մասը: Վիգերի մեջ առանձնապես ազդեցիկ խումբ եյին կազմում մի շարք չափազանց հարուստ հողատեր տոհմեր— Ստենգոպները, Ռոսսելները, Կավենդիշները, Նյուկեսլները և այլն, գլխավորապես նրանցից եյին դուրս գալիս վիգական մինիստրները: Այդ հողատեր արիստոկրատիայի շարքերը լրացվեցին խոշոր և նույնիսկ միջին բուրժուազիայից դուրս յեկած և հաջողություն գտնող մարդկանցով, վորոնք հող և ազնվականական տիտղոսներ եյին ձեռք բերում: Վիգերի կուսակցության մեջ եր մտնում և միջին տոհմիկ ազնվականությունը, թեև նրա մեծ մասը տորիների կողմն եր: Այս կու-

սակցությունը, ինչպես արդեն մատնանշվել է, կազմվեց մինչև 1688 թիվը, Յորքի կաթոլիկ հերցոգի, ապագա Հակոբ II-ի կողմնակիցներից: «Պանծալի հեղափոխությունից» հետո էլ տորիները մնացին «հակոբիտներ», այսինքն Ստյուարտների տանը պատկանող հավակնորդի կողմնակիցներ: Տորիները կողմնակից էյին Ստյուարտներին և թշնամաբար էյին տրամադրված նոր, օտարերկրյա դինաստիայի նկատմամբ:

Տորիները հակառակ էյին արտաքին լայն քաղաքականության և մասնավորապես հանդես էյին գալիս իսպանական ժառանգության համար մղված պատերազմի ժամանակ վիգերի ռազմական լայն պլանների դեմ: 1710 թվին այդ պատերազմի անժողովրդականության հետևանքով ընտրությունների ժամանակ ձեռք բերելով զգալի մեծամասնություն, նրանք փորձեցին իրենց հաղթանակն ամրապնդել հողային բարձր ցենզ մտցնելով, որը պահանջվում էր համայնքների պալատի ընտրությունների համար, և ապա 1713 թ. Ֆրանսիայի հետ կնքեցին Ուտրեխտի հաշտությունը: Վիգերը խիստ քննադատում էյին այդ հաշտությունը: 1715 թվի ընտրությունների ժամանակ տորիները լիակատար պարտություն կրեցին:

Վիգերը, մանավանդ այսպես կոչված յերիտասարդ, «նոր վիգերը», «հայրենասերները», որոնց առաջնորդն էր Պիտտը,— հանդիսանում էյին ակտիվ արտաքին և գաղութային քաղաքականության պաշտպաններ: Յերիտասարդ վիգերը մոլեգին հակառակորդներ էյին Վալպոլի քաղաքականության, որը, ինչպես թվում էր նրանց, բավականաչափ վճռական չէր, չէր համապատասխանում ազգային շահերին, և վիգերը պահանջում էյին հետագա գաղութային եքսպանսիա կատարել, մինչև վերջ պայքարել Ֆրանսիայի դեմ:

1714 թ. մինչև 1760 թիվն ոգտվելով յերկրում ու պառլամենտում իր ղեկավարող դրությունից, վիգերի կուսակցությունը շարունակում է ջանքեր թափել, փորձելով ամրապնդել պառլամենտի գերակշռությունը թագի նկատմամբ և իրականացնել մինիստրների կաբինետի միջոցով յերկիրը կառավարելու սիստեմը:

Անգլիայում պառլամենտարիզմի այդ ամրապնդմանը նպաստում էր նաև այն կարևոր հանգամանքը, որ Գեորգ I թագավորը խիստ քիչ հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի Անգլիայի

քաղաքականությունը, վորի հետ նա անձնապես թույլ եր կապված, և գլխավորապես հետաքրքրվում եր իր Հաննովերյան կուրֆյուրստության գործերով: Նա շատ վատ գիտեր անգլերեն լեզուն և չեր մասնակցում կաբինետի նիստերին:

Առաջին յերկու Գեորգների որոք աճում է պարլամենտի նշանակությունը: Բայց դա այնպիսի պարլամենտ եր, վորն ընտրված եր խիստ հնացած սիստեմով, վորը բնորոշում եյին քվեների բաշխման անհավասարությունը, «փտած ավանները», կաշառքների լայն զարգացած սիստեմը, վոր զանազան ձևերով կիրառում եյին վիգերի լիդերները: Յեթե վիգերը կաշառում եյին ընտրողներին, ապա կառավարությունն իր հերթին կաշառում եր պարլամենտի անդամներին, նրանց բաժանելով կենսաթոշակներ, ձեռնտու պաշտոններ, շատ թե քիչ կանոնավոր դրամական նվերներ: Բացի դրանից, կառավարության անդամները կաշառքներ եյին ստանում և բացահայտ թե գաղտնի մասնակից եյին առևտրական ընկերությունների շահույթներին: Խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչների հետ նրանք բաժանում եյին այն հսկայական յեկամուտները, վորոնք ստացվում եյին գաղութային գիշատչական ձեռնարկումներից, Իռլանդիայի շահագործումից, — վորի նկատմամբ իրականացվեցին Պետտիի պլանները, — իռլանդական բրդե արդյունաբերությունը յենթարկվեց լիակատար քայքայման, Իռլանդիան դարձավ շուկա՝ անգլիական արդյունաբերության արտադրանքի վաճառահանման համար:

XVIII դարի վիգական պարլամենտը յեռանդով պաշտպանում է իր նիստերի գաղտնիքը: Ըստ եյության նա գործիք է հանդիսանում խոշոր հողատերերի մի փոքրիկ խմբակի ձեռներում, իսկ այդ հողատերերն իրագործում եյին քաղաքական այն ռեժիմի նպատակները, վորը հիմնականում հաստատվել եր «պանծալի հեղափոխությամբ»:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

1445—Փորթուգալացի Դինիսիոս Դիասի կողմից Կանաչ Հրվանդանի կղզիների հայտնագործումը

1476—Գյուղացիների ապստամբությունը Վյուրցբուրգի յեպիսկոպոսությունում, Նիկլասհաուզենցի Հանս Բեհայմի ղեկավարությամբ

1485—1603—Թյուդորների դինաստիան Անգլիայում

1485—1509—Հենրիխ VII

1486—Բարեհուսո հրվանդանի գյուտը փորթուգալացի Բարտոլոմե Դիասի կողմից

1492 12/X—Ամերիկայի գյուտը Կոլումբոսի կողմից

1492—1503—Ալեքսանդր VI Բորջիա պապը

1493—1519—Մաքսիմիլիան I կայսր

1493—Բաշի միություն Էլզասում

1494—Պայմանագիր Տորդեսիլյասում, գաղութներն Իսպանիայի և Փորթուգալիայի միջև բաժանելու մասին

1494—1559—Իտալական պատերազմները

1494—1495—Կարլոս VIII-ի արշավանքը դեպի Նեապոլ

1497—Հյուսիսային Ամերիկայի գյուտը Ջոն Կաբոտի կողմից

1497—1498—Հնդկաստանի ծովային ճանապարհի գյուտը Վասկո դա Գամայի կողմից

1498—Սավոնարոլայի մահապատիժը

1500—Բրազիլիայի գյուտը փորթուգալացի Կաբրալի կողմից

1502—Բաշի միություն Վերին Հռենոսի շրջանում

1503—1513—Հուլիոս II պապ

1508—Ֆրանսիայի, կայսրության, պապի և Իսպանիայի՝ Կամբրեյի լիգան Վենետիկի դեմ

1508—Որմուզի գրավումը Ալբուկերկի կողմից

1509—1547—Հենրիխ VIII

1509—Էրազմ Ռոտտերդամցու „Հիմարության գովասանական խոսքը"

1513—Մեծ օվկիանոսի գյուտն իսպանացի Բալբոայի կողմից

1513—1521—Լևոն X պապ

1513—1523—Քրիստիան II, Դանիայի և Շվեդիայի թագավոր

1513—Բաշի միություն Լեհենում

1514—„Աղքատ Կոնրադը" Վյուրտեմբերգում

1514—„Կուրուցների" գյուղացիական պատերազմը Հունգարիայում

1515—Մարինյանոյի ճակատամարտը

1515—1517—„Մութ մարդկանց նամակները"

1516—Թոմաս Մորի „Ուտոպիան"

1516—1555—Կարլոս I, Իսպանիայի թագավոր

1517—31/X—Լութերի յելույթը 95 թեզերով

1519—1521—Մեքսիկայի նվաճումը Ֆերդինանդ Կորտեսի կողմից

1519—1522—Ֆերդինանդ Մագելլանի շուրջերկրյա ճանապարհորդությունը

1519—1555—Կարլոս V կայսր (իսպանական թագավոր Կարլոս I)

1520—Ստոկհոլմի արյան բաղնիքը

1520—1566—Սուլեյման II

1520—1521—Կաստիլիայի քաղաքային կոմունաների („կոմուներոս“) ապստամբությունը

1521—Վիլյալարի ճակատամարտը

1521—Վորմսի ռայխստագը

1522—1523—Ասպետական ապստամբություն Գերմանիայում

1523—1560—Գուստավ I Վազա

1524—1525—Գյուղացիական պատերազմը Գերմանիայում

1525 մարտ—„12 հոդվածները“

1525—Տևտոնյան օրդենի հողերի սեկուլյարիզացիան։ Պրուսական հերցոգության հիմնումը

1525—Պավիայի ճակատամարտը

1526—Մոհաչի ճակատամարտը։ Չեխիայի և Հունգարիայի միացումը Հաբսբուրգների տիրույթներին

1527— 6/V—Հռոմի թալանը (sacco di Roma) կայսերական զորքերի կողմից

1529—Շպեյերի ռայխստագը

1530—Աուգսբուրգի ռայխստագը

1531—Շմալկալդենյան միության կազմվելը

1531—Կապելլի ճակատամարտը։ Ցվինգլիի մահը։

1531—1536—Պերույի նվաճումը Պիզարրոյի կողմից

1534—1535—Անաբապտիստները Մյունստերում

1534—„Ակտ առաջնության մասին“

1535—Թոմաս Մորի մահապատիժը

1535—Ֆրանս-թուրքական դաշինք։ Թուրքիայի հետ անհավասար պայմանագրերի („կապիտուլյացիաների“) սկիզբը

1539—1540—Գենտ քաղաքի ապստամբությունը

1540—Պողոս III պապի կոնդակը ճիզվիտական օրդենի հաստատման մասին

1545—1563—Տրիդենտի ժողովը

1546—Լութերի մահը

1546—1547—Շմալկալդենյան պատերազմը

1549—Քետի ապստամբությունը Նորֆոլկում

1549—Միակերպության ակտը

1552—Պասսաույի պայմանագիրը

1553—1558—Մարիա Արյունոտ

1555—Աուգսբուրգի կրոնական հաշտությունը։ Կարլոս V-ի հրաժարականը

1555—1598—Ֆիլիպ II, Իսպանիայի թագավոր

1555—1559—Պողոս IV պապ

1558—1603—Եղիսաբեթ

1559—Կատո-Կամբրեզիի հաշտությունը

1565—Հեղափոխության սկիզբը Նիդեռլանդներում

1566 5/IV—Գյոզերի խնդրագիրը

1566 18/VIII—Պատկերամարտական շարժման (Bildersturm) սկիզբը Նիդերլանդներում

1567—1573—Հերցոգ Ալբան Նիդերլանդներում

1568—Էգմոնտի և Հոռնի մահապատիժը

1568—1570—Մորիսկների ապստամբություն Իսպանիայում

1571—Լեպանտոյի ճակատամարտը

1572 1/IV—Բրիլ քաղաքի գրավումը գյոզերի կողմից

1573—1574—Լեյդենի պաշարումը

1576 8/XI —Գենտի պացիֆիկացիան

1579 6/I—Հարավային պրովինցիաների Արրասի ունիան

1579 29/I—Հյուսիսային պրովինցիաների Ուտրեխտի ունիան

1580—1581—Փորթուգալիայի միացումը Իսպանիային

1581 24/VII—Նիդերլանդների հյուսիսային պրովինցիաների անկախության հռչակումը

1584—Վիլհելմ օրանցու սպանությունը

1585—1590—Սիքստ V պապ

1587—Մարիա Ստյուարտի մահապատիժը

1588—„Անպարտելի Արմադա"

1598—1621—Ֆիլիպ III

1600—Անգլիական Օստ-Հնդկական ընկերության հիմնումը

1602—Հոլանդական Օստ-Հնդկական ընկերությունը

1603—1625—Հակոբ I Ստյուարտ

1607—Վիրգինիա գաղութի հիմնումը Հյուսիսային Ամերիկայում

1609—Մորիսկների արտաքսումը Իսպանիայից

1609—Միացյալ պրովինցիաների անկախության ճանաչումը Իսպանիայի կողմից

1618—1620—Կալաբրիայի ապստամբությունը

1618—1648—Երեսնամյա պատերազմը

1620—Նոր Անգլիայի հիմնումը պուրիտանների կողմից

1621—1665—Ֆիլիպ IV

1621—Իսպան-հոլանդական պատերազմի վերսկսումը

1625—1649—Կարլոս I

1629—1640—Կարլոս I-ի կառավարումը առանց պարլամենտի

1637—Ապստամբություն Շոտլանդիայում

1637—1652—Ապստամբություն և քաղաքացիական պատերազմ Կատալոնիայում

1640—Փորթուգալիայի անկախության վերականգնումը

1640 13/IV—5/V—Կարճատև պարլամենտ

1640— 3/XI—Երկարատև պարլամենտի գումարումը

1641—Ստրաֆֆորդի մահապատիժը

1641—Աստղային պալատի և Բարձր հանձնաժողովի վոչնչացումը

1641—Իռլանդական ապստամբությունը

1641—Մեծ ռեմոնստրացիա

1642 22/VIII—Քաղաքացիական պատերազմի սկիզբն Անգլիայում

1642 23/X—Էջխիլլի ճակատամարտը

1643—Պրեսբիտերականության մտցնելը

1644 2/VII—Մարստոն-Մուրի ճակատամարտը

1645—Պարլամենտական բանակի ռեֆորմը

1645 14/VI—Պառլամենտական զորքերի հաղթանակը Նեզբիի մոտ
1646—Ասպետական հողատիրության վերացումը
1647—Բանակի խորհրդի կազմվելը
1647 6/VIII—Բանակը գրավում է Լոնդոնը
1647 հոկտեմբեր—նոյեմբեր—կոնֆերանս Պատնիյում
1647—1648—Ապստամբություն Սիցիլիայում և Նեապոլում (Մազանիելլո)
1648—Վեստֆալյան հաշտություն
1648—Քաղաքացիական յերկրորդ պատերազմն Անգլիայում
1648 6/XII—Պարլամենտի զտումը Պրայդի կողմից
1649 4/I —Անգլիան հանրապետություն հռչակելը
1649 30/I —Կարլոս I-ի մահապատիժը
1649 6—7/II—Թագավորական տիտղոսի և լորդերի պալատի վերացումը
1649—1652 Ապստամբության ճնշում Իրլանդիայում
1650—1652—Ռոյալիստների ճնշումը Շոտլանդիայում և գաղութներում
1651—Նավարկության ակտը
1652—1654—Անգլո-հոլանդական առաջին պատերազմը
1653 20/IV—Յերկարատև պարլամենտի „պոչուկի" ցրումը
1653—Փոքր պարլամենտ
1653 16/XII—Պրոտեկտորատի սահմանում
1658—Կրոմվելի մահը
1659—Պիրենեյան հաշտությունը
1660—Ստյուարտների ռեստավրացիան
1660—1685—Կարլոս II Ստյուարտ
1665—1667—Անգլո-հոլանդական յերկրորդ պատերազմը
1673—Յերդման ակտ (Test act)
1679—Habeas corpus act
1681—Պենսիլվանիայի հիմնումը
1685—1688—Հակոբ II
1688—1689—„Պանծալի հեղափոխությունը"
1689—1702—Վիլհելմ III, Անգլիայի թագավոր
1689—Բիլլ իրավունքների մասին
1694—Անգլիական բանկի հիմնումը
1701—1714—Պատերազմ իսպանական ժառանգության համար
1701—Գահաժառանգության ակտը
1702—1714—Աննա, Անգլիայի թագուհի
1713—Ուտրեխտի հաշտությունը
1714—1727—Գեորգ I, Հաննովերյան դինաստիայի սկիզբն Անգլիայում
1735—Բուրբոնների հաստատվելը Նեապոլում
1768—Կորսիկայի միացումը Ֆրանսիային

УКАЗАТЕЛЬ ЛИТЕРАТУРЫ

К главе I

Маркс, Капитал, т. I, гл. 12, 24; Соч., т. XVII.

Маркс, Капитал, т. III, гл. 20, 36, 47.

Маркс, Морализирующая критика и критизирующая мораль, Соч., т. V.

Маркс и Энгельс, Немецкая идеология, Соч., т. IV, стр. 45—50.

Маркс и Энгельс, Манифест Коммунистической партии, Соч., т. V.

Энгельс, О разложении феодализма и развитии буржуазии, Соч., т. XVI, ч. I.

Архив Маркса и Энгельса, т. II (VII), стр. 91—111.

Кулишер И. М., История экономического быта Западной Европы, т. II, изд. 7-е, М. 1926.

К главе II

Маркс, Капитал, т. I, гл. 24; Соч., т. XVII.

Маркс, Хронологические выписки, „Большевик" № 24, 1936.

Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, М. 1898, т. IV, стр. 821—931.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. I—III, Л. 1938.

Пешель, История эпохи открытий, М. 1885.

Геблер К., История Америки до Колумба, 1901.

Уинсор, Христофор Колумб и открытие Америки, СПБ. 1893.

Ревзин Г., Колумб, М. 1937 [„Жизнь замечательных людей" № 20 (116)].

Фиске Дж., Открытие Америки, 2 т., М. 1892/93.

Кунин К., Васко да Гама, М. 1938 [„Жизнь замечательных людей" № 2 (122)].

Снегирев В., Конкистадоры, М. 1936.

Прескотт В., Завоевание Мехики, 2 т. СПБ 1885/86.

Вольский Ст., Пизарро, М. 1935 [„Жизнь замечательных людей" № 16 (64)].

Записки солдата Берналя Диаца, ч. 1—2, пер. Д. Н. Егорова, Л. 1924.

Книга для чтения по истории средних веков, под ред. П. Г. Виноградова, разн. изд., т. IV, ст. 83, 84.

Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 11—31, М. 1938.

Хрестоматия по социально-экономической истории Европы в новое и новейшее время, под ред. Волгина, стр. 11—36, Л. 1929.

К главе III

Маркс, Хронологические выписки, „Большевик" № 24, 1936.

Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, М 1898/99, т. IV, стр 1—134; т. V, стр. 670—692; т. VI, стр. 503—514.

Вайнштейн О. Л., Италия, исторический очерк. Средние века, БСЭ. т. 28.

Макиавелли, Князь, разн. изд.

Алексеев А. С., Макиавелли как политический мыслитель, М. 1880.

Виллари П., Никколо Макиавелли и его время, 1913.

Виллари П., Джироламо Савонарола и его время, 2 т., 1913.

Ковалевский М. М., От прямого народоправства к представительному и от патриархальной монархии к парламенту, т. I, М. 1906.

Пискорский В. К., Франческо Ферруччи и его время, Киев 1891.

Ранке, Римские папы, их церковь и государство в XVI—XVII вв. 2 т., 1869.

Лафарг П., Фома Кампанелла, разн. изд.

Книга для чтения по истории средних веков, под ред. П. Г. Виноградова, разн. изд., т. IV, стр. 80.

Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.

Хрестоматия по социально-экономической истории Европы в новое и новейшее время, под ред. Волгина, стр. 38—119, Л. 1929.

Хрестоматия по западноевропейской литературе. Эпоха Возрождения, сост. Б. И. Пуришев, стр. 51—172, М. 1939.

К главе IV

Энгельс, Крестьянская война в Германии, Соч., т. VIII.

Энгельс, Марка, Соч., т. XV.

Энгельс, К истории прусского крестьянства, Соч., т. XVI, ч. I.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. IV—V, Л. 1938.

Лампрехт К., История германского народа, т. III, М. 1896.

Янсен И., Экономическое, правовое и политическое состояние германского народа накануне реформации, СПБ. 1899.

Бецольд Ф., История реформации в Германии, т. I, СПБ. 1900.

Баумгартнер Э., Великая крестьянская война (1525), М. 1925.

Гейгер, История немецкого гуманизма, СПБ. 1899.

Штраус, Ульрих фон Гуттен, СПБ. 1896.

Эразм Роттердамский, Похвальное слово глупости, разн. изд.

Письма темных людей, разн. изд.

Источники по истории реформации, под ред. Д. Н. Егорова, 2 вып., М. 1906/07.

Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 32—67, М. 1938.

Хрестоматия по социально-экономической истории Европы в новое и новейшее время, под ред. Волгина, стр. 38—162, Л. 1929.

Хрестоматия по западноевропейской литературе. Эпоха Возрождения, сост. Б. И. Пуришев, стр. 175—220, М. 1939.

К главе V

Энгельс, Людвиг Фейербах, Соч., т. XIV.

Энгельс, Крестьянская война в Германии, Соч., т. VIII.

Энгельс, Марка, Соч., т. XV.

Энгельс, К истории прусского крестьянства, Соч., т XVI, ч. I.

Энгельс, Введение к английскому изданию брошюры „Развитие социализма от утопии к науке", Соч., т. XVI, ч. II.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. VI—IX, Л. 1938.

Лампрехт К., История германского народа, т. III, М. 1896.

Бецольд Ф., История реформации в Германии, т. I—II, СПБ. 1900.

Циммерман В., История крестьянской войны в Германии, 2 т., М. 1937.

Баумгартнер Э., Великая крестьянская война (1525), М. 1925.

Каутский К., Предшественники новейшего социализма, т. I, М. 1923.

Проскуряков В., Томас Мюнцер, М. 1937 [„Жизнь замечательных людей", № 2 (98)].

Лютер, К христианскому дворянству немецкой нации. Харьков 1912.

Источники по истории реформации, под ред. Егорова, 2 вып., М. 1906/07.

Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 68—112, М. 1938.

Хрестоматия по западноевропейской литературе. Эпоха Возрождения, сост. Б. И. Пуришев, стр. 231—237, М. 1939.

К главе VI

Энгельс. Людвиг Фейербах, Соч., т. XIV.

Энгельс, Введение к английскому изданию брошюры „Развитие социализма от утопии к науке", Соч., т. XVI, ч II.

Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, т. IV, стр. 448—462, 496—518, 592—612; т. V, стр. 1—46, М. 1898/99.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. X—XI, Л. 1938.

Лозинский С. Г., История папства М. 1934.

Ранке, Римские папы, их церковь и государство в XVI—XVII вв., 2 т., 1869.

Филиппсон, Религиозная контрреформация в XVI в., М. 1902.
Дементьев, Введение реформации в Швеции, СПБ. 1892.
Ван Мюйден, История швейцарского народа, т. II, СПБ. 1900.
Бемер Г., Иезуиты, М. 1913.
Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 318—321, М. 1938.

К главе VII

Маркс, Революционная Испания, очерк I., Соч., т. X.
Маркс и Энгельс, Армада, Соч., т. XI, ч. II.
Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, т. IV, стр. 316—363; т. V, стр. 50—109, М. 1898/99.
Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. XIV, Л. 1938.
Пискорский В. К., История Испании и Португалии, СПБ. 1909.
Кудрявцев А. Е., Испания в средние века, Л. 1937.
Прескотт В., История царствования Филиппа Второго, короля испанского, 2 т., СПБ. 1868.
Льоренте, Критическая история испанской инквизиции, т. I—II, М. 1936.
Лозинский С. Г., История инквизиции в Испании П. 1914.
Франк Б., Сервантес, М. 1936.
Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 272—287, М. 1938.
Хрестоматия по западноевропейской литературе. Эпоха Возрождения, сост. Б. И. Пуришев, стр. 603—761, М. 1939.

К главе VIII

Маркс, Революционная Испания. Очерк I, Соч., т. X
Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, т. V, стр. 636—667; т VI, стр. 483—500, 636—685; т. VII, стр. 930—953, М. 1898/99.
Пискорский В. К., История Испании и Португалии, СПБ. 1909.
Кудрявцев А. Е., Испания в средние века, Л. 1937.
Льоренте, Критическая история испанской инквизиции, т. II, М. 1936;
Лозинский С. Г., История инквизиции в Испании, П. 1914
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 287—291, М. 1938.
Хрестоматия по западноевропейской литературе. Литература эпохи Возрождения и XVII века, сост. Б. И. Пуришев, стр. 551—563, М. 1937.

К главе IX

Маркс, Хронологические выписки, „Большевик“ № 24, 1936.
Энгельс, Армия, Соч., т. XI ч. II.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. XV, Л. 1938.

Лозинский С. Г., История Бельгии и Голландии в новое время, СПБ. б. д.

Прескотт В., История царствования Филиппа Второго, короля испанского, 2 т., СПБ. 1868.

Конради А., История революций, т. I, М. 1924.

Мотлей Д. А., История нидерландской революции, 3 т. СПБ., 1866—1871.

Лампрехт К., История германского народа, т. III, М. 1896.

Пиренн А., Нидерландская революция, М. 1937.

Ковалевский М. М., От прямого народоправства к представительному и от патриархальной монархии к парламенту, т. II М. 1906.

Книга для чтения по истории нового времени, т. I, М. 1910.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 292—313, М. 1938.

К главе X

Лависс и Рамбо, Всеобщая история с IV века, т. VI, стр. 451—480, М. 1899.

Лозинский С. Г., История Бельгии и Голландии в новое время, СПБ. б. д.

Конради А, История революций, т. I—II, М. 1924/25.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 313—317, М. 1938.

К главе XI

Маркс, Капитал, т. I, гл. 24; Соч., т. XVII.

Маркс, Капитал, т. III, гл. 47.

Маркс, Хронологические выписки, „Большевик“ № 24, 1936.

Маркс и *Энгельс*, Армада, Соч., т. XI, ч. II.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. XVI—XVII, Л. 1938.

Савин А. Н., Английская деревня в эпоху Тюдоров, М. 1903.

Савин А. Н., Английская секуляризация, М. 1906.

Кеннингем У., Рост английской промышленности и торговли, М. 1909.

Эшли У., Экономическая история Англии, М. 1897.

Роджерс Т., История труда и заработной платы в Англии с XIII по XIX век, СПБ. 1899.

Грин Д. Р., История английского народа, т. II, М. 1891.

Ченей Э., Аграрный переворот в Англии в XVI в., СПБ. 1899.

Гиббинс, Промышленная история Англии, СПБ. 1895.

Гиббинс, Очерк истории английской торговли и колоний, СПБ. 1899.

Ковалевский М. М., От прямого народоправства к представительному и от патриархальной монархии к парламенту, т. I—II, М. 1906.

Мор, Утопия, разн. изд.

Книга для чтения по истории нового времени, т. I, т. II, М. 1910/11.
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 212—239. М. 1938.
Хрестоматия по социально-экономической истории Европы в новое и новейшее время, под ред. Волгина, стр. 166—270. Л. 1929.
Хрестоматия по западноевропейской литературе. Эпоха Возрождения, сост. Б. И. Пуришев, стр. 406—600, М. 1939.

К главе XII

Маркс, Капитал, т. I, гл. 24; Соч., т. XVII.
Маркс, Критика и рецензии. Ф. Гизо: „Почему удалась английская революция?", Соч., т. VIII.
Щеголев П. П. Очерки из истории Западной Европы XVI—XVII в.в. гл. XVIII—XIX, Л. 1938.
Савин А. Н., Лекции по истории английской революции, М. 1937.
Гизо Ф., История английской революции, т. I, СПБ. 1868.
Кудрявцев А. Е., Великая английская революция, Л. 1925.
Вейнгартен Г., Народная реформация в Англии XVII в., М. 1901.
Гардинер С., Пуритане и Стюарты, СПБ. 1896.
Книга для чтения по истории нового времени, т. II, М. 1911.
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 239—248, М. 1938.

К главе XIII

Маркс, Критика и рецензии. Ф. Гизо: „Почему удалась английская революция?", Соч., т. VIII.
Энгельс, Введение к английскому изданию брошюры „Развитие социализма от утопии к науке", Соч., т. XVI, ч. II.
Энгельс, Кавалерия, Соч., т. XI, ч. II.
Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII в.в. гл. XX, Л. 1938.
Конради А., История революций, т. I, М. 1924.
Савин А. Н., Лекции по истории английской революции, М. 1937.
Гизо Ф., История английской революции, т. I—II, СПБ. 1868.
Попов-Ленский И., Лильберн и левеллеры, М. 1928.
Вейнгартен Г., Народная реформация в Англии в XVII в., М. 1901.
Кудрявцев А. Е., Великая английская революция, Л. 1925.
Афанасьев, История Ирландии, СПБ. 1907.
Морлей, Новое жизнеописание Оливера Кромвеля, СПБ. 1901.
Вольский Ст., Кромвель, М. 1934 [„Жизнь замечательных людей" № 12 (36)].
Лильберн Дж., Памфлеты. Предисловие В. Ф. Семенова, М. 1937.
Мильтон Дж., Речь о свободе печати (Ареопагитика), разн. изд.
Книга для чтения по истории нового времени, т. II, М. 1911.
Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 248—259, М. 1938.

К главе XIV

Маркс и *Энгельс*, Буржуазия и контрреволюция, II. Соч., т. VII.

Энгельс, Введение к английскому изданию брошюры „Развитие социализма от утопии к науке",Соч., т. XVI, ч. II.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. XXI, Л. 1938.

Конради А., История революций, т. II, М. 1925.

Гизо ф., История английской революции, т. II—III, СПБ. 1868.

Савин А. Н. Лекции по истории английской революции, М. 1937.

Кудрявцев А. Е. Великая английская революция, Л 1925.

Вейнгартен Г., Народная реформация в Англии XVII в., М 1901.

Попов-Ленский И., Лильберн и левеллеры. М. 1928.

Морлей, Новое жизнеописание Оливера Кромвеля, СПБ. 1901

Вольский Ст., Кромвель, М. 1934 [„Жизнь замечательных людей" № 12 (36)].

Афанасьев, История Ирландии, СПБ. 1907.

Лильберн Дж., Памфлеты. Предисловие В. Ф. Семенова, М. 1937.

Книга для чтения по истории нового времени, т. II, М. 1911.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч. II, стр. 259—266, М. 1938.

Хрестоматия по западноевропейской литературе. Литература эпохи Возрождения и XVII века, сост. Б. И. Пуришев, стр. 398—415, М. 1937.

К главе XV

Маркс, Капитал, т. I, гл. 24; Соч., т. XVII.

Маркс, Капитал, т. III, гл. 47.

Маркс, Критика и рецензии. Ф. Гизо: „Почему удалась английская революция?", Соч., т. VIII.

Энгельс, Введение к английскому изданию брошюры „Развитие социализма от утопии к науке", Соч., т. XVI, ч. II.

Щеголев П. П., Очерки из истории Западной Европы XVI—XVII вв., гл. XXII—XXIII, Л. 1938.

Конради А., История революций, т. II, М. 1925.

Эйри П., Реставрация Стюартов и Людовик XIV, СПБ. 1896.

Вейнгартен Г., Народная реформация в Англии XVII в., М. 1901.

Роджерс Т., История труда и заработной платы в Англии с XIII по XIX век, СПБ 1899.

Афанасьев, История Ирландии, СПБ. 1909.

Гуревич Я. Г., Происхождение войны за испанское наследство и коммерческие интересы Англии, СПБ. 1884.

Книга для чтения по истории нового времени, т. II, М. 1911.

Хрестоматия по истории средних веков, под ред. Н. П. Грацианского и С. Д. Сказкина, т. II, ч II, стр 266—271, М. 1938.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան Եվրոպան XVI, XVII դ. դ. և XVIII դ. սկզբում

Էջ

1. Գլուխ I — *Կապիտալիզմի ծագումն Արևմտյան Եվրոպայում* . . 3
2. Գլուխ II — *Աշխարհագրական մեծ գյուտերը* 25
3. Գլուխ III *Իտալիան XVI—XVIII դարերում* 63
4. Գլուխ IV — *Գերմանիան ռեֆորմացիայի նախօրեին* 86
5. Գլուխ V — *Ռեֆորմացիան և գյուղացիական պատերազմը Գերմանիայում* 114
6. Գլուխ VI — *Ռեֆորմացիոն շարժումը Եվրոպայի մյուս երկըրներում և կոնտրռեֆորմացիա* 158
7. Գլուխ VII — *Իսպանիան XVI դարում* 196
8. Գլուխ VIII — *Իսպանիան և Փորթուգալիան XVII դարում* 231
9. Գլուխ IX — *Նիդերլանդական հեղափոխությունը* 248
10. Գլուխ X — *Հոլանդիան XVII և XVIII դարերում* 301
11. Գլուխ XI — *Անգլիան Թյուդորների օրոք* 318
12. Գլուխ XII — *Անգլիական բուրժուական հեղափոխության նախօրյակին* 361
13. Գլուխ XIII — *Քաղաքացիական պատերազմը Անգլիայում* 385
14. Գլուխ XIV — *Հանրապետություն և պրոտեկտորատ* 421
15. Գլուխ XV — *Ռեստավրացիան և պանծալի հեղափոխությունը* . . 447

ИСТОРИЯ СРЕДНИХ ВЕКОВ

том. II (часть III), книга I

Под редакцией профессоров *С. Д. Сказкина* и *О. Л. Вайнштейна*

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Издание Ереванского Государственного Университета

Հայերեն թարգմ. խմբագիր՝ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ: Տեխ. խմբագիր՝ Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ: Սրբագրիչ՝ Մ. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ: Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ՏԵՍԱՅԱՆ:

Գլավլիտի լիազոր Ն. 1366, պատ. № 190, տիրաժ 3000, թուղթ 62×94, տպագրական 30½ մամուլ, մեկ մամուլում 38400 տառանիշ, հեղինակային 26,6 մամուլ. Հանձնված է արտադրության 16/III 1940 թ., ստորագրված է տպելու 21/V 1940 թ.: Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 104:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032419

A
II
32419